Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ

Արդի բուրժուական գաղափարախոսության քննադատական քննարկում

ԳԻՐՔ
2

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ — 1980

1ՓԲ իդեէս ԳՄԴ 87.3Գ 02
Ս504

Գրախոս՝ պատմական գիտությունների թեկնածու
Ն. Բ. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Սիմոնյան Հ. Ռ.
Ս504 Արդի բուրժուական գաղափարախոսության քննադատական ուրվագծեր.— Եր.: Հայաստան, 1980. 472 էջ:

Գրքում հեղինակը մարքս-լենինյան դիրքերից բացահայտում է ժամանակակից բուրժուական գաղափարախոսության էությունը, քննադատում նրա հիմնական ուղղություններից մի քանիսը։ Աշխատության առաջին գիրքը լույս է տեսել 1977 թվականին։

Ս $\frac{0302030900}{701\ (01)\ 80}$ 60—80

1ՓԲ
ԳՄԴ 87. 3Գ 02

© «Հայաստան» հրատարակչություն, 1980

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՆՑԵՊՑԻԱՆԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

Մեր օրերում միջազգային մասշտաբով տեղի ունեցող գաղափարական պայքարի ճակատն իր մեջ ներառում է նաև պետությունների հարաբերությունները։

Իմպերիալիստական պետությունների արտաքին քաղաքականության ձևավորման գործում կարևոր դեր են խաղում միջազգային հարաբերությունների վերաբերյալ արդի բուրժուական տեսությունները։ Այդ տեսությունների հետ ծանոթությունը, դրանց քննադատական ընկալումը հնարավորություն են տալիս բացահայտելու իմպերիալիստական տերությունների ժամանակակից արտաքին քաղաքականության հիմնական նպատակները, ճշտելու դրանց հետագա զարգացման օրինաչափությունները[1]։

---

1 *Իմպերիալիզմի արտաքին քաղաքական տեսությունները մանրամասն վերլուծված և քննադատված են սովետական հեղինակների բազմաթիվ աշխատությունների մեջ։ Դրանցից հատկապես պետք է հիշատակել՝* Н. Н. Иноземцев, Внешняя политика США в эпоху империализма, М., 1960; В. И. Лан, США в военные и послевоенные годы (1940-1960), М., 1964; Г. А. Арбатов, Идеологическая борьба в современных международных отношениях, М., 1970; А. Каренин, Философия политического насилия. Критика некоторых антикоммунистических концепций в области внешней политики США, М., 1971; Ю. Н. Листвинов, Первый удар (Некоторые современные тенденции развития американских концепций «тотальной силы»), М., 1971; А. Е. Ефремов, Европа и ядерное оружие, М., 1972; «Американская историография внешней политики США, 1945-1970», М. 1972; «Военная сила

Խոսելով որևէ պետության արտաքին քաղաքական նպատակների մասին, ամենից առաջ պետք է պարզել, թե որոնք են այդ պետության տիրապետող դասակարգերի ձգտումներն ու շահերը և դրանք ինչպես են դրսևորվում երկրի սահմաններից դուրս։ Վ. Ի. Լենինը նշել է, որ այդ հանգամանքը «չպետք է ոչ մի բոլոր աչքաթող անել, որպեսզի չկորչենք դիվանագիտական խորամանկությունների խորխորատներում և լաբիրինթոսներում, որը երբեմն նույնիսկ արհեստականորեն ստեղծում ու խճճում են այն մարդիկ, դասակարգերը, կուսակցությունները ու խմբերը, որոնք սիրում են կամ ստիպված են ձուկ որսալ պղտոր ջրում»[1]։

Իմպերիալիստական տերությունների արտաքին քաղաքական շահերը վերլուծելիս անհրաժեշտ է նաև նկատի ունենալ երկրի կառավարող դասակարգերի ձգտումները միջազգային ասպարեզում։ Մոնոպոլիստական բուրժուազիան բոլոր ջանքերը գործադրում է, որպեսզի սեփական երկրում և նրա սահմաններից դուրս պահպանվի ու ամրապնդվի իր տիրապետությունը։ Այսօր բուրժուական հետազոտողներից շատերը ոչ միայն չեն թաքցնում իմպերիալիստական երկրների արտաքին քաղաքականության և տիրապետող դասակարգերի շահերի փոխադարձ կախվածությունը, այլև գտնում են, որ առանց այդ իրողությունն ընդունելու անհնարին է որևէ օբյեկտիվ քաղաքական վերլուծություն։

Բուրժուազիայի արտաքին քաղաքական մտածողության վերլուծությունը կոմունիստների համար ունի ոչ միայն տեսական, այլև պրակտիկ մեծ նշանակություն։ Միջազգային դրությունը հսկայական չափով ազդում է կոմունիստական և բան-

---

и международные отношения. Военные аспекты внешнеполитических концепций США», М., 1972; «Доктрина Никсона», М. 1972; Ю. Н. Мельников, От Потсдама к Гуаму. Очерки американской дипломатии, М., 1974; В. Кортунов, Высокая цель политики социализма, жур. «Международная жизнь», № 2, 1976, стр. 13-23; А. Кунина, О буржуазных теориях развития международных отношений, жур. «Международная жизнь», № 3, 1976, стр. 91-103; Г. Трофимов, Эволюция военно-политической стратегии США после второй мировой войны, жур. «Вопросы истории», № 3, 1976, стр. 64-90 և այլն։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 447։

վորական կուսակցությունների՝ խաղաղության, առաջադիմության և սոցիալիզմի համար մղվող պայքարի վրա։

Խորապես բացահայտելով աշխատավոր դասակարգերի և շահագործող վերնախավերի միջև գոյություն ունեցող անտագոնիզմը, Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը գիտականորեն վերլուծեցին ժամանակի միջազգային հարաբերությունները, մինչմոնոպոլիստական կապիտալիստական պետությունների արտաքին քաղաքականությունը, ինչպես նաև հիմք դրեցին պրոլետարիատի միջազգային քաղաքականությանը։ Նրանք գտնում էին, որ բանվորական շարժման կարևորագույն խնդիրներից մեկն այն է, որպեսզի բարոյականության և արդարության պարզ օրենքները, որոնցով իրենց փոխհարաբերություններում պետք է առաջնորդվեն առանձին մարդիկ, դառնան տիրապետող նորմեր միջազգային հարաբերություններում[1]։ Գիտական կոմունիզմի հիմնադիրները առաջ քաշեցին մի ամբողջ շարք կարևորագույն սկզբունքներ, որոնք որոշեցին պրոլետարիատի միջազգային քաղաքականության գլխավոր նպատակներն ու խնդիրները։ Նրանք ցույց տվեցին, որ այդ քաղաքականությունը պայմանավորված է բանվոր դասակարգի պատմական կոչումով, նրա ազատագրական մեծ միսիայով։ Եթե բուրժուազիայի դասակարգային շահերը թելադրում են պահպանել ու ամրապնդել շահագործողական կարգերը, ապա, ընդհակառակն, պրոլետարիատի շահերը պահանջում են ոչնչացնել բուրժուական շահագործողական սիստեմը, ստեղծել նոր, անդասակարգ հասարակություն։ Այս ընդհանուր պայքարը, որ միասնական նպատակի համար մղում են տարբեր երկրների պրոլետարները, համախմբում է նրանց, կոորդինացնում նրանց գործունեությունը։ Պրոլետարական ինտերնացիոնալիզմը դառնում է բանվոր դասակարգի կողմից վարվող միջազգային նոր քաղաքականության անկյունաքարը, այդ քաղաքականության գլխավոր սկզբունքը։

Իմպերիալիզմի դարաշրջանի միջազգային հարաբերությունները և 20-րդ դարի սկզբի կապիտալիստական խոշորագույն տերությունների արտաքին քաղաքականությունը դարձան Վ. Ի. Լենինի սևեռուն հետազոտության առարկան։ Իր աշխա-

---

[1] Տե՛ս Կ. Маркс и Ф. Энгельс, т. 16, էջ 11.

տությունների մեջ նա ցույց տվեց, որ իմպերիալիզմը ստեղծում է ժողովուրդների հարստահարման ու շահագործման սիստեմ, որ մոնոպոլիստական բուրժուազիան, ընկնելով շահույթների ետևից, ձգտում է վերաբաժանել աշխարհը, կանգ չառնելով համաշխարհային սպանդի կազմակերպման առջև։ Նոր պայմաններում մշակելով պրոլետարիատի ստրատեգիան և տակտիկան, Վ. Ի. Լենինը ձևակերպեց նաև պրոլետարիատի միջազգային քաղաքականությունը, որն ուղղված է բոլոր երկրների աշխատավորների դաշինքի ամրապնդմանը, իմպերիալիստական պատերազմի դեմ, սոցիալիստական հեղափոխության հաղթանակին[1]։

Վ. Ի. Լենինը ցույց էր տալիս, որ պետությունների վարքի «ռեալ» մոտիվները, որոնք իբր, կապված չեն գաղափարախոսությունների հետ, բուրժուական տեսաբանները վարագուրում են «ազգային շահերով»։ Բայց պատմությունը վկայում է, որ պրոլետարիատի և բուրժուազիայի համար արտաքին հարաբերությունների ոլորտում ազգային նպատակները և շահերը միանգամայն տարբեր են։

Վ. Ի. Լենինը գրում էր, որ ֆրանս-պրուսական պատերազմի և Փարիզի կոմունայի ժամանակ ֆրանսիական բուրժուազիան, «առանց մի վայրկյան տատանվելու, գործարքի մեջ մտավ համազգային թշնամու, իր հայրենիքն ավերող օտարերկրյա զորքի հետ՝ պրոլետարական շարժումը ճնշելու համար»[2]։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ բուրժուական կառավարությունները, քողարկվելով «հայրենիքի պաշտպանության» լոզունգով, աշխարհը քաշեցին արյունալի սպանդի մեջ, բոլշևիկներն էին, որ հռչակեցին իրենց «հայրենիքի» պարտության լոզունգը, քանի որ դա համապատասխանում էր պատերազմող բոլոր երկրների աշխատավորների և՛ սոցիալական, և՛ ազգային շահերին։

Այսպիսով, դեռ մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը Լենինն առաջ քաշեց սկզբունքներ,

---

[1] Տե՛ս **Л. И. Брежнев**, О внешней политике КПСС и Советского государства, Речи и статьи, М., 1973, էջ 549.

[2] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 17, էջ 27։

որոնք հեղափոխության հաղթանակից հետո ամբողջովին դրվեցին սովետական պետության արտաքին քաղաքական գործունեության և դիվանագիտության հիմքում[1]։

Հեղափոխության հաղթանակից հետո Վ. Ի. Լենինն առաջադրեց աշխարհում առաջին սոցիալիստական պետության արտաքին քաղաքականության գլխավոր սկզբունքը, որոշեց կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության արտաքին քաղաքական գործունեության հիմնական ուղղությունները[2]։

Գոյության առաջին օրերից սովետական պետության արտաքին քաղաքականության գլխավոր մտահոգությունը դարձավ խաղաղության պահպանումը, գործադրելով բոլոր ջանքերը՝ խափանելու նոր արյունահեղ պատերազմների առաջացումը[3]։ Այդ նպատակին էին ուղղված սովետական նորաստեղծ կառավարության մի շարք դեկրետները և հայտարարությունները, որոնք և սկիզբ դարձան մեր պետության արտաքին քաղաքականության[4]։ Խաղաղություն առանց անեքսիաների և կոնտրիբուցիաների՝ այս էր սովետական պետության արտաքին քաղաքականության գլխավոր ակցիաներից մեկը[5]։ Սովետական պետության խոշորագույն ակցիաներից էր նաև ցարական և ժամանակավոր կառավարությունների կնքած գաղտնի պայմանագրերի և դիվանագիտական վավերագրերի հրապարակումը[6]։ Լենինը նշում էր, որ «մենք ... տպագրել ենք գաղտնի պայմանագրերը և ամբողջ աշխարհը տեսավ, թե

---

[1] Տե՛ս **С. Ю. Выгодский**, У истоков советской дипломатии, М., 1965, էջ 11.

[2] Այդ մասին տե՛ս «Ленин о внешней политике советского государства», М., 1960.

[3] Տե՛ս **Л. И. Брежнев**, О внешней политике КПСС и Советского государства, էջ 462.

[4] Տե՛ս «Летопись внешней политики СССР 1917-1978 г.г.», М., изд-во политической литературы, 1978, էջ 5-13.

[5] Տե՛ս «Документы внешней политики СССР», т. I, М., 1957, էջ 12.

[6] Տե՛ս **М. П. Ирошников, А. О. Чубарьян**, Тайное становится явным. Об издании секретных документов царского и Временного правительства, М., 1972, էջ 57.

ինչի համար են կործանվել միլիոնավոր կյանքեր, միլիոնավոր զոհեր»[1]։

Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի ստեղծման առաջին իսկ օրերից Լենինը մինչև իր կյանքի վերջը անմիջականորեն ուղղություն էր տալիս սովետական դիվանագիտությանը։ Չկար արտաքին քաղաքական բնույթի այնպիսի աշխատանք, այնպիսի հարց, որով Լենինը անձնապես չզբաղվեր։

Տիրող շահագործողական դասակարգերը, որոնք սովոր են ապրել աշխատավոր մասսաների քրտինքով, կողոպտել նրանց վաստակը, իրենց երկրից դուրս ձգտում են տիրել ուրիշների հողերին և ինչքին, ստրկացնել, իսկ հաճախ էլ բնաջնջել նրանց՝ զավթելու համար նրանց հայրենիքն ու հարստությունը։

Իհարկե, գռեհկացում կլիներ դիվանագիտական ամեն մի ակտի մեջ տեսնել գաղափարական այս կամ այն կոնցեպցիայի ուղղակի կամ անուղղակի մարմնավորումը, արտաքին քաղաքական ամեն մի դիրքորոշման մեջ փնտրել նախապես մշակված դոկտրինայի իրականացում։ Գաղափարախոսությունը տալիս է միայն ընդհանուր ելակետային դիրքերը, պետության և կառավարության գործունեության ընդհանուր ուղղությունը։ Սոցիալիզմի նկատմամբ բուրժուազիայի թշնամանքը երբեմն տարբեր կերպ է արտահայտվում բուրժուական տարբեր շրջանների, նույնիսկ տարբեր գործիչների մոտ։ Բուրժուազիան, ամբողջությամբ վերցրած, արտաքին քաղաքականության մեջ ունի ընդհանուր դասակարգային շահեր։ Բայց բուրժուական դասակարգի մեջ մտնող խավերն ու շերտերը ունեն զուտ իրենց հետաքրքրությունները, որոնք երբեմն զգալի չափով տարբերվում են արտաքին քաղաքականության բնագավառում ամբողջությամբ վերցրած բուրժուական դասակարգի շահերից։ Չնայած դրան, իմպերիալիզմի արտաքին քաղաքական տեսություններն ու կոնցեպցիաները գաղափարական և պրակտիկ տեսակետից միասնական են և առանձին-առանձին դրանց քննարկումը չափազանց պայմանական բնույթ ունի։ Այնուհանդերձ դա անհրաժեշտ է անել, որպեսզի ավելի պարզ ու հասկանալի դառնան իմպերիալիստական կառավարությունների վարչակազմի ընդունած արտաքին քաղաքական որոշումների ելակետերը, ինչպես նաև ամեն կերպ դրանք արդարացնելու համար նրանց թափած ջանքերը։

[1] Տե՛ս В. И. Ленин, ПСС, т. 40, էջ 173.

Կապիտալիստական երկրներում ամեն տարի լույս են տեսնում բազմաթիվ աշխատություններ, որոնք նվիրված են արտաքին քաղաքականության, դիվանագիտության և արտաքին քաղաքական պրոպագանդայի հարցերին։

Առաջին բանը, որ նկատելի է միջազգային հարաբերությունների բուրժուական տեսությունների հետ ծանոթանալիս, բազմաթիվ ուղղությունների առատությունն է, որոնցից ամեն մեկը հավակնում է «գիտական դպրոց» կոչվելու։

Քանի որ իմպերիալիստական տարբեր պետությունների արտաքին քաղաքական գործողությունները դրսևորում են որոշակի ընդհանրություններ, ուստի բավական է վերլուծել նրանցից մեկի՝ ասենք ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության գաղափարական ասպեկտները։

Արտաքին քաղաքականության և միջազգային հարաբերությունների տեսության և պրակտիկայի պրոբլեմների մշակմամբ Միացյալ Նահանգներում զբաղված է գիտահետազոտական կազմակերպությունների լայն ցանց։ Դրանց թվում հատկապես կարևոր դեր ունեն չորս հիմնարկներ՝ Պենսիլվանիայի համալսարանին առընթեր արտաքին քաղաքականության հետազոտության ինստիտուտը, որը ստեղծվել է 1955 թվականին, պատերազմի, հեղափոխության և խաղաղության հոսվերյան ինստիտուտը, Ջորջթաունի համալսարանին առընթեր ստրատեգիական և միջազգային հետազոտությունների կենտրոնը և դիվանագիտության ու իրավունքի Ֆլետչերյան դպրոցը։ Այս բոլոր հաստատությունները հայտնի են իրենց հակակոմունիստական դիրքով և երկար ժամանակ է, ինչ որոշակի ազդեցություն են գործում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ձևավորման վրա։ Դրանց թվում, սակայն, իր նշանակությամբ առանձնակի դեր ունի արտաքին քաղաքականության հետազոտության ինստիտուտը, որը 1970 թվականից սկսած պայմանագրային հիմունքներով հետազոտական աշխատանքներ է կատարում ԱՄՆ-ի պաշտպանության մինիստրության և ինֆորմացիոն գործակալության պատվերնե-

ռով, ակտիվ կապեր է պահպանում Պետական դեպարտամենտի և Ազգային անվտանգության խորհրդի հետ։

Ամերիկյան պոլիտոլոգիայի բազմաթիվ հոսանքները կարելի է դասակարգել երկու գլխավոր ուղղությունների, որոնք գրականության մեջ ստացել են «քաղաքական իդեալիզմ» և «քաղաքական ռեալիզմ» անվանումները։

Հենց սկզբից ասենք, որ թե մեկ և թե մյուս խմբի տեսական գործունեությունը ծառայում է ԱՄՆ-ի իմպերիալիստական բուրժուազիայի պրակտիկ շահերին, նրա արտաքին քաղաքականությանը, բուրժուազիա, որ հանգամանքների թելադրանքով գերադասում է մերթ ավելի շատ օգտվել «ռեալիստների», մերթ էլ «իդեալիստների» ծառայություններից։

«Քաղաքական իդեալիստները» հռչակում են, թե այն, ինչ բարիք է ու բարի, ելնում է միայն ԱՄՆ-ից, իսկ չարիքը բխում է բացառապես ՍՍՀՄ-ից և սոցիալիստական մյուս երկրներից։ Նրանք գտնում են, որ պատմությունը ԱՄՆ-ի ուսերին է դրել ողջ երկրագնդի հոգսերը, և որ այդ երկիրը կոչված է հովանավորության տակ առնելու ժամանակակից մարդկության քաղաքակրթությունը, այն պաշտպանելու «կոմունիզմի վտանգից»։ Նման մոտեցումը շատ «քաղաքական իդեալիստների» անխուսափելիորեն տանում է դեպի մերկապարանոց հակակոմունիզմի դիրքերը։

Ինչ վերաբերում է «քաղաքական ռեալիստներին», ապա ետպատերազմյան ամբողջ ժամանակաշրջանում նրանք փորձել են ԱՄՆ-ի կառավարող շրջանների իմպերիալիստական քաղաքականությունը ներկայացնել իբրև «քաղաքական ռեալականությամբ» թելադրված գործողություն, որը համապատասխանում է ամերիկյան ողջ ժողովրդի «ազգային շահերին»։

Միջազգային հարաբերություններում ուժի անսքող պաշտամունք՝ այսպիսին է «քաղաքական ռեալիզմի» դպրոցի հավատամքը։ «Քաղաքական ռեալիստները» համաշխարհային ասպարեզում պետությունների փոխհարաբերությունները պայմանավորող այլազան ֆակտորների մեջ առաջին տեղը հատկացնում են ռազմական ուժին ու բռնությանը։ Այդ դպրոցի[1] հիմնադիրներ և խոշոր ներկայացուցիչներ Հ. Մորգենթաու, Դ. Կենանը, Ն. Սպայկմանը և ուրիշներ, հենվելով ամերիկյան փիլիսոփա Ռ. Նիբուրի հոգևոր ժառանգության վրա, գտնում են, որ միջազգային քաղաքականությունը, ինչպես և քաղաքականությունը ընդհանրապես, պայքար է տիրապետություն հաստատելու համար։ Գերազանցության են ձգտում բոլոր պետությունները, անկախ իրենց սոցիալ-քաղաքական կարգերից։ Միջպետական հարաբերությունների մեջ գլխավորը, վճռողը, ըստ էության, ուժն է։ Միջազգային հարաբերությունների սիստեմում ամեն մի պետություն ձգտում է գրավել այն տեղը, որը համապատասխանում է իր ուժերին ու հնարավորություններին։ «Ազգային շահերը» որոշվում են տվյալ երկրի հզորության չափերով։ «Իդեալիստների» տեսակետով քաղաքականության խնդիրը կայանում է նրանում, որպեսզի ձեռքից բաց չթողնել տրված հնարավորությունը, բայց և չթերագնահատել այն։ Այդ իսկ պատճառով «ազգային շահեր» հասկացողությունն այն է, ինչին երկիրը կարող է հասնել իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով։

«Քաղաքական ռեալիստների» կարծիքով ԱՄՆ-ը պետք է հանդես գա իբրև համաշխարհային տիրապետության հավակնորդ։ Այդ պահանջը նրանք հատկապես համառորեն առաջ էին քաշում ատոմային զենքի նկատմամբ Միացյալ Նահանգների մոնոպոլ տիրապետության ժամանակաշրջանում։ Ելնելով իրենց տեսական հարցադրումներից, «քաղաքական ռեալիստները» համաշխարհային ասպարեզում ԱՄՆ-ի հիմնական հակառակորդը համարում են Սովետական Միությունը։

[1] «Քաղաքական ռեալիզմի» դպրոցի ազդեցությունը խիստ ուժեղ է Արևմուտքում գոյություն ունեցող պատերազմի և խաղաղության պրոբլեմները ուսումնասիրող բազմաթիվ կենտրոնների վրա։ Դրանցից են «Խաղաղության պրոբլեմների ուսումնասիրման ինստիտուտը» Օսլոյում, «Կոնֆլիկտային իրավիճակների ուսումնասիրության կենտրոնը» Միչիգանում, «Խաղաղության պրոբլեմների միջազգային ինստիտուտը» Ստոկհոլմում, «Խաղաղության և կոնֆլիկտների պրոբլեմների ուսումնասիրության կենտրոնը» Հեսենում (ԳՖՀ) և այլն։ Այս կենտրոններում աշխատող բուրժուական գիտնականների մի զգալի մասը, կապիտալիստական կարգերն անվնաս տեսնելու մտահոգությամբ, հանդես է գալիս «արդարացի միջազգային հարաբերություններ ստեղծելու» պացիֆիստական կոչերով։ Հնարավոր է, որ այդ կոչերը վնաս չեն բերում խաղաղության գործին, բայց դրանք ի վիճակի չեն ի հայտ բերելու միջազգային լարվածության մեղավորներին։

Սկզբունքային տեսակետից «ռեալիստի» համար կարևոր չէ, թե գաղափարական ինչ պատյանի մեջ է դրվում «ուժը» և ինչի դեմ է այն ուղղված։ Բայց քանի որ ՍՍՀՄ-ը, սոցիալիստական մյուս երկրները դիտվում են որպես ամերիկյան «ազգային շահերի» իրականացման ճանապարհին կանգնած հիմնական ուժ, ուստի դրանց դեմ պայքարը հայտարարվեց ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության գլխավոր խնդիր։

«Իդեալիստների» և «ռեալիստների» դպրոցների կողքին վերջին երկու տասնամյակներին ԱՄՆ-ում հասակ է առել երրորդ դպրոցը, որը իր մեջ խտացրել է այն ամեն ռեակցիոնը, որ կա «քաղաքական իդեալիզմի» և «քաղաքական ռեալիզմի» դպրոցների մեջ։ Այդ դպրոցը կամ ուղղությունը ձևավորվել է վերևում հիշատակված Պենսիլվանիայի արտաքին քաղաքականության հետազոտության ինստիտուտում։ Դպրոցի միջուկը կազմված է այն քաղաքագետներից, որոնք համախմբված են ինստիտուտի կողմից հրատարակվող «Օրբիս» հանդեսի շուրջը։

ԱՄՆ-ի արտաքին քաղաքական ուսմունքների երրորդ դպրոցի հիմնադիրը և ամենախոշոր դեմքը Ռոբերտ Ստրաուս-Հյուպեն է, որը ծայրահեղ աջ արտաքին-քաղաքական մի շարք տեսությունների հեղինակ է[1]։

ԱՄՆ-ի տիրապետող դասակարգի արտաքին քաղաքական գաղափարախոսությունը չի ձևավորվել դատարկ, մաքուր տեղում։ Այն առաջ է եկել երկու ակունքներից։ Դրսից՝ իր դիրքերի պահպանման ու ամրապնդման պայքարի պահանջարկից՝ որպես գլոբալ իմպերիալիստական տերության և համաշխարհային իմպերիալիզմի լիդերի։ Ներսից՝ որպես Ամերիկայի և նրա տիրապետող դասակարգի պատմության որոշակի արդյունք։ Ուստի ճիշտ չէր լինի կարծել, թե ժամանակակից իմպերիալիզմի գաղափարախոսությունը ամբողջովին նույնանում է «ամերիկյան արտաքին քաղաքական գաղափարախոսությանը», չնայած վերջինս առաջինի վրա բացառիկ ուժեղ ազդեցություն է գործել։

Իհարկե, իմպերիալիստական քաղաքականության հիմնական տարրերը՝ հակակոմունիզմը, «ազգային շահերով» էքսպանսիոնիստական ձգտումների արդարացումը և այլն, ինչպես նշվեց վերևում, ամբողջությամբ վերցրած միջազգային իմպերիալիզմի դեմքը բնորոշող ընդհանուր գծեր են։ Բայց դրա հետ միասին ամերիկյան արտաքին քաղաքականության գաղափարական շատ նախադրյալներ և «հիմնավորումներ» կամ ունեն զուտ ազգային բնույթ, կամ նախատեսված են ռեգիոնալ մասշտաբներով օգտագործելու համար։ Այստեղ մեծ դեր են խաղում պատմությունը[1] և աշխարհագրական դիրքը։ Ուստի ԱՄՆ-ում այժմ լայն տարածում գտած արտաքին քաղաքական կոնցեպցիաները ճիշտ ըմբռնելու համար ավելորդ չէ համառոտակի անդրադառնալ ամերիկյան արտաքին քաղաքականության գաղափարական ասպեկտների պատմությանը։

ԱՄՆ-ի, որպես ինքնուրույն պետության, գոյության առաջին շրջանում նրա «ազգային շահերին» առավելապես համապատասխանում էր իզոլյացիոնալիզմի կոնցեպցիան։

Այդ շրջանում Միացյալ Նահանգների երիտասարդ զարգացող կապիտալիզմը հիմնականում զբաղված էր ներքին պրոբլեմներով։ Անգլիական գաղութային տիրապետությունից ազատագրված ամերիկյան կապիտալիզմի իզոլյացիոնիզմի կոնցեպցիան առավելագույն չափով արտահայտում էր նրա տնտեսական ու քաղաքական ձգտումները։ Արդեն ԱՄՆ-ի առաջին պրեզիդենտ Ջ. Վաշինգտոնը ձևակերպեց այն ժամա-

---

[1] Ռոբերտ Ստրաուս-Հյուպեի բազմաթիվ աշխատություններից հայտնի են հատկապես նրա «Վաղվա օրվա հավասարակշռությունը» (1945 թ.), «Միջազգային հարաբերությունները դեմոկրատիայի և դիկտատուրայի կոնֆլիկտի դարաշրջանում» (1950 թ.), «Անտարբերության զոնա» (1952 թ.), «Ուժը և հավասարակշռությունը» (1956 թ.) և այլ աշխատություններ։ 1970 թվականից սկսած Ստրաուս-Հյուպեն դիվանագիտական աշխատանքում էր. դեսպան էր Շրի-Լանկայում, Մալդիվյան հանրապետությունում, Բելգիայում, Շվեդիայում։ 1976 թվականին նա նշանակվում է ԱՄՆ-ի մշտական ներկայացուցիչ ՆԱՏՕ-ում։ Ռոբերտ Ստրաուս-Հյուպեի հայացքները հետագա զարգացում են գտել Պենսիլվանիայի դպրոցի մի շարք տեսաբանների, ինչպես օրինակ՝ Ուիլյամ Կինտերի, Ստեֆան Պոսոնի, Ռոբերտ Պֆալցգրաֆի և նրա մի շարք ուրիշ հետևորդների աշխատություններում։

[1] Այս մասին տե՛ս՝ **Б. П. Марушкин**, История и политика, М., 1969.

նակվա ամերիկյան արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքներից մեկը։ Նա ասում էր. «Եվրոպան իր համար ունի մի շարք առաջնակարգ շահեր, որոնք մեզ համար ոչ մի նշանակություն չունեն կամ ունեն միայն երկրորդական նշանակություն»։ Վաշինգտոնը ամերիկացիներին կոչ էր անում «խուսափել մշտական դաշինքներից», ում հետ էլ այն լինի։

1823 թվականին ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջեյմս Մոնրոն հանդես եկավ մի ծրագրով, որն այդ ժամանակվանից սկսած կոչվում է նրա անունով՝ «Մոնրոյի դոկտրինա»[1]։

«Մոնրոյի դոկտրինան» մշակվեց այն կապակցությամբ, որ Սրբազան դաշինքի երկրները պատրաստվում էին համատեղ ուժերով ինտերվենցիա կատարել Լատինական Ամերիկա, նպատակ ունենալով վերականգնել Իսպանիայի գաղութային իշխանությունը նրա նախկին տիրույթների վրա։ Մոնրոն առաջ քաշեց այն կոնցեպցիան, որ աշխարհը բաժանված է եվրոպական և ամերիկյան սիստեմների և որ այդ սիստեմներից ամեն մեկը մյուսից միանգամայն տարբեր շահեր ու ձգտումներ ունի։ Այստեղից էլ միմյանց ներքին գործերին չմիջամտելու պահանջը։ Նա գտնում էր, որ եվրոպական ոչ մի տերություն ամերիկյան մայրցամաքում գաղութացնելու որևէ նոր փորձի դիմելու իրավունք չունի։ Այստեղից էլ «Ամերիկան ամերիկացիների համար» սկզբունքի հռչակումը։ Պատնեշ դնելով եվրոպական տերությունների՝ Լատինական Ամերիկայի երկրներ թափանցելու փորձերին, «Մոնրոյի դոկտրինան» այդ տերիտորիաները ըստ էության դիտում էր որպես Միացյալ Նահանգների ազդեցության ոլորտ։ «Ամերիկան ամերիկացիների համար» սկզբունքը ըստ էության ամերիկյան մայրցամաքը ԱՄՆ-ի կողմից նվաճելու քողարկված պլան էր։ Այդ մայրցամաքի մյուս երկրների նկատմամբ ԱՄՆ-ը ստանձնեց հատուկ, բացառիկ դեր։ Չնայած այդ շրջանում ԱՄՆ-ը գաղութներ չուներ, բայց մայրցամաքում նա գնալով ձեռք էր բերում արտաքին ազդեցությունների լայն շրջանակ, որի մեջ մտնող երկրները անխուսափելիորեն կախվածության մեջ էին ընկնելու նրանից։

[1] **Н. Н. Болховитинов**, Доктрина Монро, М., 1959.

«Մոնրոյի դոկտրինան» ամերիկյան կապիտալիզմի արտաքին քաղաքականության էքսպանսիոնիստական ուղղության առաջին վարպետորեն քողարկված հիմնավորումն է։ Դա ամերիկյան կապիտալիզմի զարգացման այն էտապի արտահայտությունն է, երբ այլևս ներքին շուկան չէր բավականացնում և բուրժուազիան ձգտում էր արտաքին շուկաների, արտաքին ազդեցությունների։ Այն արձակեց Միացյալ Նահանգների բուրժուազիայի ձեռքերը և նրան մղեց դեպի տերիտորիալ զավթումների ամերիկյան մայրցամաքում։ 1812 թվականին ԱՄՆ-ը փորձ արեց գրավել Կանադան, 1846—1848 թվականներին զավթողական պատերազմ մղեց Մեքսիկայի դեմ և խլեց նրա տերիտորիայի կեսից ավելին, դարի վերջին օկուպացրեց Կուբան, իսկ 20-րդ դարի սկզբին վերահսկողություն հաստատեց Պանամայի ջրանցքի գոտում։

Հենց այդ ժամանակ էր, որ ձևավորվեց **պանամերիկանիզմի** գաղափարը, որը դարձավ լատինաամերիկյան մայրցամաքում Միացյալ Նահանգների գաղութատիրական քաղաքականության պաշտոնական գաղափար։ Այդ կոնցեպցիան այսօր էլ դեռ պահպանել է իր «հակաեվրոպական» ուղղվածությունն այն իմաստով, որ ԱՄՆ-ի ղեկավար շրջանները մեծ կասկածամտությամբ են նայում եվրոպական որևէ երկրի քաղաքական կամ տնտեսական գործունեությանը «Նոր աշխարհում», որը նրանք դիտում են իբրև իրենց պապենական կալվածք։

20-րդ դարի սկզբներին ամերիկյան իմպերիալիզմը դուրս եկավ միջազգային լայն ասպարեզ։ Իզոլյացիոնիզմի կոնցեպցիան արագորեն էռոզիայի ենթարկվեց, քանի որ նա չէր համապատասխանում իմպերիալիստական էքսպանսիայի նոր խնդիրներին[1]։

Միացյալ Նահանգներն աստիճանաբար դարձավ աշխարհի խոշորագույն իմպերիալիստական տերությունը, որի վարքը այդուհետև շատ բանով էր պայմանավորելու միջազգային հարաբերությունների վիճակն ամբողջ աշխարհում։ ԱՄՆ-ի մտնելն առաջին համաշխարհային պատերազմի մեջ, թեկուզ նրա ավարտման էտապում, փաստորեն վերջ դրեց իզոլյացիո-

[1] Այս մասին մանրամասն տե՛ս **Л. И. Зубок**, Экспансионистская политика США в начале XX века, М., 1969.

նիզմին և նշանավորեց իր սահմաններից շատ հեռու գտնվող երկրների ներքին գործերին միջամտելու ամերիկյան արտաքին քաղաքականության նոր էտապը։ Կարելի է ասել, որ այդ շրջանում ԱՄՆ-ը սահմանափակ իզոլյացիոնիզմից անցավ սահմանափակ ինտերվենցիոնիզմի քաղաքականության։ Այս անցումն առաջ քաշեց արտաքին քաղաքական գաղափարական այլ պատճառաբանությունների ու հիմնավորումների պահանջ, որոնք ունակ լինեին նոր ձևով ներկայացնելու ԱՄՆ-ի ազգային շահերը միջազգային ասպարեզում։ Այդ հիմնավորումներն իրենց մարմնավորումը գտան պրագմատիզմի փիլիսոփայության մեջ։

«Ճշմարիտն այն է, ինչ օգտավետ է» իր հիմնական սկզբունքով պրագմատիզմի փիլիսոփայությունը հենց սկզբից մտավ ԱՄՆ-ի արտաքին քաղաքական կոնցեպցիաների զինանոցը։ Ամեն տեսակ արտաքին քաղաքական տեսությունների համար այն ստեղծեց չափազանց շարժունակ և էլաստիկ բազա, հնարավոր դարձրեց դրանց շրջադարձը մեկ այս, մեկ այն կողմ։ Պրագմատիզմը հանդիսացավ երկրի տիրող դասակարգի նյութական ու քաղաքական մերկ շահերի առավել ցցուն արտահայտությունը։

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության էվոլյուցիան հատկապես արագ կատարվեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։ Դա տեղի ունեցավ միջազգային ասպարեզում առաջ եկած լուրջ փոփոխությունների պայմաններում։ Կազմավորվեց ու ամրապնդվեց սոցիալիզմի համաշխարհային սիստեմը, որը վերածվեց մարդկության զարգացման վճռական գործոնի։

Եթե մի ընդհանուր հայացք նետենք ետպատերազմյան շրջանում իմպերիալիստական երկրների արտաքին քաղաքականության էվոլյուցիայի վրա, կարելի է առանձնացնել երեք հիմնական էտապ։ Առաջին էտապը ընդգրկում է երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից մինչև 50-ական թվականների կեսերը, երբ աշխարհն ապրում էր ուժեղացող «սառը պատերազմի» մթնոլորտում։ Այս շրջանում իմպերիալիստական լագերից լսվում էին «կոմունիզմի հետ մեկընդմիշտ հաշիվ տեսնելու» անընդմեջ կոչերը, որոնք ոգեշնչվում էին կատաղի հակակոմունիստներ Ջ. Ֆ. Դալլեսի, Ու. Չերչիլի, Կ. Ադենաուերի կողմից։ Այդ շրջանում իմպերիալիստական երկրներում ամեն ինչ ենթարկված էր անխուսափելի թվացող նոր պատերազմի նախապատրաստությանը։

Երկրորդ էտապն ընդգրկում է 50-ական թվականների երկրորդ կեսից մինչև 60-ական թվականների վերջը (շուրջ 15 տարի)։ Շարունակելով պատերազմի նախապատրաստությունը, իմպերիալիստական կառավարությունները, սակայն, այս էտապում շեշտը դրեցին սոցիալիզմը «դեզինտեգրացիայի» ենթարկելու, այսինքն՝ այն ներսից քայքայելու վրա։ Առաջ եկավ «սոցիալիզմի վրա ճնշում գործադրելու», «միջուկային գերազանցություն ցուցադրելու» պահանջը։ Բայց հենց այդ ժամանակ էր, որ բուրժուական աշխարհի կառավարող շրջաններում և գաղափարախոսների միջավայրում սթափ ձայներ լսվեցին արտաքին քաղաքական կոնցեպցիաներում լուրջ փոփոխություններ մտցնելու անհրաժեշտության մասին։

Երրորդ էտապը սկսվեց 70-ական թվականների սահմանագլխին, երբ միջազգային հարաբերություններում իրականացվող քաղաքականության մեջ իմպերիալիստները ստիպված էին նկատելի փոփոխություններ կատարել։

Իսկ այդ էտապներից յուրաքանչյուրում ինչպիսի՞ էվոլյուցիա են ապրել և ի՞նչ տրամաբանական վախճան են ունեցել բուրժուական պետությունների իրականացրած արտաքին քաղաքական ակցիաները։

Երկրորդ աշխարհամարտից համաշխարհային կապիտալիզմը դուրս եկավ խիստ թուլացած։ Նրա հիմնական հարվածային ուժը՝ գերմանական ֆաշիզմը ջախջախված էր, պարտություն էր կրել միլիտարիստական Ճապոնիան, իսկ Անգլիան ու Ֆրանսիան չափազանց թուլացել էին։

Պատերազմից դուրս գալով ավելի հարստացած, ԱՄՆ-ը բացահայտորեն հավակնում էր տնօրինել աշխարհի բախտը և կանխորոշել նրա զարգացումը։ «Ցանկանում ենք դա թե ոչ,— ասել է ԱՄՆ-ի նախկին պրեզիդենտ Հարրի Տրումենը 1945 թվականին,— մենք պարտավոր ենք ընդունել, որ մեր տարած հաղթանակը ամերիկյան ժողովրդի վրա դրել է աշխարհի հետագա ղեկավարման պատասխանատվությունը»։ Ամերիկյան իմպերիալիզմի այդ գլոբալ հավակնությունները ներկայացվում էին իբրև ԱՄՆ-ի «ազգային շահեր»։

Ետպատերազմյան շրջանում ամերիկյան մոնոպոլիստական բուրժուազիայի շահերը տնտեսական լայն էքսպանսիայի պահանջ առաջադրեցին։ Միացյալ Նահանգների մոնոպոլիստական ընկերությունների հիմնական մրցակիցները պատերազմում պարտություն էին կրել, կամ այլևս ընդունակ չէին լուրջ դիմադրություն ցույց տալու ամերիկյան կորպորացիաներին, որոնք վիթխարի հարստություններ էին դիզել զենքի վաճառքից։ Կատարելով հերթական «սոցիալական պատվեր», ամերիկյան բուրժուական գաղափարախոսները մշակեցին և հրապարակ բերեցին այսպես կոչված «վակուում»-ի տեսությունը։ Այս տեսությունը ելնում էր նրանից, թե երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կապիտալիստական աշխարհում ստեղծվել է տնտեսական ու քաղաքական դատարկություն, որը պետք է լցվի ԱՄՆ-ի կողմից։

«Վակուում»-ի տեսությունը բացահայտորեն արդարացնում էր ամբողջ աշխարհի մասշտաբով ամերիկյան մոնոպոլիաների էքսպանսիան, ուրիշ երկրների գործերին ԱՄՆ-ի միջամտությունը, այն հաշվով, որպեսզի այդ երկրները կախման միջ ընկնեն իրենից և նրանցում թույլ չտրվեն առաջադիմական սոցիալական վերափոխություններ[1]։

Ետպատերազմյան առաջին շրջանի համար բնորոշ էր նաև միջազգային ասպարեզում ԱՄՆ-ի դերի գնահատման «մեսիանական» մոտեցումը։ Քանի որ պատերազմի վերջում ԱՄՆ-ը դարձավ կապիտալիստական աշխարհի ամենահզոր տերությունը, ապա ամերիկյան պետական և հասարակական ինստիտուտները հռչակվեցին որպես քաղաքակրթության բարձրագույն նվաճում։ «Կամ պետք է մենք աշխարհի նկատմամբ իրականացնենք բարոյական ղեկավարություն, կամ աշխարհն ընդհանրապես կմնա առանց ղեկավարության»,— այսպես է ասել ետպատերազմյան ամերիկյան արտաքին քաղաքականության գաղափարախոսներից մեկը՝ սենատոր Վանդենբերգը։ Աշխարհի զարգացումը դիտվում էր որպես ամերիկյան ստանդարտով՝ «Pax Americana»-ի ուղղությամբ կատարվող զարգացում։ Այդ առնչությամբ հրապարակ բերված բարոյական

[1] Այս մասին տե՛ս Ю. М. Мельников, Внешнеполитические доктрины США. М., 1970.

սկզբունքները կոչված էին քողարկելու ամերիկյան կառավարող շրջանների տնտեսական և քաղաքական էքսպանսիան։ Այդ սկզբունքները և դրանց հետ զուգորդվող ընդհանուր պրոբլեմները մշակեցին ամերիկյան պատմաբաններ ու հրապարակախոսներ Ռ. Օսգուդը, Ու. Լիպմանը, Դ. Պերկինսը, Վերա Դինը, Զ. Մարշալը, Ֆ. Տաննենբաումը, Ս. Բեմիսը և ուրիշներ։

Ամերիկյան այդ մոտեցումը բացահայտորեն հակադրվեց զարգացման սոցիալիստական ուղուն։ Ավելին, կոմունիզմը ոչ միայն հայտարարվեց հին ամերիկանոմորֆիզմի տեսության թշնամի գաղափարախոսություն, այլև ահավոր չարիք ողջ աշխարհի համար[1]։

Բայց աշխարհը բնավ էլ հանդես չբերեց ամերիկյան ձևով վերակառուցվելու ցանկություն, այլ փնտրեց տնտեսական, քաղաքական, սոցիալական վերափոխումների իր ուղիները։ Քանի որ հենց սոցիալիզմն էր բացել հասարակական զարգացման նոր ուղին, ուստի ամերիկյան թելադրանքը չընդունելու ամեն մի փորձ ներկայացվեց որպես կոմունիստների «մեքենայությունների» արդյունք, իսկ «մեսիանական մոտեցումը» վերածվեց ամենաթունդ հակակոմունիզմի քարոզի։

Հակակոմունիզմը յուրատեսակ ընդհանուր հայտարար դարձավ, որին հանգեցին ԱՄՆ-ի սոցիոլոգիական և քաղաքական տարբեր դպրոցների ներկայացուցիչներ։

Արտաքին քաղաքականության մեջ իրականացվող հակակոմունիզմը համապատասխանեց երկրի տիրապետող դասակարգերի ներքին շահերին։ Ընդգծելով դրսից «սպառնացող» մշտական վտանգը, ամերիկյան ռազմարդյունաբերական կոմպլեքսը աշխատավոր մասսաներից պահանջում էր է՛լ ավելի մեծ զոհողություններ ԱՄՆ-ի «ազգային շահերը» բավարարելու, «ազգային նպատակներին» հասնելու ճանապարհին։

Հակակոմունիզմն այն աստիճան համապատասխանեց ԱՄՆ-ի տիրապետող դասակարգի մտայնությանն ու քաղաքական տրամադրություններին, որ ետպատերազմյան ամերիկյան

[1] Տե՛ս А. Н. Яковлев, Идеология американской «империи», М., 1967.

բոլոր կառավարությունները, համարյա առանց փոփոխության, այն օգտագործեցին իբրև իրենց արտաքին քաղաքական կուրսի գլխավոր գաղափարական նախադրյալ։ Ավելին, նյութական հիմքի վրա ծնված ամեն մի գաղափարի նման, տվյալ գաղափարը ևս սկսեց աստիճանաբար կառավարել իրեն ծնունդ տված նյութական պրոցեսները։ Համաշխարհային տիրապետություն երազող ամերիկյան իմպերիալիզմի քաղաքական ձգտումների գաղափարական հիմնավորումից հակակոմունիզմը վերածվեց Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական գործունեության ռեալ գործոնի։

Ուժեղացավ աշխարհը միայն սև-սպիտակ տարբերակով տեսնելու ամերիկյան ղեկավարների ձգտումը։ Այդ տարբերակից ամենափոքր իսկ նահանջը դիտվում էր իբրև անցում թշնամու ճամբարը։ Սենատոր Ջոզեֆ Մակարտին գտնում էր, որ նույնիսկ Տրումենի կառավարությունը կիսով չափ կազմված է կոմունիստներից։

Աշխարհի սև-սպիտակ տեսիլը հանգեցրեց նրան, որ ԱՄՆ-ի ստանձնած այսպես կոչված արտաքին քաղաքական պարտավորություններն իրենց հետ բերեցին ծայրահեղ գործողություններ։ Սոցիալիստական աշխարհի նկատմամբ ԱՄՆ-ի անհանդուրժողականությունը ետպատերազմյան միջազգային պրակտիկայից բացառեց խաղաղ գոյակցության սկզբունքը։ Ամերիկյան իմպերիալիզմի առավել ռազմատենչ ներկայացուցիչներից Ջոն Ֆոստեր Դալլեսը գտնում էր, որ արտաքին թշնամու վրա ներգործելու հիմնական մեթոդը ռազմական ուժի մշտական հզորացումն է, այդ ուժի գործածության սպառնալիքը։

Արտաքին քաղաքականության բնագավառում իմպերիալիստական երկրների հետևողական հակակոմունիզմը, իր հերթին, թանձրացնում էր «սառը պատերազմի» մթնոլորտը։

«Սառը պատերազմի» հետևանքով առաջ եկան ռազմաքաղաքական թշնամական խմբավորումներ, պարարտ հող ստեղծելով ամենամոլի ռեակցիայի համար։ «Սառը պատերազմը» պատնեշ դրեց ժողովուրդների սոցիալական առաջադիմության, նրանց միջև նորմալ կապերի հաստատման ճանապարհին։

«Սառը պատերազմի» հիմքում ընկավ այսպես կոչված «կոմունիստական ագրեսիայի սպառնալիքի» մասին վարկածը։

Իմպերիալիստական ռեակցիան սարսափելի գույներով Արևմուտքի քաղքենուն էր ներկայացնում «ագրեսիվ», «հակադեմոկրատական», «տոտալիտար» կոմունիզմի կերպարը, որն ընդհանուր ոչինչ չուներ սոցիալիզմի իրական կերպարի հետ։ Ամերիկյան հայտնի ռազմական տեսաբան Մ. Թեյլորը գրում էր, որ ԱՄՆ-ի հիմնական խնդիրը «կոմունիստական էքսպանսիայի» դեմ անզիջում պայքարն է[1]։

«Կոմունիստական ագրեսիայի սպառնալիքի» մասին վարկածը ըստ էության զենքի ուժով հեղափոխության արտածման մասին բուրժուական կոնցեպցիայի տարբերակն էր։

Նոր չէ, իհարկե, որ բուրժուական գաղափարախոսները Սովետական Միությանը մեղադրում են «հեղափոխություն արտածելու» մեջ, փորձելով վարկաբեկել նրա արտաքին քաղաքականությունը։

Անժխտելի իրողություն է, որ կապիտալիզմն ամբողջությամբ վերցրած, որպես համաշխարհային սիստեմ, ապրել է իր դարը և պատմականորեն սպառել իրեն։ Բայց սրանից չի հետևում, թե կապիտալիստական բոլոր երկրներում առկա է սոցիալիզմի անցման հեղափոխական իրադրություն։ Յուրաքանչյուր տվյալ երկրի շրջանակներում այդպիսի անցումը հնարավոր է դառնում միայն ներքին անհրաժեշտ պայմանների ու նախադրյալների առկայության դեպքում։

Մարքսիստական-լենինյան գիտությունը ժխտում է բուրժուադեմոկրատական այն կոնցեպցիան, ըստ որի հասարակական կյանքի կարևորագույն երևույթներն առաջանում են օբյեկտիվ գործոններից անկախ։ Դեռևս «Կոմունիզմի սկզբունքները» աշխատության մեջ Ֆ. Էնգելսը նշել է, որ չի կարելի հեղափոխություն կատարել որևէ մեկի կամքով, կամ պատվերով, որ հեղափոխությունն ամենուրեք ու միշտ հանդիսանում է հանգամանքների անխուսափելի հետևանք։ Կապիտալիզմը չի կարող սոցիալիզմով փոխարինվել առանձին անհատների, առանձին խմբերի և կուսակցությունների ցան-

[1] Տե՛ս «Мирное сосуществование—ленинский курс внешней политики Советского Союза», изд-во ИМО, М., 1962, էջ 287:

կությամբ, այլ միայն կարելի է իրականացնել տվյալ երկրի աշխատավորների մեծամասնության կամքով։ Առավել ևս հեղափոխություն չի կարելի անել դրսի ռազմական միջամտությամբ։ Պատերազմը չի կարող հեղափոխության «անուղղակի ռեզերվ» դառնալ, ինչպես կարծում են բուրժուական գաղափարախոսները։ Վ. Ի. Լենինը նշել է, որ կոմունիստները քաջ գիտեն, թե պատերազմը որքան չարիքներ է բերում բանվորներին և գյուղացիներին, ուստի նրանք ամեն ինչ անելու են, որպեսզի կանխեն պատերազմի սպանդը[1]։

Այսպիսով, մարքսիզմ-լենինիզմը վճռականապես ժխտում է այս կամ այն երկրին դրսից սոցիալիզմ փաթաթելու ամեն տեսակ փորձերը։ Իր հերթին խելահեղություն են վերջնականապես սոցիալիզմի ուղի մտած ժողովուրդներին կապիտալիստական ռեստավրացիա փաթաթելու իմպերիալիստական փորձերը։

Ծտպատերազմյան առաջին տարիներին ԱՄՆ-ի արտաքին քաղաքական գործունեության մեջ առաջնակարգ նշանակություն ձեռք բերեց բլոկների քաղաքականությունը։ Ամերիկյան իմպերիալիզմին թվում էր ինքնին հասկանալի, որ իր հեգեմոնիայի ոլորտում եղած երկրները միավորվեն շահերի ընդհանրությամբ, շահեր, որոնք միշտ էլ համընկնելու են տեսանելի պատմական հեռանկարում։ «Ազատ աշխարհը» պաշտպանելու պատրվակով առաջ քաշվեց ռազմական խմբավորումների, ռազմաքաղաքական բլոկների ստեղծման պահանջ։

ԱՄՆ-ի էքսպանսիոնիստական քաղաքականության կարևորագույն բաղկացուցիչ մասը հանդիսացավ Եվրոպայի կապիտալիստական երկրների տնտեսական և ռազմաքաղաքական լիակատար ենթարկման պլանը։ Սկզբնապես այդ պլանում գլխավոր դերը հատկացվեց այսպես կոչված «Տրումենի դոկտրինային» և «Մարշալի պլանին»։ «Տրումենի դոկտրինան» նախատեսում էր Միջերկրական ծովի արևելյան շրջանում ստեղծել ամերիկյան ռազմական բազաներ՝ ժողովրդական դեմոկրատիայի երկրների վրա մշտական ճնշում գործադրելու համար։

[1] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 162—163։

«Տրումենի դոկտրինայի» հռչակումից անմիջապես հետո ԱՄՆ-ը ձեռնամուխ եղավ այսպես կոչված «ատլանտյան համերաշխության» միության ստեղծմանը։ Ամերիկյան իմպերիալիստներին համեմատաբար հեշտ հաջողվեց այդ բանն իրականացնել, և դրա պատճառներից մեկն այն է, որ ատլանտիզմի գաղափարները վաղուց խոր արմատներ էին գցել արևմտաեվրոպական պետական ու քաղաքական գործիչների մտածողության մեջ։

Ինչպես հայտնի է, Հիտլերյան Գերմանիայի քաղաքական գործիչների հիմնական մտասևեռումը «գերմանական կայսրության» ստեղծումն էր, որն առաջին հերթին պետք է ընդգրկեր մայրցամաքային Եվրոպայի զգալի մասը։ Դա լինելու էր «կարմիր վտանգի» դեմ պայքարի միջուկն ու պատվարը։ Հիտլերականներն անգլո-ամերիկյան «պլուտոկրատական կապիտալիզմը» լավագույն դեպքում դիտում էին իբրև ժամանակավոր ու անհույս դաշնակից։

Ծտպատերազմյան նոր պայմաններում ամերիկյան գաղափարական կոնցեպցիաները զգալի չափով տարբերվեցին նման մոտեցումից։ Գլխավոր թշնամին, բնականաբար, մնացել է նույնը։ Բայց կոմունիզմի դեմ պայքարի կենտրոնը, նրա միջուկն այժմ այլ կերպ էր պատկերացվում։ Այժմ այդ միջուկը ամերիկյան ղեկավար դասակարգի աչքում «ատլանտյան սիստեմն» էր, որի հիմնադիրը, պատվարն ու խնամակալը «անգլոսաքսոնական դեմոկրատիան» էր, այլ խոսքով՝ Միացյալ Նահանգներն ու Անգլիան։

1949 թ. ապրիլին կյանքի կոչվեց «Հյուսիսատլանտյան ագրեսիվ բլոկը։ Դա նշանակում էր, որ ԱՄՆ-ը իր այսպես կոչված «պաշտպանության գոտին» տարածում է Արևմտյան Եվրոպայի երկրների մեծ մասի վրա։

ԱՄՆ-ի նախաձեռնությամբ և նրա ճնշման տակ, ՆԱՏՕ-ից բացի, ստեղծվեցին մի շարք ուրիշ ռազմական փակ խմբավորումներ։ 1951 թվականի սեպտեմբերին ԱՄՆ-ը «փոխադարձ պաշտպանության» պայմանագիր կնքեց Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հետ (ԱՆԶՅՈՒՍ)։ Երեք տարի հետ ստեղծվեց «Հարավարևելյան Ասիայի պաշտպանություն» (ՍԵԱՏՕ) կոչվող բլոկը։ 1954 թվականի հոկտեմբերին ստորագրվեցին

Փարիզի համաձայնագրերը, որոնք Հյուսիսատլանտյան բլոկի դոնները բացեցին Արևմտյան Գերմանիայի առջև։

Ամերիկյան իմպերիալիզմի համար հատկապես կարևոր նշանակություն ստացավ «Միջին արևելքի կենտրոնական պայմանագրի կազմակերպությունը»՝ ՍԵՆՏՕ-ն։ Ռազմաքաղաքական այս խմբավորման բնույթը պայմանավորվեց Մերձավոր արևելքի և Կենտրոնական Ասիայի ազգային-ազատագրական շարժումների, ինչպես նաև Սովետական Միության և սոցիալիստական երկրների դեմ իմպերիալիստների ագրեսիվ մտադրություններով։ Այն կոչված էր կապող օղակի դեր խաղալու ՆԱՏՕ-ի և ՍԵԱՏՕ-ի ռազմաքաղաքական բլոկների միջև։

ՍԵՆՏՕ-ի կազմակերպիչների պլանով այդ պակտը իր մեջ ամենից առաջ պետք է ընդգրկեր Մերձավոր արևելքի շրջանը, հատկապես արաբական երկրները։ Հենց այդ պատճառով այն կոչվեց Բաղդադի պակտ։ Բայց այդ պլանը չիրագործվեց։ Միակ արաբական պետությունը, որը մտավ բլոկի մեջ, Իրաքն էր։ Շուտով, 1958 թ. հուլիսի 14-ի ազգային հեղափոխության հաղթանակից հետո, Իրաքը դուրս եկավ պակտից։ Դրանից հետո Բաղդադի պակտը վերանվանվեց Կենտրոնական պայմանագրի կազմակերպության (Central Treaty Organization — CENTO) ՍԵՆՏՕ-ի մեջ մնացին երեք ասիական պետություններ՝ Թուրքիան, Իրանը և Պակիստանը, ինչպես նաև ռեգիոնի նախկին խոշորագույն գաղութային տերությունը՝ Անգլիան։ Հենց սկզբից բլոկի գործունեությանը ուղղություն էր տալիս ամերիկյան դիվանագիտական մեքենան։

Միացյալ Նահանգների ողջ պատմության ընթացքում չափազանց մեծ դեր է խաղացել Նոր Աշխարհի երկրների և Ժողովուրդների «միասնական բախտի» գաղափարը, որն, ինչպես նշվեց վերևում, առաջին անգամ մշակվել է դեռևս անցյալ դարի սկզբներին։

Արդեն վաղուց պանամերիկանիզմի գաղափարը գործնականում արտահայտում է ամերիկյան իմպերիալիստների շահերը։ Վերջին կես դարում (և հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո) այն ավելի ու ավելի մեծ մասշտաբներով է ծառայել Միացյալ Նահանգների էքսպանսիոնիստական ձգտումներին։ Հանուն այդ գաղափարի Վաշինգտոնը հիմնադրեց Ամերիկյան պետությունների կազմակերպությունը և «Միություն հանուն առաջադիմության» միավորումը։ 1956 թվականին Արգենտինայի կառավարությունը, ԱՄՆ-ի թելադրանքով, հանդես եկավ Լատինական Ամերիկայի համար Հարավատլանտյան պաշտպանական կազմակերպություն ստեղծելու առաջարկով։ Դրանք անհաջող փորձեր էին կասեցնելու լատինաամերիկյան երկրներում սոցիալ-տնտեսական ու քաղաքական առաջադիմական տեղաշարժերը և նրանց պահելու ԱՄՆ-ի ազդեցության տակ։ ԱՄՆ-ը ձգտում էր ստեղծել միացյալ լատինաամերիկյան զինված ուժեր, որոնք հյուսիսամերիկյան խորհրդատուների ղեկավարությամբ պետք է պայքար ծավալեին մայրցամաքի հեղափոխական շարժումների դեմ։ Մայրցամաքի անվտանգության ապահովման պատրվակով բացահայտ զինված ինտերվենցիա կատարվեց Գվատեմալայի և Դոմինիկյան հանրապետությունների դեմ, բռնագրավվեց Պանամայի ջրանցքի գոտին, պրովոկացիոն բազմաթիվ ակտեր կազմակերպվեցին Կուբայի դեմ և այլն։

ԱՄՆ-ի հովանավորությամբ ստեղծված ագրեսիվ բլոկները հենց իրենց գոյությամբ թունավորում էին միջազգային մթնոլորտը, ուժեղացնում նոր համաշխարհային պատերազմի սպառնալիքը, չխոսելով արդեն այն մասին, որ դրանք ուղղված էին սոցիալիստական աշխարհի, ազգային-ազատագրական շարժումների դեմ։

Ռազմաքաղաքական բլոկներ ստեղծելուց զատ Միացյալ Նահանգները երկկողմանի ռազմական համաձայնագրեր կնքեցին մի շարք երկրների հետ։ Դրանցից են՝ Ֆիլիպինների հետ կնքած «Համատեղ պաշտպանության» պայմանագիրը (1951 թ. սեպտեմբեր), Ճապոնիայի հետ կնքած «Անվտանգության պայմանագիրը» (1951 թ. սեպտեմբեր), Հարավային Կորեայի Լի Սին Մանի կլիկի հետ կնքած «Փոխադարձ պաշտպանության» պայմանագիրը (1953 թ. հոկտեմբեր), Իսպանիայի հետ համաձայնությունը՝ նրա տերիտորիայում ամերիկյան ռազմական բազաներ ստեղծելու մասին (1954 թ. մարտ), չանկայշիականների հետ կնքած «Փոխադարձ անվտանգության պայմանագիրը» (1954 թ. դեկտեմբեր) և այլն։

Առաջնորդվելով համաշխարհային տիրապետություն հաստատելու, կապիտալիստական աշխարհը լիովին իրեն ենթար-

կելու գաղափարով, ԱՄՆ-ը, բնականաբար, պետք է հանդիպեր և հանդիպեց սոցիալիզմի համաշխարհային սիստեմի հակազդեցությանը՝ որպես գլխավոր խոչընդոտի։ Ահա թե ինչու կապիտալիստական ողջ աշխարհի սփռվածքով մեկ նա վերցրեց ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների դեմ ուղղված շուրջ հիսուն պաշտոնական պարտավորություն։ ԱՄՆ-ի հակասոցիալիստական դիրքի դաժան հետևողականությունից օգտվում էին ծախու և մարիոնետային ռեժիմները։ Բավական էր, որ սրանք հակակոմունիզմը հռչակեին իրենց արտաքին ու ներքին քաղաքականության կրեդո, որպեսզի խոշորագույն կապիտալիստական տերությունների կառավարություններից ստանային բարոյական և նյութական լայն աջակցություն։

Ռազմական բլոկներ ստեղծելուց և երկկողմանի ռազմական համաձայնագրեր կնքելուց բացի իմպերիալիստական տերությունները ձեռնամուխ եղան ռազմական բազաների լայն ցանցի ստեղծմանը։ Այդ բազաները դարձան մոնոպոլիստական բուրժուազիայի և առաջին հերթին ամերիկյան մոնոպոլիաների շահերի պաշտպանության կարևորագույն միջոցներ։

Սկսած 50-ական թվականների սկզբներից, ԱՄՆ-ը արտասահմանյան տարբեր երկրներում տեղադրեց իր բանակի ավելի քան մեկ քառորդ մասը՝ մոտ 560 հազար զինվոր։ Եթե 20-ական թվականներին ամերիկյան զինվորներ կային արտասահմանյան 3 երկրում, երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ՝ 39, ապա 70-ական թվականների սկզբներին՝ 64 երկրում։ Ուրիշ երկրների տերիտորիաներում ԱՄՆ-ը ստեղծեց ավելի քան 450 խոշոր ռազմական բազա։ Ամերիկյան զինվորական հրամանատարությունը միայն Արևմտյան Եվրոպայում եղած ռազմական բազաներում վերահսկում էր ավելի քան 7200 ատոմային մարտագլխիկներ։

Ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, ռազմաքաղաքական բլոկների և ռազմական բազաների ստեղծման իմպերիալիստական քաղաքականությունը հանդիպեց խաղաղասեր պետությունների, բոլոր մայրցամաքների ժողովուրդների բուռն դիմադրությանը։

Այսպես, օրինակ, ՍԵԱՏՕ-ի ռազմական բլոկը քայքայման եզրին կանգնեց ասիական ժողովուրդների զայրույթի, նրանց

հակաիմպերիալիստական ու հակապատերազմական ակտիվ գործողությունների շնորհիվ։ Հատկապես վիետնամական պատերազմը ցույց տվեց, որ բլոկների մեխանիզմը իմպերիալիստներն օգտագործում են ոչ թե մայրցամաքի անվտանգությունն ապահովելու համար, ինչպես պատճառաբանում էին նրանք, այլ Ասիայի մի շարք երկրների ռազմական ավանտյուրաների մեջ ներքաշելու, դրանց ուրիշ պետությունների դեմ հանելու համար։ Վիետնամական պատերազմի ժամանակ ամերիկյան զինվորականությունը Հնդկաչինի երկրների ռմբակոծման համար օգտագործեց Ֆիլիպիններում և Տաիլանդում տեղադրված ռազմական բազաները։ ՍԵԱՏՕ-ի որոշ մասնակիցներ ագրեսորի կողմում, իրենց կամքին հակառակ, ներքաշվեցին վիետնամական պատերազմի մեջ։ Դա հասարակական լայն շարժում առաջ բերեց Ճապոնիայում, Ֆիլիպիններում, Տաիլանդում տեղադրված ամերիկյան ռազմական բազաները վերացնելու համար։

Վերջին տարիներս հակասությունները խիստ սրվել են ՆԱՏՕ-ի ռազմաքաղաքական փակ խմբավորման ներսում, հատկապես ԱՄՆ-ի և նրա եվրոպական պարտնյորների միջև։ Այդ բանն առանձնակի ուժով դրսևորվեց 1973 թվականի աշնանը Մերձավոր արևելքում տեղի ունեցած պատերազմի ժամանակ, մասնավորապես Ամերիկայի հայտնի ռազմատենչ քայլի կապակցությամբ։ Փորձելով ահաբեկել Սովետական Միությանը և արաբական աշխարհի նրա բարեկամներին, այդ օրերին ԱՄՆ-ը իր զինված ուժերի, այդ թվում՝ Եվրոպայում գտնվող ստորաբաժանումների մարտական բարձր պատրաստություն հայտարարեց, այդ մասին չհարցնելով և նույնիսկ իրազեկ չպահելով ՆԱՏՕ-ի գծով իր դաշնակիցներին։

Դեռ երբեք, թերևս չէր պատահել, որ մի կողմից Փարիզը, Լոնդոնը, Բոնը, իսկ մյուս կողմից՝ Վաշինգտոնը հրապարակայնորեն սուր քաղաքական մեղադրանքներ տային միմյանց, փոխադարձաբար իրար մեղադրեին դաշնակցային պարտավորությունների խախտման մեջ։

ՆԱՏՕ-ի եվրոպական անդամները խոր վրդովմունքով էին խոսում ԱՄՆ-ի միակողմանի եսասիրական գործողությունների մասին, իսկ ամերիկացիները գանգատվում էին, թե դաշնակիցներն իրենց այնպես են պահում, կարծես ոչ մի ատ-

լանտյան դաշինք գոյություն չունի։ Արաբների կողմից արևմտյան որոշ երկրներին նավթի մատակարարումների կրճատումը նույնպես նպաստեց կապիտալի աշխարհում հակասությունների ուժեղացմանը։

Արևմտյան ճամբարում բախումների այս դրամատիկ սրումը, իհարկե, իր հետևանքներն ունեցավ։ Մի կողմից բացահայտորեն թուլացան «ատլանտյան համերաշխության» կապերը, մյուս կողմից նոր խթան ստացավ արևմտաեվրոպական երկրների հետագա համախմբման միտումը։

Եվրոպայում ամերիկյան ազդեցության դեմ պայքարի գլուխ կանգնեցին ֆրանսիացիները։ Ֆրանսիայի պրեզիդենտ Շառլ դը Գոլի հակաանգլոսաքսոնական զգացմունքները հայտնի էին դեռևս երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակներից։ 60-ական թվականների սկզբներին այդ զգացմունքներն ուժեղացան ֆրանսիական բուրժուազիայի տնտեսական աճող հզորության հետևանքով։ Ընդ որում, առաջին անգամ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո «ատլանտիզմի» ամերիկյան հասկացողությանը հակադրվեց մի այլ կոնցեպցիա։ Դուրս չգալով ընդհանուր, իմպերիալիստական, հակակոմունիստական գաղափարական շրջանակներից, այդ կոնցեպցիան որոշակի հրաժարվեց ընդունել «ատլանտյան» ստրուկտուրայի անգլոսաքսոնական միջուկի առաջնությունը։

Եթե ամերիկյան կառավարող շրջանների համար Եվրոպան կոմունիզմի դեմ պայքարի առաջավոր դիրք է, որից պայքար է մղվում այն շահերի ու «արժեքների» համար, որի կենտրոնը Միացյալ Նահանգներն են, ապա «եվրոպացիների»՝ դը Գոլի կողմնակիցների համար Ամերիկան ներկայացնում էր այն «կուլտուրական գոտու» ծայրամասը, պրովինցիան (չնայած տնտեսական ու ռազմաստրատեգիական պլանով այն աճել էր հիպերտրոֆիկ ձևով), որի գրավիտացիոն կենտրոնը պատմականորեն միշտ եղել է մայրցամաքային Եվրոպան, իսկ նրանում՝ Ֆրանսիան։ Ելնելով այդ կոնցեպցիայի բովանդակությունից և քաղաքական ուղղվածությունից, միանգամայն բնական էր Անգլիան դիտել որպես Միացյալ Նահանգների «տրոյական ձի» Եվրոպայում ու ձգտել նրա մեկուսացմանը մայրցամաքում։

Գործի այս գաղափարական կողմը նկատի ունենալն

օգնում է պարզ բացահայտելու ՆԱՏՕ-ի և «ընդհանուր շուկայի» (մասնավորապես Անգլիային այդ կազմակերպությունից ներս թողնելու) շուրջը ծավալված ամերիկա-ֆրանսիական պայքարի տարընթացությունների որոշ առանձնահատկությունները։ Հասկանալի է նաև Միացյալ Նահանգների ձգտումը՝ «համոզել» Ֆրանսիային իր զինված ուժերը վերադարձնելու ՆԱՏՕ-ի ռազմական կազմակերպություն, մի բան, որ թելադրված է ոչ միայն ռազմաստրատեգիական և նույնիսկ ոչ միայն քաղաքական (այդ բառի կոնկրետ, պրակտիկ իմաստով) նկատառումներով։ Ետպատերազմյան ժամանակաշրջանում ԱՄՆ-ը մշտապես ձգտել է կապիտալիստական գլխավոր երկրների համար մշակել միասնական մոտեցում համաշխարհային քաղաքականության գործերում և այն իդենտիֆիկացնել «աշխարհի ամերիկյան կոնցեպցիայի» հետ։ Այլ կերպ ասած, խոսքը գնում է այն մասին, որ միջազգային իմպերիալիզմի գլոբալ ստրատեգիան կարողանալ ներդաշնակել ամերիկյան արտաքին քաղաքականությանը։

Թե ինչպես ամերիկյան իմպերիալիստների շատ մտադրություններ ու արտաքին քաղաքական պլաններ ձախողվել են, երևում է նաև Ամերիկյան պետությունների կազմակերպության և Հարավատլանտյան կազմակերպության վիճակից։

Բնորոշ է, որ պանամերիկյան կոնցեպցիան, որը վերջին տարիներին զգալի հակակոմունիստական երանգավորում է ընդունել, այժմ մերժվում է Լատինական Ամերիկայի երկրների տեղական բուրժուազիայի և «միջին շերտերի» զգալի խմբերի կողմից։ Որպես այդ նեոգաղութակալական գախափարախոսության ալտերնատիվ, ավելի ու ավելի ակտիվորեն է առաջ մղվում Միացյալ Նահանգների քաղաքական, տնտեսական և գաղափարական տիրապետության դեմ ուղղված լատինաամերիկյան երկրների և ժողովուրդների համերաշխության գաղափարը։

Միացյալ Նահանգների տիրապետող դասակարգերը շարունակում են Լատինական Ամերիկան դիտել որպես ձևականորեն սուվերեն, բայց, փաստորեն, «ամերիկյան» տերիտորիա, որպես ԱՄՆ-ի յուրատեսակ «հետնաբակ»։ Ահա թե ինչու նրանք այնքան անհանգստացած են Լատինական Ամերիկայում տեղի ունեցող դեպքերի զարգացումով։

Իսկական քաղաքական անկախության հասնելու և սոցիալական վերափոխումների դիմելու լատինաամերիկյան երկրների ձգտումների աճը ծայրահեղորեն վտանգավոր է դառնում ԱՄՆ-ի կառավարող դասակարգի համար։ Ամերիկյան ղեկավար շրջանների աչքում գործը նաև նրանով է բարդանում, որ տեղի է ունենում աշխարհի կարգերի մասին նրանց տրադիցիոն պատկերացումների հեղաշրջում։ Լատինական Ամերիկան, որ միշտ դիտվել է իբրև «համարյա Միացյալ Նահանգներ», համարյա սրա շարունակությունը, այժմ դառնում է ոչ թե ձևական, այլ ռեալ երաշխիքներ և իրավունքներ պահանջող թշնամական ուժ։

«Կոմունիստական ագրեսիայի սպառնալիքի» մասին տեսությունից և ռազմական բլոկների քաղաքականությունից ծընունդ առան «ուժի դիրքերի» դոկտրինները, որոնք կարմիր թելի նման անցել են վերջին երկու-երեք տասնամյակներին հանդես եկած բուրժուական արտաքին քաղաքական կոնցեպցիաների միջով։

Չնայած «ուժի դիրքերի» քաղաքականության իմպերիալիստական դոկտրինները մշակվել են «սառը պատերազմի» ժամանակաշրջանում, բայց դրանք այսօր էլ շարունակում են իրենց գոյությունը։ Ավելին, ժամանակ առ ժամանակ այդ դոկտրինները հրապարակ են իջնում նոր տեսքով, նոր ձևակերպումներով և ամեն անգամ իրենց բովանդակությունը լրացնում են իմպերիալիստական գաղափարական զինանոցի նորանոր փաստարկներով։

Ամերիկյան հեղինակներ Ջ. Դոգերտին և Ռ. Պֆալցգրաֆը «Միջազգային հարաբերությունների մասին միմյանց հետ մրցակցող տեսությունները» աշխատության մեջ ուղղակի գրում են, որ «ուժը» հասարակական գիտությունների ասպարեզում այնպիսի հիմնական հասկացողություն է, ինչպես «էներգիան»՝ ֆիզիկայում։

«Ուժի դիրքերի» տեսության էությունը հանգում է նրան, որ ռազմական միջոցների օգնությամբ կարելի է վերացնել առաջադիմական սոցիալ-քաղաքական փոփոխությունները։ Այլ խոսքով բռնության բուրժուական տեսության կողմնակիցները միանգամայն ընդունելի են համարում օբյեկտիվ օրինաչափություններին բռնության միջոցների, հատկապես, մասսայական բնաջնջման զենքի հակադրումը։ Բռնության բուրժուական տեսությունները լայնորեն օգտագործում են սոցիոլոգիայի, քաղաքատնտեսության պատմագրության տվյալները, իհարկե, դրանք մեկնաբանելով ցանկացած ձևով, կամայականորեն։

Ժամանակակից միջազգային հարաբերությունները քննարկելով «ուժի դիրքերից», բուրժուական մի շարք գաղափարախոսներ այն տեսակետն են արտահայտում, թե ըստ էության այս կամ այն պետության կամ պետությունների խմբի հզորության պրակտիկ ստուգման միակ հնարավոր չափանիշը պատերազմն է։

Ամերիկյան բուրժուական տեսաբան Ջ. Բլեյնին պատերազմը համարելով «ուժի ստուգման առավել ճիշտ ֆորմուլա», գրում է, թե հավանաբար «ուժերի հարաբերակցության չափման առավել հումանիստական և արդյունավետ ուղու որոնումը ավելորդ զբաղմունք է»։ Ժամանակակից միջազգային դրությունը բնորոշելով որպես «ուժի պահպանմամբ հանդերձ անկայուն խաղաղություն», Ջ. Բլեյնին հանգում է այն եզրակացության, թե անհրաժեշտ է շարունակել սպառազինությունների մրցավազքը, նկատի ունենալով, որ պատերազմները, այդ թվում համաշխարհային պատերազմները, մարդկային կյանքի անբաժանելի մասն են։

Բուրժուական գիտնականներն իրենց աշխատություններում փորձում են բացահայտել բռնության էությունը, պատճառները, միջազգային ասպարեզում նրա դրսևորման ձևերն ու բովանդակությունը։ Բռնության մասին նույնիսկ հանդես է եկել մի ամբողջ գիտություն՝ «վայոլենտոլոգիա»։ Բայց գործնականում այդ «գիտության» հետևորդները ձգտում են կյանքի կոչել այն հնացած դոգմաները, որոնք հակագիտական մեկնաբանություն են տալիս մարդկային հասարակության զարգացման օրենքներին, այդ զարգացման մեջ ամեն քայլափոխի բացարձականացնելով բռնության դերն ու նշանակությունը։

Անշուշտ, չի կարելի կարծել, թե «ուժի դիրքերի» դոկտրինան ու քաղաքականությունը իրենց ոլորտն են առել արտաքին քաղաքականության պրոբլեմներով զբաղվող բուրժուական բոլոր գիտնականներին ու քաղաքագետներին։ Արևմուտքում քիչ չեն արտաքին քաղաքական հարցերի շուրջը հանդես եկող

գիտնականները, որոնք բացահայտորեն մերժում են «ուժի դիրքերի դոկտրինան»[1]: Բայց փաստ է նաև այն, որ այդ դոկտրինան խոր արմատներ է գցել Արևմտյան երկրների բուրժուական լայն շրջանների մտածողության մեջ։

Վերջին երեք տասնամյակների ընթացքում «ուժի դիրքերի» դոկտրինայից ու քաղաքականությունից բխել են բուրժուական բազմաթիվ կոնցեպցիաներ, որոնք պրակտիկ մարմնավորում են գտել իմպերիալիստական երկրների արտաքին քաղաքականության մեջ։

Դրանցից է, օրինակ, «կոմունիզմը զսպելու» կոնցեպցիան, որը ձևավորվել է ԱՄՆ-ում, 40-ական թվականների վերջերին, իբրև «սառը պատերազմի» արդյունք։ Իրենց արտաքին քաղաքականության զինանոցում այդ կոնցեպցիային կարևորագույն տեղ են հատկացրել նաև ԱՄՆ-ի դաշնակիցները, հատկապես արևմտագերմանական ռեակցիոն շրջանները։ Պատահական չէ, որ «կոմունիզմը զսպելու» կոնցեպցիայի Բոննի տարբերակը պահանջում է «կոմունիզմը ետ շպրտել» 1939 թվականի սահմանները։ Այսպիսով, այդ կոնցեպցիայի արտաքնապես պաշտպանողական ձևակերպումների ետևում թաքնված են իմպերիալիզմի ամենաագրեսիվ շրջանների ձգտումները։

50-ական թվականների սկզբներից լայն տարածում գտավ պատերազմի եզրին հավասարակշռման քաղաքականությունը,

[1] «Ուժի դիրքերի» դոկտրինան ու քաղաքականությունը իր մի շարք աշխատություններում խիստ քննադատել է ամերիկյան պրոֆեսոր Գ. Կոլկոն. G. Kolko. Wealth and Power in America. An Analysis of Social Class and Jncome Distribution. N. Y., 1962; The Triumph of Conservatism. A Reinterpretation of American History, 1900—1916. N. Y., 1964; Railroads and Regulation, 1877—1916. Prinston, N. Y., 1965; The Roots of American Foreign Policy.An Analysis of Power and Purpose. Boston, 1969; The Limits of Power. The World and United States Foreics Policy, 1945—1954. N.—Y. 1972.

«Ուժի դիրքերի» քաղաքականությունը խիստ քննադատության է ենթարկված ամերիկյան գիտնական, Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր Ջոն Գեդդիսի «Միացյալ Նահանգները և սառը պատերազմի ծագումը 1941—1947 թթ.» գրքում, որը լույս տեսավ 1971 թ (Iahn Gaddis. The United States und Origins of the Gold war, 1941—1947. New York and London, Columbia University Press,1972, X+396 p.p).

որի իրականացման հետևանքով աշխարհը բազմիցս կանգնեց միջուկային պատերազմի եզրին։ Եվ միայն մեծ ջանքերի գնով, այն էլ վերջին րոպեներին, հաջողվում էր կանգ առնել հենց այդ եզրին։ Բավական էր միայն մի սխալ, որպեսզի մարդկության գլխին գար մեծ, անուղղելի աղետ։ Միջազգային քաղաքական ճգնաժամերը, որոնք արդյունք էին պատերազմի եզրին հավասարակշռման քաղաքականության, հաջորդում էին միմյանց, ասես հաստատելու համար, թե անհնարին է դուրս գալ վտանգավոր ջրապտույտից։ Չնայած այժմ իր հրապույրը մեծապես կորցրել է պատերազմի եզրին հավասարակշռելու քաղաքականությունը, բայց դարձյալ առաջ են գալիս միջազգային քաղաքական ճգնաժամեր, որոնք ունակ են մարդկությունը կանգնեցնելու աղետի առջև։

Ժամանակակից միջազգային քաղաքական ճգնաժամերի վտանգավոր բնույթը պայմանավորված է մի շարք հանգամանքներով։

Առաջին, վիթխարի ծավալներ են ընդունել հրթիռամիջուկային զենքի պաշարները, որոնք հազարավոր անգամ մեծացնում են հավանական կոնֆլիկտների ավերիչ մասշտաբները։ Երկրորդ, ժամանակակից միջազգային քաղաքական ճգնաժամերը, որպես կանոն, համընդհանուր բնույթ են ստանում, ուստի դրանք ունակ են վայրկյանաբար ուղղակի կամ անուղղակի ձևով իրենց ոլորտի մեջ ներքաշելու աշխարհի խոշորագույն տերությունները և ռազմական կոալիցիաները։ Իսկ այդ համընդհանուր բնույթը հետևանք է, մասնավորապես, գիտատեխնիկական հեղափոխության, որի շնորհիվ ստեղծված կոմունիկացիաների գլոբալ սիստեմը, մասսայական ինֆորմացիայի միջոցները, ռազմատեխնիկական միջոցների կոմպլեքսը և այլն թույլ են տալիս չտեսնված կարճ ժամկետներում ուժերը կենտրոնացնել առաջացած ճգնաժամի գոտում։ Երրորդ, ժամանակակից միջազգային քաղաքական ճգնաժամերում էական վտանգ են ներկայացնում այսպես կոչված «չվերահսկվող տարրերը», այսինքն՝ գործոնների այն ամբողջությունը, որն այս կամ այն լոկալ ագրեսիվ ուժին հնարավորություն է տալիս ստեղծել այնպիսի իրավիճակ, որը տանում է դեպի կոնֆլիկտների սրում, իմպերիալիստական խոշոր տերություններին հրում է ավելի ակտիվ գործողությունների։ Նման լոկալ

ուժի ցայտուն օրինակ է հանդիսանում Իսրայելը իր բազմաթիվ ագրեսիվ գործողություններով։ Չորրորդ, միջազգային քաղաքական ճգնաժամերը ուժեղացնում են միջազգային լարվածությունը, վերածնում են «սառը պատերազմի» մթնոլորտը, սրում են հարաբերությունները մեծ տերությունների միջև։ Հինգերորդ, դրանք խթանում են ոչ միայն լոկալ ռազմական կոնֆլիկտներում օգտագործվող զենքերի արտադրությունը, այլև ստրատեգիական զենքերի սպառազինությունների մրցավազքը։ Մասնավորապես ԱՄՆ-ի ռազմարդյունաբերական կոմպլեքսը միջազգային քաղաքական ճգնաժամերի ընթացքում և դրանց հետևանքով ստեղծված իրադրությունն օգտագործում է, որպեսզի կառավարությանը կոչ անի արագացնելու սպառազինությունների մրցավազքը։ Վերջապես, վեցերորդ, միջազգային քաղաքական ճգնաժամերը կարող են առաջ բերել միջազգային տնտեսական հարաբերությունների լուրջ խզում։ Դրա ցայտուն օրինակը էներգետիկ ճգնաժամի սրվելն է Արևմտյան Եվրոպայում, Ճապոնիայում և ԱՄՆ-ում՝ մերձավորարևելյան 1973 թվականի պատերազմից հետո։

Սրանք են այն վտանգները, որոնք մեր ժամանակներում առաջ են գալիս միջազգային խոշոր կոնֆլիկտների և միջազգային քաղաքական ճգնաժամերի հետևանքով։

«Պատերազմի եզրին հավասարակշռելու» քաղաքականության դրույթներից մեկն այսպես կոչված «սառսափի հավասարակշռության» գաղափարն է, որի համաձայն խաղաղությունը կարող է պահպանվել միայն ոչնչացման սարսափի ուժով։

Միջազգային քաղաքական ճգնաժամերից ծնունդ առավ այսպես կոչված «զանգվածային հատուցման» դոկտրինան։ Այս դոկտրինան նախատեսում է ամեն րոպե պատրաստ լինել գործածելու միջուկային զենք։ «Զանգվածային հատուցումը» իմպերիալիստների վրեժի արտահայտությունն է ռեալ սոցիալիզմի նկատմամբ՝ վերջինիս ձեռք բերած հաջողությունների համար։ Պատահական չէ, որ զանգվածային հատուցման դոկտրինան ԱՄՆ-ին զրկել է միջազգային ասպարեզում որևէ նախաձեռնությամբ հանդես գալու հնարավորությունից։

Բացահայտ բռնության քարոզով է հանդես գալիս այսպես կոչված «ուժի ցուցադրման» դոկտրինան։ Ուժի ցուցադրման

առավել բնորոշ եղանակներից են՝ մարտահրավերների բնույթ կրող ռազմական մանևրները, ուժի գործածության սպառնալիքով զանազան պահանջներ ներկայացնելը և այլն։ Բռնության այս բոլոր մեթոդներն ու ձևերը հաստատապես մտել են իմպերիալիստական պետությունների, առաջին հերթին ամերիկյան իմպերիալիզմի արտաքին քաղաքական պրակտիկայի զինանոցը։

Ուժի ցուցադրման դոկտրինայի առավել բնորոշ տարատեսակներից մեկն այսպես կոչված «հրետանավերի դիվանագիտությունն» է։ Այս դոկտրինայի համաձայն թույլատրելի է համարվում ռազմական նավատորմ ուղարկել ուրիշ երկրների տերիտորիալ ջրերը, եթե դա պահանջում են ԱՄՆ-ի, Անգլիայի և իմպերիալիստական մյուս երկրների շահերը։

«Հրետանավերի դիվանագիտությունը» հատկապես բնորոշ է ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությանը։ Իսկ դա պատահական չէ, որովհետև այս երկրում է մշակվել ժամանակակից պատերազմներում ռազմածովային նավատորմի դերի կոնցեպցիան, որը ստացել է «օվկիանոսային» կամ «կապույտ ջրի» կոնցեպցիա անվանումը։

«Կապույտ ջրի» կոնցեպցիայի հեղինակները ԱՄՆ-ը դիտում են իբրև համաշխարհային օվկիանոսում ընկած մի կղզի, իսկ մնացած աշխարհը՝ ամերիկյան իմպերիալիզմի ուժի գործադրության ոլորտ։ Ելնելով գեոպոլիտիկական այդ նախադրյալից, նրանք ենթադրում են, թե մոտակա գալիքում զինված պայքարի գլխավոր ասպարեզը լինելու են ակվատորիաները, իսկ պատերազմներում վճռական դեր են խաղալու ռազմածովային ուժերը։ Օվկիանոսային կոնցեպցիան նախատեսում է ԱՄՆ-ի ռազմածովային ուժերի տիրապետությունը հաստատել ոչ միայն Ատլանտյան և խաղաղ օվկիանոսներում, այլև Հնդկական օվկիանոսում։ Այդ կոնցեպցիայի հեղինակները գտնում են, որ եթե ռազմածովային ուժերն ընդունակ են լուծելու միջուկային ընդհանուր պատերազմի հետ կապված հարցերը, ապա առավել ևս ի վիճակի են լուծելու սահմանափակ պատերազմի, հրետանային դիվանագիտությամբ թելադրվող ռազմական կոնֆլիկտների հետ առնչվող հարցերը։

«Սառը պատերազմի» իրադրության մեջ է ծնունդ առել

«սահմանափակ պատերազմի» դոկտրինան։ Ամերիկյան քաղաքագետները հենց սկզբից այս դոկտրինան ռեկլամեցին որպես «զանգվածային հատուցման» փակուղուց դուրս գալու միակ ելք։

«Սահմանափակ պատերազմի» դոկտրինայի կրտսեր տարբերակը եղավ «լոկալ կոնֆլիկտների» տեսությունը, որը ելնում է նրանից, որ սպառազինությունների մրցավազքը անխուսափելիորեն հանգեցնում է մի այնպիսի կետի, երբ այլևս անհնար է լինում կանխել ռազմական ընդհարումները։ Այսպիսի դեպքում, ասում են այդ տեսության հեղինակները, գերադասելի է ունենալ «լոկալ կոնֆլիկտներ», քան համընդհանուր պատերազմ։

Իմպերիալիստները ունակ են լոկալ կոնֆլիկտներ առաջ բերելու և դրանք առաջ են բերում սոցիալիստական երկրների հետ (Հյուսիսային Կորեա, Հյուսիսային Վիետնամ և այլն), «երրորդ աշխարհի» զարգացող երկրների հետ (Եգիպտոս, Ալժիր, Կոնգո և այլն), զարգացող անկախ երկրների միջև (զինված ընդհարումները Հնդկաստանի և Պակիստանի, Սոմալիի և Եթովպիայի միջև և այլն)։ Որոշ դեպքերում միջազգային լոկալ կոնֆլիկտների պատճառ են դառնում նաև սոցիալիստական առանձին երկրներում իշխանության գլուխ կանգնած շովինիստական և նացիոնալիստական ուժերը, ինչպես, օրինակ, մաոականները Չինաստանում։ Լիովին հրաժարվելով արտաքին քաղաքականության սոցիալիստական սկզբունքներից, վերցնելով հակասոցիալիստական, հակասովետական կուրս, այդ ուժերը նույնպես ունակ են առաջ բերելու ռազմաքաղաքական լոկալ կոնֆլիկտներ։

Ամերիկյան իմպերիալիզմի գաղափարախոսները մշակել են «նվազագույն չարիքի» տեսությունը։ Այդ տեսության հեղինակներն արդարացնում են «սահմանափակ պատերազմը», գտնում են, որ ընդհանուր պատերազմի համեմատությամբ այն «նվազ չարիք» է։

«Նվազագույն չարիքի» տեսությունը, սակայն, իր մեջ մեծ չարիք ու վտանգ է պարունակում։ Տարբեր աստիճանի ինտենսիվության միջուկային պատերազմների միջև յուրատեսակ ջրբաժաններ անցկացնելը չափազանց համարձակ էկվիլիբրիստիկա է, քանի որ այդ ջրբաժանները պայմանական են, ծայրահեղորեն անկայուն ու շարժունակ։ Մեկ անգամ արձակված հրթիռամիջուկային զենքը շղթայական ռեակցիայի սկիզբ կարող է դնել, որը կընթանա միանգամայն անկոնտրոլ և արագ, եթե հատկապես հաշվի առնենք ԱՄՆ-ի ժամանակակից ռազմական տեխնիկայի մակարդակը և նրա ռազմաքաղաքական դոկտրինների բովանդակությունը։ Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ստենլի Հոֆմանը իրավացի է, ասելով, որ ոչ մի երաշխիք չկա, թե սկսած «սահմանափակ» միջուկային պատերազմը կարող է մնալ որոշակի շրջանակներում։

«Մեծ» կամ «փոքր» չարիքի մասին ամերիկյան որոշ տեսաբանների խորհրդածությունները ելնում են միջուկային կոնֆլիկտի անխուսափելիության կոնցեպցիայից։ Այդ իսկ պատճառով «սահմանափակ» միջուկային պատերազմի պրոպագանդը հարվածում է խաղաղ գոյակցության գաղափարին, համաշխարհային խաղաղության գործին։

Ամերիկյան արտաքին քաղաքականության գաղափարական զինանոցում 60-ական թվականներին ամուր նստեց «էսկալացիայի» տեսությունը, որի հեղինակն էր Հերբերտ Կանը։ Այդ տեսությունը ծնունդ առավ Վիետնամում ԱՄՆ-ի մղած «կեղտոտ պատերազմի» հետևանքով։ «Էսկալացիայի» տեսությունը ելնում էր նրանից, որ անհրաժեշտ է հարաճուն ձևով ավելացնել ամերիկյան զորքերի թիվը Հնդկաչինում, մշտապես ուժեղացնել թշնամական տերիտորիայի ռմբակոծումը մինչև այն ժամանակ, երբ հակառակորդը «ծնկի կգա»։ Այդ տեսության համաձայն ամերիկյան կառավարությունը միաժամանակ պետք է ուժեղացներ պրոպագանդիստական պայքարը, տարբեր «դոզաներով» զուգորդեր քաղաքական, գաղափարական, տնտեսական և ռազմական պայքարի զանազան միջոցները։

Ամերիկյան քաղաքական շրջաններում վերջին ժամանակներս առաջ քաշված կոնցեպցիաներից մեկի ելակետն այն է, որ սպառազինությունների մրցավազքը ոչ միայն չի խանգարում լարվածության թուլացմանը, այլև օգնում է դրան։ ԱՄՆ-ի պաշտպանության նախկին մինիստր Շլեսինջերն ասել է, թե ոչ մի հակասություն չկա լարվածության թուլացման և որոշակի մակարդակի վրա ռազմական հզորության պահպանման միջև։ Ավելին, նա նշել է, որ ռազմական հզորությունը լարվածության թուլացման գլխավոր գործոն է։

Այս տեսակետի տարբերակներից մեկը ներկայումս ամերիկյան մամուլում աշխուժորեն քննարկվող այսպես կոչված «նորից նշան բռնելու դոկտրինան» է: Դրա բովանդակությունը հանգում է նրան, որ անհրաժեշտ է մեծապես կատարելագործել ԱՄՆ-ի ստրատեգիական հարձակողական զենքերի տեսակները, որոնք ունակ լինեն ոչնչացնող հարված հասցնելու «հակառակորդի տերիտորիայի առանձին առավել կարևոր օբյեկտների»:

«Նորից նշան բռնելու» դոկտրինան քիչ բանով է տարբերվում ռազմատեսական նախկին կոնցեպցիաներից: Այս դոկտրինայում հատուկ տեղ է հատկացված հակառակորդի ռազմական օբյեկտների ոչնչացման խնդրին, որ ամերիկյան դաղափարախոսները անվանում են «հակաուժի ստրատեգիա»: Սա առաջ է քաշվում իբրև «երաշխավորված ոչնչացման» ալտերնատիվ, որի տակ հասկացվում է զանգվածային հրթիռամիջուկային հարված, այսինքն՝ հարված նաև քաղաքների վրա:

«Նորից նշան բռնելու» կոնցեպցիայի պրոպագանդիստները ըստ էության նկատի ունեն, որ ԱՄՆ-ը պետք է պատրաստ լինի մղելու ինչպես սահմանափակ միջուկային, այնպես էլ համընդհանուր պատերազմ: Եվ այդ ամենն անվանվում է «ճկունություն»: Հիմնավորելու համար «նորից նշան բռնելու» ստրատեգիայի անհրաժեշտությունը, ամերիկյան ռազմական տեսաբանները պնդում են, թե «սահմանափակ» միջուկային պատերազմներն ունակ են ամրապնդելու միջազգային կայունությունը: Իրականում այդ տեսությունը, որ թույլատրելի է համարում միջուկային զենքի գործածությունը, տանում է դեպի սովորական և ատոմային պատերազմների միջև տարբերությունների վերացում, ստեղծում է միջուկահրթիռային միջոցների օգտագործմամբ պատերազմի օրինականության մասին պատրանք: Եվ խորապես իրավացի է ամերիկյան հետազոտող Բերի Կարտերը, որը գրում է, թե «նորից նշան բռնելու» կոնցեպցիան փաստորեն իր մեջ պարունակում է ընդհանուր միջուկային պատերազմի տրամաբանությունից բխող բոլոր տարրերը:

70-ական թվականների սահմանագծում ասպարեզ եկավ «Գուամյան դոկտրինան»: Այդ տեսության հեղինակները

հանդես եկան հետևյալ պահանջով՝ ազգային-ազատագրական շարժման դեմ պայքարի (ներառյալ զինված պայքարի) հիմնական ծանրությունը ԱՄՆ-ից վերցնել և դնել նրանից կախման մեջ գտնվող երկրների և ռեժիմների վրա: «Գուամյան դոկտրինան» կյանքում իրականացնելու առաջին քայլը եղավ այսպես կոչված «վիետնամիզացիան», որի հիման վրա Սայգոնի մարիոնետային ռեժիմի զինված ուժերն աստիճանաբար բռնեցին Վիետնամից հեռացող ամերիկյան զորքերի տեղը, սրանցից ստանալով զենքի բոլոր տեսակները, ռազմամթերք, զինվորական հանդերձանք, տրանսպորտային միջոցներ և այլն:

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության սկզբունքների «թարմացման» արտահայտություններից մեկն այսպես կոչված «Նիքսոնի դոկտրինան» էր, որը ծավալուն տեսքով ձևակերպվել է 1970 թ. փետրվարի 18-ին կոնգրեսին ուղղված պրեզիդենտական ուղերձում:

Եթե խոսելու լինենք այդ դոկտրինայի դաղափարական-քաղաքական ելակետային սկզբունքների մասին, ապա պետք է նշել, որ սովետա-ամերիկյան «ստրատեգիական պարիտետ» ճանաչող դոկտրինաներին հատուկ է ակնհայտ էկլեկտիզմը: Տպավորություն է ստեղծվում, թե այդ դոկտրինայի հեղինակները ձգտել են հաշվառել և մի ամբողջության մեջ հավաքել (նույնիսկ փոխադարձաբար միմյանց բացառող) այն պոստուլատները, որոնց վրա Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական տարբեր դպրոցները կառուցում են իրենց կոնցեպցիաները: Այստեղ կարելի է գտնել և՛ գլոբալիստական մոտիվներ («պարտավորությունների պահպանման», «պարտնյորության ամրապնդման» մասին և այլն) և՛ որոշ տուրք նեոիզոլյացիոնիզմին (նոր «պարտավորությունների» նկատմամբ ավելի զգույշ վերաբերմունքի մասին խորհուրդներ և այլն): Այստեղ բազմաթիվ հայտարարություններ կան «ուժի քաղաքականությունից» հրաժարվելու, «կոնֆրոնտացիայի դարաշրջանից բանակցությունների դարաշրջանին անցնելու» մասին և այլն: Ռազմական ծախսերի էժանացման անհրաժեշտության մասին պահանջները զուգորդվում են ԱՄՆ-ի հրթիռամիջուկային զենքի որակական աճի մասին պահանջի հետ:

Բայց այդ բոլոր երկիմաստությունների, անորոշությունների, բարձրագոչ ֆրազների միջով անցնում է միանգամայն պարզ ու հետևողական մի գիծ։ Դա այն է, որ անփոփոխ է մնում միջազգային ասպարեզում ԱՄՆ-ի հիմնական հակառակորդը, հետևապես, անփոփոխ է մնում նաև Միացյալ Նահանգների գլխավոր նպատակը՝ այդ հակառակորդի ոչնչացումը։ Այդ պատճառով «Նիքսոնի դոկտրինայի» հիմնական խնդիրը հանգեցվում է նրան, որպեսզի մշակվեն սկզբունքային մեթոդոլոգիական սկզբունքներ ամերիկյան հակակոմունիստական ստրատեգիայի արդյունավետության բարձրացման, հին խնդիրների իրականացման նպատակով միջազգային կյանքի նոր գործոնների ավելի ռացիոնալ օգտագործման համար և այլն։

1975 թվականի վերջերին ԱՄՆ-ում առաջ քաշվեց մի նոր դոկտրինա։ Չինաստան, Ինդոնեզիա և Ֆիլիպիններ կատարած ուղևորությունից հետո ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջերալդ Ֆորդը դեկտեմբերի 7-ին հռչակեց «Նոր խաղաղօվկիանոսային դոկտրինա», այն ամփոփելով վեց կետերի մեջ. 1) իր ռազմական հզորությամբ ԱՄՆ-ը պետք է ներկա լինի խաղաղ օվկիանոսի շրջանում, այնտեղ պահպանի իր ռազմական հզորությունը. 2) ԱՄՆ-ի ստրատեգիայի հիմնական նպատակներից մեկը Ճապոնիայի հետ ամենասերտ հարաբերություններ ունենալն է. 3) գլխավոր խնդիրներից մեկը ԱՄՆ-ի և Չինաստանի ժողովրդական Հանրապետության միջև նորմալ հարաբերությունների հաստատումը և կապերի ամրապնդումն է. 4) անհրաժեշտ է «կայուն վիճակ ստեղծել Հարավարևելյան Ասիայում», ամեն կերպ օգնել և աջակցել ԱՍԷԱՆ-ի (Հարավարևելյան Ասիայի պետությունների ասոցիացիա) մեջ մտնող երկրներին՝ Ինդոնեզիային, Ֆիլիպիններին, Տաիլանդին, Սինգապուրին և Մալայզիային. 5) շարունակել ամուր կապեր ունենալ Հարավային Կորեայի հետ, այնտեղ երկար ժամանակ պահպանել ամերիկյան զինված ուժերը. 6) Խաղաղ օվկիանոսին հարող և Հարավարևելյան Ասիայի երկրների միջև ստեղծել «տնտեսական համագործակցության ամուր ստրուկտուրա»։

«Նոր խաղաղօվկիանոսյան դոկտրինան» միջազգային հասարակայնությունը հենց սկզբից դիտեց իբրև հերթական

մի փորձ, որի նպատակն է ժողովուրդների կամքին հակառակ խաղաղ օվկիանոսի շրջանում և Հարավարևելյան Ասիայում հաստատել ամերիկյան իմպերիալիզմի հեգեմոնիան։

Ամերիկյան իմպերիալիզմի գաղափարախոսների և տեսաբանների մի մասի համար վերջին ժամանակներս բնորոշ է դարձել առաջադրված հարցերին պատասխանելու համար իրենց երկրի հասարակական-քաղաքական կոնցեպցիաների պատմությանը դիմելու տենդենցը։ Խոսքը վերաբերում է այսպես կոչված նեոիզոլյացիոնիզմի կողմնակիցներին, որոնց թվում կան ինչպես ամերիկյան տիրապետող դասակարգի աջ թևի ներկայացուցիչներ, այնպես էլ տրադիցիոն ուղղության հետևորդներ։ Տեսնելով, թե ինչպես պատմական նախաձեռնությունը աստիճանաբար ու անշեղորեն անցնում է համաշխարհային սոցիալիզմին, այդ գործիչները առաջարկում են Ամերիկան դիտել որպես հակակոմունիստական, հակահեղափոխական «բերդ», որպես մի ուժ, որն այսուհետև նույնպես պետք է հետևողականորեն պայքարի իր անփոփոխ նպատակների ու շահերի համար, բայց առայժմ իր հիմնական ուշադրությունը ժամանակավորապես պետք է կենտրոնացնի ներքին դժվարությունները հաղթահարելու վրա, որոնք ԱՄՆ-ի տիրապետող դասակարգերի մոտ առաջ են բերել լուրջ տագնապ ու վախ։

Մյուս կողմից, տրադիցիոն «գլոբալիստների» համար բնորոշ է նրանց կոնցեպցիաների որոշակի «դեմորալիզացիայի» տենդենցը։

Նախկինում ԱՄՆ-ի տրադիցիոն արտաքին քաղաքական նշանաբանը «մեսիանիզմն» էր հանուն «ազատության ու դեմոկրատիայի»։ 60-ական թվականներին ամերիկյան արտաքին քաղաքական էքսպանսիայի համար բնորոշ դարձավ «պրոսպերիտի» (ծաղկում) բառը։ Բայց այդ նշանաբանին նույնպես վիճակված չէր երկար կյանք ունենալու։ Այժմ Միացյալ Նահանգների տիրապետող դասակարգն ավելի ու ավելի մեծ մասշտաբներով է ձգտում իր իմպերիալիստական պլանները կապել գիտատեխնիկական հեղափոխության արդյունքների և հեռանկարների հետ։ Այդ կապակցությամբ ամերիկյան արտաքին քաղաքականության առաջատար տեսաբաններից մեկը՝ Զ. Բժեզինսկին գրում է, որ սկզբնա-

կան շրջանում աշխարհի վրա Ամերիկայի ազդեցությունը զգալի չափով իդեալիստական էր, Ամերիկան նույնացվում էր ազատության հետ։ Այնուհետև նրա ազդեցությունը դարձավ ավելի մատերիալիստական՝ Ամերիկան դիտվում էր իբրև անհատակ հնարավորությունների շտեմարան։ Այսօր, սակայն, նյութական առավելություններ կարելի է տեսնել աշխարհի շատ շրջաններում։ Այդ իսկ պատճառով ներկայումս կարելի է միայն խոսել ԱՄՆ-ի գիտական և տեխնոլոգիական բնույթի ազդեցությունների մասին։

Իհարկե, վերևում բերված պարբերության մեջ պրոբլեմը ներկայացված է խեղաթյուրված տեսքով։ Բայց մի բան պարզ է. ամերիկյան արտաքին քաղաքական գաղափարախոսության մեջ սոցիալական և իրավական բնույթի փաստարկները իրենց տեղը ավելի ու ավելի զիջում են «գիտական և տեխնոլոգիական» տեսակետին։

Այդ կոնցեպցիայի համաձայն Միացյալ Նահանգները, իբր, դուրս են գալիս «ետինդուստրիալ» նոր հասարակության բնագծերը։ Այդ հասարակությունն ամենից առաջ բնորոշվում է նրանով, որ այստեղ տեխնոլոգիան ոչ միայն դառնում է սոցիալական վերափոխությունների «սկզբունքային դետերմինատ», այլև նրանով, որ այն սկսվում է վճռական ազդեցություն գործել էթիկական սկզբունքների էվոլյուցիայի, բարոյական արժեքների ողջ սիստեմի վրա։ Ամերիկյան իմպերիալիզմի գաղափարախոսները, մասնավորապես Բժեզինսկին, դրանից հետևություն են անում ողջ արտաքին քաղաքականության տեսության և պրակտիկայի վերակառուցման անհրաժեշտության մասին, ղեկավարվելով գիտատեխնիկական դարաշրջանին ադեկվատ «տեխնոտրոնային» գաղափարական կողմնորոշումով։

Արդեն այժմ չափազանց մեծ ուշադրություն է նվիրվում «Ամերիկայի նոր կերպարի» պրոպագանդային, որը գլխավորապես նպատակամղված է դեպի «երրորդ աշխարհ» և Արևմտյան Եվրոպայի սոցիալիստական երկրներ։

«Տեխնոտրոնային դարի» գաղափարի այդ զույգ ապլիկացիաների վերլուծությունը պարզ ցույց է տալիս, որ մենք գործ ունենք հակակոմունիզմի նոր տարատեսակի հետ, որը մոլորակի առաջադիմական ուժերի դեմ մղվող պայքարում

փորձում է առաջին պլան մղել գիտատեխնիկական նվաճումները, որոնց բնագավառում Միացյալ Նահանգների կառավարող շրջաններն իրենց շատ ավելի վստահ են զգում։ Այդ շրջանները հույս ունեն Ամերիկայի, որպես «ազատության» ու «դեմոկրատիայի» «պատվարի» մասին մաշված հասկացողությունները փոխարինել գիտատեխնիկական նվաճումներով։

Բուրժուական որոշ տեսաբաններ փորձում են ապացուցել, թե միջազգային հարաբերությունների սիստեմում տեղի ունեցող փոփոխություններն արդյունք են ոչ թե սոցիալիզմի հզորության ամրապնդման, այլ հետևանք են տարերային պրոցեսների, քաղաքական և սոցիալական գործոնների հետ ոչ մի կապ չունեցող «ֆատալիստական» զանազան երևույթների։ Ոմանք էլ գտնում են, թե միջազգային հարաբերություններում կատարվող փոփոխություններն արդյունք են նրա «ինքնազարգացման»։ Սրանք միջազգային հարաբերությունները նույնացնում են բիոլոգիական օրգանիզմի հետ և «ստրուկտուալ ֆունկցիոնալիզմի» դիրքերից պաշտպանում են այն թեզը, թե սոցիալական ամեն մի սիստեմ «ինքնակարգավորման» տենդենց ունի։ Սիստեմի մեջ «հավասարակշռությունը», կամ «կարգը» պահպանվում է շնորհիվ դրանում եղած «ֆունկցիոնալ իմպերատիվի», որը նպաստում է սիստեմի մեջ մտնող միավորների ինտեգրացիային։

Չիկագոյի համալսարանի պրոֆեսոր Դ. Լիսկան գրում է, թե քանի որ միջազգային հարաբերությունները կազմում են սիստեմ, ուստի դրանք «իրենք իրենց» ձգտում են կայունության և հավասարակշռության։ Ամերիկյան մի ուրիշ պրոֆեսոր Մ. Հենկոկը այն կարծիքին է, որ միջազգային քաղաքականությունը մարդկային գործունեության բնագավառ լինելով, իր սեփական տրամաբանությամբ ճնշում է պետական գործիչների վրա, շատ դեպքում էլ նրանց կամքին հակառակ։

Իրենց երկիմաստությամբ, արտաքին «չեզոքությամբ» և «օբյեկտիվությամբ» հանդերձ, այս տեսություններն ունեն քաղաքական որոշակի ուղղվածություն։ Սրանց հեղինակների գլխավոր մտահոգությունն է՝ միջազգային հարաբերություններից դուրս մղել դասակարգային բովանդակությունը, որը,

ինչպես հայտնի է, որոշվում է սոցիալական երկու հակամարտ սիստեմների պայքարով։

Իրական փաստերը ցույց են տալիս, որ խաղաղ գոյակցության սկզբունքների հիմքի վրա միջազգային հարաբերությունների սիստեմի վերակառուցումը տեղի է ունենում ոչ թե տարերայնորեն, ոչ թե դրանց «ինքնականոնավորման» շնորհիվ, ոչ թե որպես պետությունների մեխանիկական փոխներգործության հետևանք, այլ կատարվում է աշխարհում տեղի ունեցած արմատական փոփոխությունների, սոցիալիստական երկրների նպատակասլաց համաձայնեցված գործողությունների շնորհիվ։

Միջազգային հարաբերությունների «ինքնակարգավորման» մասին հարցի դրվածքը, ինչ խոսք, մի քայլ առաջ է իմպերիալիզմի և նրա արտաքին քաղաքականության բացահայտ ջատագովությունից, որը հատուկ էր «սառը պատերազմի» ժամանակաշրջանին։ Գերադասություն տալով «տարերային ինքնակարգավորման» թեզին, բուրժուական գաղափարախոսները փաստորեն ընդունում են հակակոմունիստների նախկին բազմաթիվ փաստարկների անհիմն լինելը։

Վերջին տարիներս ամերիկյան կառավարող շրջաններում լայն տարածում է գտել այսպես կոչված «սահմանափակ մրցակցության» կոնցեպցիան։ Դրա հեղինակներից մեկը՝ Հարվարդի համալսարանի միջազգային հարաբերությունների ուսումնասիրության կենտրոնի նախկին ղեկավար Ռ. Բոուինը այն կարծիքն է հայտնում, թե ՍՍՀՄ-ի հետ հարաբերություններում ԱՄՆ-ի կառավարությունը պետք է կարողանա «համագործակցությունը» զուգակցել կոմունիզմը «զսպելու», այն «սանձահարելու» քաղաքականության հետ։ Բացատրելով իր միտքը, Ռ. Բոուինը նշում է, որ խոսքն այն մասին է, որպեսզի կարողանալ միաժամանակ ՍՍՀՄ-ի հետ վարվել և որպես «ագրեսիվ հակառակորդ» և որպես «սահմանափակ պարտնյոր»։

«Սահմանափակ մրցակցության» կոնցեպցիայի հետ շատ ընդհանրություններ ունի «ճկուն հակազդելու» կոնցեպցիան, որի հեղինակները միանգամայն անհեռանկար համարելով միջուկային տոտալ ագրեսիան, միաժամանակ անկարող են

հրաժարվելու պատերազմից, որպես արտաքին քաղաքական նպատակներին հասնելու միջոց։

Ամերիկյան մոնոպոլիստական բուրժուազիայի արտաքին քաղաքական էքսպանսիայի գաղափարական պատճառաբանությունների համար բնորոշ է նաև «բաց դռների» դոկտրինան։ Բառի նեղ իմաստով այն ձևավորվել է անցյալ դարի վերջերին, որը կոչված էր արդարացնելու Միացյալ Նահանգների այն ժամանակվա հեռավորարևելյան քաղաքականությունը։ Դրանից հետո ամերիկյան շատ գաղափարախոսներ այդ կոնցեպցիան դիտել և դիտում են որպես ընդհանրապես արտաքին աշխարհի հետ ԱՄՆ-ի հարաբերությունների ընդհանուր «փիլիսոփայական» հիմնաքար։ Խոսքը վերաբերում է ամերիկյան ապրանքների ու գաղափարների դիմաց ողջ աշխարհը, բոլոր երկրները և ռեգիոնները «բաց պահելուն»։ Հետաքրքիր է, որ իմպերիալիստական այդ թեզը միանգամայն զուրկ է «հետադարձ կապից»։ Հայտնի է, թե ԱՄՆ-ը որպիսի պատնեշներ է ստեղծել այլ երկրներից ներմուծվող ապրանքների առջև, թե արտաքին առևտրում որպիսի հետևողականությամբ է նա անցկացնում դաժան պրոտեկցիոնիստական քաղաքականություն։

ԱՄՆ-ի արտաքին քաղաքական հարաբերությունների մեջ կարևոր տեղ է հատկացված իր դաշնակիցների հետ հարաբերությունների կատարելագործմանը։

Ռազմաքաղաքական դաշնակիցների վրա ԱՄՆ-ի ղեկավար դերի պահպանման գաղափարը կարմիր թելի նման անցնում է այսպես կոչված «պարտնյորության» կոնցեպցիայի միջով։

«Պարտնյորության» կոնցեպցիան ուրվագծվեց դեռևս 1965 թվականին, Հենրի Քիսինջերի «Անհանգիստ պարտնյորություն» գրքում։ Գտնելով, որ ԱՄՆ-ի համար չափազանց վտանգավոր է դաշնակիցների, մասնավորապես եվրոպական դաշնակիցների գործերին հարկ եղածից ավելին միջամտելը, Հ. Քիսինջերը արտահայտվեց ԱՄՆ-ի դաշնակիցների նկատմամբ նոր մոտեցման օգտին, որը նրան հնարավորություն կտար ավելի ճկուն իրականացնելու ղեկավար դերը կապիտալիստական աշխարհում։

Իրենց աշխատություններում «պարտնյորության» կոն-

ցեպցիան տարբեր կողմերից զարգացրել են միջազգային հարաբերությունների ամերիկյան տեսաբաններ Ու. Կինտները, Ռ. Պֆալցգրաֆը և ուրիշներ։ Անդրադառնալով ՆԱՏՕ-ի կազմակերպության գծով պարտնյորներին, ամերիկյան տեսաբանները գրում են, որ նրանք լիովին «հասուն» են և ԱՄՆ-ի հետ կարող են իրավահավասար հարաբերությունների մեջ մտնել։ Այդ «իրավահավասար հարաբերությունները» սակայն անպայման ենթադրում են ԱՄՆ-ի ղեկավար դերի պահպանում և ամրապնդում ՆԱՏՕ-ի բլոկի ներսում։

Իմպերիալիզմի արտաքին քաղաքական առավել ռեակցիոն կոնցեպցիաների թվում առանձնահատուկ դեր է հատկացված այսպես կոչված «ուժերի հավասարակշռության» դոկտրինային, որը բացահայտորեն հակադրվում է աշխարհում կայուն խաղաղություն հաստատելու տենդենցին։

«Ուժերի հավասարակշռության» տեսությունը դարձավ ամերիկյան արտաքին քաղաքական հիմնական դոկտրինան ետպատերազմյան ամբողջ ժամանակաշրջանում։ Այդ նաև յուրատեսակ հիմք է, որի վրա բարձրանում է վերևում հիշատակված արտաքին քաղաքական կոնցեպցիաների զգալի մասը։

«Ուժերի հավասարակշռության» տեսության հեղինակները միջազգային հարաբերությունները դիտում են իբրև մի սիստեմ, որը կազմված է ռազմաքաղաքական և այլ բլոկների մեջ միավորված խոշոր պետություններից կամ երկրների խմբերից։ Ենթադրվում է, որ այդ ուժերի միջև մշտական պայքար է մղվում գերիշխանության համար։ Այդ պայքարի ընթացքում առաջ են գալիս պետությունների նոր միություններ, որոնք նույնպես ժամանակի ընթացքում քայքայվում են և դրանց փլատակների վրա կազմավորվում են, երբեմն էլ շատ անսպասելի, նոր խմբավորումներ, և այսպես շարունակ։ Այս ամենը վերջին հաշվով, ամեն մի առանձին ժամանակաշրջանում տանում է դեպի ուժերի որոշակի հավասարակշռություն։ Ըստ այդ կոնցեպցիայի, «ուժերի հավասարակշռության» ուղուն կանգնած պետությունը ձգտում է այնպիսի դիրք գրավել, որպեսզի հնարավորին չափ խուսափի այդ ուղուն կանգնած մյուս երկրների հետ կոնֆլիկտային իրավիճակների մեջ մտնելուց, միաժամանակ օգուտներ քաղի նրանց միջև հակասություններից և ընդհարումներից։

«Հավասարակշռության» սկզբունքներին հետևող պետության նպատակների սպառիչ բնորոշումը տվել է Հանս Մորգենթաուն։ Նա գրել է, որ ով վերահսկում է հավասարակշռությունը, նա էլ որոշիչ դիրք է գրավում հավասարակշռության սիստեմում, քանի որ այդ դիրքից է կախված պայքարի ելքը։ Ահա թե ինչու այդպիսի պետությանը անվանում են ողջ սիստեմի իրավարար, որը և վճռում է, թե ով է հաղթելու կամ ով է պարտվելու։ Մորգենթաուն նշում է, որ «բալանսիր-պետությունը» տիրապետող դրություն ապահովելու համար բնավ էլ կարիք չունի համաշխարհային ասպարեզում պարտության մատնել կամ «նվաճել» իր կոնտրագենտներին։ «Բալանսիր-պետությունը» կարողանում է տիրապետող դիրք գրավել, որովհետև համակարգի մյուս պետություններն իրենց ուժերը չեզոքացնում են փոխադարձ վեճերի ու հակամարտությունների ընթացքում։

«Ուժերի հավասարակշռության» տեսության նշանավոր պրոպագանդիստներից պրոֆեսոր Նիկոլաս Սպայկմանը նշում է, որ պետություն-հավասարակշռողի բոլոր գործողությունները բխում են մերկ պրագմատիզմից։ Նա ով խաղում է ուժի հավասարակշռության վրա, բնականաբար, չի կարող մշտական բարեկամներ ունենալ։ Միությունները ստեղծվում են ոչ թե ինչ-որ սենտիմենտալ նկատառումներից, այլ ելնելով աշխարհագրական դիրքից, ապագայի հեռանկարներից, մերձակա շահերից։ Եթե դաշնակիցների նկատմամբ որոշ բարեկամական զգացմունքներ էլ առաջանում են, ապա դրանք սովորաբար ոչ թե քաղաքական համագործակցության պատճառ են լինում, այլ լինում են դրա հետևանք։

«Ուժերի հավասարակշռության» դոկտրինայի պրոպագանդիստները նրա օգտին առաջին հերթին վկայակոչում են անգլիական դիվանագիտության պատմական փորձը։

Իրոք, 16-րդ դարի առաջին կեսից սկսած Մեծ Բրիտանիան իրեն բնորոշ դիվանագիտական խաղերի օգնությամբ հաջողությամբ կարողանում էր ընդհարումներ առաջ բերել եվրոպական մայրցամաքի պետությունների միջև։ Դրանով իսկ նա խանգարում էր այնտեղ հակաանգլիական ուժեղ

կոալիցիայի ստեղծմանը, կամ խոշընդոտ էր հանդիսանում, որ այդ պետություններից որևէ մեկը բացարձակ առավելություն չստանա Անգլիայի նկատմամբ, վտանգի տակ չդնի Լոնդոնի շահերը։ «Հավասարակշռվելով» եվրոպական տերությունների հակասությունների վրա, Մեծ Բրիտանիան կարողացավ աշխարհի բոլոր մասերում հետևողականորեն իրականացնել էքսպանսիոնիստական քաղաքականություն և դառնալ խոշորագույն գաղութային տերություն։

Իբրև իրենց հայացքների հաստատում «ուժի հավասարակշռության» տեսաբանները վկայակոչում են նաև ամերիկյան «հիմնադիր-հայրերի» դիվանագիտական փորձը։ Իսկապես որ, դիվանագիտության անցյալի պատմության մեջ ժամանակակից «հավասարակշռողների» օգտին կարելի է բազմաթիվ օրինակների հանդիպել։ ԱՄՆ-ի արտաքին քաղաքական պատմության հենց արշալույսին այդ երկրի ղեկավար շրջանների մոտ ի հայտ եկավ մի կայուն ձգտում՝ միջազգային գործերը վարելիս այնպես անել, որպեսզի չներգրավվել Եվրոպայում կոալիցիաների պայքարի մեջ։ Երիտասարդ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ հենց սկզբից զուգակցվում էին երկու, երբեմն միմյանց հակասող, տենդենցներ՝ «իզոլյացիոնիստական» և միջազգային ասպարեզ դուրս գալու։ Վերջինս շատ ընդհանրություններ ունի ժամանակակից «ուժերի հավասարակշռության» դոկտրինայի հետ։ «Իզոլյացիոնիզմի» սկզբունքը պահանջում էր պարտավորեցնող դաշնակցային հարաբերությունների մեջ չմտնել եվրոպական տերությունների հետ, քանի որ Միացյալ Նահանգների պետական օրգանիզմը դեռ ամրապնդված չէր։ Ինչ վերաբերում է «ուժերի հավասարակշռության» դոկտրինային, որ ԱՄՆ-ը փոխառել էր Անգլիայից, ունի միանգամայն այլ էքսպանսիոնիստական ուղղվածություն։

Ինչպես ասվեց, 1823 թվականին հռչակելով «Մոնրոյի դոկտրինան», Միացյալ Նահանգները հայտարարեցին արևմտյան կիսագնդի նկատմամբ իրենց հեգեմոն իրավունքի մասին։ Դրան հաջորդեց ԱՄՆ-ի տնտեսական, քաղաքական և ռազմական եռանդուն էքսպանսիան Կենտրոնական Ամերիկայի երկրներում։ Միաժամանակ Վաշինգտոնը կարողանում էր վնասազերծել Նոր Աշխարհի գործերին եվրոպական

տերությունների միջամտության փորձերը։ Այսպիսի տակտիկա 20-րդ դարի սկզբին Վաշինգտոնը փորձեց կիրառել նաև Հեռավոր արևելքում։ Նպաստելով այդ շրջանում արևմտյան տերությունների «հավասարակշռությանը», Վաշինգտոնը առաջ քաշեց Չինաստանի նկատմամբ «բաց դռների» դոկտրինան, որով հռչակեց այդ երկիրը թալանելու գործում գաղութարարների հավասար իրավունքները։

20-րդ դարում, երբ ԱՄՆ-ը միջազգային ասպարեզ ելավ որպես խոշորագույն իմպերիալիստական տերություն, «ուժերի հավասարակշռության» ամերիկյան քաղաքականության մեջ միանգամայն նոր որակներ ի հայտ եկան։ Միացյալ Նահանգները սկսեցին ակտիվորեն ազդել եվրոպական հավասարակշռության վիճակի վրա և դրանով իսկ իրենց համար, իբրև «բալանսիր-պետության», ստեղծեցին գործունեության լայն դաշտ։ Ամերիկյան քաղաքականության նոր որակը իրեն հատկապես զգալ տվեց առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների տարիներին, երբ ԱՄՆ-ի կառավարության որոշակի շրջաններ բացահայտորեն հանդես էին գալիս կռվող կողմերին «չխանգարելու» պահանջով, դրանով իսկ նպաստելով նրանց փոխադարձ թուլացմանը։

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ հավասարակշռության տեսակետը արտացոլվում է նաև Ա. Մեխենի, Խ. Մակինդերի և հատկապես Ն. Սպայկմանի գեոպոլիտիկական կոնցեպցիաներում։

Զարգացնելով նրանց մտքերը, ժամանակակից ամերիկյան գեոպոլիտիկները գտնում են, որ եթե նախկինում Անգլիան, «կղ իացած-մեկուսացած» դիրքից ուժերի հավասարակշռության քաղաքականություն էր վարում միայն Եվրոպայի նկատմամբ, ապա այժմ ԱՄՆ-ը նման խնդիր ունի ոչ միայն Եվրոպայի, այլ նաև Ասիայի, ավելի ճիշտ՝ ամբողջ արևելյան կիսագնդի նկատմամբ։ Այստեղից էլ «ուժերի հավասարակշռության» քաղաքականության նոր մասշտաբները, որ ամերիկյան տարբերակում ընդգրկում են ողջ աշխարհը։

Ամերիկյան հայտնի բուրժուական տեսաբան Խ. Բոլդուինը գրում է, որ Մակինդերի և Սպայկմանի գեոպոլիտիկական կոնցեպցիան հիմնականում ճիշտ կլինի նաև ապագայում։ Նա նշում է, որ մինչև 20-րդ դարի վերջը «մայրցամաքային

կղզու» հիմնական ուժի՝ Միացյալ Նահանգների տրամադրության տակ միայն մի կենսունակ քաղաքականություն է մնալու՝ ուժերի հավասարակշռության քաղաքականությունը։ Իսկ Ուոլտ Ռոստոուն, վերլուծելով «հավասարակշռության» ամերիկյան քաղաքականությունը, նշում է, որ որքանով Եվրոպայի ռեսուրսները միասին վերցրած ի վիճակի են Միացյալ Նահանգներին կանգնեցնելու ռազմական ջախջախման լուրջ վտանգի առջև, ուստի ԱՄՆ-ի խնդիրն է թույլ չտալ, որևէ թշնամի տերություն կամ տերությունների խումբ առաջատար դիրք գրավի աշխարհի այդ շրջանում կամ նրա որևէ մասում։

«Ուժերի հավասարակշռության» տեսությունը ելակետ է հանդիսանում միջազգային հարաբերությունների մաթեմատիկական մոդելներ կառուցելիս։ Որոշելով ուժերի հավասարակշռությունը կամ անհավասարակշռությունը տարբեր պետությունների կամ պետությունների խմբերի միջև, հաշվարկելով հզորության տեղաբաշխումը երկու համաշխարհային սիստեմներում, բուրժուական գիտնականները, որպես կանոն, գալիս են այն եզրակացության, որ բոլոր պետությունները ձգտում են տիրապետության և այդ նպատակի համար պատրաստ են ցանկացած մոմենտին գործի գցել իրենց հզորությունը։ Միայն որոշակի ուժերի հարաբերակցությունն է նրանց կանխում հարձակվելու մեկը մյուսի վրա, կամ ընդհակառակն, նպաստում է այդ հարձակմանը։ Այլ խոսքով, ստացվում է, որ բոլոր պետությունները ձգտում են իրենց կամքը փաթաթել մյուսներին, միատեսակ ագրեսիվ են և ռազմատենչ։ Շահագործողական տիպի պետության վարքագիծը, շահագործողական դասակարգերի մտածելակերպը, դրանց գործողություններն իմպերիալիզմի գաղափարախոսները փորձում են ներկայացնել որպես համամարդկային նորմա։ Ստրկատիրական, ֆեոդալական և բուրժուական հասարակարգերի տիրապետող դասակարգերի արտաքին քաղաքականության գնահատման չափանիշները նրանք փորձում են տարածել սոցիալիստական երկրների արտաքին քաղաքականության վրա։ Սոցիալիզմի բուն էությունից բխող խաղաղասիրական քաղաքականությունը նրանք ներկայացնում են որպես «ուժերի հավասարակշռության» արդյունք,

որն այդ երկրներին թույլ չի տալիս հանդես բերել իրենց ագրեսիվությունը։ Դա սոցիալիստական երկրների քաղաքականության խեղաթյուրված մեկնաբանություն է, ժամանակակից միջազգային քաղաքական պրոցեսների սխալ ըմբռնում։

Միացյալ Նահանգների քաղաքագետ-«հավասարակշռողները» այն տեսակետն են պաշտպանում, թե Եվրասիայում պետք է ստեղծել «բազմաբևեռայնություն», այսինքն՝ այն տարանջատել մի շարք մասերի՝ իրենց հատուկ «ուժային-ձգողական կենտրոններով» հանդերձ։

Ամերիկյան «հավասարակշռողների» տեսակետով գերմանա-ճապոնական միության ոչնչացման հետևանքով աշխարհը «բազմաբևեռությունից» վերածվել է «երկբևեռության»։ Կրելով պարտություն, Գերմանիան, Ճապոնիան և Իտալիան առժամանակ դադարեցին որևէ դեր խաղալ միջազգային գործերում։ Պատերազմից մեծապես թուլացած դուրս եկան նաև Անգլիան ու Ֆրանսիան, որոնք նույնպես ժամանակավորապես դուրս մնացին միջազգային մեծ խաղերից։ Համաշխարհային ասպարեզում ուժերի հարաբերակցությունը «երկբևեռային» կոնֆիգուրացիայի տեսք ստացավ։ Այդ կոնֆիգուրացիայի մի բևեռում ՍՍՀՄ-ն է, իսկ մյուսում՝ ԱՄՆ-ը։ Բայց ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի նման «երկբևեռյա» հավասարակշռության պայմաններում նույնիսկ Վաշինգտոնը ձգտում էր աշխարհը կազմակերպել այնպիսի սխեմայով, որ հնարավոր լիներ դուրս գալ այդ երկբևեռյա հավասարակշռությունից և իր բևեռի ծանրությունը դնել ռազմաքաղաքական այլ ուժերի վրա։ Այստեղից էլ ՍՍՀՄ-ի և սոցիալիստական համագործակցության երկրների շուրջը ռազմաքաղաքական խմբավորումներ ստեղծելու ԱՄՆ-ի վիթխարի ջանքերը։ Վերականգնված Արևմտյան Գերմանիայի և Ճապոնիայի հետ միասին այդ խմբավորումները պետք է հակակշիռ դառնային սոցիալիստական համագործակցությանը, արևելյան կիսագնդում ստեղծեին ուժերի այնպիսի դասավորություն, որոնց նկատմամբ հնարավոր լիներ իրականացնել Վաշինգտոնի վերահսկողությունը։

Բայց այստեղ չի կարելի հաշվի չառնել մի հանգամանք ևս։ Խոսելով «երկբևեռայնության» մասին, բուրժուական

գաղափարախոսները ակամա ընդունում են Սովետական Միության քաղաքական, տնտեսական և ռազմական անխորտակելի հզորությունը, ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև հրթիռամիջուկային «պարիտետը»։ Նրանք գիտակցում են, որ կան օբյեկտիվ սահմաններ, որից այն կողմ Սովետական Միության հետ ճակատելը կարող է միջուկային կոնֆլիկտի վերածվել, մի բան, որ ոչինչ լավ բան չի խոստանում ամերիկյան իմպերիալիզմին։ Այստեղից էլ խաղաղ գոյակցության, իբրև միջուկային պատերազմի ալտերնատիվի, ընդունումը բուրժուական գաղափարախոսների ու քաղաքագետների կողմից։

Ամերիկյան տեսաբանները գրում են, թե այնուհետև «երկբևեռային» («բիպոլյար») աշխարհն աստիճանաբար ի հայտ բերեց բաժան-բաժան լինելու տենդենց։ Դրա հետևանքով այժմ երկրագնդի վրա կազմավորվել են հինգ բևեռներ՝ ՍՍՀՄ-ը, ԱՄՆ-ը, Չինաստանը, Ճապոնիան և «ընդհանուր շուկայի» ու ՆԱՏՕ-ի հիմքի վրա ինտեգրացված Արևմտյան Եվրոպան։ Այստեղից էլ «հինգանկյունային», «պենտագոնյան» աշխարհի մասին տեսական կառուցումները։

Ըստ որում ենթադրվում է, որ մոտ ապագայում մեր մոլորակի մյուս տարածությունները՝ Աֆրիկան, Լատինական Ամերիկան, Ավստրալիա-Նոր Զելանդիա կոմպլեքսը և խաղաղ օվկիանոսի կղզիները քաղաքական առումով կմնան որպես ծայրամասեր։ Հ. Բոլդուինը գրում է, որ դա չի նշանակում, թե աշխարհի այդ ընդարձակ ու հարուստ շրջանները որևէ դեր չեն խաղալու նրա գալիք պատմության մեջ։ Այդ շրջանները, անշուշտ, ազդելու են համաշխարհային պատմության վրա, բայց որոշիչ ազդեցություն չեն ունենալու։

«Հինգանկյունային» կամ «հինգանդամ» սխեմայի հեղինակները իրենց հույսերը կապում են «հինգանկյան» շրջանակներում դիվանագիտական այնպիսի մանևրների իրականացման հետ, որի ընթացքում ԱՄՆ-ի համար ապահովվի այնպիսի դիրք, որ նա անմիջապես օգուտներ քաղի ողջ սիստեմի մնացած չորս մասնակիցների միջև եղած հարաբերություններից։ Ըստ որում իրենց հաշվարկների մեջ նրանք մեծ տեղ են հատկացնում պեկինյան պառակտիչների մեծապետական, հակասովետական կուրսին։

«Պենտագոնյան» աշխարհի ստեղծման պլանը ցայտուն

արտահայտություն է գտել Զ. Բժեզինսկու աշխատություններում։ Նա Վաշինգտոնին խորհուրդ է տալիս հօգուտ ամերիկյան իմպերիալիզմի շահերի օգտագործել մաոական ղեկավարության հակասովետական քաղաքականությունը, կոչ է անում ոչ միայն հարաբերություններն ընդլայնել Պեկինի հետ, այլև նրան ամեն տեսակ օգնություն ցույց տալ ռազմական պոտենցիալը ամրապնդելու համար։ Նման կապակցության մեջ հասկանալի է դառնում Բրուկլինյան ինստիտուտի պրոֆեսոր Ս. Բրաունի միտքը։ Վերլուծելով «հինգանդամի» մասնակիցների միջև կոնֆլիկտների ծագման հնարավոր տարբերակները, նա եզրակացնում է, որ այդ կոնֆլիկտներն առավել հավանական են սովետա-չինական սահմանում։

«Ուժերի հավասարակշռության» տեսաբան, ամերիկյան պրոֆեսոր Ռ. Օսգուդը գտնում է, որ «հինգանկյունային» բալանսի շրջանակներում ԱՄՆ-ը միշտ էլ կարող է չեզոք դիրք բռնել։ Նա գրում է, թե Արևմտյան Եվրոպան, եթե նա միավորվի և հանդես գա իբրև ինքնուրույն ուժ, ունակ է լուրջ հակակշիռ դառնալու Սովետական Միությանը։ Օսգուդը այն կարծիքին է, որ միավորված Արևմտյան Եվրոպան գալիքում հնարավոր կլինի օգտագործել նաև արտաքին քաղաքական մյուս մրցակցի՝ Ճապոնիայի դեմ։ Ընդհարվելով միմյանց, այս «ուժերի կենտրոնները» ստիպված կլինեն դիմելու Վաշինգտոնին, որպես իրավարարի, իհարկե, որոշակի քաղաքական զիջումների զուգակցությամբ։

Ամերիկյան «հավասարակշռողները» հաստատ համոզված են, որ «պենտագոնյան» աշխարհում իրենք ի վիճակի կլինեն շատ երկարատև հանդես գալու իբրև հիմնական ուժ, որովհետև նրանք աշխարհը դիտում են անփոփոխ վիճակում, չեն տեսնում նրա զարգացման հետագա զիգզագները, համաշխարհային ուժերի հետագա փոփոխությունները։ Նրանք, օրինակ, կարծում են, թե «հնգանկյան» մի այնպիսի անկյուն, ինչպիսին Ճապոնիան է, ընդմիշտ մնալու է ԱՄՆ-ի «կրտսեր պարտնյորի» դերում։ Այնինչ այս երկիրն արդեն այժմ փորձում է «հավասարը հավասարի հետ» խոսել ԱՄՆ-ի հետ։ Միացյալ Նահանգները 1948 թվականին արտադրել են մոտ երկու անգամ ավելի արտադրանք, քան միասին վերցրած կապիտալիստական աշխարհի նրա բոլոր տնտեսական մըր-

ցակիցները։ Իսկ այժմ Արևմտյան Եվրոպան ու Ճապոնիան միասին վերցրած ավելի շատ արտադրանք են տալիս, քան Միացյալ Նահանգները։ Ավելին, միայն Արևմտյան Եվրոպան իր տնտեսական զարգացմամբ արդեն այժմ մոտենում է ԱՄՆ-ին։

«Ուժերի հավասարակշռության» մյուս տարբերակը հանդես է գալիս «եռանկյունային» աշխարհի մոդելով։ Այս եռանկյունու տարբեր անկյունները հատկացվում են ԱՄՆ-ին, ՉԺՀ-ին և ՍՍՀՄ-ին։

«Եռանկյունային» աշխարհի կոնցեպցիայի հեղինակներից մեկը նախկինում ամերիկյան հայտնի պետական գործիչ Ջ. Բոլն է։ Սա գտնում է, որ «եռանկյունու» միջոցով «Մոսկվային մշտապես կարելի է պահել անվստահ վիճակում»։ Նույն ոգով 1974 թվականի հոկտեմբերին արտահայտվել է ամերիկյան հայտնի արտաքին քաղաքական տեսաբան Ռոբերտ Մարտինը։ Նա գրել է, թե գտնվելով եռանկյունու կենտրոնական անկյան վրա, Միացյալ Նահանգներն իր համար ձեռնտու այդ դիրքից ի վիճակի կլինի ազդեցություն գործելու ինչպես Մոսկվայի, այնպես էլ Պեկինի վրա։

«Եռանկյունային» մոդելի վարիացիայում նույնպես աշխարհը դիտվում է որպես խոշոր տերությունների խաղադաշտ, իսկ դրանց միջև մրցակցությունը կամ համաձայնությունը ներկայացվում է որպես համաշխարհային քաղաքականության առանցք։

«Ուժերի հավասարակշռության» տեսությունից անմիջականորեն բխում է Արևելյան կիսագնդում «հակակշիռների» սիստեմների ստեղծման գաղափարը։ Ըստ որում ենթադրվում է, որ նրանց հարաբերությունները պետք է վերահսկվեն Վաշինգտոնի կողմից։ Այս կոնցեպցիայի հեղինակները փորձում են «ուժերի հավասարակշռության» տեսությունը ներկայացնել իբրև համընդհանուր անվտանգության պահպանման քաղաքականություն, պնդելով, թե դրա օգնությամբ կարելի է ստեղծել ռազմական խոշոր ընդհարումներից ազատ միջազգային հարաբերությունների կայուն ու ամուր շենք, «խաղաղության շենք»։

Պատմական փորձը ցույց է տալիս, որ «ուժերի հավասարակշռության» քաղաքականությունը լիովին հակառակ է

լարվածության թուլացման քաղաքականությանը, ժողովուրդների միջև փոխադարձ վստահության և համագործակցության ուժեղացման տենդենցին, ավելացնում է ռազմական վտանգը, նպաստում է պետությունների շահերի ընդհարմանը, առաջ է բերում հակասությունների նոր օջախներ, կիրառում է «բաժանիր, որ տիրես» իմպերիալիստական սկզբունքը։

Գնահատելով «ուժերի հավասարակշռության» քաղաքականության անցյալի պատմությունը, ամերիկյան հայտնի հրապարակախոս Ի. Ֆ. Ստոունը «New York Review of Rooks»-ի 1972 թ. նոյեմբերի 2-ի համարում գրել է. ««Ուժերի հավասարակշռության» սիստեմը մեծապես խթանել է սպառազինությունների մրցավազքը, Եվրոպան պառակտել է թշնամական բլոկների, նպաստել է առաջին համաշխարհային պատերազմի առաջացմանը, որի խրամատներում զինվորներն իրենց մաշտաբներով մինչ այդ չտեսնված արյունահեղություններ կատարեցին»։

«Ուժերի հավասարակշռության» տեսաբաններն ու պրակտիկները չեն ցանկանում ըմբռնել, որ երբ դեռ չի վերացված համաշխարհային ջերմամիջուկային կոնֆլիկտի վտանգը, միջազգային ասպարեզում նման գործողությունները չեն համապատասխանում ներկայումս միջազգային հարաբերությունների բնույթի մեջ տեղի ունեցող փոփոխություններին։ Այժմ գնալով ավելի ու ավելի է դժվարանում հեգեմոնիստական նպատակների ճանապարհին արտաքին քաղաքական կոմբինացիաներ կատարելը, մյուս երկրների շահերը զոհելու գնով հաջողության հասնելը։ Դրան հակադրված են համաշխարհային սոցիալիստական սիստեմը, միջազգային բանվոր դասակարգը, զարգացող երկրների ժողովուրդները, որոնք խափանում են իմպերիալիստների քաղաքական պլանները։

«Ուժերի հավասարակշռության» քաղաքականության իրականացման համար տրված երաշխավորությունների անհեռանկար լինելու մասին խոսում են նաև բուրժուական գաղափարախոսներից ու քաղաքագետներից ոմանք։ Դրանցից են, օրինակ, Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր Մ. Շուլմանը, քաղաքագետ Ջորջ Կենանը։ Ամերիկյան գիտնականների մի մասը, էլ ավելի հեռու գնալով, պահանջում է

հրաժարվել «ուժերի հավասարակշռության» քաղաքականությունից։ Սրանց թվում է, մասնավորապես, պատմաբանների այն խումբը, որը հայտնի է «ռևիզիոնիստական» դպրոց անունով (Վ. Վիլյամս, Գ. Կոլկո, Գ. Ալպրովիտց, Լ. Գարդներ, Վ. Լեֆաբեր, Դ. Ֆլեմինգ և ուրիշներ)։ Այդ քաղաքականության համոզված հակառակորդ է սենատոր Ու. Ֆուլբրայթը։ Սրան հարում են «նեոիզոլյացիոնիստական» հոսանքի ներկայացուցիչները, որոնք ամերիկյան կառավարությանը կոչ են անում հրաժարվել ռազմական այն պարտավորություններից, որ ԱՄՆ-ը վերցրել է ագրեսիվ բլոկների նկատմամբ, ինչպես նաև վերանայել երկկողմանի ռազմական պայմանագրերը։

Այսպիսիք են իմպերիալիստական երկրների կառավարությունների արտաքին քաղաքական կոնցեպցիաները, որոնցով այդ երկրները առաջնորդվել են ետպատերազմյան ամբողջ ժամանակաշրջանում։ Ինչպես տեսնում ենք, այդ բոլոր կոնցեպցիաներն ու դոկտրինաները, չնչին բացառություններով, ելնում են բիրտ ուժից, դրանք նպատակամղված են ոչ թե ժողովուրդների անվտանգության ամրապնդմանը, աշխարհում խաղաղության պահպանմանը, այլ ծառայում են ագրեսիայի ու պատերազմի շահերին։

Արտաքին քաղաքական այս ծայրահեղ արմատական կոնցեպցիաների կողքին իմպերիալիստական տերությունների զինանոցում տեղ են գտել նաև համեմատաբար «լիբերալ» կոնցեպցիաներ, որոնց հեղինակները ինչ-որ չափով փորձում են հաշվի նստել ժամանակակից միջազգային հարաբերությունների այս կամ այն կողմի հետ։ Այդ կոնցեպցիաները էկլեկտիկորեն միավորում են ռեալիստական մոտեցումը և «ուժի դիրքերի» քաղաքականությունը։ Եթե առավել ռեակցիոն քաղաքագետները և գաղափարախոսները բացահայտորեն խոսում են «միջուկային գերազանցության» հասնելու մասին, ապա «լիբերալները» առաջ են քաշում այնպիսի կոնցեպցիաներ, որոնք ճանաչում են սովետա-ամերիկյան «ստրատեգիական պարիտետը»։

Կոմպրոմիսային այդ մոտեցումը մարմնավորում է գտել այսպես կոչված **«ոչ ռազմական կոնֆրոնտացիայի»** տեսության մեջ։ Այս տեսության կողմնակիցները (Զ. Բժեզինսկի, Ու. Ռոստոու և ուրիշներ) գտնում են, որ միջազգային ասպարեզում ԱՄՆ-ը պետք է օգտագործի հնարավոր բոլոր (բացի ռազմական) միջոցները սոցիալիստական համագործակցությունից ներս թափանցելու, սոցիալիզմը ներսից «հողմնահարելու» համար։ Այս տեսակետը բխում է կոնվերգենցիայի հայտնի տեսությունից, որի իմաստն այն է, թե տեղի է ունենում հասարակական-քաղաքական երկու հակադարձ սիստեմների «մերձեցում», որի ընթացքում սոցիալիզմը աստիճանաբար ու անշեղորեն կուլ է գնալու կապիտալիստական սիստեմին։

Արտաքին քաղաքականության մեջ «լիբերալիզմը» իր արտահայտությունն է գտել նաև ԱՄՆ-ում և արևմտյան մի շարք երկրներում ներկայումս լայն տարածում ստացած **«սելեկտիվության»** (ընտրողականության) կոնցեպցիայի մեջ։

«Սելեկտիվության» կոնցեպցիայի հեղինակներից են ամերիկյան նշանավոր քաղաքագետներ Ս. Հոֆմանը, Գ. Մորգենթաուն, Ս. Հանդինգտոնը, Լ. Գելբը, Պ. Ուորնկեն, Ա. Ցարմոլինսկին և ուրիշներ։ Սրանք ինչ-որ չափով հաշվի են առնում միջազգային ռեալ իրավիճակը, ինչ-որ չափով փորձում են հեռանալ վարկաբեկված ինտերվենցիոնիստական կուրսից։ Դրա վկայությունն այն է, որ այդ քաղաքագետները առաջարկում են վերանայել իր դաշնակիցների հետ ԱՄՆ-ի կնքած ռազմական պայմանագրերի և ռազմական համաձայնագրերի սիստեմը, որն ամերիկյան գրականության մեջ կոչվում է «Միացյալ Նահանգների պարտավորություններ»։ Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Է. Մեյերը գրում է, որ այդ բոլոր պարտավորություններն արժանի են ամենամանրակրկիտ վերանայման։ Դրանով իսկ նա ըստ էության ձեռք է բարձրացնում ռազմական բլոկների սիստեմի վրա, որի ստեղծման համար ԱՄՆ-ը վիթխարի ջանքեր է թափել ամբողջ քառորդ դարի ընթացքում։

Որոշակի ռեալիստական քայլ կատարելով արտաքին քաղաքական երևույթների ըմբռնման տեսակետից «սելեկտիվ» մոտեցման հեղինակները, սակայն, շատ բաներում շարունակում են գնալ «սառը պատերազմի» իներցիայով։ Կոչ անելով վերանայել պարտավորությունները, ուղղակիորեն չմիջամտել ուրիշ երկրների ներքին գործերին, միաժամանակ «սելեկտի-

վիստները» շարունակում են հանդես գալ անուղղակի միջամտության օգտին (ռազմական «օգնություն» ցույց տալ, խորհրդատուներ ուղարկել այդ երկրները և այլն)։

*

* *

Եվ այսպես, միջազգային մթնոլորտը բարելավելու համար դեռ հարկավոր է գործադրել մեծ ջանքեր։ Մենք գտնում ենք, ասել է ընկ. Լ. Ի. Բրեժնևը, որ պետք է ստեղծվի միջազգային հարաբերությունների նոր սիստեմ, որը հիմնված լինի պետությունների ներքին գործերին չմիջամտելու, կնքված պայմանագրերը և համաձայնագրերը անվերապահորեն կատարելու սկզբունքների վրա[1]։ Միաժամանակ նա ընդգծել է, որ պետք է մշտապես հիշել Վ. Ի. Լենինի խոսքերը, որ իմպերիալիզմը մահացող, բայց դեռևս չմահացած կապիտալիզմ է, որը ոչ միայն խոչընդոտում է սոցիալական առաջադիմությունը, այլև մշտապես սպառնալիքներ է ստեղծում խաղաղության ու ժողովուրդների անվտանգության համար։ Կապիտալիստական աշխարհին ինչպես նախկինում, այնպես էլ այժմ հատուկ են ազգային թշնամությունն ու անհավասարությունը, գաղութային ստրկությունը և շովինիզմը, ազգային ճնշումն ու ջարդերը, իմպերիալիստական գազանություններն ու պատերազմները[2]։ Քանի գոյություն ունի իմպերիալիզմը, այնքան ժամանակ կպահպանվի միջազգային լարվածությունը։ Սխալ կլիներ կարծել, թե կապիտալիզմի տիրապետության ոլորտի կրճատմանը զուգընթաց կնվազի այդ լարվածությունը։ Բանը ոչ թե նրանում է, որ կապիտալիզմը դարձել է «խաղաղ», այլ նրանում, որ իմպերիալիստների արտաքին քաղաքականության դեմ կանգնած են հզոր ուժեր, որոնք ընդունակ են խափանելու նրանց դիվանագիտական խաղերը։ Սոցիալական տարբեր կարգ ունեցող պետությունների խաղաղ գոյակցությունը դասակարգային պայքարի յուրահատուկ ձև է։ Պատմական նոր պայմաններում սոցիալիստական երկրների արտաքին քաղաքականության խնդիրն է հետևողական պայքար մղել

[1] Տե՛ս Л. И. Брежнев, Ленинским курсом. Речи и статьи, т. IV, М., 1974, էջ 279.

[2] Տե՛ս «Документы внешней политики СССР», т. VI, М., 1962, էջ 117.

իմպերիալիզմի, նրա զավթողական ծրագրերի, համաշխարհային նոր պատերազմ սանձազերծելու նրա մտադրությունների դեմ[1]։ Արդի միջազգային զարգացման կարևորագույն գործոններից մեկը ժողովրդական մասսաների, նրանց կազմակերպությունների, նրանց քաղաքական կուսակցությունների համախմբվածությունն է, նրանց ակտիվ մասնակցությունն է պետությունների արտաքին քաղաքականության իրականացմանը[2]։ Չնայած համաշխարհային պատերազմի անմիջական վտանգը ինչ-որ չափով ետ է մղված, բայց առաջվա պես ծխում են կոնֆլիկտների օջախները, բռնկվում են այսպես կոչված լոկալ պատերազմներ, շարունակվում է սպառազինությունների մրցավազքը։ Չնայած երկրորդ համաշխարհային պատերազմից անցել է տասնամյակներ, բայց մեր մոլորակի միլիոնավոր մարդկանց համար տակավին խաղաղություն չկա։ Նրանք ստիպված են զենքը ձեռքին մարտնչել իմպերիալիստական ագրեսորների և նրանց հանցակիցների դեմ ազատության ու անկախության համար, սեփական տան տերը դառնալու իրավունքի համար։

Ահա թե ինչու հաստատակամորեն շարունակելով բուրժուական երկրների հետ հարաբերությունների նորմալացման քաղաքական գիծը, սովետական երկիրը բնավ չի նահանջում իր արտաքին քաղաքականության դասակարգային սկզբունքներից, հետևողականորեն պայքարում է իմպերիալիզմի արտաքին քաղաքականության ագրեսիվ դրսևորումների դեմ, պաշտպանում ու ապահովում է ինչպես իր, այնպես էլ սոցիալիստական մյուս երկրների պետական շահերը, նրանց անկախ զարգացումը նոր հասարակարգի կառուցման ուղիով։

Այդ պայքարում գնալով ավելի ու ավելի կարևոր նշանակություն են ստանում կապիտալիստական պետությունների արտաքին քաղաքականության գաղափարական ասպեկտների բացահայտումը, իմպերիալիզմի արտաքին քաղաքական կոնցեպցիաների քննադատությունը։

[1] Տե՛ս «Международное совещание коммунистических и рабочих партий, Москва, 1969». Прага, 1969, էջ 423.

[2] Տե՛ս Л. И. Брежнев, О внешней политике КПСС и Советского государства, էջ 463.

ՄԻԼԻՏԱՐԻԶՄԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Իմպերիալիզմի արտաքին քաղաքական կոնցեպցիաները սերտորեն առնչվում են միլիտարիզմին, որի դերը մոնոպոլիստական բուրժուազիայի տիրապետության ընդհանուր սիստեմում գնալով ավելի է մեծանում։ Դա գլխավորապես պայմանավորված է արտադրության կապիտալիստական եղանակի հակասությունների հետագա սրմամբ։

Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը ժամանակին կանխատեսել են, որ կապիտալիզմի զարգացման որոշակի էտապում բուրժուական հասարակության արտադրողական ուժերը սկսում են զարգանալ միակողմանի, դառնում են ոչ թե արտադրողական, այլ կործանիչ ուժեր։ Զինվորականությունը սկսում է մեծագույն դեր խաղալ բուրժուական երկրների հասարակական-քաղաքական կյանքում, տնտեսության համարյա բոլոր ճյուղերում, ներքին և արտաքին քաղաքականության մեջ։ Էնգելսը համոզված էր, որ «միլիտարիզմի դիալեկտիկան» նրան անխուսափելիորեն առաջնորդելու է դեպի տրամաբանական ավարտ։ «Միլիտարիզմը տիրում է Եվրոպային և լափում է նրան,— նշում էր նա։— Բայց այդ նույն միլիտարիզմն իր մեջ կրում է իր սեփական կործանման սաղմը»[1]։

Այդ «կործանման սաղմը» Էնգելսը տեսնում էր մի կողմից ռազմական ծախսերի ֆանտաստիկ աճի, մյուս կողմից այն բանի մեջ, որ բուրժուական կառավարությունները ձեռնամուխ են լինում մասսայական բանակների ստեղծմանը։ Այդ բանակները ոչ այլ ինչ են, քան զինված ժողովուրդ։ Հետևապես,

[1] Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, էջ 226։

ասում էր Էնգելսը, այդ ժողովուրդը վաղ թե ուշ կհրաժարվի ծանր զոհերով ու զրկանքներով վարձահատույց լինել շահագործողների քաղաքականության դիմաց։

Իհարկե, Մարքսն ու Էնգելսը չէին կարող կանխատեսել միլիտարիզմի հետագա զարգացման մանրամասները, այդ թվում ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխության ազդեցությունը ռազմական գործի վրա։ Բայց մարքսիզմի այն կանխատեսումը, թե ի վերջո կգա այն ժամանակը, երբ միլիտարիզմը կկործանվի «իր սեփական զարգացման դիալեկտիկայի ուժով»,[1] նորանոր ապացույցներ է ստանում։ Այդ ճշմարտությունն ընդունում են նույնիսկ մարքսիզմից հեռու կանգնած շատ տեսաբաններ։ Օրինակ, Հանս Մորգենթաուն գրում է, որ ռազմական ուժի անսահման մեծացման պրոցեսը, որ սկսվել է միջուկային դարում, ընթանում է նրա պրակտիկ գործադրության հնարավորությունների արժեզրկման պրոցեսի հետ ձեռք ձեռքի տված։ Այդ ճշմարտությունն ընդունում է նաև Հենրի Քիսինջերը, գրելով, թե ռազմական հզորությունը քաղաքական ազդեցության վերածելու ձգտումը գնալով ավելի ու ավելի է հանդիպում մեծագույն խոչընդոտների։

Զարգացնելով Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի մտքերը, Վ. Ի. Լենինը իմպերիալիզմի դարաշրջանի փոփոխված պայմաններում տվեց միլիտարիզմի սպառիչ քաղաքական գնահատականը։

«Պրոլետարական հեղափոխությունը և ռենեգատ Կաուցկին» աշխատության մեջ Վ. Ի. Լենինը նշում էր, որ լինելով մոնոպոլիստական կապիտալիզմի զավակը, իմպերիալիզմը «իր տնտեսական հիմնական հատկությունների հետևանքով աչքի է ընկնում ամենանվազ խաղաղասիրությամբ ու ազատասիրությամբ, ռազմամոլության ամենամեծ ու ամենուրեք նկատվող զարգացմամբ»[2]։ Բացահայտելով միլիտարիզմի էությունը, Լենինը 1916 թվականին գրել է. «Ժամանակակից միլիտարիզմը կապիտալիզմի հետևանքն է։ Իր երկու ձեռքով նա կապիտալիզմի «կենսական արտահայտությունն է»՝ որպես ռազմական ուժ, որ կապիտալիստական պետությունները գործադրում են

[1] Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, էջ 226։
[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 298։

իրենց արտաքին ընդհարումների ժամանակ... և որպես մի զենք, որն իշխող դասակարգերի ձեռքին ծառայում է պրոլետարիատի ամեն տեսակ (տնտեսական և քաղաքական) շարժումները ճնշելու համար»[1]։

Միլիտարիզմի լենինյան բնորոշումը բանալի է հասկանալու համար իմպերիալիզմի ռազմական գաղափարախոսության ռեակցիոն էությունը, նրա ագրեսիվ բնույթը, այն հնարավորություն է տալիս պարզելու, թե որոնք են ժամանակակից միլիտարիզմի չտեսնված աճի սոցիալ-քաղաքական նախադրյալները, խորապես բացահայտում է նրա ներքին ու արտաքին ֆունկցիաները։

Միլիտարիզմի ներքին ֆունկցիան իրացվում է հասարակական կյանքի զանազան ոլորտներում։ Այդ ֆունկցիայի կիրառումը ամենից առաջ արտահայտվում է նյութական ու հոգևոր բազայի, ռազմական սիստեմների և բռնության ապարատի ստեղծման մեջ, որի նպատակը պետության և նրա հպատակների միջև այնպիսի փոխհարաբերությունների ստեղծումն է, որն ընդունելի լինի բուրժուազիայի համար։

Այսօր մի շարք երկրներում իշխանության գլուխ կանգնած ֆաշիստական ռեժիմները (Հարավաֆրիկյան հանրապետությունում, Չիլիում, Սալվադորում և այլն) իրենց գոյությունը պահպանում են բացահայտ ռեակցիոն զինվորականության տիրապետության պայմաններում։ Բայց բուրժուազիան միլիտարիզմի այդ ֆունկցիան նույնքան հետևողականորեն կիրառում է նաև այսպես կոչված «դեմոկրատական» երկրներում։ Վ. Ի. Լենինը նշել է, որ «յուրաքանչյուր քայլափոխում դուք կտեսնեք բուրժուական դեմոկրատիայի կեղծավորությունը, որ լավ ծանոթ է յուրաքանչյուր ազնիվ ու գիտակից բանվորի։ Չկա ոչ մի թեկուզ ամենադեմոկրատական բուրժուական պետություն, որտեղ սահմանադրությունների մեջ չլինեն սողանցքեր կամ վերապահություններ, որոնք բուրժուազիայի համար ապահովում են բանվորների դեմ զորքեր շարժելու, պատերազմական դրություն մտցնելու և այլն»[2]։

1 Վ. Ի. Լենին, *Երկ*, հ. 17, էջ 223—224։

2 Վ. Ի. Լենին, *Երկեր*, հ. 28, էջ 305—306։

Եվ այսպես, միլիտարիզմի ներքին ֆունկցիայի իմաստը պրոլետարիատի դեմ բուրժուազիայի զինումն է։ «Բուրժուազիայի զինումն ընդդեմ պրոլետարիատի՝ ժամանակակից կապիտալիստական հասարակության ամենախոշոր, հիմնական, կարևորագույն փաստերից մեկն է»[1],— *գրել է Վ. Ի. Լենինը։ Հիրավի, այսօր, բուրժուազիան չի կարող իր տիրապետությունը պահպանել, եթե չհենվի ռազմական բիրտ ուժի վրա։ Այդ իսկ պատճառով միլիտարիզմը տարբեր չափերով հատուկ է ոչ միայն իմպերիալիստական հսկաներին, այլև միջակ ու փոքր երկրներին։ Այն ուղղակի հետևանք է բուրժուական հասարակության, նրա շահագործողական բնույթի, հետևապես, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, այն առկա է կապիտալիստական բոլոր, նույնիսկ արտաքնապես չեզոք երկրներում*[2]։ *Միլիտարիզմը իմպերիալիզմի արմատական հատկություններից մեկն է։ Դա ստիպված են նշելու նույնիսկ բուրժուական շատ գիտնականներ, դրանց թվում՝ արևմտագերմանական սոցիոլոգ Դ. Զենգհասը «Սպառազինում և միլիտարիզմ» գրքում, Կալիֆոռնիայի պոլիտեխնիկական կոլեջի պրոֆեսոր Զ. Էկկլին «Զինվորականները ժամանակակից ամերիկյան հասարակության մեջ» աշխատությունում և ուրիշներ։*

Ժամանակակից միլիտարիզմն իր մեջ է ներառնում զինված ուժերը, ռազմարդյունաբերական բազան, ռազմագիտական կենտրոնները, ռազմավարչական օրգանները, ռազմագաղափարական կոնցեպցիաները։ Միլիտարիզմի այդ բոլոր տարրերը փոխադարձաբար ու սերտորեն կապված են միմյանց։

Միլիտարիզմի արտաքին ֆունկցիան է՝ նախապատրաստված ռազմական ուժը գործադրության մեջ դնելու միջոցով երկրի սահմաններից դուրս հասնել որոշակի քաղաքական նպատակների։

Լիովին պահպանելով իր սոցիալական էությունը, միլիտարիզմը ժամանակակից պայմաններում ձեռք է բերել մի շարք յուրօրինակ գծեր, որոնց երևան գալը պայմանավորված

1 Վ. Ի. Լենին, *Երկեր*, 4-րդ հրատ., հ. 23, էջ 118։

2 Տե՛ս Վ. Ի. Լենին, *Երկեր*, 4-րդ հրատ., հ. 23, էջ 121։

է աշխարհում կատարված մեծ փոփոխություններով, երկու սիստեմների միջև ստեղծված նոր փոխհարաբերություններով։

Այժմ միլիտարիզմը ստիպված է մի շարք դեպքերում հաշվի առնել սոցիալիստական ու կապիտալիստական երկրների, առաջին հերթին ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև կնքված պայմանագրերի ու համաձայնագրերի պահանջներն ու տրամադրությունները։ Ներկայումս հազվադեպ են «Կոմունիզմի դեմ խաչակրաց արշավանքի» բացահայտ կոչերը, իբրև պատմական անախրոնիզմ է հնչում Արևելյան Եվրոպայի երկրները «կոմունիստական լծից ազատագրելու» պահանջը, միանգամայն անհեթեթ ներկայանում «կոմունիզմի կործանման անհրաժեշտության» մասին զառանցանքը։ Մեր ժամանակներում, հասկանալի պատճառներով, բուրժուական քաղաքագետները և գաղափարախոսները քիչ են խոսում Արևմուտքի գերազանցության մասին, նրանք ավելի շատ հոլովում են «հավասարակշռություն», «պարիտետ» բառերը։ Ավելի ռելիեֆ է դառնում մեր ժամանակաշրջանի պարադոքսներից մեկը. իմպերիալիզմի ագրեսիվ բլոկների հնարավորությունները գնալով աճում են, իսկ ուրիշ պետություններին իր կամքը թելադրելու նրա ունակությունը մշտապես փոքրանում է։ Մասսայական բանակը բուրժուական ռազմական մեքենայի աքիլլեսյան գարշապարը դարձավ։ Պատահական չէ, որ վիետնամական պատերազմի փորձի ազդեցությամբ ԱՄՆ-ը ստիպված եղավ ռազմական շինարարության մեջ խոշոր ռեֆորմի դիմել, որն ըստ էության նշանակում է վերադարձ դեպի պրոֆեսիոնալ, վարձու բանակը։

Միլիտարիզմը միշտ և այժմ էլ շարունակում է մնալ որպես իմպերիալիզմի անբաժանելի հատկությունը, նրա բնորոշ գիծը։ Ավելին, այն իր լիակատար դրսևորումը գտել է մեր ժամանակներում, երբ մեծապես սրվել են հակասությունները համաշխարհային սոցիալ-քաղաքական երկու սիստեմների միջև։ Այսպիսի պայմաններում միլիտարիզմի քաղաքականությունը պահանջում է գաղափարական հիմնավորում, որն ամբողջովին ներթափանցվում է հակակոմունիզմով։ Միլիտարիզմի գաղափարախոսությունը մեր ժամանակներում քաղաքական և ռազմական գաղափարների, հայացքների, սկզբունքների ամբողջություն է, որի մեջ բյուրեղացված է

մոնոպոլիստական բուրժուազիայի վերաբերմունքը պատերազմի և այն վարելու միջոցների նկատմամբ։ Այդ գաղափարախոսությունը ագրեսիա է քարոզում սոցիալիստական երկրների նկատմամբ, առավել արդյունավետ միջոցներ է առաջարկում համաշխարհային բանվորական շարժման և ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների դեմ մղվող պայքարում։ Զինվորականությունը դառնում է այն գաղափարախոսության կրողը, որն ամեն կերպ արդարացնում է իմպերիալիստական կառավարությունների քաղաքական գիծը, այն է՝ համաշխարհային սոցիալիստական սիստեմի վերացում, ամբողջ աշխարհում կապիտալիզմի ռեստավրացիա, ֆինանսական օլիգարխիայի համաշխարհային տիրապետության հաստատում։

Արտահայտելով դատապարտված դասակարգի շահերը, նպատակներն ու խնդիրները, իմպերիալիզմի ռազմական գաղափարախոսությունը ուղղակի հակասության մեջ է գտնվում պատմական պրոցեսի, հասարակական զարգացման օբյեկտիվ օրենքների հետ։ Եվ դա այն պատճառով, որ իմպերիալիզմը մարդկային բանականության նվաճումներն ուղղում է հենց իր՝ մարդկության դեմ։

Իմպերիալիստական երկրներում միլիտարիզմի և ագրեսիայի գաղափարախոսության պրոպագանդան դրված է պետական հիմքերի վրա։ Միլիտարիզմի պրոբլեմների մշակման վրա աշխատում են տասնյակ գիտահետազոտական հիմնարկներ։ Դրանց քննարկման համար պարբերաբար հրավիրվում են կոնֆերանսներ, սիմպոզիումներ, կոլոկվիումներ։ Ամեն տարի լույս են տեսնում բուրժուական գաղափարախոսների, տնտեսագետների, փիլիսոփաների, սոցիոլոգների, քաղաքագետների, պետական և զինվորական գործիչների տասնյակ ու հարյուրավոր աշխատություններ, որոնք ունեն բացահայտ միլիտարիստական բովանդակություն։

Միլիտարիզմի գաղափարների պրոպագանդման գործում իմպերիալիստական շրջաններն առավել մեծ դեր են վերապահում ռադիոյին, հեռուստատեսությանը և առանձնապես պարբերական մամուլին։

Ամերիկյան սենատոր Ու. Ֆուլբրայթը «Պենտագոնի պրոպագանդիստական մեքենան» վերտառությամբ աշխատության

մեջ, որը լույս է տեսել 1970 թվականին, ցույց է տվել, թե ինչպիսի վիթխարի պրոպագանդիստական մեքենա ունի Միացյալ Նահանգների զինվորականությունը։

Երբ 1972 թվականի ամռանը «Արմդ ֆորսիզ ջորնել» հանդեսը հրատարակեց ԱՄՆ-ի զինված ուժերում լույս տեսնող թերթերի ու հանդեսների մասին իր երկամյա ուսումնասիրության արդյունքները, ապա դրանք երկրում առաջ բերեցին իսկական սենսացիա։ Պարզվեց, որ Միացյալ Նահանգներում կա 1402 զինվորական հրատարակություն, այդ թվում՝ 1036 թերթ ու հանդես։

Պաշտոնական տվյալներով 1976 թվականին ԱՄՆ-ի ցամաքային զորքերում լույս էր տեսնում 101 հանդես և 187 թերթ, ռազմածովային ուժերում՝ 127 հանդես և 203 թերթ, ռազմաօդային ուժերում՝ 116 հանդես և 598 թերթ։ Այդ մամուլը Պենտագոնի կողմից օգտագործվում է ամերիկյան զինծառայողների, զինապարտների, երկրի ողջ բնակչության զանգվածային գաղափարական մշակման համար։

Ամերիկյան միլիտարիզմի առաջատար օրգաններից են՝ «Արմ ֆորսիզ ջորնել» («Զինված ուժերի հանդես»), «Օֆիսեր» («Սպա»), «Արմոր» («Զրահապատային զորքեր»), «Սի պաուեր» («Ծովային հզորություն»), «Էյր ֆորս մեգազին» («Ռազմաօդային ուժերի հանդես»), «Կոմանդեզ դայջեստ» («Հանդես հրամանատարների համար»), «Սոլդժերզ» («Զինվորներ»), «Դայրեկշն» («Ղեկավարություն»), «Էյրմեն» («Ավիատոր»), «Միլիտերի ռեվյու» («Ռազմական տեսություն»), «Ինֆանտերի» («Հետևակ») և այլ հանդեսները, «Ստարզ էնդ ստրայպս» («Աստղեր և շերտեր»), «Արմի թայմս» («Բանակային նորություններ»), «Էյր ֆորս թայմս» («Ռազմաօդային ուժերի նորություններ»), «Նեյվի թայմս» («Ռազմածովային ուժերի նորություններ») թերթերը։

Միլիտարիստական ուղղության թերթերի զգալի մասը նախատեսված է ԱՄՆ-ի բնակչության շրջանում շովինիստական տրամադրություններ բորբոքելու համար։

Զբավարարվելով մամուլի սեփական օրգաններով, պաշտպանության մինիստրությունը միլիտարիզմի գաղափարների պրոպագանդման համար օգտագործում է նաև քաղաքացիական պարբերական հրատարակությունները։ Դա արվում է

զանազան մեթոդներով ու ձևերով, բայց հատկապես լայնորեն կիրառվում է դրանց պրոպագանդիստական տենդենցիոզ նյութեր մատակարարելու պրակտիկան։ Զինվորական մարմինները կանոնավոր կերպով այդպիսի նյութեր են տրամադրում 1700 ամենօրյա և 8300 ամենամսյա թերթերի, այսինքն՝ ամերիկյան թերթերի բացարձակ մեծամասնությանը։ Այդ ամենը ռազմարդյունաբերական կոմպլեքսին չտեսնված հնարավորություն է ընձեռում՝ զանգվածային գաղափարական ազդեցություն գործելու Միացյալ Նահանգների բնակչության վրա, նրան մոլորեցնելու, պարարտ հող ստեղծելու իմպերիալիստական ռեակցիայի քաղաքական մախինացիաների համար։

Միլիտարիզմի գաղափարախոսությունը պրոպագանդիստական վիթխարի հնարավորություններ ու միջոցներ ունի նաև իմպերիալիստական մյուս երկրներում՝ Անգլիայում, ԳՖՀ-ում, Ֆրանսիայում, Իտալիայում և այլն։

Կարևոր է քննարկել ու վերլուծել այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում իմպերիալիզմի ժամանակակից ռազմական գաղափարախոսության մեջ։

Վ. Ի. Լենինը սովորեցնում էր, որ միլիտարիզմի գաղափարախոսությունն ուսումնասիրելու համար ամենից առաջ պետք է բացահայտել, «թե ինչպես են ժամանակակից հասարակության գլխավոր դասակարգերը տասնամյակների ընթացքում պատրաստել, աճեցրել, ստեղծել իրենց ներկայիս վերաբերմունքը դեպի պատերազմը այսինչ քաղաքականությամբ, որն արմատավորված է այսինչ դասակարգային շահերի մեջ։ ...Առանց այդպիսի հետազոտման անիմաստ է խոսել մարքսիստական վերաբերմունքի մասին դեպի պատերազմը...»[1]։ «Միայն այդպիսի հետազոտումը կարող է հիմք ծառայել պատերազմի նկատմամբ զանազան դասակարգերի վերաբերմունքի իդեոլոգիան ուսումնասիրելու համար»[2],— ասում էր նա։

Լենինյան այս ցուցումը հնարավորություն է տալիս լուսաբանել ժամանակակից իմպերիալիզմի ռազմական իդեոլոգիայի հիմքերը, ցույց տալ նրա հիմնական կոնցեպցիաները։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 340։

[2] Նույն տեղը։

Ինչպես հայտնի է, հասարակական-տնտեսական բոլոր անտագոնիստական ֆորմացիաներից կապիտալիզմը, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության մեջ, ի հայտ է բերել տիրապետող դասակարգերի կողմից բռնություն իրականացնելու ամենամեծ մասշտաբներ։

Պատերազմները, որոնք նախապատրաստում և սանձազերծում են իմպերիալիստական պետությունները, իրենց հետ բերում են հարյուրհազարավոր, միլիոնավոր և տասնյակ միլիոնավոր զոհեր։

Պատերազմի և խաղաղության պրոբլեմը, այդ իսկ պատճառով, առավել այրող պրոբլեմ է եղել երկրների և ժողովուրդների մեծամասնության համար։ Մարդկության լավագույն ներկայացուցիչները մշտապես հանդես են եկել պատերազմների՝ որպես հասարակական մեծագույն չարիքներից մեկի դեմ, որը ժողովուրդներին բերում է անհամար դժբախտություններ ու տառապանքներ։ Սակայն այդ մարդկանց ձայնը խլացնում էին նրանք, ովքեր շահագրգռված էին պատերազմներով, ովքեր դրանք օգտագործում էին կողոպուտի, հարստահարման, իրենց քաղաքական տիրապետության ամրապնդման համար, ովքեր իրենց բարեկեցությունը ստեղծում էին ուրիշ մարդկանց արյան ու մահվան հաշվին։

Պատմաբանների հաշվարկումներում վերջին հինգ հազար տարում մղվել է ավելի քան 14 հազար պատերազմ, որոնց ընթացքում զոհվել է մոտ 3,5 միլիարդ մարդ, այսինքն՝ այնքան, որքան տասը տարի առաջ ապրում էր երկրագնդի վրա։ Բուրժուազիայի տիրապետության երեքհարյուրամյակում մարդկությունը կորցրել է ավելի քան 100 միլիոն մարդ։ Միայն երկու համաշխարհային պատերազմների տարիներին ավելի քան 60 միլիոն մարդ սպանվել և 110 միլիոն մարդ հաշմանդամ է դարձել[1]։ Բազմաքանակ զոհերով են ուղեկցվում նաև հակահեղափոխական հեղաշրջումները, շահագործող դասակարգերի կողմից բանվորների, գյուղացիների, դեմոկրատական մտավորականության դեմ բռնության և տեռորի կիրառումը։

Ժամանակակից միլիտարիզմի գաղափարական բեռն իր մեջ ներառել ու տեղակայել է բազմաքանակ այն դոկտրինաները, որոնց օգնությամբ շահագործողները դարեր շարունակ արդարացնում էին պատերազմները, բռնությունն իրենց հակառակորդների դեմ ինչպես երկրից դուրս, այնպես էլ երկրի ներսում։

Իհարկե, միլիտարիզմի և ագրեսիայի դոկտրինաներն անփոփոխ չեն մնում։ Ամեն մի դարաշրջանում դրանք վերամշակվում ու կոնկրետացվում են ազգային ու պատմական այն նոր իրադրության համեմատ, որի պայմաններում գործում են դասակարգերը։ Այդ դոկտրինաների հեղինակները, ամենից առաջ, կամա թե ակամա, ստիպված են հաշվի առնելու միջազգային ասպարեզում տեղի ունեցած փոփոխությունները։ Այլ խոսքով, ժառանգած միլիտարիստական գաղափարախոսության դասակարգային ընդհանուր դրույթները զուգորդվում են պատմական այս կամ այն մոմենտին համապատասխանող նոր կոնցեպցիաների ու դոկտրինաների հետ։

Բուրժուական գրականության մեջ վաղուց չափազանց լայն տարածում է գտել պատերազմների պատճառների բիոլոգիական բացատրությունը, որը բխում է պետության մասին բիոլոգիական ուսմունքից։ Այս ուսմունքի համաձայն պետության և կենդանի բիոլոգիական օրգանիզմի միջև էական, սկզբունքային տարբերություն չկա, նրանք երկուսն էլ ենթակա են զարգացման նույն օրինաչափություններին։ Կենդանի բիոլոգիական օրգանիզմն անցնում է զարգացման երեք էտապներ՝ ծնունդ ու երիտասարդություն, հասունություն ու կայունություն, ծերացում ու մահ։ Նույն էտապներով է անցնում նաև պետությունը, նրա ենթակա ժողովուրդը։ Երիտասարդ ժողովուրդները վերընթաց են ապրում, դինամիկ են, շարժունակ։ Համապատասխանաբար նրանց պետություններն էլ վերընթաց զարգացման մեջ են, նրանց կառավարությունները եռանդուն են, մշտապես վարում են ագրեսիվ քաղաքականություն։ Բոլոր ժամանակներում պետությունները վերելք են ապրել և ընդարձակել իրենց սահմանները հենց երիտասարդության շրջանում։

Երիտասարդությունից հետո պետությունը թևակոխում է հասունության շրջանը։ Այս էտապում նա վարում է զգույշ և չափավոր քաղաքականություն, ձգտում է կայունության, նրա հիմնական խնդիրն է դառնում ձեռք բերածի պահպանումը։

[1] Տե՛ս «Международная жизнь», № 2, 1971, էջ 83։

Նման պետությունները, որպես կանոն, ձգտում են խաղաղության, ամեն կերպ խուսափում են կոնֆլիկտներից։ Վերջապես, պետությունն ապրում է ծերացման շրջան։ Այս էտապում նրա քաղաքականությունը երկչոտ է լինում, անվճռական, հակասական։ Նման պետության կառավարության քաղաքականությունը մշակվում է տագնապի ու շփոթմունքի մթնոլորտում, որի անխուսափելի հետևանքն է լինում ոչ ռեալիստական մոտեցումը հասարակական երևույթներին։ Ուստի պատահական չէ, որ հին, ծերացած պետություններին վիճակված է տերիտորիայի անխուսափելի կորուստ, քայքայում և ապա՝ անկում։

Ծագելով Գերմանիայում, պետության մասին բիոլոգիական ուսմունքը Գերմանիան համարում էր երիտասարդ պետություն, հետևապես նրա ամեն մի ագրեսիվ գործողություն հայտարարում էր օրինաչափ, այլ երկրներից հողերի զավթումը և Գերմանիային միացնելը դիտում էր իբրև անխուսափելի պրոցես, որպես հետևանք նրա զարգացման երիտասարդական շրջանի։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո «սառը պատերազմի» ժամանակաշրջանում, երբ միլիոնարիզմի պրակտիկան լայն ծավալներ ստացավ Արևմուտքում, բուրժուական տեսաբանները միջազգային լարվածությունը և պատերազմի նախապատրաստությունը սկսեցին արդարացնել մարդկանց բնածին ռազմատենչությամբ, նրանով, որ մարդու բնազդները կենդանական ծագում ունեն, հետևապես անհնարին է վերահսկել դրանց վրա։ Այլ խոսքով, պատերազմն անխուսափելի չարիք է, անբաժան է մարդկությունից և նրան ուղեկցելու է հավիտյան։

Ամերիկյան գրող և անտրոպոլոգ Ռ. Արդրին պնդում է, թե սեփականության և տերիտորիայի համար մղվող պատերազմները ոչ թե սոցիալական, այլ բիոլոգիական ծագում ունեն և այդ պատճառով էլ հավերժ են։ Դեպի ագրեսիան ունեցած մարդկանց հակումը, նրա խոսքերով ասած, բնածին հատկության դրսևորում է, իսկ սպառազինությունների մրցավազքը բնական ու օրինաչափ երևույթ է, որը բխում է մարդկանց մոտ դեռ արմատախիլ չարված, մեկը մյուսին սպանելու ձգտումից։ «Կարող են կործանվել կայսրություններն ու

ժողովուրդները,— գրում է Արդրին,— կարող են անկման հասնել ազգերը, մի քաղաքակրթության հետքերը կարող են թաղվել մի այլ քաղաքակրթության ավազների տակ, բայց մարդկությունը, ամբողջությամբ առած, ենթարկվելով իր պարզ բնազդներին, չնայած առանձին անհաջողություններին, երբեք չի դադարեցրել ղենքի՝ իր ամենազգալի կուլտուրական նվաճման, զարգացումը»[1]։

Նշելով, որ պատերազմներն ու արյունահեղությունները, խժդժություններն ու անարդարությունները մարդ էակի կենդանական կյանքի ժառանգությունն են, ամերիկյան գիտնական Օ. Մորգենշտերնը գրում է, թե մարդկությունը կենդանական, բարբարոսական արարքներից աստիճանաբար կհեռանա՝ կրթվելուն, զարգանալուն, ազնվանալուն զուգընթաց։ Իսկ այդ պրոցեսը, ասում է նա, ոչ թե հարյուրամյակներ, այլ դեռ հազարամյակներ է տևելու։

Արևմտագերմանացի գիտնական Ռ. Կրիգերը, պաշտպանելով անցյալ պատերազմների մասին ռեակցիոն տեսակետները, փորձում է ապացուցել, թե պատերազմը մարդկության բնական վիճակն է, իսկ խաղաղ ժամանակաշրջանները բացառություն են կազմում, դրանք ոչ այլ ինչ են, քան շեղում ընդհանուր օրինաչափություններից։

Ամերիկյան ռազմական գաղափարախոսներից մեկը՝ Հ. Բոլդուինը «Վաղվա օրվա ստրատեգիան» գրքում գրում է «Եվ անցյալի փորձը և մարդու բնության ցանկացած հետազոտումն այն եզրակացության է բերում, որ պատերազմը, անկասկած, մարդկային բնազդ է, որը մեր տրադիցիաների, մեր պատմության, մեր սովորությունների անբաժան մասն է։ ...Մարդկանց տարբեր խմբերի միջև այս կամ այն ձևով կազմակերպած զինված ընդհարումները տեղի են ունենալու նույնիսկ ամենահեռավոր գալիքում։ Հնարավոր է նաև, որ քանի գոյություն կունենա մարդը, դրանք ընդհանրապես չեն դադարի»։ Պատերազմների բոլոր պատճառների «ընդհանուր

[1] Մեջբերված է ըստ «Внешнеполитические концепции противников разрядки в советско-американских отношениях», М., 1976, стр. 12.

հայտարարը» Բոլդուինը համարում է «մարդու բնությունը»[1]: Նույն տեսակետն է պաշտպանում Ա. Վինքաուերը[2]:

Այժմ Արևմուտքում լայն ճանաչում գտած այսպես կոչված «քաղաքական ռեալիզմի» դպրոցի ելակետային հիմնական դրույթն այն է, թե պետությունների միջև անընդհատ պայքար է գնում տիրապետության համար և այդ պայքարը հավերժ է։ Ամերիկյան «քաղաքական ռեալիզմի» դպրոցի հիմնադիր Ռ. Նիբուրը գրել է. «Ինչպես սոցիալական յուրաքանչյուր խումբ, այնպես էլ ամեն մի անհատ ունի էքսպանսիոնիստական վարքագիծ, որն արմատավորված է ինքնապահպանման բնազդի մեջ, բայց հաճախ դուրս է գալիս այդ բնազդի պահանջների սահմաններից։ Այսպես, կյանքի նկատմամբ կամքը վերածվում է իշխանության հասնելու կամքի... հասարակությունը գտնվում է անվերջանալի պատերազմական վիճակի մեջ»։ 1972 թվականին նույն տեսակետն է հայտնել Ալաբամայի համալսարանի ադյունկտ-պրոֆեսոր Ռ. Յալեմը։

Պատերազմների և նրանց բնույթի բուրժուական մեկնաբանները, մեր օրերում, իբրև կանոն, չեն շրջանցում ամերիկյան խոշորագույն ռազմական տեսաբան, սոցիալ-դարվինիստ Մեխենի մտքերը։ Մեխենի կարծիքով ամեն մի պետություն, եթե նա ցանկանում է գոյություն ունենալ, մշտապես պետք է ձգտի ընդլայնել իր տերիտորիան, պետք է աճի ու հզորանա իրենից թույլ հակառակորդների հաշվին։ Դրա միակ միջոցը ռազմական զավթումներն են։ Ագրեսիան դիտելով որպես «առաջադիմության անխուսափելի օրենք», Մեխենը եկավ այն եզրակացության, որ մշտական զինումը և պատերազմները «արևմտյան բարձրագույն քաղաքակրթության» «բնական արտահայտությունները» և «էական տարրերն են»։

Այլ խոսքով, ստացվում է, որ մարդկության պատմությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ գոյության կռվի պատմություն։ Թե մեր օրերում գոյությունը պահպանելու սոցիալ-դարվինիստական տեսությունը որքան լայնորեն է օգտագործվում ԱՄՆ-ի ժամանակակից քաղաքական և ռազմական գաղափարախոսության մեջ, բավական է թվարկել այնտեղ լույս տեսած մի քանի գրքերի սոսկ վերնագրերը։ Այսպես, օրինակ, փիլիսոփա-պերսոնալիստ Ֆլյուերլինգը իր գիրքը վերնագրել է՝ «Արևմտյան կուլտուրայի գոյապահպանումը», փիլիսոփայության դոկտոր Մանկը՝ «Գոյապահպանման ուղին», մալթուսական Ֆոգտը՝ «Դեպի գոյապահպանում», փոխգնդապետ Կոֆֆերը՝ «Գոյապահպանման ստրատեգիան» և այլն։

Վերջին շրջանում բուրժուական գրականության մեջ ձևավորվել է մի յուրատեսակ օպոզիցիա լարվածության պրոցեսի թուլացման նկատմամբ։ Այդ օպոզիցիան ելնում է նրանից, թե միջազգային հարաբերություններում բռնությունն անխուսափելի է, որովհետև մարդ էակը կատարելագործված չէ, լիարժեք չէ։

Եվ այսպես, պատերազմների սոցիալ-դարվինիստական, բիոլոգիական հիմնավորումը եղել և մնում է բուրժուական ռազմական գիտության հիմնական խնդիրներից մեկը։ Սոցիալական և բիոլոգիական զարգացման օրենքների նույնացում, կենդանի բնության և հասարակական կյանքի միջև անհիմն զուգադրություն, «բնական» և «օրինաչափ» լինելու պատճառաբանությամբ բռնության ու ագրեսիայի արդարացում՝ այս ամենը հանդես են եկել աշխարհի բաժանման ու վերաբաժանման համար իմպերիալիստական տերությունների պայքարի ընթացքում և այժմ էլ միլիտարիզմի ու ագրեսիայի բուրժուական տեսությունների անբաժանելի, բաղկացուցիչ մասն են հանդիսանում։

Պատերազմների և ընդհանրապես, բռնության սոցիալ-դարվինիստական, բիոլոգիական բացատրության սխալ լինելն ակնհայտ է։

Նախ նշենք, որ պատերազմի պատճառը մարդու կենդանական բնազդների մեջ տեսնելու փորձը կենդանական աշխարհին նետված անհիմն մեղադրանք է, որովհետև հենց իրենց՝ մարդկանց ձեռքով կենդանական աշխարհի մասին գրած ոչ մի պատմության մեջ չի կարելի հանդիպել այնպիսի մի արյունահեղ դեպքի, որն իր ծավալներով ու գործած ավերներով հիշեցներ մարդկային ամենափոքր պատերազմը։ Պատերազմների բիոլոգիական բացատրությունը ոչ այլ ինչ է, քան ինքնարդարացման փորձ։

[1] Մեջբերված է ըստ «Внешнеполитические концепции противников в советско-американских отношениях», М., 1976, էջ 17։

[2] Տե՛ս «Война. история, идеология», изд-во политической литературы, М., 1974, էջ 64—65.

Բացառությամբ մի քանի գիշատիչ գազանների, կենդանիները նախապես չեն սնուցում արյան և նախճիրի բնազդը։ Գիշատիչ կենդանիները վայրագ և անգութ են, երբ անոթի են, նրանք արյուն և դիակ են սփռում միայն հազվադեպ պարագաներում, երբ լիովին դատարկ է նրանց ստամոքսը։ Բայց մարդկանցից շատ շատերն անհամեմատ անգութ են, հատկապես նրանք, որոնք պառկած են առատության շտեմարանների վրա։

Ճիշտ է, մարդկային հասարակության զարգացման նախնական աստիճաններում կռիվ-արյունահեղությունների հիմնական պատճառն ուտելիքի աղբյուրներ գտնելն էր, բայց հետագա դարերում այդ պատճառները կորցրին իրենց նշանակությունը և ասպարեզ եկան նորերը։

Անցյալի պատմական փորձը և ժամանակակից իրականությունն ակնհայտորեն ցույց են տալիս, որ պատերազմը սոցիալական երևույթ է։ Այն ոչ թե հետևանք է մարդու «ոչ լիարժեքության», նրա չկատարելագործված «տոհմական գեների», այլ պայմանավորված է արտադրության միջոցների նկատմամբ մասնավոր սեփականատիրական հարաբերություններով, շահագործման ու ճնշման հարաբերություններով։

Վ. Ի. Լենինը նշել է, որ «մարքսիստների համար պատերազմն այն քաղաքականության շարունակությունն է, որ վարել են որոշ դասակարգեր ներկայացնող որոշ կառավարություններ»[1]։

Պատերազմների պատճառները տեսնելով մարդկային ենթագիտակցական, իմպուլսիվ բնազդների մեջ, բուրժուական գիտնականներից ոմանք այդ պատճառների շարքում թույլատրելի են համարում դնել նաև առանձին սոցիալական ֆակտորներ։ Դա հիմնականում արվում է երկու նպատակով. նախ, շրջանցել պատերազմների սոցիալ-տնտեսական հիմքերի մասին հարցը, երկրորդ, պատերազմների առաջացման ու բնույթի մասին իրենց տեսակետներին տալ «համոզիչ», «գիտական» տեսք։

Այսպիսով, պատերազմների ծագմանն անդրադառնալիս վկայակոչելով բիոլոգիական ֆակտորներ, բուրժուական

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 125—126։

տեսաբաններն ամենից առաջ փորձում են քողարկել պատերազմների դասակարգային բնույթը, այն իրողությունը, որ մեր դարաշրջանում դրանք կապիտալիստական արտադրահարաբերությունների, իմպերիալիստական ռեակցիայի ծնունդ են։

Իմպերիալիստական ագրեսիայի քաղաքականության գաղափարական զինանոցում կարևոր տեղ է հատկացվում գեոպոլիտիկային։

Եթե պատերազմների ծագման նեոմալթուսական սոցիալ-դարվինիստական և ռասիստական սկզբունքը սոցիալական և քաղաքական գործոնները բիոլոգիականով փոխարինելու մեջ է, ապա պատերազմների և ընդհանրապես բռնության գեոպոլիտիկական մեկնաբանության հիմքում ընկած է աշխարհագրական գործոնը։ Գեոպոլիտիկա քարոզողները ձգտում են զավթողական պատերազմների պատասխանատվությունը վերցնել ֆինանսական ու արդյունաբերական մագնատների վրայից և արդարացնել իմպերիալիստական ակտերը, դրանք բխեցնել օբյեկտիվ, աշխարհագրական պատճառներից։

Բոլոր երկրների գեոպոլիտիկների համար անգնահատելի աղբյուր եղան գերմանացի նշանավոր աշխարհագրագետ և ազգագրագետ, համաշխարհային համբավ ունեցող գիտնական, Լայպցիգի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Ռատցելի (1844—1904 թթ.) աշխատությունները։ Բազմաթիվ արժեքավոր գրքերի հեղինակ այս գիտնականը, սակայն, վարակված էր ծայրահեղ ռասիզմով։ Նրա ռեակցիոն աշխարհայացքը բացասաբար էր անդրադարձել նաև գիտական եզրակացությունների վրա։ Ռատցելը եղավ «անտրոպոաշխարհագրություն» ռեակցիոն դպրոցի հիմնադիրներից մեկը, դպրոց, որը մարդկային հասարակության զարգացման առաջատար գործոններից մեկը համարում էր աշխարհագրական միջավայրը։ «Անտրոպոաշխարհագրության» հիմնական դրույթները Ռատցելը զարգացրել է «Անտրոպոաշխարհագրություն» (2 հատոր, 1882—1891 թթ.), «Քաղաքական աշխարհագրություն» (1897 թ.), «Աֆրիկյան նետեր...» (1891 թ.), «Ժողովրդավարություն» (3 հատոր, 1885—1891 թթ.) աշխատությունների մեջ։

Ռատցելի աշխատությունների կենտրոնում դրված էին մարդու և բնության փոխհարաբերությունների, փոխադարձ կապի պրոբլեմները։ Ռատցելի համար բնորոշ էր բիոլոգիական և հասարակական օրինաչափությունների խառնակումը։ Ռատցելը պետությունը ներկայացնում էր բիոլոգիական տեսակի տեսքով, որի գոյության հիմնական օրենքը համարում էր տերիտորիալ ընդարձակումը։ Հատկապես Ռատցելի «Քաղաքական աշխարհագրությունը» դարձավ սեղանի գիրք գերմանական բոլոր շովինիստների համար, որոնք հանդես էին գալիս Գերմանիայի էքսպանսիայի և զավթումների օգտին։

Այս գրքում Ռատցելի զարգացրած հիմնական տեսություններից մեկը այսպես կոչված «պետության տարածական չափերի աճի» տեսությունն էր, որի համաձայն պետության տարածական չափերն ուղղակի հետևանք են նրա բնակչության քանակական աճի։ Տվյալ երկրի բնակչությունը քանակապես աճելով, ճնշում է գործադրում պետական սահմանների վրա, կառավարությանը ակամայից հարկադրում է մտածել տերիտորիայի ընդարձակման մասին։

«Պետության տարածական չափերի աճի» տեսությունը Ռատցելը լրացնում է այն թեզով, ըստ որի կուլտուրական զարգացման ցածր մակարդակ ունեցող ժողովուրդները սովորաբար մանր պետություններ են ստեղծում, իսկ բարձր կուլտուրա ունեցողները մշտապես ձգտում են կազմել պետական մեծ օրգանիզմներ։ Այստեղից արվում էր այն հետևությունը, թե խոշոր տերությունների կողմից փոքրերի կլանումը օրինաչափ է, կուլտուրայի աճի անխուսափելի հետևանք։ Այս թեզը նա հատկապես փորձում էր հիմնավորել իր «Գերմանիա» վերնագրով աշխատության մեջ։

«Գերմանիա» գրքում Ռատցելն առաջ քաշեց նաև մի շարք ուրիշ գաղափարներ։ Նա գտնում էր, որ գերմանական քաղաքականության գլխավոր խնդիրը պետք է լինի Միջին Եվրոպայի ստեղծումը, որն իր մեջ ներառնի մի կողմից Ալպերի և Հյուսիսային ծովի, մյուս կողմից Սև և Բալթիկ ծովերի միջև ընկած ողջ տարածքը։ Նրա ասելով այս տերիտորիան ֆիզիկաաշխարհագրական տեսակետից ամբողջական մի կոմպլեքս է։ Միջին Եվրոպայի միավորման խնդիրը

կարող է իր վրա վերցնել միայն այդ շրջանի կենտրոնում գտնվող երկիրը, այսինքն՝ Գերմանիան։

Ֆրիդրիխ Ռատցելն ունեցավ շատ հետևորդներ, այդ թվում շվեդացի պրոֆեսոր Ռուդոլֆ Չելլենը, որը դարձավ գեոպոլիտիկայի ստեղծողներից մեկը։ Նա պետական իրավունք և աշխարհագրություն էր դասավանդում Գյոտեբորգի, ապա Ուպսալայի համալսարաններում, միաժամանակ հասարակական գործիչ էր, Շվեդիայի ռիկստագի դեպուտատ, քաղաքական կյանքում գրավելով ծայրահեղ աջ դիրք։

Յուրացնելով Ռատցելի և մյուս պանգերմանիստների գաղափարները, Չելլենն առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և ընթացքում հանդես եկավ այն տեսակետով, թե եվրոպական պետությունների, այդ թվում՝ չեզոք Շվեդիայի, աշխարհագրական դիրքը նրանցից պահանջում է միավորվել գերմանական իմպերիալիզմի իշխանության տակ։ Վկայակոչելով «գեոպոլիտիկայի օրենքները», նա բացահայտորեն պաշտպանում էր գերմանական իմպերիալիզմի զավթողական ծրագրերը։

Չելլենի մտքերը զարգացրեց գերմանական գաղութային չինովնիկ Կ. Պետերսը՝ «Պանգերմանական միության» ղեկավարը, միություն, որի իդեալն աշխարհի վրա գերմանական ֆինանսական կապիտալի տիրապետության հաստատումն էր։

Ֆրիդրիխ Ռատցելի մյուս նշանավոր հետևորդը գերմանացի պաշտոնաթող գեներալ Կարլ Հաուսհոֆերն էր, որը պրոպագանդում էր ռևանշի և ագրեսիայի գաղափարներ։ Կ. Հաուսհոֆերը սերտորեն կապված էր ֆաշիստական կուսակցության վերնախավի հետ։

20—30-ական թվականներին Կ. Հաուսհոֆերը գրեց մի քանի գրքեր, որոնցում հիմնավորում էր գեոպոլիտիկան։ Հաուսհոֆերի գեոպոլիտիկական դոկտրինաները ֆաշիստների իշխանության օրոք նրանց պաշտոնական գաղափարախոսության մի մասը դարձան։ Գերմանական ֆաշիզմի ջախջախումից հետո Հաուսհոֆերն ինքնասպան եղավ։

Գեոպոլիտիկական բազմազան տեսությունների ողջ կոմպլեքսից նացիոնալ-սոցիալիստներն առանձնացրին և իրենց գաղափարական զինանոցը մտցրին մի քանիսը։ Դրանք այն տեսություններն էին, որոնք արդարացնում ու հիմնավո-

ում էին գերմանական իմպերիալիզմի տերիտորիալ զավթումների քաղաքականությունը, որն իր առավել ցայտուն արտահայտությունը գտավ գերմանական ֆաշիզմի սանձազերծած երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին։

Նացիոնալ-սոցիալիստների որդեգրած գեոպոլիտիկական տեսություններից մեկն այսպես կոչված «բնական սահմանների» տեսությունն էր։ Սա իր մեջ ներառել էր 19-րդ դարի առաջին կեսին Գերմանիայում լայն տարածում գտած տեսակետները, որոնց համաձայն ամեն մի պետություն պետք է պարփակված լինի բնական սահմանների մեջ։ Ըստ որում այդ «բնական սահմանները» Գերմանիային թույլատրում էր հյուսիսից դուրս գալ Հյուսիսային ծով, հարավից՝ Միջերկրական և Սև ծովերը, արևելքից՝ Բալկաններ։ Մյուս կողմից «բնական սահմանների» տեսությունն իր մեջ աբսորբցել էր Ռատցելի «աշխարհաանտրոպոլոգիայի» առավել ռեակցիոն կողմերը։

Հիտլերյան ագրեսիայի արդարացմանն էր ուղղված հատկապես «կենսական տարածության» գեոպոլիտիկական տեսությունը, ըստ որի ժողովրդի կենսական շահերը, նրա գոյությունը, ապագան կախված են «անհրաժեշտ տարածությունից»։ Գերբնակվածությունը անխուսափելիորեն ծնում է կենսական տարածություն ձեռք բերելու խնդիրը։ Գերմանիան հենց այն երկիրն է, որ առավել չափով է կարիք զգում կենսական տարածության՝ բեռնաթափվելու համար գերբնակչությունից։ Գիտակցաբար աչքաթող անելով ժողովրդի կենսամակարդակը բարձրացնելու այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են արտադրողական ուժերի զարգացումը, բանվորական ուժի որակավորումը, աշխատանքի միջազգային բաժանումից բխող հնարավորությունները, ֆաշիստական գաղափարախոսները գերմանական ազգի ապագան տեսնում էին Արևելքում «կենսական տարածություն» նվաճելու մեջ, «մեծահոգաբար» գտնելով, թե այդպիսի տարածություն անհնարին է ձեռք բերել Եվրոպայի արևմուտքում, քանի որ այնտեղ գերբնակչությունը մոտավորապես այնպիսին է, ինչպիսին Գերմանիայում։ Ավազակային հարձակում կատարելով ՍՍՀՄ-ի վրա, գերմանական ֆաշիստները այն արդարացնում էին հենց «կենսական տարածության» տեսությամբ։

Նացիոնալ-սոցիալիստական գաղափարախոսության մեջ, նախքան Հիտլերի կողմից եվրոպական մի շարք երկրների զավթումը, կարևոր տեղ էր հատկացված «օպտիմալ աշխարհագրատնտեսական շրջանի» տեսությանը։ Այս տեսությունը, որը հիմնված էր բուրժուական տնտեսագետ Զոմբարտի և նրա դպրոցի գաղափարների վրա, մշակվեց հիտլերյան ագրեսիայի նախապատրաստման շրջանում։ Գերմանական ֆաշիստները լավ էին հասկանում, որ Եվրոպայում լայն մասշտաբով ագրեսիվ գործողություններ ձեռնարկելու հետևանքով իրենք կարող են լիակատար մեկուսացման մեջ ընկնել։ Այդ վախը նրանց թելադրում էր առաջ քաշել ինքնամատակարարման կամ «փակ ազգային տնտեսության» ստեղծման անհրաժեշտության պրոբլեմը, այլ խոսքով վերցնել տնտեսական ավտարկիայի կուրս։ Բայց այն բանից հետո, երբ Հիտլերին հաջողվեց զինվորական երթով, առանց դրժվարության գրավել համարյա ողջ Եվրոպան և նրա ռեսուրսներին տեր դառնալ, տնտեսական ավտարկիայի տեսությունը մի կողմ դրվեց, առաջին պլան մղվեց, ընդհակառակն, տնտեսական մեծ շրջանների ջատագովությունը։ Եվրոպական ազգային սահմանները դիտվեցին որպես խոչընդոտներ։ Առաջ քաշվեց եվրոպական միասնական տնտեսություն ստեղծելու գաղափարը, որի կենտրոնը, ըստ հիտլերականների, պետք է լիներ «Եվրոպայի կենտրոնական արդյունաբերական արհեստանոցը»՝ Գերմանիան։ Եվրոպայի միասնության գաղափարը մասնակիորեն մարմնավորվեց ետպատերազմյան շրջանում արևմտաեվրոպական վեց երկրների կողմից ստեղծված «ընդհանուր շուկայի» մեջ։

Այսպիսով, գեոպոլիտիկների հիմնական ձգտումը հիտլերյան ագրեսիայի տեսական հիմնավորումն էր։ Պատահական չէ, որ ֆաշիստական Գերմանիայում հսկայական տպաքանակով հրատարակվում էր «Գեոպոլիտիկայի հանդեսը», մեկը մյուսի ետևից լույս էին տեսնում գեոպոլիտիկական բովանդակությամբ բազմաթիվ գրքեր։ Գեոպոլիտիկների առավել ռեակցիոն պարագլուխներից Կ. Հաուսհոֆերը դարձավ Մյունխենի ֆաշիստական «Գիտությունների ակադեմիայի» պրեզիդենտ։ Նրա որդին՝ Ա. Հաուսհոֆերը ֆաշիստների կողմից նշանակվեց «Գեոպոլիտիկական ինստիտուտի»

դիրեկտոր։ Գեոպոլիտիկայի այդ կենտրոնները վերածվեցին պատերազմի և ռևանշի հիտլերյան պրոպագանդայի հենակետերի։ Դրանք սերտորեն գործակցում էին «երրորդ ռեյխի» ամեն տեսակ միլիտարիստական կազմակերպությունների և հատկապես արտաքին քաղաքական հիմնարկների, արտասահմանում բնակվող գերմանացիների միավորումների հետ։

Փորձելով արդարացնել սպառազինությունների մրցավազքը և երկրի միլիտարիզացիան, բուրժուական շատ հեղինակներ այսօր էլ հաճախ դիմում են գեոպոլիտիկական զանազան փաստարկումների։

Ամերիկյան գեոպոլիտիկները լայնորեն օգտվելով Կ. Հաուսհոֆերի մյունխենյան գեոպոլիտիկական դպրոցի աշխատություններից, սակայն, իրենց տեսական գործունեության հիմքում գլխավորապես դնում են Ա. Մեխենի ստեղծագործությունները։ Սա առաջինն էր, որ ԱՄՆ-ի բուրժուական գաղափարախոսության մեջ տվեց ռազմական ստրատեգիայի գեոպոլիտիկական «հիմնավորումը», նա էր, որ պատճառական կապ «հայտնաբերեց» ԱՄՆ-ի աշխարհագրական դիրքի և մոնոպոլիստական կապիտալի արտաքին քաղաքականության միջև։

Մեխենի գեոպոլիտիկական կառուցումները մասնավորապես ուժեղ ազդեցություն են թողել ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հայտնի մեկնաբան և հրապարակախոս Ուոլտեր Լիպմանի վրա։ «Ազգերի ատլանտյան համագործակցության» գաղափարը, որն իր մարմնավորումն է գտել ագրեսիվ Հյուսիսատլանտյան բլոկի մեջ, առաջին անգամ գեոպոլիտիկական ձևակերպումով առաջ է քաշել Լիպմանը։

Մեխենից բացի ԱՄՆ-ի ռազմական մտքի վրա նշանակալի ազդեցություն է թողել ուժի քաղաքականության ակտիվ քարոզիչներից մեկը՝ Ն. Սպիկմենը, որը պնդում էր, թե քաղաքականության և ստրատեգիայի վրա մեծ ներգործություն են ունենում ոչ միայն աշխարհագրական միջավայրը, այլև կլիման։

Պրոպագանդելով այսպես կոչված «տեխնոլոգիական պատերազմի» մասին տեսությունը, բուրժուական գաղափարախոսները պնդում են, թե սպառազինությունների մրցավազքն ու պատերազմները գիտատեխնիկական առաջադիմության շարժիչներ են, որոնք խթանում են արտադրողական ուժերի զարգացումը, ընդլայնում գիտական ստեղծագործությունները, մարդկային որոնումների համար ստեղծում են անհրաժեշտ ցանկալի նախադրյալներ։ Այս տեսակետն առավել ցայտուն արտահայտություն է գտել ամերիկյան գիտնական Օ. Մորգենշտերնի «Պատերազմի հմայքը» վերնագրով աշխատության մեջ։

Արևմուտքում լայնորեն տարածված է նաև հակառակ տեսակետը, այն է՝ թե տնտեսության ու հասարակական կյանքի միլիտարիզացման ուժեղացումը և պատերազմները ժամանակակից ինդուստրիալ զարգացման ու գիտատեխնիկական առաջընթացի օրինաչափ հետևանքն են։ Նման թեզ է առաջ քաշում, օրինակ, ֆրանսիացի սոցիոլոգ Է. Մորենը։ Ամերիկյան տնտեսագետ Ջ. Գելբրայթն իր հերթին բռնության ֆենոմենը բխեցնում է «տեխնոլոգիական իմպերատիվից»։ Կանադացի պրոֆեսոր Մ. Մակլյուենը, որը երկար ժամանակ ուսումնասիրում է այն հարցը, թե հասարակական հարաբերությունների և մարդկանց վարքի վրա ինչպիսի ներգործություն են ունենում ժամանակակից տեխնիկան և կոմունիկացիաների սիստեմը, այն եզրակացության է եկել, որ «որքան զարգացած է քաղաքակրթությունը, այնքան մեծ ծավալներ է ընդունում բռնությունը»։

Առանձնահատուկ տեղ է հատկացվում այսպես կոչված «տեխնոլոգիական պատերազմին»։ Ըստ որում իր նշանակությամբ «տեխնոլոգիական պատերազմը» ուղղակի նույնացվում է ռազմական կոնֆլիկտի հետ։

«Տեխնոլոգիական պատերազմի» ջատագովները երկրի գիտական ու տնտեսական ողջ պոտենցիալը լիովին մոբիլիզացնելու, դրանք ռազմական նպատակներին տրամադրելու համար մի շարք պրակտիկ առաջարկներ են անում։ Ամերիկյան գիտնական, «Պատերազմի և խաղաղության գիտություններ» գրքի հեղինակ Ռ. Կլարկը գրում է. «Տեխնոլոգիական պատերազմում ամենակարևորը առավելագույն արագությամբ գիտության զարգացումն է, այլ ոչ թե նրա մասին խորհրդածություններ անելը։ Կարևորը գիտությունից ստանալն է այն ամենը, ինչը պետք է գալու ռազմական ընդհարման ժամանակ»։ Կլարկը համերաշխվում է ռեակցիոն բուրժուական

6 — 1835

գիտական, «ջրածնային ռումբի հայր» է. Թելլերի հետ, որը դեռևս 1963 թվականին ասում էր, որ «ավելորդ է հարցնել, թե ռազմական ինչ պահանջարկներ կան։ Գիտական պրոգրեսը պետք է զարգացնել մինչև վերջին սահմանը, իսկ ռազմական պահանջարկները իրենք իրենց կգան»։

Արևմտյան մամուլում երբեմն հաղորդումներ են երևում, որ ԱՄՆ-ում և կապիտալիստական ուրիշ երկրներում մշակվում են թշնամուն կործանիչ հարվածներ հասցնելու նոր մեթոդներ։ Օրինակ, գաղտնիք չէ, որ ամերիկյան բազմաթիվ գիտական հաստատություններ կատարում են Պենտագոնի կողմից առաջադրված խնդիրը՝ մշակել տեխնոլոգիական նորագույն միջոցներ, մասնավորապես ստեղծել այսպես կոչված մետեորոլոգիական զենք։ Ամերիկյան զինվորականությունը նպատակ ունի պատերազմի դեպքում դրանց միջոցով թշնամու տերիտորիայում առաջ բերել եղանակի կտրուկ փոփոխություններ՝ երկրաշարժ, ջրհեղեղներ, վիթխարի հրդեհներ և այլն։

Գիտատեխնիկական առաջադիմության վերաբերյալ փաստարկներով պատերազմները և միլիտարիզացիան արդարացնելու ոչ մի օբյեկտիվ հիմք չկա։ Իրական փաստերը ցույց են տալիս, որ գիտության ու տեխնիկայի զարգացումն, ինքնին, չի կարող առաջ բերել սպառազինությունների մրցավազք և պատերազմ։ Գիտատեխնիկական հեղափոխությունն ինքն իրեն բռնություն տարածելու խթաններ չի տալիս։

Պատերազմը եղել և մնում է իմպերիալիստական քաղաքականության անկապտելի մասը։ Այն տիրապետող դասակարգերի քաղաքականության շարունակությունն է այլ միջոցներով և հենց այդ պատճառով կործանարար ազդեցություն է ունենում գիտության ու տեխնիկայի զարգացման վրա։ Այլ խոսքով, գիտության ու տեխնիկայի նվաճումների օգտագործումը կախված է տիրապետող դասակարգերի շահերից։ Ինչպես ընդգծել է Կ. Մարքսը, «Մեքենաների շահագործման եղանակն ամենևին էլ այն չէ, ինչ բուն մեքենաները։ Վառոդը մնում է որպես վառոդ անկախ այն բանից, թե կգործադրվի մարդուն վերք հասցնելու համար, թե՞ նույն մարդու վերքերը բուժելու համար»[1]։ Գիտության և տեխնիկայի նվաճումները կարող են հակահեղափոխության ու միլիտարիզմի զենք դառնալ, բայց դրանք կարող են նաև ծառայել իմպերիալիզմի ու նրանից ծնունդ առած միլիտարիզմի դեմ մղվող պայքարին։

Ագրեսիան ու միլիտարիզմը արդարացնելու նպատակով սոցիալական զարգացման օրենքները տեխնիկայի և տեխնոլոգիայի օրենքներով փոխարինելու ջանքերը նույն նպատակն են հետապնդում, ինչ որ կենդանական աշխարհում գործող օրենքները հասարակության վրա տարածելու փորձերը։

Արևմուտքում լայնորեն տարածված է այն տեսակետը, թե ներկայումս աշխարհի այս կամ այն մասում իրականացվող բռնության աղբյուրը միջազգային իմպերիալիզմը չէ, այլ աղքատությունը։ Նրանք պնդում են, թե աշխարհի խաղաղությանը և, ընդհանրապես, համաշխարհային քաղաքականությանը սպառնացող հիմնական վտանգը գալիս է Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի զարգացող երկրներից։ Ըստ որում փաստարկվում են այդ երկրների տնտեսական հետամնացությունը և այսպես կոչված «դեմոգրաֆիական պայթյունը»։ Վերջինս, ինչպես հայտնի է, պատերազմներն արդարացնող նեոմալթուսական տեսաբանների սիրած թեման է։

«Երրորդ աշխարհի» կողմից համաշխարհային խաղաղությանը սպառնացող վտանգի մասին է գրում Բիրմինգամի համալսարանի միջազգային հարաբերությունների մասնագետ Ն. Բրաունը։ Իր «Հետամնացությունը որպես խաղաղության սպառնալիք ամբողջ աշխարհում» հոդվածում, որը լույս է տեսել «Ինտերնեշնլ աֆֆերս» հանդեսում, Ն. Բրաունը զարգացնում է այն տեսակետը, թե աղքատությունը ծնում է պատերազմ։ Այդ թեզը նա փորձում է հաստատել վերակառուցման և զարգացման միջազգային բանկի վիճակագրական տվյալներով, որոնց համաձայն 1958—1966 թվականներին զարգացող «շատ աղքատ» 38 երկրներից (որոնցում մեկ շնչին ընկնող ազգային եկամուտը ամենացածրն է աշխարհում) «ցնցում» են ապրել (այսինքն՝ զենք են գործադրել)

[1] Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, *Ընտիր երկեր հ. I, էջ 713։*

32-ը, այն դեպքում, երբ «երրորդ աշխարհի» համեմատաբար հարուստ 27 երկրներից նման «ցնցում» է տալիս միայն մեկը։

Աղքատությունից բխեցնելով պատերազմը, անգլիացի Ռ. Կլարկը կանխագուշակում է, որ առաջիկա մեկ-երկու տասնամյակներին արևմուտքի և արևելքի միջև տեղի կունենա համաշխարհային երրորդ պատերազմը։ Որոշ ժամանակ հետո, գրում է նա, ծագելու է թվով չորրորդ համաշխարհային պատերազմը, այս անգամ արդեն հյուսիսի և հարավի միջև։ Ընդ որում այն, ըստ էության, լինելու է նախկին գաղութային և կիսագաղութային աշխարհի արագ ավելացող բնակչության կինված պայքարը «գերարտոնյալ» հարուստ պետությունների դեմ։ Այսպիսով Ռ. Կլարկը մի կողմում դնում է նախկին գաղութային և կիսագաղութային երկրները, իսկ մյուս կողմում՝ ինդուստրիալ զարգացած երկրները, այդ թվում ինչպես իմպերիալիստական երկրները, որոնք տասնամյակներ շարունակ կողոպտել ու շարունակում են կողոպտել ետ մնացած ժողովուրդներին, այնպես էլ սոցիալիստական երկրները, որոնք ամուր կանգնած են հակաիմպերիալիստական, ազգային-ազատագրական շարժման ակտիվ աջակցության դիրքերում։

Իր տեսական ընդհանրացումներից Ռ. Կլարկը մոայլ «օրինաչափություն» է մակաբերում։ Հաջորդ 50 տարում, գրում է նա, հեռանկարներն այսպիսիք են լինելու. գերբնակեցում, աղքատություն, սով, միջավայրի աղտոտում։ Մեծապես աճելու է պատերազմների վտանգը, իսկ պատերազմները իրենց հերթին, ընդլայնելու են սովի ու աղքատության սահմանները, մեծացնելու են միջավայրի թունավորման մասշտաբները, սրելու են գոյություն ունեցող բոլոր հակասությունները։ Այս ամենի հետևանքով միլիոնավոր մարդիկ մնալու են առանց տանիքի։ Դրա հետևանքով գլխի վրա տանիք չունեցողները, որոնք կորցնելու ոչինչ չեն ունենալու, խուժելու են «ինդուստրիալ երկրների» քաղաքները և մեգալուսպոլիսները։ Անխուսափելի է դառնալու աֆրո-ասիական և լատինաամերիկյան միլիարդավոր սոված մարդկանց արշավանքը «քաղաքակրթված աշխարհի» վրա։

Բուրժուական գաղափարախոսներն ահա այսպես են փորձում աշխատավոր մասսաների ուշադրությունը շեղել համաշխարհային առաջադիմության գլխավոր թշնամուց՝ իմպերիալիզմից։

Մելբուրնի համալսարանի պրոֆեսոր Ջ. Բլեյնին մարդկության զարգացման օրինաչափությունը դիտում է որպես մի պրոցես, որն անցնում է «խաղաղության հոգեբանական ցիկլով», ապա «ձգտում է պատերազմի»։ «Խաղաղությունը,— ասում է նա,— տալիս է հարստություն, հարստությունը բերում է փառք, փառքը ծնում է շարություն, շարությունն առաջնորդում է պատերազմի, պատերազմը պտղաբերում է աղքատություն, աղքատությունը առաջ է բերում մարդկայնություն, իսկ մարդկայնությունը հանգեցնում է խաղաղության»։

Չնայած պատերազմի պատճառների ոչ բոլոր մեկնաբանություններն են Կլարկի և Բլեյնի մոտ համընկնում (մեկի մոտ աղքատությունը ծնում է պատերազմ, մյուսի մոտ աղքատությունը տանում է դեպի խաղաղություն), սակայն նրանց երկուսի նպատակն էլ նույնն է՝ ապացուցել պատերազմների անխուսափելիությունը։

Պատերազմը բխեցնելով աղքատությունից, բուրժուական գաղափարախոսները սքողում են այն իրողությունը, որ զարգացող երկրների բռնության ակտերը հիմնականում իմպերիալիստական տերությունների ցույց տրվող դիմադրության ակտեր են։

Արևմուտքում լույս տեսած բազմաթիվ աշխատությունների հեղինակներ ուղղակի արդարացնում են կապիտալիստական առաջատար տերությունների կոպիտ ու անսքող դինված միջամտությունը զարգացող երկրների ներքին գործերին։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո իմպերիալիստական տերությունները բազմաթիվ ռազմական գործողություններ ձեռնարկեցին «երրորդ աշխարհի» երկրների դեմ։ Այսպես, ԱՄՆ-ը բացահայտ ինտերվենցիա կատարեց Հնդկաչինի, Դոմինիկյան Հանրապետության և Լիբանանի դեմ. Անգլիան գաղութային պատերազմներ վարեց Մալայայում, Քենիայում, Կիպրոսում, Պարսկական ծոցի շրջանում. Ֆրանսիան պատերազմներ մղեց Հնդկաչինում և Ալժիրում. 1956 թվականին Անգլիան, Ֆրանսիան և Իսրայելը համատեղ

ինտերվենցիա կատարեցին Եգիպտոսի դեմ. Հոլանդիան պատերազմներ մղեց Ինդոնեզիայում, Բելգիան՝ Կոնգոյում, Պորտուգալիան՝ Անգոլայում, Մոզամբիկում, Գվինեայում (Բիսաու) և այլն։

Հենց այս դեպքում է, որ կարելի է խոսել տնտեսական հետամնացության և ռազմական կոնֆլիկտների միջև եղած կապի մասին, որի իմաստը կայանում է նրանում, որ մի շարք զարգացող երկրների տնտեսական հետամնացությունը իմպերիալիստներին հնարավորություն է տալիս միջամտելու նրանց ներքին գործերին, որը և առաջ է բերում բացահայտ կոնֆլիկտներ։

Պատահական չէ, որ այսպիսի պայմաններում զարգացող երկրները ձգտում են զինվել, ձեռք բերել զենքի ամենանորագույն տեսակներ։ Այսպես, օրինակ, 1958—1968 թվականներին գերձայնային ինքնաթիռներ ունեցող զարգացող երկրների թիվը 4-ից հասել է 32-ի, իսկ «երկիր-օդ» հրթիռներով հայտնվել են 19 պետությունների զինանոցում։

Ամեն կերպ խոչընդոտելով զարգացման ոչ կապիտալիստական ուղու վրա կանգնած երկրների զինումը, իմպերիալիստական տերությունները, միաժամանակ, հսկայական ռազմական օգնություն են ցույց տալիս պրոիմպերիալիստական ռեժիմներին։ Այսպես, միայն 1971/1972 ֆինանսական տարում ԱՄՆ-ի ռազմական օգնությունը «երրորդ աշխարհի» իրենից կախում ունեցող ռեժիմներին կազմել է 4,6 միլիարդ դոլլար։ Իմպերիալիստական տերությունները «երրորդ աշխարհի» շատ երկրների հետ հաստատել են պայմանագրային ռազմական հարաբերություններ՝ նրանց իրենց միլիտարիստական քաղաքականության ոլորտի մեջ պահելու համար։ Այդ պայմանագրերով իմպերիալիստական տերությունները պարտավորություններ են ստանձնել «պաշտպանել զարգացող երկրների սուվերենությունը և անկախությունը»։ Այսպես, օրինակ, Միացյալ Նահանգները ավելի քան 40 երկրների հետ պահպանում են դաշնակցային հարաբերությունները, որոնք ամրապնդված են համապատասխան իրավական փաստաթղթերով։ Իր ռազմական ծրագրերը պլանավորելիս ԱՄՆ-ը հաշվի է առնում նաև այդ երկրների «ռազմական պաշտպանության կարիքները»։ Կյանքը ցույց է տալիս, որ այդ

«պաշտպանությունը» ոչ այլ ինչ է, եթե ոչ սովորական իմպերիալիստական միջամտություն։

«Երրորդ աշխարհում» սպառազինությունների մրցավազքին նպաստում են նաև առանձին երկրների միջև ստեղծված լարված հարաբերությունները, որոնք երբեմն վերաճում են զինված կոնֆլիկտների։ Դրանք վերջին հաշվով արդյունք են զարգացող երկրներից ռազմական տարբեր խմբավորումներ ստեղծելու իմպերիալիստական քաղաքականության։

Եվ այսպես, բռնությունը, զինված կոնֆլիկտները «երրորդ աշխարհում» ոչ թե աղքատության ծնունդ են, այլ համաշխարհային իմպերիալիզմի չդադարող դավերի արդյունք, որոնք վերանալու են միայն իմպերիալիզմի ոչնչացման հետ միասին։

Միլիտարիզմի և պատերազմի իրենց քաղաքականությունը իմպերիալիստներն, ինչպես ասվեց, արդարացնում են «կոմունիստական ագրեսիայի սպառնալիքի» մասին առասպելով։ Առաջ քաշելով այն, իմպերիալիզմի ջատագովները ձգտում են թաքցնել պատերազմի և ագրեսիայի իսկական աղբյուրը։ Նրանք կոմունիզմը ներկայացնում են իբրև «քաղաքակրթության սպառնալիք», իսկ կապիտալիզմը, որ իրականում դարձել է առաջադիմության արգելակ, հայտարարում են «մարդասիրական» հասարակարգ։

«Կոմունիստական ագրեսիայի սպառնալիքի» մասին առասպելը տեղ է գտել Ֆուլլերի, Բերնհեմի, Դալլեսի, Պոսոնիի, Հեսլերի, Ստրաուս-Հյուպեի, Սպիկմենի, Պյուլստոնի և այլոց ստեղծագործություններում։

Խեղաթյուրելով իրականությունը, նրանք սոցիալիստական երկրները ներկայացնում են որպես մարդկության համար ամեն տեսակ դժբախտությունների աղբյուր։

Այսպիսով, միլիտարիզմը և ագրեսիան ջատագովող հին և նոր բոլոր տեսությունները, այդ թվում ռեակցիոն բռնությունը արդարացնող նեոֆրեյդիստական, գեոպոլիտիկական, նեոմալթուսական և այլ կոնցեպցիաները մի հիմնական նպատակ ունեն՝ արդարացնել իմպերիալիզմի առավել ռազմատենչ ագրեսիվ գործողությունները։

Միլիտարիզմը և ագրեսիայի իր քաղաքականությունն արդարացնելու համար հրապարակ բերելով զանազան տեսու-

թյուններ, իմպերիալիստական բուրժուազիան, սակայն, չի սահմանափակվում դրանց լոկ պրոպագանդայով։ Դրանք ամենից առաջ տեսական բաղա են այն պրակտիկ ու կոնկրետ գործողությունների համար, որոնք ձեռնարկվում են բուրժուական կառավարությունների կողմից համաշխարհային կոմունիզմը «ետ շպրտելու» նպատակով։

Դա լիովին հաստատվեց ետպատերազմյան ժամանակաշրջանում։ Արևմուտքի իմպերիալիստական երկրները, ամենից առաջ ԱՄՆ-ի կառավարող շրջանները, միլիտարիզմի գաղափարախոսությունը մարմնավորեցին սպառազինությունների կատաղի մրցավազքի մեջ, իսկ ագրեսիայի գաղափարախոսությունը՝ ռազմական այն կոնկրետ գործողությունների մեջ, որոնք պարբերաբար ծավալում էին աշխարհի այս կամ այն մասում։ Ըստ որում այդ ագրեսիվ գործողություններն իմպերիալիզմը զուգակցում էր տեսական նորանոր կոնցեպցիաների մշակման ու պրոպագանդման հետ։

Հետաքրքիր թռուցիկ ակնարկ նետենք ետպատերազմյան ժամանակաշրջանում իմպերիալիզմի կողմից իրականացրած այն պրակտիկ քայլերի վրա, որոնք աշխարհը պահել են լարվածության ու տագնապի մեջ, «սառը պատերազմի» մթնոլորտում։

Երկրորդ համաշխարհային պատերազմը վերջացավ ֆաշիստական տերությունների ջախջախումով։ Պատերազմը ցույց տվեց սոցիալիզմի անխորտակելի ուժը։ Ֆաշիզմի ջախջախման, մարդկությանը նրա սպառնալիքից փրկելու գործում վճռական դեր խաղացին Սովետական Միությունը, նրա ինդուստրիալ հզորությունը, սովետական ժողովրդի բարոյա-քաղաքական միասնությունը, սովետական կարգերի կենսունակությունը։ Կարևոր նշանակություն ունեցավ սովետական ռազմական գիտության գերազանցությունը ֆաշիստական, միլիտարիստական ռազմական գիտության հանդեպ։

Պատերազմի հիմնական ծանրությունն ընկել էր Սովետական Միության վրա։ Բավական է նշել, որ գերմանաֆաշիստական 587 դիվիզիաներից սովետա-գերմանական ռազմաճակատում ջախջախվեցին 507-ը։ Սովետական զորքերը նաև ոչնչացրին Գերմանիայի դաշնակիցների ոչ պակաս 100 դիվիզիա։ Իսկ ԱՄՆ-ի, Անգլիայի և հակահիտլերյան կոալիցիայի մյուս երկրների բանակները շարքից հանեցին ֆաշիստական Գերմանիայի և նրա դաշնակիցների 176 դիվիզիա։ Արևելյան ճակատում ոչնչացվեց հակառակորդի ռազմական տեխնիկայի մեծ մասը՝ 167 հազար հրանոթ և ականանետ, 48 հազար տանկ, մինչև 77 հազար ինքնաթիռ։ Իր մասշտաբներով ու պայքարի համառությամբ սովետա-գերմանական ճակատը պատմության մեջ իր հավասարը չուներ։

Արդեն պատերազմի ավարտին պարզ էր դառնում, որ իմպերիալիզմի տնտեսական, քաղաքական և ռազմական կենտրոնը Եվրոպայից տեղափոխվել է օվկիանոսից այն կողմ։ ԱՄՆ-ը դառնում էր ժամանակակից իմպերիալիզմի գլխավոր միջնաբերդը։

Պատերազմից անմիջապես հետո ամերիկյան իմպերիալիզմն իր առջև դրեց համաշխարհային տիրապետություն հաստատելու խնդիրը։ Դեռևս 1945 թ. դեկտեմբերին, այսինքն՝ երբ ժողովուրդները դեռ ուշքի չէին եկել արյունահեղ պատերազմի արհավիրքներից, ԱՄՆ-ի պրեզիդենտ Հարրի Տրումենը բացահայտորեն հանդես եկավ ՍՍՀՄ-ի դեմ զինվելու կոչերով, պահանջեց մշտական պատրաստության մեջ պահել անհրաժեշտ քանակությամբ ռազմական ուժեր։

Ֆաշիստական տերությունների ջախջախման նախօրյակին ի հայտ եկավ մի նոր, վիթխարի վտանգ։ Պարզ դարձավ, որ իմպերիալիզմը մարդկության դեմ է ուղղում գիտության ու տեխնիկայի առաջադիմությունը։ Այն ժամանակ, երբ արդեն կանխորոշված էր ֆաշիստական տերությունների խմբավորման ռազմաքաղաքական կրախը, ամերիկյան միլիտարիստները ռումբեր նետեցին Ճապոնական Հիրոսիմա և Նագասակի քաղաքների վրա, ցույց տալով ատոմի թաքնված էներգիայի ահավոր կործանիչ ուժը։ Միայն Հիրոսիմայի վրա նետված ռումբից սպանվեց և վիրավորվեց ավելի քան 140 հազար մարդ։ Դա փաստորեն սոցիալիզմի դեմ սկսած «սառը պատերազմի» առաջին ակտն էր, որ կատարեցին համաշխարհային տիրապետության նոր հավակնորդները։ Ամերիկյան միլիտարիստներն ամեն կերպ փորձեցին պահպանել զենքի այդ նոր ու ահավոր տեսակի իրենց մենաշնորհը։

Մասսայական ոչնչացման զենքերի միջոցով աշխարհում տիրապետություն հաստատելու գաղափարն առաջատար

դարձավ ամերիկյան ռազմաքաղաքական տեսությունների մեջ։ Արդեն 50-ական թվականների վերջերին միջուկային զենքի պաշարներն ԱՄՆ-ում 300 հազար մեգատոննի հասան։ Ատոմային զենքի արտադրության գործի մեջ ներգրավվեց ամերիկյան ավելի քան հարյուր խոշոր մոնոպոլիստական ընկերություն։

Բայց հենց այն ժամանակ, երբ թվում էր, թե իմպերիալիզմը ստացել է «բացարձակ զենք», որի մասին այնպես երազում էին նրա առավել ռազմատենչ շրջանները, ԱՄՆ-ի համար ռազմական ուժի հնարավոր գործադրման ոլորտը սկսեց լրջորեն կրճատվել։ Դա ամենից առաջ տեղի ունեցավ այն պատճառով, որ ԱՄՆ-ին չհաջողվեց պահպանել միջուկային զենքի մոնոպոլիան։ Պաշտոնական Վաշինգտոնը թույլ տվեց բուրժուական քաղաքագետների համար տիպիկ վրիպում՝ սեփական ուժերի գերագնահատում և, ընդհակառակն, մյուս կողմի ուժերի թերագնահատում։ Սովետական Միությունը փայլուն կերպով լուծեց ամենակարճ ժամկետներում ատոմային էներգիայի նկատմամբ իմպերիալիզմի մենաշնորհը վերացնելու, միջուկային էներգիայի գաղտնիքներին տիրելու խնդիրը։ Նա շատ արագ մուտք գործեց տեխնիկական նոր դարաշրջան։ Արդեն 1947 թվականին ՍՍՀՄ-ը տիրացավ ատոմային, իսկ որոշ ժամանակ անց՝ նաև ջրածնային զենքերին։ 50-ական թվականների կեսերին սովետական երկրում կառուցվեց աշխարհում առաջին ատոմային էլեկտրակայանը։ ՍՍՀՄ-ի և սոցիալիստական ողջ համագործակցության պաշտպանական հզորության աճը ի չիք դարձրեց «վճռական ռազմական գերազանցության» վրա կառուցված պլանը, որը նախատեսում էր անպատիժ կերպով ռազմական ուժ գործադրել սոցիալիզմի երկրների դեմ, նրանց պարբերաբար շանտաժի ենթարկել։

Հարկ եղավ ստեղծել նաև հրթիռային տեխնիկա, որ կարողանար ատոմային ու ջրածնային ռումբերը հասցներ երկրագնդի ուզածդ վայրը, իմպերիալիստների կարծիքով՝ ստրատեգիապես անխոցելի կետերը։

Չնայած դրանից հետո էլ ամերիկյան քաղաքական լիդերներն ու տեսաբանները շարունակում էին իրենց հաշիվները կառուցել ԱՄՆ-ի ռազմական գերազանցության վրա, սակայն

արդեն 50-ական թվականների վերջերից սկսած իմպերիալիստների համար պարզ դարձավ, որ միջուկային պատերազմի սանձազերծումը հավասար կլինի ինքնասպանության։ Գնալով նրանք դժվարանում էին ռազմական ուժը գործադրել իբրև քաղաքական ազդեցության զենք։ Մյուս կողմից մասսայական ոչնչացման զենքի գոյությունն ամենալայն մասսաների մեջ կյանքի կոչեց ինքնապաշտպանման հսկայական ուժեր. չտեսնված մասշտաբներով ուժեղացան հակապատերազմական տրամադրությունները բոլոր երկրներում, այդ թվում նաև ԱՄՆ-ում։

Սակայն միլիտարիզմի ու ագրեսիայի մոլուցքով տարված ամերիկյան իմպերիալիստները կանգ չառան կես ճանապարհին։ Դեռևս 1947 թվականին ԱՄՆ-ի կոնգրեսը ընդունեց «Ազգային պաշտպանության մասին» օրենքը, որի նախագիծը հավանության էր արժանացել Տրումենի, Մարշալի, Էյզենհաուերի, Պետերսոնի, Մակարտուրի, Սպաատսի, ռազմական ու քաղաքական ուրիշ խոշոր գործիչների կողմից։ Կոնգրեսի այդ օրենքով սկսվեց սպառազինությունների նոր փուլն ԱՄՆ-ում։

Նույն թվականին ԱՄՆ-ը հռչակեց «Տրումենի դոկտրինան», որը հիմք դրեց այսպես կոչված «սառը պատերազմի» ժամանակաշրջանին[1]։

Այդ շրջանում որոշակի փոփոխություն կրեց ամերիկյան ռազմական դոկտրինան։ Մինչ այդ, սկսած դեռևս 30-ական թվականներից, ամերիկյան զինվորականությունը պաշտպանում էր այն տեսակետը, թե պատերազմի բախտը որոշում են ռազմածովային ուժերը։ Ուստի Պենտագոնը շատ ջանքեր էր գործադրել, որպեսզի զորքի այդ տեսակը զինի ամենանորագույն զենքերով։ Ռազմածովային ակտիվ քաղաքականության կողմնակից էին պրեզիդենտ Ֆրանկլին Ռուզվելտը, ամերիկյան սենատի և ներկայացուցիչների տան մեծամասնությունը։

Եվ ահա, նոր պայմաններում փոխվեց նաև ամերիկյան ռազմական դոկտրինան։ Աշխարհում ամենաուժեղ ռազմածովային ուժեր ունենալու հետ միասին, ամերիկյան ստրատեգներն առաջ քաշեցին նաև աշխարհում ամենահզոր ռազմաօդային ուժեր ունենալու պահանջը։ Ամերիկյան միլիտարիստ-

[1] Տե՛ս «Война, история, идеология», էջ 293։

ները ստրատեգիական ավիացիան համարեցին «պատերազմի բախտը որոշող զենք», «ժամանակակից պատմության վճռական ուժ»։ Հենց այդպես էլ գրում էր այն ժամանակվա ԱՄՆ-ի ավիացիայի մինիստր Ֆինլեթերը։

Ամերիկյան արդյունաբերությունը սկսեց նոր սիստեմների ծանր ռմբակոծիչների արտադրությունը։ Սրանք հագեցվեցին մահաբեր զենքերով, առաջին հերթին միջուկային ռումբերով։ Զուգահեռաբար կառուցվում էին ատոմային ու ջրածնային զենքեր կրող սուզանավեր։

50-ական թվականների սկզբներից ստրատեգիական զենքեր հայտարարվեցին նաև հրթիռները, հատկապես միջմայրցամաքային բալիստիկ հրթիռները, որոնք ունակ են ատոմային ու ջրածնային ռումբերը հասցնելու «թշնամու կենսական կետերը»։

Արագ թափով սկսեցին կատարելագործվել իմպերիալիստական ագրեսիայի զինանոցի այնպիսի ատրիբուտներ, ինչպիսիք են քիմիական և բակտերեոլոգիական զենքերը։

Սպառազինությունների մրցավազքը վիթխարի շահույթներ է բերում մոնոպոլիստական կապիտալին։ Պետական բյուջեն մոնոպոլիաների ֆինանսավորման հիմնական աղբյուրն է։ Երկրի միլիտարիզացիան իրականացվում է հարկեր–բյուջե–պետական պատվերներ սխեմայով։ Պետական միջոցներն ամրապնդում են զենք արտադրող մոնոպոլիաների ֆինանսական դրությունը, երաշխավորում են գերշահույթի ստացում նույնիսկ այն ժամանակ, երբ առկա է բիզնեսի ակտիվության նկատելի անկում։

Թե որպիսի վիթխարի շահույթներ են ստանում իմպերիալիստական երկրների մոնոպոլիստական ընկերությունները, կարելի է ցույց տալ ԱՄՆ-ի օրինակով։ Միայն 1965-1969 թվականներին այս երկրում ռազմական կոնտրակտների արժեքը 26,6 միլիարդ դոլլարից աճել և հասել է 42,3 միլիարդ դոլլարի։ Մորգանի ֆինանսական խմբի վերահսկողության ներքո գտնվող «Ջեներալ էլեկտրիկ» կոնցեռնը 1969 թվականի ֆինանսական տարում պետությունից ստացել է 1 621 միլիոն դոլլարի պատվեր և ռազմական պատվերների չափերով ամերիկյան մոնոպոլիաների շարքում գրավել է երկրորդ տեղը։

Ամերիկյան «Ֆորչուն» հանդեսն ամեն տարվա մայիսյան համարում լույս է ընծայում երկրի խոշորագույն ընկերությունների ցուցակը, նշելով դրանց ստացած շահույթները։ 1970 թվականին այդ ցուցակը գլխավորում էին Պենտագոնին ռազմական տեխնիկա, ուղղաթիռներ և ռազմական հանդերձանք մատակարարող խոշորագույն մոնոպոլիաներ՝ «Ջենեռալ էլեկտրիկ», «Կրայսլեր», «Ինտերնեշնլ բիզնեն մեշինզ», «Մոբիլ օյլ», «Տեկսակո», «Գալֆ օյլ», «Յու. Ս. Ստիլ» կոնցեռնները։

Երկրի տնտեսության միլիտարիզացման զուգընթաց ռազմական արտադրության մեջ գնալով ուժեղանում է համակենտրոնացման ու փոխադարձ միաձուլման պրոցեսը։ Առաջ եկած գերհզոր մոնոպոլիաների ձեռքին է կենտրոնացվում զենքի հիմնական տեսակների արտադրությունը։ Միաժամանակ տեղի է ունենում ռազմաֆինանսական օլիգարխիայի միաձուլում պետական ապարատի հետ։ Այդ երկու պրոցեսներն ըստ էության զուգորդվում են միմյանց։ «Շրջադարձ համաշխարհային քաղաքականության մեջ» հոդվածում Վ. Ի. Լենինը նշել է, որ իմպերիալիզմը «պատերազմի ժամանակ կարգին առաջ գնաց ոչ միայն դեպի ֆինանսական կապիտալի էլ ավելի մեծ համակենտրոնացում, այլ նաև պետական կապիտալիզմի վերածվելու ուղղությամբ»[1]։

Պետական ապարատի և մոնոպոլիաների միաձուլման, զինվորականության քաղաքական դերի աճի հետևանքը եղավ մոնոպոլիաների, բանկերի, զինվորականության և իշխանության օրգանների կոալիցիայի ստեղծումը։ Ըստ էության դա քաղաքական-տնտեսական-ռազմական դաշինք է, որը դարձել է ինքնաբավ գործություն ձեռք բերած ուժ, մի տեսակ պետություն պետության մեջ և փաստորեն ուղղություն է տալիս ԱՄՆ-ի ներքին ու արտաքին քաղաքականությանը։

Կապիտալիստական առաջատար երկրներում մոնոպոլիաների և պրոֆեսիոնալ միլիտարիստ-քաղաքագետների շարագուշակ դաշինքը ստացել է ռազմարդյունաբերական կոմպլեքս անվանումը։ Այդ կոմպլեքսը խորապես թափանցել է ժամանակակից իմպերիալիստական տերությունների

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 356։

քաղաքական, տնտեսական և հոգևոր կյանքի բոլոր ոլորտները[1]։

Ռազմարդյունաբերական կոմպլեքսի հիմքը ռազմական մոնոպոլիաներն են, իսկ նրան սնուցողը կառավարական ապարատներում բարձր պաշտոններ գրաված «վստահելի անձինք» են, որոնք եկել են խոշոր բիզնեսից, հզորագույն ֆինանսական կորպորացիաներից, կամ արդյունաբերական և ֆինանսական շրջանների հետ սերտորեն կապված փաստաբաններ են։ Վստահելի այս անձինք մոնոպոլիաներին օգնում են ստանալու պետական ամենաշահութաբեր պատվերները։ Իրենց հերթին, մոնոպոլիաները նրանց վարձատրում են մեծ առատաձեռնությամբ։ Օրինակ, ԱՄՆ-ի նախկին ռազմական մինիստր Ռոբերտ Մակնամարայի սեփական բաժնեթղթերը 1968 թվականին կազմում էին 1.278.200 դոլար[2]։

60-ական թվականների սկզբներից ամերիկյան քաղաքական և ռազմական ղեկավարությունը վերցրեց զինված ուժերի քանակական և որակական ինտենսիվ կատարելագործման նոր կուրս։ Ամերիկյան զինվորականությունը տարված էր մի հիմնական մտահոգությամբ, այն է՝ ամեն կերպ ապահովել ԱՄՆ-ի ստրատեգիական ռազմական գերազանցությունը «պոտենցիալ թշնամու» նկատմամբ։ Ամերիկյան ռազմամոլների մտահոգությունը զուրկ չէր հիմքից։ Բանն այն է, որ արմատական փոփոխություններ էին առաջացել միջազգային ասպարեզում ուժերի հարաբերակցության մեջ։ Սոցիալիզմը խափանել էր ստրատեգիական գերազանցության հասնելու իմպերիալիստական տերությունների ճիգերը։ Դա սոցիալիզ-

[1] Ամերիկյան սոցիոլոգները ռազմարդյունաբերական կոմպլեքսի հանդես գալը վերագրում են 1943—1945 թվականներին և այն կապում են ռազմական խոշոր արդյունաբերության ստեղծման հետ, որի նպատակն էր դաշնակիցներին մատակարարել զենք, ինչպես նաև զինել ամերիկյան բանակը։ Իրականում ռազմարդյունաբերական կոմպլեքսի արմատները պետք է փնտրել երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո ընկած ժամանակաշրջանում, երբ ԱՄՆ-ի իմպերիալիստական շրջանները որոշեցին իրականացնել իրենց հեգեմոնիստական ստրատեգիան։

[2] Տե՛ս **В. И. Михеев**, Капитализм или «индустриальное общество?» (Проблемы современного капитализма и буржуазная социология), изд-во «Международные отношения», М., 1968, էջ 78։

մի երկրներին, հեղափոխական և խաղաղասեր բոլոր ուժերին հնարավորություն էր տվել համառ պայքարով կանխել համաշխարհային նոր պատերազմը, սանձահարել պատերազմի հրձիգներին։

60-ական թվականների երկրորդ կեսը և 70-ական թվականների սկիզբը նշանավորվեց իմպերիալիստական առաջատար երկրներում սպառազինությունների արտադրության նոր աճով։ Հանդես եկան գերհզոր միջուկային ու ջրածնային ռումբեր, նոր սիստեմների հեռաթռիչ ռմբակոծիչներ, միջմայրցամաքային բալիստիկ հրթիռներ, ընդջրյա հրթիռակիր նավեր։

Թե կապիտալիստական երկրներում որքան հեռու է գնացել տնտեսության ռազմականացումը, բավական է նշել, որ այդ երկրներում պատերազմի նպատակներին է տրամադրված ատոմային արդյունաբերության 95 տոկոսը, նավաշինության՝ 60 տոկոսը, ռադիոէլեկտրոնիկայի՝ 50 տոկոսը, սարքաշինության՝ 52 տոկոսը, կապի միջոցների արտադրության՝ 69 տոկոսը։ Կարելի է ուղղակի ասել, որ կապիտալիստական տնտեսության բոլոր ճյուղերն այս կամ այն չափով կապված են ռազմական արտադրության հետ։

Ռազմական արդյունաբերությունը վիթխարի ծավալներով աճեց հատկապես ԱՄՆ-ում։ Եթե 1940—1965 թվականներին այս երկրում արդյունաբերական արտադրանքի ծավալն աճել է 3 անգամ, ապա նույն ժամանակաշրջանում ռազմամթերքների արտադրությունն ավելացել է 40 անգամ։ ԱՄՆ-ի զինված ուժերի նյութատեխնիկական մատակարարմանը մասնակցում է 20 հազար արդյունաբերական ֆիրմա։ Ռազմական արդյունաբերության տեսակարար կշիռը կազմում է. ավիաարդյունաբերության մեջ՝ 88 տոկոս, սարքաշինության մեջ՝ 52, կապի միջոցների արտադրության մեջ՝ 69, էլեկտրոնային ապարատների արտադրության մեջ՝ 40 տոկոս։ Ամերիկյան պաշտպանության մինիստրությանը բաժին է ընկնում երկրի արդյունաբերական արտադրանքի մոտ 20 տոկոսը։

Վերջին տարիներս Պենտագոնը հատուկ նշանակություն է տալիս միջուկային սուզանավերի կառուցմանը։ «Նյու Յորք Թայմս» թերթի տվյալներով 530-հազարանոց անձնակազմ ունեցող ԱՄՆ-ի ռազմածովային նավատորմը 1975 թվականին

ուներ 488 նավ, այդ թվում՝ 120 սուզանավ։ Առաջիկա տարիներին նախատեսվում է սուզանավերի թիվը հասցնել 200-ի։ Նոր կառուցվող սուզանավերը հիմնականում լինելու են ատոմային։ Ռազմական տեխնիկայի զարգացման ներքին տրամաբանությունը ենթադրում է, որ ստեղծվող նոր զենքերի տեսակների մեջ պետք է մարմնավորվեն գիտատեխնիկական առաջադիմության վերջին նվաճումները։ Իսկ դա պահանջում է մշտապես նորացնել պատերազմական զինանոցը, բարոյապես մաշված համարել դեռ երեկ արտադրած զենքի նորագույն տեսակները։ Այդ տեսակետից հենց շատ բնորոշ է սուզանավերի և նրանց սարքավորումների արտադրությունը։ Այսպես, օրինակ, «Պոլարիս—1» հրթիռները ամերիկյան ատոմային սուզանավերից հանվեցին դրանք տեղակայելուց ընդամենը մի քանի տարի հետո։ Դրանց փոխարինած «Պոլարիս—2» հրթիռները, իրենց հերթին, ընդամենը 5 տարի հետո դուրս մղվեցին ավելի կատարելագործված «Պոլարիս—3» և «Պոսեյդոն» հրթիռներից։ Այժմ Պենտագոնը տարված է մեծ հեռավորությունների վրա (մինչև 4 հազար ծովային միլ) հարվածող հրթիռներով զինված «Տրայդենտ» սիստեմի սուզանավերի արտադրություն սկսելու հոգսերով։

Մեծ կարևորություն է տրվում ստրատեգիական ավիացիայի զարգացմանը։ Մոտակա տարիներին Պենտագոնի հատուկ հոգատարության առարկան է դառնում «B—1» գերձայնային ստրատեգիական ռմբակոծիչների արտադրությունը։

Հաջողությամբ խաղալով ամերիկյան քաղքենու զգացմունքների հետ և նրան սարսափի մեջ պահելով «սովետական ատոմային սպառնալիքի» մասին առասպելներով[1], ամերիկյան միլիտարիստները ձեռնամուխ են եղել ստեղծելու հակահրթիռային պաշտպանության «Սեյֆգարդ» սիստեմը։ Այդ սիստեմը, որ առաջին էտապում պետք է բաղկացած լինի 12—14 կոմպլեքսից, տասնյակ միլիարդների նոր շահույթներ է խոստանում ամերիկյան կորպորացիաներին։

Թե որքան շատ են կուտակվել ավերման միջոցներ, բավական է ասել, որ մոլորակի ամեն մի բնակչին այժմ

[1] «Սովետական սպառնալիքի» վերսիայի քննադատությունը տե՛ս «Международная жизнь», № 3, 1977, էջ 113—118։

ընկնում է մոտ 30 տոննա պայմանական պայթուցիկ։ Այլ խոսքով, ամեն մի հազար մարդուն միջինն ընկնում է այնպիսի պայթուցիկ հզորություն, որը հավասար է Հիրոսիմայի վրա նետված ռումբին։ Արդեն փորձարկված ջրածնային ռումբերից ամեն մեկն իր ուժով շատ անգամ գերազանցում է այն բոլոր ռումբերին միասին վերցրած, որոնք պայթել են երկրորդ համաշխարհային պատերազմի ամբողջ ժամանակաշրջանում։ Այդպիսի մի ռումբի պայթյունից կարող է ոչընչանալ 500-ից մինչև 750 միլիոն մարդ։

Ջերմամիջուկային պատերազմը կործանարար կլինի ոչ միայն նրան մասնակից երկրների համար։ Այդպիսի պատերազմը անհաշիվ թշվառություններ կբերի նաև այն երկրներին ու ժողովուրդներին, որոնք անմիջականորեն չեն ենթարկվի ատոմային ռմբակոծման։ Գիտնականները մատնանշում են, որ պատերազմող երկրների տերիտորիաներում մեծ քանակությամբ ատոմային ռումբերի պայթյունից հետո երկրագնդի մնացած մակերեսի վրա կտեղան տարբեր ինտենսիվությամբ ռադիոակտիվ նյութեր, որոնք մահ կբերեն հարյուրմիլիոնավոր մարդկանց։ Այո, իրավացի է ամերիկացի հայտնի ֆիզիկոս, նոբելյան մրցանակի դափնեկիր Լայնուս Պոլինգը, թե ներկայումս եղած վառոդի նկուղները ընդունակ են պայթեցնելու ողջ մոլորակը։ Նա հիմք ունի նման համեմատության։ Իսկապես որ մարդկության գոյությանը սպառնացող զենքերը ահավոր ուժի են և անհամար։ Մասսայական ավերման ու ոչնչացման հրեշավոր միջոցները տեղակայված են ելակետային դիրքերում, գտնվում են պարեկային ինքնաթիռների և սուզանավերի մեջ, լեփ-լեցուն են աշխարհով մեկ սփռված ռազմական բազաների ստորգետնյա պահեստներում։

Զարկ տալով զենքի բոլոր տեսակների արտադրությանը, իմպերիալիստական բուրժուազիան միաժամանակ բոլոր ճիգերը թափում է, որպեսզի արդարացնի իր գործողությունները։

Այսպես, փորձելով բացատրել և արդարացնել ստրատեգիական սպառազինության մրցավազքի հիմքում ընկած քաղաքական իռացիոնալ մոտիվները, Վիսկոնսինի համալսարանի պրոֆեսոր Հ. Նիբուրգը գրում է, թե իր կարծիքով ԱՄՆ-ը չի կարող հանգիստ զգալ մի այնպիսի աշխարհում, որտեղ

հավասար ուժի մեծ տերություններ կան։ Նման տեսակետ են պաշտպանում է. Թեյլորը, Հ. Ջեկսոնը և ուրիշներ։ Սրանք այսպես կոչված անսահմանափակ սպառազինման կամ «գերսպառազինման» կողմնակիցներ են, որոնք մերժում են զինաթափման ուղղությամբ հասարակական տարբեր կարգ ունեցող պետությունների միջև բանակցությունների գաղափարը։ Սպառազինությունների մրցավազքի թուլացումը նրանք չափազանց վտանգավոր են համարում կապիտալիստական կարգերի համար։ Հ. Ջեկսոնը փորձ է անում հիմնավորել, թե միայն տնտեսության ռազմականացման միջոցով կարելի է կանխել տնտեսական ճգնաժամերը, լուծել զբաղվածության պրոբլեմը, ավելացնել «ազգի եկամուտը», ընդլայնել արտաքին շուկան։ Սպառազինությունների սահմանափակման ուղղությամբ արվող քայլերը նա դիտում է իբրև գործողություններ, որոնք իրականացվում են «գլոբալ նվաճման կոմունիստական սխեմայի» համաձայն, և որոնք հակասում են «կոմունիզմի նկատմամբ հաղթանակ տանելու» վերջնական նպատակին։ Է. Թեյլորը ձգտում է այն միտքը ներշնչել, թե սպառազինությունների մրցավազքը սոցիալական բարիք է, որի շնորհիվ չքանում են դասակարգային կոնֆլիկտները, գործազրկությունը, սոցիալական մյուս հիվանդությունները։

Սպառազինությունների մրցավազքը «գիտական» փաստարկներով հիմնավորելու փորձերը նոր չեն։ Դեռևս 1913 թվականին Գերմանիայում լույս է տեսել ոմն պրոֆեսոր Ռ. Հյոնիգերի «Գերմանական ռազմական գործի տնտեսական նշանակությունը» գիրքը, որտեղ փառաբանվում է ռազմական ծախսերի աճը, փորձ է արվում ցույց տալ նրանց բարերար ազդեցությունը երկրի տնտեսության վրա։ Այդ թեզին արժանի հակահարված տվեց Վ. Ի. Լենինը։ «Տետրեր իմպերիալիզմի վերաբերյալ»-ում նշելով, որ Հյոնիգերը փորձում է ապացուցել, «թե իբր զորքի վրա ծախսերը ամենևին էլ կորուստ չեն, որովհետև փողը մնում է երկրում, նրանից հսկայական շահույթ է ստացվում, զինվորական ծառայությունը դաստիարակում և ամրապնդում է etc. etc.»[1], Վ. Ի. Լենինն այդ

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 39, էջ 222։

ամենն անվանում էր «միլիտարիզմին նվիրված գռեհկաբանի շաղակրատություն»[1]։ Ժխտելով սպառազինությունների մրցավազքի օգտին «գիտական» փաստարկները, Վ. Ի. Լենինը նշում էր, որ իրականում այդ մրցավազքը ոչ թե տանում է դեպի տնտեսական ծաղկում, այլ խորացնում է հասարակական հարաբերությունների ճգնաժամը, տեղիք է տալիս վիթխարի նյութական միջոցների անիմաստ շռայլումների։ Այն ծառայում է որպես կապիտալիստական սիստեմի պարազիտիզմի ու փտածության ուժեղացման ակնառու ցուցանիշ։

Վ. Ի. Լենինի գիտական եզրակացությունները լիովին հաստատվում են մեր օրերում։

Վերցնենք, օրինակ, սպառազինությունների մրցավազքի վրա կատարվող ծախսերը և դրանց սոցիալական հետևանքները։

Եթե ոչ հեռու անցյալում ռազմական արտադրությունը միայն խոշոր պատերազմների ժամանակ էր էական դեր խաղում, իսկ խաղաղ պայմաններում կրճատվում էր մինչև նվազագույնը, ապա այժմ պատկերը լիովին փոխվել է։ Ներկայումս ռազմական արտադրությունը մշտական բնույթ է ընդունել։

1973 թվականին աշխարհի բոլոր երկրները միասին վերցրած սպառազինությունների վրա ծախսել են ավելի քան 250 միլիարդ դոլլար։

ՆԱՏՕ-ի երկրների ռազմական բյուջեներն ամեն տարի մեծանում են երկու-երեք միլիարդ դոլլարով։ Միայն 1970 թվականին այդ երկրները պատերազմի նախապատրաստմանը ներդրել են 103 միլիարդ դոլլար։

Ռազմական ծախսերը վիթխարի ծավալներ են ընդունել հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգներում։

1789—1917 թվականների ընթացքում, այսինքն՝ 128 տարում ԱՄՆ-ի կառավարության ընդհանուր ռազմական ծախսերը կազմել են ընդամենը 29,5 միլիարդ դոլլար։ 1922—1937 թվականներին ԱՄՆ-ում ռազմական կարիքների վրա տարեկան ծախսվել է մեկ միլիարդ դոլլարից էլ պակաս, որը կազմել է ֆեդերալ բյուջեի 10—15 տոկոսը։ Երկրորդ համաշ-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 39, էջ 222։

խարհային պատերազմի տարիներին ԱՄՆ-ը ռազմական նպատակներով ծախսել է մոտ 80 միլիարդ դոլլար։ Այդ տարիներին ռազմական ծախսերը կլանեցին ամերիկյան հարկատուների մուծած ամեն մի դոլլարի մոտ 30 ցենտը։ Պատերազմից հետո ԱՄՆ-ի ռազմական ծախսերը ոչ միայն չկրճատվեցին, այլև աճեցին մեծ մասշտաբներով և միջինը կազմեցին բյուջեի 40 տոկոսը։ 1967/1968 ֆինանսական տարում այդ ծախսերը հասան 80 միլիարդ դոլլարի, 1973/1974-ին՝ 83,4 միլիարդ դոլլարի։ 1965—1972 թվականներին ԱՄՆ-ը վիետնամական պատերազմի վրա ծախսել է 136 միլիարդ դոլլար։ Միայն վերջին 5 տարում ռազմական նպատակներով ամերիկյան ծախսերն անցել են 500 միլիարդ դոլլարից։ Այդ երկրի ռազմական բյուջեն 1977 թվականին կազմեց 112,8 միլիարդ, 1978 թվականին՝ 123 միլիարդ դոլլար, իսկ 1979 թվականին՝ 138 միլիարդ դոլլար։ ԱՄՆ-ի պաշտպանության մինիստրության ծախսերը գերազանցում են միասին վերցրած Անգլիայի, Ֆրանսիայի, Արևմտյան Գերմանիայի և Իտալիայի ընդհանուր պետական բյուջեն։ Ընդհանուր առմամբ ետպատերազմյան տարիներին ԱՄՆ-ի ռազմական ծախսերը հասել են առասպելական թվի՝ 1200 միլիարդ դոլլարի։

Ամերիկյան որոշ հաշվարկումներով 1980 թվականին ԱՄՆ-ի ռազմական բյուջեն կկազմի 139,8, 1981 թվականին՝ 149,1 միլիարդ դոլլար[1]։

Առաջիկա տարիներին միայն տասը տեսակ զենքեր արտադրելու համար ԱՄՆ-ը ծախսելու է 100 միլիարդ դոլլար։ Այդ գումարից մոտ 12 միլիարդը հատկացվում է ատոմային սուզանավերի կառուցմանը, 8 միլիարդը՝ ռազմական ինքնաթիռների, 10 միլիարդը՝ ուղղաթիռների, 3 միլիարդը՝ ականակիրների, 7 միլիարդը՝ ստրատեգիական ինքնաթիռների արտադրությանը։

Կապիտալիստական երկրներում ռազմական բյուջեների ուռճացման պատճառներից մեկն այն է, որ ռազմական տեխնիկայի արագ բարդացման հետևանքով մեծապես թանկանում են զենքի տեսակները, բարձրանում է դրանք արժեքը։

[1] Տե՛ս «Международная жизнь», № 3, 1977 г.

Այսպես, եթե երկրորդ համաշխարհային պատերազմի շրջանում ամերիկյան «B—29» ռմբակոծիչի արժեքը կազմում էր 680 հազար դոլլար, ապա ժամանակակից «B—52» ռմբակոծիչը արժե 8,5 միլիոն, «B—56» ռմբակոծիչը՝ 17,6 միլիոն դոլլար։ Այսպես կոչված կատարելագործված ստրատեգիական AMSA ինքնաթիռը, որը 80-ական թվականների սկզբներին փոխարինելու է «B—52» և «B—58» ինքնաթիռներին, արժենալու է 40 միլիոն դոլլարից ոչ պակաս։ Եթե երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին սուզանավն արժեր 4,7 միլիոն դոլլար, ապա 1968 թվականին նրա արժեքը բարձրացավ մինչև 200 միլիոն դոլլարի։ Իսկ նորագույն «Տրայդենտ» սիստեմի սուզանավի արժեքը կկազմի մոտավորապես 1,3 միլիարդ դոլլար։

Զգտելով արդարացնել այդ վիթխարի ծախսերը, Պենտագոնում հորինել են «ժանգոտ տերություն» արտահայտությունը։ ԱՄՆ-ը, իբր, կդառնա «ժանգոտ տերություն», եթե կոնգրեսը հրաժարվի բավարարել նոր զինատեսակների ստեղծումը ֆինանսավորելու վերաբերյալ ամերիկյան զինվորականության բոլոր պահանջները։ Իսկ այդ զինվորականությունն ունի առաջիկայում իրականացնելու դեռ մեծ պլաններ, որոնց մեջ գլխավորը ռազմական տեխնիկայի արտադրության ծավալների մեծացումն է։

Սպառազինությունների մրցավազքի օգտին «գիտական» փաստարկները հատկապես սնանկ են երևում, երբ քննության է առնվում գիտության միլիտարիզացման հարցը։

Իմպերիալիստական երկրներում գիտության առավելագույն չափով միլիտարիզացիան թելադրված է ժամանակակից գերավերիչ զենքերի մշտական կատարելագործմամբ։

Գիտության միլիտարիզացման բուռն պրոցեսը, որ սկսվել էր երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, այժմ հասել է արտակարգ լայն մասշտաբների։ Իմպերիալիզմը մարդկային մտքի նվաճումները, գիտնականների ու հետազոտողների, ինժեներների ու տեխնիկների տաղանդը ուղղում է ոչ թե հասարակության բարեկեցության բարձրացմանը, այլ օգտագործում է պատերազմի նախապատրաստության նպատակներին։ Կապիտալի աշխարհում բոլոր գիտնականների և ինժեներների ոչ պակաս մեկ քառորդն աշխատում է ռազմական

բնագավառում։ Մասսայական ոչնչացման զենքերի ստեղծման, կատարելագործման և արտադրության վրա աշխատում են բուրժուական պետությունների լավագույն գիտակոնստրուկտորական ուժերը։ Ընդհանուր առմամբ ռազմական հետազոտությունները և մշակումները կապիտալիստական երկրներում տարեկան կլանում են 25 միլիարդ դոլլար։

Գիտության միլիտարիզացման ընթացքը հատկապես այլանդակ ձևեր է ընդունել Ամերիկայի Միացյալ Նահանգներում։ Այստեղ մշտապես աճում են ռազմական հետազոտությունների վրա կատարվող ծախսերը։ Այս երկրում գիտության համար նախատեսված միջոցների մոտ 70 տոկոսը ծախսվում է ռազմական նպատակներով[1]: 1971/1972 ֆինանսական տարում Պենտագոնը գիտության վրա ռազմական նպատակով ծախսել է 8,3 միլիարդ դոլլար։ Դա 110 անգամ շատ էր 1940 թվականին նույն նպատակներով ԱՄՆ-ում ծախսած գումարներից (74 միլիոն դոլլար)։ Բայց նույն այդ վիթխարի թիվը ճշգրիտ չի արտացոլում իրերի իսկական վիճակը։ Հայտնի է, որ, ռազմական հետազոտությունների համար որոշակի առանձնացված ֆինանսական միջոցներից բացի, ԱՄՆ-ում գոյություն ունեն նաև բյուջեի տարբեր հոդվածների ետևում թաքնված այսպես կոչված «սև ֆոնդեր», այսինքն՝ գումարներ, որոնցով ֆինանսավորվում են գաղտնի պայմաններում տարվող գիտահետազոտական աշխատանքները։ Մոտավոր հաշվարկումներով, միայն 1969—1974 թվականներին ռազմական գիտահետազոտական աշխատանքների վրա ԱՄՆ-ում ծախսվել է հսկայական գումար՝ մոտ 60 միլիարդ դոլլար։

Պատերազմի նորագույն միջոցներ ստեղծելու և այդ ճանապարհով Սովետական Միության նկատմամբ ռազմական գերազանցություն ապահովելու հետ միասին, ԱՄՆ-ի միլիտարիզացված գիտության առջև դրված են նաև ուրիշ խնդիրներ։ Մասնավորապես ամերիկյան գիտությունը կոչված է մշակելու ազգային-ազատագրական շարժումների դեմ պայքարելու համար զենքերի նորագույն տեսակներ, ինչպես,

[1] Տե՛ս **А. М. Коровкин**, Ленинский революционный курс советской внешней политики, Л., 1975, էջ 40։

օրինակ, հակաապստամբական գործողությունների համար հարմարեցված հատուկ ինքնաթիռներ, ջունգլիներում ապաստանած ապստամբների հայտնաբերման սարքեր, ինչպես նաև ԱՄՆ-ի տերիտորիայում մասսայական ելույթների ճնշման համար առավել արդյունավետ միջոցներ, այդ թվում՝ արցունքաբեր թունավոր նյութերով հագեցված «ցատկող» նռնակը, փայտի կտորտուքներով «կրակող» հրացանը և «պատժիչ» այլ զենքեր։

Ռազմական բնույթի հետազոտություններով ու մշակումներով զբաղվում են տիեզերական տարածության ազգային վարչությունը, ատոմային էներգիայի հանձնաժողովը։ Այդ նպատակների համար նրանց ընդհանուր ծախսերը, ամերիկյան մամուլի վկայությամբ, 70-ական թվականներին հասել են տարեկան 14 միլիարդ դոլլարի, որը կազմում է գիտության վրա ամերիկյան կառավարության կատարած բոլոր ծախսերի ավելի քան 80 տոկոսը։

Վերջին շրջանում ԱՄՆ-ում ձեռնարկվել են ռազմագիտական գործունեության կենտրոնացման մի շարք միջոցներ։

1970 թվականին Պենտագոնի տրամադրության տակ կային 78 գիտահետազոտական ինստիտուտ և լաբորատորիա, 48 փորձնական կենտրոն։ Նույն թվականին ԱՄՆ-ի պաշտպանության մինիստրության սիստեմում զբաղված էր մոտ 88 հազար քաղաքացիական գիտնական և ինժեներ։ Այդ երկրում գիտաշխատողների մոտ 80 տոկոսն այս կամ այն չափով կապված է զենք ստեղծող հետազոտական հիմնարկների հետ[1]:

Կապիտալիստական երկրներում տնտեսության և գիտության ռազմականացումը հասցնում է ոչ միայն նյութական ու ֆինանսական վիթխարի միջոցների անարտադրողական վատնման, այլև աշխատանքային ռեսուրսների իռացիոնալ ծախսման։ 1975 թվականին կապիտալիստական երկրների ռազմական արտադրության մեջ դրաղված էր շուրջ 50 միլիոն մարդ, այսինքն՝ ավելի, քան Մեծ Բրիտանիայի և ԳՖՀ-ի

[1] Տե՛ս **В. Бондаренко**, Научно-технический прогресс и военное дело, М., 1973, էջ 15։

աշխատանքի ընդունակ բոլոր մարդիկ միասին վերցրած։ Իսկ որքան մարդ է կտրված արտադրողական աշխատանքից և դրված զենքի տակ։ ԱՄՆ-ի ինքնագործ բնակչության շուրջ 15 տոկոսը սպասարկում է բանակի կարիքները, կամ գտնվում է զինված ուժերում։ ՆԱՏՕ-ի միացյալ զինված ուժերի կազմում կա ավելի քան մեկ միլիոն մարդ։ Հյուսիսային և Կենտրոնական Եվրոպայում տեղաբաշխված է ՆԱՏՕ-ի 26 դիվիզիա, որոնք զինված են 5000 տանկով, 2166 ինքնաթիռով, իսկ Հարավային Եվրոպայում՝ 34 դիվիզիա 2100 տանկով և 980 ինքնաթիռով։ Տասնյակ հազարավոր մարդիկ զբաղված են ՆԱՏՕ-ի ռազմական սիստեմի մեջ մտնող 200 օդանավակայանի, 6300 մղոն երկարությամբ վառելիքի տեղափոխման խողովակների, 27.00 մղոն երկարությամբ վերերկրյա կոմունիկացիաների տեխնիկական սպասարկմամբ։

Այսպիսին է պատկերը։ Սպառազինությունների մրցավազքը խելահեղ ընթացք է ընդունել։ Եվ դա այն դեպքում, երբ մեր մոլորակի բնակչության կեսը տառապում է քաղցից ու թերսնումից, երբ միլիոնավոր մարդիկ մեռնում են հիվանդություններից և բժշկական օգնության բացակայությունից։ Ամբողջ աշխարհում ռազմական ծախսերը 2,5 անգամ գերազանցում են առողջապահության վրա և 1,5 անգամ կրթության վրա կատարվող ծախսերը։ ՆԱՏՕ-ի գոյության առաջին 25 տարիներին բլոկի մասնակիցների ռազմական նպատակներով կատարած ծախսերով, որոնք հասնում էին ավելի քան մեկ տրիլիոն 700 միլիարդ դոլլարի, կարելի կլիներ կառուցել Ասուանի հիդրոտեխնիկական կոմպլեքսի նման 200 էներգետիկ գիգանտ, որոնց արտադրած էլեկտրաէներգիան մոտ երեք անգամ կգերազանցեր ժամանակակից համաշխարհային մակարդակը։

Ուստի միանգամայն պարզ է, որ զինաթափումը հնարավորություն կտար խելացի օգտագործել գիտության ու տեխնիկայի նվաճումները, բնական վիթխարի ռեսուրսները, այն գիտական կադրերը, որոնք այժմ զբաղված են մարդկանց ոչնչացնելու նոր միջոցների հայտնագործման ու կատարելագործման պրոբլեմներով։ Գիտնականների վերադարձը ստեղծագործական աշխատանքի, ռազմական վիթխարի հատկացումների օգտագործումը տնտեսության խաղաղ զարգացման նպատակներին ոչ միայն կհանգեցներ գիտատեխնիկական առաջադիմության մինչ այժմ չտեսնված արագացմանը, այլև պայմաններ կստեղծեր ժողովուրդների կենսամակարդակի և բարեկեցության կտրուկ բարձրացման համար։

*
* *

Աշխարհում ծավալված սպառազինությունների մոլեգին և անսանձ մրցավազքն առաջ է բերել միջազգային հասարակայնության, բոլոր ողջամիտ մարդկանց անհանգստությունն ու տագնապը։ Համաշխարհային դեմոկրատական հասարակայնությունը, առաջադիմական մամուլը, ռեալիստորեն մտածող քաղաքական ու հասարակական գործիչները, գիտության և կուլտուրայի բազմաթիվ նշանավոր դեմքեր ետպատերազմյան ամբողջ ժամանակաշրջանում անդադրում մերկացրել են զինաթափման հակառակորդների չդադարող մանևրները, ցույց են տվել մարդկության համար միլիտարիզմի քաղաքականության կործանարար լինելը։ Դա պատահական չէ։ Մենք տեսանք, թե սպառազինությունների մրցավազքն ինչպիսի վիթխարի չափերի է հասցրել մարդկային աշխատանքի հանցագործ վատնումը, թե այն ինչպիսի արագությամբ է կլանում պետությունների նյութական և ինտելեկտուալ ռեսուրսները։ Չէ՞ որ ռազմական արտադրությունը, ինչպես նշվեց վերևում, ըստ էության վերարտադրության պրոցեսից հանում է ինչպես հաստատուն, այնպես էլ շրջանառու կապիտալի զգալի մասը։ Դա տնտեսական առումով հավասարազոր է այն բանին, որ հասարակությունը կամովին քամուն է տալիս իր իսկ աշխատանքի մի հսկա բաժին։

Ճիշտ է, տնտեսության ռազմականացումը սկզբնական շրջանում ինչ-որ չափով ապահովում է աշխատող ուժի զբաղվածություն։ Բայց այն երկար չի տևում և կապիտալիստական տնտեսությունն անխուսափելիորեն ճգնաժամային ցնցումներ է ապրում, որոնց հիմնական պատճառը, ինչպես հայտնի է, արտադրության հասարակական բնույթի և մասնավոր կապիտալիստական յուրացման միջև եղած հակասությունն է։ Անխուսափելի ճգնաժամի հետևանքով բնականաբար կրճատ-

վում են կապիտալիստական արտադրության տեմպերն ու մասշտաբները։

Այս երևույթները, ինչ խոսք, ըմբռնում են նաև բուրժուական քաղաքագետներից ու գաղափարախոսներից շատերը, որոնք մերթ ընդ մերթ սպառազինությունների մրցավազքը սահմանափակելու առաջարկներ են անում։ Գոյություն ունեցող զենքերը կրճատելու առաջարկներով հատկապես հանդես են գալիս չափավոր տրամադրություններ ունեցող մասնագետներ, գիտնականներ, հասարակական գործիչներ։ Վերջիններս, իհարկե, ելնում են այն իրողությունից, որ միլիտարիզմի սահմանափակումը բխում է կապիտալիստական կարգերի գոյության շահերից։ Բայց հատկապես դրականն այն է, որ կապիտալիստական պետությունների կառավարող շրջաններում նույնպես հետզհետե խորանում է այն ճշմարտության ըմբռնումը, որ միջուկային դարում նոր համաշխարհային պատերազմի սանձազերծման վրա հույս դնելը նույնքան անհեռանկարային է, որքան և կործանարար ու հանցավոր։

Կասկածի տակ դնելով սպառազինությունների մրցավազքը արդարացնող դոգմաների ճշմարտացիությունը, ռեալիստորեն մտածող բուրժուական գաղափարախոսներն ու քաղաքագետները նշում են ռազմական պատրաստությունների արգելմանն ուղղված միջոցառումների կարևորությունը, ընդգծում են այդ ճանապարհով ավելի վճռականորեն առաջ գնալու անհրաժեշտությունը։

Սպառազինությունների մրցավազքի և «ստրատեգիական գերազանցության» հասնելու ձգտման անհեռանկար լինելու մասին վերջին տարիներս հաճախ են նշել առաջներում ԱՄՆ-ի ռազմական շինարարությանն ակտիվորեն մասնակցած Հ. Յորկը, Դ. Վիզները, Ջ. Կիստյակովսկին, Դ. Ռատժենսը, Գ. Սկովիլը, Ռ. Գարվինը և ուրիշներ։

Սրանք գտնում են, որ սպառազինությունների, հատկապես ստրատեգիական սպառազինությունների բնագավառում մրցության շարունակումը կարող է լրջորեն մեծացնել կործանարար ընդհարման ռիսկը, թուլացնել բոլոր պետությունների անվտանգությունը։ Քաղաքականության մեջ այն կուժեղացնի դեպի ավանտյուրիզմ տանող տենդենցները, կհանգեցնի ռազմական ծախսերի հետագա էսկալացիայի,

ինչպես նաև կդժվարացնի ներքին սոցիալ-քաղաքական պրոբլեմների լուծումը։ Նրանք գտնում են, որ սպառազինությունների մրցավազքով ստեղծված փակուղուց կարելի է դուրս գալ միայն սպառազինություններն սահմանափակման բնագավառում կնքված միջազգային համաձայնագրերի հետևողական կատարման միջոցով։ Խաղաղության պրոբլեմների հետազոտման բնագավառում գործող արտասահմանյան շատ ինստիտուտներ շեշտը դնում են ինչպես քանակական, այնպես էլ որակական տեսակետից սպառազինությունների կրճատման վրա։

Մի շարք ինստիտուտների կողմից հրատարակված գրքերում, որոնք նվիրված են զինաթափման պրոբլեմներին, առաջարկություններ են արվում կրճատել ռազմական հետազոտությունների վրա կատարվող ծախսերը, նվազագույնի հասցնել ստրատեգիական զենքի գոյություն ունեցող պաշարները, այդ զենքի բոլոր տեսակների վրա տարածել կնքված համաձայնագրերով նախատեսված արգելքները, հատկապես վճռական միջոցներով արգելել այն զենքերը, որոնց գործադրումը կարող է առաջ բերել բնական միջավայրի քայքայում և այլն։

Դրական է այն, որ բուրժուական քաղաքական գործիչներից և գիտնականներից շատերն ուղղակի կապ են տեսնում սպառազինությունների մրցավազքի և արևմտյան երկրների տնտեսական դժվարությունների միջև։ Ամերիկյան գիտնական Ռ. Մորգենթաուն գրում է, որ ռազմական ծախսերն ավելացնելու միջոցով առաջ մղելով կապիտալիստական էկոնոմիկան, բուրժուական պետությունը միաժամանակ բարձրացնում է հարկերն ու ապրանքների գները, սրում է դրամաֆինանսական ճգնաժամը։ Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր Սեյմուր Մելմանը նշել է, որ անկարելի է կռվել ինֆլյացիայի դեմ, միաժամանակ նախկին մակարդակին պահպանելով ռազմական ծախսերը։ Դա նույնն է, թե ավտոմեքենա վարել՝ մի ոտքով սեղմելով աքսելերատորը, մյուսով՝ արգելակիչը, ասել է նա։ Պենտագոնի քաղաքականության դեմ հանդես եկած Ադամ Յարմոլինսկին, Մասաչուսետսի համալսարանի պրոֆեսորը, նշում է, որ ստրատեգիական զենքերի կուտակումը ԱՄՆ-ին նոր անելանելի դժվարությունների գիրկն է նետելու։

Գելապի ինստիտուտի կողմից 1974 թ. հոկտեմբերին կատարած ուսումնասիրության տվյալների համաձայն, ամերիկացիների 44 տոկոսը գտնում է, որ ռազմական ծախսերը չափազանց մեծ են և միայն 12 տոկոսն է այդ ծախսերը անբավարար համարում։

Հսկայական ռազմական ծախսերի հետևանք հանդիսացող ինֆլյացիան, արդյունաբերական արտադրանքի աճի տեմպերի պակասումը, սպառողական ապրանքների գների կտրուկ աճը, համաշխարհային շուկաներում ԱՄՆ-ի մրցակցային դիրքերի թուլացումը, դոլլարի արժեքի անկումը և այլն բուրժուական երկրների տիրապետող դասակարգերի ներսում ուժեղացնում են հակասությունները, առաջ են բերում ընդհարումներ ռազմարդյունաբերական կոմպլեքսի և կապիտալիստական այլ ազդեցիկ խմբավորումների միջև։ Բուրժուական գաղափարախոսներից առավել հեռատեսները սկսում են տրտնջալ, որ իմպերիալիստական երկրների, առաջին հերթին ԱՄՆ-ի, միլիտարիստական քաղաքական կուրսը վերջնականապես մտել է փակուղի։

*
* *

Ետպատերազմյան տարիներին «սառը պատերազմի» պայմաններում ծավալվող գաղափարական-քաղաքական ու դիվանագիտական պայքարը ցույց տվեց, որ ստեղծված դրությունից դուրս գալու միակ ուղին զինաթափումն է։ Պարզ դարձավ, որ ժամանակակից պատերազմի նոր ավերիչ ուժերի թերագնահատումը լիակատար նահանջ կլիներ մարդկային բանականությունից։ Մարդկությունը մոտեցել է պատմական մի այնպիսի սահմանագծի, երբ ջերմամիջուկային պատերազմի բացառումը կենսական անհրաժեշտություն է դարձել։ Կամ ժողովուրդները կկարողանան վերացնել միջուկային պատերազմի սպառնալիքը, կամ այդ պատերազմը մարդկությանը ետ կշպրտի, կնետի կործանման, դեգրադացիայի, սովի և համաճարակների անդունդը։

Սովետական Միությունը մերժում է այն մոտալ եզրակացությունը, թե սպառազինությունների մրցավազքին վերջ տալը մարդու հնարավորություններից վեր է։

19-րդ դարի վերջին Ֆ. Էնգելսը գրում էր զինաթափման անհրաժեշտության և հնարավորության մասին։ Նա ժողովուրդների համար մեծ վտանգ էր համարում բազմահազար բանակների գոյությունը և զենքի արտադրության մշտական աճը։ «Կարո՞ղ է արդյոք Եվրոպան զինաթափվել» աշխատության մեջ Ֆ. Էնգելսը նշում էր. «Մի՞թե չկա այլ ելք այս փակուղուց, բացի ավերիչ պատերազմից, որի նմանը դեռևս չի տեսել աշխարհը։ Ես պնդում եմ. զինաթափումը, հետևապես նաև խաղաղության երաշխիքը, հնարավոր է»[1]։

Զինաթափման լոզունգը՝ որպես սոցիալիստական պետության արտաքին քաղաքականության գործնական խնդիր, առաջադրել է Վ. Ի. Լենինը, հայտարարելով, որ զինաթափումը «սոցիալիզմի իդեալն» է։ Աշխարհում առաջին սոցիալիստական պետության առաջնորդը դա ազդարարեց մի այնպիսի ժամանակ, երբ դեռ չկային միլիտարիզմի աճը կասեցնելու, համաշխարհային պատերազմի սպառնալիքը կանխելու ռեալ նախադրյալներ։

Դեռևս 1922 թվականին, Ջենովայի կոնֆերանսում, սովետական կառավարությունը հռչակեց ընդհանուր զինաթափման ծավալուն ծրագիր, որի իրականացմանը պետք է մասնակցեին բոլոր պետությունները[2]։

Սպառազինությունների դեմ պայքարը Սովետական Միությունն ուժեղացրեց հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։

Ետպատերազմյան ժամանակաշրջանում Սովետական Միությունը և սոցիալիստական մյուս երկրները հանդես են եկել բազմաթիվ նախաձեռնություններով, պահանջել են մշակել և իրականացնել սպառազինությունների մրցավազքը դադարեցնելու, այնուհետև այն ետ շրջելու, զինաթափմանը ձեռնամուխ լինելու ռեալ ծրագրեր։

Միայն վերջին տարիներին միջազգային խաղաղության ամրապնդման և զինաթափման կարևոր հարցերի գծով Սովետական Միությունն առաջ է քաշել ավելի քան 70 առաջարկ[3]։

---

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 22, стр. 387.

[2] Տե՛ս «50 лет борьбы СССР за разоружение. Сборник документов», изд.-во «Наука», М., 1964, էջ 19—24։

[3] Տե՛ս «Международная жизнь», № 6, 1977, էջ 23։

Հանդես գալով սպառազինությունների մրցավազքի դադարեցման, զինաթափման օգտին, Սովետական Միությունն ինչոր շահադիտական նպատակներ չի հետապնդում։ Նա ելնում է այն իրողությունից, որ այդ հարցում շահագրգռված են աշխարհի բոլոր ժողովուրդները, որ զինաթափման պրոբլեմը կրում է համապարփակ բնույթ։

Պրոբլեմի լուծման արմատական ուղին, իհարկե, ընդհանուր և լրիվ զինաթափումն է: ՍՄԿԿ-ն և սովետական կառավարությունը բազմիցս արտահայտվել են հենց նման լուծման օգտին[1]: Դա պատահական չէ։ Սովետական պետությունն այժմ չունի ավելի մեծ ցանկություն, քան այն, որ ժողովրդական տնտեսությունից անհրաժեշտաբար վերցվող միջոցները հատկացվեն աշխատավորների կենսամակարդակի բարձրացման, ստեղծարար աշխատանքի նպատակների համար։

Ետպատերազմյան ժամանակաշրջանում ընդհանուր և լրիվ զինաթափման ուղղությամբ ՍՍՀՄ-ը արել է բազմաթիվ առաջարկություններ։ Այսպես, 1959 թվականին, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 14-րդ նստաշրջանում սովետական կառավարությունն առաջ քաշեց ընդհանուր և լրիվ զինաթափման ծրագիրը[2], իսկ հաջորդ՝ 15-րդ սեսիայում (1960 թ.)՝ «Ընդհանուր և լրիվ զինաթափման մասին պայմանագրի հիմնական դրույթները»[3]:

Զինաթափումը համաշխարհային քաղաքականության ամենաբարդ ու հրատապ պրոբլեմներից մեկն է, որի հետ կապված բոլոր հարցերը հնարավոր չէ լուծել միանգամից։ Դրանց լուծումը պահանջում է հետևողական ու համբերատար աշխատանք։ Ահա թե ինչու, առաջ քաշելով ընդհանուր և լրիվ զինաթափման խնդիրը, Սովետական Միությունը միաժամանակ դրել և դնում է զինաթափման մասնավոր խնդիրների լուծման հարցերը։

Դեռևս 50-ական թվականների կեսերին ՍՍՀՄ-ը և սոցիալիստական համագործակցության մյուս երկրները մշակեցին

[1] Տե՛ս «Внешняя политика Советского Союза», изд.-во политической литературы, М., 1975, էջ 349—352։

[2] Տե՛ս «50 лет борьбы СССР за разоружение. Сборник документов», էջ 396—409։

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 429—435։

զինաթափման բնագավառում ինքնուրույն, առանձին, մասնակի միջոցառումների կոնցեպցիա։ Դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ ՆԱՏՕ-ի անդամ երկրների կառավարություններն ուղեփակել էին համընդհանուր զինաթափման պրոբլեմների քննարկումն ու լուծումը։ Ըստ որում սոցիալիստական երկրներն իրենց ծրագիրն առաջ քաշեցին ոչ թե որպես համընդհանուր արմատական զինաթափման ալտերնատիվ, այլ որպես դեպի այդ նպատակը տանող ճանապարհի քայլեր։ Հենց այդ մղումով էլ ասպարեզ եկան միջուկային զենքի փորձարկումները դադարեցնելու, միջուկային զենքից լիովին ազատ զոնաներ ստեղծելու, այդ զենքի հետագա տարածումը կանխելու, ատոմային մարտագլխիկներով հրթիռներն ապամոնտաժելու, ուրիշ երկրների տերիտորիաներում տեղադրված ռազմական բազաները վերացնելու, դրանցից օտարերկրյա զորքերը դուրս բերելու, պետությունների ռազմական բյուջեները կրճատելու և այլնի մասին ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների առաջարկությունները[1]։ Սովետական Միությունը բազմիցս հայտարարել է, որ հիմնավոր է համարում Հնդկական օվկիանոսը խաղաղության գոտի դարձնելու մասին Ասիայի և Աֆրիկայի մի շարք պետությունների ցանկությունը։ Այստեղ արմատական հարցն այն է, որ այդ շրջանում չլինեն մշտական ռազմական ներկայության հիմնական տարրը կազմող օտարերկրյա ռազմական բազաներ։ Ինչ վերաբերում է Սովետական Միությանը, ապա նա մտադիր չի եղել և մտադիր չէ ռազմական բազաներ կառուցել Հնդկական օվկիանոսի շրջանում։ Մեր երկիրը պատրաստակամություն է հայտնում նպաստել Հնդկական օվկիանոսը խաղաղության գոտի դարձնելու գաղափարի իրականացմանը։ Ընդ որում նա գտնում է, որ խոչընդոտներ չպետք է ստեղծվեն Հնդկական օվկիանոսում ազատ ծովագնացության և գիտական հետազոտությունների համար։

Զինաթափման առանձին խնդիրների լուծման նպատակով Սովետական Միությունը մի շարք անգամ հանդես է եկել միջազգային հատուկ կոնֆերանսներ հրավիրելու առաջարկ-

[1] Տե՛ս «Внешняя политика Советского Союза», էջ 353—364։

ներով, ելնելով այն բանից, որ զինաթափումը պետք է դառնա առանց բացառության բոլոր պետությունների ընդհանուր գործը։ Համաշխարհային հասարակայնության շրջաններում լայն արձագանք գտավ, հատկապես, Սովետական Միության այն առաջարկը, որ զինաթափման պրոբլեմը պետք է քննարկել իր ամբողջության մեջ, ամենալայն ու ամենահեղինակավոր համաժողովում՝ զինաթափման համաշխարհային կոնֆերանսում։ Այդ կոնֆերանսի հրավիրման օգտին արտահայտվեց աշխարհի պետությունների ճնշող մեծամասնությունը։

Զինաթափման օգտին համաշխարհային հասարակայնությունը մոբիլիզացնելու նպատակով սովետական պետությունը լայնորեն օգտագործում է ՄԱԿ-ը։ Դեռևս 1973 թվականին Գլխավոր ասամբլեան հավանություն տվեց սովետական այն առաջարկությանը, որ Անվտանգության խորհրդի մշտական անդամ պետությունների ռազմական բյուջեները կրճատվեն 10 տոկոսով և տնտեսված միջոցների մի մասն օգտագործվի զարգացող երկրներին օգնություն ցույց տալու համար։ Որոշ պետությունների ոչ նպաստավոր դիրքորոշման պատճառով այդ հարցի լուծումը փաստորեն փակուղի մտավ։ Զգտելով գործը շարժել մեռյալ կետից, սովետական կառավարությունը բազմիցս հայտարարեց, որ պատրաստ է որոնել փոխադարձաբար ընդունելի այն կոնկրետ թվերը, որոնցից հարկ կլիներ սկսել կրճատումը։ Նա ելնում էր այն բանից, որ որպես առաջին քայլ կարելի է համաձայնության գալ ինչպես 10 տոկոսից մեծ թվի, այնպես էլ փոքր թվի շուրջը, բայց հարկավոր է այդ նպատակով անհապաղ սկսել բանակցությունները։

Սովետական Միությունը, Վարշավայի պայմանագրի մասնակից մյուս պետությունները վաղուց ի վեր պատրաստակամ են զինաթափման բոլոր հարցերի շուրջը գործնական բանակցություններ վարել ՄԱԿ-ի շրջանակներում։ Նրանք հանդես են գալիս զինաթափման հարցերի վերաբերյալ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի հատուկ նստաշրջան հրավիրելու օգտին՝ որպես զինաթափման համաշխարհային կոնֆերանսի փուլ։

[1] Տե՛ս В. Петров, В. Белов, А. Каренин, Ленинская внешняя политика СССР: развитие и перспективы, изд-во политической литературы, М., 1974, էջ 325—329։

Միջազգային լարվածության թուլացումը խորացնելու և ընդհանուր խաղաղությունն ամրապնդելու ճանապարհին խոշոր առաջընթաց քայլ կարող է լինել միջազգային հարաբերություններում ուժ չգործադրելու համաշխարհային պայմանագրի կնքումը։

ՍՍՀՄ-ը նաև ՄԱԿ-ի շրջանակներից դուրս զինաթափման գծով հատուկ օրգանների ստեղծման նախաձեռնողներից է։ Այսպես, Սովետական Միության համառ ջանքերի շնորհիվ ստեղծվեց զինաթափման ժնևի կոմիտեն։ Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների նախաձեռնությամբ 1973 թվականից Վիեննայում բազմակողմանի բանակցություններ են վարվում Կենտրոնական Եվրոպայում զինված ուժերը և սպառազինությունները կրճատելու վերաբերյալ։ Այնտեղ սովետական կողմն առաջարկում է կոնկրետ լուծումներ, որոնք կհանգեցնեն Եվրոպայում իրար դեմ կանգնած ռազմական ուժերի այնպիսի կրճատման, որ վնաս չհասցներ կողմերից ոչ մեկին։

Սովետական Միությունը և սոցիալիստական մյուս երկրները միջազգային կազմակերպությունների քննարկմանն են դնում շատ ավելի արմատական խնդիրներ։ Օրինակ, նրանք պահանջում են հաղթահարել աշխարհի բաժանումը հարկադիր ռազմական բլոկների, պատրաստակամություն են հայտնում ցրել Վարշավայի պայմանագրի կազմակերպությունը Հյուսիսատլանտյան պայմանագրի ցրման հետ միաժամանակ և, որպես առաջին քայլ, վերացնելու դրանց ռազմական կազմակերպությունները։ Սոցիալիստական համագործակցության երկրները նաև բոլոր պետություններին կոչ են անում ընդլայնել ներփակ խմբավորումներն ու ռազմաքաղաքական դաշինքները։ Նրանք գտնում են, որ այս ուղղությամբ գործնական միջոցառումներից մեկը կարող էր դառնալ Վարշավայի պայմանագրի 9-րդ հոդվածի և Հյուսիսատլանտյան պայմանագրի 10-րդ հոդվածի գործողության միաժամանակյա դադարեցումը, որոնք թույլ են տալիս մասնակիցների շրջանակի ընդլայնում՝ նոր պետությունների միանալու միջոցով։ Վարշավայի պայմանագրի մասնակից պետությունները բազմիցս նշել են, որ իրենք պատրաստ են համապատասխան բանակցությունների մեջ մտնելու այդ հարցի շուրջը, ուշադրությամբ քննության

առնել Եվրոպայում ռազմական դիմակայությունը աստիճանաբար թուլացնելու, կոնֆլիկտային իրավիճակների պատահական առաջացման վտանգը նվազեցնելու ամեն մի այլ առաջարկություն։

Զինաթափման համար մղվող պայքարի ընդհանուր կոմպլեքսում սկզբունքային նշանակություն է ձեռք բերում միջուկային զենքից զինաթափվելու խնդիրը։

Կյանքը հրամայաբար պահանջում է նախ և առաջ կասեցնել մասսայական ոչնչացման զենքի պաշարների հետագա ավելացումը, իսկ այնուհետև լրիվ արգելել ու վերացնել այն։ Սովետական կառավարությունն այն տեսակետին է, որ միջուկային տերությունները, իսկ նրանց կարող են միանալ մյուս բոլոր պետությունները, պետք է նստեն բանակցությունների սեղանի շուրջը՝ համակողմանիորեն քննարկելու միջուկային զինաթափման պրոբլեմը և համատեղ նշելու դրա լուծման ուղիները։

Սովետական Միությունն առաջին պետությունն էր, որ միջուկային զենքի ամենանորագույն տեսակներ ունենալով հանդերձ, հանդես եկավ այդ զենքերի փորձարկումներն ամենուրեք և ընդմիշտ արգելելու առաջարկով։ Սովետական առաջարկից հինգ տարի հետո միայն ԱՄՆ-ը սկզբունքորեն արտահայտվեց միջուկային զենքի փորձարկումները սահմանափակելու օգտին։ Ըստ որում հենց սկզբից ԱՄՆ-ն առաջ քաշեց մի ամբողջ շարք վերապահումներ ու պայմաններ, որոնց մի մասը այսօր էլ խոչընդոտ է այդ պրոբլեմի վերջնական լուծման համար։

Դեռևս 1963 թվականին Մոսկվայում պատմական նշանակություն ունեցող պայմանագիր կնքվեց ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև՝ մթնոլորտում, տիեզերական տարածության մեջ և ջրի տակ միջուկային զենքի փորձարկումներն արգելելու մասին։ Միաժամանակ, 60-ական թվականների հենց սկզբից ՍՍՀՄ-ը մշտապես հիշեցնում էր ռազմական նպատակներով բնական միջավայրի վրա ներգործելու վտանգները։

Տարիներ առաջ Սովետական Միությունը հանդես եկավ միջուկային զենքը չտարածելու պայմանագիր կնքելու օգտին։ ՍՍՀՄ-ը գտնում էր, որ այդ նպատակով պետք է իրենց ջանքերը միավորեն միջուկային և ոչ միջուկային մեծ և փոքր,

զարգացած և զարգացող բոլոր պետությունները։ Այդ պայմանագրին միացան միջուկային զենք ունեցող երկրները՝ Ֆրանսիայից և ՉԺՀ-ից բացի, ինչպես նաև միջուկային զենք չունեցող տասնյակ ուրիշ երկրներ։ Այն հանգամանքը, որ առանձին երկրներ չեն միացել այդ պայմանագրին, հարաճուն մտահոգություն է պատճառում. դա նշանակում է, որ դեռ լրիվ չեն փակված միջուկային զենքի տարածման ուղիները։ Սովետական կառավարությունը գտնում է, որ պետք է բազմապատկել ջանքերը, որպեսզի այդ զենքը չտարածվի, որպեսզի նրանից հրաժարվելու պայմանագիր կնքեն առանց բացառության բոլոր պետությունները[1]։

Միջուկային զենքի արգելման ուղղությամբ մեծ ջանքեր գործադրվեցին հատկապես 1972—1974 թվականներին, երբ առաջընթաց քայլ կատարվեց սովետա-ամերիկյան հարաբերությունների զարգացման բնագավառում։

1972 թ. մայիսին կայացավ սովետա-ամերիկյան բարձր մակարդակի հանդիպում։ Մայիսի 26-ին ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի կառավարությունները ստորագրեցին հակահրթիռային պաշտպանության (ՀՀՊ) սիստեմները սահմանափակելու մասին պայմանագիր, որը կարևոր քայլ էր ստրատեգիական հարձակողական սպառազինությունների սահմանափակման առավել լիակատար միջոցառումներ մշակելու ճանապարհին։

1973 թ. հունիսին ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևի ԱՄՆ կատարած պաշտոնական այցը, նրա հանդիպումները պրեզիդենտ Նիքսոնի հետ նոր ու կարևոր տեղաշարժերի սկիզբ եղան։ Խոշոր առաջընթաց քայլ կատարվեց պատերազմի վտանգի թուլացման և խաղաղության ամրապնդման ուղղությամբ։

Այդ տեղաշարժերի կարևորագույն արդյունքը միջուկային պատերազմի կանխման մասին ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև կնքված համաձայնագիրն էր։ ԱՄՆ-ը, ըստ էության, պարտավորվեց Սովետական Միության և նրա դաշնակիցների դեմ միջուկային զենք չգործադրել։ Իր հերթին ՍՍՀՄ-ը նման փո-

---

1 Տե՛ս «Внешняя политика Советского Союза и международные отношения. Сборник документов, 1968 год», изд-во «Междун. отнош.», М., 1969, էջ 90—93, 154—162։

խաղարձ պարտավորություն վերցրեց ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների նկատմամբ։ Համաձայնագիրն ապացույց էր այն բանի, որ երկու կողմերն էլ շահագրգռված են սահմանափակել սպառազինությունների, հատկապես ստրատեգիական սպառազինությունների մրցավազքը։

Ստրատեգիական սպառազինությունների սահմանափակման ուղղությամբ ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի կառավարությունների ձեռնարկած միջոցառումների թվում կարևոր էր ԱՄՆ-ի պրեզիդենտ Նիքսոնի 1974 թվականի ամռանը ՍՍՀՄ կատարած այցի ժամանակ համաձայնագրերի կնքումը։ Դա 1972 թվականին ստորագրված ստրատեգիական սպառազինությունների սահմանափակման հնգամյա համաձայնագրերի զարգացումն էր։ Ելնելով այն բանից, որ ստրատեգիական զենքի սահմանափակման բնագավառում հաջողության հասնելը շոշափելի արդյունքներ կունենա ինչպես պատերազմական վտանգի նվազեցման, այնպես էլ տնտեսության համար լրացուցիչ նյութական ռեսուրսների ազատագրման տեսակետից, կողմերը 1974 թ. հուլիսի 3-ին ստորագրեցին մի շարք կարևոր փաստաթղթեր։ Ստորագրվեց արձանագրություն հակահրթիռային պաշտպանության սիստեմները սահմանափակելու մասին ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև կնքված պայմանագրի վերաբերյալ։ Կնքվեց միջուկային զենքի ստորերկրյա փորձարկումներն արգելելու մասին պայմանագիր, որը նախատեսում էր, սկսած 1976 թվականի մարտի 31-ից, լիովին դադարեցնել այդպիսի զենքի փորձարկումները՝ հզորության համապատասխան շեմից վեր և նվազագույն քանակով սահմանափակել մյուս ստորերկրյա փորձարկումները։ Պայմանագրի հետ միաժամանակ ստորագրվեց արձանագրություն, որը կարգավորում է համապատասխան տվյալների փոխանակությունը պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ տեխնիկական միջոցներով վերահսկողություն ապահովելու հարցը։ Ստորագրվեցին նաև երկու արձանագրություն, որոնք կարգավորում են ստրատեգիական սպառազինությունների փոխարինումը, ապամոնտաժը կամ ոչնչացումը այն դեպքերում, երբ այդ հարցերը ծագում են 1972 թվականին ստորագրված հակահրթիռային պաշտպանության սիստեմները սահմանափակելու պայմանագրի և ստրատեգիական հարձակողական սպառազինությունների սահմանափակման մի քանի միջոցառումների մասին ժամանակավոր համաձայնագրերի դրույթներն իրականացնելիս։

1975 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում Սովետական Միությունն առաջարկ մտցրեց կնքել մի այնպիսի պայմանագիր, որը բոլոր պետություններին և, առաջին հերթին, միջուկային զենք ունեցող տերություններին արգելեր միջուկային զենքի ամեն տեսակ փորձարկումները։ Խոսքն ամեն տեսակ փորձարկումների մասին էր, այդ թվում ստորգետնյա միջուկային պայթեցումների։ Բավական է ասել, որ մինչև 1971 թվականի սկիզբը ԱՄՆ-ը կատարել է ատոմային զենքի 250 ստորգետնյա պայթեցում։ Միայն 1966—1976 թվականներին այդ պայթեցումները նստել են 2,7 միլիարդ դոլլար[1]։

1976 թվականի սեպտեմբերի 28-ին ՍՍՀՄ-ն առաջարկեց ՄԱԿ-ի քննարկմանը դնել իր ներկայացրած «Միջազգային հարաբերություններում ուժ չգործադրելու մասին համաշխարհային պայմանագիր կնքելու հարցը»։ Սովետական կառավարությունը անհետաձգելի խնդիր համարեց՝ հասնել այն բանին, որպեսզի դադարեցվի միջուկային սպառազինությունների մրցավազքը, մեծապես կրճատվի միջուկային զենքը, արգելվի նրա ամեն տեսակ փորձարկումները, ինչպես նաև ամրապնդվի այդ զենքը չտարածելու ռեժիմը։

Վերջին շրջանում Սովետական Միությունը մի շարք առաջարկներ է արել մասսայական ոչնչացման զենքի նոր տեսակների և սիստեմների ստեղծումը թույլ չտալու ուղղությամբ։ Խոսքն ամենից առաջ վերաբերում է նեյտրոնային ռումբին, որի արտադրությանը մտադիր են ձեռնամուխ լինել ամերիկյան միլիտարիստները։ Դա որակապես նոր սկզբունքների վրա հիմնված զենք է՝ իր կիրառման նոր եղանակով, հարվածի օբյեկտներով, ներգործության բնույթով։ Վերջապես, միջազգային հարաբերությունների հետագա բարելավմանը մեծապես նպաստեց 1979 թվականին Վիեննայում բարձր մակարդակով ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև կնքված երկրորդ պայմանագիրը՝

[1] Տե՛ս **Ա. Ե. Ефимов**, Ядерное разоружение, М., изд-во «Международные отношения», 1976, էջ 302։

ստրատեգիական սպառազինման սահմանափակման (ՍՍՍ—2) մասին։

Վերջին տասնամյակում Սովետական Միությունը և սոցիալիստական մյուս երկրները մեծ ջանքեր գործադրեցին կնքելու համար միջազգային այնպիսի արդյունավետ համաձայնագիր, որը պետությունների զինանոցներից բացառեր մասսայական ոչնչացման այնպիսի վտանգավոր զենք, ինչպիսին քիմիական զենքն է։ Այդ ջանքերի շնորհիվ հաջողվեց ԱՄՆ-ի, Անգլիայի և կապիտալիստական այլ երկրների հետ պայմանավորվածություն ձեռք բերել մանրէական (կենսաբանական) և թունավոր զենքի ստեղծումը, արտադրությունն ու դրանց պաշարների կուտակումը արգելելու և ոչնչացնելու մասին միջազգային կոնվենցիա կնքելու հարցի շուրջը։ Այդ կոնվենցիան 1971 թվականի դեկտեմբերին հավանության արժանացավ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից։ 1972 թ. ապրիլի 10-ին այդ կոնվենցիան ՍՍՀՄ կառավարության անունից միաժամանակ ստորագրվեց Մոսկվայում, Վաշինգտոնում և Լոնդոնում։ 1975 թ. փետրվարի 3-ին ՍՍՀՄ Գերագույն սովետի երկու պալատների արտաքին գործերի հանձնաժողովները միահամուռ հավանություն տվեցին կոնվենցիային։ Մի քանի օր հետո՝ փետրվարի 11-ին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունն ընդունեց հրամանագիր՝ մանրէական (կենսաբանական) և թունավոր զենքի մշակումը, արտադրությունն ու պաշարների կուտակումը արգելելու և ոչնչացնելու կոնվենցիայի վավերացման մասին։

Կոնվենցիայում հստակ արձանագրված է մասնակից պետությունների պարտավորությունը՝ երբեք և ոչ մի պարագայում չմշակել, չարտադրել, չկուտակել, որևէ այլ ձևով ձեռք չբերել և չպահել այնպիսի տեսակների կամ այնպիսի քանակություններով մանրէակենսաբանական կամ այլ կենսաբանական ագենտներ կամ թունավոր նյութեր, ինչպիսիք էլ լինեն դրանց ծագումը կամ արտադրության եղանակը, որոնք նախատեսված չեն կանխարգելիչ, պաշտպանական կամ այլ խաղաղ նպատակների համար։ Այսպիսով, արգելումն առանց բացառության ընդգրկում է այն բոլոր կենսաբանական ագենտները և թունավոր նյութերը, որ կարող են օգտագործվել որպես զենք։

Հասկանալի է, որ այդ համաձայնագիրը, ինչպես և այդ

կարգի ամեն մի այլ փաստաթուղթ, որ ստորագրում է բուրժուական պետությունը, ինչ-որ բացարձակ երաշխիք չէ։ Բայց դրա հետ միասին անվիճելի է, որ նման համաձայնագրերը դառնում են քաղաքական լուրջ գործոն, որը կաշկանդում է իմպերիալիստական տերությունների կառավարողներին, զսպում նրանց հնարավոր ագրեսիվ ձգտումները։

* * *

Դա չի նշանակում, իհարկե, թե բուրժուական երկրների միլիտարիստական ուժերը մտադիր են հրաժարվել իրենց տրադիցիոն քաղաքականությունից։ Ընդհակառակն, խուսանավելով հանդերձ, նրանք մեծ ջանքեր են գործադրում, որպեսզի նորանոր փաստարկների միջոցով հիմնավորեն նոր պայմաններում հին կուրսը շարունակելու անհրաժեշտությունը[1]։

Առավել ռազմատենչ միլիտարիստները և նրանց գաղափարախոսները ամենից առաջ փորձում են կասկածի տակ դնել աշխարհում տեղի ունեցող փոփոխությունների անկասելի լինելը։ Այսպես, վերլուծելով ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի վերջին տարիների հարաբերությունները, Զ. Բժեզինսկին պնդում է, թե առաջիկա տասնամյակում շարունակվելու է սպառազինությունների մրցավազքը երկու առաջատար տերություններում և որ դրանց միջև հարաբերությունները «ավելի լարված ու բարդ են լինելու, քան նախկինում»։ Նա առաջարկում է ուժեղացնել կոմունիզմի դեմ պայքարը և այդ նպատակով միավորել իմպերիալիստական բոլոր պետությունների ռազմատնտեսական պոտենցիալը։

Զինաթափման դեմ իրենց հանդես գալը բուրժուական գաղափարախոսները պատճառաբանում են նրանով, թե դա կօգնի հաջողության հասնելու սպառազինությունների սահմանափակման բանակցություններում՝ ստեղծելով «սակարկության կովաններ»։

---

[1] Տե՛ս Л. И. Брежнев, Мир социализма—торжество великих идей, М., изд-во политической литературы, 1978, էջ 622—623։

Այսպես, 1973 թվականին հրատարակած «Ջերմամիջուկային պատերազմի մասին» գրքում ամերիկյան բուրժուական գաղափարախոս Հերման Կանը պնդում է, թե ժամանակակից նորագույն սպառազինությունները «միջազգային հարաբերությունների իսկական կանոնավորիչներ են», ուստի դրանցից հրաժարվելը առնվազն անմտություն է։

ԱՄՆ-ի սենատի անդամ, ռազմարդյունաբերական կոմպլեքսի ակտիվ պաշտպան Բարրի Գոլդուոտերը 1974 թ. վերջերին հանդես գալով կոնգրեսում, առաջարկեց ռազմական բյուջեից «արձակել փաթթանը» և մոտ հինգ միլիարդ դոլլարով ավելացնել այն։ Իր այդ առաջարկը նա «հիմնավորեց» «կոմունիստական վտանգը զսպելու» վաղուց մաշված պատճառաբանությամբ։

ԱՄՆ-ում միլիտարիստները շարունակում են մի ամբողջ շարք ուրիշ ստրատեգիական սիստեմներ ստեղծելու կոչերը, որոնց վրա մոսկովյան համաձայնագրերով արգելք չի դրված։ Նրանք, մասնավորապես, առաջարկում են մեծ գումարներ հատկացնել առավել խոշոր ու հզոր հարվածային միջուկային ավիակիրներ, «օդ-հող» սիստեմի մեծ հեռահարության հրթիռներ, տիեզերական ռազմանավեր և պատերազմի ամենանորագույն այլ միջոցներ ստեղծելու նպատակին։

Այդ կապակցությամբ ռեակցիոն շրջանները լայնորեն պրոպագանդում են այն թեզը, թե որակական «տեխնոլոգիական» նոր մրցավազքի շնորհիվ ԱՄՆ-ը իր համար կարող է ռազմաստրատեգիական գերազանցություն ապահովել Սովետական Միության նկատմամբ, ինչպես նաև բանակցությունների ընթացքում ճնշում գործադրել ՍՍՀՄ-ի վրա։ «Տեխնոլոգիական» մրցության մեջ նրանք հատկապես մեծ հույսեր են կապում ամերիկյան բալիստիկ հրթիռների հետագա կատարելագործման հետ։

Այսպես, ամերիկյան միլիտարիզմի տեսաբաններից մեկը՝ Ջ. Նյուհաուզը, 1972 թվականին կառավարությանը խորհուրդ էր տալիս ստրատեգիական սիստեմների հետագա կատարելագործման նպատակով 1973—1983 թվականներին ծախսել առնվազն 55 միլիարդ դոլլար։ Նա գրում էր, թե որքան հնարավոր է պետք է շուտ սկսել Պենտագոնի ներկայիս հրապուրանքների՝ «Վ—1» նոր ռմբակոծչի, «Տոայդենտ» նոր սուզանավի

ավիակիրների համար նախատեսված նոր կործանիչի մասսայական արտադրությունը։

Նման անհանդուրժող «կարծր» դիրքերում են Է. Վելսը, Ջ. Մակբրայդը և ուրիշներ, որոնց գրքերում միջուկային զենքի փորձարկումների արգելումը դիտվում է իբրև «միջուկային ծուղակ», այնպիսի մի քայլ, որը վտանգի տակ է դնում Արևմուտքի անվտանգությունը։ Ջ. Մակբրայդը չի թաքցնում իր թշնամական վերաբերմունքը միջուկային զենքի փորձարկումների մասնակի արգելման մասին համաձայնագրերի նկատմամբ, տագնապ է հայտնում, որ դրանք կարող են ինչ-որ չափով կրճատել նորագույն զենքերի արտադրությունը։

Միացյալ Նահանգների պաշտպանության նախկին մինիստր Ջ. Շլեսինջերը 1975 թ. հուլիսին հանդես եկավ «սահմանափակ միջուկային պատերազմի» և «առաջին միջուկային հարվածի» կոնցեպցիաներով։ Նա առաջ քաշեց այն տեսակետը, թե ԱՄՆ-ը կոմունիստական բլոկի «զանգվածային հարձակման» դեպքում անպայման պետք է առաջինը գործածի միջուկային զենք։

Ամերիկյան բազմաթիվ կոնգրեսմեններ, քաղաքական ու պետական գործիչներ դատապարտեցին Շլեսինջերի կոնցեպցիան։ Այսպես, ԱՄՆ-ի կոնգրեսի անդամ Ռ. Օտինջերը «Վաշինգտոն պոստ» թերթին հասցեագրած նամակում գրում էր, որ Միացյալ Նահանգների կողմից առաջինը միջուկային հարվածը հասցնելու կոնցեպցիայի ընդունումը անթույլատրելի է միջուկային ոչնչացման ուղղությամբ էսկալացիայի չափազանց մեծ ռիսկի պատճառով։ Նա նշում էր, որ «միջուկային ջինը» չի կարելի բաց թողնել շշից, որպեսզի սպառնալիքի տակ չդրվի ամբողջ մարդկության գոյատևումը։ Օտինջերը ԱՄՆ-ի կառավարությանը կոչ արեց պաշտոնապես հրաժարվել միջուկային զենքն առաջինը գործադրելուց։

Պենտագոնի ղեկավարի վտանգավոր կոնցեպցիաների դատապարտումով հանդես են եկել նաև Հյուսիսային Կարոլինայի նախկին նահանգապետ Տ. Սենֆորդը, ներկայացուցիչների պալատի անդամ Բ. Աբզուգը, սենատոր Ա. Կրենստոնը և ուրիշներ։

1977 թվականից սկսած ամերիկյան զինվորականները և ռազմական տեսաբանները շատ են գրում «Քրուզ» հրթիռի արտադրությունն անմիջապես սկսելու անհրաժեշտության

մասին։ Նրանց ասելով դա այն հրթիռն է, որը լիովին ընդունակ է ներթափանցելու ՍՍՀՄ-ի պաշտպանական գծից ներս։ «Վաշինգտոն պոստ»-ի զինվորական մեկնաբան Դ. Կլարկը թերթի 1978 թվականի հունիսի 26-ի համարում գրել է, որ «Քրուզ» հրթիռների դեմ Սովետական Միությունը պետք է շուրջ 50 միլիարդ դոլլարի արժողությամբ պաշտպանական մի համակարգ ստեղծի, բայց այն դժվար թե որևէ նշանակություն ունենա, քանի որ ԱՄՆ-ը պարբերաբար փոխելու և բարելավելու է այդ հրթիռների որակը։ Մեկնաբանը այնուհետև շարունակում է, թե «Քրուզ» հրթիռները ղեկավարվում են հաշվիչ սարքերի միջոցով, ընդունակ են թռչելու շատ ցածր և հակառակորդի ռադարային սարքերից աննկատ, որ դրանք փոքր լինելով, կարող են աննկատ արձակվել սուզանավերից և օդանավերից։ Դրանք փորձարկվել են ՍՍՀՄ-ի ունեցած բոլոր պաշտպանական զենքերի դեմ, որոնք բոլորովին անպետք ու անգործածական են գտնվել, եզրափակում է իր հոդվածը «Վաշինգտոն պոստ»-ի զինվորական մեկնաբանը։

1978 թվականի նոյեմբերին ԱՄՆ-ի զինված ուժերի մինիստրությունը ծանուցեց, թե հաջողությամբ ավարտվել են թևավոր «Քրուզ» հրթիռների փորձարկումները և ԱՄՆ-ը անցնում է դրանց լրիվ արտադրությանը։

Ինչպես տեսնում ենք, ամերիկյան հասարակության ոչ բոլոր շերտերն են միատեսակ վերաբերմունք դրսևորում զինաթափման հանդեպ։ Ավելին, այդ հարցի նկատմամբ ակնհայտ հակասություններ կան հենց ԱՄՆ-ի կառավարության քաղաքականության մեջ։ Այդ քաղաքականությունը մի կողմից ճանաչել է այսպես կոչված «միատեսակ անվտանգության» սկզբունքը և հրաժարվել ռազմական գերազանցության հասնելու փորձերից (որը արտահայտություն է գտել 1972 թ. մայիսին Մոսկվայում ստորագրած «ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև փոխհարաբերությունների հիմունքները» փաստաթղթում և մի շարք ուրիշ համաձայնագրերում), իսկ մյուս կողմից նպաստում է արագ տեմպերով սպառազինությունների այն տեսակների արտադրությանը, որոնց վրա չեն տարածվում սովետա-ամերիկյան համաձայնագրերը։ Դա նշանակում է, որ ամերիկյան կառավարող շրջանների շատ ներկայացուցիչներ մինչև այժմ չեն հրաժարվել այն հույսից, թե ռազմատեխնիկական բնույթի գալիք հաջողություններն այնուամենայնիվ կարող են ինչ-որ կերպ փոխել իրադարձությունների ընթացքը, հնարավորություն ստեղծել ԱՄՆ-ի համար, որպեսզի ռազմական ուժը օգտագործի որպես արտաքին քաղաքականության գլխավոր գործիք։

Սպառազինությունների մրցավազքի սահմանափակման ու զինաթափման բացահայտ թշնամիների կողքին հանդես են գալիս նաև «լիբերալները»։ Սրանք դեմ են կատաղի հակակոմունիստների չքողարկված «ռազմամոլությանը» և գտնում են, որ պետք է գործել «փափուկ» մեթոդներով։ Այս ուղղության ներկայացուցիչները, այսպես կոչված վերահսկվող սպառազինման տեսակետի պաշտպանները, ձևականորեն հանդես չեն գալիս սպառազինությունների մրցավազքի սահմանափակման նպատակին ուղղված միջուկային համաձայնագրերի դեմ։ Հասկանալով, թե ինչպիսի վտանգավոր հետևանքներով են հղի սպառազինությունների վիթխարի աճը և հատկապես միջուկային պատերազմը, նրանք չեն կարող չընդունել այն միջոցների անհրաժեշտությունն ու օգտակարությունը, որոնք կոչված են թույլ չտալու միջուկային կործանման սանձազերծումը։ Դրա հետ միասին նրանք նսեմացնում են սպառազինությունների մրցավազքի սահմանափակման նպատակին ուղղված միջոցառումների նշանակությունը, գտնում են, որ կարելի է «չափավոր» սպառազինվել, այսինքն՝ սպառազինումը «կարգավորել» միջազգային համաձայնագրերով ու պայմանագրերով։

Զինաթափման ուղղությամբ հիմնական միջոցառումները մեկնաբանելով իբրև «զինաթափման սուրոգատ», վերահսկվող սպառազինությունների կողմնակիցները խեղաթյուրում են այն ակցիաների իսկական իմաստն ու նշանակությունը, որոնք կոչված են թեթևացնելու զինաթափման հիմնական պրոբլեմների լուծման ճանապարհին եղած դժվարությունները։ Պարզ է, որ համաձայնագրերի նման մեկնաբանումը միայն ձեռնտու է ռազմարդյունաբերական կոմպլեքսին։

Հատկանշական է, որ վերահսկվող սպառազինությունների կոնցեպցիայի կողմնակիցներից ոմանք իրենց աշխատություններում քննարկում են այն հարցը, թե սպառազինման ինչպիսի նոր ուղիներ և հնարավորություններ կարող են ի հայտ գալ

սպառազինությունների սահմանափակման նոր պայմաններում։ Մասնավորապես նրանց շատ է զբաղեցնում այն միտքը, թե ինչպես կարելի է զենքի տեսակների քանակական կրճատումը փոխհատուցել նրանց որակի բարձրացմամբ։

«Վերահսկվող» կամ «կարգավորվող» սպառազինությունների մրցավազքի կոնցեպցիան հակասում է երկու սիստեմների խաղաղ գոյակցության սկզբունքին և առատ ջուր է լցնում միլիտարիստների ջրաղացին։

Այն բազմաթիվ կողմերով մերձենում է ԱՄՆ-ում լայն տարածում գտած այսպես կոչված «փոխադարձաբար զսպելու» կոնցեպցիային[1], որի կողմնակիցները ենթադրում են գալիքում պահպանել զինված պայքարի զգալի միջոցներ (Ջ. Ռատջենս, Գ. Սկովիլ, Ջ. Ստոուն)։

Վերջին տարիներին Արևմուտքում լայն արձագանք է գտել մի հոսանք, որի ներկայացուցիչները գտնում են, թե զինաթափման ուղղությամբ մինչև այժմ ձեռնարկած միջոցառումները մասնակի են եղել, հետևապես նաև՝ անբավարար։ Այդ հոսանքի առավել աչքի ընկնող ներկայացուցիչներն են՝ Ա. Էյզեն, Յ. Հալտունգը, Ֆ. Նոել-Բեյկերը, Ֆ. Կալոջարոն, Ի. Ստոուն, Դ. Զենգհասը և ուրիշներ։ Այժմ, երբ ամբողջ աշխարհում ուժեղանում է միլիտարիզմի տեսության ու պրակտիկայի քննադատությունը, նման հայացքները, ինչ խոսք, դրական դեր են խաղում։

Այս հոսանքի կողմնակիցները, սակայն, հոռետեսորեն են տրամադրված սպառազինությունների մրցավազքի սահմանափակման ուղղությամբ կնքած միջուկային համաձայնագրերի նկատմամբ, գտնում են, որ դրանք որևէ դրական արդյունք տալ չեն կարող, որ այդ համաձայնագրերը զուտ «կոսմետիկական» նշանակություն ունեն, որոնք միայն գեղեցկացնում են սպառազինությունների մրցավազքի այլանդակ դեմքը։

«Կոսմետիկական զինաթափման» թեզի հեղինակների հլակետն ինքնին չի կարող առարկություն առաջ բերել։ Հայտնի է, որ գոյություն ունեցող համաձայնագրերի առկայության պայմաններում էլ սպառազինությունների մրցավազքն

[1] Տե՛ս «Война, история, идеология», էջ 300։

ամենուրեք շարունակվում է։ Այն բնագավառներում, որոնցում համապատասխան համաձայնագրերով արգելքներ չեն դրված սպառազինությունների մրցավազքի ճանապարհին, շարունակվում է զենքի կուտակումն ու կատարելագործումը։ Կապիտալիստական մի շարք երկրներում պահպանվում են ուռճացած ռազմական բյուջեներ, հատկապես աճում են ռազմական հետազոտությունների վրա կատարվող ծախսերը։ Ողջ աշխարհում շարունակվում են տարածվել առավել ժամանակակից զենքերի տեսակները։ Բայց այդպիսի դրությունը բնավ չի նշանակում, ինչպես գտնում են նշված կոնցեպցիայի կողմնակիցները, թե ձեռնարկած մասնակի միջոցները իբր ի վիճակի չեն զսպելու սպառազինությունների մրցավազքը, թուլացնելու ռազմական վտանգը, առողջացնելու միջազգային հարաբերությունները։ Օրինակ, չի կարելի համաձայնել նրանց այն տեսակետին, թե միջուկային զենքի փորձարկումների մասնակի արգելման մասին պայմանագիրը ոչ այլ ինչ է, քան «քաղաքական թյուրիմացությունների արդյունք»։

Իհարկե, ճիշտ է, որ այդ և եղած մյուս համաձայնագրերը սահմանափակ, մասնակի բնույթ են կրում, անկարող են լուծելու սպառազինությունների մրցավազքի դադարեցման և զինաթափման պրոբլեմի շատ կարևոր հարցեր։ Բայց ակնհայտ է նաև, որ միանգամայն սխալ է ժխտել դրանցում նշված միջոցների օգտակարությունը։ Դրանք ճիշտ ուղղությամբ տարված անհրաժեշտ քայլեր են, եթե նույնիսկ հաշվի առնենք այն իրողությունը, որ միլիտարիստական ուժերի դիմադրության պատճառով կնքված համաձայնագրերի ու պայմանագրերի կետերի ու դրույթների միայն մի մասն է հնարավոր դարձել իրականացնել կյանքում։ Զինաթափման գործի նկատմամբ թշնամաբար տրամադրված որոշակի շրջաններ ամեն կերպ ձգտում են խեղաթյուրել գոյություն ունեցող համաձայնագրերի բովանդակությունը, դրանք ներկայացնել իբրև հաստատում այն տեսակետի, ըստ որի խաղաղ հարաբերությունների հուսալի երաշխիքը միջուկային հզորության հավասարակշռության պահպանումն է։ Այսքանից հետո պարզ է, որ «կոսմետոլոգների» հոռետեսությունը ջուր է լցնում հենց այդ շրջանների ջրաղացին։

Անկասկած, զինաթափման ընդհանուր գործին մեծ վնաս են հասցնում նաև այն հայտարարությունները, որոնցում սպառազինությունների մրցավազքի համար ողջ պատասխանատվությունը հավասարապես դրվում է այսպես կոչված «գերտերությունների»՝ ԱՄՆ-ի և ՍՍՀՄ-ի վրա, ըստ որում այդ երկու երկրների քաղաքականությունն արհեստականորեն նույնացվում է։ Նման դեպքում, հակառակ ակնհայտ փաստերին, պրոբլեմի մոտեցման ընթացքում սքողվում են ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի, որպես սոցիալական տարբեր սիստեմներ ունեցող պետությունների, սկզբունքային տարբերությունները։ Կապիտալիստական հասարակարգին այժմ հատուկ սոցիալ-քաղաքական այնպիսի ներքին երևույթներ, ինչպիսիք են, օրինակ, քաղաքական շրջանների բաժանումը «բազեների» և «աղավնիների», սպառազինությունների սահմանափակման կողմնակիցների և հակառակորդների և այլն, տարածում են նաև սոցիալիստական պետությունների վրա։ Հետևելով նման մտացածին սխեմայի, «գերտերությունների» կոնցեպցիայի հեղինակները զինաթափման բնագավառում փաստորեն հավասարության նշան են դնում ԱՄՆ-ի և ՍՍՀՄ-ի կուրսի միջև, նույնացնում նրանց քաղաքականության մոտիվները, մեթոդներն ու նպատակները։ Այստեղից էլ այն հախուռն ընդհանրացումը, թե ԱՄՆ-ի և ՍՍՀՄ-ի միջուկային սպառազինությունների մրցավազքը, անկասկած, մարդկության գոյության գլխավոր վտանգն է։ Այստեղից էլ այն պնդումը, թե սպառազինությունների մրցավազքի զսպման նպատակով կնքված միջազգային համաձայնագրերը «գերտերությունների» հերթական դավադրությունն է մյուս երկրների դեմ, որի նպատակը սպառազինությունների մրցավազքի քողարկումն է։ Նրանք պնդում են նաև, թե «գերտերությունները» մեծապես շահագրգռված են առաջ բերելու լոկալ կոնֆլիկտներ, որովհետև սրանք նպաստում են զենքերի պրակտիկ փորձարկմանը և հատկապես զարկ են տալիս դրանց արտածմանը։ Միաժամանակ նրանք նույնացնում են ՍՍՀՄ-ից և ԱՄՆ-ից զենքի արտածման նպատակները։ Այն դեպքում, երբ ՍՍՀՄ-ը զենքով օգնություն է ցույց տալիս ագրեսորների դեմ ազատագրական պայքար մղող երկրներին, ապա ԱՄՆ-ը զենքի առևտուրը օգտագործում է ազգային-ազատագրական շարժումները

ճնշելու, ռազմարդյունաբերական կոմպլեքսի համար բարձր շահույթներ ձեռք բերելու համար։

Հասկանալի պատճառներով իմպերիալիստական կառավարությունները չեն ուզում, որ հետադիմական վարչակարգերին զենքի մատակարարումների մասին տեղեկանա համաշխարհային հասարակայնությունը։ Չէ՞ որ երբեմն տվյալ վարչակարգը նույնիսկ պաշտոնապես դատապարտվում է այդ նույն կառավարությունների կողմից։ Այստեղ է, որ օգնության են գալիս միջնորդները, որոնք գաղտնի կազմակերպում են հետադիմական վարչակարգերին զենքի մատակարարումները։ Բուրժուական մամուլի առանձին օրգաններ չեն թաքցնում, որ «երբեմն հարկ է լինում առևտուր անել նույնիսկ այն երկրների հետ, որոնք էմբարգոյի տակ են գտնվում»։

Զինաթափման ուղղությամբ ետպատերազմյան շրջանում տեղի ունեցած բանակցությունների ողջ պատմությունը, այդ բանակցությունների մասնակիցների միմյանց հակադիր տեսակետները և դիրքերը հեշտությամբ ժխտում են «գերտերությունների» մասին կոնցեպցիան։ Այդ կոնցեպցիան, սակայն, կենդանի է, այն հատկապես իր զինանոցն է մտցրել Պեկինը, որը իմպերիալիստական ռեակցիոն շրջանների հետ միասնաբար հանդես է գալիս զինաթափման դեմ։ Կար ժամանակ, երբ ՉԺՀ կառավարությունը «գերտերություն» էր համարում միայն ԱՄՆ-ը։ Դա այն ժամանակ էր, երբ նա դեռ չէր փոխել իր ներքին ու արտաքին քաղաքական կուրսը և չէր գժտվել ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների հետ[1]։ Հետագայում, երբ Չինաստանը կտրվեց սոցիալիստական համագործակցությունից, կտրականապես հրաժարվեց նաև մասնակցել զինաթափման բնագավառի միջազգային պայմանագրերին։ Նա մինչև այժմ չի միացել դրանցից և ոչ մեկին։ Չինաստանը իր համար անընդունելի է հայտարարել երեք միջավայրում միջուկային զենքի փորձարկումներն արգելելու վերաբերյալ Մոսկվայում կնքված պայմանագիրը, միջուկային զենքը չտարածելու մասին պայմանագիրը, բակտերիոլոգիական (բիոլոգիական) զենքը արգելելու մասին կոնվենցիան և այլն։

---

1 Տե՛ս «Новейшая история Китая. 1917—1970 г.г.», М., 1972, էջ 289։

Պեկինը վճռականորեն դեմ է արտահայտվել նաև զենքի սովորական տեսակներից զինաթափվելու ուղղությամբ ձեռնարկված բոլոր գործողություններին։ Աշխատելով իր ձեռքերը չկաշկանդել սպառազինման ճանապարհին, Չինաստանի կառավարությունը միջազգային ամեն տեսակ վերահսկողությունից դուրս իրականացնում է երկրի միլիտարիզացման կուրսը։

Այսպիսին է իրական վիճակը զինաթափման բնագավառում, այսպիսիք են սպառազինությունների մրցավազքը այս կամ այն չափով արդարացնող նորագույն բուրժուական կոնցեպցիաները։

Այս ամենը մեկ անգամ ևս ակնառու ցույց է տալիս, թե որքան անկեղծորեն են սոցիալիստական երկրները ձգտում զինաթափման[1]։ Դա նաև ցույց է տալիս, թե զինաթափման ձգտող երկրների, հատկապես սոցիալիստական երկրների համար որքան կարևոր է այսուհետև նույնպես պահպանել բարձր զգոնություն, ամրապնդել պաշտպանական հզորությունը։

Սովետական Միությունը պատկառելի զինված ուժեր ունի։ Մեր երկրի պաշտպանության համար սովետական կառավարությունը ծախսում է այնքան, որքան հարկավոր է ՍՍՀՄ-ի հուսալի անվտանգության համար, եղբայրական երկրների հետ մեկտեղ սոցիալիզմի նվաճումների պաշտպանության համար, այն բանի համար, որ պոտենցիալ ագրեսորների մեջ գայթակղություն չառաջանա փորձել ուժով իրենց օգտին վճռելու երկու հակադիր հասարակական սիստեմների պատմական վեճը։

Ունենալով հզոր զինված ուժեր, Սովետական Միությունը, սակայն, պարզ և հստակ հայտարարում է, որ մեր երկիրը ոչ ոքի չի սպառնացել ու չի սպառնում և պատրաստ է ուղած պահին զինված ուժերը կրճատել փոփոխադարձ հիման վրա։

Մենք հարկադրված ենք կատարելագործելու մեր պաշտպանությունը, որովհետև մեզ կանգնեցնում են սպառազինությունների անզուսպ մրցավազքի դեմ հանդիման։ Երբեմն ձայներ են հնչում, թե ՆԱՏՕ-ի առաջատար պետությունները «պետք է բոլորից ուժեղը լինեն աշխարհում», թե ՆԱՏՕ-ն ամբողջությամբ վերցրած պետք է ուժեղացնի իր սպառազինումը և դրանով իսկ մշտական ճնշում գործի Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների վրա։ Հենց դա է պատճառը, որ արդի աշխարհում այդպիսի մեծ ուժով սաստկանում է սպառազինությունների մրցավազքը։

Ի վնաս մեր հայրենիքի անվտանգության, ասված է ՍՄԿԿ XXV համագումարի փաստաթղթերում, մենք ոչ մի զիջում չենք կատարի, բայց կչանանք խելացի, փոխադարձաբար ընդունելի հիմք գտնել ստրատեգիական հարձակողական սպառազինությունների սահմանափակման, իսկ այնուհետև, հնարավոր է նաև՝ կրճատման շուրջը ԱՄՆ-ի և գերավերիչ զենքեր ունեցող մյուս երկրների հետ մշտական համաձայնագիր կնքելու համար։

Կոմունիստները լավ գիտեն, որ միլիտարիզմի ընթացքն անհնարին է կանգնեցնել բարոյական քարոզներով։ Այստեղ կարևորը միլիտարիստներին սանձահարելու հնարավորությունների ստեղծումն է՝ նրանց ռազմատենչ նկրտումները չեզոքացնելու համար։ «Գաղափարներն առհասարակ ոչինչ չեն կարող իրականացնել։ Գաղափարների իրականացման համար պահանջվում են մարդիկ, որոնք պետք է պրակտիկ ուժ գործադրեն»[1]։ Համաշխարհային սոցիալիզմի անշեղորեն բազմապատկվող տնտեսական և ռազմական պոտենցիալը շրջափակում է միլիտարիստական ուժերի գործողությունները, դրանով իսկ օրավուր է՛լ ավելի ռեալ է դարձնում խաղաղության համար ծայր առած շարժման հաջողությունը։ Ուստի անհրաժեշտ է այսուհետև ևս բարձր մակարդակի վրա պահել երկրի զինված ուժերը, որպեսզի սովետական ռազմիկները միշտ ունենան ամենաժամանակակից զենքը, որի հետ ստիպված լինեն հաշվի նստել իմպերիալիստները։

Կոմունիստները նաև լավ գիտեն, որ ժամանակակից իմպերիալիստական երկրներում միլիտարիզմի ուժեղացման ամենից ավելի ընդհանուր պատճառը արտադրության կապիտալիստական եղանակի ներքին և արտաքին հակասություն-

[1] Տե՛ս Л. И. Брежнев, О внешней политике КПСС и Советского государства, էջ 533։

[1] Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Սուրբ ընտանիք, 1967 թ., էջ 197։

ների սրումն է, կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի հետագա խորացումը։ Ուստի միլիտարիզմի վերջնական ոչնչացումը անհնարին է կապիտալիզմի պայմաններում։ Այդ խնդիրն իրականացնել կարող է միայն պրոլետարիատը, սոցիալիստական հաղթական հեղափոխության միջոցով։ Վ. Ի. Լենինը գրել է. «Մեր լոզունգը պետք է լինի՝ պրոլետարիատի զինում՝ բուրժուազիային հաղթելու, էքսպրոպրիացիայի ենթարկելու և ապազինելու համար... Լոկ այն բանից հետո, երբ պրոլետարիատը կապազինի բուրժուազիային, նա՝ չդավաճանելով համաշխարհային պատմական իր խնդրին, կարող է կոտրել, դեն շպրտել ընդհանրապես ամեն տեսակ զենք, և պրոլետարիատն անշուշտ կանի այդ, բայց միայն այն ժամանակ, ավելի շուտ՝ ո՛չ մի կերպ»[1]։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 97։

ՆԵՈԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Արդի ժամանակաշրջանում իմպերիալիստական բուրժուազիայի ակտիվ գործունեության հիմնական ոլորտներից մեկը «երրորդ աշխարհն» է։

Անդառնալիորեն անցել են այն ժամանակները, երբ Արևմուտքի գաղութատեր երկրները զենքի ուժով ամենադաժան ստրկացման էին ենթարկել Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի հարյուրմիլիոնավոր մարդկանց, անխնա կողոպտում էին նրանց երկրների բնական հարստությունները։

Գաղութատիրության կործանումն ինքն իրեն հեշտ ու հանգիստ չկատարվեց։ Դա պահանջեց գաղութային ժողովուրդների տասնյակ սերունդների անհուն տառապանքներ ու զրկանքներ, նրանց երկարատև ազատագրական մեծ պայքար։

Վերցնենք, օրինակ, Աֆրիկան, որտեղ գաղութատիրությունը հատկապես ամենաայլանդակ ձևեր ընդունեց։ Այդ մայրցամաքի վրա գաղութարարների արշավանքը մարդկային պատմության ամենասոսկալի ողբերգություններից մեկը հանդիսացավ։ Ամբողջ չորս դար, 15-րդի կեսերից մինչև 19-րդ դարի կեսը, եվրոպական և ամերիկյան լատիֆունդիստներն ասպատակում էին Աֆրիկան՝ սևամորթ բնակչությանը գերեվարելու համար։ Գերեվաճառության ճամփի վրա միլիոնավոր սևամորթներ անխնա ոչնչացվեցին, իսկ նրանցից 60 միլիոնը ուժով պոկվեց իր հարազատ վայրերից, ցրիվ տրվեց օվկիանոսից անդին, տարբեր երկրներում։ Ի վերջո կապիտալիստները մտածեցին, որ իրենց համար ավելի շահութաբեր կլիներ, եթե հափշտակեին Աֆրիկայի հարուստ հողերն ու հանքերը և ժողովուրդներին շահագործեին հենց

տեղում։ 19-րդ դարի վերջին քառորդին նրանք սկսեցին կատարել մինչ այդ չտեսնված բռնագրավումներ։ Եվրոպական վեց պետություն մտան Աֆրիկա և, սովալլուկ գայլերի նման միմյանց հետ կռվելով, գրավեցին այդ ընդարձակածավալ աշխարհամասի ավելի քան 80 տոկոսը։ Անգլիան, Ֆրանսիան և Բելգիան առաջինը տեր դարձան առյուծի բաժնին, ապա նրանց հետևելով սև մայրցամաք ներխուժեցին Գերմանիան և Իտալիան։ Աֆրիկյան ժողովուրդները, գերազանցապես սևամորթներ, հուսահատ կատաղությամբ կռվեցին այդ ավազակների դեմ, բայց չհասան ոչ մի հաջողության։

Կողոպտելով Աֆրիկայի երկրագործական, անտառային և հանքային հարստությունները, իմպերիալիստներն այնտեղ հաստատեցին անմարդկային շահագործման այնպիսի ռեժիմ, որի նմանը չէր տեսել պատմությունը։ Զրկվելով իրենց հողերից ու ապրուստի տարրական միջոցներից, բնիկները ստիպված էին խարազանի և բռնության տակ օրական 16—18 ժամ աշխատել տնկարաններում, անտառներում կամ հանքերում, ստանալով այնպիսի չնչին վարձատրություն, որով հազիվ հնարավոր էր գոյատևել։ Ո՞վ էր ուշադրություն դարձնում, որ այդ դժբախտություններից ու թերսնումից ոչնչանում էին տասնյակ հազարներով, որ նրանց ինքնատիպ կուլտուրան ոտնահարվում ու անհետանում էր։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը դարավոր նիրհից արթնացրեց գաղութները։ Սկսվեց ստրկացված ժողովուրդների դժվարին պայքարն իմպերիալիզմի գաղութային լուծը թոթափելու և ազգային անկախություն ձեռք բերելու համար։

Գաղութային ժողովուրդների հակաիմպերիալիստական պայքարը վիթխարի թափ առավ երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում և հատկապես նրանից հետո[1]։

Ստանալով համաշխարհային սոցիալիստական սիստեմի համակողմանի աջակցությունը, նրանք մեկը մյուսի ետևից դեն նետեցին ստրկության դարավոր շղթաները և կանգնեցին ազգային անկախ զարգացման ճանապարհին։ Ազգային-ազատագրական հեղափոխությունների ուժով շառաչյունով կործանվեցին Անգլիայի, Ֆրանսիայի, Հոլանդիայի, Բելգիայի և իմպերիալիստական մյուս երկրների գաղութային կայսրությունները[1]։

Գաղութային սիստեմի կործանման պայմաններում, հատկապես 40—50-ական թվականներին, բուրժուական ազգայնամոլներից շատերը սկսեցին բացահայտորեն խեղաթյուրել իրականությունը, կեղծել իմպերիալիզմի և գաղութային ճնշման դեմ ժողովուրդների ազատագրական պայքարի ողջ պրոցեսը։ Օրինակ՝ Ուոլտեր Կոլանժը իր «Կոմունիզմը և գաղութատիրությունը» գրքում գաղութային սիստեմի կործանման պրոցեսը փորձեց ներկայացնել այնպես, թե իբր Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդներին գաղութային կախվածությունից ազատագրելու նախաձեռնողները նախ բրիտանական, ապա ֆրանսիական, բելգիական, հոլանդական և այլ իմպերիալիստներն էին։

Ինչ խոսք, իրադարձությունների նման մեկնաբանումը չի կարող տարօրինակ չթվալ նույնիսկ պատմության հակակոմունիստական խեղաթյուրման մեջ մասնագիտացած բուրժուական շատ գործիչների ու տեսաբանների։

Բայց, ինչպես և պետք էր սպասել, համաշխարհային իմ-

---

[1] Տե՛ս «Колониализм сегодня. Справочник», изд-во политической литературы, М., 1967, էջ 9—18։

[1] Վերջին տարիներս զգալի չափով հարստացել է ազգային-ազատագրական շարժումների վերաբերյալ մարքսիստական գրականությունը։ Բազմաթիվ հետաքրքիր աշխատություններով հանդես են եկել հատկապես սովետական գիտնականները։ Տե՛ս «Ленин и национально-освободительное движение в странах Востока.», М., 1970; «Ленинизм и революционный процесс», Прага. 1970; «Ленинизм и национальный вопрос в современных условиях», М., 1972; «Ленинская теория социалистической революции и современность», М., 1972; А. А. Искендеров, Национально-освободительное движение. Проблемы, закономерности, перспективы, М., 1970; Р. А. Ульяновский, Социализм и освободившиеся страны, М., 1972; К. Н. Брутенц, Современные национально-освободительные революции, некоторые вопросы теории и идеологической борьбы, М., 1972; П. И. Манчха, Авангардные отряды революционной борьбы в Африке, М., 1971; В. Г. Солодовников, Проблемы современной Африки, М., 1973, и т.д.

պերիալիզմը չէր կարող հեշտությամբ հաշտվել կատարվածի հետ։ Նա դիմեց բոլոր միջոցների՝ ետ վերադարձնելու համար կորցրածը, գաղութների վրա կրկին վերահաստատելու իր տիրապետությունը։ Իսկ այդ միջոցները՝ բռնի և ոչ բռնի, իրենց կիրառման ձևերով տարբեր լինելով, հետապնդում են միևնույն նպատակները։

Ետպատերազմյան շրջանի առանձին բռնի ակտեր իմպերիալիստները գաղութներում կատարեցին, երբ դեռ նոր էին դադարել երկրորդ աշխարհամարտի հրանոթների որոտները։ Բռնի ուժով գաղութներ վերադառնալու փորձերին առաջինը դիմեցին անգլիական և ֆրանսիական իմպերիալիստները՝ ճապոնական օկուպանտներից ազատագրված Ասիայի երկրները նորից իրենց գաղութային տիրապետության ոլորտի մեջ ընդգրկելու համար։ Սակայն դրան ժողովուրդները պատասխանեցին զինված պայքարով։ Այդպես ծագեցին ետպատերազմյան առաջին զինված կոնֆլիկտները «երրորդ աշխարհում», մասնավորապես Հնդկաչինում, Մալայայում, Բիրմայում, Ինդոնեզիայում։ Ավելի ուշ գաղութարարների դեմ հեղափոխական պայքարը սկսվեց Քենիայում, Ալժիրում և ուրիշ գաղութներում։

Իրենց կորցրած դիրքերը նախկին գաղութային և կախյալ երկրներում վերականգնելու նպատակով զինված միջամտության չափազանց հարուստ փորձ կուտակեցին հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգները։ Ամերիկյան ռազմամոլները բոլոր ջանքերը գործադրեցին Կուբայում ափ իջեցնելու հեղափոխության թշնամի ուժերին, էմիգրանտ-վարձկաններին, նրանց միջոցով տապալելու երկրի օրինական կառավարությունը։ 1954 թվականին, ամերիկյան իմպերիալիստների ջանքերով իշխանությունից հեռացվեց Գվատեմալայի պրեզիդենտ Արբենսը։ Դրանից հետո նրանց ուղղակի միջամտությամբ տապալվեցին Դոմինիկյան հանրապետության պրեզիդենտ Բոշը և Բրազիլիայի պրեզիդենտ Գուլարտը։ Այնուհետև, ամերկյան իմպերիալիստները մի ամբողջ շարք հեղաշրջումներ կազմակերպեցին «երրորդ աշխարհի» ուրիշ երկրներում[1]։

[1] Տե՛ս «Война, история, идеология», էջ 311։

«Երրորդ աշխարհի» դեմ զինված պայքարում իմպերիալիստները շատ հաճախ կարողանում են վարպետորեն քողարկել իրենց գործողությունների իմաստը։ Երբեմն նրանք ձևականորեն հանդես չեն գալիս իբրև կռվող կողմ, չնայած այն բանին, որ իրականում իրենք են կազմակերպում այս կամ այն զինված կոնֆլիկտը։ Այդ մեթոդով նրանք շատ անգամ են կարողացել ազատագրված կամ ազատագրվող երկրների առաջադիմական ուժերի կամ կառավարությունների դեմ հանել այդ երկրների պրոիմպերիալիստական, ավատապետական, կոմպրադորական ուժերին։ Օրինակ, այդպիսի գործողությունների հետևանք հանդիսացավ Հարավային Վիետնամի մարիոնետային ռեժիմի պայքարը Ազատագրության ազգային ճակատի դեմ մինչև 1965 թվականը, այսինքն՝ մինչև իմպերիալիստների ուղղակի զինված միջամտությունը Հնդկաչինի ներքին գործերին։ Պատկերը նույնն էր Կոնգոյում (այժմ՝ Զաիր), Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում։

«Երրորդ աշխարհի» այն երկրներում, որոնցում իշխանության գլուխ անցան առաջադիմական ուժերը, իմպերիալիստները նրանց դեմ պայքարի իբրև հիմնական ձև ընդունեցին հակակառավարական ելույթների կազմակերպումը։ Դա հատկապես մեծ ծավալ ընդունեց 60-ական թվականներին։ Փաստորեն նման գործունեության հետևանք հանդիսացան կոնգոլեզական ճգնաժամը (1961—1964 թթ.), 1962 թվականին ծնևում կնքած համաձայնագրերից հետո ծագած կոնֆլիկտը Լաոսում, Եմենում սկսված ռեակցիոն խռովությունը 1963 թվականի հեղափոխությունից հետո, միջհամայնքային կոնֆլիկտը Կիպրոսում 1963—1964 և 1974 թվականներին։ Իմպերիալիզմն ակտիվ դեր խաղաց Գանայում (1966 թ.) և Ինդոնեզիայում (1965) թ. կատարած հեղաշրջումների, Նիգերիայում սանձազերծած քաղաքացիական պատերազմի (1967—1970 թթ.) մեջ և ժողովուրդների ազատության ու անկախության դեմ ուղղված ուրիշ զինված գործողություններում։

Այդ տեսակետից առավել ցայտուն օրինակ էր իմպերիալիստների աջակցությամբ Չիլիում կատարված զինվորական հեղաշրջումը։ Խունտան անարգեց երկրի սահմանադրա-

ությունը, անպատկառ կերպով ոտնահարեց չիլիական ժողովրդի դեմոկրատական ավանդույթները, ծաղրուծանակի ենթարկեց տասնյակ հազարավոր մարդկանց, գնդակահարումների, խոշտանգումների ու բարբարոսական տեռորի միջոցով երկրում ստեղծվեց արյունալի ռեժիմ։

Այդ ամենը խրախուսվեց ու ոգեշնչվեց դրսի ուժերի, ամենից առաջ ամերիկյան մոնոպոլիստական բուրժուազիայի կողմից՝ վերականգնելու համար այդ երկրում կորցրած տնտեսական ու քաղաքական դիրքերը, գույքը, արտոնությունները։

Այսպիսով, ուղղակի ինտերվենցիոնիզմի և տեղական ռեակցիայի ջանքերի զուգորդումն արդի էտապում իմպերիալիզմի քաղաքականության բնորոշ գիծն է, նրա գործունեության առավել ցայտուն դրսևորումը «երրորդ աշխարհի» երկրներում։

«Երրորդ աշխարհի» դեմ ուղղված բռնի ակցիաները ըստ էության համաշխարհային իմպերիալիզմի զինված կռիվն է ազգային-ազատագրական շարժման դեմ, ինտերվենցիոնիզմի, որպես գաղութային քաղաքականության ձևերից մեկի, արտահայտությունը։ Ետպատերազմյան ողջ զարգացումը համոզիչ ցույց տվեց, որ գաղութատիրությունն ու ագրեսիան, գաղութային ճնշման քաղաքականությունը և ուժի դիրքերի քաղաքականությունը ըստ էության միևնույն մեդալի երկու կողմերն են։

Աղատագրված գաղութների դեմ իմպերիալիստական պետությունների զինված պայքարն ակնհայտ հարձակման ու անողոք ագրեսիայի բնույթ կրեց։ Մյուս կողմից իրենց ազատության և անկախության համար գաղութային և կախյալ երկրների ժողովուրդների զինված պայքարը հենց սկզբից արդարացի բնույթ ստացավ։ Դա հետագայում հաստատվեց միջազգային մի շարք կարևորագույն փաստաթղթերով և, առաջին հերթին, գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն տալու մասին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 15-րդ սեսիայի (1960 թ.) ընդունած դեկլարացիայով։

Պետք է ասել, որ առաջադիմական ռեժիմների դեմ մղվող պայքարում իմպերիալիստները կարողանում են հմտորեն օգտագործել «երրորդ աշխարհի» երկրներում եղած ներքին հակասություններն ու կոնֆլիկտները, ամեն կերպ սրել դրանք։ «Երրորդ աշխարհի» շատ երկրներում տնտեսական աճի ցածր տեմպերը, գործազրկության և ագրարային գերբնակչության աճը հանգեցնում են նրան, որ սովի ու թշվառության դուռը հասած, բնակարանից ու աշխատանքից զուրկ բնակչության զգալի շերտերը, չունենալով նաև ճիշտ կողմնորոշում, հեշտությամբ դառնում են քաղաքական դեմագոգիայի զոհ։ Այսօր նրանք ողջունում են առաջադիմական վերափոխումները, աջակցում են դրանց իրականացնողներին, վաղը պատրաստ են տուրք տալու կրոնական-շովինիստական ամենառեակցիոն պրոպագանդային, հաշվեհարդար տեսնելու դեմոկրատական ուժերի հետ։

Իրենց գաղութատիրական ծրագրերի իրականացման համար իմպերիալիստներն օգտագործում են արդեն բազմաթիվ անգամ փորձված այնպիսի զենք, ինչպիսին «երրորդ աշխարհի» երկրների միջև զինված կոնֆլիկտներ առաջ բերելն է։

Առանձին զարգացող պետությունների միջև եղած հակասությունները, որոնք հաճախ հանգեցնում են զինված կոնֆլիկտների, իրենց արմատներով գնում են գաղութային անցյալը։

Ինչպես հայտնի է, «երրորդ աշխարհի» ժամանակակից պետությունների տերիտորիան, բնակչության կրոնաէթնիկական կազմը, ինչպես նաև հասարակական-քաղաքական ներքին կառուցվածքի հիմքերը ձևավորվել են գաղութատիրության պայմաններում, նրա քայքայիչ ազդեցության տակ։

Անգլիացի գիտնական Ա. Լեմբը «Ասիական սահմաններ» գրքում գրում է, որ գաղութային էտապով անցած ասիական ոչ մի երկրի սահման անշարժ չի մնացել։ Դրանց այժմյան սահմաններն այս կամ այն չափերով արդյունք են գաղութային դարաշրջանում տեղի ունեցած պատմական պրոցեսներին, որոնց էությունը կայանում է նրանում, որ գաղութային տերություններն «իրենց իրավունք էին վերապահում Ասիան ու Աֆրիկան ձևել այնպես, ինչպես իրենք էին կամենում, բավ նկատի չունենալով այդ մայրցամաքների ժողովուրդների շահերը»։

Ինչպես գաղութային զավթումների ընթացքում, այնպես էլ գաղութային տիրապետության պայմաններում, Ասիայի և Աֆրիկայի պետությունների ու երկրների սահմանները ենթարկվեցին անհավատալի փոփոխությունների։ Վաղուց արդեն ձևավորված պետությունները գաղութացնելուց հետո իմպերիալիստները նրանցից խլում էին ամբողջ շրջաններ, կազմում էին նոր պետություններ, կամ նախկինում մեկ պետության տերիտորիայում ստեղծում եվրոպական տարբեր երկրների գաղութներ։

Այս բոլորի հետևանքով որևէ ընդարձակ տերիտորիայում տիրապետություն հաստատած գաղութային վարչությանը ենթարկվում էին միմյանց միջև տնտեսական կապեր և էթնիկական ընդհանրություն չունեցող տարբեր ցեղեր ու ժողովուրդներ։ Այսպիսի պայմաններում տարբեր էթնիկական խմբերի միջև ստեղծվում էր անվստահության ու թշնամանքի մթնոլորտ, որն իրենց շահերի համար օգտագործում էին գաղութարարները։

Այս ամենն, իհարկե, չէր կարող այնպես ակնհայտ դրսևորվել, եթե իմպերիալիստներն անկախություն ստացած երկրներում չսրեին իրենց իսկ կողմից նախկինում ստեղծած պրոբլեմները։ Ապագաղութացման պայմաններում նրանք ամեն կերպ սկսեցին խորացնել ազգային, կրոնական, միջհամայնքային, միջցեղային, ինչպես նաև միջպետական (մասնավորապես տերիտորիալ պահանջների շուրջը) հակասությունները։

Դեռ գաղութատիրության ժամանակաշրջանում իմպերիալիստական տերությունները հոգ են տարել, որպեսզի ասկախություն ստացած երկրներում երկար ժամանակ պահպանեն իրենց ազդեցությունը՝ նրանց միջև կոնֆլիկտների հող ստեղծելու միջոցով։ Ասիայի և Աֆրիկայի երկրների անկախություն ստանալու շրջանում նրանք այդ նպատակով լայնորեն օգտագործեցին ֆեդերալիզմի սկզբունքներն ու քաղաքականությունը։ Դա նրանց հնարավորություն տվեց երիտասարդ անկախ երկրներում առաջ բերել միջցեղային, միջհամայնքային և ուրիշ հակասություններ ու վեճեր, ինչպես նաև կոնֆլիկտներ՝ այդ երկրների միջև, հատկապես փոխադարձ տերիտորիալ հավակնությունների հողի վրա։

Ապագաղութացման շրջանում նման կոնֆլիկտներ ու զինված ընդհարումներ եղան Ալժիրի և Մարոկկոյի, Մալայզիայի և Ինդոնեզիայի, Մալայզիայի և Ֆիլիպինների, Սոմալիի և Եթովպիայի, Սոմալիի և Քենիայի միջև։ Միջցեղային և միջհամայնքային հակասություններ առաջ եկան Հնդկաստանում, Նիգերիայում, Ուգանդայում, Բիրմայում, մի շարք ուրիշ երկրներում։

Բռնի ուժով, դավադրություններով ու պարբերաբար հեղաշրջումներ կազմակերպելու միջոցով գաղութներ վերադառնալու իրենց պրակտիկ գործողություններին իմպերիալիստները փորձեցին տալ տեսական հիմնավորում, արդարացնել ազգային-ազատագրական շարժումների դեմ ծավալած պայքարը։

Այդ նպատակին էր ուղղված 40-ական թվականների վերջերից հրապարակ եկած և մինչև 60-ական թվականների ըսսկիզբը լայն տարածում գտած այսպես կոչված «կոմունիստական դավադրության» մասին տեսությունը։ Նրա հեղինակները գտնում էին, որ ազգային-ազատագրական շարժումների առաջացման պատճառը «համաշխարհային կոմունիզմի» «քայքայիչ» գործողությունն է։ Սակայն այդ տեսությունն այնքան շինծու էր ու այնքան ակնհայտ էր հակասում իրական փաստերին, որ դրա դեմ հանդես եկան նույնիսկ բուրժուական շատ սոցիոլոգներ ու քաղաքագետներ։ Դրանցից մեկը ամերիկյան գիտնական և քաղաքական գործիչ Ռ. Բարնետը անհեթեթ է համարում այն պնդումը, թե ազգային-ազատագրական հեղափոխություններն օրինաչափ չեն, թե դրանք հրահրված են դրսից, ուստի և դրանց ճնշումը ոչ այլ ինչ է, քան ազատագրական ակտ։

«Կոմունիստական դավադրության» մասին տեսությունը, ըստ էության, ընկավ տխրահռչակ «դոմինոյի տեսության» հիմքում, որի համաձայն Հարավարևելյան Ասիայի բոլոր երկրները մեկը մյուսի ետևից անխուսափելիորեն «կոմունիստական ագրեսիայի» զոհ են դառնալու, եթե ԱՄՆ-ը ակտիվորեն չմիջամտի Հնդկաչինի ներքին գործերին ու չճնշի նրա ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը։

Ասիայի և Աֆրիկայի երկրների կողմից քաղաքական անկախություն նվաճելուն համեմատ «կոմունիստական դավա-

դրության» տեսությունը աստիճանաբար իր տեղը զիջեց «քաղաքական վակուումի» տեսությանը, որը ԱՄՆ-ում և Արևմուտքի ուրիշ երկրներում լայն տարածում ստացավ հատկապես 60-ական թվականներին։ Այդ տեսությունը ելնում էր նրանից, թե նախկին գաղութային ու կախյալ երկրներից իմպերիալիստական տերությունների հեռացումը ստեղծել է այսպես կոչված «քաղաքական վակուում», որն անխուսափելիորեն լցվելու է «համաշխարհային կոմունիզմով», եթե Արևմուտքը ինքը չշտապի լցնել այն։

Բայց նման տեսություններով հնարավոր չեղավ արդարացնել նախկին գաղութային ժողովուրդների դեմ իմպերիալիստների սկսած հանցավոր գործողությունները։ Զարգացման ընթացքը ցույց տվեց, որ գաղութատիրությունը պատմության գիրկն է անցնում անդառնալիորեն, և որ բռնի ուժով գաղութներ վերադառնալու հույսը այլևս անիրականալի է։

Եվ ահա, այս ամենից հետո միջազգային իմպերիալիզմը որդեգրեց նեոգաղութատիրության քաղաքականությունը։

Իմպերիալիզմի այս նոր քաղաքականության նպատակը դարձավ «խաղաղ» միջոցներով ու «փոխադարձ հասկացողությամբ» թափանցել զարգացող երկրները[1], այսինքն՝ նախկին գաղութները, դրանց ժողովուրդներին մատնել նոր՝ «կամավոր» ստրկության։

Իմպերիալիզմի անցյալի պատմությունից հայտնի են շատ օրինակներ, որոնք ինչ-որ չափով հիշեցնում են նեոգաղութարարների ժամանակակից տակտիկան։ Հայտնի է, թե հատկապես 19-րդ դարում իմպերիալիստներն ինչպիսի զանազան, երբեմն էլ նուրբ մեթոդներով մի շարք երկրներ վերածեցին կիսագաղութների (Չինաստան, Իրան, Թուրքիա, Աֆղանստան)։ Ժամանակակից նեոգաղութարարներն իրենց տակտիկական զինանոցում շատ բան են ընդօրինակել հատկապես ամերիկյան իմպերիալիզմի էքսպանսիայի փորձից։ Հենվելով տնտեսական և ռազմական հզորության վրա, Միացյալ Նահանգները մեր դարի սկզբին Լատինական Ամերիկայում հաստատեցին գաղութատիրություն՝ առանց գաղութների։ Ուղղակի ոտնձգություն չկատարելով ամերիկյան մայրցամաքի երկրների վրա, ԱՄՆ-ը, սակայն, տնտեսական բռնի սեղմումների, իմպերիալիստների հետ ընդհանուր շահեր ունեցող առանձնաշնորհյալ փոքրամասնության և զինվորական կլիկի օգտագործման միջոցով նրանց փաթաթեց իր տիրապետությունը։

Սակայն պետք է ասել, որ նման տակտիկան անցյալում բնորոշ չէր իմպերիալիստական տերությունների մեծ մասի համար։ Հենց ԱՄՆ-ը, եթե պահանջում էր իրադրությունը, շատ հաճախ դիմում էր ուղղակի ռազմական միջամտության։

Նեոգաղութատիրության քաղաքականությունը մշակելիս և կիրառելիս իմպերիալիստները չեն կարող հաշվի չառնել սոցիալ-դասակարգային այն խոշոր տեղաշարժերը, որոնք տեղի են ունենում ժամանակակից աշխարհում։

Նախ, էլ ավելի է աճել սոցիալիստական պետությունների ազդեցությունը համաշխարհային զարգացման ընթացքի վրա։ Իր ներքին ու միջազգային պրոբլեմները կապիտալիզմն այժմ ստիպված է լուծել համաշխարհային սոցիալիզմի գոյությունը բազմակողմանիորեն հաշվի առնելու միջոցով միայն։

Երկրորդ, նախկին այն գաղութները, որոնցում իմպերիալիզմի տիրապետությունն իրականացվում էր առավել կոպիտ, չքողարկված ձևերով, քաղաքական անկախություն ձեռք բերելուց հետո անցել են սոցիալ-տնտեսական զարգացման զգալի ուղի։ Ազգային ազատագրության համար պայքարն այդ երկրների մի մասում աստիճանաբար վերաճում է շահագործման բոլոր ձևերի դեմ վճռական պայքարի։

Երրորդ, գիտատեխնիկական հեղափոխությունը զարգացած կապիտալիստական պետությունների արտադրական-տնտեսական կառուցվածքում բացել է մշտական վե-

[1] ՄԱԿ-ի բնորոշմամբ 1972 թվականին զարգացող էր համարվում աշխարհի 112 երկիր։ Դրանցից 63 երկրի բաժին էր ընկնում պետությունների այդ խմբի համախառն ազգային արտադրանքի 90 տոկոսը։ Սակայն այդ 63 երկրներում զարգացման տեմպերը և ձեռք բերած արդյունքները միանգամայն տարբեր են։ 1960—1966 թթ. ընթացքում դրանցից 20-ում ազգային համախառն արտադրանքի տարեկան միջին աճը կազմել է 7,1 տոկոս, մյուս 25 երկրներում՝ միայն 2,3 տոկոս։ Ինչ վերաբերում է մնացած 49 երկրներին, ապա դրանց բաժինը «երրորդ աշխարհի» համախառն արտադրանքի մեջ կազմել է միայն 10 տոկոս։

բափոխումների պրոցես, լուրջ շտկումներ է մտցրել կապիտալիստական աշխարհի գլխավոր կենտրոնների և նրա ծայրամասերի միջև եղած տնտեսական կապերի բնույթի մեջ։

Չորրորդ, ժամանակակից կապիտալիզմի պետական-մոնոպոլիստական տենդենցների զարգացումը բուրժուական պետությունը վերածել է արտադրական հարաբերությունների սիստեմի կարևորագույն տարրի։ Կապիտալի կենտրոնացման ու համակենտրոնացման պրոցեսում, պետության, Ֆ. Էնգելսի արտահայտությամբ՝ այդ «իդեալական կոլեկտիվ կապիտալիստի»[1] ձեռքում են կենտրոնացել նախկինում բացառապես մասնավոր կապիտալիստների առանձնաշնորհություն հանդիսացող ֆունկցիաներից շատերը։

Վերջապես, նոր աստիճանի է բարձրացել կապիտալիստական տնտեսության ինտերնացիոնալիզացիան, զգալի չափով աճել և ինտենսիվացվել են կապիտալիստական երկրների միջև եղած կապերը, ուժեղացել է նրանց տնտեսական փոխադարձ կախվածությունը։ Համապատասխանաբար զարգացում են ապրել նաև այն գործողությունների կոորդինացման ձևերը, որոնք գոյություն ունեն մոնոպոլիաների և բուրժուական պետության միջև։

Այդ բոլորի հետևանքով լուրջ փոփոխություններ կատարվեցին զարգացած և զարգացող երկրների փոխհարաբերություններում, միանգամայն նոր իրադրություն ստեղծվեց իմպերիալիստների համար։

Նեոգաղութակալական քաղաքականության իրականացումը միջազգային իմպերիալիզմը մշտապես զուգակցում է դրա համար անհրաժեշտ տեսական հիմքի ստեղծման հետ։ Քանի որ «երրորդ աշխարհում» նեոգաղութատիրության ստրատեգիան ու տակտիկան գնալով ավելի ու ավելի է տարբերակվում, շերտավորվում, ուստի դրանց մշակման ու զարգացման վրա աշխատում են մեծ թվով գիտական ուժեր՝ տնտեսագետներ, փիլիսոփաներ, քաղաքագետներ, սոցիոլոգներ, պրոգնոզիստներ, որոնք ընդգրկված են նյութական պատկառելի բազայի վրա հենվող գիտա-

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 20, էջ 290։

կան խոշոր կենտրոնների մեջ։ Սրանք մեկը մյուսի ետևից առաջ են քաշում ամենաբազմապիսի կոնցեպցիաներ, որոնք կոչված են՝ մի կողմից արդարացնել նախկին գաղութային կարգերը, այսինքն՝ բացահայտ գաղութատիրությունը, մյուս կողմից հիմնավորել իմպերիալիստների նեոգաղութատիրական ակցիաները, ջատագովել «խաղաղ ներթափանցման» նրանց գործողությունները։ Այս ամենի գլխավոր նպատակն է՝ աջակցել նեոգաղութարարներին՝ եթե ոչ կանխելու, գոնե արգելակելու հակաիմպերիալիստական հեղափոխությունները։

Իրենց նեոգաղութակալական կոնցեպցիաները բուրժուական գաղափարախոսները խարսխեցին ազատագրված երկրների առջև կանգնած հրատապ պրոբլեմների ուսումնասիրության, դրանց սոցիալ-տնտեսական վերլուծության վրա։ Այդ պրոբլեմներից նրանք զատեցին չորս հիմնական գործոններ՝ պարենային, դեմոգրաֆիական, տեխնիկատնտեսական և սոցիալական։ Այդ ուսումնասիրությունների ժամանակ անխուսափելիորեն նրանց առջև կանգնում է այն հարցը, թե որոնք են «երրորդ աշխարհի» երկրների տնտեսական հետամնացության պատճառները։ 1973 թվականին լույս ընծայած իր «Համագործակցություն. օգնությո՞ւն թե՞ նեոգաղութակալություն» գրքում ֆրանսիացի մարքսիստ տեսաբան Ի. Ֆուկսը նշում է, որ բուրժուական հետազոտողների մի մասը ստիպված է արձանագրել այդ պատճառներից մի քանիսը, այն է՝ «երրորդ աշխարհի» երկրներում զարգացած արտադրողական ուժերի բացակայությունը, գյուղատնտեսական արտադրության և արհեստագործության գերակշռությունը, որակյալ մասնագետների բացակայությունը, տնտեսության մինչկապիտալիստական ստրուկտուրայի առկայությունը, դեմոգրաֆիական և տնտեսական աճի միջև ճեղքվածքը, անբարենպաստ աշխարհագրական, կլիմայական և նման այլ գործոններ։ Բայց, այնուհետև, նշում է Ֆուկսը, դրանցից ոչ ոք հաշվի չի առնում գլխավորը՝ դասակարգերի պայքարը, որն իր արտացոլումն է գտնում նաև միջազգային հարաբերությունների ոլորտում։

Բուրժուական գաղափարախոսների կարևորագույն խնդիրներից է «երրորդ աշխարհում» կապիտալիստական ար-

տադրաեղանակի պահպանումը, այդ երկրների հասարակական կարծիքը զարգացման կապիտալիստական ուղու օգտին մշակելը։

«Երրորդ աշխարհի» երկրների մեծ մասը գնում է կապիտալիստական ուղիով։ Օգտագործելով գաղութային և կիսագաղութային թալանով դիզած վիթխարի միջոցների մի մասը, իմպերիալիզմը ձգտում է այդ երկրներից մի քանիսը «աղատ աշխարհի» յուրօրինակ ցուցափեղկի վերածել, նպատակ ունենալով կապիտալիզմն արդարացնել ժողովուրդների աչքում։

Այդ տեսակետից նրանց օգնության եկան Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի այն երկրները, որոնք ունեն իմպերիալիստական կողմնորոշում և որոնց պետություններն ընդունված է ավանել նեոգաղութակալական ռեժիմներ։ Օրինակ, Աֆրիկայում այդ պետություններից են՝ Մալավիան, Փղոսկրյա Ափը, Լեսոտոն, Գաբոնը և այլն, որոնք կանգնած են իմպերիալիստների շահերի պաշտպանության դիրքերում և անկախություն ստանալուց հետո շատ անգամ են նպաստել իմպերիալիզմի ակցիաների իրականացմանն աֆրիկյան մայրցամաքում։ Գործակցելով իմպերիալիստական շրջանների հետ, այդ երկրների կոմպրադորական բուրժուազիան և ֆեոդալական վերնախավը բացահայտորեն հանդես են գալիս ազատագրված աֆրիկյան երկրների մեծ մասի շահերի դեմ, ամեն կերպ խոչընդոտում ազգաղութացման պրոցեսը։ Դրա ցայտուն արտահայտություններից մեկը նեոգաղութակալական ռեժիմների դրական վերաբերմունքն է 1971—1972 թվականներին իմպերիալիստների կողմից ձեռնարկած այն փորձերի հանդեպ, որոնց նպատակն էր՝ մայրցամաքում մեկուսացումից դուրս բերել Հարավ-Աֆրիկյան Հանրապետության գաղութային-ռասիստական ռեժիմը։

1971 թվականի ապրիլի 28-ին Փղոսկրյա Ափի պրեզիդենտ Ֆ. Ուֆուե-Բուանին, արևմտաեվրոպական մի շարք երկրների ներկայացուցիչների հետ ունեցած կոնսուլտացիաներից հետո, Աֆրիկայի անկախ երկրների ղեկավարներին առաջարկեց՝ «երկխոսություն», այսինքն՝ կարծիքների փոխանակում սկսել Հարավ-Աֆրիկյան Հանրապետության

ռասիստական ռեժիմի հետ։ Հատկանշական է, որ այդ առաջարկն ընդունեցին այն երկրները, որոնցում դեռ իրենց ազդեցիկ դիրքերն էին պահպանում նախկին մետրոպոլիաները։ Ուֆուե-Բուանիի տեսակետը պաշտպանեցին Մալավիայի պրեզիդենտ Խ. Բանդան, Լեսոտոյի պրեմիեր Լ. Ջոնաթան և աֆրիկյան մի քանի ուրիշ լիդերներ, որոնք կոնկրետ իրադրության մեջ հանդես էին գալիս իբրև աֆրիկյան հասարակության կոմպրադորական-բյուրոկրատական վերնախավերի շահերի արտահայտիչներ, վերնախավեր, որոնք լիովին բավարարված են ապագաղութացման արդեն ձեռք բերած մակարդակով և այլևս շահագրգռված չեն նրա խորացմամբ։

Սակայն աֆրիկյան երկրների ճնշող մեծամասնությունը վճռականապես դատապարտեց Պրետորիայի հետ «երկխոսության» գաղափարը։

Նեոգաղութակալական քաղաքականության ընթացքը մեծապես պայմանավորված է «երրորդ աշխարհի» երկրների քաղաքական և դիվանագիտական ակտիվության աստիճանով։ Որքան թույլ է այդ ակտիվությունը, այնքան ուժեղ է նեոգաղութակալական ներթափանցումը, և ընդհակառակն։ Ահա թե ինչու բուրժուական գաղափարախոսներն ամեն կերպ աշխատում են զարգացող երկրներին հրել քաղաքական և դիվանագիտական պասսիվության ուղին, արգելակել նրանց նախաձեռնությունը, միջազգային ասպարեզ դուրս գալու ձգտումը։ Իրենց այդ տեսակետները նրանք հիմնավորում են այն կեղծ դրույթով, թե քաղաքական ակտիվությունը ոչ թե նպաստում, այլ խանգարում է զարգացող երկրների առաջընթացին։

Այսպես, ֆրանսիացի Ռ. Բոսկը գրում է, թե «ծայրամասային ազգերի» հաջողությունները համեստ են, որովհետև նրանք «չափից ավելի պահանջներ են առաջադրում», որովհետև ձգտում են աշխարհում գրավել իրենց տնտեսական և ռազմական նշականությանը չհամապատասխանող դիրքեր։

Նման տեսակետ է պաշտպանում Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր Դ. Կեյը, որի կարծիքով զարգացող երկրների «ավելորդ ակտիվությունը» խանգարում է ՄԱԿ-ի

կոնստրուկտիվ գործունեությանը։ Քանի որ այդ երկրների հասարակությունը «շատ կողմերով ժամանակակից չէ», ասում է նա, ուստի դրանց կառավարությունների համար ինքնախաբեություն է միջազգային ասպարեզում զարգացած երկրների հետ քաղաքական և դիվանագիտական հարաբերությունների մեջ մտնել՝ ինչպես «հավասարը հավասարի հետ»։

Նեոգաղութակալության մի ուրիշ տեսաբան՝ քաղաքական գիտությունների լոնդոնյան դպրոցի դասախոս Ջ. Մեյոլը Աֆրիկայի երկրների կառավարություններին խորհուրդ է տալիս մի կողմ կանգնել միջազգային գործերից, քանի որ աֆրիկյան մայրցամաքում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունները ինչպես այժմ, այնպես էլ տեսանելի ապագայում որևէ լուրջ ազդեցություն չեն ունենա համաշխարհային քաղաքականության վրա։

Միջազգային գործերում աֆրիկյան ժողովուրդների դերի մասին նման տեսակետներ են հայտնել նաև նեոգաղութակալության ուրիշ շատ ջատագովներ։ Այսպես, դեռևս 1960 թվականին իսրայելական պարագլուխներից Գոլդա Մեյիրը Աֆրիկայի երկրների մասին գրել է. «Դրանք անկախ են դարձել, չնայած որ պատրաստ չեն ինքնուրույն ընկալելու անկախության արժեքը կամ զարգացնելու այն»։ Նույն միտքը անգլիացի Ջ. Կանսենը այսպես է ձևակերպում. «Նոր պետություններն արտաքին քաղաքականության մեջ ամեն քայլափոխի ցույց են տալիս տհասություն և անկարողություն»։ Իսկ արևմտագերմանական քաղաքագետ Կ. Էրդմանը նշում էր, որ «լավ կլիներ, եթե աֆրիկյան ժողովուրդները դեռ 10 կամ 20 տարի մնային խնամակալության տակ»։

Ազատագրված երկրները դեպի զարգացման կապիտալիստական ուղին կողմնորոշող զանազան կոնցեպցիաների թվում կարևոր տեղ է հատկացվում «երրորդ աշխարհի» պետությունների միջազգային հարաբերությունների ադապտացիայի կոնցեպցիային։ Այն ձևակերպել է ամերիկյան սոցիոլոգ-բիհեվիորիստ Ջ. Ռոզնաուն, 1967 թվականին։ Նա գտնում է, որ արտաքին քաղաքականությունը նպատակ ունի տվյալ երկրի հասարակական կյանքը հարմարեցնել համաշխարհային իրադրությանը։ Հետևելով Տ. Պարսոնսի

հայտնի սխեմային, որի համաձայն ամեն մի հասարակության նորմալ կենսագործունեության համար անհրաժեշտ են չորս հիմնական պայմաններ՝ նյութական ապահովվածություն, քաղաքական կարգի ամրություն, սոցիալական ստրուկտուրայի կայունություն, սեփական կուլտուրական արժեքները պահպանելու մեծագույն ձգտում, Ռոզնաուն ավելացնում է, թե ամեն մի հասարակության կենսունակությունը կախված է նաև արտաքին իրադրությունից, որն, իր հերթին, մեծապես պայմանավորված է տվյալ երկրի կառավարության, նրա լիդերների հմտությունից։ Ռոզնաուն ասում է նաև, որ տվյալ երկիրը միջազգային իրադրության ստեղծված պայմաններին ադապտացիայի ենթարկելու համար պահանջվում է երկար ժամանակ։ Հենց գաղութային տիրապետության երկարատև ժամանակաշրջանի ընթացքում Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի երկրները հաղորդակից են եղել մոնոպոլիաների սոցիալ-քաղաքական կարգերին, մարդկային հարաբերություններին, կուլտուրային, կենցաղին, բարքերին, Արևմուտքի հետ ամուր կապվել են ոչ միայն տնտեսապես, այլև քաղաքականապես ու մշակույթով։ Այլ խոսքով, «երրորդ աշխարհը» ըստ էության վաղուց է ադապտացվել «ազատ աշխարհի» հետ։ Հենց այդ պատճառով էլ, ըստ Ռոզնաուի, սոցիալիստական երկրները, որքան էլ ձգտեն մերձենալ «երրորդ աշխարհին», միևնույն է, նրանք չեն կարող նրան ներքաշել իրենց ազդեցության ոլորտի մեջ։

Ինչպես տեսնում ենք, այս կոնցեպցիայի մեջ բացակայում են սոցիալական հակասությունների, դասակարգային շահի, իշխանության բնույթի կատեգորիաները։ Այստեղ բնավ հաշվի չեն առնված նաև միջազգային հարաբերություններ հաստատած երկրների առանձնահատկությունները, ինչպես նաև համաշխարհային սոցիալ-տնտեսական երկգլխավոր սիստեմների միջև եղած հակադրությունները։ Ռոզնաուին և նրան հետևողներին բնավ չի հետաքրքրում գոյություն ունեցող հասարակարգերի տիպոլոգիան, այս կամ այն երկրի տնտեսական վիճակը, նրանում սոցիալ-քաղաքական կառուցվածքների զարգացման մակարդակը և այլն։

Ադապտացիայի կոնցեպցիան ներդաշնակվում է զարգացող երկրների մոդեռնիզացիայի կոնցեպցիային։

Մոդեռնիզացիայի անվան տակ Արևմուտքում հասկացվում է ոչ թե հասարակական ինստիտուտների ամեն տեսակ արդիականացում, այլ միայն դրանց մերձեցում ամերիկա-եվրոպական հասարակական ինստիտուտներին, այսինքն՝ դրանց, այսպես կոչված՝ «վեստերնիզացիա»: Հանդես գալով պատմաբանների միջազգային 13-րդ կոնգրեսում (Մոսկվա), արևմտագերմանական գիտնական Ֆ. Անշպրինգերը նշեց, որ զարգացող երկրների մոդեռնիզացիան արևմտյան երկրներում միայն ու միայն ընկալվում է «վեստերնիզացիայի» իմաստով: «Մոդեռնիզացիան և ձգտումը դեպի այն, նոր երևույթ չէ անկախության դարաշրջան թևակոխած ժամանակակից Աֆրիկայի համար,— մի այլ առիթով գրել է նա:— Արդեն 19-րդ դարում, ինչպես այժմ, շատ աֆրիկացիների համար, առաջին հերթին արևմտյան աֆրիկացիների համար, մոդեռնիզացիան նշանակում է եվրոպեիզացիա, (եվրոպականացում) վեստերնիզացիա, նշանակում էր հարմարվել սպիտակ օտարերկրացիների ապրելակերպին»[1]:

«Մոդեռնիզացիայի» միջոցով «վեստերնիզացիա», «վեստերնիզացիայի» միջոցով առաջադիմություն»,— ահա այն ուղին, որ զարգացող երկրներին ցույց են տալիս նեոգաղութարարները:

Գաղութային կախումից ազատագրված երկրների համար «առաջադիմություն» հասկացողության իմաստի որոշումը չափազանց կարևոր նշանակություն ունի: Եթե ժամանակակից էտապում «առաջադիմությունը» հասկացվի միայն իբրև հետամնացության ու զարգացման միջև պարզ կոնֆլիկտ, ապա այդ դեպքում սոցիալական կառուցվածքի, տնտեսության ու քաղաքական կյանքի ամեն մի մոդեռնացում պետք է անվերապահորեն առաջադիմական երևույթ համարել: Հենց «երրորդ աշխարհին» նման տեսակետ են փորձում փաթաթել իմպերիալիզմի քաղաքագետներն ու գաղափարախոսները: Առաջադիմության նման ըմբռնման դեպքում նրա համար իբրև առաջատար ցուցանիշ կարող է ծառայել

[1] **Ֆ. Անշպրինգեր**, Проблемы преемственности африканских государств в период европейского колониального владычества и после него, М., 1970, էջ 6։

միայն տնտեսական աճը: Ըստ որում, թե տնտեսական վերելքը ինչպիսի միջոցներով է ձեռք բերվում և ինչպիսի սոցիալական երևույթներ են ուղեկցում այդ վերելքին, թե դրանից առաջին հերթին ինչպիսի ուժեր են շահում՝ այս ամենը հայտարարվում է երկրորդական:

Առաջադիմության այս կոնցեպցիան լայն ճանաչում է գտել զարգացող երկրների ազգային բուրժուազիայի ռեֆորմիստական թևի ներկայացուցիչների մոտ, որոնք հակված են ամեն տեսակ տնտեսական վերելքը հայտարարել ոչ միայն առաջադիմություն, այլ նույնիսկ սոցիալիզմ: Նրանց տեսակետով արտադրության ծավալի ամեն մի մեծացում չի հակասում առաջադիմության շահերին, եթե դա նույնիսկ ձեռք է բերվում կապիտալիստական տենդենցների ամրապնդման, աշխատավորների շահագործման ուժեղացման, օտարերկրյա կապիտալի տնտեսական և քաղաքական դիրքերի ամրապնդման գնով: Առաջին պլան են մղվում տնտեսական զարգացումը և արտադրության արդյունավետությունը, անկախ այն բանից, թե դեպի ուր են տանում դրանք: Այսպես, Լ. Սենգորը ընդգծում է, որ զարգացման նեկա էտապում աֆրիկյան երկրներում առաջնայինը տնտեսական աճն է: Բայց գործնականում «ամեն գնով տնտեսական աճը» բնավ ոչ միշտ է նույնանում իսկական առաջադիմության հետ: Վերջինիս չափանիշը մեր ժամանակներում իմպերիալիզմի դեմ պայքարում ժողովրդի արմատական շահերի պաշտպանությունն է, սոցիալական արմատական վերափոխումների իրականացումը:

Պարզ է, որ զարգացող երկրների առաջադիմությունը չի կարող հանգեցվել միայն տնտեսական աճի, այն չի կարող կտրվել ներքին ու արտաքին դասակարգային լարված պայքարից, պայքար, որ մղվում է տնտեսական ու քաղաքական իսկական անկախության համար: Առաջադիմությունը ամենից առաջ սոցիալ-քաղաքական ու դասակարգային հասկացողություն է. առաջադիմության համար պայքարը հակիմպերիալիստական դիրքերից պայքար է կապիտալիստական պլատֆորմի վրա կանգնած ուժերի դեմ:

Իհարկե դա չի նշանակում, թե կարելի է յոլա գնալ առանց տնտեսությունը իմանալու, առանց տիրապետելու տնտեսու-

թյան կառավարման առաջավոր ձևերին ու մեթոդներին։ Իսկ տնտեսության կառավարման ամենաառաջավոր ձևերը մշակված են ՍՍՀՄ-ում և սոցիալիստական համագործակցության մյուս երկրներում՝ սոցիալիստական և կոմունիստական շինարարության ընթացքում։ Այս բանը, իհարկե, չէր կարելի ասել, ասենք 40—50 տարի առաջ, Պատահական չէ, որ 1918 թվականի ապրիլին Համառուսաստանյան Կենտգործկոմի նիստում Վ. Ի. Լենինը նշել է. «Եվ երբ այստեղ ասում են, թե սոցիալիզմը կարելի է գլուխ բերել՝ առանց բուրժուազիայից սովորելու, ապա ես գիտեմ, որ այդ՝ Կենտրոնական Ֆրիկայի բնակչի հոգեբանություն է»[1]։ Այդ ժամանակներից շատ բան է փոխվել, հանդես են եկել նոր պայմաններ, որոնք թելադրում են նախ և առաջ սովորել ոչ թե բուրժուազիայից, այլ սոցիալիզմից։

Այս բանը լավ են հասկանում իմպերիալիստները, ուստի նեոգաղութակալական իրենց ստրատեգիայի կարևորագույն խնդիրն են համարում սոցիալիզմի ձգողական ուժի ու «երրորդ աշխարհի» վրա նրա ներգործության թուլացումը, ամեն կերպ ձգտելով այնտեղ իրենց համար ստեղծել սոցիալական ամուր հենարան։

Ինչո՞վ է թելադրված այդ մտահոգությունը։ Համաշխարհային ասպարեզում տեղի ունեցող վիթխարի փոփոխությունները, որոնց մասին խոսվեց վերևում, մեծապես նպաստում են զարգացող երկրների սոցիալ-տնտեսական ու քաղաքական պրոցեսների վրա իմպերիալիզմի ազդեցության թուլացմանը։ Ահա թե ինչու իմպերիալիզմն իր բոլոր ջանքերը գործադրում է այդ ընթացքը փոխելու համար, գործի դնելով իր հիմնական զենքի՝ բուրժուական պետության ուժը։ Վերջինս այդ նպատակով օգտագործում է իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցները՝ բռնի գործողություններ, դիվանագիտական ճնշում, գիտությունը, կուլտուրան, հասարակական և քաղաքական կազմակերպությունների, հիմնարկների հնարավորություններն ու մեթոդները։

Պատահական չէ, որ նեոգաղութակալության սոցիալական ստրատեգիան իր մեջ ներառում է միջոցառումների մի

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 376—377։

ամբողջ կոմպլեքս, որը կոչված է «երրորդ աշխարհի» երկրներում արագացնելու իմպերիալիզմի սոցիալական հիմքի ստեղծումը, խթանելու կապիտալիստական արտադրահարաբերությունների զարգացումը։

Որո՞նք են «երրորդ աշխարհի» երկրներում այն դասակարգերը, սոցիալական այն շերտերը, որոնք կազմում են իմպերիալիզմի նեոգաղութակալության հենարանը։

Դա ամենից առաջ ֆեոդալիզմն է, խոշոր հողատերերի դասակարգը։ Այս դասակարգը, օրինակ, Ասիայում վերջին հարյուր տարում հանդես է եկել իբրև իմպերիալիստական տերությունների գաղութային տիրապետության նեցուկ։ Ասիայի մի շարք երկրներում ֆեոդալիզմի կենսունակությունը բացատրվում է ոչ միայն և ոչ այնքան այդ երկրների ընդհանուր տնտեսական հետամնացությամբ, որքան այն ամուր կապերով, որ նա հաստատել էր նախկին մետրոպոլիաների իմպերիալիստական շրջանների հետ։ Օտարերկրյա մոնոպոլիաները, իմպերիալիստական շրջաններն ամեն կերպ հովանավորում ու պաշտպանում են իր դարն ապրած ֆեոդալական ռեակցիային, հենվում նրա վրա՝ իրականացնելու համար իրենց նեոգաղութակալական ստրատեգիան։

Զարգացող երկրներում իմպերիալիզմն իբրև սոցիալական հենարան է դիտում նաև ազգային բուժուազիայի կոմպրադորական մասին, օտարերկրյա ընկերությունների հետ կապված մեծածախ առևտրականներին։ Կարևոր դեր է հատկացվում նաև բյուրոկրատական բուրժուազիային՝ պետական ապարատի ներկայացուցիչներին, որոնք զուգահեռաբար զբաղված են նաև մասնավոր գործառնություններով։

Հենվելով «պերիֆերային բուրժուազիայի» վրա, նեոգաղութարարները հույս ունեն, թե նա, կարևոր դիրքեր գրավելով պետության ու տնտեսության մեջ, նպաստավոր պայմաններ կստեղծի «երրորդ աշխարհում» օտարերկրյա կապիտալի գործունեության համար։ Միաժամանակ, իմպերիալիստները ստիպված են հաշվի նստել այն փաստի հետ, որ ուժեր հավաքող ազգային բուրժուազիան բնավ էլ մտադիր չէ լիովին ենթարկվել նեոգաղութարարների թելադրանքներին, որովհետև, ամբողջությամբ վերցրած, նա ձգտում է ամրապնդել ազգային անկախ տնտեսությունը։ Այս-

պես, օրինակ, աֆրիկյան երկրներից մեկի՝ Նիգերիայի ազգային բուրժուազիան նկատելի ճնշում է գործադրում կառավարության վրա և նրանից պահանջում առավել նպաստավոր պայմաններ ստեղծել ազգային կապիտալի զարգացման համար, չնայած այն բանին, որ այդ կառավարությունն առանց այն էլ, ինչպես նախկինում, այնպես էլ այժմ, երկրի ազգային տնտեսության ստեղծումը հիմնականում կապում է տեղական մասնավոր ձեռնարկատիրության զարգացման հետ։ Բայց ազգային բուրժուազիայի դժգոհությունը կարելի է ըմբռնել, եթե նկատի ունենանք, որ այս երկրում շարունակում է արտասահմանյան մոնոպոլիաների ձեռքին մնալ ողջ լեռնահանքային արդյունաբերությունը, վերամշակող արդյունաբերության, առևտրի, բանկային կապիտալի հիմնական մասը։ 1975 թվականին Նիգերիայում կար 14 առևտրական բանկ, որոնք աշխարհի տարբեր մասերում ունեին ավելի քան 300 բաժանմունք։ Թեև այդ բանկերից 8-ը տեղական էին, սակայն բոլոր վարկային գործարքների 75 տոկոսը և բանկային ավանդների ընդհանուր գումարի ավելի քան 80 տոկոսը բաժին էին ընկնում արտասահմանյան 6 բանկերին։

Քանի որ իմպերիալիստական բուրժուազիայի հետ համագործակցությունից հրաժարվելու օգտին հանդես են գալիս «երրորդ աշխարհի» երկրների ազգային բուրժուազիայի նորանոր շերտեր, ուստի նեոգաղութակալությունն այդ երկրներում զուգահեռաբար փնտրում է սոցիալական ուրիշ հենարաններ ևս։ Դրանցից մեկը զարգացող երկրների տնտեսության պետական սեկտորն է։

Արևմուտքում երկար ժամանակ այն տեսակետն էր իշխում, թե միայն կապիտալի արտահանության միջոցով, համարյա ավտոմատիկորեն կարելի է զարգացող երկրներում խթանել մասնավոր ձեռներեցությունը։ Մոնոպոլիստական կապիտալը ոչ միայն չէր աջակցում պետական սեկտորի ստեղծմանն ու զարգացմանը, այլև ամեն կերպ խոչընդոտում էր այդ ուղղությամբ ձեռնարկվող բոլոր քայլերը։ Եվ միայն 60-ական թվականների կեսերից իմպերիալիստական բուրժուազիան սկսեց վերանայել իր վերաբերմունքն այնպիսի հարցերի նկատմամբ, ինչպիսիք են՝ զարգացող երկրների տնտեսության մեջ պետության և պետական սեկտորի դերը, պլանավորումը, ազգային-պետական կապիտալի հետ տնտեսական համագործակցությունը և այլն։

Բուրժուական գիտնականներից ու քաղաքագետներից շատերը հանդես են գալիս զարգացող երկրների տնտեսության մեջ պետության ակտիվ դերի պաշտպանությամբ։ Այսպես, օրինակ, արևմտագերմանական սոցիոլոգ Բ. Պֆլուտերը գտնում է, որ «երրորդ աշխարհի» երկրներում «պետությունը պետք է դիտել իբրև տնտեսական վերելքի դինամիկ ուժ»։

Նեոգաղութարարները գիտակցում են, որ ազատագրված երկրների պետական սեկտորի զարգացման նկատմամբ նախկին բացասական վերաբերմունքը ոչ միայն չի համապատասխանում իրենց ստրատեգիական նոր նպատակներին, այլև արգելակում է դրանց իրականացումը։ Ուստի այժմ նրանք խիստ կարևոր են համարում՝ մեծ ազդեցություն ձեռք բերել երիտասարդ երկրների պետական սեկտորի վրա, այն օգտագործել սեփական շահույթները մեծացնելու և այդ երկրներում կապիտալիստական արտադրահարաբերություններն ամրապնդելու համար։

«Երրորդ աշխարհի» ազգային բուրժուազիայից բացի նեոգաղութարարները վերջին տարիներս մեծ կարևորություն են տալիս բնակչության մյուս շերտերից սոցիալական բազայի ստեղծմանը։ Այդ նպատակով նրանք առաջ են քաշել այսպես կոչված «էլիտայի» տեսությունը։ Էլիտան նրանք համարում են «երրորդ աշխարհին» հատուկ սոցիալական ընդհանրություն։ Արևմտագերմանական սոցիոլոգ Ռիխարդ Ֆ. Բրենդտը գրում է, որ «մեզ անհրաժեշտ է էլիտա», բայց ոչ միայն նրանցից, ովքեր կանգնած են հասարակության բարձր աստիճանների վրա, ոչ միայն իշխանության ներկայացուցիչներից։ Պետք է ղեկավարներ պատրաստել հասարակության զանազան շերտերից, որոնք ունակ լինեն հաշվի առնելու փոփոխվող պայմանները, ունակ լինեն գործելու էլաստիկ ու ճիշտ։ Հասարակական այդ ուժերն ազատագրված երկրներում կլինեն բուրժուական գաղափարախոսության և բուրժուական վարքի նորմաների պոտենցիալ կրողները, որոնք կարող են ընդլայնել ու «երիտասարդացնել»

նեոգաղութատիրության սոցիալական բազան, պայմաններ ստեղծել, որպեսզի օտարերկրյա կապիտալը լայն ճակատով թափանցի «երրորդ աշխարհ»։ Ըստ որում, «էլիտայի» կոնցեպցիայի հեղինակները «երրորդ աշխարհում» տեղի ունեցող հեղափոխական պրոցեսները դիտում են իբրև միայն մասսայի և էլիտայի միջև տեղի ունեցող կոնֆլիկտ։ Իսկ այն հարցը, թե ինչպիսին է այդ կոնֆլիկտի դասակարգային բնույթը, մի կողմ է դրվում։

էլիտայի» կոնցեպցիայի հետ է առնչվում այսպես կոչված «ֆաղաֆական լիդերի» կոնցեպցիան։ Այս կոնցեպցիայի հեղինակները «երրորդ աշխարհում» կատարվող քաղաքական բոլոր պրոցեսները կապում են ուժեղ անհատի, լիդերի հետ, որին վճռական տեղ են տալիս զարգացող երկրների ռեժիմների կայունացման գործում։ Նման լիդերը դիտվում է իբրև այնպիսի դեմք, որը ստեղծում է քաղաքական շարժում։

Նեոգաղութարարների սոցիալական էքսպանսիայի մեջ հատուկ տեղ է հատկացվում «երրորդ աշխարհի» երկրների միջին շերտերին։ Այդ երկրների սոցիալական կառուցվածքի մասին բուրժուական տեսաբանների առաջ քաշած տեսությունների մեջ առանձնահատուկ նշանակություն է տրվում այսպես կոչված «նոր միջին շերտերի» կոնցեպցիային։ Այդ հասկացողության մեջ նրա հեղինակները միանգամայն տարբեր բովանդակություն են դնում։ Մի շարք աշխատություններում նկատի են ունեցվում նոր առաջացած սոցիալական այն խմբերը, որոնք ձգտում են գրավել իշխանությունը, ուրիշ աշխատություններում՝ բյուրոկրատիայի տարատեսակությունը և այլն։ Բայց նրանք բոլորն էլ միաբան են մի հարցում, այն, որ բացարձակացնում են «նոր միջին դասակարգը», որի բնորոշման մեջ ըստ էության բացակայում է դասակարգային բնութագրությունը։

Իրականում միջին շերտերի կազմում մտնում են մանր բուրժուազիան, մտավորականությունը, սպայությունը, պետական հիմնարկների ծառայողները, հասարակական և տնտեսական կազմակերպությունների աշխատողները։ Այդ շերտերի նկատմամբ հետաքրքրությունը մի կողմից հետևանք է ազգային-ազատագրական հեղափոխության մեջ նրանց

ակտիվ դերին (հատկապես այն երկրներում, որտեղ դեռևս չի կազմավորվել պրոլետարիատ ու ազգային բուրժուազիա), մյուս կողմից նրանց երկակի դասակարգային բնույթին, որը հնարավորություն է տալիս ձևավորելու զանազան քաղաքական պլատֆորմներ։

Նեոգաղութարարները շատ լավ են ըմբռնում միջին շերտերի գաղափարական-քաղաքական դիրքերի հակասական լինելը և ձգտում են դրանց նվաճել իրենց կողմը։ Ըստ որում, նրանք ելնում են այն բանից, որ առաջին, տրադիցիոն (օրինակ՝ կրոնական) վարվելակերպը և հասարակական գիտակցության ձևերը, մարտնչող նացիոնալիզմը, չհասունացած հասարակական-քաղաքական պատկերացումները, որոնք ամուր կապված են հետամնաց սոցիալ-քաղաքական պայմանների, մանրապրանքային արտադրության հետ, սովորաբար բարենպաստ ու պարարտ միջավայր են հակակոմունիզմի և հակասովետիզմի համար։ Երկրորդ, միջին շերտերի որոշակի մասը ձգտում է դեպի արևմտյան ապրելակերպը, մի բան, որ ժառանգություն է մնացել գաղութատիրության ժամանակներից։

Նեոգաղութատիրությունն իր համար սոցիալական հենարան է փնտրում նաև զարգացող երկրների աճող բանվոր դասակարգի մեջ։ Նա փորձում է օգտագործել այն հանգամանքը, որ տեխնիկատնտեսական, սոցիալական և կուլտուրական տեսակետից հետամնաց երկրներում իրականացվող վերափոխումների պրոցեսը բանվոր դասակարգի առանձին խմբերին նյութապես խրախուսելու հնարավորություն է ստեղծում, տանում է դեպի համեմատաբար բարձր վարձատրվող բանվորական շերտի ստեղծում։ Այդ «բանվորական արիստոկրատիան» հեշտությամբ է ենթարկվում մանրբուրժուական, ռեֆորմիստական պատրանքների։ Չէ՞ որ բանվորության դասակարգային գիտակցությունն ինքն իրեն չի աճում՝ նրա քանակական աճին զուգընթաց, այլ կոփվում է դասակարգային պայքարում, գիտական կոմունիզմի ուսմունքի ակտիվ յուրացման պայմաններում։

Զարգացող մի շարք երկրներում լայնորեն կիրառվում է արժեթղթերի մի մասն օտարերկրյա կապիտալին պատկանող ձեռնարկություններում աշխատող բանվորներին վա-

ճառելու պրակտիկա։ Դա պատրանքներ է ստեղծում, թե զարգացող երկրների բանվորների և իմպերիալիստական, նեոգաղութակալական կապիտալի շահերը համընկնում են։

«Երրորդ աշխարհի» երկրների բանվորական շարժման մեջ օպորտունիզմ պատվաստելու գործում հատուկ դեր է հատկացված կապիտալիստական զարգացած երկրների աջ սոցիալ-դեմոկրատական կուսակցություններին ու արհմիություններին։ Նրանք որոշակիորեն փորձում են հակակոմունիզմի հունի մեջ դնել այդ երկրների բանվոր դասակարգի երիտասարդ քաղաքական կազմակերպություններն ու հատկապես առաջատար արհմիությունները, դրանք հակադրել մարքս-լենինյան ուժերին՝ ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային ասպարեզում։

Սոցիալ-ռեֆորմիզմը լուրջ վտանգ է ներկայացնում երիտասարդ պետությունների սոցիալական առաջադիմության համար։ Ամենից առաջ նա ապակողմնորոշում է այդ պետությունների աշխատավորներին, նրանց մոտ պատրանքներ է սերմանում «դեմոկրատական սոցիալիզմի» նկատմամբ։ Սոցիալ-ռեֆորմիստական գաղափարախոսները փորձում են այն տպավորությունը ստեղծել, թե «դեմոկրատական սոցիալիզմը» լիովին հաշվի է առնում զարգացող երկրների շահերը, ազգային անկախության ամրապնդման, տնտեսական և սոցիալական առաջադիմության նրանց ձգտումները, թե հնարավոր է լուծել ազգային-ազատագրական շարժման և իմպերիալիզմի միջև եղած հակասությունները։ Թեև սոցիալ-ռեֆորմիզմը զարգացող երկրներին առաջարկում է կապիտալիզմից ու սոցիալիզմից «տարբեր» ուղի, բայց իրականում այդ ուղին միայն կարող է տանել դեպի կապիտալիզմ։

* * *

Իր նեոգաղութակալական ստրատեգիան իմպերիալիզմն իրականացնում է ամենատարբեր ուղղություններով ու մեթոդներով, օգտագործելով տնտեսական, քաղաքական, ռազմական, դիվանագիտական լծակները։

Նեոգաղութատիրության իրականացման գլխավոր միջոցներից մեկը առևտուրն է։

Կապիտալիստական տերությունների և նախկին գաղութների միջև անհավասար հարաբերություններն ամրապնդելու տենդենցը ոչ մի բնագավառում այնպես ակնհայտ չի դրսևորվում, ինչպես առևտրում։

Զարգացած երկրների հետ հետամնաց երկրների առևտրական հարաբերությունները դարերի պատմություն ունեն։ Հսկայական տերիտորիաների գաղութացումը կարևոր դեր է խաղացել կապիտալի նախասկզբնական կուտակման գործում։ Պ. Աննենկովին գրած նամակում Կ. Մարքսը նշել է. «Ստրկատիրությունը արժեքավորել է գաղութները, գաղութները ստեղծել են համաշխարհային առևտուրը, իսկ համաշխարհային առևտուրը խոշոր մեքենայական արդյունաբերության անհրաժեշտ պայմանն է»[1]։

Գաղութային երկարատև տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում գաղութների հետ մետրոպոլիաների առևտուրը ոչ էկվիվալենտ բնույթ ուներ, այն ըստ էության կողոպտելու առավել նուրբ ու «քաղաքակիրթ» միջոց էր։ Այդ առևտրում գործում էր ոչ թե կապիտալիստական փոխանակման ու արժեքի օրենքը, այլ գաղութարարի կամքը։ Նա էր սահմանում ապրանքների գները, որոշում մաքսերի չափը, արտահանության առարկաների և գյուղատնտեսական հումքի արտադրության ծավալները։

Ինչպես և պետք էր սպասել, գաղութային տիրապետության լուծը թոթափելուց հետո, ազատագրված երկրների առաջին մտահոգություններից մեկը կապիտալիստական զարգացած երկրների հետ նորմալ արտաքին առևտրական հարաբերությունների ստեղծումը եղավ, այնպիսի հարաբերությունների, որոնք բացառեին առևտրի միջոցով իրենց հարստությունների կողոպուտը։ Նրանք նախ պահանջեցին փոփոխել իրենց արտահանության ապրանքների նկատմամբ արևմտյան տերությունների պրոտեկցիոնիստական քաղաքականությունը, ապա իրենք սկսեցին մշակել ու իրականացնել պրոտեկցիոնիստական զանազան միջոցներ, նպատակ ունենալով իմպերիալիստական պետությունների առևտրական էքսպանսիա-

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 27, էջ 408։

յից պաշտպանել սեփական երիտասարդ արդյունաբերությունը և արտահանությունը։

Բայց այդ ուղղությամբ զարգացող երկրների բազում ջանքերը սպասած արդյունքները չտվեցին։ Իմպերիալիստական տերությունները նեոգաղութակալության տակտիկական զինանոցում կարևոր տեղ հատկացրին առևտրի բնագավառում պրոտեկցիոնիզմի դեմ մղվող պայքարին։

Պրոտեկցիոնիստական արգելքների դեմ իմպերիալիստական տերությունները հանդես եկան գաղութների անկախություն նվաճելուց անմիջապես հետո։ Սակայն այդ արգելքների վերացման համար պայքարին նրանք հատուկ կարևորություն տվեցին 50-ական թվականների վերջերից սկսած։ Նրանց ճնշման տակ ետպատերազմյան տարիներին զարգացող երկրները լիովին կամ մասնակիորեն վերացրին պրոտեկցիոնիստական արգելքները վառելիքի, հումքի, տրոպիկական հողագործության մթերքների և այլ ապրանքների արտահանության նկատմամբ։ Արդեն 60-ական թվականների վերջերին համաշխարհային կապիտալիստական արտահանման մոտ կեսը կատարվում էր առանց մաքսերի։

Զարգացող երկրներից ներմուծվող ապրանքների նկատմամբ մաքսային քաղաքականության հետևողական իրականացումն իր արտահայտությունը գտավ այսպես կոչված «Քեննեդու ռաունդի» մեջ (1963—1967 թթ.)։ Այն նպատակ ուներ՝ աստիճանաբար վերացնել իմպերիալիստական երկրների միջև առևտրի սահմանափակման նպատակին ուղղված արգելքները և առևտրի լիբերալացման տենդենցը տարածել նաև զարգացող երկրների հետ ունեցած առևտրական հարաբերությունների վրա։

1973 թվականի սեպտեմբերին սկսվեց միջազգային առևտրական բանակցությունների նոր տուր, որ հայտնի դարձավ «Նիքսոնի ռաունդ» անունով։ Այդ «ռաունդով» նախատեսվեց որոշ բարենպաստ պայմաններ ստեղծել զարգացող երկրներից կատարվող ապրանքների ներմուծման համար։

Որ դեռևս չի վերացել կապիտալիստական տերությունների և նախկին գաղութների միջև անհավասար հարաբերությունների ամրապնդման տենդենցը, պարզորոշ երևում է արևմտաեվրոպական «ընդհանուր շուկայի» և զարգացող երկրների առևտրատնտեսական և վալյուտաֆինանսական գործառնություններից։ «Ընդհանուր շուկայի» շրջանակի մեջ ընդգրկված աֆրիկյան երկրների մի մեծ խումբ ստիպված է հաշտվել այն բանի հետ, որ շարունակում են ուժի մեջ մնալ նախկին մետրոպոլիաների հետ ժամանակին կնքած բազմաթիվ համաձայնագրեր, նաև այն բանի հետ, որ առևտրական նոր համաձայնագրերից շատերը որոշակիորեն խոչում են նրանց շահերին, նպաստում իրենց մոտ ազգային կյանքի գավառական բնույթի պահպանմանը։

Վերջին տարիներս իմպերիալիստական պետությունների արտաքին առևտրական էքսպանսիան հատկապես մեծ ծավալներ ընդունեց գյուղատնտեսական հումքի ու մթերքների շուկայում։ Այսպես, ամերիկյան գյուղատնտեսական արտադրանքի արագ աճի կապակցությամբ Միացյալ Նահանգները ագրարային հումքի ու պարենամթերքի շուկաներում դիմեցին լայն մասշտաբների դեմպինգի քաղաքականության, մշտապես իշեցնելով իրենց ապրանքների գները։ Այդ ճանապարհով, օրինակ, ԱՄՆ-ը վերջին տասնամյակում Բրազիլիայի, Պարագվայի, Կոլումբիայի և Լատինական Ամերիկայի մյուս երկրների շուկաներից դուրս մղեց դրանց տրադիցիոն մատակարարին՝ Արգենտինային։

Նախկին մետրոպոլիաների ու գաղութների տնտեսական-առևտրական միակողմանի կապերն այսօր էլ պատճառ են դառնում ապրանքների ոչ էկվիվալենտ փոխանակման։ Եթե նման փոխանակության հետևանքով 1967 թվականին զարգացող երկրները տանուլ են տվել 8 միլիարդ դոլլար, ապա 1975 թվականին՝ 24 միլիարդ։ Կորցնելով այդքան մեծ միջոցներ, Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի երկրները տնտեսապես արյունաքամ են լինում և ստիպված *՝եծ չափերի հասնող պարտքեր են վերցնում իմպերիալիստական տերություններից։ 1966 թվականին արտաքին այդ պարտքերը կազմեցին 40 միլիարդ դոլլար, իսկ 1975 թվականին՝ ավելի քան 60 միլիարդ։ Վերցրած պարտքերի դիմաց զարգացող երկրները՝ միայն որպես տոկոսներ իմպերիալիս-

տական տերություններին տարեկան վերադարձնում են 12 միլիարդ դոլլար։

Այսքանից հետո պատահական չէ, որ Աֆրիկայի, Ասիայի, Լատինական Ամերիկայի հեղափոխական-դեմոկրատական ուժերն իրենց երկրների արագ զարգացման կարևորագույն պայմաններից մեկը համարում են արտաքին հարաբերությունների, մասնավորապես արտաքին առևտրի ապագաղութացումը, այլ խոսքով, նախկին մետրոպոլիաների և կապիտալիստական սիստեմի մյուս երկրների հետ տրադիցիոն միակողմանի առևտրական կապերի հաղթահարումը։

Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի նեոգաղութային ստրատեգիայի իրականացման միջոցառումների շարքում կարևոր տեղ է հատկացվում զարգացող երկրներին տրվող այսպես կոչված օգնությանը։

Բուրժուական գաղափարախոսները գտնում են, որ անհրաժեշտ է շարունակել «երրորդ աշխարհի» երկրներին ցույց տրվող «օգնությունը», որովհետև դրանք չունեն իրենց զարգացումն արագացնելու համար ֆինանսական անհրաժեշտ միջոցներ։ Այդ «օգնության» զգալի մասը, ինչպես հայտնի է, ցույց է տրվում միջազգային կազմակերպությունների գծով։ Այդ կազմակերպությունների միջոցով զարգացող երկրներին ցույց տրվող պետական «օգնությունը» 1957—1968 թթ. տատանվել է տարեկան 400—600 միլիոն դոլլարի սահմաններում։ 1969 թվականին այն կազմել է 1.140 միլիոն, 1970 թվականին՝ 1.537 միլիոն, իսկ 1975 թվականին բարձրացել է մինչև 3.235 միլիոն դոլլարի։

Խոսելով «երրորդ աշխարհի» երկրներում ֆինանսական միջոցների պակասի մասին և այդ հիման վրա առաջարկելով շարունակել նրանց ցույց տրվող օգնությունը, բուրժուական տեսաբանները, սակայն, հազվադեպ են անդրադառնում տրվյալ երևույթի պատճառներին, չեն քննարկում այն հարցը, թե ինչու զարգացող երկրները, ունենալով բնական անսպառ հնարավորություններ, մարդկային վիթխարի ռեսուրսներ, անհրաժեշտ միջոցներ չունեն տնտեսական զարգացման համար։ Իսկ չէ՞ որ Աֆրիկայում է կենտրոնացած կապիտալիստական աշխարհի ալմազի պաշարների 90 տոկոսը, մանգանի և քրոմի՝ 50 տոկոսը, ոսկու 70 տոկոսը։ Ինդոնեզիան,

Մալայզիան, Շրի—Լանկան, Բիրման, Կամպուչիան, Լաոսը, Տաիլանդը տալիս են բնական կաուչուկի համաշխարհային արտադրության ավելի քան 85 տոկոսը։ 1969 թվականին ոչ սոցիալիստական աշխարհում արդյունահանված 1.696 միլիոն տոննա հում նավթից ավելի քան 1.169 միլիոն տոննան (մոտ 70 տոկոսը) արդյունահանվել էր զարգացող երկրներում։

«Օգնության» ընդհանուր կոմպլեքսի մեջ իմպերիալիստական տերություններն առանձնահատուկ նշանակություն են տալիս պարենային «օգնությանը»։

Պարենային «օգնության» ծրագրերով իմպերիալիստները հատկապես հանդես են գալիս զարգացող երկրների համար ստեղծված ծանր իրավիճակների ժամանակ, երբ բնական աղետների հետևանքով և այլ պատճառներով հացահատիկի ցածր բերք է ստացվում և միլիոնավոր մարդիկ կանգնում են սովի սպառնալիքի առջև։ Այսպիսի պայմաններում զարգացող երկրների կառավարությունները ստիպված են լինում օգնություն խնդրել ինչպես սոցիալիստական, այնպես էլ կապիտալիստական երկրներից։ Վերջիններս այդ խնդրանքին արձագանքում են միայն այն դեպքում, եթե պարենային օգնություն խնդրող կողմը քաղաքական զիջումներ է անում, այլ խոսքով, եթե իմպերիալիստները հնարավորություն են ստանում միջամտելու զարգացող երկրների ներքին գործերին։

Զարգացող երկրների վրա իմպերիալիստների քաղաքական ճնշման փորձված միջոցներից մեկը վարկային «օգնությունն» է։

Ինչպես նախկինում, այնպես էլ այժմ զարգացող երկրներին իմպերիալիստական տերությունները վարկեր են տրամադրում միայն բարձր տոկոսներով և, որ իրենց համար հատկապես կարևոր է՝ որոշակի քաղաքական զիջումներ ստանալու պայմանով։

Ամերիկյան տնտեսագետ Ն. Հենդերսոնը 1973 թվականին գրում էր, որ ԱՄՆ-ը պետք է անհապաղ դադարեցնի վարկերի հատկացումը արաբական այն երկրներին, որոնք իրենց գործողություններով շարունակում են խորացնել վառելիքային ճգնաժամը և դրանով իսկ մեծ վնաս են հասցնում արևմտյան տերությունների շահերին։ Կառավարությանն

ուղղված նման կոչով 1974 թվականին հանդես եկավ Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր Ա. Ռոզենտալը։

Նման պահանջները, սակայն, հազվադեպ, բացառիկ պայմանների թելադրանքով են միայն հավանություն գտնում իմպերիալիստական տերությունների կառավարությունների կողմից։ Եվ դա հասկանալի է, քանի որ «երրորդ աշխարհում» կիրառվող վարկային քաղաքականությունից կապիտալիստական զարգացած երկրները շարունակում են ստանալ վիթխարի օգուտներ։ Այսպես, օրինակ, զարգացող երկրներին տրամադրած ուղղակի վարկերի դիմաց 1960—1967 թվականներին ամերիկյան մոնոպոլիաները ստացել են մոտ 15 միլիարդ ռուբլու շահույթ։

Վարկերի մի մասը զարգացող երկրներին է տրվում իբրև «տեխնիկական օգնություն», որին մեծ նշանակություն են տալիս իմպերիալիստական առաջատար պետությունները։ Օրինակ, ԳՖՀ-ում ստեղծված է հատուկ ֆոնդերի բավականին լայն ցանց, որում հատկապես մեծ միջոցներ ունեն տեխնիկական օգնության ֆոնդերը։ ԳՖՀ-ի տեխնիկական օգնության միջոցների մոտ 80 տոկոսը հատկացվում է Ասիայի և Աֆրիկայի երկրներին և միայն 15 տոկոսը՝ Լատինական Ամերիկայի պետություններին։ Նման անհավասարաչափ բաշխումը բացատրվում է նրանով, որ տեխնիկական օգնության շրջանակներում գերակշռում են մասնավոր կապիտալիստական ձեռնարկությունների ստեղծման նախագծերը։ Իսկ դա արդյունք է այն բանի, որ Ասիայի, հատկապես Աֆրիկայի երկրներից շատերը դեռ վերջնականապես չեն որոշել իրենց սոցիալական զարգացման ուղին։ Ինչ վերաբերում է Լատինական Ամերիկայի պետություններին, որտեղ կապիտալիզմը, ամբողջությամբ վերցրած, արդեն հասցրել է խոր արմատներ գցել, ապա դրանցում ուշադրությունը կենտրոնացվում է դպրոցական կրթությանը, հասարակական կազմակերպություններին, տնտեսության մեջ և պետական ապարատում ղեկավար շերտերի աջակցությանը։

Կարևոր նշանակություն է տրվում այսպես կոչված **կուլտուրական «օգնությանը»**։ Դրա նպատակը զարգացող երկրների հոգևոր կյանքի վրա նեոգաղութարարների ազդեցության տարածումն է, այսինքն՝ հոգևոր նեոգաղութակալությունը։

«Երրորդ աշխարհին» ցույց տրվող կուլտուրական «օգնության» ծրագիրը իմպերիալիստներն իրականացնում են տարբեր ուղղություններով։

Հայտնի է, որ լուսավորության ու կուլտուրայի զարգացումը ամենից առաջ պայմանավորված է տվյալ երկրի ազգաբնակչության գրագիտության աստիճանով։ Այդ տեսակետից զարգացող երկրների դրությունը, կարելի է ասել, անմխիթարական է։ Նրանց առաջադիմությանը մեծապես հարվածում են ժողովրդական լուսավորության ցածր մակարդակը, մասսայական անգրագիտությունը։ Այժմ նախկին գաղութներում և կախյալ երկրներում բնակվում է աշխարհի անգրագետների 97 տոկոսը, կամ 756 միլիոն մարդ։ Միայն Հնդկաստանում 1973 թվականին հաշվվում էր ավելի քան 360 միլիոն անգրագետ։ Աֆրիկայում կան երկրներ, որտեղ գրագետ է բնակչության միայն 2—5 տոկոսը։ Սաուդյան Արաբիայում, օրինակ, տասը երեխայից միայն մեկն է դպրոց հաճախում, Իրանում՝ տասից հինգը։ 300 հազար դասարանի պակասի պատճառով Լատինական Ամերիկայում 14 միլիոն երեխաներ զրկված են նույնիսկ տարրական կրթություն ստանալու հնարավորությունից։ Հայիթիում անգրագետ է բնակչության 90 տոկոսը, Բրազիլիայում 1400 երեխաներից առաջին դասարան են ընդունվում 1000 հոգի, երկրորդ դասարան փոխադրվում է՝ 396-ը, նրանցից միայն 169 հոգի ավարտում են չորրորդ դասարանը, 20-ը ստանում են միջնակարգ կրթություն և միայն մեկ հոգի ավարտում է բարձրագույն ուսումնական հաստատություն։ Կոլումբիայում ամեն 1000 դպրոցականից ուսումը լրացնում է միայն 8 հոգի։ Չնայած բոլոր ջանքերին, «երրորդ աշխարհում» անգրագետների բացարձակ թիվը ոչ թե կրճատվում, այլ գնալով շարունակում է աճել։ 1950—1970 թվականներին այն 700 միլիոնից ավելացել ու հասել է 750 միլիոնի։

Անգրագիտության դեմ պայքար մղելու և լուսավորություն ու կուլտուրա տարածելու ցուցանակի տակ իմպերիալիստական տերությունները զարգացող երկրներ աշխատանքի են ուղարկում իրենց քաղաքացիներին, որոնց վրա դրվում

են նաև ուրիշ հավելյալ պարտականություններ, առաջին հերթին՝ տվյալ տերության քաղաքական ազդեցությունը տարածելու կամ ամրապնդելու պարտականությունը։

Այդ նպատակին են ծառայում, օրինակ, ամերիկյան «խաղաղության կորպուսը», ԳՖՀ-ի, Ֆրանսիայի, Անգլիայի, Ճապոնիայի և կապիտալիստական այլ երկրների նմանօրինակ համապատասխան կազմակերպություններ։ Պաշտոնական տվյալներով 1974 թվականին զարգացող երկրներում աշխատում էր Արևմուտքի կապիտալիստական երկրների մոտ 600 հազար մասնագետ։

Ինչպես հայտնի է, «խաղաղության կորպուսը» ստեղծվեց 1961 թվականին, պրեզիդենտ Ջոն Քենեդիի վարչության կողմից։ Կյանքի կոչվելուց անմիջապես հետո այն սկսեց յուրօրինակ ագենտուրայի դեր խաղալ ամերիկյան տնտեսական, քաղաքական և ռազմական էքսպանսիայի մեջ։ Հենց սկզբից ամերիկյան պրոպագանդան բանն այնպես ներկայացրեց, թե այդ կազմակերպության միջոցով «հարուստ Ամերիկան» «կամավոր» ու «անշահախնդիր» օգնություն է ցույց տալիս զարգացող երկրներին։ Բայց կորպուսի շուրջը ստեղծված աղմուկն անկարող եղավ քողարկելու նրա իսկական նպատակը։ Կորպուսի անդամների (կորպուսմեննների) արարքները զայրույթով ընդունվեցին շատ երկրներում, մանավանդ այն բանից հետո, երբ պարզվեց, որ «կամավորների» անձի տակ թաքնված են Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ) գործակալներից շատերը։

Արդեն 60-ական թվականների կեսերին զարգացող շատ երկրների կառավարություններ ամերիկյան համապատասխան օրգաններից պահանջեցին ետ կանչել կորպուսի անդամներին։ «Խաղաղության կորպուսը» վարկաբեկվեց այն աստիճան, որ, նույնիսկ ամերիկյան մամուլի խոստովանությամբ, շատ երկրներում այն սկսեցին նույնացնել ամերիկյան իմպերիալիզմի հետ։ Մյուս կողմից կորպուսմեններից շատերը իրենց առաքելությունից ապրեցին խոր հիասթափություն։ Դա հատկապես ցայտուն դրսևորվեց ամերիկյան իմպերիալիզմի ռազմատենչ քաղաքականության, մասնավորապես Վիետնամում ԱՄՆ-ի մղած ագրեսիվ պատերազմի առնչությամբ։ Կորպուսի շարքերը սկսեցին նոսրանալ։

Եթե 1966 թվականին նրա շարքերը մտնելու համար դիմել էր 42 հազար երիտասարդ ամերիկացի, ապա 1970 թվականին՝ միայն 19 հազար։

1971 թվականի սկզբին հանրապետական վարչակազմն առաջ քաշեց տարբեր «կամավոր» ընկերությունները մի միասնական կառավարական գերատեսչության մեջ ձուլելու պլան։ Այդ նպատակով պրեզիդենտ Նիքսոնը հատուկ ուղերձ հղեց ԱՄՆ-ի կոնգրեսին, որը պաշտպանեց պրեզիդենտի առաջարկը։ 1971 թվականի կեսերին ստեղծվեց նոր կազմակերպություն, որի մեջ մտան «խաղաղության կորպուսը», որը զարգացող երկրներին ցուցաբերող «օգնության» անվան տակ ավելի քան 10 տարի հավատարմորեն ծառայել էր ամերիկյան էքսպանսիայի նպատակներին, ինչպես նաև մի շարք ուրիշ «կամավոր» կազմակերպություններ՝ («ՎԻՍԱ»[1]-ն, «ՆՍՎՊ»[2]-ն, «Դասատուների կորպուսը» և այլն։

Կառավարական այս նոր կազմակերպությունը ստացավ իր պաշտոնական անվանումը՝ «Միավորյալ գործողությունների կորպուս» («United Action Corps»), որի նպատակը ձևակերպվեց նախկին «կամավորական» կազմակերպությունների ծրագրերի հիման վրա։ Հենց առաջին տարում կազմակերպությունն իր շարքերում ներգրավեց շուրջ 21 հազար երիտասարդ ամերիկացի։ Կազմակերպության բյուջեն հաստատվեց տարեկան 176 միլիոն դոլլարի չափով, իսկ նրա գլուխը կանգնեց «Խաղաղության կորպուսի» նախկին դիրեկտոր Ջոզեֆ Բլետչֆորդը։

Կուլտուրական «օգնության» շրջանակներում կարևոր նշանակություն է տրվում զարգացող երկրներում ազգային կադրերի, մասնավորապես ազգային տեխնիկական կադրերի պատրաստմանը։ Դա պատահական չէ, որովհետև պատրաստված կադրերի, ընդհանրապես մտավորականության քաղաքական օրիենտացիայից, նրանց գաղափարական համոզվածությունից շատ բան է կախված, թե առաջընթացի

---

[1] «ՎԻՍԱ» (VISTA—Volunteers in Service to America)— «Կամավորներ Ամերիկայի ծառայության մեջ»։

[2] «ՆՍՎՊ» (NSVP—National Student Volunteer Program)— «Ազգային ուսանողական կամավորական ծրագիր»։

ինչպիսի ուղի կընտրեն զարգացող երկրները։ Բնական է, որ իմպերիալիստներն ամեն ինչ անում են, որպեսզի այդ երկրների սովորող երիտասարդությանը, ուսանողությանը, ինտելիգենցիային կողմնորոշեն դեպի «ազատ աշխարհ»։

Այդ տեսակետից հատկապես մեծ փորձ են կուտակել ամերիկյան և արևմտագերմանական նեոգաղութարարները։

Արևմտյան Գերմանիայի կառավարությունը երիտասարդ պետությունների հետ կուլտուրական համագործակցություն սկսեց 1963 թվականին, իսկ մի քանի տարի հետո՝ 1970 թվականին, այդ ուղղությամբ նրա միջոցառումները արդեն ընդգրկում էին ավելի քան 40 զարգացող երկիր։ ԳՖՀ-ն զարգացող երկրներ է գործուղում խորհրդականներ ու դասախոսներ, իր վրա է վերցնում կարճատև հանրակրթական դասընթացների կազմակերպման ծախսերը, տրամադրում է դպրոցական սարքավորումներ և ուսումնական նյութեր։

Ի լրացումն դրա, կարճ ժամանակներով ԳՖՀ են գործուղվում զարգացող երկրների ղեկավար աշխատողներ և մասնագետներ, ինչպես նաև տեղերում կազմակերպվում են հասարակական-քաղաքական և պրոֆեսիոնալ պատրաստության կարճաժամկետ դասընթացներ։ Պարբերաբար անցկացվում են սեմինարներ, կոլոկվիումներ, զանազան նստաշրջաններ։ Կարևոր նշանակություն է տրվում զարգացող երկրների հասարակական-քաղաքական բնույթի ուսումնական հաստատությունները ԳՖՀ-ի ազդեցության ոլորտում պահելու խնդրին։ Պատահական չէ, որ Ինդոնեզիայի, Զամբիայի և զարգացող մի շարք ուրիշ երկրների ինչպես բարձրագույն, այնպես էլ հանրակրթական ուսումնական հաստատություններում արևմտագերմանացիներն իրենց համար ամուր դիրքեր են ապահովել։

Իմպերիալիստական տերությունների կառավարությունները միջոցներ են ձեռնարկում «երրորդ աշխարհի» համար ազգային կադրեր պատրաստել ոչ միայն տեղերում, այլև իրենց մոտ։ Ըստ որում խնդիր է դրվում պատրաստել ու դաստիարակել այնպիսի մասնագետներ, որոնք դառնան կապիտալիստական կարգերի ջատագովներ, հետևողականորեն պաշտպանեն նեոգաղութարարների շահերը։

1970 թվականին ԱՄՆ-ի բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսում էին ստանում արտասահմանյան 135 հազար քաղաքացիներ։ Դրանք ներկայացնում էին 172 երկիր ու տերիտորիաներ, այդ թվում՝ Աֆրիկայի 48 երկիր, Ասիայի և Հեռավոր արևելքի 23 երկիր, Մերձավոր և Միջին արևելքի 17 երկիր, Լատինական Ամերիկայի 20 երկիր։ ԱՄՆ-ում սովորող արտասահմանյան ուսանողների ընդհանուր թվի 71,7 տոկոսը նշված երկրներից էր և միայն 13,7 տոկոսը Եվրոպայից։

Այս կամ այն երկրից ընդունելով ուսանողներ, ամերիկյան կառավարական հիմնարկները, ուսումնական հաստատությունների վարչություններն ու համապատասխան հասարակական կազմակերպություններ հաշվի են առնում այդ երկրների հետ ԱՄՆ-ի հարաբերությունների, և, ամենից առաջ, քաղաքական հարաբերությունների բնույթը, ձգտում են, որպեսզի ԱՄՆ-ում կրթություն ստացողներից պատրաստեն ամերիկյան ազդեցության հետագա տարածողներ։ Ահա թե ինչու ամերիկյան պաշտոնական և կիսապաշտոնական շրջանների քաղաքական միջոցառումների մեջ մեծ տեղ է տրվում երկրի ուսումնական հաստատություններում սովորող օտարերկրյա ուսանողների հետ տարվող աշխատանքին։ Ընդ որում նրանց ուսումնական ծրագրերում հատուկ տեղ է հատկացվում սոցիալ-քաղաքական առարկաների դասավանդմանը։ Ամերիկյան գաղափարախոսներն ընդգծում են, որ իրենց կարևոր խնդիրներից մեկը «արևմտյան քաղաքակրթության սկզբունքներով» այդ ուսանողների աշխարհայացքի ձևավորումն է։

Անգամ ԱՄՆ-ի տեխնիկական ուսումնական հաստատություններում սոցիալ-քաղաքական առարկաների դասավանդմանը հատկացվում է ուսումնական ծրագրի ղգալի մասը։ Այդ առարկաների դասավանդումը երբեմն կատարվում է քողարկված ձևով, դրանք կրում են այնպիսի անվանումներ, ինչպիսիք են, ասենք «ամերիկյան կուլտուրա» կամ «օրիենտացիա»։ Բայց հակակոմունիստական սոցիալ-քաղաքական դասընթացները սովորաբար ներկայացվում են իրենց անուններով և դրանց ուսուցումը պարտադիր է։ Այսպես, Ալաբամայի համալսարանի օտարերկրյա ուսանողնե-

րի համար կազմած կանոնադրության մեջ նշվում է, որ նրանց համար պարտադիր է «կոմունիզմի կոնցեպցիաների վտանգավորությունն ու կեղծ լինելը» ուսումասիրելը, որ այդ ուսանողները պարտավոր են պարզ ու որոշակի պատկերացում կազմել կոմունիստական շարժման, նրա պատմության, դոկտրինների, նպատակների ու մեթոդների մասին։ Լուիզիանայի նահանգի բուհերում ու կոլեջներում սովորող օտարերկրյա ուսանողները պարտավոր են ուսումնասիրել «Ամերիկանիզմն ընդդեմ կոմունիզմի» կուրսը։

Նեոգաղութարարները, մի կողմից, որոշակի նպատակներ հետապնդելով, նպաստում են զարգացող երկրների համար ազգային կադրերի պատրաստմանը, մյուս կողմից՝ ամեն կերպ խրախուսում են այդ երկրներից մասնագետների մասսայական հեռանալը և կապիտալիստական զարգացած երկրներում հաստատվելը։ Լայն ծավալներ ստացած այսպես կոչված «ուղեղների հոսք»-ը նեոգաղութատիրական քաղաքականության նորագույն դրսևորումներից է։

1970 թվականին ԱՄՆ-ում աշխատում էր բարձրագույն կրթություն ստացած գվատեմալցիների 21,7 տոկոսը, նիկարագուացիների՝ 25 տոկոսը, սալվադորցիների՝ 33,8 տոկոսը։ Եվ դա այն դեպքում, երբ Լատինական Ամերիկայում մասնագետների չափազանց սուր կարիք է զգացվում։ «Ուղեղների հոսքը» հատկապես մեծ հարված է հասցնում Ասիայի և Աֆրիկայի թույլ զարգացած երկրների տնտեսությանը։ Եթե այդ երկրներից 1956 թվականին ԱՄՆ է տեղափոխվել 1769 մասնագետ, ապա 1967 թվականին՝ 7913։

«Ուղեղների հոսքը» ընդլայնում է տեխնիկական ու տնտեսական զարգացման մակարդակների միջև եղած այն անդունդը, որ աշխարհի ամենահարուստ կապիտալիստական երկրները, մասնավորապես ԱՄՆ-ը, բաժանում է ամենաաղքատ երկրներից։

Պարենային, վարկային, կուլտուրական և այլ «օգնության» քաղաքականությունը, իհարկե, նպաստում է «երրորդ աշխարհի» առանձին երկրներում նեոգաղութարարների դիրքերի ամրապնդմանը։ Սակայն վերջին շրջանում բուրժուական տնտեսագիտական գրականության մեջ ավելի ու ավելի հաճախ է խոսվում «օգնության» անարդյունավետության մասին։ Նրանք ընդունում են, որ լուծելով կարճաժամկետ խնդիրներ, այդ «օգնությունը», սակայն, անընդունակ է լուծելու երկարաժամկետ պրոբլեմներ, այլ խոսքով, անընդունակ է երաշխիքներ տալու, թե այդ երկրները երկար ժամանակով ամուր կապված կմնան Արևմուտքին։

Սեփական ազգային կադրերի պատրաստումը զարգացող երկրների կենսական խնդիրներից մեկն է։ Բայց այն ինքնին չի լուծում նրանց հետամնացության հաղթահարման, տնտեսության համակողմանի զարգացման խնդիրը։

Այդ խնդիրը կարող է լուծվել միայն տնտեսության ինդուստրացման և գիտատեխնիկական առաջադիմության ուղիներում։

Թույլ զարգացած երկրներում ինդուստրացման ու գիտատեխնիկական առաջադիմության հարցերը բուրժուական տնտեսագիտական և սոցիոլոգիական գրականության մեջ բուռն վեճերի առարկա դարձան գաղութային և կախյալ երկրների ազգային զարթոնքի առաջին քայլերից, ազգային-ազատագրական շարժման հենց սկզբից։ Այդ հարցերը հատկապես իրենց պատասխանները պահանջեցին Հոկտեմբերյան մեծ հեղափոխության ներգործությամբ ժողովուրդների հակաիմպերիալիստական պայքարի վերելքի, ապա՝ իմպերիալիզմի գաղութային սիստեմի կործանման ժամանակաշրջանում, երբ սուվերեն զարգացման ուղի թևակոխեցին Ասիայի և Աֆրիկայի երկրները։

Այս հարցում բուրժուական տնտեսագիտական և սոցիոլոգիական միտքը բաժանվում է երկու թևի։ Դրանց ներկայացուցիչները, հավասարապես շահագրգռված լինելով «երրորդ աշխարհում» իմպերիալիզմի տնտեսական ու քաղաքական դիրքերի ամրապնդման մեջ, հանդես են գալիս զարգացող երկրների ինդուստրացման մասին թերուդեմ կարծիքներով։

Թույլ զարգացած երկրների ինդուստրացման դեմ հանդես է գալիս բուրժուական գաղափարախոսների բացարձակ մեծամասնությունը։

Նրանք ամենից առաջ հենվում են եվրոպացենտրիզմի գաղութատիրական կոնցեպցիայի վրա, որի համաձայն Արևելքի ժողովուրդները, իբր, ունակ չեն ռացիոնալ, տրա-

մարանական, մաթեմատիկական մտածողության։ Այս գործում նրանց օգնության են գալիս «երրորդ աշխարհի» ինչպես կոնսերվատիվ, այնպես էլ ավանտյուրիստական շրջանները և նրանց շահերի գաղափարական պաշտպանները։ Վերջիններս օգտագործում ու «զարգացնում» են ազգային-ազատագրական շարժման սկզբնական էտապներում իրենց երկրներում հանդես եկած տեսաբանական զանազան կոնցեպցիաներ։

Քաղաքական անկախության համար պայքարի տարիներին ազգային-ազատագրական շարժման որոշ գաղափարախոսների համար բնորոշ էր Արևելքի ժողովուրդների հոգևոր, մանավանդ կրոնական, տրադիցիաների հակադրումը գաղութատիրական գաղափարախոսությանը, որը, որպես կանոն, նույնացվում էր կոպիտ ուտիլիտարիզմի հետ։ Հետագայում այդ հայացքը ձևավորվեց որպես անտիթեզիս. ինդուստրիալ Արևմուտք-հոգևոր Արևելք։ Առաջինը բնութագրվում էր տեխնիկական բարձր մակարդակով և հոգևոր անբավարար զարգացմամբ, երկրորդը՝ այդ երկու կոմպոնենտների հակադիր հարաբերակցությամբ։ Թույլ զարգացած երկրների ազգային շատ գաղափարախոսների մոտ չքողարկված արհամարհանք կար ինդուստրիալիզացիայի և տեխնիկայի հանդեպ։

Ուռանդուն հանդես գալով ինդուստրացման դեմ, ազգային շարժման պահպանողական գործիչները կոչ էին անում՝ բոլոր միջոցները ձեռնարկել կանխելու համար սոցիալական ու բարոյական դեգրադացիայի վտանգը, որը, նրանց կարծիքով, ծնունդ է առնում խոշոր արդյունաբերական արտադրությունից։

Ավելի ուշ նման գաղափարներն արտացոլում գտան Մ. Գանդիի ուսմունքի մեջ։ Հնդկական ազգային-ազատագրական շարժման ճանաչված գաղափարախոսը կտրականապես մերժում էր արևմտյան քաղաքակրթությունը, հատկապես դրա բուրժուական-դասակարգային գծերը՝ կապիտալիստական շահագործումը, ենթարկման և ճնշման բարոյականությունը։ Նա անիծում էր տեխնիկական առաջադիմությունը, որպես ժամանակակից հասարակության բոլոր դժբախտությունների աղբյուր։ Գանդին ուղղակի հայտարարում էր.

«Ես չեմ կարծում, թե ինդուստրացումը ամեն դեպքում և ամեն մի երկրի համար անհրաժեշտ է։ Ամենից քիչ նա Հնդկաստանին է պետք»։

Ի հակակշիռ ինդուստրացման գաղափարի, Գանդին առաջ քաշեց ձեռքի աշխատանքի և առաջին հերթին տնայնագործ եղանակով հագուստեղենի արտադրության զարգացման լայն ծրագիր։ Այդ գաղափարը երկրում առաջ բերեց վիթխարի մի շարժում, որի խորհրդանիշը դարձավ ձեռքի ճախարակը, որն այժմ պատկերված է Հնդկաստանի պետական դրոշակի վրա։

Արտադրության մեքենայացման, երկրի ինդուստրացման դեմ գանդիական հայացքները խոր արմատներ գցեցին ոչ միայն Հնդկաստանի, այլև Ասիայի և Աֆրիկայի շատ երկրների աշխատավորների մի մասի գիտակցության մեջ։

Նոր պայմաններում, երբ «երրորդ աշխարհի» երկրները բռնել են ինքնուրույն զարգացման ուղի, այդ մտքերը իրենց յուրատեսակ դրսևորումն են գտնում։ Թույլ զարգացած երկրների շատ պահպանողական գործիչներ այսօր էլ պաշտպանում են այն տեսակետը, թե գիտատեխնիկական առաջադիմությունը, նորագույն տեխնիկան ու տեխնոլոգիան ինքնին վատ բան չեն, բայց մի քանի, հատկապես առավել հետամնաց երկրների կոնկրետ պայմաններում, որոնք ունեն սահմանափակ բնական ռեսուրսներ, դրանք կիրառելի չեն։ Այդ իսկ պատճառով, ասում են նրանք, նման երկրների տնտեսությունը պետք է հիմնվի մանրապրանքային արտադրության, գլխավորապես գյուղատնտեսության զարգացման վրա։

«Երրորդ աշխարհում» ծնունդ առած այս և նման մտքերն ու կոնցեպցիաները ոչ միայն լայն պաշտպանություն են գտնում ԱՄՆ-ի և արևմտաեվրոպական երկրների նեոռացիոնալիության տեսաբանների մոտ, այլև նրանց կողմից ամեն կերպ օգտագործվում են սեփական տեսաբանական կոնստրուկցիաները կառուցելիս։

«Երրորդ աշխարհի» երկրների ինդուստրացման և դրանցում գիտատեխնիկական առաջադիմության արդյունքների օգտագործման դեմ նեոգաղութարարների առաջ քաշած մյուս փաստարկն այսպես կոչված «դեմոգրաֆիական պայք-

յունն» է, այսինքն՝ այդ երկրներում բնակչության աճի տեմպերի մեծապես արագացումը։

1972 թվականին ԱՄՆ-ում լույս տեսած «Աճի սահմանները» գրքի հեղինակներն այն միտքն են հայտնում, թե առաջիկա հարյուր տարում մեր մոլորակի վրա բնակչության այնպիսի բացահայտ աճ է լինելու, որ մարդկությունն անխուսափելիորեն կանգնելու է կործանման եզրին։

Այդ տեսակետից հատկապես չափից ավելի ջանք են գործադրում նեոմալթուսականները։ Սարսափ ու խուճապ տարածելով իրենց շուրջը, նրանք հաշվարկներ են կատարում, թե մարդկության ճակատագիրը ինչպիսին է լինելու հարյուրամյակներ հետո։ Նրանցից մեկը նույնիսկ հաշվարկել է, որ բնակչության տարեկան երկու տոկոս աճի դեպքում մեկուկես հազարամյակ հետո մարդկանց քաշը գերազանցելու է երկրագնդի կշռին։ Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ջոն Էդսոլը «Նեյչն» հանդեսում գրում է, որ «երկրի բնակչության աճի չտեսնված տեմպերն առաջ են քաշում այնպիսի պրոբլեմներ, որոնց կարելի է միայն համեմատել ջերմամիջուկային պատերազմի սպառնալիքի պրոբլեմների հետ»։ Սովորաբար Արևմուտքում միջուկային պատերազմի վտանգը համարում են №1 պրոբլեմը, իսկ գերբնակչության վտանգը՝ երկրորդ։ Նեոմալթուսականներից ոմանք դրանց տեղերը փոխում են՝ առաջնային վտանգը համարելով դեմոգրաֆիական պայթյունը։

Երկրագնդի բնակչության աճի հետևանքներն ահավոր գույներով են նկարագրված Ստանֆորդի համալսարանի բիոլոգիայի պրոֆեսոր Պոլ Էրլիխի 1968 թվականին լույս տեսած «Ազգաբնակչության աճի ռումբը» տագնապալից վերնագրով գրքի մեջ։ Ուսանողական կոմպուսներում այդ գիրքը շուտով բեստսելեր դարձավ, իսկ նրա հեղինակի՝ իր վրա սերնդազրկման վիրահատություն կատարած պրոֆեսորի դրամատիզմով լի կերպարը ալեկոծեց հասարակության քաղքենիական խավերին։ Իր համախոհ, դեմոգրաֆիական պսիխոզի մի ուրիշ զոհ Թոմաս Այսկերի հետ միասին Էրլիխը այսպես կոչված «բնակչության զրո աճ» շարժման սկզբնավորողը դարձավ։ Այդ շաժումը շուտով ընդգրկեց ամերիկացիների, հատկապես ուսանող երիտասարդության լայն շերտերը։

Պոլ Էրլիխի գաղափարների ազդեցության տակ ԱՄՆ-ում մեծ տարածում են գտել այսպես կոչված «Զի—Պի—Զի»[1] ակումբները, որի անդամները հանդես են գալիս թունդ հականաթալիստական[2] տրամադրություններով։

Անժխտելի փաստ է, որ վերջին տասնամյակներին «երրորդ աշխարհի» բնակչության աճի տեմպերը մեծապես արագացել են։ Եթե 1930—1940 թվականներին բնակչության բնական աճի տարեկան միջին տեմպերը Ասիայում կազմում էր 1,3 տոկոս, Աֆրիկայում՝ 1,2 տոկոս, Լատինական Ամերիկայում՝ 2 տոկոս, ապա 1950—1960 թվականներին համապատասխանաբար կազմեցին 2,1 տոկոս, 2,3 տոկոս և 3 տոկոս։ Այժմ զարգացող մի շարք երկրներում այդ տեմպերը գերազանցում են 3 տոկոսից։ Հնդկաստանում բնակչությունը տարեկան աճում է ավելի քան 13 միլիոն, Բրազիլիայում՝ 2,5 միլիոն մարդով։ Եվ դա այն դեպքում, երբ «երրորդ աշխարհում» շարունակում է հսկայական չափերի հասնել մահացությունը։ Այսպես, օրինակ, կյանքի միջին տևողությունը Պարագվայում հազիվ անցնում է 50 տարուց, Բոլիվիայում կազմում է 45 տարի, Բրազիլիայում՝ 40, Հայիթիում՝ 32 տարի։

Թերսնումից և հյուծախտից Աֆրիկայի բոլոր երեխաների մեկ երրորդը մեռնում է հինգ տարեկանը չլրացած։ Բրազիլիայում ութ միլիոն երեխա, կամ երկրի բոլոր երեխաների 40 տոկոսը սովի պատճառով տառապում է ուղեղային հիվանդությամբ։

Վիճակը բարդանում է նրանով, որ Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի աշխատունակ բնակչության արագ ավելացումը տեղի է ունենում մեծ մասշտաբների հասնող գործազրկության պայմաններում։ «Երրորդ աշխարհի» ակտիվ բնակչության մոտ մեկ երրորդը լիովին կամ մասնակի գործազուրկ է։

Ըստ որում զարգացման տենդենցը գործազրկության և ոչ լրիվ զբաղվածության հետագա մեծացում է։ Այսպես, եթե 1960 թվականին Հնդկաստանում պաշտոնապես գրանցված

[1] ZPG—Zero Population Growth, «բնակչության զրո աճ» բառերի սկզբնատառերը

[2] Նաթալիստներ — ծննդաբերության մեծացման կողմնակիցներ։

գործազուրկների թիվը 1500 հազար էր, ապա 1970 թվականին այն հասավ մինչև 3100 հազարի։ Գործազրկությունը մեծ չափերով աճել է Պակիստանում, Շրի-Լանկայում, Ֆիլիպիններում, Գանայում, Զամբիայում, Նիգերիայում և ուրիշ երկրներում։ Վիճակը ծանրանում է նրանով, որ «երրորդ աշխարհում» աշխատունակ բնակչության թիվը 1960—1970 թվականներին տարեկան աճել է 2,2 տոկոսով, իսկ 1970—1976 թվականներին՝ 2,3 տոկոսով[1]։

Աշխատանքի միջազգային բյուրոյի հաշվարկումներով 1975—1985 թվականներին աֆրո-ասիական ռեգիոնում կպահանջվի ստեղծել մոտ 300 միլիոն նոր բանվորական տեղեր։ Սակայն, ինչպես ցույց են տալիս փաստերը, զարգացման արդի տեմպերի պայմաններում Ասիայի և Աֆրիկայի երկրներն ի վիճակի չեն լուծելու իրենց համար այդքան կենսական կարևորություն ունեցող խնդիրը։

Ահա այս հանգամանքները նկատի ունենալով, նեոգաղութարարները գտնում են, թե թույլ զարգացած երկրները մեկընդմիշտ պետք է հրաժարվեն իրենց տնտեսությունն ինդուստրացնելու մտքից, քանի որ դա անխուսափելիորեն կհանգեցնի գործազրկության հետագա ավելացման։

Ինչ խոսք, «դեմոգրաֆիական պայթյունի» դուրջը բուրժուական գաղափարախոսների բարձրացրած տագնապի մեջ արտացոլվում է ոչ թե մարդկության մասին հոգատարությունը, այլ նրանց վախը կապիտալիստական կարգերի բախտի նկատմամբ։ Բուրժուական գաղափարախոսներն այսօր սարսափ են զգում վաղվա լրացուցիչ միլիոնավոր գործազուրկ մարդկանց զայրույթի հանդեպ։ Ամերիկյան տնտեսագետ Չարլզ Վեյցը նախազգուշացնում է, որ եթե մարդիկ չապահովվեն նորմալ սննդով, ապա «նրանք կբարձրանան և կփշրեն մեր ատամները»։ Այդ տեսանկյունով, իհարկե, որքան քիչ լինեն մարդիկ, այնքան լավ։

Հարկ է նշել, որ բնակչության աճի հետ կապված պրոբլեմների տենդենցիոզ չափազանցումը բնավ էլ նոր երևույթ չէ։ Դեռ ժամանակին դրան անդրադարձել են մարքսիզմ-լենինիզմի կլասիկները, երբ հանդես էին գալիս կապիտալիստական հասարակության սոցիալական արատների իսկական պատճառները թաքցնելու փորձ անող բուրժուական գիտնականների դեմ։

Կարլ Կաուցկուն 1881 թվականին գրած նամակում Ֆրիդրիխ Էնգելսը նշել է, որ ապագա մարդիկ իրենք կկարգավորեն ծննդաբերության պրոցեսը։ Նա ձեռնպահ էր մնում ապագա մարդկանց խորհուրդներ տալուց, գտնելով, որ «նրանք Ձեզ հետ միասին մեղնից հիմար չեն լինի»։ Միաժամանակ Էնգելսը վստահություն էր հայտնում, որ կոմունիստական հասարակությունը կարող է և անպայման կլուծի այդ խնդիրը։

«Երրորդ աշխարհի» երկրների ինդուստրացման դեմ օգտագործվող փաստարկներից մեկն էլ այն է, որ դրանց ազգային տնտեսությունը չունի վերարտադրության միասնական մեխանիզմ։ Ըստ որում, որքան էլ տարօրինակ է, բուրժուական տնտեսագետներից շատերը վերարտադրության միասնական մեխանիզմի բացակայությունը համարում են «երրորդ աշխարհի» երկրների տնտեսության առավելություն։ Նրանք գտնում են, որ այդ երկրների ազգային հարստությունների և աշխատուժի ռացիոնալ օգտագործումը հնարավոր է միայն եղած վիճակի կոնսերվացման պայմաններում։ Իսկ ո՞րն է եղած վիճակը։

Ինչպես հայտնի է, «երրորդ աշխարհի» երկրներում «գոյակցում են» միմյանց հետ համարյա ոչնչով չկապված տնտեսական երեք սեկտորներ։ Դրանցից առաջինը նատուրալ, կամ ինչպես բուրժուական տնտեսագետներն են անվանում՝ «տրադիցիոն» սեկտորն է։ Երկրորդը ներքին ապրանքային, կամ ինչպես երբեմն նաև անվանում են՝ «քաղաքային» սեկտորն է։ Վերջապես, երրորդը «արտահանության» սեկտորն է, որը սովորաբար գտնվում է օտարերկրացիների ձեռքին։

Բուրժուական տնտեսագետներից ոմանք քարոզում են այսպես կոչված «տնտեսական դուալիզմ»։ Նրանք գտնում են, որ «երրորդ աշխարհի» տնտեսությունն առաջիկայում պետք է խարսխվի երկու հենասյուների՝ «տրադիցիոն» սեկտորի վրա, որը պետք է գտնվի մասնավոր կապիտալի ձեռ-

[1] Այդ ցուցանիշները նույն ժամանակաշրջանում զարգացած կապիտալիստական երկրներում կազմել են 1,1 տոկոս և 1,0 տոկոս։

քին և «ժամանակակից» սեկտորի վրա, որը պետք է պատկանի օտարերկրացիներին և աշխատի արտահանության համար։ Բուրժուական, հատկապես ֆրանսիական տնտեսագետների մի մասն էլ «երրորդ աշխարհի» տնտեսությունը դիտում է «տնտեսական տրիալիզմի» տեսանկյունից։ Նրանք գտնում են, որ այդ տնտեսությունը ինչպես այժմ, առաջիկայում նույնպես խարսխված կլինի միմյանց հետ կապ չունեցող վերևում հիշատակված երեք սեկտորների վրա։

Ընդունելով «երրորդ աշխարհում» գոյություն ունեցող տնտեսական ստրուկտուրայի մասնատվածությունը, բուրժուական տնտեսագետները, սակայն, գիտակցաբար շրջանցում են այն հարցը, թե որոնք են զարգացող երկրների տնտեսության մասնատվածության պատճառները։

Նվաճած երկրների տնտեսության մեջ գաղութարարները ներմուծեցին «արտածման սեկտոր», որոշակի չափերով զարգացրին ապրանքադրամական հարաբերությունները, առանց որի անհնարին է կապիտալիստական ձեռնարկության կազմակերպումը։ Նրանք, միաժամանակ, արհեստականորեն աջակցում էին ֆեոդալական և ցեղային հարաբերությունների պահպանմանը։ Հենց այդպես էլ գաղութարարները ստեղծեցին տնտեսության այն մասնատվածությունը, կամ ինչպես բուրժուական հեղինակներն են արտահայտվում՝ տնտեսության այն «դեզարտիկուլյացիան», որի գոյությունը համարում են օրինաչափ։

Վերջին տարիներին, կապիտալիստական աշխարհն ընդգրկած էներգետիկ ճգնաժամի կապակցությամբ, բուրժուական տեսաբանները նոր ուժով սկսեցին ապացուցել, թե կապիտալիստական տերություններից «երրորդ աշխարհի» երկրների կախվածությունը միանգամայն բնական, նորմալ երևույթ է։ Մեր ժամանակներում, ասում են նրանք, առանց բացառության բոլոր երկրները կախված են մեկը մյուսից, դրանց տնտեսական զարգացումը պայմանավորված է միմյանցով։ Նույնիսկ ամենահզոր կապիտալիստական երկիրը՝ ԱՄՆ-ը, որն օժտված է վիթխարի բնական ռեսուրսներով, արտասահմանից ամենատարբեր ապրանքների ներմուծման խիստ կարիք է զգում։ Հանդիսանալով աշխարհի խոշորագույն նավթարդյունաբերող երկրներից մեկը, ԱՄՆ-ը

ավելի ու ավելի մեծ մասշտաբներով է կախման մեջ ընկնում նավթ արդյունահանող երկրներից, հատկապես Մերձավոր ու Միջին արևելքի զարգացող երկրներից։ Դա, ասում են նրանք, հատկապես ցայտուն արտահայտվեց 1973 թվականի աշնանը, երբ ծավալվող էներգետիկ ճգնաժամի պայմաններում արաբական երկրներն արգելք դրեցին ԱՄՆ կատարվող նավթի արտահանության վրա։

Թույլ զարգացած երկրներում եղած հումքի այս կամ այն տեսակից զարգացած կապիտալիստական երկրների տնտեսության կախվածությունը երբեք չի կարելի համեմատել միջազգային իմպերիալիզմից «երրորդ աշխարհի» տնտեսական կախվածության հետ։ Վերջինս միանգամայն այլ բնույթ ունի, այն պայմանավորված է համաշխարհային կապիտալիստական տնտեսության մեջ ստեղծված աննորմալ հարաբերություններով, զարգացող երկրներում օտարերկրյա մոնոպոլիստական կապիտալի տիրապետությամբ, որը սիստեմատիկաբար կողոպտում է դրանց հարստությունները։ Նման հարաբերությունների պայմաններում զարգացող ազգերը զրկված են իրենց աշխատանքի արդյունքները սեփական շահերին ծառայեցնելու հնարավորությունից։ Հենց դա էլ ներկա ժամանակաշրջանում «երրորդ աշխարհի» երկրների տնտեսության հիմնական առանձնահատկությունն է։

Ինչպես վերևում ասվեց, նեոգաղութակալության ոչ բոլոր տեսաբաններն են ժխտում «երրորդ աշխարհի» երկրների ինդուստրացման հնարավորությունը։ Դրանց թվում կան տնտեսագետներ ու սոցիոլոգներ, որոնք հանդես են գալիս զարգացող երկրների տնտեսությունն այս կամ այն չափով ինդուստրացնելու օգտին։ Սրանք ըմբռնում են, որ «երրորդ աշխարհի» երկրների տնտեսության ներկա վիճակի կոնսերվացումը կարող է ողբերգական հետևանքներ ունենալ ոչ միայն թույլ զարգացած, այլև զարգացած կապիտալիստական երկրների համար։ Իսկ «երրորդ աշխարհի» ներկա վիճակը գոհացուցիչ համարել չի կարելի։

Պետք է նշել, որ քաղաքական անկախություն ձեռք բերելուց հետո Ասիայի և Աֆրիկայի երկրները հասել են որոշակի հաջողությունների։ 1950—1967 թվականների ժամա-

12 — 1835

նակաշրջանում, այսինքն՝ 17 տարում, կապիտալիստական աշխարհի արդյունաբերական արտադրության մեջ Աֆրիկայի բաժինը մեկ տոկոսից բարձրացել է 1,3 տոկոսի, իսկ Ասիայինը՝ 4 տոկոսից մինչև 5,7 տոկոսի։ Մեծացել է նաև գյուղատնտեսական արտադրության ծավալը։ Եթե 1955 թվականին զարգացող երկրներում հացահատիկի համախառն արտադրանքի ծավալը կազմել է կպիտալիստական աշխարհի հացահատիկի արտադրության 28 տոկոսը, ապա 1975 թվականին այն հասավ 35 տոկոսի։ 1960—1968 թվականներին գյուղատնտեսական արտադրանքի տարեկան միջին աճը այդ երկրներում կազմել է 4,5 տոկոս, իսկ 1969—1975 թվականներին՝ 5,5 տոկոս։

Դրա հետ միասին պետք է նշել, որ իմպերիալիստական մոնոպոլիաների կողմից կիրառվող նեոգաղութատիրական քաղաքականության հետևանքով ոչ միայն չի կրճատվում այն ճեղքվածքը, որ գոյություն ունի զարգացած կապիտալիստական և «երրորդ աշխարհի» երկրների միջև, այլև, ընդհակառակն, գնալով մեծանում է։

Վիճակագրական տվյալները վկայում են, որ 60-ական թվականներին էականորեն չի փոխվել աֆրո-ասիական ռեգիոնի տեսակարար կշիռը համաշխարհային արդյունաբերական արտադրության մեջ։ Բավական է ասել, որ ոչ սոցիալիստական աշխարհի բնակչության 72 տոկոսը կազմող զարգացող երկրների բնակիչներին ընկնում է համաշխարհային արդյունաբերական արտադրանքի միայն 12 տոկոսը։ Ամբողջ Ասիան արտադրում է համաշխարհային արդյունաբերական արտադրանքի ընդամենը 2 տոկոսը։ Արդյունաբերական զարգացման մակարդակով էլ ավելի ետ է մնում Աֆրիկան։ Այս մայրցամաքում արդյունաբերական օբյեկտներ սկսել են ստեղծվել փաստորեն միայն վերջին տասնամյակներին։ Աֆրիկյան երկրների դեռևս թույլ արդյունաբերությունը տալիս է համաշխարհային արդյունաբերական արտադրանքի մոտ մեկ տոկոսը։

Պատկերը նույնն է գյուղատնտեսության բնագավառում։ 1952—1956 թվականներին Մերձավոր ու Միջին արևելքի երկրները պարենամթերքի ներմուծումն ավելացրել են 5 անգամ, իսկ Հարավային և Հարավարևելյան Ասիայի երկրները՝ 5,5 անգամ։ Նախկինում սննդամթերք արտածող տասնյակ երկրներ այժմ դարձել են ներմուծող։ Յորենի դեֆիցիտը Հարավարևելյան Ասիայում, Մերձավոր արևելքում և Աֆրիկայում կազմում է տասնյակ միլիոնավոր տոննաներ։ Նման վիճակը, ինչ խոսք, տագնապալից է, եթե հաշվի առնենք, որ աֆրո-ասիական պետությունների տնտեսության մեջ գյուղատնտեսությունը գլխավոր տեղն է բռնում։

Իմպերիալիստների կողմից իրականացվող «երրորդ աշխարհի» մշտական թալանը մեծացնում է զարգացած և զարգացող երկրների բնակչության մեկ շնչին ընկնող եկամտի մակարդակների միջև եղած վիհը։ Այսպես, 1950 թվականին Եվրոպայում և ԱՄՆ-ում մեկ շնչին ընկնող ազգային եկամուտը տարեկան կազմում էր 145 դոլլար (1960-ի գներով), իսկ մնացած աշխարհում՝ 80 դոլլար։ 1970 թվականին զարգացած կապիտալիստական երկրներում այն տարեկան հասավ 2970 դոլլարի, իսկ զարգացող երկրներում՝ միայն 225 դոլլարի։ Ըստ որում միայն 1950—1967 թվականներին տնտեսապես զարգացած կապիտալիստական երկրներում մեկ շնչին ընկնող ազգային եկամտի միջին գումարը համարյա աճել է երկու անգամ, կամ 590 դոլլարով։ Նույն ժամանակաշրջանում այդ աճը Ասիայում կազմել է 26 դոլլար, Աֆրիկայում՝ միայն 17 դոլլար։ Եթե 1950 թվականին զարգացած կապիտալիստական երկրներում մեկ շնչին ընկնող ազգային եկամուտը աֆրո-ասիական երկրների մեկ շնչին ընկնող եկամտին գերազանցում էր 12—13 անգամ, ապա 1970 թվականին՝ 15—17 անգամ։

Այսքանից հետո պատահական չէ, որ բուրժուական տնտեսագիտական ու սոցիոլոգիական գրականության մեջ ակտիվ վիճաբանություններ են գնում այն հարցի շուրջը, թե զարգացող երկրներն արդյո՞ք երբևէ կարող են հասնել զարգացած կապիտալիստական երկրներին։

Նրանց գերակշռող մասն իբրև օրիենտիր վերցնում է ԱՄՆ-ը։ Այդպես են, օրինակ, վարվում ամերիկյան դիտնականներ Հերման Կանը և Էնտոնի Վիները իրենց «2000 թվական» գրքում։ Նրանք պնդում են, թե ԱՄՆ-ի մեկ շնչին ընկնող ազգային եկամտին հասնելու համար այնպիսի երկիր, ինչպիսին Ինդոնեզիան է, պահանջվում է նվազա-

գույնը 6 դար։ Խնդրին նույն կերպ են մոտեցել նաև ՄԱԿ-ի փքսպերտները, որոնց հաշվարկումներով ստացվում է, որ զարգացող շատ երկրների ազգային եկամտի աճի այժմյան տեմպերի պայմաններում նրանց անհրաժեշտ կլինի տասնյակ ու հարյուրավոր տարիներ՝ զարգացած երկրների այսօրվա մակարդակին հասնելու համար։

Ահա այս հանգամանքներն են, որ Արևմուտքի իմպերիալիստական, նեոգաղութարարական որոշ շրջանների ստիպում են ուշադրություն դարձնել «երրորդ աշխարհի» հրատապ պրոբլեմների վրա, միջոցներ ձեռնարկել կանխելու կապիտալիստական ողջ կացութաձևի համար պայթյունով հղի իրադրության առաջացման վտանգը։

Վերջին տարիներս բուրժուական գիտնականները մշակել են զարգացող երկրների կապիտալիստական ուղիով ինդուստրացման մի շարք տեսություններ։ Նրանք խոստովանում են, որ իրենց կոնցեպցիաները զգալի չափով կրում են համաշխարհային երկու սիստեմների պայքարի կնիքը և ծառայում են իմպերիալիստների նպատակներին։ Անգլիական տնտեսագետ Ռոբինսը գրում է, որ այդ տեսություններն իրենց արմատներն ունեն ԱՄՆ-ի և Սովետական Միության ետպատերազմյան ժամանակաշրջանի հակամարտության մեջ։ Շվեդացի հայտնի գիտնական Գ. Մյուրդալը նկատում է, որ բուրժուական տնտեսագետների մեծ մասը երիտասարդ պետությունների ներքին պրոբլեմները դիտում է Արևմուտքի քաղաքական և ռազմական նպատակների տեսանկյունից, այլ կերպ ասած, նրանց «կոմունիզմից փրկելու» տեսանկյունով[1]։

Որպես կանոն, բուրժուական տնտեսագիտության ներկայացուցիչները զարգացող երկրների ինդուստրացումը փորձում են հանգեցնել միայն տեխնիկատնտեսական մի շարք խնդիրների լուծմանը։ Ըստ որում նրանք արհեստականորեն քողարկում են սոցիալիզմի և կապիտալիզմի միջև տարբերությունները, մի կողմ են թողնում «երրորդ աշխարհի» պետությունների առջև կանգնած այնպիսի պրոբլեմներ, ինչպիսիք են՝ զարգացման հետագա ուղիների ընտրությունը,

[1] Տե՛ս Г. Мюрдаль, Современные проблемы «третьего мира», М., 1972, էջ 85.

սոցիալ-տնտեսական արմատական վերափոխությունների իրականացման անհրաժեշտությունը և այլն։

Նեոգաղութատիրության զինանոցի հիմնական զենքերից մեկը «մեծ խթանի» կոնցեպցիան է, որի հիմնադիրը հանդիսացավ Պ. Ռոզենշտեյն-Ռոդանը։ «Մեծ խթանի» գաղափարները հետագա զարգացում ստացան ամերիկյան հայտնի տնտեսագետներ Ռ. Նուրկսեի, Գ. Զինգերի, Ա. Հիրշմանի և ուրիշների աշխատություններում։

«Երրորդ աշխարհի» երկրների տնտեսական զարգացումը կախման մեջ դնելով արտաքին ֆակտորներից և ուշադրությունը գերազանցապես կենտրոնացնելով արտասահմանյան կապիտալ ներդրումների վրա, «մեծ խթանի» կոնցեպցիայի կողմնակիցները թերագնահատում են երիտասարդ պետությունների ներքին հնարավորությունները և ռեսուրսները։

Համաշխարհային երկու սիստեմների գոյության պայմաններում «մեծ խթանի» կոնցեպցիան հենց սկզբից ձեռք բերեց ակնհայտ քաղաքական գունավորում։ Այն յուրահատուկ կոչ հանդիսացավ՝ կապիտալի և կապիտալիստական արտադրահարաբերությունների մասսայական արտածում կատարել «երրորդ աշխարհի» երկրներ։

«Մեծ խթանի» տեսությունն ըստ էության, բուրժուական որոշ գիտնականների կողմից թույլ զարգացած տնտեսության օրինաչափություններն ըմբռնելու և իմաստավորելու առաջին լուրջ փորձն էր։ Ինչպես հայտնի է, այդպիսի տնտեսությունը սովորաբար դիտվում էր իբրև լճացած, ստագնացիոն տնտեսություն, աննշան ու փոշիացած կապիտալ ներդրումներով։ Որպեսզի տեղահան անել, աշխուժացնել նահապետական տիպի այդ տնտեսությունը, ասում են քննարկվող կոնցեպցիայի հեղինակները, անհրաժեշտ է «մեծ խթան», մեծ ցնցում ու մղում՝ մեծ ծավալի կապիտալ ներդրումների միջոցով։ Նրանց կարծիքով նման խթանների սերիայից հետո թույլ զարգացած տնտեսությունը կարող է հասնել աշխատանքի արտադրողականության այնպիսի մակարդակի, որից հետո տնտեսական աճի պրոցեսն ավտոմատիկաբար կդառնա անընդմեջ։

«Մեծ խթանի» կոնցեպցիայի ներկայացուցիչներին զգալի

չափով հատուկ է վուլգար դետերմինիզմը։ Նրանք գտնում են, որ տեխնիկական վերասարքավորումը և կապիտալ ներդրումներն իրենք իրենց ունակ են խթանելու զարգացումը։ Նման մոտեցումը նշանակում է թերագնահատել հասարակական հարաբերությունների վերափոխման անհրաժեշտությունը, բացառում է սոցիալական և տնտեսական պրոբլեմների կոմպլեքսային լուծման հնարավորությունը։

«Մեծ խթանի» տեսության հեղինակները գտնում են, որ «երրորդ աշխարհի» ինդուստրացման գործում վճռական դեր են խաղալու մի կողմից կապիտալիստական Արևմուտքի գիտատեխնիկական հարաճուն աշակցությունը, մյուս կողմից զարգացող երկրներում սեփական գիտության ու տեխնիկայի զարգացումը։ Նրանք աշքաթող են անում, սակայն, որ զարգացող երկրները չափազանց փոքր տեղ են գրավում համաշխարհային գիտության մեջ։ Մեկ միլիոն բնակչություն ունեցող 25 զարգացող երկրներում գիտական հետազոտությունների ու մշակումների վրա կատարած ծախսերը 60-ական թվականների կեսերին կազմել են ընդամենը 450 միլիոն դոլլար։ Դա 50 անգամ քիչ է այն ծախսերից (մոտ 26 միլիարդ դոլլար), որ նույն ժամանակաշրջանում գիտության զարգացման վրա կատարվել են կապիտալիստական խոշորագույն 5 տերություններում՝ ԱՄՆ-ում, Անգլիայում, Ֆրանսիայում, ԳՖՀ-ում և Ճապոնիայում։

«Երրորդ աշխարհի» երկրներում արդյունաբերություն ստեղծելու օգտին հանդես եկող բուրժուական տեսաբանների մի մասն այն տեսակետին է, թե քանի որ իրենց տնտեսական և կուլտուրական հետամնացության պատճառով այդ երկրներն ի վիճակի չեն օգտագործելու գիտատեխնիկական հեղափոխության արդյունքները, ուստի դրանց համար հարմար է գալիս միմիայն «անցյալի տեխնիկան»։

Բուրժուական գաղափարախոսները ոչ միայն զանազան միջոցներով փորձում են հիմնավորել այս կոնցեպցիան, այլև իրենց կառավարություններին և իմպերիալիստական մոնոպոլիաներին զանազան երաշխավորություններ են տալիս, որպեսզի սրանք զարգացող երկրներին տրամադրեն միայն հնացած տեխնիկա և տեխնոլոգիա։

Զարգացող երկրների տնտեսագետներից. շատերը, հատ-

կապես հնդկացի գիտնական Վ. Դ. Նագ Չաուդրին բազմաթիվ օրինակներով ցույց են տալիս, թե իրենց երկրները որքան մեծ վնասներ են կրում ԱՄՆ-ից և Արևմտյան Եվրոպայից գործարաններ գնելով։ Որպես կանոն, այդ գործարանների շինարարությունն ավարտելուց հետո պարզվում է, որ նրանցում կիրառվող տեխնոլոգիական պրոցեսները արդեն հնացել են, մի բան, որ մեծ կորուստների տեղիք է տալիս։

Մոնոպոլիաները զարգացող երկրներին սովորաբար վաճառում են արտադրական այնպիսի գաղտնիքներ, որոնք Արևմուտքում վաղուց կորցրել են իրենց արժեքը՝ տեխնոլոգիական պրոցեսների մեջ կատարվող արագ փոփոխությունների հետևանքով։

«Երրորդ աշխարհի» երկրների ինդուստրացման կողմնակիցներից ոմանք էլ այն տեսակետին են, որ այդ երկրներում պետք է ներդնել այսպես կոչված «միջանկյալ տեխնիկա»։

Այս անվան տակ բուրժուական տնտեսագետները նկատի ունեն այնպիսի տեխնիկա, որ հատուկ հարմարեցված լինի հետամնաց տնտեսության պայմաններին, այսինքն՝ հատուկ կոնստրուկցիայի մեքենաներ, որոնք ժամանակակից մեքենաներից տարբերվում են նրանով, որ գործածության համար պարզ են, մեծ չափերով օգտագործում են կենդանի աշխատանք և այդ պատճառով էլ համեմատաբար էժան են։

Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրներում բանվորական ուժի ցածր գինն ու արժեքը, դրանցում հսկայական չափերի հասնող գործազրկությունը կարծես թե տնտեսական և սոցիալ-քաղաքական հիմքեր են ստեղծում միջանկյալ տեխնիկայի ու տեխնոլոգիայի օգտագործման համար։ Այստեղ նեոգաղութակալության տեսաբանների խորհրդածություններն արտաքնապես կարծես թելադրված են այդ երկրների բախտի նկատմամբ տածած մտահոգությամբ։ Բայց իրականում դա ոչ այլ ինչ է, քան զարգացող երկրները երկար, անորոշ ժամանակով հետամնացության դատապարտելու կոչ։ Չէ՞ որ միջանկյալ տեխնիկան ժամանակակից տեխնիկայի արդեն անցած էտապներից մեկն է։

Զարգացող երկրների առաջընթացն անհնարին է պատկերացնել առանց նրանց կողմից ժամանակակից ամենա-

առաջավոր տեխնիկայի լայն ներդրման և օգտագործման։ «Միջանկյալ տեխնիկա» գործածելու, այսինքն՝ տեխնիկայի զարգացման անցած էտապներին վերադառնալու նեոգաղութարարների խորհուրդներն ապակողմնորոշում են զարգացող երկրներին, նրանց մոտ պատրանքներ են ստեղծում, թե կարելի է տնտեսական զարգացման հասնել առանց կենդանի աշխատանքի ծախսումների կրճատման։

«Երրորդ աշխարհի» երկրների արդյունաբերական զարգացման օգտին հանդես եկող բուրժուական տեսաբաններից ու գիտնականներից ոմանք գտնում են, որ ոչ միայն կարելի է, այլև պետք է այդ երկրներին տալ «այսօրվա տեխնիկան»։

Այս տեսակետը պաշտպանում է նեոգաղութարարների առավել հեռատես, ճկուն մասը, իհարկե, միայն մի վերապահությամբ, որ պետք է այդ դեպքում Արևմուտքի ինդուստրիալ տերությունների ձեռքին ամուր պահել «վաղվա տեխնիկան»։

Այնտեղ, որտեղ ազգային բուրժուազիայի դիրքերը բավականաչափ ուժեղ են, որտեղ հնարավոր չէ խուսափել ինդուստրացումից, նեոգաղութարարները ստիպված են աջակցելու նաև «այսօրվա տեխնիկայի» ներդրմանը, միաժամանակ ձգտելով իրենց վերահսկողությունը հաստատել նոր ստեղծվող արդյունաբերության տարբեր ճյուղերի վրա։

Վերջին երկու տասնամյակում «երրորդ աշխարհի» երկրներում նեոգաղութարարները դիմել են «այսօրվա տեխնիկայի» հիմքի վրա արդյունաբերական օջախներ ու ճյուղեր ստեղծելու և դրանց վրա վերահսկողություն հաստատելու տարբեր մեթոդների։

Նրանք «այսօրվա տեխնիկան» ներդնում են հատկապես «երրորդ աշխարհի» երկրների տնտեսության այն ճյուղերում, որոնք գտնվում են իրենց վերահսկողության տակ, կամ իրենց անբաժանելի սեփականությունն են կազմում։

«Երրորդ աշխարհի» երկրներում օտարերկրյա մոնոպոլիաների սեփականությունը հանդիսացող առաջնակարգ ձեռնարկությունները մի տեսակ կղզիներ են համատարած տնտեսական հետամնացության ծովում, կապված չեն երկրների տնտեսության տրադիցիոն սեկտորի հետ։ Այսպես, օրինակ, ամբողջովին ամերիկյան և արևմտագերմանական ընկերությունների վերահսկողության տակ գտնվող Մավրիտանիայի և Լիբերիայի հանքերն ու հարստացուցիչ ֆաբրիկաները հագեցված են ամենաժամանակակից սարքավորումներով։ Տեխնիկական տեսակետից բարձր հագեցված են նաև հանքանյութը նավահանգիստներ տեղափոխող երկաթուղիները, որոնց շահագործումն իրականացվում է էլեկտրոնային-հաշվիչ մեքենաների և ռադիոյի միջոցով։ Սակայն լեռնահանքային կոմպլեքսի բաղկացուցիչ մասը հանդիսացող այդ երկաթուղիները մեկուսացված են երկրի ընդհանուր տրանսպորտային ցանցից և այդ պատճառով չեն կարող օգտագործվել ազգային տնտեսության շահերի օգտին։

Նման պատկեր կարելի է տեսնել Մերձավոր և Միջին արևելքի նավթ արդյունահանող մի շարք երկրներում։

Ժամանակակից տեխնոլոգիան լայնորեն օգտագործելով իրենց պատկանող ձեռնարկություններում, օտարերկրյա մոնոպոլիաները, սակայն, ամեն կերպ խոչընդոտում են, որպեսզի դրանք չներդրվեն զարգացող երկրների պետական և ազգային արդյունաբերության մեջ։

Թե իմպերիալիստական շրջաններն ինչպիսի մեծ նշանակություն են տալիս «այսօրվա տեխնիկայի» ներդրման միջոցով աֆրո-ասիական և լատինաամերիկյան երկրներում արևմտյան մոնոպոլիաների դիրքերի ամրապնդմանը, կարելի է պատկերացում կազմել, ծանոթանալով այդ երկրներում ամերիկյան կապիտալի գործունեությանը։

1972 թվականին արտասահմանում, այդ թվում զարգացող երկրներում, ամերիկյան ընկերություններն ունեին 3600 մասնաճյուղ։ Դրանք նույն տարում արտադրել են ավելի քան 250 միլիարդ դոլլարի արտադրանք։ Դա նույն տարում ԱՄՆ-ից արտահանած ապրանքների ողջ մասսայի ընդհանուր գումարից ավելի էր շուրջ հինգ անգամ։

Նման իրադրությունը բնորոշ է նաև ԳՖՀ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի և զարգացած կապիտալիզմի այլ երկրների մոնոպոլիստական ընկերությունների արտասահմանյան մասնաճյուղերի համար։ Անգլիական և շվեյցարական ընկերությունների արտասահմանյան մասնա-

ճյուղերի արտադրանքի ընդհանուր արժեքը 1974 թվականին երկու անգամ գերազանցեց նրանց արտահանությունը։

1970 թվականին զարգացող երկրներում գործում էր արևմտյան մոնոպոլիաների մոտ ութ հազար մասնաճյուղ։

Օտարերկրյա կապիտալը շարունակում է կայուն դիրքեր պահպանել զարգացող երկրների մեծ մասի տնտեսության մեջ։ Այսպես, օրինակ, 1970 թվականին արտասահմանյան մոնոպոլիստական ընկերություններին էր պատկանում Բրազիլիայի արդյունաբերության մեջ կատարած կապիտալ ներդրումների 70 տոկոսը, առևտրի մեջ՝ 58 տոկոսը, տրանսպորտում կապիտալ ներդրումների 68 տոկոսը։ Լիովին արտասահմանյան կապիտալի ձեռքում էին գտնվում ավիաարդյունաբերությունը, ցեմենտի արտադրությունը, ռադիոտեխնիկական արդյունաբերությունը և բազմաթիվ այլ ճյուղեր։ Չնայած արդյունաբերության ազգայնացման ուղղությամբ Մեքսիկայում ձեռնարկված մի շարք միջոցառումներին, այդ երկրում օտարերկրյա մոնոպոլիաների վերահսկողության տակ շարունակում է մնալ վերամշակող արդյունաբերության ձեռնարկությունների 31 տոկոսը։ Շրի Լանկայում օտարերկրյա 700 ընկերություններ նախկինի նման վերահսկում են երկրի ազգային հարստությունների 75 տոկոսը, Հնդկաստանում արտասահմանյան կապիտալին են պատկանում 3000 ընկերությունների արժեթղթերի վերահսկիչ ծրարները։ Ինդոնեզիայում նավթի արդյունահանման մեջ ներդրված կապիտալների ավելի քան 80 տոկոսը պատկանում է օտարերկրյա ընկերություններին։

Նեոգաղութարարները կարևոր նշանակություն են տալիս նաև «երրորդ աշխարհի» երկրներում բազմազգ ընկերությունների ստեղծմանը։ Նման ընկերությունների գործունեության բնորոշ գիծը այսպես կոչված «ուղղահայաց» ինտեգրացիան է (արտադրական պրոցեսի, ապրանքների իրացման, սպասարկման բոլոր ստադիաների նկատմամբ վերահսկողության հաստատումը)։

Ուրիշ երկրների տերիտորիայում գտնվող միջազգային խոշոր կորպորացիաների մասնաճյուղերը վերահսկում են տարեկան մոտ 500 միլիարդ դոլլարի արդադրանք։ Արդեն այժմ բազմազգ ընկերությունները վերահսկում են զարգացող երկրների արդյունաբերական արտադրության 20 տոկոսը, արտադրանքի արտածման 40 տոկոսը։

Միջազգային կորպորացիաները, որոնց երեք քառորդը պատկանում է ամերիկյան կապիտալին, վերջին 25 տարում շատ երկրներում ստեղծել են մոտ 10 հազար դուստր ձեռնարկություններ։

Միջազգային մոնոպոլիաների գործունեությունը, ինչ խոսք, իրենից լուրջ վտանգ է ներկայացնում զարգացող երկրների ազգային շահերի համար։ Դա ստիպված են ընդունել նույնիսկ Արևմուտքի երկրների պաշտոնական շրջանները։

«Այսօրվա տեխնիկան» լայնորեն օգտագործվում է զարգացող երկրներում ստեղծված բաժնետիրական խառը ընկերությունների ձեռնարկություններում։

Խառը ընկերությունների ստեղծումը կապիտալի արտահանման առավել նպատակահարմար ձևերից է։ Դա ամենից առաջ հետևանք է զարգացող երկրներում քաղաքական կլիմայի փոփոխության, այն բանի, որ առանձին դեպքերում այդ երկրների կառավարող շրջանների և նեոգաղութարարների շահերն ինչ-որ տեղ ընդհանուր հող են գտնում։ Զարգացող երկրները, դրանց ազգային բուրժուազիան ձգտում են օտարերկրյա մոնոպոլիաների գործունեությունից ստանալ առավելագույն օգուտներ։ Մյուս կողմից արևմտյան մոնոպոլիաները շահագրգռված են մասնակցելու խառը ընկերություններին, որովհետև դրանք բարենպաստ հնարավորություններ են ստեղծում թափանցելու զարգացող երկրների շուկաները, ձեռք բերելու էժան բանվորական ուժ, իսկ հաճախ էլ ֆինանսավորվելու տեղական աղբյուրների հաշվին։ Բայց այդ կոմպրոմիսը, բնականաբար, տեղի է ունենում հակասական հիմքի վրա։ Օտարերկրյա կապիտալը ձգտում է իր ձեռքում պահել խառը ձեռնարկությունների վերահսկողությունը, վճռական ազդեցություն ունենալ հրամանատարական պոստերի և շահույթների բաժանման գործի վրա, մի բան, որ հակառակ է ազգային բուրժուազիայի շահերին։ Այստեղից էլ բխում է ուժեղացող հակասությունը նեոգաղութարարների և զարգացող երկրների ազգային բուրժուազիայի միջև։

Օտարերկրյա կապիտալը գերադասում է նախ և առաջ խառը ընկերություններ ստեղծել զարգացող երկրների մասնավոր կապիտալի հետ։ Այս դեպքում մոնոպոլիաները կարողանում են առավելագույն չափով օգտագործել պարտնյորների վրա ճնշում գործադրելու բոլոր հնարավորությունները, իրենց ձեռքը համեմատաբար հեշտությամբ գցել ընկերության վերահսկիչ ծրարը։

Այսպես, օրինակ, հնդկական կառավարությունը ամերիկյան «Մերկ, Շարպ էնդ Դոում» մոնոպոլիային երկար ժամանակ չկարողացավ համոզել պետական սեկտորի հետ ստեղծելու խառը ընկերություն՝ ակցիաների հավասար բաժանման պայմանով։ Նախ «Մերկ»-ը հասավ այն բանին, որ իր պարտնյորը դարձավ ոչ թե կառավարությունը, այլ «Տատա» մոնոպոլիան, այնուհետև համառեց և կարողացավ տիրանալ ստեղծված խառը ընկերության ակցիոներական կապիտալի 60 տոկոսին։

ԳՖՀ-ի ծանր արդյունաբերության խոշորագույն կորպորացիաներից մեկը՝ «Մանեսման»-ը միայն այն դեպքում է համաձայնում մասնակցել համատեղ ձեռնարկություններին և դրանց տրամադրել իր տեխնոլոգիան, երբ նա տեր է դառնում արժեթղթերի մեծ մասին։

Միջազգային կորպորացիաների գծով ամերիկյան հայտնի մասնագետ Ռայմոնդ Վերնոնը ընդգծել է, որ համեմատած այն ձեռնարկությունների հետ, որոնք լիովին պատկանում են օտարերկրյա կապիտալին, խառը ընկերությունների տեսակարար կշիռը մշտապես աճում է։ Այսպես, եթե մինչև 1946 թվականը խառը ձեռնարկությունները մատների վրա էին հաշվվում, ապա 1947—1957 թվականներին միայն ԱՄՆ-ի 187 միջազգային կորպորացիաների կողմից «երրորդ աշխարհի» վերամշակող արդյունաբերության մեջ ստեղծվել է 395 ձեռնարկություն, որոնցից 150-ը խառն էին։ Վերջիններից միայն 44-ում ԱՄՆ-ի կապիտալը համաձայնել էր «կրտսեր պարտնյորի» դեր խաղալ։ Համատեղ ձեռնարկությունների և ընկերությունների թիվը հատկապես աճեց հաջորդ տասնամյակում՝ 1957—1967 թվականներին։ Ամերիկյան կորպորացիաների կողմից այդ ժամանակաշրջանում հիմնած 1013 ձեռնարկություններից միայն 445-ն էին իրենց

լիակատար սեփականությունը, մնացածները, այսինքն՝ այդ ձեռնարկությունների մեծ մասը, համատեղ սեփականություն էին։

Անկասկած, խառը ընկերությունները որոշակի ժամանակահատվածում կարևոր դեր են խաղալու զարգացող երկրների տնտեսության մեջ։ Հարցը կայանում է նրանում, թե դրանք «երրորդ աշխարհում» այսպես կոչված «երկրորդ տեսակի» կապիտալիզմ ներդնողի դե՞ր կխաղան, թե՞ երիտասարդ պետություններն ի վիճակի կլինեն դրանք այնպես օգտագործել, որպեսզի ամրապնդեն իրենց տնտեսությունը, ամուր կանգնեն ինքնուրույն զարգացման ճանապարհին, աշխատանքի միջազգային բաժանման մեջ հասնեն իրավահավասար դրության։

Փաստերը ցույց են տալիս, որ ազգային-ազատագրական շարժումը օտարերկրյա կապիտալին ավելի ու ավելի հաճախ է ստիպում դիմել զիջումների։ Բայց վերջինս վարում է ճկուն քաղաքականություն, «երրորդ աշխարհի» ձևավորող «միջին դասակարգի» ներկայացուցիչների օգնությամբ ձգտում է «խառը» ընկերությունների ծառայողների մոտ դաստիարակել տվյալ «հզոր ու միասնական» ընկերությանը պատկանելու զգացում։ Այդ նպատակով ընկերությունները հաստիքային աշխատողների տեղերը զբաղեցնելու համար աշխատանքի են ընդունում մեծ թվով տեղացի բնակիչների և նրանց աշխատանքի են ուղարկում մայրընկերության՝ ուրիշ երկրներում գործող մասնաճյուղեր։ Ընկերությունների վարչությունները հատկապես մեծաքանակ բաժնեթղթեր, դիրքեր և պաշտոններ են տալիս պետական ապարատի աղդեցիկ անձանց, դրանով իսկ նրանց խրախուսում և մղում են ձեռնարկատիրական գործունեության։

Անձնակազմի «ինտերնացիոնալիզացման» նման տակտիկա է կիրառում, օրինակ, «Ցունիլեվեր» մոնոպոլիան։ Գանայում դրա մասնաճյուղի ղեկավարը ցեյլոնցի է, իսկ Սոլոմոնյան կղզիների բաժանմունքը գլխավորում է գանացի, ընկերության Լոնդոնի և Ռոտերդամի գլխավոր օֆիսներում աշխատում են աֆրիկյան և ասիական երկրներից եկած ծառայողներ։ Նույնը կարելի է ասել «էՍՍՈ» մոնոպոլիայի մասին։ Սրա Լոնդոնի գրասենյակի 300 ծառայողները ներ-

կայացնում են 17 երկիր։ Նման քաղաքականությունն ինչ խոսք, խառը ընկերություններում հանգեցնում է տեղական բուրժուազիայի մի մասի մոտ հակաիմպերիալիստական տրամադրությունների աստիճանական «հողմնահարմանը»։

Բայց եթե «երրորդ աշխարհի» երկրներում արդյունաբերություն զարգացնելու, դրանց ինդուստրացնելու խնդրում բուրժուական գաղափարախոսների, նեոգաղութարարների տեսակետները բաժանվում են, ապա նրանք, կարելի է ասել, միաբան են այդ երկրներում գիտություն ու տեխնիկա զարգացնելու հարցում։ Նրանց բացարձակ մեծամասնությունը վճռականորեն հանդես է գալիս «երրորդ աշխարհում» գիտության զարգացման դեմ, գտնում է, որ զարգացող երկրները մեկընդմիշտ պետք է հրաժարվեն գիտության զարգացման համար սեփական բազա ստեղծելու մտքից, այն պատճառաբանությամբ, թե ազգային գիտության զարգացումը չափազանց թանկ է նստում նրանց վրա։

Ելնելով հարցի նման դրվածքից, իմպերիալիստական մոնոպոլիաները զանազան մեթոդներով արգելակում են զարգացող երկրներում գիտական հաստատությունների ստեղծումը, գիտական հետազոտությունների ծավալումը։ Այլ խոսքով, նրանք դիմում են այսպես կոչված «տեխնոլոգիական գաղութակալության» մեթոդին։

Նեոգաղութարարներն ամեն ինչ անում են, որպեսզի զարգացող երկրներում գիտահետազոտական աշխատանքների համար անհրաժեշտ նյութական բազա չստեղծվի, որպեսզի ձեռնարկություններում և ուսումնական հաստատություններում չկազմակերպվեն լաբորատորիաներ, կոնստրուկտորական բյուրոներ և այլն։

Անգամ այն դեպքում, երբ արտասահմանյան կապիտալը զարգացող երկրներում տնօրինում է լաբորատորիաների լայն ցանց, ինչպես, օրինակ, Հնդկաստանում, մոնոպոլիաները խստագույնս պատենտավորում են տեխնոլոգիական նոր պրոցեսները։ Եթե այդ պրոցեսներն ստեղծվում են նույնիսկ տեղի գիտական ուժերի ջանքերով, ապա դրանք զարգացող երկրներին են վաճառվում արտասահմանյան վայելուտայով։

Զարգացող երկրների գիտական միտքն ամուր շրջանակներում պարփակելու համար արտասահմանյան մոնոպոլիաները դիմում են խտրականության քաղաքականության։ Պրակտիկ թեմաների գիտական մշակման պայմանագրեր կնքելիս նրանք այդ երկրների հետազոտողներին բաժին են թողնում զուտ կիրառական թեմաներ, որոնք ուղղված են տվյալ երկրի տնտեսության այս կամ այն ճյուղը կապիտալիստական մոնոպոլիաների պահանջներին առավելագույն չափով հարմարեցնելուն։

Համեմատաբար նպաստավոր պայմաններում են գտնվում զարգացող երկրների կառավարությունների կողմից ֆինանսավորվող լաբորատորիաներն ու ինստիտուտները, որոնք կատարում են պետական կազմակերպությունների պատվերները։ Բայց նույնիսկ Հնդկաստանում, որտեղ պետության դերը զգալի է գիտության մեջ, տեղի հետազոտական հիմնարկների գիտական աշխատանքների ընդամենը 10 տոկոսն է ներդրվում արտադրության ոլորտը։

Մոնոպոլիաներից շատերը մայր երկրում կատարվող գիտական հետազոտությունների արդյունքները հաղորդում են զարգացող երկրներին միայն այն դեպքում, եթե դա չի շոշափում իրենց կոմերցիոն շահերը։ Բայց քանի որ զարգացող երկրների շահերը չեն համընկնում օտարերկրյա մոնոպոլիաների շահերին, սրվում է այն խոր հակասությունը, որ կա «երրորդ աշխարհում» գիտական հետազոտությունների արդյունքներն արտադրության մեջ ներդնելու հնարավորությունների և դրանք պրակտիկայում օգտագործելու միջև։

«Տեխնոլոգիական գաղութատիրության» արտահայտություններից մեկը «երրորդ աշխարհի» երկրներում որակյալ գիտական ու տեխնիկական կադրերի պատրաստման ամեն կերպ արգելակումն է։ Այդ ուղղությամբ հատկապես բացասական դեր են խաղում «հին» մոնոպոլիաներից շատերը, որոնք գերազանցապես զբաղված են հանքային հանածոների արդյունահանմամբ ու արտահանությամբ։ Դրանք այն մոնոպոլիաներն են, որոնք դեռևս չեն կարողացել հրաժարվել գաղութային կողոպուտի տրադիցիոն մեթոդներից, չեն հաղթահարել այն հոգեբանական գործոնը, որ կապված է «հին բարի ժամանակների» անդառնալի կորստի հետ։ «Կյանքի ընթացքից ետ ընկած» նման մոնոպոլիստական ընկերություններից է, օրինակ, Մավրիտանիայում գործող ֆրան-

սիական «Միֆերմա» ընկերությունը, որը ոչ մի լուրջ միջոցառում չի ձեռնարկել ընկերության լաբորատորիաներում, տեխնոլոգիական ու կոնստրուկտորական բյուրոներում ընդգրկելու տեղական բնակչության ներկայացուցիչներին։

«Տեխնոլոգիական գաղութատիրության» ցայտուն օրինակ է «օգնության» անվան տակ էքսպերտների ու մասնագետների գործուղումը զարգացող երկրներ։ Նրանց թիվը գնալով աճում է. այն 1964 թվականի 86,3 հազարից 1968 թվականին բարձրացավ 109 հազարի։

«Երրորդ աշխարհում» տեխնիկական և վարչական կարևոր պաշտոններ զբաղեցնող օտարերկրյա մասնագետների թվի ավելացումը ուժեղացնում է արտասահմանյան կապիտալից զարգացող երկրների կախվածությունը։ Շատ հաճախ, հատկապես այն դեպքում, երբ զարգացող երկրների կառավարություններն իրականացնում են օտարերկրյա սեփականության ազգայնացում, իմպերիալիստական մոնոպոլիաները, նրանց արտադրությունը կազմալուծելու համար ետ են կանչում իրենց տեխնիկական անձնակազմին։

«Տեխնիկական գաղութատիրության» արտահայտություններից մեկն օտարերկրյա (իսկ երբեմն էլ ազգային) ընկերությունների կողմից տեղական գիտական և ինժեներատեխնիկական անձնակազմի նկատմամբ խտրականությունն է։ Տեղական մասնագետներին աշխատանքի են ընդունում մեծ դժվարություններով։ Դա է պատճառը, որ զարգացող շատ երկրներում առանց այն էլ ոչ մեծաքանակ ազգային կադրերը չեն կարողանում իրենց գիտելիքները կիրառել պրակտիկայում։ Աֆրիկյան մի շարք երկրներում տեղական գիտական ու տեխնիկական ուժերը մի քանի անգամ քիչ են վարձատրվում, քան օտարերկրյա մասնագետները։

Ըստ մասնագիտության աշխատանք գտնելու դժվարությունները, վճարման և աշխատանքի պայմանների մեջ բացահայտ խտրականությունը զարգացող երկրների մասնագետների զգալի մասին ստիպում են հայացքը դարձնել դեպի զարգացած կապիտալիստական երկրները։ Վերևում ասվեց, որ մասսայական արտահոսք է կատարվում զարգացող երկրներից դեպի զարգացած կապիտալիստական երկրները։ «Երրորդ աշխարհից» ԱՄՆ և Արևմտյան Եվրոպա սովորելու

մեկնած ուսանողների զգալի մասը ավարտելուց հետո չի վերադառնում հայրենիք։ Եվ դա այն դեպքում, երբ մոտավոր հաշվումներով, յուրաքանչյուր ուսանողի ուսուցումը զարգացող երկրներին նստում է մոտ 20 հազար դոլար։

Բրազիլացի պրոֆեսոր Լեյտե Լոպասը գրում է. «Երրորդ աշխարհի շրջանների զարգացման համար գիտության ու տեխնիկայի օգտագործումը չի կարող բավարարվել արտասահմանում մշակված ու ճանաչում գտած գիտական և տեխնիկական գիտելիքների պասսիվ ներմուծմամբ։ Անհրաժեշտ է ամեն կերպ խրախուսել գիտության և տեխնիկայի ծաղկումը հենց զարգացող երկրներում»։ ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր դիրեկտոր Ռենե Մայոյի կարծիքով «երրորդ աշխարհի» երկրներում «գիտությունը պետք է դադարի ներմուծման օբյեկտ լինելուց, այն պետք է հանդես գա որպես ներազգային երևույթ»։

Անդրադառնալով Աֆրիկայի մայրցամաքում գիտական հետազոտությունների ֆինանսավորման գործում օտարերկրյա կապիտալի խաղացած դերին, շվեդացի տնտեսագետ Մյուրդալը նշում է, որ սովորաբար այդ ֆինանսավորման ծավալն իր չափերով չնչին է լինում, որ լավագույն դեպքում այդ նպատակով ֆինանսավորման են դիմում միայն այն ընկերությունները, որոնք իրենց լիակատար վերահսկողության տակ են առնում ինչպես հետազոտությունների ընթացքը, այնպես էլ արդյունքները։

Զարգացող երկրներում ազգային գիտության ու տեխնիկայի զարգացման աննպատակահարմարության մասին նեոգաղութարարական կոնցեպցիան ժխտվում է թույլ զարգացած երկրների գիտնականների աշխատանքի արդյունքներով, տնտեսական քաղաքականության առանձին ակնհայտ հաջողություններով, քաղաքական գործիչների համոզիչ փաստարկներով ու վկայություններով։

Չնայած դանդաղ տեմպերին, զարգացող երկրները, այնուամենայնիվ, հաղորդակցվում են ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխությանը, ոչ միայն ենթարկվում են նրա ազդեցությանը, այլև (թեպետև համեստ չափերով) դառնում նրա մասնակիցները։ Կյանքը ակնհայտորեն ցույց տվեց, որ սեփական գիտության ու տեխնիկայի զարգացումը չափազանց կենսական է զարգացող երկրների համար։

13—1835

Ամենից առաջ, զարգացող երկրներից յուրաքանչյուրն ունի յուրահատուկ գիտական պրոբլեմներ, որոնք չեն մշակվում բարձր զարգացած երկրներում։ Երկրորդ, գիտատեխնիկական առաջադիմության ներմուծված մի շարք արդյունքներ, նախքան արտադրության մեջ ներդնելը, կարիք են զգում լրացուցիչ հետազոտությունների՝ տեղական պայմանները հաշվի առնելու, տեխնիկայի և տեխնոլոգիական պրոցեսների մեջ անհրաժեշտ փոփոխություններ մտցնելու նպատակով։ Իսկ նման խնդիր իրականացնելու համար երկիրը պետք է ունենա իր ազգային գիտատեխնիկական օրգանիզմը։ Երրորդ, ինչպես հայտնի է, ամեն մի երկրում բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության սիստեմի մակարդակը մեծապես պայմանավորված է ազգային գիտական հետազոտությունների վիճակով, գիտահետազոտական կենտրոնների հետ բարձրագույն ուսումնական հաստատությունների ունեցած կապերով, ինչպես նաև նրանով, թե ուսումնական աշխատանքը որքան հաջողությամբ է զուգակցվում գիտականի հետ։ Վերջապես, չորրորդ, զարգացող մի շարք երկրներ, ինչպես ասվեց, արդեն այսօր ի վիճակի են մի շարք ուղղություններով զարգացնել սեփական գիտական հետազոտությունները, որը թույլ կտա ոչ միայն բավարարել ներքին պահանջները, այլև աստիճանաբար միջազգային շուկա դուրս բերել այդ հետազոտությունների առանձին արդյունքներ։

Այսպիսով, ազգային գիտատեխնիկական պոտենցիալի ստեղծումը «երրորդ աշխարհի» երկրների տնտեսական հետամնացությունը վերացնելու, իմպերիալիզմի նեոգաղութակալական քաղաքականության դեմ հաջող պայքար մղելու արդյունավետ միջոցներից մեկն է։

70-ական թվականների սկզբից Արևմուտքի նեոգաղութատիրական քաղաքականության մեջ երևան եկան որոշ փոփոխություններ։ Ժամանակակից իրադրության մեջ բուրժուական առանձին գործիչներ սկսեցին քննադատաբար մոտենալ զարգացող երկրների տնտեսական աճը արգելակող քաղաքականությանը, առաջարկեցին կիրառել այնպիսի քաղաքականություն, որը որոշ չափով նպաստեր «երրորդ աշխարհի» տնտեսական զարգացման տեմպերի արագացմանը։ Նրանք հույս ունեն զարգացող երկրներում բուրժուական ռեֆորմատորության և տեղական ազգային բուրժուազիայի հետ ամուր դաշինք կնքելու միջոցով խուսափել սոցիալական նոր ցնցումներից։

«Երրորդ աշխարհի» նկատմամբ այս քաղաքականությունը ստացել է «նեոգաղութատիրության նոր ստրատեգիա» անվանումը։ Այն ենթադրում է նեոգաղութակալական ակցիաների մի ամբողջ նոր կոմպլեքսի մշակում ու կիրառում։ Նրա գլխավոր նպատակներից մեկն աշխատանքի միջազգային նոր բաժանման ստեղծումն է։

Գիտատեխնիկական հեղափոխության ծավալումն առաջ բերեց անհամապատասխանություն զարգացող երկրների՝ իմպերիալիզմի կողմից ստեղծված ու կոնսերվացված արտադրության ստրուկտուրայի և աշխատանքի ժամանակակից միջազգային բաժանման պահանջների միջև։ «Երրորդ աշխարհի» պրիմիտիվ տնտեսության տևական հետամնացությունը անօգտակար եղավ կապիտալի վերարտադրության համար։ Նեոգաղութատիրության նախկին ստրատեգիական կոնցեպցիան, որը բնորոշ է 50—60-ական թվականների համար, վերջնականապես մտավ փակուղի։

Միևնույն ժամանակ գաղութային սիստեմի քայքայումը կապիտալիզմի համաշխարհային տնտեսության մեջ առաջ բերեց սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմանների այնպիսի փոփոխություններ, որոնք ցուցադրեցին աշխատանքի միջազգային կապիտալիստական բաժանման ժամանակակից ստանդարտներին զարգացող երկրների հետամնաց տնտեսության լիակատար անհամապատասխանությունը։

Ահա թե ինչու վերջին մի քանի տարիներին իմպերիալիզմը վճռական քայլերի դիմեց հրաժարվելու աշխատանքի միջազգային բաժանման գաղութային սիստեմի պահպանման քաղաքականությունից։ Իսկ այդ սիստեմի պայմաններում զարգացող երկրները մնում են իմպերիալիստական այս կամ այն երկրի տնտեսության ագրարային-հումքային կցորդի վիճակում։ Այժմ նեոգաղութակալության շահերն այլ բան են թելադրում։ Դրանք պահանջում են, որ զարգացող երկրներն ընդգրկվեն աշխատանքի միջազգային բաժան-

ման նոր սիստեմի մեջ, որպես նրա ինտեգրացված մաս և սպասարկեն համաշխարհային կապիտալիստական ողջ սիստեմի տնտեսական կարիքները։

Նոր ստրատեգիայի իրականացմանն է ուղղված այսպես կոչված «հավասար պարտնյորության» կոնցեպցիան։

Նեոգաղութարարները փորձում են ապացուցել, թե կապիտալիստական զարգացած երկրների և «երրորդ աշխարհի» հարաբերությունները թևակոխել են միանդամայն նոր դարաշրջան՝ «պարտնյորության դարաշրջանը», երբ անխուսափելի է դարձել համաշխարհային կապիտալիստական տնտեսության շրջանակներում զարգացած կապիտալիզմի երկրների և զարգացող երկրների «տնտեսական փոխադարձ կախվածության ուժեղացումը, միմյանց փոխադարձաբար լրացնելու պահանջը»։

«Հավասար պարտնյորության» կոնցեպցիան ելնում է նրանից, որ աֆրո-ասիական և լատինաամերիկյան երկրների առաջադիմության գլխավոր ազդակը ոչ թե դրսից ցույց տրվող օգնությունն է, այլ նրանց սեփական ջանքերի մոբիլիզացումը։ Օգնությունը միայն կարող է լրացնել այդ ջանքերը, բայց ոչ փոխարինել դրանց։ Այն ելնում է նաև այն բանից, որ զարգացող երկրների բախտի հանդեպ պետք է հավասարաչափ պատասխանատվություն կրեն զարգացած կապիտալիզմի բոլոր երկրները։ Այստեղ պարզորոշ արտահայտվում է ԱՄՆ-ի ձգտումը՝ կրճատել թույլ զարգացած երկրներին ցույց տրվող իր օգնությունը՝ զարգացած կապիտալիզմի մյուս երկրների կողմից տրվող օգնության մեծացման հաշվին։ Ենթադրվում է այդ բանն իրականացնել միջազգային այնպիսի կազմակերպությունների միջոցով, ինչպիսիք են՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ), Եվրոպական տնտեսական համագործակցությունը (ԵՏՀ), Առևտրի և տարիֆների գլխավոր համաձայնությունը (ԱՏԳՀ), Ռեկոնստրուկցիայի և զարգացման միջազգային բանկը, (ՌԶՄԲ), Միջազգային վալյուտային ֆոնդը (ՄՎՖ) և այլն։ Ակտիվորեն մասնակցելով զարգացող երկրների նկատմամբ արևելյան տերությունների «նոր» ստրատեգիայի մշակմանը, այդ կազմակերպությունները երաշխավորում են համապատասխան միջոցառումներ

զարգացող երկրների տնտեսության երեք հիմնական մարզերում՝ արդյունաբերության մեջ, առևտրում, վարկային-ֆինանսական-վալյուտային բնագավառում։

Ճիշտ է, արևմտյան տերությունների նեոգաղութատիրական քաղաքականության կոորդինացմանը էականորեն խոչընդոտում է այն, որ գնալով ուժեղանում է նրանց սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությունը, ավելի ուժգնորեն են ընդհարվում իմպերիալիզմի երեք հիմնական կենտրոնների՝ ԱՄՆ-ի, Արևմտյան Եվրոպայի և Ճապոնիայի շահերը։ Բայց միջիմպերիալիստական մրցակցությունը, այնուամենայնիվ, ի վիճակի չէ խափանելու զարգացող երկրների նկատմամբ արևմտյան տերությունների միասնական քաղաքականության մշակումը և իրականացումը։

«Հավասար պարտնյորության» կոնցեպցիայի հեղինակները գտնում են, որ անհրաժեշտ է արևմտյան տերությունների և զարգացող երկրների միջև ստեղծել ոչ միայն միջճյուղային, այլև ներճյուղային մասնագիտացման ու կոոպերացման նոր սիստեմ։

Այդ դաղափարը պրակտիկորեն իրականացվում է «երրորդ աշխարհի» հիմնական շրջաններում արդյունաբերական կենտրոններ ստեղծելու միջոցով, որի նպատակն է՝ առաջավոր կապիտալիստական երկրների արդյունաբերության այն ճյուղերը, որոնք չեն պահանջում մեծ մասշտաբի որակյալ աշխատանք, այսինքն, որոնք անմիջականորեն կապված են հանածոների արդյունահանման, գյուղատնտեսական հումքի արտադրության և դրանց նախնական վերամշակման հետ, աստիճանաբար վերաբաշխել «երրորդ աշխարհի» երկրներում։ Ավելին, «հավասար պարտնյորության» կոնցեպցիայի կողմնակիցների մի մասը նույնիսկ գտնում է, որ «երրորդ աշխարհի» մի շարք երկրներում, որտեղ դա տնտեսապես շահավետ է, պետք է ձեռնամուխ լինել ատոմային էներգետիկայի, էլեկտրոնային սարքավորումների և նորագույն մի շարք արտադրությունների ստեղծմանը։ Բայց դա պետք է այնպես արվի, որպեսզի զարգացող երկրներում չստեղծվեն արտադրության լրիվ ցիկլով ձեռնարկություններ։ Տվյալ արտադրանքի արտադրության տեխնոլոգիական պրոցեսը պետք է այնպես կազմակերպվի,

որ նրա ավարտը կատարվի կապիտալիստական զարգացած երկրներում։ Այլ խոսքով, զարգացող երկրները նորից մնում են որպես համաշխարհային կապիտալիստական արտադրության կոնվեյերի զանազան օղակներ, որի տեխնոլոգիական առաջավոր և վճռական նշանակություն ունեցող մասերն առաջվա պես գործելու են իմպերիալիստական երկրներում։

Ինչ վերաբերում է զարգացած կապիտալիստական երկրներին, ապա դրանք պետք է մասնագիտանան միայն «տեխնոտար» և «գիտությունատար» ճյուղերում։ Նախատեսվում է դրանցում կոնտրոնացնել արտադրության առավել դինամիկ և հեռանկարային ճյուղերը, որոնք կարիք են զգում բարձրորակ բանվորական ուժի և կապիտալ ներդրումների։ Դրանք գլխավորապես այն ճյուղերն են, որոնք զբաղված են արտադրության միջոցների արտադրությամբ և իրենց զարգացման մակարդակով պայմանավորում են գիտատեխնիկական առաջադիմությունը։ Այս կերպ իմպերիալիստական բուրժուազիան հետապնդում է երկու նպատակ. նախ՝ առավելագույն չափով օգտագործել ազատվող որակյալ բանվորական ուժը, երկրորդ՝ կապիտալիստական զարգացած երկրներում արմատապես փոփոխել արտադրության կառուցվածքը այն հաշվով, որպեսզի աստիճանաբար վերացվեն արտադրության պակաս մրցակցունակ ճյուղերը, շեշտակի բարձրացվի արտադրության տնտեսական արդյունավետությունը։

Սահմանափակ մասշտաբի որակյալ աշխատանք պահանջող արտադրությունները «երրորդ աշխարհ» տեղափոխելը թելադրվում է նաև զարգացած երկրներում բնության պահպանության շահերով։ Իմպերիալիստական կառավարությունները և մոնոպոլիաները, ցանկալի չհամարելով վնասակար արտադրությունների կենտրոնացումը արևմտյան երկրներում, մտադիր են զարգացող երկրներ տեղափոխել առաջին հերթին այնպիսի հզորություններ, ինչպիսիք են՝ պողպատի, շուգունի և գունավոր մետաղների ձուլման գործարանները, պահածոների, թղթի և ցելյուլոզի արտադրությունը, նավթամթերքների վերամշակման ձեռնարկությունները և այլն, որոնք ոչ միայն բացասաբար են անդրադառնում

շրջապատող բնությանը, այլև պահանջում են հողային մեծ տարածություններ։ Բացի այդ, վնասակար արտադրությունների հետ կապված արդյունաբերական ձեռնարկություններում անհրաժեշտ է տեղադրել բազմազան թանկարժեք ու մաքրող սարքեր։ Միայն 1971—1975 թվականներին, օդի և ջրի մաքրման ձեռնարկություններում թափոնների վերացման համար ԱՄՆ-ում առնվազն ծախսվել է 105 միլիարդ դոլլար, իսկ եթե ուժի մեջ մտներ սենատի կողմից հավանության արժանացած Մասկիի օրինագիծը, ապա կծախսվեր 350 միլիարդ դոլլար։ Ինչպես նշում են մասնագետները, շրջապատող բնության պահպանման համար կատարած ծախսերը առաջիկա տարիներին ԱՄՆ-ին կստիպեն մեծ չափով կրճատել արտադրանքի շատ տեսակների արտադրությունը և կտրուկ իջեցնել դրանց արտահանումը։

Աշխատանքի միջազգային «նոր» բաժանման պլանի իրականացման գործում նեոգաղութակալության տեսաբանները առաջնակարգ դեր են հատկացնում զարգացող երկրների տնտեսության կենսականորեն կարևոր ոլորտներում արևմտյան կապիտալի դիրքերի հետագա ամրապնդմանը։ Արևմուտքի քաղաքականության նպատակն է՝ կապիտալի արագացված արտահանության շահերից ելնելով այդ երկրներում ստեղծել առավել բարենպաստ ինվեստիցիոն մթնոլորտ։ Եվ պատահական չէ, որ նրանք պահանջում են վերացնել զարգացող երկրներում արևմտյան մոնոպոլիաների գործունեության ամեն մի սահմանափակում, որը մեծապես կնպաստեր այդ երկրներում արևմտյան մոնոպոլիաների մասնաճյուղերի խիտ ցանցի ստեղծմանը։

Նեոգաղութատիրության նոր ստրատեգիայի մյուս կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ մեծ կարևորություն է տրվում «երրորդ աշխարհի» և կապիտալիստական զարգացած երկրների միջև առևտրական հարաբերությունների ընդլայնմանը։ Այժմ այլ կերպ է դրվում զարգացող երկրներից ապրանքների ներմուծման հարցը։ Իմպերիալիստական պետություններն այդ երկրներին ստիպում են ընդունել դեպի արտաքին շուկա կողմնորոշվող տնտեսություն ստեղծելու ու զարգացնելու անհրաժեշտությունը, նրանց առաջարկում են հրաժարվել այն կոնցեպցիաների մի մասից,

որոնք խարսխված են արտաքին շուկայից (ավելի ճիշտ՝ զարգացած կապիտալիստական երկրներից) միակողմանի կախվածության վրա։ Արտադրության մասնագիտացման ու կոոպերացման ծրագրվող սիստեմն ավելորդ ու աննպատակահարմար է դարձնում միջազգայնացված արտադրության նորմալ գործունեության համար անհրաժեշտ հումքի, կիսաֆաբրիկատների, հանգույցների և մասերի փոխադարձ մատակարարման ճանապարհին եղած արգելքները։ Դրանում մեծապես շահագրգռված են ոչ միայն կապիտալիստական զարգացած երկրները, այլև զարգացող մի շարք երկրներ։ Վերջիններս պահանջում են լիբերալացնել արտահանումը, որպեսզի հնարավորություն ունենան ավելի շատ ապրանքներ առաքել արևմտյան շուկաներ։ Նրանց կարծիքով էքսպորտային այդ ճյուղերն ի վիճակի են ամենակարճ ժամանակամիջոցում մոդեռնացնելու «երրորդ աշխարհի» տնտեսության կառուցվածքը, մեծապես արագացնելու զարգացող երկրների առաջընթացի տեմպերը։

Աշխատանքի միջազգային բաժանման նոր սիստեմի նպատակներին համապատասխան, նեոգաղութակալության «նոր ստրատեգիայի» պաշտպանները առաջարկում են զարգացող երկրներում վերացնել ագրարային-հումքային պրոտեկցիոնիզմն իր բոլոր տարատեսակություններով և իբրև դրա փոխհատուցում՝ զարգացած երկրներում հրաժարվել ապրանքների այն տեսակների արտադրության ընդլայնումից, որոնց մրցակցությանը չեն կարող դիմանալ զարգացող երկրներում արտադրվող համապատասխան արտադրատեսակները։ Նման միջոցառումները, ասում են նեոգաղութատիրության նոր ստրատեգիայի կողմնակիցները, զգալի փոփոխություններ կմտցնեն կապիտալիստական զարգացած երկրների տնտեսական կառուցվածքի մեջ, նպաստավոր պայմաններ կստեղծեն զարգացող երկրներից կատարվող արտահանման ճանապարհին եղած պրոտեկցիոնիստական արգելքներն աստիճանաբար նվազեցնելու և այնուհետև լիովին վերացնելու համար։

Պետք է ասել, սակայն, որ կապիտալիստական զարգացած երկրների և «երրորդ աշխարհի» երկրների միջև առևտրական հարաբերությունների հետագա զարգացման արգելքները վերացնելու ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումներն առայժմ մնում են միայն իբրև պլաններ։ Իրականում կապիտալիզմի ճգնաժամային ցնցումները, նրա վալյուտային սիստեմի տենդահարությունն անխուսափելիորեն տանում են դեպի իմպերիալիստական պետություններում պրոտեկցիոնիստական տենդենցների կտրուկ ուժեղացում։ Այս բանը շատ լավ են ըմբռնում զարգացող երկրների պետական շրջանները և գիտության մարդիկ։ Բրազիլական տնտեսագետ Ալֆրեդո Կրուզեյրոն նշում է, որ պրոտեկցիոնիստական քաղաքականությունից հրաժարվելու և «տնտեսական բաց ստրուկտուրաներ» ստեղծելու կոչերը, որ բուրժուական տնտեսագետներն ուղղում են զարգացող երկրներին, պրակտիկայում այլ բան չի նշանակում, քան արևմտյան տերությունների էքսպանսիոնիստական ձգտումների դեմ հանդիման այդ երկրների լիակատար զինաթափում։

«Երրորդ աշխարհի» տնտեսության աճի տեմպերի արագացումն ու նրա կառուցվածքի մոդեռնացումը նեոգաղութատիրության նոր ստրատեգիայի կողմից դիտվում են ոչ թե որպես զարգացող երկրների առաջնահերթ խնդիր, այլ որպես կապիտալիզմի համաշխարհային սիստեմի երկու խումբ երկրների միասնական ջանքերի արդյունք։ Գիտակցաբար քողարկվում է այն փաստը, որ այդ երկու խումբ երկրների միջև վիթխարի անհավասարության պայմաններում «հավասար պարտնյորությունը» ոչ այլ ինչ է, եթե ոչ Արևմուտքի նեոգաղութակալական էքսպանսիայի ուժեղացման չափազանց արդյունավետ միջոց։

Այսքանից հետո պարզ է դառնում, որ «հավասար պարտնյորության» կոնցեպցիան մի հիմնական խնդիր ունի, այն է՝ հիմնավորել և արդարացնել զարգացող երկրների ներքին գործերին իմպերիալիստական տերությունների նոր միջամտությունը, նրանց այն ջանքերը, որոնք ուղղված են այդ երկրների հետագա զարգացման վրա լիակատար վերահսկողություն հաստատելու նպատակին։

Իմպերիալիստական շրջանների նեոգաղութատիրական դեղատոմսերով «երրորդ աշխարհի» երկրների ինդուստրացման, «հավասար պարտնյորության» և նման այլ կոնցեպցիաներին զարգացող երկրների առաջադիմական հասարակայ-

նությունը և Արևմուտքի դեմոկրատական գիտական շրջանները հակադրում են հակաիմպերիալիստական ալտերնատիվը՝ ազգային անկախ զարգացման կոնցեպցիան։

«Երրորդ աշխարհի» երկրների անկախ զարգացման կոնցեպցիայի առանձին կողմեր մանրամասն մշակվել են Գ. Մյուրդալի, Ռ. Պրեբիշի, Գ. Զինգերի, Դ. Բխագվատի, Ա. Դալի և Արևմուտքի ուրիշ հայտնի տնտեսագետների աշխատություններում։ Նրանց ուսումնասիրությունները ներթափանցված են տագնապով զարգացող երկրների բախտի, նրանց սոցիալ-տնտեսական առաջադիմության նկատմամբ։ Հատկապես մեծ նշանակություն ունեն արգենտինական առաջադեմ տնտեսագետ Ռ. Պրեբիշի և շվեդացի տնտեսագետ Գ. Մյուրդալի աշխատությունները, որոնցում հանգամանորեն վերլուծված են այսպես կոչված «ծայրամասային էկոնոմիկայի» վիճակը, նրա զարգացման հեռանկարները։

Փորձելով բացահայտել «երրորդ աշխարհի» երկրների տնտեսական հետամնացության, նրանց թշվառության իսկական պատճառները, Պրեբիշը և Մյուրդալը ստեղծված վիճակը իրավացիորեն համարում են կախյալ «ծայրամասի», այսինքն՝ զարգացող աշխարհի նկատմամբ իմպերիալիստական «կենտրոնների» գիշատիչ քաղաքականության հետևանք։ Իրենց եզրակացություններում նրանք առաջ են քաշում համաշխարհային շուկայում «երրորդ աշխարհի» երկրների կախյալ, անիրավահավասար վիճակը վերացնելու պահանջը, հրամայական են համարում նրանց տնտեսական ստրուկտուրայի դիվերսիֆիկացումն ու մոդեռնացումը, առաջարկում են մեծապես աջակցել նրանց հետ միջազգային տնտեսական և գիտատեխնիկական կապերի ամրապնդմանը, ամեն կերպ նպաստել գաղութատիրության լուծը թոթափած ժողովուրդների սոցիալ-տնտեսական առաջադիմության արագացմանը[1]։

Ռ. Պրեբիշը և նրա առաջադիմական հայացքները բաժանող արտասահմանյան տնտեսագետները հանդես են գալիս «հավասար պարտնյորության» կոնցեպցիայի և նրա ուժով

[1] Տե՛ս Г. Мюрдаль. Современные проблемы «третьего мира», М., «Прогресс», 1972.

զարգացող երկրների բուրժուական շրջանների միջավայրում ծնունդ առած «պերիֆերային կապիտալիզմի» տեսության դեմ։

Նրանք իրավացիորեն գտնում են, որ զարգացող երկրների շահերը պահանջում են ներքին ու արտաքին շուկաների համար աշխատող ճյուղերի օպտիմալ հարաբերակցության ստեղծում՝ հօգուտ արտադրական ստրուկտուրայի որակական փոփոխության, հօգուտ տնտեսական իսկական անկախության։ Իսկ նման անկախությունը հնարավոր է միայն զարգացման որոշակի աստիճանի հասած աշխատանքի հասարակական բաժանման պայմաններում։

Արևմուտքի առաջադեմ տնտեսագետների այս մտքերը լայն արձագանք են գտնում աֆրո-ասիական և լատինաամերիկյան երկրների պետական, հասարակական-քաղաքական և գիտական շրջաններում։ Նրանք իրավացիորեն գտնում են, որ իրենց երկրները պետք է գնան առաջավոր գիտության ու տեխնիկայի վրա խարսխված արտադրության տեխնոլոգիական լրիվ ցիկլերի ստեղծման ճանապարհով։ Ըստ որում, նկատելի է, որ վերջին շրջանում նրանք հատկապես շեշտը դնում են տնտեսության առաջատար ճյուղերի՝ էլեկտրոնիկայի, քիմիայի, ճշգրիտ մեքենաշինության վրա, որոնք թույլատրում են կազմակերպել արտադրության ժամանակակից միջոցների թողարկումը։

Զարգացող երկրների մեծ մասի առաջադիմական շրջանների համար ավելի ու ավելի ակնհայտ է դառնում, որ արագացած զարգացման միակ ռեալ հիմքը հավասարության ու փոխադարձ շահավետության սկզբունքների վրա խարսխված միջազգային տնտեսական փոխշահավետ համագործակցությունն է։

Այս խնդիրների իրականացումը, անշուշտ, ենթադրում է «երրորդ աշխարհի» երկրների անդիջում հակաիմպերիալիստական պայքարը։ Զարգացող աշխարհի պետական ու հասարակական շրջանները գնալով ավելի են համոզվում, որ իրենց հաջողության գրավականներից մեկը ուժերի միավորումն է։ Իբրև այդ մտահոգության ամիջական ծնունդ, «երրորդ աշխարհում» առաջ են եկել ռեգիոնալ մի շարք կազմակերպություններ։ Զարգացող երկրների ուժերի միա-

վորման նպատակն են հետապնդում, օրինակ, Աֆրիկյան միասնության կազմակերպությունը, 1968 թվականին ստեղծված Հատուկ լատինաամերիկյան կոորդինացիոն հանձնաժողովը, որը հակադրված է ամերիկյան իմպերիալիստների տնտեսական «նոր» էքսպանսիային և նրանց գործիք հանդիսացող լատինաամերիկյան պետությունների կազմակերպությանը։ Հարավարևելյան Ասիայում և Հեռավոր արևելքում գնալով ընդլայնվում է հակաիմպերիալիստական պայքարի հիմքի վրա տնտեսական համախմբման և «Ասիական բլոկի» ստեղծման համար 60-ական թվականների վերջերից սկսած շարժումը։

Ինչ խոսք, հակաիմպերիալիստական պայքարում զարգացող երկրների նվաճումներն էլ ավելի զգալի կլինեին, եթե նրանք իմպերիալիստական տերությունների հետ իրենց հարաբերություններում հանդես բերեին ավելի մեծ հետևողականություն ու վճռականություն։ Այդ պայքարի հաջող ելքի վրա խիստ բացասաբար է անդրադառնում այն, որ զարգացող որոշ երկրներ նախկինի նման տարվում են այն պատրանքներով, թե համաշխարհային շուկայում կարող են իրենց դրությունը բարելավել ոչ թե երկարատև ու համառ պայքարով, այլ արևմտյան տերությունների հետ կոմպրոմիսների ճանապարհով, «բարի» հարաբերությունները չփչացնելու միջոցով։

Բայց ընդհանուր առմամբ, «երրորդ աշխարհում» գնալով ավելի ու ավելի բարձր է հնչում իմպերիալիզմի նեոգաղութատիրական քաղաքականության դեմ պայքարն ուժեղացնելու կոչը։ Այդ տեսակետից կարևոր է այն, որ զարգացող երկրների մի մեծ խումբ ընտրել է ոչ կապիտալիստական զարգացման ուղի։ Այդ ուղին, ինչպես նշված է կոմունիստական ու բանվորական կուսակցությունների 1969 թ. խորհրդակցության փաստաթղթի մեջ, «ապահովում է գաղութային անցյալից ժառանգություն մնացած հետամնացությունը վերացնելու և սոցիալիստական զարգացման անցնելու համար պայմանների ստեղծման հնարավորությունը»[1]։ Այդ երկրներում անցկացվում են սոցիալ-տնտեսական կարևոր վերափոխումներ, իսկ պետական պլանավորումը հզոր ներգործություն է ունենում տնտեսության զարգացման վրա։

Զարգացման ոչ կապիտալիստական ուղին հնարավորություն է տալիս մոբիլիզացնել ֆինանսական միջոցները, նյութական ու մարդկային ռեսուրսները, հասարակության հեղափոխական վերափոխման դրոշի տակ համախմբել առաջադիմական ուժերին, նրանց գործունեությունն ուղղել տնտեսական և սոցիալական առաջադիմության նպատակին։

Զարգացման ոչ կապիտալիստական ուղին, իհարկե, հեշտ ու հիվանդագին չէ։ Դեպի առաջ կատարվող ամեն մի շարժում կապված է որոշակի դժվարությունների հետ, որոնք խորանում են այն պատճառով, որ նեոգաղութարարներն ամեն կերպ արգելակում են հեղափոխական վերափոխումների ընթացքը, բոլոր միջոցներն օգտագործում են, որպեսզի տապալեն առաջադիմական ռեժիմները։ Նման պայմաններում, ինչ խոսք, սոցիալ-տնտեսական զարգացման արմատական պրոբլեմները միայն կարող են լուծվել դասակարգային սուր պայքարով։

Զարգացման ոչ կապիտալիստական ուղին կարող է հեղափոխական վերափոխումների ռեալ միջոց դառնալ միայն այն դեպքում, եթե նրա հիմքում ընկած տեսական կոնցեպցիան չի հակադրվում գ'տական սոցիալիզմին, եթե զարգացող տվյալ երկիրը սերտ կապեր է հաստատում սոցիալիստական պետությունների հետ։ Այդպիսիք են «երրորդ աշխարհի» այն երկրները, որոնք իրենց հեղափոխական-դեմոկրատական ռեժիմներին համապատասխան ընտրել են սոցիալիստական կողմնորոշում։ Նման ուղու ընտրությունն ամենավճռական նշանակություն է ստանում, քանի որ, վերջին հաշվով, դրա հետ է կապված միլիոնավոր մարդկանց բախտը, զարգացող երկրների ապագան։ Օրինակ, աֆրիկյան մայրցամաքում սոցիալիստական կողմնորոշում ունեցող երկրներից են Ալժիրը, Լիվանը, Անգոլան, Եթովպիան, Գվինեան, Տանզանիան, Կոնգոն (Բրազավիլ), որոնց կառավարությունները մայրցամաքում և նրա սահմաններից դուրս հանդիսանում են հակաիմպերիալիստական շատ գործողությունների նախաձեռնողներ։ Հենց այդ երկրներն են, որ

[1] «Международное совещание коммунистических и рабочих партий», М., 1969, изд.-во «Мир и социализм», Прага, 1969, стр. 30.

առավել մեծ հաջողություններ են ձեռք բերել հասարակական-քաղաքական կյանքի, տնտեսության և պետական ապարատի ապագաղութացման գործում։ Այս երկրների կառավարություններն ու ժողովուրդները սեփական փորձով համոզվել են, որ իմպերիալիզմի դեմ, տնտեսական ու կուլտուրական առաջընթացի համար դժվարին պայքարում իրենց անշահախնդիր ու անկեղծ բարեկամները և փաստական հովանավորները Սովետական Միությունը, սոցիալիստական համագործակցության երկրներն են։ Աֆրո-ասիական և սոցիալիստական երկրների միասնական գործողությունների շնորհիվ էր, որ ՄԱԿ-ը վճռականապես դատապարտեց գաղութատիրությունը, այն դիտելով որպես միջազգային հանցագործություն անցյալում և ներկայումս։ Սոցիալիստական համագործակցության երկրները և սոցիալիստական կողմնորոշում ունեցող պետություններն ունեն բազմաթիվ ընդհանուր շահեր ու նպատակներ, ընդհանուր թշնամի՝ միջազգային իմպերիալիզմը։ Նրանք սոցիալ-տնտեսական արմատական վերափոխումների մեջ են տեսնում իրենց հետագա առաջընթացի գրավականը։ Սովետական երկրի նախկինում հետամնաց ազգային ծայրամասերում կատարված սոցիալ-տնտեսական վիթխարի վերափոխումները լավագույն օրինակ են հանդիսանում սոցիալիստական կողմնորոշում ընտրած աֆրո-ասիական և լատինաամերիկյան երկրների համար։

Վերցնենք, օրինակ, Սովետական Ուզբեկստանը, որը մինչև սովետական կարգերը խարխափում էր միջնադարյան հետամնացության մեջ, ոչնչով չէր տարբերվում Ասիայի և Աֆրիկայի շատ երկրներից, որոնք ունեն բնական հարստություններ, բայց շարունակում են մնալ աղքատ. հետամնաց։ Այժմ Ուզբեկստանը տարեկան արտադրում է ավելի քան 5 միլիոն տոննա բամբակի հումք (ՍՍՀՄ բամբակի արտադրության մոտ 75 տոկոսը), 16 միլիարդ կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա, 30 միլիարդ խորանարդ մետր բնական գազ։ Վիթխարի զարգացում են ապրել ուզբեկ ժողովրդի գիտությունն ու կուլտուրան։

Զարգացող երկրների հետ համագործակցության ընդլայնումը, նրանց ցույց տրվող անշահախնդիր օգնությունը ՍՍՀՄ-ի և սոցիալիստական համագործակցության երկրների արտաքին քաղաքականության օրգանական մասն է։ Տնտեսական փոխօգնության խորհրդի (ՏՓԽ) երկրները 1975 թվականին տնտեսական և տեխնիկական օգնություն էին ցույց տալիս 66 զարգացող երկրի։ Նույն տարում միայն ՍՍՀՄ-ը տնտեսական և տեխնիկական համագործակցության պայմանագրեր ուներ Ասիայի և Աֆրիկայի 40 երկրի հետ։ 1955—1972 թթ. ՏՓԽ երկրների և զարգացող երկրների միջև ապրանքաշրջանառությունն աճել է ավելի քան 6 անգամ (900 միլիոն ռուբլուց հասել է 5,7 միլիարդ ռուբլու)։ Սովետական կողմից զարգացող երկրներին տրված վարկերի ընդհանուր գումարը 1973 թ. կազմել է 5 միլիարդ ռուբլի։ 1953—1973 թվականներին այդ երկրներում ՍՍՀՄ-ի աջակցությամբ կառուցվել ու շահագործման են հանձնվել մոտ 2000 արդյունաբերական ձեռնարկություններ ու այլ օբյեկտներ։ Սովետական Միությունը զարգացող երկրներին աջակցում է ըստ էության տնտեսության բոլոր ճյուղերն ընդգրկող շուրջ 800 խոշոր օբյեկտների շինարարության գործում։ Դրանք արդյունաբերական ձեռնարկություններ են, էլեկտրակայաններ, ոռոգման սիստեմներ, գյուղատնտեսական ֆերմաներ և մեքենատրակտորային կայաններ, ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհներ։ Եվրոպական սոցիալիստական երկրների մասնակցությամբ Հնդկաստանում, Շրի-Լանկայում, Կամպուչիայում, Պակիստանում և Նեպալում կառուցվել է ավելի քան 30 էլեկտրակայան։ Չեխոսլովակիայի և Լեհաստանի աջակցությամբ Հնդկաստանում կառուցվել են տարեկան 10 հազար հաստոցի արտադրական հզորությամբ գործարաններ և այլն։

Սոցիալիստական երկրները հատկապես մեծ օգնություն են ցույց տալիս ազգային կադրերի պատրաստման գործում։

Զարգացող երկրներում ազգային կադրերի պատրաստումը, դրանցում մտավորականության ձևավորումը այժմ գաղափարական պայքարի կարևորագույն բնագավառներից մեկն է դարձել։ Մասնագետների, ընդհանրապես ինտելիգենցիայի քաղաքական կողմնորոշումից, նրանց գաղափարական համոզվածությունից շատ է կախված, թե առաջընթացի ինչպիսի ուղի կընտրեն զարգացող երկրները։

Կադրերի պատրաստման բնագավառում զարգացող եր-

կրներին ՍՍՀՄ-ի օգնությունը բազմաբնույթ է և իրականացվում է զանազան ուղղություններով։

Սովետական Միության աջակցությամբ զարգացող երկրներում ստեղծվել է 23 բարձրագույն և միջնակարգ ուսումնական հաստատություն, որ նախատեսված է 52 մասնագիտությամբ 17 հազար ուսանողի ուսուցման համար։ Դրանցից են Բոմբեյի (Հնդկաստան) տեխնոլոգիական ինստիտուտը, Կոնակրիի (Գվինեա) պոլիտեխնիկական ինստիտուտը, տեխնիկական ինստիտուտը Թունիսում, պոլիտեխնիկական ինստիտուտը Եթովպիայում, ավտոմոբիլային-խճուղային տեխնիկումն Աֆղանստանում, բարձրագույն ադմինիստրատիվ դպրոցը Մալիում և այլն։ Այդ ուսումնական հաստատությունները կարևոր դեր են խաղում որակյալ կադրերի պատրաստման գործում և վայելում են մեծ ժողովրդականություն։ Սովետական Միությունը զարգացող երկրներում շարունակում է բարձրագույն և միջնակարգ ուսումնական հաստատությունների շինարարությունը։

Զարգացող շատ երկրներում ազգային կադրերի պատրաստման գործում կարևոր դեր է պատկանում սովետական դասախոսներին, որոնք մեծ հարգանք են վայելում գիտադասախոսական անձնակազմի և ուսանողների շրջանում։ Զարգացող երկրների ներկայացուցիչները բազմիցս նշել են, որ սովետական մասնագետներն ունեն բարձր որակավորում, ամենայն պատասխանատվությամբ են վերաբերվում իրենց գործին, որ իրենց պատրաստությամբ ու բարոյական նկարագրով նրանք անհամեմատ բարձր են կանգնած այն մասնագետներից, որոնք դալիս են առաջադիմյալ երկրներից։

Զարգացող երկրներում մեծ հետաքրքրություն կա բարձրագույն, միջնակարգ մասնագիտական, ինչպես նաև ընդհանուր կրթության սովետական սիստեմի նկատմամբ։ Այդ երկրների կառավարությունների խնդրանքով սովետական մասնագետները նրանց օգնում են ստեղծելու համար որակյալ կադրերի պատրաստման սիստեմ, կամ բարելավելու եղած սիստեմը։ Այսպես, Հնդկաստանում սովետական մասնագետներն ակտիվ մասնակցություն են ունեցել այն միջոցառումների մշակմանը, որոնք ուղղված են երկրում բարձրագույն և միջնակարգ տեխնիկական կրթության բարելավմանը։ Այդ միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա առավել հետամնաց շրջաններում բարձրացնելու բնակչության կրթական մակարդակը։

Զարգացող երկրների համար կարևոր նշանակություն ունի նաև որակյալ բանվորական կադրերի և տեխնիկական անձնակազմի պատրաստումը։

Որակյալ բանվորների պատրաստման բնագավառում զարգացող շատ երկրներ լայնորեն օգտագործում են պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթության սովետական փորձը։ Սովետական Միության աջակցությամբ մի շարք երկրներում ստեղծված են և հաջողությամբ գործում են բանվորների պրոֆեսիոնալ-տեխնիկական պատրաստման պետական ուսումնական հաստատություններ։ Սովետական մասնագետները՝ դասախոսները, արտադրական ուսուցման վարպետները, հրահանգիչներն ակտիվ մասնակցություն են ունենում այդ երկրներում պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսուցման պրոցեսի կազմակերպմանը, դրանով իսկ կարևոր դեր են խաղում ազգային բանվոր դասակարգի ձևավորման գործում։

Բանվորական որակյալ կադրերի և տեխնիկական անձնակազմի պատրաստման ուղղությամբ մեծ աշխատանք են կատարում ուսումնական այն կենտրոնները, որոնք ստեղծվում են Սովետական Միության աջակցությամբ կառուցվող ձեռնարկություններում և այլ օբյեկտներում։ Օրինակ, Հալեպում (Սիրիա) ստեղծվեց ուսումնական կենտրոն ՍՍՀՄ-ի օգնությամբ Եփրատ գետի վրա կառուցվող հիդրոտեխնիկական կոմպլեքսին շինարար բանվորներ տրամադրելու համար։ Կարճ ժամկետում այդ կենտրոնը էքսկավատորավարների, վարորդների, մեխանիկների, զոդողների անհրաժեշտ թվով սիրիացի կադրերով ապահովեց կարևորագույն կառույցը։ Իրաքում Սովետական Միության աջակցությամբ կառուցված բամբակագործական խոշոր կոմբինատում ստեղծված հատուկ ուսումնական բաժինը բանվորական կադրեր է տալիս կոմբինատի մանվածքային, գործվածքային և այլ արտադրամասերի։

Սովետական մասնագետները բանվորների և տեխնիկական անձնակազմի տեղական կադրերի պատրաստումն իրա-

կանացնում են նաև անմիջականորեն ձեռնարկությունների կառուցման ընթացքում և այլ աշխատանքների կատարման ժամանակ։ Նրանք առաջին անգամ զարգացող երկրներում կիրառել են տեղական բանվորների և մասնագետների անհատական ուսուցման մեթոդը՝ անմիջականորեն ձեռնարկությունների և օբյեկտների շինարարական հրապարակներում։ Նման մեթոդով ուսուցումը կատարվում է հաստոցի կամ դոմնային վառարանի մոտ, ղեկավարման պուլտի ետևում, գծագրային տախտակի առջև և այլն։ Այդ մեթոդը, օրինակ, զգալի չափով նպաստել է, որպեսզի տեղական կադրերով ապահովվի Բհիլայի մետալուրգիական կոմբինատը։ Բրիգադային-անհատական ուսուցման մեթոդով այստեղ պատրաստվել է ավելի քան 10 հազար հնդիկ բանվոր ու մասնագետ։ Բհիլայի մետալուրգիական կոմբինատը լավ բազա է դարձել Հնդկաստանի մի ուրիշ՝ Բոկարոյի մետալուրգիական գործարանի համար կադրեր պատրաստելու տեսակետից։ Նման մեթոդով շատ իրանցի մասնագետներ են պատրաստվել ՍՍՀՄ-ի աջակցությամբ կառուցված Իսֆահանի մետալուրգիական գործարանում։ Աֆղանստանում միայն Ջելալաբադի ոռոգման կոմպլեքսի շինարարության ընթացքում սովետական մասնագետները պատրաստել են մոտ 12 հազար աֆղան բանվորներ և միջին տեխնիկական անձնակազմ։

Չափազանց կարևոր նշանակություն ունի ՍՍՀՄ-ի բուհեր և ուսումնական այլ հաստատություններ գործուղած երիտասարդների ուսուցումը, որոնք կրթություն ստանալուց հետո մեկնում են իրենց երկրները։ 1956 թվականին Ասիայի և Աֆրիկայի մի շարք երկրներից սովետական բուհերում և տեխնիկումներում սովորելու եկավ ուսանողների առաջին խումբը, թվով 56 մարդ։ 1971/1972 ուսումնական տարում Սովետական Միության բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորում էր Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի 101 երկրից եկած մոտ 14 հազար ուսանող։ Սովետական ուսումնական հաստատություններն ավարտածները վերադառնալով հայրենիք իրենց դրսևորում են որպես բարձրորակ մասնագետներ, հայրենի երկրի շահերի համար պայքարի ակտիվ մարտիկներ։

Զարգացող երկրների համար Սովետական Միությունում կադրեր են պատրաստվում նաև արտադրական-տեխնիկական ուսուցման միջոցով՝ ձեռնարկություններում, նախագծային և գիտահետազոտական ինստիտուտներում, սովխոզներում, պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարաններում։ 1972 թվականին զարգացող երկրների քաղաքացիների արտադրական-տեխնիկական ուսուցում էր կազմակերպված ավելի քան 100 սովետական ձեռնարկություններում։

Զարգացող երկրների հետ ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների համագործակցությունը գնալով ձեռք է բերում ամուր ձևավորված տնտեսական կապերի բնույթ։ Պատմությունը չի իմանում բազմադարյա հետամնացության հաղթահարման համար պայքարում ժողովուրդների անշահախնդիր օգնության նման ուրիշ օրինակ։

Ինչպես և պետք էր սպասել, իմպերիալիստական պետությունները բազմաթիվ փորձեր են անում խափանելու «երրորդ աշխարհի» և սոցիալիստական երկրների համագործակցությունը։ Բուրժուական գաղափարախոսներից ոմանք գրտնում են, թե սոցիալիստական աշխարհի և զարգացող երկրների միջև տնտեսական հարաբերությունների ընդլայնումը օբյեկտիվ հիմք չունի, մյուսները պրոպագանդում են այն կեղծիքը, թե այդ համագործակցությունից սոցիալիստական երկրները միակողմանի օգուտներ են քաղում, թե «տնտեսական ներխուժման», «կոմունիստական էքսպանսիայի» միջոցով նրանք ձգտում են փոխարինել գաղութարարներին, լրացնել այն դատարկությունը, որ առաջացել է նրանց հեռանալուց հետո։ Վերջին շրջանում իմպերիալիստներն իրենց քայքայիչ գործունեությունն ուղղում են հատկապես զարգացող երկրների համար ազգային կադրեր պատրաստելու սովետական սիստեմի վարկաբեկմանը։ Այդ նպատակով առանձնահատուկ աշխատանք է տարվում ՍՍՀՄ-ում ուսում ստացած և իրենց երկրներ վերադարձած մասնագետների, ինչպես նաև արձակուրդները հայրենիքում անցկացնող ուսանողների հետ։ Բոլոր միջոցները ձեռնարկվում են նրանց մոտ բորբոքելու հակասովետական տրամադրություններ։

Այս գործում իմպերիալիստական շրջանները աջակցում են կապիտալիստական ուղի ընտրած զարգացող առանձին երկրների կառավարություններ, որոնց վրա հատկապես ուժեղ է նեոգաղութարարների ազդեցությունը։ Նրանք հակված են այն տեսակետին, թե «երրորդ աշխարհի» տնտեսական, սոցիալական ու կուլտուրական հետամնացության մեղքը հավասարապես ընկնում է ինչպես զարգացած կապիտալիստական երկրների, այնպես էլ սոցիալիստական երկրների վրա։ Նման հարցադրումը հիմնված է աղքատ Հարավը հարուստ Հյուսիսին հակադրելու արատավոր տեսության վրա։ Պատահական չէ, որ ելնելով սխալ պատկերացումից, այդ երկրների կառավարող շրջանները նույնպես բազմաթիվ խոչընդոտներ են հարուցում եղբայրական կուսակցությունների և առաջադիմական կազմակերպությունների կողմից ՍՍՀՄ-ում սովորելու համար երաշխավորված անձանց առջև։ Դա, իհարկե, անհետևանք չի անցնում։ ՍՍՀՄ-ում սովորող արտասահմանյան ուսանողների շրջանում, ամենից առաջ նրանց սոցիալական կազմի բազմատարրության պատճառով, նկատելի են քաղաքական, գաղափարական, էթնիկական և կրոնական բնույթի զանազան տարաձայնություններ ու հակասություններ, նրանց շրջանում դրսևորվում է նացիոնալիզմի, տրայբալիզմի, իսկ երբեմն էլ ռասայական և շովինիստական գաղափարախոսության զգալի ազդեցությունը։ Դա հասկանալի է, որովհետև Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրներից ՍՍՀՄ եկած սովորող երիտասարդությունը սովետական իրականության մասին տեղեկությունները տարիներ ի վեր քաղել և շարունակում է քաղել բուրժուական աղբյուրներից։

Այս բացասական մոմենտները չեն կարող, սակայն, խոչընդոտել ՍՍՀՄ-ի և սոցիալիստական համագործակցության մյուս երկրների հետ «երրորդ աշխարհի» երկրների բազմակողմանի համագործակցությանը, որը գնալով դառնում է այդ երկրների առաջընթացի կարևոր ազդակներից մեկը։ Ճշմարտությունն ի վերջո իր համար ուղի է հարթում։ «Երրորդ աշխարհի» նկատմամբ սոցիալիստական երկրների և իմպերիալիստական տերությունների քաղաքականության նույնացումը, որի նպատակն է սոցիալիզմին վերագրել այն,

ինչ հատուկ է իմպերիալիզմին, վերջին հաշվով, ձախողման է մատնվում։ Անհնարին է աչքաթող անել կամ քողարկել զարգացող երկրների հետ հարաբերություններում կապիտալիստական և սոցիալիստական երկրների միջև եղած սկզբունքային տարբերությունները։ Պարզ ճշմարտություն է, որ հենց իմպերիալիստական տերություններն են, որ անցյալի իրենց գաղութատիրական քաղաքականությամբ պատասխանատվություն են կրում «երրորդ աշխարհի» հետամնացության ու աղքատության համար։ Ինչ վերաբերում է ՍՍՀՄ-ին և սոցիալիստական մյուս երկրներին, ապա նրանք անցյալում երբեք չեն մասնակցել, այժմ էլ չեն մասնակցում Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի երկրների շահագործմանը։ Նրանք շահագրգռված չեն այդ երկրներում առավելագույն շահույթներ ստանալու մեջ։ Դա բնական է, որովհետև սոցիալիստական երկրներում չկան սոցիալ-քաղաքական այնպիսի ուժեր, որոնք շահագրգռված լինեն հարստահարելու այլ ժողովուրդների, չկան կապիտալիստներ ու մոնոպոլիաներ։ «Երրորդ աշխարհին» սոցիալիստական երկրների օգնությունն այդ երկրների աշխատավորների ըստեղծած նյութական հարստությունների մի մասն է, որ նրանք առանց շահախնդրության տրամադրում են գաղութային տիրապետությունից ազատագրված ժողովուրդներին՝ նրանց հանդեպ կատարելով իրենց ինտերնացիոնալ պարտքը։

Անդառնալիորեն պատմության գիրկն են անցել այն ժամանակները, երբ իմպերիալիստները, բուրժուական տեսաբանները Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի ժողովուրդներին դիտում էին որպես պատմության պասսիվ օբյեկտների։ Այդ ժողովուրդներն այժմ պատմության ակտիվ կերտողներ են, իրենց երկրների, իրենց բախտի տերը, որոնք ձգտում են ազգային վերածնության ու սոցիալական լիակատար ազատագրության։ Այդ վերածնունդը և ազատագրությունն անխուսափելի են, դա պատմության կամքն է։

«ՆԵՈԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ» ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԵՐԸ

Հասարակական-քաղաքական երկու հակադիր սիստեմների՝ կապիտալիզմի և սոցիալիզմի միջև ընթացող գաղափարական սուր պայքարի, միջազգային ասպարեզում տեղի ունեցող լուրջ տեղաշարժերի, սոցիալիզմի համաշխարհային սիստեմի անընդհատ հզորացման պայմաններում իմպերիալիստական բուրժուազիան զորահավաքի ենթարկեց իր տիրապետությունը ջատագովող բոլոր մտավոր ուժերը, կատարելագործեց գաղափարական պայքարի զենքերը։ Ելնելով նոր իրադրությունից, նա յուրաքանչյուր կոնկրետ դեպքում առավելություն տվեց այս կամ այն տեսությանը, սկսած ամենառեակցիոն, սևահարյուրակային դոկտրինաներից, մինչև բուրժուական լիբերալիզմից ծնունդ առած գաղափարական կոնցեպցիաները[1]։

50-ական թվականների վերջերից սկսած իմպերիալիստական բուրժուազիան ստիպված եղավ իր պայքարի զինանոցում անցկացնել արմատական «ինվենտարիզացիա»։ Դրա նպատակն էր՝ որոշել, թե փոփոխված իրադրության պայմաններում ինչպես կարելի է հասնել հիմնական խնդրի կատարմանը՝ սոցիալիզմի պարտությանը։ Եվ ահա, մշակվեց նոր գլոբալ ստրատեգիա, որի հիմնական թեզերը ձևակերպվեցին մոտավորապես այսպես. քանի որ սոցիալիզմը և ընդհանրապես առաջադիմական շարժումն անհնարին է վերացնել ճակատային հարվածներով և կարճ ժամանակամիջոցում, ուստի սոցիալիստական երկրներում կապիտալիզմի վերականգնմանը պետք է հասնել աստիճանաբար, զարտուղի ճանապարհներով. այդ նպատակով նախ պետք է ձգտել գլուխ բերել սոցիալիզմի այլասերումը, նրա, այսպես ասած, «հումանիզացիայի», «դեմոկրատիզացիայի» միջոցով. առաջին պլան մղել հոգեբանական պատերազմը և գաղափարական դիվերսիան, դրանք զուգակցելով տնտեսական ճնշման և ռազմական կոնֆլիկտներ հրահրելու հետ։ Այս ամենը քողարկվում է «կոնֆրոնտացիայի փոխարեն կոոպերացիա», «տարաբաժանումից դեպի մերձեցում», «կամուրջներ ստեղծել Արևմուտքի և Արևելքի միջև» և այլ լոզունգներով։ Առաջադրված նոր խնդիրների համեմատ ասպարեզ եկան մի շարք նոր տեսություններ ու դոկտրինաներ, որոնց թվում առանձնակի տեղ գրավեցին այսպես կոչված «նեոկապիտալիզմի» «տեխնիկական» («տեխնոկրատական») և «տեխնոլոգիական» տեսությունները[1], որոնք հայտնի են նաև «ինտելեկտուալ հակակոմունիզմի տեսությունը-

1 Նկատենք, որ պատմական որոշակի ժամանակահատվածում բուրժուական գաղափարախոսության մեջ գերիշխել է այս կամ այն ուղղությունը, որն իրեն հատկացված դերը կատարելուց հետո թողել է ասպարեզը։ Դրան փոխարինելու է եկել բուրժուազիային առավել ձեռնտու մի ուրիշ տեսություն։ Դա կարելի է նաև ցույց տալ առանձին երկրների օրինակով։ Այսպես, եթե վերցնենք Ֆրանսիայի նորագույն պատմությունը, ապա կտեսնենք, որ 1900—1920 թվականներին այդ երկրում լայն տարածում է գտել բերգսոնիզմը, 1945—1960 թվականներին մեծ հեղինակություն էր վայելում սարտրյան էկզիստենցիալիզմը, 60-ական թվականների կեսերից սկսած Ֆրանսիայի բուրժուական փիլիսոփայական մտքի մեջ «ինդուստրիալ հասարակության» տեսությունների հետ միասին առաջատար դիրքեր գրավեց ստրուկտուրալիզմը։ Բայց այդ բոլոր ուղղությունների նպատակը մեկն է՝ արդարացնել կապիտալիստական կարգերի գոյությունը։

1 Ի դեպ, մարքսիստական տերմինաբանության մեջ տեխնիկան և տեխնոլոգիան տարբեր նշանակություն ունեն։ «Տեխնիկա» տերմինի տակ հասկանում ենք միայն աշխատանքի միջոցներն ու սարքավորումները։ Ինչ վերաբերում է «տեխնոլոգիային», ապա դա արտադրության պրոցեսի պլանավորված, սիստեմատիկ անդամահատումն ու բաժանումն է մեծ թվով մեխանիկական ու քիմիական պրոցեսների, որոնց նպատակն է համապատասխան տեխնիկայի օգնությամբ իրականացնել հումքի մշակումը և նրա վերափոխումը պատրաստի արտադրանքի։ Կ. Մարքսը «Կապիտալում» տեխնոլոգիան բնորոշել է հետևյալ կերպ. «Խոշոր արդյունաբերության սկզբունքը— արտադրության ամեն մի պրոցես, վերցրած ինքնըստինքյան ու ամենից առաջ՝ առանց նկատի ունենալու մարդկային ձեռքը, տրոհել իր բաղկացուցիչ տարրերին — առաջ բերեց

ներ» անվամբ։ «Նեոկապիտալիզմի» այդ տեսություններն առաջ եկան աշխարհում ծավալվող գիտատեխնիկական հեղափոխության ժամանակաշրջանում[1] և կազմեցին այսպես կոչված «ինդուստրիալ հասարակության» տեսությունների բաղկացուցիչ մասը։

Չնայած «նեոկապիտալիզմի» տեսությունները դերազանցապես արտահայտում են լիբերալ բուրժուազիայի, կապիտալիստական հասարակության «միջին շերտերի» տրամադրությունները, բայց դրանք լիովին ծառայում են իմպերիալիստական բուրժուազիայի շահերին։

տեխնոլոգիայի ամբողջ արդի գիտությունը» (տես Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, գիրք 1, Հայպետհրատ, Երևան, 1954, էջ 510)։ Տեխնիկան կանխորոշում ու սահմանում է աշխատանքի արտադրողականությունը, տեխնոլոգիան՝ նրա տեխնիկական բաժանումը, տրոհումը։ Ինքնին վերցրած տեխնոլոգիան վերաբերում է տեխնիկական գիտություններին և չնայած նա է անմիջականորեն որոշում աշխատանքի տեխնիկական բաժանումը, այնուամենայնիվ, Կ. Մարքսն ընդգծել է, որ «քաղաքատնտեսությունը տեխնոլոգիա չէ» (տես К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 12, էջ 711—712)։

[1] Երբեմն գրականության մեջ ներկա դարաշրջանն անվանում են գիտատեխնիկական հեղափոխության դարաշրջան։ Սակայն որքան էլ կարևոր լինեն գիտատեխնիկական հեղափոխության հետևանքները, դրանք ի վիճակի չեն արտացոլելու ժամանակակից դարաշրջանի բարդ ու հարուստ սոցիալական բովանդակությունը։ Ժամանակակից դարաշրջանի հիմնական բովանդակությունը կապիտալիզմից անցումն է սոցիալիզմին։ Այդ դարաշրջանն ամենից առաջ երկու հակառակ հասարակական-քաղաքական սիստեմների պայքարի, սոցիալիստական և ազգային-ազատագրական հեղափոխությունների, նորանոր ժողովուրդների սոցիալիզմի ուղին թևակոխելու, սոցիալիզմի ու կոմունիզմի հաղթանակի դարաշրջան է։ Ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխությունը բնավ չի փոխում մեր դարաշրջանի սոցիալական էությունը։ Կոմունիստական և բանվորական կուսակցությունների 1969 թվականի Մոսկվայի խորհրդակցության կողմից ընդունած փաստաթղթերում, որտեղ վերլուծված են համաշխարհային հասարակական զարգացման մեջ տեղի ունեցող նոր երևույթները, նշված է, որ «վերջին տասնամյակի իրադարձությունները հաստատեցին ժամանակակից դարաշրջանի բնույթի, նրա բովանդակության և հիմնական տենդենցների մարքսիստական-լենինյան գնահատականի ճշտությունը։ Մեր դարաշրջանը—կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու դարաշրջան է» (Տես՝ «Международное совещание коммунистических и рабочих партий. Москва, 1969», изд.-во «Мир и социализм», Прага, 1969, էջ 9)։

«Նեոկապիտալիզմի» տեսությունները, որպես կանոն, ասպարեզ են իջնում «գիտական» փաստարկներով, բուրժուական կարգերի պաշտպանության նպատակով լայնորեն օգտագործում են գիտության ու տեխնիկայի ընձեռած հարուստ տվյալները, իհարկե, կապիտալիզմի օգտին մեկնաբանելով դրանց սոցիալական հետևանքները։

Վերջին տարիներս սովետական հետազոտողները «նեոկապիտալիզմի» տեխնոկրատական և «տեխնոլոգիական» տեսությունների քննադատությանը նվիրված մի շարք արժեքավոր աշխատություններ են ստեղծել։

Քանի որ «նեոկապիտալիզմի» տեսությունները հիմնականում վեր ենք լուծել մեր նախորդ աշխատություններից մեկում[1], ուստի այստեղ մենք թռուցիկ կանգ կառնենք «կոնվերգենցիայի», «տեխնոստրուկտուրայի» և «տնտեսական աճի ստադիաների» տեսությունների վրա, որոնք, մեր կարծիքով, առավել բնութագրական են և առավել տիպիկ՝ «նեոկապիտալիզմի» տեսությունների սոցիալական դերը պարզելու համար։

* * *

«Նեոկապիտալիզմի» տեսական զինանոցում առանձնակի տեղ է գրավում **«կոնվերգենցիայի» տեսությունը**, որի նպատակն է ապացուցել, թե տեղի են ունենում մի կողմից կապիտալիստական երկրների տարբեր դասակարգերի, մասնավորապես պրոլետարիատի և բուրժուազիայի շահերի նույնացման, այդ դասակարգերի աստիճանական միաձուլման, իսկ մյուս կողմից համաշխարհային երկու սիստեմների՝ սոցիալիզմի ու կապիտալիզմի հարաճուն մերձեցման ըստ էության նույնատիպ պրոցեսներ, որոնց շարժիչ ուժը գիտատեխնիկական հեղափոխությունն է։

«Կոնվերգենցիայի» տեսության հիմնադիրը հոլանդացի հայտնի տնտեսագետ Յան Տինբերգենն է, իսկ առավել նշա-

[1] Տես Հրաչիկ Սիմոնյան, «Ինդուստրիալ հասարակության» տեսությունները, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1973 թ.։

նավոր ներկայացուցիչները՝ Լիննեմանը, Պրոնկը, Ու. Ռոստոուն, Ռ. Արոնը, Հ. Գրյուսոնը, Դ. Բելլը, Ռ. Յունգկը և ուրիշներ։ Տեսության ամենախոշոր դեմքը, այնուամենայնիվ, ֆրանսիացի բուրժուական սոցիոլոգ, հասարակական գործիչ ու լրագրող Ռայմոն Արոնն է։

Նախքան ֆաշիստական հեղաշրջումը Ռ. Արոնը ուսանում էր Գերմանիայում, այնուհետև փոխադրվում է Ֆրանսիա և մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը դասախոսում Թուլուզի համալսարանում։ Մասնակցել է դիմադրության շարժմանը, պատերազմի տարիներին խմբագրել է Լոնդոնում լույս տեսնող «Լյա ֆրանս լիբր» հանդեսը։ Ֆրանսիա վերադառնալուց հետո, 1947 թվականից, Արոնը դառնում է «Ֆիգարո» թերթի քաղաքական խմբագիրը և տնտեսագետը։ 1955 թվականից նա սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ էր Սորբոնում, եղել է Չորրորդ և Հինգերորդ հանրապետությունների Տնտեսական և սոցիալական խորհրդի անդամ։ Այժմ համաշխարհային սոցիոլոգիական ասոցիացիայի վիցեպրեզիդենտն է (1962 թվականից), մի շարք ակադեմիաների անդամ։

Եռապատերազմյան առաջին տասնամյակում Արոնը հայտնի դարձավ հակակոմունիստական բովանդակությամբ իր աշխատություններով («Մտավորականների օպիումը», 1955 թ., «Մեծ պառակտում», 1958 թ.), որոնցում առտահայտելով ֆրանսիական բուրժուազիայի շահերը, տեսականորեն արդարացնում էր հակակոմունիզմը։ Նա հանդիսացավ «ինդուստրիալ հասարակության» տեսության հիմնադիրներից և «կոնվերգենցիայի» առաջին քարոզիչներից մեկը («Ինդուստրիալ հասարակություն», 1959 թ., «18 դասախոսություն ինդուստրիալ հասարակության մասին», 1963 թ. և այլ աշխատություններում)։ Հետագա տարիներին Արոնի հայացքները նշանակալի էվոլյուցիա ապրեցին։ «Խաղաղություն և պատերազմ ազգերի միջև» (1963 թ.), «Ուրվագծեր ազատության մասին» (1965 թ.) գրքերում, օգտագործելով փաստական հարուստ նյութ, նա հանդես եկավ կապիտալիստական կարգերի առանձին կողմերի խիստ քննադատությամբ. ինչպես նաև երկու սիստեմների խաղաղ գոյակցության օգտին։ Նրա վերջին աշխատություններից մեկի մեջ՝ «Մի սուրբ

ընտանիքից դեպի մյուսը» (1970 թ.) տեղադրված են երեք ակնարկներ, որոնք նվիրված են էկզիստենցիալիզմի, ստրուկտուրալիզմի և մարկուզեականության քննադատությանը[1]։

Կոնվերգենցիայի մասին իր մտքերը Ռ. Արոնն առավել հանգամանորեն է շարադրել իր «18 դասախոսություն ինդուստրիալ հասարակության մասին»[2] գրքում։ Իր աշխատության մեջ նա տալիս է «ինդուստրիալ հասարակության» ընդհանուր բնութագրությունը, շարադրում է նրա առավել բնորոշ գծերը։ «Ինդուստրիալ հասարակությունը» նա բնորոշում է իբրև այնպիսի հասարակություն, որտեղ արդյունաբերությունը, հատկապես խոշոր արդյունաբերությունը, արտադրության հիմնական ձևն է հանդիսանում։ Բացի դա, այդ հասարակությանը բնորոշ են աշխատանքի տեխնոլոգիական բաժանումը, տնտեսական խիստ հաշվարկը, բանվորների բարձր համակենտրոնացումը, դրամական միջոցների կուտակումը և այլն, այսինքն՝ այնպիսի երևույթներ, որոնք գիտատեխնիկական հեղափոխության շրջանում հատուկ են և՛ կապիտալիզմին, և՛ սոցիալիզմին։

«18 դասախոսություն ինդուստրիալ հասարակության մասին» գրքում Ռ. Արոնը մանրամասն կանգ է առնում կոնվերգենցիոն այն պրոցեսների վրա, որ, իր ասելով, տեղի են ունենում ամբողջ աշխարհում, անկախ պետությունների և երկրների սոցիալ-քաղաքական կառուցվածքից։

Կոնվերգենցիայի տեսության հետազոտության Ռ. Արոնի հիմնական մեթոդը էկլեկտիկան է, որը, ինչպես հայտնի է, դիալեկտիկական մեթոդի գլխավոր հակոտնյաներից մեկն է։

Վ. Ի. Լենինը շատ անգամ է նշել էկլեկտիզմի դեմ պայքարի կարևորությունը, որը ռեակցիոն շատ կոնցեպցիաների և բուրժուական մոդայիկ տեսությունների մեթոդոլոգիական հիմքն է։ Փորձելով հանդես գալ դիալեկտիկայի անվան տակ, էկլեկտիզմը հեղափոխական դիալեկտիկան փոխարինում է անհաշտելի կողմերի, տարբեր սկզբունքների միավորման ու հաշտեցման (իհարկե՝ արտաքնապես) կոչերով։

---

[1] Տե՛ս «МЭ и МО», № 7, 1970, էջ 136—137։

[2] R. Aron. Dix-huit leçons sur le société industrielle. Editions Gallimard, 1962.

Լենինը զգուշացնում էր, որ էկլեկտիզմն այն պրիոմն է, որով սովորաբար օգտվում են հեղափոխական մարքսիզմի դեմ հանդես եկող օպորտունիստները, որոնք ի վիճակի են դիալեկտիկայի անվան տակ այն օգտագործել մասսաներին խաբելու համար։

Առաջ քաշելով կապիտալիստական երկրներում իբր տեղի ունեցող սոցիալ-դասակարգային կոնվերգենցիոն պրոցեսների մասին գաղափարը, Ռ. Արոնը և բուրժուական ուրիշ գիտնականներ զարգացնում են մի շարք թեզեր, որոնք կարելի է խմբավորել ըստ նրանց բովանդակության և դասակարգային ուղղվածության։ Բայց դրանք բոլորն էլ մի հիմնական նպատակ ունեն, այն է՝ ապացուցել, թե ժամանակակից պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը գիտատեխնիկական հեղափոխության հետևանքով լ՚ովին վերափոխվել է։ Նրանք այս գաղափարն առաջ քաշելիս ելնում են տեխնիկական դետերմինիզմից ու տեխնիկական ֆետիշիզմից, այսինքն՝ այն կեղծ պատկերացումներից, թե արտադրողական ուժերի քանակական աճը և տեխնիկայի զարգացումը կապիտալիստական արտադրահարաբերությունների պայմաններում ի վիճակի են փոխելու տնտեսական և քաղաքական իշխանության սոցիալական բովանդակությունը, բնավ չշոշափելով հասարակական հարաբերությունների գոյություն ունեցող սիստեմը։ Նրանց ասելով, կապիտալիստական երկրներում տեղի է ունենում արտադրության միջոցների մասնավոր սեփականության «ինքնալիկվիդացման» և դասակարգային պայքարն աստիճանաբար «սոցիալական համագործակցությամբ» փոխարինելու պրոցես։ Այնպես որ արդի կապիտալիզմը ոչ մի նմանություն չունի 19-րդ դարի կապիտալիզմի հետ։ Այսպիսով, կոնվերգենտիստները գունազարդում են կապիտալիզմը, ժողովրդական մասսաներին փորձում են համոզել, թե կապիտալիզմը այնքան էլ վատ բան չէ, այն հավերժ է, որովհետև առանց պայքարի բուրժուական երկրներում հարթվում են աշխատանքի և կապիտալի անլուծելի թվացող հակասությունները։

«18 դասախոսություն ինդուստրիալ հասարակության մասին» գրքում Ռ. Արոնը պնդում է, թե հեղափոխությունը, որի մասին խոսել է Կ. Մարքսը, «արդեն պատկանում է

անցյալին»։ Ըստ որում նա իր ասածը հիմնավորելու համար վկայակոչում է Մարքսի «Փիլիսոփայության աղքատությունը» գրքի վերջին տողերը, պնդելով, թե Մարքսը այն տեսակետն է հայտնել, որ սոցիալական առաջադիմությունը հնարավոր է առանց քաղաքական հեղափոխության։ Իրականում Մարքսը այլ բան է ասել «Փիլիսոփայության աղքատությունը» գրքի վերջին տողերում։ «Միայն այնպիսի իրակարգի ժամանակ,— կարդում ենք այնտեղ,— երբ այլևս չեն լինի դասակարգեր և դասակարգային հակամարտություն, սոցիալական էվոլյուցիաները կդադարեն քաղաքական հեղափոխություններ լինելուց»։[1]

Բուրժուական կարգերը փրկել հեղափոխության սպառնալիքից, բանվոր դասակարգի, բոլոր աշխատավորների մեջ այն պատրանքը սերմանել, թե իմպերիալիզմի դեմ հեղափոխական պայքարն ավելորդ է,— ահա այն խնդիրը, որ իրենց առջև դնում են կոնվերգենցիայի տեսաբաններն ու պրոպագանդիստները։

Ճիշտ է, այն դարաշրջանը, երբ սոցիալական հեղափոխությունները դադարում են քաղաքական հեղափոխություններ լինելուց, իսկապես որ վրա է հասել. բայց այն վրա է հասել ոչ թե կապիտալիստական, այլ սոցիալիստական երկրներում։ Ինչ վերաբերում է կապիտալիստական երկրներին, ապա դրանցում անխուսափելի են քաղաքական հեղափոխությունները։

Կոնվերգենցիոն պրոցեսները զարգացած կապիտալիստական երկրներում համարելով ռեալ փաստ, այնուհետև բուրժուական գաղափարախոսները դնում են երկու սիստեմների՝ կապիտալիզմի և համաշխարհային սոցիալիզմի կոնվերգենցիայի հարցը, գտնելով, որ այս նույնպես տեղի է ունենում մեր աչքերի առջև, կատարվում է համաշխարհային մասշտաբով տնտեսական և սոցիալ-քաղաքական միատեսակ կարգերի ստեղծման («մոնդիալիզացիա») պրոցես։ Իբրև ապացույց, նրանք վկայակոչում են այն, որ իբր թե և՛ սոցիալիստական, և՛ կապիտալիստական զարգացած եր-

1 Կ. Մարքս, Փիլիսոփայության աղքատությունը, «Հայպետհրատ», 1948 թ., էջ 191։

կրներում առկա է տնտեսության նույնատիպ պլանավորում։ Նրանք հատկապես շեշտում են կապիտալիստական մի շարք երկրների տնտեսության պլանավորման գործերին բուրժուական պետության ակտիվ միջամտության փաստը։

Այնուհետև, որպես կապիտալիզմի և սոցիալիզմի ընդհանրության արտահայտություն, բուրժուական գաղափարախոսները վկայակոչում են գիտության և տեխնիկայի զարգացման միատեսակությունը, անտեսելով տարբեր սիստեմներում դրանց սոցիալական հետևանքների մեծ տարբերությունը։ Ռ. Արոնը գրում է, թե քանի որ և՛ կապիտալիստական, և՛ սոցիալիստական երկրներում տեղի է ունենում արտադրության ավտոմատացում, տնտեսության կառավարման պրոցեսում օգտագործվում են նույնանման հաշվող մեքենաներ և այլն, ապա այդ պրոցեսը նույնանման շատ գծեր է մտցնում հասարակական երկու սիստեմների միջև։ Տնտեսության մեջ եղած տարբերությունները, ասում է նա, արագորեն վերանում են, մնում են միայն գաղափարական տարբերությունները։

Ռ. Արոնը գրում է, թե սոցիալիստական և կապիտալիստական սիստեմների բազմաթիվ նմանություններից մեկը հավելյալ արժեքն է, որը հատուկ է «ինդուստրիալ հասարակությանը»։ Նա նշում է, որ սովետական տնտեսության մեջ բանվորի ստեղծած հավելյալ արժեքը, որ գոյանում է նրան աշխատավարձ տալուց հետո, ամբողջովին դրվում է պետության տրամադրության տակ և բաշխվում է համաձայն այն որոշումների, որ ընդունվում են պլանային օրգանների կողմից։ Ինչ վերաբերում է կապիտալիստական տնտեսությանը, ապա այստեղ, որքանով որ գոյություն ունի արտադրության միջոցների նկատմամբ անհատական սեփականություն, բանվորի ստեղծած արժեքի ավելցուկը դրվում է ձեռնարկության տրամադրության տակ, որն այն բաշխում է, ելնելով արտադրության հետագա ընդլայնման շահերից։ Եթե կապիտալիստները ստացած ողջ շահույթը ծախսեին իրենց անձնական սպառման ու պերճանքի վրա, ասում է Արոնը, ապա ինչ խոսք, բուրժուական սիստեմն անտանելի կլիներ։ Բայց բանն այն է, շեշտում է նա, որ բուրժուական արտադրահարաբերությունների պայմաններում շահույթի

մեծ մասը տրամադրվում է ոչ թե կապիտալիստների անձնական սպառման նպատակին, այլ ենթարկվում է ռեինվեստացիայի և ներդրվում է արտադրության մեջ։ Իսկ դա, գրում է Արոնը, նշանակում է, որ զարգացած կապիտալիստական երկրներում բանվորների կողմից ստեղծված արժեքի ավելցուկն ամբողջովին վերադարձվում է հասարակությանը։

Սա, իհարկե, սոցիալ-տնտեսական երկու հակադիր սիստեմների էության կոպիտ խեղաթյուրում է։ Կապիտալի տիրապետության պայմաններում, ինչպես հայտնի է, հավելյալ արժեքը, կամ կապիտալիստի ստացած շահույթը արտացոլում է բուրժուական հասարակության շահագործողական հարաբերությունները, անկախ այն բանից, թե այդ շահույթն ինչպիսի համամասնությամբ է բաժանվում կապիտալիստի անձնական սպառման և արտադրության հետագա ընդլայնման վրա։ Բանվոր դասակարգի ծախսած վարձու աշխատանքը, որը մարմնավորվում է հավելյալ արժեքի մեջ, յուրացվում է մասնավոր սեփականատեր կապիտալիստների կողմից։ Ինչ վերաբերում է սոցիալիզմին, ապա այստեղ ստեղծված հավելյալ արդյունքը բաժին է ընկնում ողջ հասարակությանը, քանի որ այնտեղ չկան շահագործող դասակարգեր, որոնք յուրացնեին այն։ Սոցիալիզմի պայմաններում, որտեղ բանվորական ուժն ապրանք չէ, հավելյալ արդյունքը չի վերածվում հավելյալ արժեքի։

Ինչ վերաբերվում է բուրժուական հասարակությանը, ապա ակնհայտ խեղաթյուրում է Ռ. Արոնի այն պնդումը, թե շահույթի ռեինվեստացիայի ենթարկվող մասը իբր վերադարձվում է հասարակությանը։ Իրականում այն գնում է կապիտալիստական ձեռնարկությունների ընդլայնմանը, հետևապես՝ կապիտալիստների հարստության մեծացմանը։

Փորձելով քննադատներից պաշտպանել բուրժուական կարգերը, Ռ. Արոնը հայտարարում է, որ «ցանկացած տնտեսական ռեժիմի պայմաններում անհրաժեշտ է, որպեսզի ձեռնարկությունը տարվա վերջին ունենա ավելցուկ... Սովետական տիպի պլանային տնտեսության մեջ... առավել բարձր դրամական եկամուտ ստանալու ցանկությունը ոչ պակաս ուժեղ է, քան կապիտալիստական տնտեսության մեջ... ժամանակակից ցանկացած ինդուստրիալ սիստեմում

շահույթը հանդիսանում է հիմնական շարժիչը»։ Ռ. Արոնը դրանով իսկ փորձում է ջնջել կապիտալիստական շահույթի և սոցիալիստական ձեռնարկությունների շահույթի միջև որակական տարբերությունները, ընթերցողներին համոզել, թե ինչպես կապիտալիստական, այնպես էլ սոցիալիստական ձեռնարկությունների համար շահույթը տնտեսական գործունեության նպատակ է։

Հանրահայտ է, որ սոցիալիստական տնտհաշվարկային ձեռնարկությունները, իրոք, շահագրգռված են շահույթի մեծացմամբ, բայց շահույթը նրանց համար, այնուամենայնիվ, գլխավոր նպատակը չէ։ Սոցիալիստական ձեռնարկության և, ընդհանրապես, սոցիալիստական արտադրության գլխավոր նպատակը աշխատավորների հարաճուն պահանջմունքների բավարարումն է։ ՍՍՀՄ-ում պետական ձեռնարկությունների գործունեությունը գնահատվում է ոչ միայն և ոչ այնքան դրանց շահույթի չափերով, որքան (և ամենից առաջ) նրանով, թե ինչպես են կատարվում արտադրանքի իրացման պետական պլանները։ Եթե, օրինակ, ձեռնարկությունը իր շահույթն ավելացնում է՝ խախտելով արտադրանքի տեսականին, ապա նրա պլանները կատարված չեն համարվում։

Զգտելով ապացուցել երկու սիստեմների իբր նույնանման շատ գծերի առկայությունը, Ռ. Արոնը փորձում է բուրժուական հասարակության գլխավոր արատները տարածել նաև սոցիալիզմի վրա։ Մասնավորապես նա գրում է, թե սոցիալիզմը չի վերացրել դասակարգերը, հետևապես այն սկզբունքորեն չի տարբերվում կապիտալիզմից։ Նա «մոռացության» է տալիս այբբենական այն ճշմարտությունը, որ սոցիալիզմի հաղթանակը նշանակում է ոչ թե ընդհանրապես դասակարգերի վերացում, այլ անտագոնիստական, թշնամական դասակարգերի վերացում, որի շնորհիվ սոցիալիստական հասարակության մեջ ստեղծվում է սկզբունքային միանգամայն նոր դասակարգային կառուցվածք՝ բաղկացած աշխատավոր դասակարգերից՝ բանվորներից, կոոպերացված գյուղացիներից և աշխատավոր մտավորականությունից։ Նրանց միջև ստեղծվում են բարեկամական հարաբերություններ, որոնք խարսխվում են նրանց արտադրական շահերի և ընդհանրության վրա։ Միայն կոմունիզմի ժամանակ է, որ լիովին վերանալու են դասակարգերը և դասակարգային տարբերությունները։

Կոնվերգենտիստները համաշխարհային մասշտաբով դասակարգային պայքարի թուլացման և դադարեցման, երկու սիստեմների փաստական «միաձուլման» առաջին քայլեր են համարում այն դրական տեղաշարժերը, որոնք տեղի են ունենում միջազգային ասպարեզում։ Անտեսելով այն պայքարը, որ Սովետական Միությունը տասնամյակներ շարունակ հետևողականորեն մղում է խաղաղ գոյակցության համար, սխալ մեկնաբանելով սոցիալիստական համագործակցության երկրների արտաքին քաղաքականության բովանդակությունը, կոնվերգենցիայի կողմնակիցները միջազգային համագործակցության տենդենցի ուժեղացումը բացատրում են զուտ ուտիլիտար պատճառներով։ Նրանք ասում են, օրինակ, թե Սովետական Միությունը ստիպված է Արևմուտքի հետ բանակցությունների դիմել, որովհետև կանգնած է տնտեսական լուրջ դժվարությունների առջև և դրանցից դուրս գալու ելքը նա տեսնում է միայն արտաքին կապերի ընդլայնման մեջ։ Այսինքն՝ կապիտալիստական երկրների արտաքին քաղաքական մղումները Արոնը վերագրում է սոցիալիստական երկրներին։

Թե որքան տենդենցիոզ է նման հարցադրումը, բավական է թռուցիկ ակնարկ նետել վերջին ժամանակներում միջազգային ասպարեզում տեղի ունեցող դրական տեղաշարժերի բովանդակությանը։

Կարելի է ասել, որ հասարակական-քաղաքական երկու սիստեմների միջև եղած հարաբերություններն ըստ էության պայքարի և համագործակցության դիալեկտիկական զուգորդում են։ Խաղաղ գոյակցության պայմաններում էլ դրանց միջև շարունակվում է պայքարը, քանի որ դրանցում իշխում են արտադրության տարբեր եղանակներ, սկզբունքային տեսակետից միանգամայն տարբեր սեփականատիրական հարաբերություններ։ Միաժամանակ այդ սիստեմների միջև առկա է համագործակցությունը, քանի որ մարդկության առջև կանգնած են մի շարք խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է բոլոր երկրների կոլեկտիվ ջանքերը։

15—1885

Սովետական Միությունը և սոցիալիստական համագործակցության մյուս երկրները ձգտում են, որպեսզի երկու հակառակ սիստեմների՝ սոցիալիզմի և կապիտալիզմի միջև անխուսափելի պայքարը կրի խաղաղ բնույթ և բացառվի զենքի գործածությունը։ Կոմունիստները սկզբունքորեն դեմ են սոցիալիստական երկրներից հեղափոխության արտածմանը, բայց նրանք, բնականաբար, դեմ են նաև կապիտալիստական երկրներից հակահեղափոխության արտածմանը։ Ինչ վերաբերում է այն բանին, թե հասարակական-քաղաքական երկու սիստեմներից որը շատ առավելություններ կամ թույլ կողմեր ունի, ապա ժամանակակից աշխարհում դրանք կարելի է լիակատար կերպով ցույց տալ կյանքի ամենատարբեր ոլորտներում, ինչպես օրինակ՝ տնտեսական մրցությունը, գիտատեխնիկական առաջադիմությունը, կուլտուրական արժեքների ստեղծումը և այլն։

Սոցիալական տարբեր կարգ ունեցող պետությունների խաղաղ գոյակցության լենինյան քաղաքականության անբաժանելի տարրը նրանց միջև բազմակողմանի համագործակցության հաստատումն է, որին մեր օրերում նպաստում են մի շարք հանգամանքներ։ Առաջին, ժամանակակից աշխարհում առկա են համաշխարհային տնտեսական աշխույժ կապեր՝ կա համաշխարհային երկու շուկա, համաշխարհային երկու տնտեսություն՝ սոցիալիստական և կապիտալիստական, որոնք միասին կազմում են համաշխարհային տնտեսական սիստեմ։ Ներկայումս բոլոր պետությունները տարբեր չափով իրենց վրա կրում են արագորեն ընթացող գիտատեխնիկական հեղափոխության հետևանքները, քանի որ ինքը՝ գիտությունն իր էությամբ ինտերնացիոնալ երևույթ է, նույնիսկ եթե նկատի ունենանք, որ սոցիալ-տնտեսական տարբեր կարգեր ունեցող երկրներում գիտատեխնիկական հեղափոխության սոցիալական հետևանքները միանգամայն տարբեր են։ Ժամանակակից պայմաններում արտադրության գործիքների ու միջոցների, նյութերի ու տեխնոլոգիական պրոցեսների մեջ այնքան արագ են փոփոխություններ կատարվում, որ ոչ մի երկիր, որքան էլ այն մեծ ու զարգացած լինի, չի կարող հավասար հաջողությամբ ու տնտեսական բարձր արդյունավետությամբ զարգացնել

առանց բացառության արտադրության բոլոր ճյուղերը։ Այստեղից էլ այն խոր հետաքրքրությունը, որ արտաքին աշխարհի հետ ամուր կապեր հաստատելու համար ցուցաբերում են բոլոր երկրները։

Երկրորդ, ժամանակակից մարդկության առջև կանգնած տնտեսական և գիտատեխնիկական խնդիրների աճող մասշտաբներն առաջ են քաշում դրամական, նյութական և մարդկային հսկայական միջոցների մոբիլիզացման անհրաժեշտություն՝ այդ խնդիրները կատարելու համար։ Դա վերաբերում է ամենատարբեր բնագավառների՝ զարգացող երկրների տնտեսական հետամնացության հաղթահարում, մարդու և բնության միջև ճիշտ փոխհարաբերությունների հաստատում, էներգետիկ նոր աղբյուրների և բնական ռեսուրսների յուրացում, տրանսպորտի ու կապի առավել ժամանակակից տեսակների զարգացում, տիեզերքի և համաշխարհային օվկիանոսի յուրացում, առավել վտանգավոր հիվանդությունների կանխորոշում և վերացում։ Դրանք պրոբլեմներ են, որոնք շատ կողմերով պայմանավորում են ոչ միայն ներկա, այլև գալիք սերունդների կյանքի ընթացքը։

Երրորդ, փոխադարձաբար սերտորեն պայմանավորված են տարբեր պետությունների տնտեսական համագործակցության զարգացումը և միջազգային անվտանգության ամրապնդումը։ Վերջին տարիներին միջազգային լարվածության թուլացումը նպաստեց պետությունների միջև տնտեսական կապերի զգալի ամրապնդմանը։ Տնտեսական մի շարք խոշոր գործարքներ կնքվեցին սոցիալիստական և կապիտալիստական երկրների միջև։ Օրինակ, արևմտյան ֆիրմաների մասնակցությամբ ՍՍՀՄ-ում կառուցվեցին ավտոմոբիլային գործարաններ Տոլյատի քաղաքում և Կամայի վրա, ստեղծվեցին մի շարք քիմիական կոմպլեքսներ։ ՍՍՀՄ-ը սկսեց գազ մատակարարել ԳՖՀ-ին, Իտալիային և կապիտալիստական մի շարք ուրիշ երկրների։ Այժմ քննարկվում են այնպիսի խոշոր նախագծեր, ինչպիսիք են, օրինակ՝ Կուրսկի շրջանում ԳՖՀ-ի հետ համատեղ մետալուրգիական գործարանների կոմպլեքսի ստեղծումը և այլն։ Իր հերթին կայուն տնտեսական կապերի ստեղծումը նպաստում է պետությունների միջև արտաքին քաղաքական համագործակ-

ցությանը, յուրատեսակ տնտեսական հիմք է հանդիսանում խաղաղ գոյակցության համար։ Այդ ամենը ցույց է տալիս, որ առանց «մոնդիալիզացիայի», առանց հակադիր երկու սիստեմների կոնվերգենցիայի, հնարավոր և անհրաժեշտ է փոխշահավետ համագործակցությունը։

Կոնվերգենցիան տարածելով նաև սոցիալիզմի վրա, դրանով իսկ բուրժուական գաղափարախոսները կամա թե ակամա ընդունում են այն վիթխարի նվաճումները, որ ձեռք է բերել իրականում գոյություն ունեցող համաշխարհային սոցիալիստական սիստեմը։ Շատ ժամանակ չի անցել, երբ բուրժուական գաղափարախոսները կանխատեսում էին սոցիալիզմի կործանումը։ Բայց այժմ նման կանխատեսումներ հազվադեպ են արվում։ Մարքսիստական-լենինյան գաղափարների հաղթարշավը, ՍՍՀՄ-ի և սոցիալիստական համագործակցության մյուս երկրների վիթխարի հաջողությունները, բուրժուական գաղափարախոսության և ամբողջությամբ վերցրած կապիտալիզմի խոր ճգնաժամը նրանց ստիպում են անպայման հաշվի նստել կատարված լուրջ փոփոխությունների հետ, հարմարվել նոր պայմաններին, սոցիալիստական կարգերի «ժամանակավոր կենսունակության» մասին խոստովանություններ անել։ Հնարավորություն չունենալով աչքերը փակել իրականության, սոցիալիզմի նվաճումների առջև, նրանց մի մասը թույլատրելի է համարում երկու սիստեմների կոնվերգենցիա, իհարկե, միայն այն պայմանով, որ սոցիալիզմը հրաժարվի իր էությունից, մտնի ժամանակակից կապիտալիզմի զարգացման հունը։ Ընդհանրապես կոնվերգենցիայի տեսության բոլոր տարբերակները հանգում են նրան, որ «սինթեզված», «միաձուլված» «հիբրիդ-հասարակության» տնտեսական հիմքը լինելու է մասնավոր սեփականությունը, իսկ քաղաքական հիմքը՝ բուրժուական դեմոկրատիայի սիստեմը։

Պրոպագանդելով կոնվերգենցիայի տեսությունը, մոնոպոլիստական կապիտալի գաղափարախոսները ձգտում են գաղափարապես զինաթափել սոցիալիստական երկրների հասարակայնությանը, խախտել կոմունիստական իդեալների հաղթանակի նկատմամբ նրանց հավատը։ Սոցիալիստական

երկրների մասսաներին «կոմպրոմիսների» մղելով սոցիալիզմի նախ որոշ, ապա հիմնական սկզբունքներից հրաժարվելու գնով, կոնվերգենցիայի տեսության հեղինակներն ու պրոպագանդիստները նրանց խորհուրդ են տալիս չտեսնել ո՛չ դասակարգային թշնամիներ, ո՛չ դասակարգային բարեկամներ ու դաշնակիցներ։ Դրանով իսկ նրանք հույս ունեն ուղի հարթել կապիտալիզմի վերականգնման համար, շուռ տալ պատմության ընթացքը։ Ինչ խոսք, այս ամենը ռեակցիոն ուտոպիա է։

Ժամանակակից հասարակական ողջ զարգացումը, մեր դարաշրջանի ողջ բովանդակությունը բնորոշվում են նրանով, որ մարդկությունն անցում է կատարում դեպի սոցիալիզմ, դեպի միջազգային սոցիալիստական համագործակցության հետագա համախմբում և զարգացում։ Բուրժուական գաղափարական ոչ մի դոկտրինա, այդ թվում կոնվերգենցիայի տեսությունն ի վիճակի չեն փոխելու պատմության հաստատուն ընթացքը։

*
* *

«Նեոկապիտալիզմի» տեսությունների շարքում բուրժուական պրոպագանդան վերջին տարիներս մեծ տեղ է հատկացրել այսպես կոչված «տեխնոստրուկտուրայի» տեսությանը, որի հեղինակն է ամերիկացի հայտնի տնտեսագետ Ջոն Գելբրայթը։

Ջոն Գելբրայթի անունը բուրժուական տնտեսագիտական գրականության մեջ հայտնի էր դեռևս 30-ական թվականներին։ Նա ծնվել է Կանադայում, մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը դասախոսել է Կալիֆոռնիայի, Հարվարդի և Պրինստոնի համալսարաններում, եղել է Ֆրանկլին Ռուզվելտի «նոր կուրսի» ակտիվ կողմնակից։ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Գելբրայթն աշխատել է ԱՄՆ-ի կառավարական մարմիններում, 1943 թվականից գլխավորել է ամերիկյան ստրատեգիական ավիացիայի տնտեսական բյուրոն։ 1947 թվականին աշխատել է պետական դեպարտամենտի տնտեսական

քաղաքականության վարչությունում։ 1961—1963 թվականներին, Ջոն Քենեդիի պրեզիդենտության տարիներին, Գելբրայթը Հնդկաստանում ԱՄՆ-ի դեսպանն էր։ Դիվանագիտական աշխատանքից հեռանալուց հետո նա Հարվարդի համալսարանի պրոֆեսոր էր[1]։

Իր մի շարք աշխատությունների մեջ («Ամերիկյան կապիտալիզմ. հավասարակշռվող ուժերի կոնցեպցիան», «Առատության հասարակություն», «Նոր ինդուստրիալ պետություն» և այլն) Ջոն Գելբրայթը հետազոտել և վեր է լուծել կորպորացիաների զարգացման պրոցեսը, բուրժուական պետության գործունեությունը, արտադրության և շահույթների պետական կարգավորման պրոբլեմը, ժամանակակից կապիտալիզմի դասակարգային կառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունները։ Բայց նրա տեսական ժառանգության մեջ կենտրոնական տեղը գրավում է «տեխնոստրուկտուրայի» մասին տեսությունը, որը Գելբրայթը զարգացրել է «Նոր ինդուստրիալ պետություն»[2] գրքում։

«Տեխնոստրուկտուրայի» տեսությունը Ջ. Գելբրայթը բխեցնում է այն երևութական փոփոխություններից, որոնք տեղի են ունեցել կապիտալիստական կորպորացիայի ներսում, երբ այսպես կոչված «ձեռնարկատիրական կորպորացիան» կամ ինչպես ընդունված է նաև ասել՝ «կլասիկ կորպորացիան»՝ իր «կլասիկ ձեռնարկատերերով» հանդերձ (Ֆորդ, Ռոկֆելլեր, Մելլոն, Ռոտշիլդ և այլոք), էվոլյուցիոն զարգացման ճանապարհով փոխարկվել է այսպես կոչված «հասուն կորպորացիայի», որտեղ ղեկավար դեր են խաղում ոչ թե կապիտալիստները, այլ տեխնիկական գիտելիքներ ունեցողները՝ ինժեներներն ու տեխնիկները, այսպես կոչված մենեջերները, որոնք բոլորը միասին կազմում են «տեխնոստրուկտուրա»։ Այս «տեխնոստրուկտուրան» մի նոր դասակարգ է, որը պատմական կարճ ժամանակամիջոցում

[1] Տե՛ս И. Н. Дворкин, «Новое индустриальное общество» Дж. К. Гелбрейта и современный капитализм. — В книге «Критика теорий современных буржуазных экономистов — Дж Гелбрейта, Г. Мюрдаля, Л. Эрхарда, изд-во «Мысль», М., 1971, էջ 3։

[2] Ռուսերեն լեզվով Գելբրայթի գիրքը լույս է տեսել «Նոր ինդուստրիալ հասարակություն» վերնագրով.— Дж. Гелбрейт, Новое индустриальное общество. М. 1969.

կարողացել է կորպորացիայից դուրս մղել անհատ ձեռնարկատիրոջը և այնտեղ հաստատել իր ռեալ իշխանությունը։

Իշխանությունը «տեխնոստրուկտուրային» «անցնելը» Գելբրայթը համարում է ոչ թե պատահական երևույթ, այլ որպես հասարակության օրինաչափ զարգացման տրամաբանական հետևանք։ Ինչ վերաբերում է «կլասիկ ձեռնարկատերերին», որոնք տեր ու տնօրեն էին նախկին ձեռնարկատիրական կորպորացիաներում, ապա սրանց ոչինչ անելու չի մնացել, քան տեղ գրավել «տեխնոստրուկտուրայի» մեջ, հարմարվել տիրապետող «նոր դասակարգի» վերքին, նրա աշխատանքի պայմաններին ու առաջադրած պահանջներին։ Այս ճանապարհով տեղի է ունենում այն, ինչ երազել են սոցիալիստները, այն է՝ իբր առանձին սեփականատերերի մասնավոր սեփականությունը վերածվում է կոլեկտիվ սեփականության։ Գելբրայթը ջանքեր է գործադրում, որպեսզի ապացուցի, թե «տեխնոստրուկտուրան» ոչ թե անհատ ձեռնարկատերերի, այլ ողջ ժողովրդի շահերի արտահայտիչն է, ուստի նրա նպատակները համընկնում են հասարակության բացարձակ մեծամասնության նպատակներին։ «Տեխնոստրուկտուրայի» հիմնական մտահոգությունը ժողովրդի բարեկեցության բարձրացումն է, և տեխնիկական առաջադիմության արագացումը,— ասում է նա։ Եթե «ձեռնարկատիրական կորպորացիայի» պայմաններում նրա տերերի հիմնական նպատակն առավելագույն շահույթ կամ գերշահույթ ստանալն էր, որը և կորպորացիայի հիմնական շարժիչ ուժն էր, պնդում է Գելբրայթը, ապա «հասուն կորպորացիայի» պայմաններում, իբր «տեխնոստրուկտուրայի» գլխավոր խնդիրը դառնում է հասարակական շահը։ Այս հանգամանքը նա բացատրում է նրանով, որ «տեխնոստրուկտուրան» կապիտալի տեր չէ, հետևապես շահագրգռված չէ ավելացնելու շահույթը, քանի որ միևնույն է, շահույթի ավելացմամբ չի ավելանա իր եկամուտը։ Դրա փոխարեն նա շահագրգռված է կորպորացիայի աշխատավարձի ֆոնդի մեծացմամբ, որովհետև ինքն իր գոյությունը պահպանում է ծառայության դիմաց ստացած աշխատավարձով։ Եվ եթե բարձրանում է «տեխնոստրուկտուրայի» աշխատավարձը, բնականաբար, պետք է բարձրանա նաև բանվորների աշխա-

տավարձը, որը և բարձրանում է կորպորացիայի աշխատավարձի ֆոնդի մեծացման համեմատ։ Դա նշանակում է, որ կորպորացիայի ներսում և՛ տեխնոստրուկտուրան, և՛ բանվորները միասնական, նույնատիպ շահեր ունեն, հետևապես նրանց միջև դասակարգային պայքար լինել չի կարող։ Ընդհակառակն՝ ըստ Գելբրայթի, կորպորացիայի ներսում ստեղծվում է դասակարգային հարմոնիա։ Այն ոչ այլ ինչ է, քան ժամանակակից գերհզոր մոնոպոլիստական կորպորացիայի ջատագովություն, հետևապես կապիտալիստական արտադրահարաբերությունների քողարկված պաշտպանություն։

Ճշմարիտ է, որ վերջին տասնամյակներին կապիտալիստական մոնոպոլիաները ենթարկվել են մեծ փոփոխություններ։ Բայց ճշմարիտ է նաև այն, որ այդ փոփոխությունների հետևանքով առանձին կապիտալիստների սեփականությունը վերածվել է կապիտալիստների որոշակի խմբերի սեփականության։ Բուրժուական արտադրահարաբերությունների պայմաններում պրոֆեսիոնալ-տեխնոկրատները՝ մենեջերները, ի վիճակի չեն իրենց ձեռքը վերցնելու կորպորացիայի կառավարման ղեկը նախ և առաջ այն պատճառով, որ նրանք իրենցից ինքնուրույն դասակարգ չեն ներկայացնում և, բաժանված լինելով տարբեր շահեր ունեցող խմբերի, գտնվում են հասարակական հիերարխիայի սանդուղքի տարբեր աստիճանների վրա։ Երկրորդ, մենեջերների քանակական աճը կամ կորպորացիաներում նրանց դերի որոշակի բարձրացումը չի հասցնում կապիտալիստների անսահմանափակ տիրապետության թուլացմանը։ Հասարակության մյուս դասակարգերի ու խավերի, այդ թվում՝ պրոֆեսիոնալ-տեխնոկրատների օգտին բուրժուազիան մաղաչափ անգամ չի զիջում իր իշխանությունը։ Ակցիոներական ընկերության մեջ անհատ կապիտալիստի փոխարինվելը «կոլեկտիվ կապիտալիստով» բնավ չի փոխում կապիտալիզմի բնույթը, չնայած ստեղծում է այն կեղծ տպավորությունը, թե արտադրության պրոցեսից չքացել է կապիտալիստը և ասպարեզում մնացել է միայն կապիտալը։ «Անջատ-անջատ կապիտալիստներից,— գրել է Վ. Ի. Լենինը,— առաջանում է մեկ կոլեկտիվ կապիտալիստ»[1]։ Մարքսիզմի կլասիկները տարբեր առիթներով նշել են, որ կապիտալիստական սեփականության ձևերի փոփոխությունը երբեք չի հանգեցնի իսկական «կոլեկտիվության»։ Բուրժուազիայի տիրապետության պայմաններում Կ. Մարքսը «կոլեկտիվությունն» անվանում էր «կոլեկտիվության սուրոգատ», «երևակայական կոլեկտիվություն», որը «ստորադաս դասակարգի համար... իրենից ներկայացնում է ոչ միայն միանգամայն երևակայական կոլեկտիվիզմ, այլև նոր կապանքներ»[2]։

Մի այլ առիթով Կ. Մարքսը գրել է, որ մոնոպոլիստական ընկերության ներսում տեղի ունեցած փոփոխությունները, ըստ էության, չեն դիպչել բուրժուական արտադրահարաբերությունների բնույթին, որ այդ փոփոխությունների հետևանքով արտադրության հասարակական բնույթի և յուրացման կապիտալիստական ձևի միջև հակասությունը միայն նոր դրսևորում է ստացել։ «Անտի-Դյուրինգում» նշելով, որ կապիտալիստական «կոլեկտիվ» սեփականության համեմատությամբ բուրժուական պետական սեփականությունը ներկայացնում է ավելի բարձր աստիճան, Ֆ. Էնգելսը անմիջապես հիշեցնում է, որ այնուամենայնիվ այդ սեփականությունը կապիտալիստական է. «... ոչ ակցիոներական ընկերությունների ձեռքն անցնելը, ոչ էլ պետական սեփականություն դարձնելը չեն ոչնչացնում արտադրողական ուժերի կապիտալիստական բնույթը»[3]։

Վերլուծելով իմպերիալիզմի բնորոշ գծերը, Վ. Ի. Լենինը եզրակացրել է, որ «կապիտալիզմի մի քանի հիմնական հատկություններ սկսեցին իրենց հակադրությանը վերածվել»[4]։ Չնայած այն բանին, ասում էր նա, որ բուրժուազիան ազգային և նույնիսկ միջազգային մասշտաբով համակենտրոնացնում է արտադրությունը, չնայած ամենաբազմապիսի միջոցներ է մշակում տնտեսությունը ռացիոնալ կերպով

1 Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., հ. 22, էջ 280։

2 Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 3, էջ 75։

3 Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1967, էջ 374։

4 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, էջ 352։

վարելու համար, բայց դրանք ոչնչով չեն փոխում բուրժուական կարգերի բնույթը։ Ահա թե ինչու, ընդգծում էր նա, «մենք, այնուամենայնիվ, մնում ենք կապիտալիզմի շրջանում, թեև նրա նոր ստադիայում, բայց, անկասկած, կապիտալիզմի շրջանում»[1]։ Լենինյան այս խոսքերն ամբողջովին կիրառելի են նաև ժամանակակից կապիտալիստական աշխարհի նկատմամբ։

Իհարկե, Ջոն Գելբրայթը քննադատում էր «տեխնոստրուկտուրայի» առանձին կողմերը, հատկապես նրա ձգտումը՝ հաստատել համապարփակ տոտալիտար կարգեր, որտեղ գերիշխի միայն ու միայն ռացիոնալ մտածողությունը՝ ի հաշիվ մարդկային զգայական ներքնաշխարհի խաթարման ու ավերման, հասարակության հոգևոր պահանջմունքների անտեսման։ Բայց Գելբրայթն անմիջապես վերապահություն է անում, ասելով, թե տոտալիտարիզմ հաստատելու «տեխնոստրուկտուրայի» ձգտումների դեմ հանդես է գալիս մի հզոր ուժ՝ «ազատ աշխարհի» «ինտելեկտուալ էլիտան»— գիտության մարդիկ՝ «պրոֆեսորներն ու գիտնականները», որոնք, ըստ նրա, առաջիկա տասնամյակներին, այսպես կոչված «տեխնոտրոնային դարում» կկարողանան «տեխնոստրուկտուրան» շեղել վտանգավոր ուղուց. նա այն ժամանակ նոր, է՛լ ավելի մեծ բարիքներ կբերի ժողովրդին, է՛լ ավելի մեծ մասշտաբներով կձեռնարկի արտադրության կատարելագործմանը և զարգացմանը, որը, վերջին հաշվով, հասարակության բոլոր անդամների երջանկության հիմքն է։

Իրավ, ներկա էտապում կապիտալիստական արտադրության մեջ շարունակվում է տեխնիկայի առաջընթացը, տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործումը, տնտեսության կառավարման սիստեմի ռացիոնալիզացիան։ Դա, մասնավորապես, պայմանավորված է նրանով, որ գտնվել են արդյունաբերության մեջ ջերմամիջուկային էներգիայի օգտագործման ուղիները, ստեղծվել են արագագործ հաշվիչ մեքենաներ, լայն մասշտաբներով կատարվում են արտադրական պրոցեսների մեքենայացում և ավտոմատացում։ Շահագործողական հասարակարգում տեխնիկայի ու գիտության առաջընթացը թելադրված է արտադրական ծախսերի կրճատման ու մրցակցային դաժան պայքարում հակառակորդին հաղթելու բուռն տենչով։ Կյանքը ցույց տվեց, որ չնայած տեխնիկայի բնագավառում կատարած հեղափոխական գյուտերին ու հայտնագործություններին, առաջնակարգ մեքենաների ու մեխանիզմների ստեղծմանը, դրանք, սակայն, կապիտալիստական արտադրահարաբերությունների պայմաններում չբարելավեցին և չեն կարող բարելավել աշխատավորների սոցիալական վիճակը։ Գիտության ու տեխնիկայի հետագա զարգացումը արմատապես չբարելավելով աշխատավորների տնտեսական դրությունը, ավելի է խորացնում բուրժուական հասարակարգի անլուծելի դասակարգային հակասությունները։ Իրական փաստերը մերժեցին նաև բուրժուական կարգերի պաշտպանների այն տեսակետը, թե արդյունաբերության զարգացման, գիտության ու տեխնիկայի առաջընթացի հետևանքով քանակապես աճած ինժեներները, տեխնիկները, ձեռնարկությունների ադմինիստրատիվ աշխատողները իսկական սոցիալական հեղաշրջում են առաջ բերել կապիտալիստական արտադրահարաբերությունների մեջ։ Ճշմարտությունն այն է, որ չնայած վերջին տասնամյակների ընթացքում տեխնոկրատների նշանակալից քանակական աճին, նրանք որակական փոփոխություն չեն մտցրել կապիտալիստական արտադրահարաբերությունների բնույթի մեջ, ի վիճակի չեն եղել բուրժուական երկրներում իրենց ձեռքը գցելու կառավարման ղեկը։ Արտադրության պրոցեսում ինժեներատեխնիկական անձնակազմը աշխատավորների մյուս շերտերից տարբերվում է սոսկ իր տեխնիկական գիտելիքների մակարդակով։ Չնայած արտադրության պրոցեսում ֆունկցիաների որոշ փոփոխությանը, վարչական և ինժեներատեխնիկական աշխատողներից չի ձևավորվում ինքնուրույն դասակարգ։ Նրանք շարունակում են մնալ կապիտալիստների դասակարգին ենթակա վիճակում, որից վարձատրություն են ստանում, շահագործվում են և իրենց աշխատուժի ծախսմամբ հավելյալ արժեք են ստեղծում առանձին կապիտալիստների

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 25, էջ 574։

կամ կապիտալիստների խմբի համար։ Որքան էլ արտաքնապես թվա, թե իր գիտելիքների շնորհիվ տեխնիկայի բնագավառի աշխատողը հասարակության մեջ ձեռք է բերել տնտեսական ու քաղաքական ինքնուրույնություն, այնուամենայնիվ, ճշմարտությունն այն է, որ նա կապիտալիստի առջև իրավական տեսակետից նույնքան անզոր է, որքան արտադրության մեջ զբաղված ավելի ցածր կատեգորիայի վարձու աշխատողները։ Այս հանգամանքը ի նկատի ունենալով, Կ. Մարքսը ժամանակին նշել է, որ կապիտալիզմի զարգացման ընթացքում «հանդես է գալիս թվով աննշան մի անձնակազմ, որն զբաղված է բոլոր մեքենաներին հրամայելով ու նրանց մշտական նորոգմամբ։ Օրինակ, ինժեներները, մեխանիկները, հյուսները և այլն։ Սա բանվորների ավելի բարձր, մասամբ գիտականորեն կրթված, մասամբ արհեստային բնույթի խավն է, որը գործարանային բանվորների շրջանակից դուրս է կանգնած, լոկ կցված է նրան»[1]։

Կապիտալի տիրապետության պայմաններում ինժեներա-տեխնիկական աշխատողների և արտադրության վարիչների մեծ մասը սերում է բուրժուական ընտանիքներից։ Մյուս մասը, որ սերում է բնակչության այլ շերտերից, ելնելով հասարակության մեջ իր զբաղեցրած դիրքից ու ապագայի հեռանկարներից, ամեն կերպ աշխատում է ապացուցել իր նվիրվածությունը կապիտալի տերերին։ Վերջիններս, իհարկե, չեն մոռանում նրանց և, որպես կանոն, վճարում են սովորականից բարձր աշխատավարձ։ Այդ ճանապարհով կուտակելով համապատասխան դրամագլուխ, արտադրության վարիչները դառնում են ձեռնարկությունների բաժնետերեր և անցնում ֆինանսիստների ու արդյունաբերողների շարքերը։

Այստեղից հետևում է, որ պրոֆեսիոնալ-տեխնոկրատների խավը, կամ Ջոն Գելբրայթի հնարած «տեխնոստրուկտուրան», ամբողջությամբ վերցրած կախման մեջ լինելով կապիտալիստներից, ինքն իր հերթին յուրատեսակ հիերարխիկ սանդուղք է, որի ստորին աստիճանին գտնվում է բանվոր դասակարգի հետ ամուր կապ պահպանող վարպետների և միջին որակավորում ունեցող տեխնիկների խավը։ Սանդուղքի վերին աստիճանը զբաղեցնում է տեխնիկական մտավորականության այն մասը, որը վայելում է խոշոր բուրժուազիայի լիակատար վստահությունը։

Այսպիսով, պարզ է դառնում, որ բուրժուական արտադրահարաբերությունների պայմաններում պրոֆեսիոնալ-տեխնոկրատները, այսպես կոչված «տեխնոստրուկտուրան», ի վիճակի չեն իրենց ձեռքը վերցնելու հասարակական կյանքի կառավարման ղեկը, քանի որ նրանց քանակական աճը, կամ արտադրության մեջ նրանց դերի որոշակի բարձրացումը չի հասցնում կապիտալիստների անսահմանափակ տիրապետության թուլացմանը։ Հասարակության մյուս դասակարգերի ու խավերի, այդ թվում նաև պրոֆեսիոնալ-տեխնոկրատների օգտին բուրժուազիան մաղաչափ անգամ չի զիջում իր իշխանությունը։ Այս իրողությունն անտեսող Ջոն Գելբրայթին թվում է, թե «տեխնոստրուկտուրայի» տեսությամբ կարող է առաջ բերել տպավորություն բուրժուական կարգերի վերափոխման, այդ կարգերի պայմաններում դասակարգային պայքարի թուլացման և մարման մասին, հերթական մի փորձ, որ հերթական ձախողման է ենթարկվում։

* * *

Արդի գաղափարական պայքարի կենտրոնում են գտնվում գիտատեխնիկական առաջադիմության պայմաններում առաջ եկած սոցիալական և կուլտուրական զարգացման նոր պրոբլեմներ։ Լենինիզմի հակառակորդները, օգտագործելով այդ առաջադիմության հետևանքները և նոր երևույթները, փորձում են կապիտալիզմի օգտին անհրաժեշտ տեսական եզրակացություններ անել, միաժամանակ ժխտել զարգացման մարքսիստական տեսությունը։

Զարգացման արդի բուրժուական կոնցեպցիաների շարքում առանձնանում են տնտեսական աճի վերաբերյալ նորագույն դոկտրինաներ, որոնց թվում առավել հայտնին և Արևմուտքում լայն տարածում գտածը ամերիկյան տնտեսագետ և սոցիոլոգ Ուոլտ Ռոստոուի զարգացման ստադիաների կամ զարգացման փուլերի վերաբերյալ տեսությունն է։ Այդ

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1-ին, Հայպետհրատ, 1964, էջ 441։

տեսությունը նա զարգացրել է «Տնտեսական աճի փուլերը»[1] խորագիրը կրող իր հայտնի աշխատության մեջ, որն ուղղված է պատմական պրոցեսի զարգացման մասին Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի ուսմունքի դեմ։

Ինչպես հայտնի է, մարդկային հասարակության զարգացման մարքսիստական ըմբռնման հիմքում ընկած է հասարակական-տնտեսական ֆորմացիաների և նրանց հաջորդական հերթափոխության՝ որպես բնապատմական առաջադիմական պրոցեսի, մասին կուռ ուսմունքը։ Ռոստոուն իր տնտեսական աճի «փուլերի» տեսությամբ տրամագծորեն հակադիր դիրք է բռնել այդ ուսմունքի նկատմամբ։ Տնտեսական աճի փուլերի բնութագրման համար Ռոստոուն որպես չափանիշ առաջադրեց պատմական տվյալ ժամանակաշրջանում ստեղծված ազգային համախառն արտադրանքի ծավալն ընդհանրապես, մեկ շնչին ընկնող արտադրանքի ծավալը՝ մասնավորապես։ Առաջին պլան մղված ազգային համախառն արդյունքի մեծությամբ Ռոստոուն բնորոշում է ոչ միայն տվյալ երկրի դրությունը, այլև նրա վերնաշենքային կատեգորիաները, մի կողմ թողնելով այն հարցը, թե հասարակական-տնտեսական ինչ կարգեր են իշխում այնտեղ։

«Տնտեսական աճի փուլերի» տեսության համաձայն, նախնադարից մինչև այժմ մարդկությունն անցել է ոչ թե սոցիալ-տնտեսական հինգ ֆորմացիաներով, այլ «տնտեսական աճի» (սոցիալական և տնտեսական զարգացման) հինգ փուլերով՝ տրադիցիոն, անցման շրջանի, տեղաշարժվող, հասուն և մասսայական բարձր սպառման փուլերով։

«Տնտեսական աճի» առաջին խոշոր փուլի՝ «տրադիցիոն հասարակության» մեջ Ռոստոուն մտցնում է հասարակատնտեսական երեք ֆորմացիա՝ նախնադարյան-համայնական, ստրկատիրական և ֆեոդալական, ընդհուպ մինչև 17-րդ դարը, երբ հասարակության հիմնական բնորոշ գիծը ձեռքի պրիմիտիվ տեխնիկան էր՝ բնակչության մեկ շնչին ընկնող արտադրության շնչին ծավալով հանդերձ։ Այնուհետև, 17-րդ դարի վերջերից վրա է հասնում այսպես կոչված «անցման փուլը», երբ առաջ են գալիս ու զարգանում արդյունաբերության նոր ճյուղեր, տեղի է ունենում արդյունաբերողների նոր դասակարգի արագ աճ։ «Անցման փուլին» հաջորդած «թռիչքի (կամ տեղաշարժի) փուլը» բնորոշվում է նրանով, որ աշխատանքի գործիքները գնալով բարդանում են, ձեռքի աշխատանքն աստիճանաբար փոխարինվում է մեքենայականով։ Ռոստոուի կարծիքով այդ ստադիայի վրա Անգլիան գտնվել է 18-րդ դարի վերջին, Ֆրանսիան և ԱՄՆ-ը՝ 19-րդ դարի կեսերին, Գերմանիան՝ 19-րդ դարի երկրորդ կեսին, Ռուսաստանը՝ 1880-1914 թվականներին, Հնդկաստանը և Չինաստանը այդ ստադիան են թևակոխել 20-րդ դարի 50-ական թվականների սկզբներից։ Այնուհետև վրա է հասնում չորրորդ փուլը՝ «հասունության շրջանի հասարակությունը», երբ անընդհատ աճող տնտեսությունն իր մեջ է ներառնում ժամանակի առաջավոր գիտությունը, տեխնիկան ու տեխնոլոգիան։ Հասարակության «հասունության» ժամանակաշրջանը Ռոստոուն նույնացնում է «ինդուստրիալ հասարակության» հետ։ Ու. Ռոստոուն «տնտեսական աճի» չորրորդ փուլին՝ «հասունության շրջանին» է վերագրում բարձր զարգացման հասած և ժամանակակից կապիտալիստական երկրները՝ Կանադա, Ճապոնիա, Ավստրալիա, Նոր Զելանդիա և Հարավ-Աֆրիկյան Հանրապետություն (բացառությամբ ԱՄՆ-ի, որին նա վերագրում է այսպես կոչված «մասսայական բարձր սպառման ժամանակաշրջանին») և սոցիալիստական համագործակցության երկրները։ Այդ երկրները, անկախ իրենց սոցիալական կարգերից, տարբեր ժամանակ են թևակոխել «տեխնոլոգիական հասունության» շրջանը՝ Անգլիան՝ 19-րդ դարի կեսերին, ԱՄՆ-ը՝ նույն դարի վերջին, Գերմանիան և Ֆրանսիան՝ 20-րդ դարի առաջին տասնամյակին, Շվեդիան՝ նույն դարի 30-ական թվականներին, Ճապոնիան՝ 1940-ական թվականներին, Սովետական Միությունը՝ 1950-ական թվականներին։ Վերջին՝ հինգերորդ փուլը Ռոստոուն անվանում է «մասսայական բարձր սպառման ժամանակաշրջան», երբ արտադրության մեքենայացմանը փոխարինում է ավտոմատացումը, հսկայական չափերով մեծանում է սննդամթերքների, հագուստի, երկարաժամ-

[1] **W. W. Rostow.** Tte Stages of Economic Growth. A Non—Communist Manifesto. Gambridge University Tress. 1960.

կետ օգտագործման ապրանքների սպառումը, արտադրության մեջ գնալով էական նշանակություն է ձեռք բերում ատոմային էներգիան։ Ինչպես հավաստիացնում է Ռոստոուն, «մասսայական բարձր սպառման դարաշրջան» առաջինը ոտք են դրել ԱՄՆ-ը, դեռևս 1913—1914 թվականներին։ 20-ական թվականներին մասսայական բարձր սպառումը դառնում է Ամերիկայի բնորոշ ու տարբերիչ գիծը, իսկ 50-ական թվականներին այն հասնում է իր «տրամաբանական ավարտին»։

Արևմտյան Եվրոպան և Ճապոնիան զարգացման այդ էտապն են թևակոխել 50-ական թվականներին։ Ինչ վերաբերում է Սովետական Միությանը, ապա Ռոստոուն «մեծահոգաբար» ասում է, թե ՍՍՀՄ-ը «տեխնոլոգիապես պատրաստ է այդ փուլին անցնելու»։

Սրանք են «տնտեսական աճի» այն փուլերը, որոնք Ռոստոուն առաջ է քաշել իբրև հասարակական-տնտեսական ֆորմացիաների, մարդկային հասարակության աստիճանական և վերընթաց զարգացման մասին մարքսիստական-լենինյան տեսության ալտերնատիվ։

Ու. Ռոստոուի տեսության լույս աշխարհ գալուց անմիջապես հետո նրա ակտիվ պաշտպանությամբ ու պրոպագանդայով հանդես եկան բուրժուական աշխարհի բազմաթիվ անվանի տնտեսագետներ, փիլիսոփաներ ու սոցիոլոգներ՝ Ս. Լիպսետը, Ու. Մուրը, Ա. Ֆելդմանը, Հ. Կանը, Է. Լունդբերգը և ուրիշներ։ Այն լիակատար պաշտպանություն գտավ Ռ. Արոնի, Ջ. Գելբրայթի և այլոց աշխատություններում։

Ինչպես տեսնում ենք, Ու. Ռոստոուի «տնտեսական աճի փուլերի» տեսությունը հիմքից հակագիտական է։ Դրա արմատական մեթոդոլոգիական սխալը տեխնոլոգիական մոտեցումն է հասարակական երևույթներին։ Պատմության պարբերացման հիմքում Ռոստոուն դնում է ոչ թե հասարակության տնտեսական բազիսը կազմող արտադրության եղանակը, այլ տեխնիկատնտեսական խայտաբղետ հատկանիշներ, ինչպես, օրինակ՝ տեխնիկայի զարգացման աստիճանը, տնտեսության ճյուղային կառուցվածքը, ազգային եկամտի մեջ կապիտալ ներդրումների տեսակարար կշիռը, հասարակական սպառման բնույթը և այլն, որոնք ինքնին

շատ կարևոր ցուցանիշներ են, բայց չեն կարող չափանիշ ծառայել հասարակական-տնտեսական ֆորմացիաները միմյանցից բաժանելու և սպառիչ բնութագրելու համար։ Պատահական չէ, որ Ռոստոուն ուղղակի գրում է, թե մարդկության պատմությունը նյութական արժեքների ցիկլային զարգացման պատմություն է։ Այլ խոսքով, գիտության ու տեխնիկայի առաջընթացը կատարվում է սոցիալ-կուլտուրական զարգացումից միանգամայն անջատ։

Հասարակության պատմության մեջ վճռական նշանակություն տալով «արտադրության դինամիկային», այսինքն՝ տեխնիկական, տեխնոլոգիական և տեխնիկատնտեսական ցուցանիշներին, Ռոստոուն սոցիալ-տնտեսական պայմանները նույնացնում է տեխնիկական պայմանների հետ, դրանով իսկ ստվերի տակ թողնում սոցիալական տարբեր դարաշրջաններին բնորոշ որոշակի գծերը, այն առանձնահատկությունները, որոնք որակապես տարբերում են սոցիալ-տնտեսական սիստեմները։

Փորձելով հերքել հասարակական-տնտեսական ֆորմացիաների օրինաչափ հերթափոխության մասին մարքսիստական-լենինյան տեսությունը, Ռոստոուն քանակական չափանիշների հիման վրա տնտեսական աճի միևնույն փուլին է վերագրում արտադրահարաբերությունների միանգամայն տարբեր տիպեր, եթե նրանց պատմական շրջանակներում հայտնաբերում է մոտավորապես միանման տեխնիկա կամ հասարակական արտադրության միանման ճյուղային կառուցվածք։ Անտեսելով պատմական տվյալ դարաշրջանում իշխող արտադրահարաբերությունները, Ռոստոուն դրանով իսկ թույլատրելի է համարում միավորել և նույնացնել սոցիալ-տնտեսական տարատեսակ սիստեմները, չնչել նրանց միջև եղած տարբերությունները և ընդհակառակն, սոցիալ-տնտեսական միասնական սիստեմները բաժան-բաժան անել, տրոհել տարբեր մասերի և տարալուծել զանազան ստադիաների մեջ։

Ինչպես ասվեց, տնտեսական առաջին փուլում՝ «տրադիցիոն հասարակության» մեջ Ռոստոուն միավորում է սոցիալ-տնտեսական տարբեր ֆորմացիաներ՝ նախնադարյան, ստրկատիրական և ֆեոդալական հասարակարգերը, ելնե-

լով դրանց արտադրողական ուժերից, տեխնիկայի, տնտեսության ճյուղային կառուցվածքի նմանություններից, անտեսելով նրանց որակական տարբերությունները, որոնք արտահայտվում են արտադրահարաբերությունների մեջ։

«Տնտեսական աճի փուլերի» դոկտրինայի կամայական կոնստրուկցիան ինքնանպատակ չէ, այն հետապնդում է ոչ այնքան պատմաճանաչողական, որքան զուտ քաղաքական նպատակներ։ Այն ինչ-որ չափով հնարավորություն է տալիս թաքցնել բուրժուական հասարակության շահագործողական էությունը, խեղաթյուրել կապիտալիզմի պայմաններում գոյություն ունեցող արտադրողական ուժերի և արտադրահարաբերությունների բնույթը, անտեսել մարդկային հասարակության զարգացման պրոցեսում արտադրողական ուժերի հետ մեկտեղ առաջավոր արտադրահարաբերությունների վճռական դերը։ Ռոստոուի դոկտրինան նպատակ ունի ապացուցել կապիտալիզմի հավերժ լինելը, իսկ առավել զարգացած կապիտալիստական երկրի՝ ԱՄՆ-ի անցած ուղին իբրև օրինակ ներկայացնել աշխարհի մյուս բոլոր երկրների համար, ոչ էական համարել կապիտալիստական և սոցիալիստական երկրների միջև եղած արմատական սոցիալ-տնտեսական տարբերությունները, քողարկել այն սահմանները, որոնք միմյանցից բաժանում են տրամագծորեն հակառակ հասարակական կարգեր ունեցող համաշխարհային երկու սիստեմները։ Այս կոնցեպցիայի համաձայն չկա կապիտալիզմի կործանման, կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու օբյեկտիվ անհրաժեշտություն, առանց դրա էլ ամբողջ աշխարհը ինքնաբերաբար շարժվում է ինդուստրիալ զարգացման, առաջադիմության ուղիով։ Մարքսիստների այն պնդումը, թե կոմունիզմը մարդկության անխուսափելի ապագան է, իբր չի բխում ժամանակակից հասարակական-պատմական զարգացումից։ Ավելին, Ռոստոուն գրում է, թե հակառակ մարքսիզմ-լենինիզմի, կապիտալիզմը ոչ միայն շարունակում է գոյություն ունենալ, այլև գնալով բարգավաճում է։ Համաշխարհային պատմությունը զարգանում է միանգամայն այլ կերպ, քան ենթադրում էին Մարքսը, Էնգելսը, Լենինը։

Եվ դա ասվում է այն ժամանակ, երբ մարդկության մեկ երրորդը թևակոխել է սոցիալիստական զարգացման ուղին,

խորտակվել է իմպերիալիզմի գաղութային սիստեմը, տասնյակ ժողովուրդներ բռնել են զարգացման ոչ կապիտալիստական ուղի, երբ կապիտալիզմը ծվատվում է ներքին հակասություններից, ապրում է ընդհանուր խոր ճգնաժամ և վաղուց մարդկության համար դարձել է հակաժողովրդական հասարակարգ։ Սոցիալիստական և կապիտալիստական հասարակարգերը սկզբունքորեն միանգամայն տարբեր, միմյանց թշնամի հասարակարգեր են և դրանց հակադրությունը անհնարին է սքողել վկայակոչելով միայն այն փաստը, որ և՛ սոցիալիզմը, և՛ կապիտալիզմն օգտագործում են մեքենայական նույնանման տեխնիկա, որ այդ սիստեմների պայմաններում արտադրությունն իրականացվում է զարգացած ինդուստրիայի բազայի վրա։

Մարքսը, Էնգելսը, Լենինը մարդկային հասարակությունն ուսումնասիրեցին հարուստ ու բարդ կապերով և հարաբերություններով, նրանում գործող օրինաչափություններով հանդերձ։ Այդ կապերի, հարաբերությունների և օրինաչափությունների մեջ Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը տեսան հակադրությունների միասնության ու պայքարի, քանակական փոփոխություններից որակական փոփոխություններին անցնելու, շարժման, փոփոխման ու զարգացման հիմքում ընկած բացասման բացասման, վերընթաց զարգացման ընդհանուր օրինաչափությունները։

Ստեղծելով հասարակական-տնտեսական ֆորմացիաների մասին տեսությունը, դրանով իսկ մարքսիզմ-լենինիզմի կլասիկները գիտական հիմք տվեցին մարդկային հասարակության ողջ պատմության պարբերացման համար։ «Պատմության ու քաղաքականության մասին գոյություն ունեցող հայացքներում մինչ այդ տիրող քաոսն ու կամայականությունը,— նշել է Վ. Ի. Լենինը,— փոխարինվեցին զարմանալի ամբողջական և ներդաշնակ գիտական տեսությամբ, որը ցույց է տալիս, թե ինչպես հասարակական կյանքի մի կացութաձևից, արտադրողական ուժերի աճման հետևանքով, զարգանում է մյուսը, ավելի բարձրը»[1]։

Մարքսն ու Էնգելսը ամենից առաջ ցույց տվեցին, որ մարդկության պատմությունը եղել է դասակարգային պայ-

[1] Վ. Ի. Լենին. Երկ, հ. 23, էջ 50

քարի պատմություն, որ այդ պայքարն է հանդիսացել հասարակության շարժիչ ուժը։ Նրանք միաժամանակ ցույց տվեցին, որ հասարակական-տնտեսական մի ֆորմացիա առավել բարձր ֆորմացիայով փոխարինելու պրոցեսի հիմքում ընկած է արտադրողական ուժերի զարգացումը, որոնք արտադրության եղանակի առավել շարժունակ տարրերն են։ Ընդհակառակն, տվյալ արտադրության եղանակի առավել պահպանողական տարրը արտադրահարաբերություններն են, որոնք շատ ավելի դանդաղ են փոփոխվում, քան արտադրողական ուժերը։ Սեփականության ամեն մի ձև ենթադրում է իրեն համապատասխան տեխնիկայի գոյություն և արտադրողական ուժերի զարգացման որոշակի մակարդակ։ Անընդհատ շարժման մեջ գտնվող արտադրողական ուժերն ու սեփականության ձևերը միաժամանակ միմյանց նկատմամբ հակասության մեջ են։ Զարգացման որոշակի աստիճանում արտադրողական ուժերը բախվում են սեփականատիրության մասնավոր ձևերի հետ։ Ի վերջո նման կոլիզիայի ժամանակ սեփականատիրության հնացած ձևերը, այդ թվում կապիտալիստական սեփականության առավել հանրայնացված ձևերը վերածվում են բացարձակ խոչընդոտի տեխնիկայի և տեխնոլոգիայի հետագա զարգացման ճանապարհին։ Այսպիսի վիճակում կապիտալիզմի վերացումը դառնում է պատմական անհրաժեշտություն։ Չնայած դրան, ամեն մի հասարակության կառուցվածքն ու դիրքը՝ որոշում են արտադրահարաբերությունները։ Սրանք են նաև, որ հնարավորություն են տալիս բնորոշելու դրանց դասակարգերին, ըմբռնելու այդ դասակարգերի փոխհարաբերությունները, քաղաքական և գաղափարական վերնաշենքերի էությունը։

Մարքսիզմ-լենինիզմի հակառակորդները, ինչպես նախկինում, այնպես էլ այժմ շատ ջանքեր են թափել, որպեսզի ապացուցեն, թե արտադրահարաբերություններով հնարավոր չէ բնութագրել հասարակության դեմքը, թե դրանք ոչ մի նշանակություն չունեն հասարակության զարգացման ընթացքն ըմբռնելու համար։

Այսպես, Ռայմոն Արոնը «18 դասախոսություն ինդուստրիալ հասարակության մասին» գրքում աշխատում է ոչ մի տարբերություն չտեսնել հասարակական-տնտեսական

ֆորմացիաների միջև, տնտեսական սիստեմների բնութագրության փորձ կատարելիս դիմում է ոչ թե արտադրահարաբերություններին, այլ արտադրողական ուժերին և ամենից առաջ մարդուն։ Նա գրում է, թե միայն աշխատանքի միջոցով մարդը կարող է բավարարել իր պահանջմունքները։ Ելնելով այս նախադրյալից, այնուհետև Արոնը աշխատանքը դիտում և քննարկում է երեք գլխավոր տեսանկյունից՝ 1) տեխնոլոգիական, երբ աշխատանքը բնորոշվում է արտադրության գործերի միջոցով, այսինքն՝ բնորոշվում է ըստ արտադրության գործիքի, այլ խոսքով՝ թե ինչպիսին է այն. 2) իրավաբանական, երբ աշխատանքը բնորոշվում է նրանով, թե ում է պատկանում արտադրության գործիքը. 3) սոցիալական կամ վարչական տեսանկյունից, երբ Ռ. Արոնը աշխատանքը բնորոշում է նրա հասարակական կազմակերպվածությամբ, մասնավորապես աշխատանքի բաժանման տիպով։

Այս դասակարգումից պարզ երևում է, որ Արոնը փորձում է շրջանցել այն գլխավոր հատկանիշը, որը միմյանցից տարբերում է տնտեսական սիստեմները։ Պատահական չէ, որ արտադրության միջոցների նկատմամբ մարդկանց վերաբերմունքը Ռ. Արոնը մեկնաբանում է որպես իրավաբանական կատեգորիա։ Դա սխալ է, քանի որ իրականում սեփականությունը ամենից առաջ տնտեսական կամ արտադրական հարաբերություն է, իսկ իրավաբանական նորմերը ոչ այլ ինչ են, քան տնտեսական հարաբերությունների իրավունքի արտահայտություն։

Պատմական մատերիալիզմի կարևորագույն առանձնահատկություններից մեկն այն է, որ նա պահանջում է կոնկրետ պատմական մոտեցում ունենալ հասարակական երևույթների նկատմամբ։

Մարքսիզմ-լենինիզմի հակառակորդները անհիմն պնդում են, թե պատմական մատերիալիզմը վերացական է, անտեսում է ժողովուրդների պատմական բախտի ողջ բազմազանությունը և ձգտում է այդ բազմազանությունը բռնության ուժով խցկել ֆորմացիաների հնարովի սխեմայի մեջ։

Հասարակական երևույթների ուսումնասիրության միակ գիտական մարքսիստական մեթոդի հասցեին նման մե-

զարդանքը ոչ մի հիմք չունի։ Ընդհակառակն, մարքսիզմ-լենինիզմը գտնում է, որ հասարակական երևույթների նկատմամբ կոնկրետ պատմական մոտեցումը պատմական ամեն մի երևույթի բացահայտման անհրաժեշտ պայման է։ Դա հնարավորություն է տալիս քննության ենթարկվող տվյալ երևույթը տեսնել որոշակի հասարակական-տնտեսական ֆորմացիայի, հասարակական հարաբերությունների ողջ սիստեմի հետ անխզելի կապակցության մեջ։

Երևույթների կոնկրետ պատմական մարքսիստական, դիալեկտիկական-մատերիալիստական ըմբռնումը սկզբունքային նշանակություն ունի։ Այն թույլ է տալիս հասարակական-տնտեսական ամեն մի ֆորմացիա դիտել որպես սոցիալական ամբողջական օրգանիզմ, որի հիմնական տարրերն են՝ նյութական բարիքների արտադրության եղանակը, այսինքն՝ արտադրողական ուժերը և դրանցով պայմանավորված արտադրահարաբերությունները, որոնք կազմում են հասարակության տնտեսական բազիսը, ինչպես նաև այդ բազիսին համապատասխան վերնաշենքը։ Այս լույսի տակ պետք է դիտել նաև ամեն մի հասարակական ֆորմացիայի ծագման, ձևավորման, ծաղկման ու կործանման պրոցեսը, ի տարբերություն հասարակության մետաֆիզիկական աբստրակցիաների, որոնք կատարվում են բուրժուական սոցիոլոգիայում, այդ թվում Ու. Ռոստոուի «տնտեսական աճի փուլերը» տեսության մեջ։

Մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրները բազմիցս նշել են, որ տնտեսական որևէ երևույթի քննարկումը, ուսումնասիրությունը պատմական պրոցեսից դուրս չի կարելի լուրջ և գիտական համարել։ Այսպես, 1916 թվականի նոյեմբերի 30-ին Ինեսա Արմանդին ուղղած նամակում Վ. Ի. Լենինը գրում էր. «Մարքսիզմի ամբողջ ոգին, նրա ամբողջ սիստեմը պահանջում է, որ յուրաքանչյուր դրույթ դիտվի միայն (α) պատմականորեն. (β) միայն մյուսների կապակցությամբ. (γ) միայն պատմության կոնկրետ փորձի կապակցությամբ»[1]։

Ինչպես հայտնի է, կապիտալիստական հասարակական հարաբերությունները սոցիալիստականով փոխարինելու պատմական անխուսափելիությունը, անհրաժեշտությունը Մարքսը բխեցրել է ոչ թե զարգացման վերացական սխեմաներից, այլ կապիտալիստական տնտեսական սիստեմի բազմակողմանի քննությունից։

Այդ բանի լավագույն վկայությունը մարքսիզմի գլխավոր երկի՝ «Կապիտալի» բովանդակությունն է։ Այս աշխատության մեջ Մարքսը հետևողական պատմական մոտեցման և դիալեկտիկական մեթոդի օգնությամբ խորապես ուսումնասիրեց կապիտալիստական հասակական-տնտեսական ֆորմացիան՝ իբրև կենդանի մի օրգանիզմ, բազմակողմանիորեն քննարկեց նրա զարգացման հիմնական օրենքները, տնտեսական, դասակարգային հարաբերությունները, քաղաքական վերնաշենքը, տիրապետող հասարակական գաղափարները, ընդհուպ մինչև ընտանեկան ու կենցաղային հարաբերություններն ու գծերը։ Այլ խոսքով, կապիտալիստական ֆորմացիան Մարքսը դիտեց ոչ թե որպես ինչ-որ դատարկ մետաֆիզիկական աբստրակցիա, այլ որպես պատմականորեն որոշակի, կոնկրետ հասարակական-տնտեսական ձև։

«Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ինչպե՞ս են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ» աշխատության մեջ քննադատելով մետաֆիզիկական-սոցիոլոգիական տեսությունները, Վ. Ի. Լենինը գրել է. «...այդ բոլոր փիլիսոփայական-պատմական տեսությունները, թե՛ ծագում և թե՛ պայթում էին սապոնի պղպջակների պես՝ լավագույն դեպքում իրենց ժամանակի հասարակական իդեալների և հարաբերությունների սիմպտոմը հանդիսանալով և մաղաչափ անգամ առաջ չտանելով որևէ, թեկուզ եզակի, բայց իրական (և ոչ թե «մարդկային բնությանը համապատասխանող») հասարակական հարաբերությունների ըմբռնում մարդու կողմից։ Այս տեսակետից Մարքսի արած հսկայական քայլը դեպի առաջ հենց այն էր, որ նա մի կողմ նետեց այդ բոլոր դատողությունները հասարակության և պրոգրեսի մասին առհասարակ և փոխարենը տվեց մեկ հասարակության և մեկ առաջադիմության— կապիտալիստականի— գիտական վերլուծությունը»[1]։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 265։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 1-ին, էջ 166—167։

Բուրժուական գաղափարախոսները, նրանց թվում Ու. Ռոստոուն գրում են, թե հասարակական-տնտեսական ֆորմացիաների զարգացման մասին իր տեսությունը մշակելիս և հիմնավորելիս Մարքսը լիովին անտեսել է կյանքի «առօրյա» փաստերը, այդ ֆորմացիաները բխեցրել է իր ընդհանուր տեսական-փիլիսոփայական մտածողությունից։ Ռոստոուի այս մեղադրանքը, իհարկե, զուրկ է հիմքից, այն բնավ չի համապատասխանում իրականությանը։ Իր մեծագույն ստեղծագործության՝ «Կապիտալի» մեջ կապիտալիստական հասարակական-տնտեսական ֆորմացիայի կատարած վերլուծության ընթացքում Մարքսը, Լենինի արտահայտությամբ, հենվել է տնտեսական, պատմական, քաղաքական մի ամբողջ «փաստերի Մոնբլանի» վրա։ Մարքսը նշում էր, որ տնտեսական գիտության խնդիրն է՝ բացահայտել սոցիալ-տնտեսական օրենքները՝ ուսումնասիրվող օբյեկտի տարբեր կողմերի միջև ներքին կապերը երևան հանելու միջոցով։ Միայն այդ դեպքում է հնարավոր, ինչպես պետք է, ցույց տալ իրական շարժումը։ Հենց այդ սկզբունքով էլ կազմվել է «Կապիտալի» ողջ պլանը։ «Կապիտալի» առաջին գրքում Մարքսը բացահայտեց կապիտալիստական արտադրության պրոցեսի տարբեր կողմերը, երկրորդ գիրքը նվիրված է կապիտալի շրջապտույտի պրոցեսին, որն ասես լրացնում է արտադրության պրոցեսը. «Կապիտալի» երրորդ գրքում հնարավոր դարձավ «նկարագրել այն կոնկրետ ձևերը, որոնք բողբոջում են կապիտալի շարժման պրոցեսից, վերցրած իբրև ամբողջություն»[1]։ Ինչպես մի շարք անգամ նշել է Մարքսը, «Կապիտալը» պետք է ավարտվեր կապիտալիստական հասարակարգի դասակարգերի պայքարի վերլուծությամբ, այսինքն՝ հասարակական շարժման վերլուծությամբ, շարժում, որը կոչված էր լուծելու կապիտալիստական արտադրության եղանակի հակասությունները։ Այլ խոսքով, Մարքսի միտքը տարրական տնտեսական ձևերի «միկրոանատոմիայից» գնացել է դեպի «դիախրոնիա», իսկ հետո դեպի պատմական մյուս պրոցեսներից վերլուծությունը։

Վիթխարի քանակությամբ փաստերի կոնկրետ պատմական գիտական վերլուծությունից Մարքսը հանգեց երեք հիմնական եզրակացության։ Առաջին, նա ցույց տվեց, որ կապիտալիստական հասարակության դեմքը, նրա սոցիալ-տնտեսական բնույթը որոշում է արտադրության միջոցների և արտադրողների միավորման եղանակը, այսինքն՝ արտադրության միջոցների և արտադրողների փոխհարաբերության եղանակը։ Երկրորդ, նա բնութագրեց աշխատավորների շահագործման միայն կապիտալիզմին բնորոշ ձևը, դասակարգային այն հակամարտությունները, որոնք բնորոշ են միայն կապիտալիստական հասարակական-տնտեսական ֆորմացիային։ Երրորդ, Մարքսը ցույց տվեց, որ կապիտալիզմը ոչ թե բնական ու հավերժ, այլ պատմական ու անցողիկ ձև է, որն ունի սկիզբ՝ զարգացման տնտեսական օբյեկտիվ օրինաչափություններով, բայց որն անխուսափելիորեն դեպի վախճան է գնում։

Իրենց մյուս աշխատություններում Մարքսն ու Էնգելսը ամբողջացրին կապիտալիստական հասարակական-տնտեսական ֆորմացիայի պատկերը։ Կապիտալիստական հասարակական սիստեմը դիտելով որպես կոնկրետ պատմական բարդ օրգանիզմ, միաժամանակ մարքսիզմի հիմնադիրները բացահայտեցին այդ ամբողջական սիստեմի ներսում տարբեր բաղադրամասերի՝ տնտեսական բազիսի, քաղաքական ու գաղափարական վերնաշենքի և այլ ատրիբուտների գոյությունն ու նրանց դերը։ Նրանք ցույց տվեցին, որ հասարակական-տնտեսական ֆորմացիա կազմող հիմնական տարրերը գտնվում են սերտ միասնության մեջ, անխզելիորեն կապված են միմյանց, ակտիվորեն փոխազդում են մեկը մյուսին։ Նրանք առաջին անգամ ուշադրություն դարձրին նաև այդ միասնական օրգանիզմի ամենատարբեր բաղադրամասերի կամ «հարկերի» բարդ փոխներգործությանը, նրանց դետերմինացիայի ու ետադարձ կապերի բարդությանը, կապիտալիստական հասարակության սոցիալական կառուցվածքի զարգացման անհամաչափությանը, ցույց տվեցին, որ այլ կերպ չի էլ կարող լի-

1 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3-րդ, մաս 1-ին, Պետհրատ, Երևան, 1947 թ., էջ 3։

նել անտագոնիստական հասարակական-տնտեսական ֆորմացիաների պայմաններում։

Մարքսի ու Էնգելսի պատմական մոնիզմը բնավ չի բացառում հասարակական կյանքի տարբեր, այդ թվում պատահական, գործոնների բազմակողմանի փոխներգործությունը։ Ինչպես նշել է Ֆ. Էնգելսը, հասարակական կյանքում տնտեսական անհրաժեշտությունն իր համար ճանապարհ է հարթում բազմաթիվ պատահականությունների միջով։

Իբրև հասարակական առաջադիմության հիմնական չափանիշ առաջ քաշելով արտադրողական ուժերի, և առաջին հերթին մարդու զարգացումը, Մարքսն ու Էնգելսը բնավ չէին բացառում, որ սոցիալական կոնկրետ սիստեմի կոմպոնենտների ներսում կարող են գոյություն ունենալ առաջադիմության սեփական յուրահատուկ չափանիշներ։ Այսպես, օրինակ, տեխնիկայի զարգացման այս կամ այն էտապում այդ զարգացման չափանիշ կարող են ծառայել նրա գործունեության տնտեսական շահութաբերությունը, տեխնիկական վերափոխումների իրականացման արդյունավետությունը և այլն։ Հասարակական-տնտեսական սիստեմների ներսում նման կայուն, համեմատաբար ինքնուրույն, չափանիշների գոյությունն էլ հենց ընդգծում է, թե որքան մեծ է հասարակական առաջադիմության միասնական ընդհանուր չափանիշների նշանակությունը։ Այդ իսկ պատճառով մարքսիստական սոցիոլոգիան մարդկային հասարակությունն ուսումնասիրում է նրա բազմակողմանի զարգացման տեսակետից։

Ժխտելով հասարակական երևույթներին մարքսիզմ-լենինիզմի կոնկրետ պատմական մոտեցման մեթոդը, Ու. Ռոստոուն գրում է, թե խոսելով տվյալ հասարակական-տնտեսական ֆորմացիան մյուսով փոխարինելու մասին, Մարքսը այդ փոխարինման պրոցեսը դիտում է իբրև ինքնաբերաբար կատարվող պրոցես, որն ըստ էության, տնտեսական երևույթների նկատմամբ ֆատալիստական մոտեցման մի տարբերակ է։

Մարքսի և մարքսիզմի հասցեին նման մեղադրանքը մերժելու համար հարկ չկա դիմել մեծաթիվ փաստարկների։ Մարքսը հաճախ էր նշում, որ գիտական վերլուծության մեջ գլխավորն այն է, որպեսզի կարողանալ տարբեր երևույթների և սիստեմների մեխանիզմների թվացող անփոխելիության ետևում բացահայտել այն հակասական խոր պրոցեսները, որոնք քայքայում են առաջ բերում հնի ներսում և նախադրյալներ ստեղծում նոր երևույթների ու սիստեմների առաջացման համար։ Հիշենք, թե Մարքսը ինչպես էր կապիտալի ծագման օբյեկտիվ նախադրյալներից՝ ապրանքային արտադրության որոշակի մակարդակի առկայությունից և ապրանքափողային շրջանառության զարգացումից, անցում կատարում կապիտալի ընդհանրական բանաձևին։ Այս անցման ժամանակ առաջացած հակասությունները, իրենց հերթին, Մարքսին օգնեցին ըմբռնելու հավելյալ արժեքի ստեղծման մեխանիզմը և դասակարգային պայքարի պրոցեսը։ Երևույթների հարաբերական անփոփոխելիության ետևում Մարքսը բացահայտում էր պրոցեսների կենդանի դիալեկտիկան։ Հենց գիտական, դիալեկտիկական մեթոդը Մարքսին հնարավորություն տվեց ապացուցելու, որ «այժմյան հասարակությունը մի կարծր բյուրեղ չէ, այլ փոխակերպումների ընդունակ ու շարունակ փոխակերպման պրոցեսի մեջ գտնվող մի օրգանիզմ»[1]։

Տնտեսական երևույթների նկատմամբ կոնկրետ պատմական մոտեցման իսկական օրինակ է Վ. Ի. Լենինի ողջ տեսական ժառանգությունը։ Ի հակադրություն ամեն տեսակ դոգմատիկների և ռևիզիոնիստների, Վ. Ի. Լենինը իր աշխատությունների մեջ ոչ միայն ցույց է տվել, թե ինչպես պետք է ըմբռնել պատմական մատերիալիզմը, այլև թե հասարակական, տնտեսական կյանքի պրոցեսների, նոր երևույթների վերլուծության ընթացքում ինչպիսի ստեղծագործական մոտեցում պետք է ունենալ։ «Սոցիալական անխտիր բոլոր հարցերը վերլուծելիս,— գրել է Վ. Ի. Լենինը,— մարքսիստական թեորիայի անպայմանական պահանջն է՝ այդ հարցերը դնել որոշ պատմական շրջանակների մեջ, և ապա, եթե խոսքը վերաբերում է մի երկրի (օրինակ, տվյալ երկրի ազգային ծրագրին), կատարել այն կոնկրետ առանձ-

1 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, հ. 1-ին, էջ 547։

նահատակությունների հաշվառումը, որոնցով այդ երկիրը միևնույն պատմաշրջանի սահմաններում տարբերվում է մյուսներից»[1]։

19-րդ դարի վերջին Մարքսի «Կապիտալը» բոլոր երկրների մարքսիստների, այդ թվում ռուս մարքսիստների, հեղափոխական գործունեության տեսական հիմքն էր։ Բայց ցարիզմի և բուրժուազիայի դեմ հաջող պայքար կազմակերպելու, պայքարի ճիշտ տակտիկա մշակելու համար բավական չէր իմանալ կապիտալիզմի զարգացման ընդհանուր օրենքները։ Ռուս մարքսիստներին անհրաժեշտ եղավ հանգամանորեն ու բազմակողմանիորեն ուսումնասիրել կապիտալիստական հարաբերությունների սաղմնավորումն ու զարգացումը Ռուսաստանի կոնկրետ պայմաններում։ Տնտեսական և սոցիալական կյանքի երևույթների նկատմամբ կոնկրետ պատմական մոտեցման իսկական օրինակ հանդիսացավ Վ. Ի. Լենինի «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշխատությունը, որտեղ կոնկրետ պատասխաններ տրվեցին այն հարցերին, որոնք առաջ էին քաշվել 19-րդ դարի վերջին՝ Ռուսաստանի հասարակական-տնտեսական և քաղաքական զարգացման ողջ ընթացքով։

Դա Լենինից պահանջեց վիճակագրական բազմաթիվ նյութերի վերլուծության միջոցով բացահայտել Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման պատմական պրոցեսը, նրա առանձնահատկությունները, պարզել, թե ապրանքադրամական հարաբերություններն ինչպես են թափանցում ռուսական գյուղ, թե զարգացող արդյունաբերության համար ինչպես է կազմավորվում ներքին շուկան։ Լենինը ուշի ուշով հետևում էր և կոնկրետ նյութերի վերլուծության միջոցով ցույց տալիս, թե Մարքսի կապիտալիզմի ընդհանուր տնտեսական օրենքներն ինչպիսի արտահայտություն են գտնում Ռուսաստանի յուրօրինակ պայմաններում։

Իր նախորդ և հետագա աշխատություններում նույնպես Վ. Ի. Լենինը հասարակական երևույթների նկատմամբ կոնկրետ պատմական մոտեցման իսկական օրինակ էր տալիս, մշտապես հաշվի առնում պատմական պրոցեսի

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 498։

ընթացքում ժողովուրդների, հասարակական խմբերի ու դասակարգերի պատմական ստեղծագործության վիթխարի բազմազանությունը, պատմության ողջ «խորամանկությունը», հասարակական պրակտիկայի ողջ բարդությունը, պրակտիկա, որն ավելի հարուստ է, քան ամենախոր տեսությունը։ Նա նշում էր, որ պատմական այս կամ այն էտապում, այս կամ այն երկրում արտահայտված հասարակական ձևերի յուրահատկությունները կախված են ոչ միայն այդ երկրների զարգացման ներքին օրինաչափություններից, այլև պայմանավորված են պատմական այն միջավայրով, որում դրսևորվում են այդ յուրահատկությունները։

Այս տեսակետից բնորոշ է իմպերիալիզմի լենինյան տեսությունը, մեկ երկրում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի հնարավորության մասին նրա հանճարեղ հետևությունները։

Քննադատելով դոգմատիկներին ու դոկտրինյորներին, որոնք Ռուսաստանում 1917 թվականի հեղափոխության վրճռական օրերին չէին կարողանում տեսնել այն նորը, որ առաջ էր քաշել կյանքը, Վ. Ի. Լենինը գրում էր. «Այժմ անհրաժեշտ է յուրացնել այն անվիճելի ճշմարտությունը, որ մարքսիստը պետք է հաշվի առնի կենդանի կյանքը, իրականության ճշգրիտ փաստերը և ոչ թե շարունակի կառչել երեկվա տեսությանը, որը, ինչպես և ամեն մի տեսություն, լավագույն դեպքում միայն նշում է հիմնականը, ընդհանուրը, միայն մոտենում է կյանքի բարդությունն ընդգրկելուն»[1]։ Այդ կապակցությամբ Լենինը մեջբերում է Գյոթեի «Ֆաուստից» հայտնի տողերը. «Տեսությունը, բարեկա՛մս, գորշ է, կանաչ է կյանքի հավերժական ծառը»[2]։

Իրենց աշխատություններում մարքսիզմի դասականները ոչ միայն հետազոտել են հասարակական այս կամ այն ֆորմացիայի ներսում տեղի ունեցող պրոցեսները, որոնք տնտեսական ու քաղաքական արմատական փոփոխություններ են առաջ բերում, այլև բազմակողմանիորեն ուսումնասիրել

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 33։
[2] Նույն տեղը։

են սոցիալական ինստիտուտների և մեխանիզմների գործունեությունը։ Նրանք մշտապես նշում էին, որ դիալեկտիկական մատերիալիզմի մեթոդոլոգիան և տեսական հիմքերը պահանջում են ոչ թե բացարձականացնել, ընդհանուրից խլել սոցիալական կյանքի այս կամ այն կողմը, այլ այն դիտել որպես մշտական փոփոխության ու զարգացման մեջ գտնվող ամբողջի, որպես օրգանական բարդ սիստեմի անկապտելի մաս։

Այստեղից հետևում է չափազանց կարևոր եզրակացություն. որևէ երկրի կամ ժողովրդի պատմության այս կամ այն էտապը ճիշտ ըմբռնել կարելի է միայն այն դեպքում, եթե գիտականորեն ճշտվի, թե տվյալ ժամանակաշրջանում հասարակատնտեսական ինչպիսի ֆորմացիա է գոյություն ունեցել։ Իսկ դա կարելի է անել այն ժամանակ, եթե որոշվի տվյալ ֆորմացիայում տիրապետող արտադրահարաբերությունների և ընդհանրապես նրանում գոյություն ունեցող օրենքների բնույթը, որոնք պայմանավորում են այդ ֆորմացիայի զարգացումը։ Առանց այդ բանն անելու հնարավոր չէ նաև տեսնել այն տարբերությունները, որոնք գոյություն ունեն երկրների կամ ժողովուրդների տարբեր ժամանակաշրջանների պատմության միջև։

Եթե հասարակական-տնտեսական ամեն մի ֆորմացիա ունի միայն իրեն հատուկ օրենքները, որոնք որոշվում են նրանում տիրող արտադրահարաբերություններով, ապա դա նշանակում է, որ անհնարին ու անթույլատրելի է մի ֆորմացիային հատուկ օրենքների ու օրինաչափությունների օգնությամբ բացատրել մի այլ ֆորմացիայի երևույթները։ Անհրաժեշտ է մի ֆորմացիան խստորեն տարբերել մյուսից, դրանք չնույնացնել, չփոխարինել մեկը մյուսով։ Հակառակ փորձերը, որոնք նպատակ են դնում անտեսել կամ ուղղակի ջնջել հասարակական-տնտեսական ֆորմացիաների միջև որակական տարբերությունները, միշտ էլ վերջանում են պատմական պրոցեսի խեղաթյուրմամբ։

Մարդկային հասարակության ընթացքն ուսումնասիրելիս կոնկրետ պատմական մոտեցում ցուցաբերելով դեպքերին ու երևույթներին, մարքսիզմ-լենինիզմը, ի տարբերություն Ու. Ռոստոուի և այլոց տեսությունների, պատմությունը դիտում է ամբողջության մեջ, իբրև պատմական դարաշրջանների հերթականություն, որ կատարվում է պատմական անխուսափելի օրինաչափությամբ, որոշակի սոցիալ-տնտեսական օրենքներով։ Այդ է պատճառը, որ դարդացման պրոբլեմներին անդրադառնալիս մարքսիստ-լենինյանները ստիպված են լինում պայքար մղելու ոչ միայն անհող ու անպտուղ, ռեալ իրականությունից ու կոնկրետ փաստերից կտրված վերացական դատողությունների, այլև գռեհիկ մետաֆիզիկական, զուտ էմպիրիկ պատկերացումների դեմ։

Նման պատկերացումների կրողները, այդ թվում Ու. Ռոստոուն և Ռ. Արոնը, հաճախ մարքսիզմին մեղադրում են չպատճառաբանված վերացականության մեջ և գտնում, որ հենց այդ պատճառով պատմական մատերիալիզմը բախման մեջ է գտնվում հասարակական-պատմական առաջխաղացման իրական ընթացքի հետ։ Նրանց կարծիքով հասարակական երևույթները չեն ենթարկվում ոչ դասակարգման և ոչ էլ ընդհանրացման։

Ավելին, Արևմուտքի փիլիսոփայության պատմության մեջ առաջ է եկել մի ամբողջ ուղղություն, որը պնդում է, որ եթե բնական գիտությունները ուսումնասիրում են բնության ընդհանուր երևույթներն ու օրենքները, ապա պատմական գիտությունը և ընդհանրապես հասարակական գիտությունները պետք է ուսումնասիրեն միայն անհատականը, անկրկնելին, մասնավորը։ Ինչո՞ւ։ Որովհետև պատմության մեջ, ասում են նրանք, չկան օրինաչափություններ, հետևապես ավելորդ է փնտրել այդ օրինաչափությունները։ Իրենց տեսակետները հիմնավորելու համար նրանք հաճախ վկայակոչում են պատմական պրոցեսի բազմազանությունը։ Այսպես, «ինդուստրիալ հասարակության» տեսաբաններից մեկը՝ Ժ. Էլլյուլը, որը հանդես է գալիս այդ տեսակետի պաշտպանությամբ, իբրև փաստարկ նշում է, որ Արևելքում, օրինակ, չեն եղել ստրկության կլասիկ ձևեր, որ այնտեղ երկար ժամանակ տիրապետում էին արտադրության այսպես կոչված ասիական եղանակը և այդ հիման վրա աճած յուրահատուկ քաղաքական ձևերը։ Մարդկության պատմության մեջ օրինաչափությունների ժխտմանն է ուղղված նաև ժամանակակից պերսոնալիզմի

պնդումը, թե հասարակական կյանքի ընթացքը չեն որոշում վերացական սխեմաները, թե համաշխարհային պատմությունը կամայականությունների ու պատահականությունների թագավորություն է, երբ այս կամ այն պատմական գործչի կամքը կարող է արմատապես փոխել զարգացման ընթացքը և ուղղությունը։ Իրենց տեսակետները հիմնավորելու համար դետերմինիզմի հակառակորդները վկայակոչում են այնպիսի պատմական փաստեր, որոնք առաջին հայացքից կարծես թե հաստատում են նրանց տեսակետը։

Իհարկե, եթե երևույթը քննարկելիս վերցնենք առանձին ժողովուրդների կյանքի այս կամ այն կարճ ժամանակահատվածը, կամ այս կամ այն կոնկրետ պատմական իրադարձությունը, ապա, ինչ խոսք, կարելի է նման հապճեպ և սուբյեկտիվ եզրակացություն անել։ Բայց եթե համաշխարհային պատմության ընթացքը, հասարակական զարգացումը դիտենք ամբողջության մեջ, ապա միանգամայն պարզորոշ կերևա սուբյեկտիվիստական սոցիոլոգիական-պատմական կոնցեպցիաների անճշտությունը։ Մարքսիզմ-լենինիզմը վրճռականորեն հանդես է գալիս այն տեսակետի դեմ, «որի համաձայն հասարակությունն անհատների մի մեխանիկական ագրեգատ է, որ ամեն տեսակ փոփոխություններ թույլատրում է իշխանության կամքով (կամ, միևնույն է, հասարակության և կառավարության կամքով), որ ծագում և փոխակերպվում է պատահականորեն...»[1]։

Պատմական մատերիալիզմը ամենևին էլ չի ժխտում պատմական ընթացքի բազմազանությունը։ Բայց նա գրտնում է, որ առանձին երկրների զարգացման մեջ յուրահատկությունների առկայությունը բնավ չի վերացնում պատմական առաջընթացի ընդհանուր օրինաչափությունները, որոնք հատուկ են հասարակատնտեսական բոլոր ֆորմացիաներին։ Վ. Ի. Լենինը «Կարլ Մարքս» աշխատության մեջ (1914 թ.) գրել է. «Նախամարքսյան «սոցիոլոգիան» և պատմագրությունը լավագույն դեպքում տալիս էին հատուկտոր հավաքված հում փաստերի կուտակում և պատմական պրոցեսի առանձին կողմերի պատկերում։ Մարքսիզմը մատնանշեց հասարակական-տնտեսական ֆորմացիաների ծագման, զարգացման և անկման պրոցեսի համապարփակ, ամենակողմանի ուսումնասիրության ուղին, քննելով բոլոր հակասական տենդենցների ամբողջությունը, հանդեցնելով դրանք հասարակության տարբեր դասակարգերի կյանքի և արտադրության ճիշտ որոշելի պայմաններին, վերացնելով սուբյեկտիվիզմն ու կամայականությունն առաձին «գլխավոր» իդեաների ընտրության կամ նրանց մեկնաբանման մեջ, բացահայտելով անխտիր բոլոր իդեաների և բոլոր տարբեր տենդենցների արմատները նյութական արտադրողական ուժերի կացության մեջ»[1]։ Միայն պատմական մատերիալիզմը ցույց տվեց պատմության գիտական ուսումնասիրության ուղին։ Նա պատմությունը դիտում է իր միասնության, իր ողջ վիթխարիության ու հակասությունների մեջ։ Որքան էլ վիթխարի է հասարակական-պատմական երևույթների ու պրոցեսների բազմազանությունը, պատմական մատերիալիզմը, սակայն, «հնարավորություն տվեց նշմարելու կրկնելիությունն ու կանոնավորությունը և ընդհանրացնելու տարբեր երկրների կարգերը հասարակական ֆորմացիա մի հիմնական հասկացության մեջ»[2]։

Հայտնագործելով պատմական զարգացման օրինաչափությունները, մարքսիզմ-լենինիզմի դասականները ցույց են տվել, որ հասարակական-տնտեսական ամեն մի ֆորմացիայի հատուկ են որոշակի ընդհանուր օրենքներ, որոնք ընդգրկում են մարդկային ողջ պատմությունը։ Այստեղից էլ մարքսիստական-լենինյան մեթոդոլոգիայի գլխավոր պահանջներից մեկը՝ մարդկային պատմությունը քննարկել և լուսաբանել պատմականության դիրքերից։ Վերջինիս էությունը, նշել է Վ. Ի. Լենինը, կայանում է նրանում, որպեսզի «չմոռանալ հիմնական պատմական կապը, յուրաքանչյուր հարցին նայել այն տեսակետից, թե ինչպե՞ս է որոշ երևույթ պատմության մեջ ծագել, իր զարգացման ընթացքում ի՞նչ գլխավոր էտապներ է անցել այդ երևույթը, և նրա

[1] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 1-ին, էջ 162։

[1] Վ. Ի. Լենին, հ. 21, էջ 57։

[2] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 1-ին, էջ 159։

այդ զարգացման տեսակետից նայել, թե տվյալ բանն ի՞նչ է դարձել այժմ»[1]:

Պատմականությունը մարքսիստական-լենինյան հասկացողությամբ զուգակցվում, նույնացվում է ոչ միայն պատմական պրոցեսի օբյեկտիվ օրինաչափության և պատմական իրադարձությունների ու երևույթների կրկնվողության հետ, այլև ամեն մի պատմական կոնկրետ իրադրության արտացոլման հետ, այդ իրադրության եզակի-կոնկրետ բնույթի հետ: Բուրժուական հասկացողությամբ պատմականությունը ոչ այլ ինչ է, քան հետազոտող-անհատի զուտ սուբյեկտիվ մոտեցում:

Բուրժուական շատ հեղինակներ առանձին վերապահումներով հանդերձ, առաջադրում են իրադարձությունների անկրկնելիության պոստուլատը, բացարձակացնում դրանց յուրօրինակությունը, դրանով իսկ մերժում պատմական իրադարձությունների օբյեկտիվ ընթացքը:

Պատմության առավել ընդհանուր օրինաչափություններից մեկը հասարակության վերընթաց զարգացումն է: Այն պայմանավորված է մի շարք հանգամանքներով, ինչպես օրինակ՝ բնության տարերային ուժերի վրա հասարակության տիրապետության աստիճանով, այդ ուժերի ճնշումից նրա ազատագրման վիճակով և այլն:

Կանգնելով հասարակության վերընթաց շարժման տեսակետին, մարքսիզմ-լենինիզմը, սակայն, չի նույնացնում «սոցիալական էվոլյուցիա», «հասարակական զարգացում» և «պրոգրես» հասկացությունները:

Մարքսիստական սոցիոլոգիայի տեսակետով էվոլյուցիոն զարգացումը առաջ է բերում առաջադիմություն, բայց լիովին չի ավարտում այն, քանի որ էվոլյուցիոն զարգացումն ավելի լայն հասկացություն է և իր մեջ ներառնում է այն բոլոր փոփոխությունները, որոնք տեղի են ունենում հասարակության մեջ ինչպես վերընթաց, այնպես էլ վայրընթաց զարգացման ժամանակ: Ավելին, էվոլյուցիոն զարգացումը ներառում է նաև այնպիսի ժամանակներ, երբ պատմությունը, Հեգելի խոսքերով ասած, «առաջ չի շարժվում»:

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., հատոր 29, էջ 582:

Ինչ վերաբերում է «հասարակական զարգացում» և «պրոգրես» հասկացություններին, ապա դրանք կարող են համընկնել միայն հասարակական շարժման ուղղության իմաստով: Բայց, «հասարակական զարգացում» ասելով չպետք է ենթադրել, թե այդ զարգացման ընթացքը բացառում է զիգզագ և հետընթաց շարժումները: Ընդհակառակն, հենց հասարակական զարգացման ընթացքում են կործանվել երկրներ ու ժողովուրդներ, հզոր քաղաքական միավորումներ, լայնարձակ թագավորություններ ու կայսրություններ: Հենց դա նկատի ուներ Ֆ. Էնգելսը, երբ նշում էր, որ հասարակության առաջընթաց զարգացումը չի բացառում, այլ, ընդհակառակն, ենթադրում է նաև հետընթաց շարժում, քանի որ առաջադիմությունը հանդես է գալիս որպես գոյություն ունեցողի ժխտում: Կ. Մարքսը «1857—1858 թվականների տնտեսագիտական ձեռագրերի» ներածականում գրում էր, թե «ընդհանրապես պրոգրեսի հասկացությունը չպետք է վերցնել սովորական աբստրակցիայում»[1]: Նույն բանն ընդգծել է Վ. Ի. Լենինը, գրելով, որ «Համաշխարհային պատմությունը հարթ կերպով ու ճշտապահորեն առաջ ընթացող, առանց երբեմն հետընթաց հսկայական թռիչք կատարող մի բան պատկերացնելը դիալեկտիկական չէ, գիտական չէ, տեսականորեն սխալ բան է»[2]:

Հասարակական-տնտեսական ֆորմացիաների հաջորդականությունը կազմում է հասարակության զարգացման առաջադիմական ընթացքի բովանդակությունը, հաջորդականությունը, որը տեղի է ունենում սոցիալական հակասությունների ուժով: Այդ հակասությունների հետագա խորացմանը զուգընթաց, տվյալ հասարակարգի արտադրահարաբերություններն աստիճանաբար արգելակում են արտադրողական ուժերի հետագա զարգացումը և հենց դրանով իսկ նրենց դատապարտում կործանման: «Հասունության որոշակի աստիճանի հասնելով,— գրել է Կ. Մարքսը «Կապիտալում»,— տվյալ պատմական ձևը դեն է շպրտվում և տեղ է

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 12, стр. 736.
[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, էջ 416:

մաքրում ավելի բարձր ձևի համար»[1]։ Ընդ որում ինչպես ցույց է տվել Մարքսը, հասարակության տնտեսական հիմքի փոփոխության հետ միասին առավել կամ պակաս արագությամբ հեղաշրջում է տեղի ունենում նաև հասարակական ողջ վերնաշենքում։

Ուոլտ Ռոստոուն մերժում է մարքսիստական-լենինյան այն տեսակետը, թե հասարակական-տնտեսական մի ֆորմացիան մյուսով փոխարինվում է թռիչքաձև զարգացմամբ, որ հին որակից նոր որակի անցնելը պահանջում է հեղափոխական բեկում։ Նա գտնում է, որ մարդկային պատմությունը և իր ստեղծած «տնտեսական աճի ստադիաների» տեսությունը նման եզրակացության համար հիմք չեն տալիս։

Ակնհայտ է, որ «տնտեսական աճի ստադիաների» տեսությունը վկայակոչելը դեռ փաստարկ չէ։ Ինչ վերաբերում է պատմությունը վկայակոչելը, ապա նրա զարգացման ընթացքը խոսում է հենց մարքսիզմը ժխտելու ձգտող «ստադիաների» տեսության անկարողության մասին։

Մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրները ցույց են տվել, թե քանի որ հասարակական-տնտեսական ամեն մի ֆորմացիա իրենից ներկայացնում է որակական հատուկ աստիճան մարդկության զարգացման մեջ, ուստի մեկ ֆորմացիան մյուսով փոխարինելը տեղի է ունենում թռիչքաձև՝ հին որակից նորին անցնելու միջոցով։

Դասակարգային-անտագոնիստական ֆորմացիաներում որակական այդ թռիչքը արդյունք է հակամարտ դասակարգերի անզիջում պայքարի։ Այդ պայքարը արտադրողական նոր ուժերի և հին արտադրահարաբերությունների կոնֆլիկտի արտացոլումն է, որը ոչ այլ ինչ է, քան սոցիալական հեղափոխություն, որը վերջին հաշվով մարդկությանը անխուսափելիորեն հասցնում է կոմունիզմին։

Ուոլտ Ռոստոուն, Ռայմոն Արոնը և պատմական մատերիալիզմի մյուս քննադատները պնդում են, թե վերլուծելով կապիտալիստական հասարակական-տնտեսական ֆորմացիան, նրա տնտեսական հարաբերությունները, դասակարգային կառուցվածքը, Մարքսը անտեսել է պատմություն կերտող կենդանի անհատներին, որոնցից կազմված է հասարակությունը, այլ խոսքով, Մարքսը իբր մոռացել է պատմական իրադարձությունների գլխավոր կերտողներին։ Մարքսիզմի հակառակորդների տեսակետով պատմական մատերիալիզմը ոչ կոնկրետ, վերացական տեսություն է, քանզի անհատականը այն հանգեցնում է սոցիալականի, կոնկրետ դեմքերը՝ դասակարգերի ու սոցիալական խմբերի։

Մարքսիզմի հասցեին նման մեղադրանքները ոչ մի հիմք չունեն։ Ի հակադրություն վուլգար տնտեսական և մեխանիստական մատերիալիզմի, որը ժխտում կամ թերագնահատում է մարդկանց ակտիվ գործունեության նշանակությունը, պատմական շարժումը դիտում որպես ավտոմատիկ պրոցես, պատմական մատերիալիզմը, ընդհակառակն, ելնում է նրանից, որ պատմությունը կերտում են մարդիկ, դասակարգերն ու ժողովուրդները, նրանց գիտակցությունն ու կամքը, մասնավորապես կամքն ու գործողություններն այն մարդկանց, որոնք կանգնած են իրադարձությունների գլուխ։ Մարքսիզմը գրտնում է, որ մարդը օբյեկտիվ պատմական ուժերի հասարակ ֆունկցիա չէ, որ սոցիալական զարգացումը «գերբնական» ուժերի գործողության արդյունք չէ և ոչ էլ նախապես կանխորոշված պրոցես, ինչպես պնդում են հասարակության ֆատալիստական զարգացման տեսակետի կողմնակիցները։

Առարկելով մարքսիզմի հակառակորդներին, Վ. Ի. Լենինը նշում է, որ մարքսիստական սոցիոլոգիան պատմական զարգացման մեջ ոչ միայն չի թերագնահատում անհատի և նրա գիտակցության ակտիվ դերը, այլև գիտականորեն հիմնավորում է այդ ակտիվության պատճառները, ցույց է տալիս մարդու վերափոխիչ մեծ դերը։

«Լուի Բոնապարտի բրյումերի տասնութը» աշխատության մեջ Մարքսը գրել է. «Մարդիկ իրենք են կերտում իրենց պատմությունը, բայց նրանք այդ կերտում են ոչ թե այնպես, ինչպես իրենք են ցանկանում, այնպիսի պարագաներում, որ իրենք չեն ընտրել, այլ որոնք անմիջապես առկա են, տրված են նրանց և անցյալից են փոխանցվել»[1]։

Մարքսը նշում էր, որ բնության բացատրությունից անհրա-

1. Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3-րդ, մաս II, Պետհրատ, Երևան, 1949 թ., էջ 425։

1 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 1-ին, էջ 541։

ժեշտ է անցնել նրա վերափոխմանը։ Վկայակոչելով Մարքսի այդ խոսքերը, Վ. Ի. Լենինը «Նարոդնիկության տնտեսական բովանդակությունն ու նրա քննադատությունը պր-ն Ստրուվեի գրքում» աշխատության մեջ (1895 թ.) գրում էր. «Սոցիոլոգ-մատերիալիստը, որ իր ուսումնասիրության առարկա է դարձնում մարդկանց հասարակական որոշակի հարաբերությունները, դրանով իսկ արդեն ուսումնասիրում է նաև ռեալ անհատներին, որոնց գործողություններից էլ գոյանում են այդ հարաբերությունները։ Սոցիոլոգ-սուբյեկտիվիստն իր դատողություններն սկսելով իբր թե «կենդանի անհատներից»՝ իրականում սկսում է նրանից, որ այդ անհատների մեջ դնում է այնպիսի «խոհեր ու զգացմունքներ», որ նա ռացիոնալ է համարում (որովհետև, մեկուսացնելով իր «անհատներին» հասարակական կոնկրետ շրջապատից, սրանով իսկ նա իրեն զրկել է նրանց իրական խոհերն ու զգացմունքներն ուսումնասիրելու հնարավորությունից...»)[1]։

Ո՞րն է մարդու վերափոխիչ մեծ ուժի աղբյուրը։ Մարքսիզմն այդ հարցին պատասխանում է՝ նրա սոցիալ-պատմական էությունը։ Առաջինը մարքսիզմը բացահայտեց մարդու խոր սոցիալական բնույթը։ Ֆոյերբախի մասին հայտնի 6-րդ թեզիսում Կ. Մարքսը ասում էր. «... մարդու էությունն առանձին անհատին հատուկ վերացություն չէ։ Իր իրականությամբ այդ էությունը հասարակական բոլոր հարաբերությունների ամբողջություն է»[2]։

Մարդկային հասարակության զարգացման նախնական ստադիաներում չափազանց մեծ նշանակություն են ունեցել բնակլիմայական և կենսաբանական պայմանները։ Սակայն հասարակության զարգացման զուգընթաց բնական պայմանների դերը գնալով նվազել է, իսկ մարդու բիոլոգիական հատկությունները դադարել են որոշակի դեր խաղալուց։ Մարդկանց պրակտիկ գործունեության ընթացքում բնական գործոնները ավելի ու ավելի խոր են վերափոխվել սոցիալական գործոնների, գնալով մարդկությունն իր գոյությունն ավելի ու

1 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 1-ին, էջ 514—515։

2 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 1-ին, էջ 3։

ավելի հիմնավորապես է խարսխել սոցիալ-պատմական նախադրյալների վրա։

Բնական գործոնները սոցիալական գործոնների վերափոխման զուգընթաց մարդը ձգտել է նվազագույնի հասցնել իր վրա բնական ու հասարակական ուժերի տարերային ազդեցությունը, արտաքին միջավայրը հարմարեցնել սեփական կարիքներին ու պահանջներին։

Ճիշտ է, այժմ էլ մարդը ձգտում է հարմարվել բնությանը, բայց դա սկզբունքորեն այլ, քան կենդանական աշխարհում, ուղղություն ունի, այն է՝ բնության ուժերը վերածել սեփական ուժերի։

Արտաքին միջավայրը փոխելու պրոցեսում մարդը փոխում է նաև ինքն իրեն, ձեռք է բերում մարդկային սոցիալ-պատմական գործունեության աշխարհը՝ այսպես ասած «երրորդ բնությունը» ավելի խոր ճանաչելու ունակություններ։

Բայց մարդու գործունեությունը, նույնիսկ նրա ձեռքում գտնվող ամենահզոր ատոմային ու ջրածնային ուժի, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների ու հրթիռների առկայության պայմաններում էլ, սահմանափակված է իրենից դուրս գոյություն ունեցող բնական պայմանների և ուժերի շրջանակներով։ Մարքսը շատ անգամ է նշել, որ մարդիկ պատմությունը կերտում են իրենց շրջապատող պայմաններից ելնելով և այդ պայմանները կամայականորեն փոխելը նրանց ուժերից վեր է։

Բուրժուական կարգերի դեմ մղվող երկարատև ու դժվարին պայքարում պրոլետարիատի համար չափազանց կարևոր է իրեն շրջապատող սոցիալական պայմանների ըմբռնումը։ Կոմունիստական կուսակցությունների վիթխարի դերը հենց այն է, որ պրոլետարիատին և նրա դաշնակիցներին օգնեն ճանաչելու իրենց կյանքի ու գործունեության օբյեկտիվ պայմանները, ըմբռնեն ու տեսնեն շահագործողական հին սոցիալական հարաբերությունների ոչնչացման և լավագույն ապագայի ստեղծման համար հաղթական պայքարի ռեալ հեռանկարները։ «Քաղաքատնտեսության քննադատության շուրջը» գրքում աշխատավորների պայքարի ռեալ պայմաններին գիտական մոտեցում ունենալու մասին Մարքսը գրել է. «Երբ աշխատանքի արդյունքները համարվում են սեփական արդ-

յունքներ և աշխատանքի անշատումը նրա գոյության պայմաններից գնահատվում է որպես անարդարացի, պարտադիր, դա վկայում է վիթխարի գիտակցականության մասին, որ հետևանք է կապիտալի վրա հիմնված արտադրաեղանակի, և... հանդիսանում է այդ արտադրաեղանակի կործանումը նախագուշակող թաղման զանգահարություն»[1]։

Նշելով, որ ժամանակակից դարաշրջանում հասարակական առաջադիմության գլխավոր խոչընդոտը մնում է իմպերիալիզմը, որն իրենով անձնավորում է ռեակցիա բոլոր ուղղություններով, Վ. Ի. Լենինը գրել է. «Որ կողմ էլ նայես՝ ամեն քայլափոխի կհանդիպես խնդիրների, որոնք մարդկությունը լիովին ի վիճակի է անհապաղ լուծել։ Խանգարում է կապիտալիզմը։ Նա հարստություն է դիզել և մարդկանց դարձրել այդ հարստության ստրուկներ։ Նա լուծել է տեխնիկայի շատ բարդ հարցերը և կասեցրել տեխնիկական բարելավումների կիրառումը՝ բնակչության միլիոնների աղքատության և տգիտության պատճառով, մի բուռ միլիոնատերերի գծուծության պատճառով։

Քաղաքակրթությունը, ազատությունն ու հարստությունը կապիտալիզմի օրոք հիշեցնում են չափից շատ կերած այն հարուստի, որը ողջ-ողջ փտում է և հնարավորություն չի տալիս ապրելու այն ամենին, ինչ երիտասարդ է»[2]։

Դեպի կոմունիզմ մարդկային հասարակության շարժման անխուսափելիության և անհրաժեշտության մասին արմատական դրույթը Մարքսը, Էնգելսը, Լենինը առաջ են քաշել ոչ թե վերացական դատողությունների միջոցով, այլ հասարակական զարգացման օրինաչափությունների գիտական վերլուծության բազայի վրա։ «Կոմունիզմը որպես մասնավոր սեփականության–մարդու այդ ինքնաօտարման հիմնովին վերացում և այդ պատճառով մարդկային էության իսկական յուրացումը մարդու կողմից և մարդու համար, ուստի և որպես գիտակցաբար տեղի ունեցող զարգացման ամբողջ հարստության պահպանմամբ հանդերձ, մարդու վերադարձը դեպի իր, որպես հասարակական մարդու, այսինքն՝ մարդկայինի էությունը։

[1] К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 46, ч, I, стр. 451.
[2] Վ. Ի. Լենին, *նշված աշխ.*, հ. 24, էջ 21։

Այդպիսի կոմունիզմը... իրոք որ լուծումն է մարդու և բնության, մարդու և մարդու միջև եղած հակասությունների, իրոք որ լուծումն է գոյության, առարկայացման և ինքնահաստատման միջև, ազատության և անհրաժեշտության, անհատի և տոհմի միջև եղած վեճի։ Նա լուծումն է պատմության առեղծվածների, և նա գիտի, որ դա է այդ լուծումը»[1]։

Ընդհանրացնելով պատմական կարևոր փաստերն ու իրադարձությունները, հասարակության զարգացման մարքսիստական տեսությունը ստեղծել է մարդկության պատմության զարգացման ամբողջական գիտական պատկերը։ Դրա հիմքերը չեն կարող սասանել ոչ Ուոլտ Ռոստոուի «տնտեսական աճի ստադիաների» մետաֆիզիկական տեսությունը, ոչ զարգացման վերաբերյալ Ռայմոն Արոնի կոնցեպցիաները և ոչ էլ հասարակատնտեսական ֆորմացիաների մասին մարքսիստական-լենինյան տեսության դեմ ուղղված բուրժուական մյուս դոկտրինները։

[1] К. Маркс и Ф. Энгельс. Из ранних произведений, М., 1956, стр. 588.

ՄԱՆՐԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վճռական պայքար մղելով իմպերիալիստական ռեակցիայի թշնամական գաղափարախոսության, լիբերալ-բուրժուական «նեոկապիտալիստական» տեխնոկրատական տեսությունների դեմ, մարքսիստ-լենինյանները մոռացության չեն տալիս նաև կապիտալիստական երկրների մանրբուրժուական շերտերի տրամադրություններն արտահայտող ուսմունքները՝ էգոցենտրիզմի, էկզիստենցիալիզմի, «ձախ» ռադիկալիզմի զանազան կոնցեպցիաները, որոնք նպատակամղված, կամ դրանց հեղինակների նպատակադրումներից անկախ ըստ էության խոչընդոտում են բանվոր դասակարգի ազատագրական պայքարը։ Կապիտալիստական կարգերի նկատմամբ իր օպոզիցիայով մանրբուրժուական հեղափոխականությունը սովորաբար ոչ թե վնասում է իմպերիալիստական բուրժուազիային, այլ ըստ էության նպաստում է ինչպես պրոլետարիատի, այնպես էլ մանրբուրժուական շերտերի վրա նրա տիրապետության ամրապնդմանը։

Ինչպես հայտնի է, մանր բուրժուազիայի գաղափարախոսության տնտեսական հիմքը մանր մասնավոր սեփականությունն է, սոցիալական և քաղաքական գլխավոր պրոբլեմը՝ «անձի ազատությունը»։ Ֆ. Էնգելսը նշել է, որ մանր բուրժուազիան չի ուզում ունենալ պետական ոչ մի վերահսկողություն, նրա համար պետությունը մի ծանր բեռ է, ուստի նա իրեն շատ երջանիկ կզգար, եթե գտնվեր պետականությունից լիովին դուրկ մի վիճակում[1]։ Այս հանգամանքը շեշտել է նաև Վ. Ի. Լենինը[2]։

[1] Տե՛ս Ֆ. Էնգելս, Բանվոր դասակարգի դրությունը Անգլիայում, Կուսհրատ, Երևան, 1934, էջ 422։

[2] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 410։

Ինչպես ցույց է տվել պատմական փորձը, մանր բուրժուազիայի այս երազանքը երբեք չի կարող իրականություն դառնալ։ Մոնոպոլիստական կապիտալիզմի տիրապետության շրջանում նա ենթարկվում է բուրժուական հարաբերությունների տոտալիտար ճնշմանը։ Արտադրության բարձր համակենտրոնացումը նպաստում է չմոնոպոլացված արտադրության և ազատ ձեռներեցության սիստեմի քայքայմանը։ Ազատ մրցակցության կապիտալիզմը անդառնալիորեն վերափոխվում է պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի՝ պլանայնության և արտադրության կարգավորման տենդենցի հետ միասին։ Այդ բոլորի հետևանքով մանր ու միջին սեփականատերերի զգալի մասն առմիշտ զրկվում է մրցակցության ազատությունից, հետևապես նաև՝ ինքնուրույնությունից և անկախությունից։ Բայց միանգամայն փոփոխված նոր պայմաններում էլ մանր բուրժուազիան շարունակում է ապրել ազատության մասին նախկին պատկերացումներով, միաժամանակ բուրժուական պետության վերահսկողությունից խույս տալու հուսահատ փորձեր է անում, պատեպատ ընկնում, հաճախ էլ ծայրահեղությունների դիմելով պահանջում է ողջ պետական-մոնոպոլիստական կառուցվածքի անմիջական ավերում։

Մանր բուրժուազիան միջանկյալ դիրք է գրավում խոշոր բուրժուազիայի և պրոլետարիատի միջև։ Հենց այդ պատճառով նա մի կողմից ձգտում է ազատագրվել կապիտալի ճնշումից, մյուս կողմից միջոցներ է որոնում իր՝ որպես սեփականատիրոջ, սոցիալական դրությունը կայունացնելու համար։ Բայց քանի որ դա անհնարին է անել, ուստի մանր բուրժուազիան, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, անխուսափելիորեն տատանվում է հեղափոխության և հակահեղափոխության միջև։ Նա դիմում է էքստրեմիստական ուլտրաձախ գործողությունների, որոնց տեսական արտահայտությունները մեր ժամանակներում դրսևորվում են «ձախ» ռադիկալիզմի դոկտրինաների տեսքով։

Մանր բուրժուազիան, նրա գաղափարախոսներն ի վիճակի չեն հասարակական զարգացման պրոցեսի քիչ թե շատ կայուն ու գիտական կոնցեպցիա ստեղծելու։ Նրանք բավարարվում են գաղափարական հեղհեղուկ, էկլեկտիկ կոնստրուկցիաներով, որոնք շաղախվում են ինչպես բուրժուական, այն-

պես էլ սոցիալիստական ուսմունքներից փոխառնված դրույթներով։

Մանրբուրժուական տեսաբանները զարգացած կապիտալիստական երկրներում չեն կարողանում ճիշտ հաշվի առնել դասակարգային պայքարի փոփոխվող պայմանները, անընդունակ են տալու պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացման ժամանակակից էտապի գիտական վերլուծությունը։ Կապիտալիստական տնտեսության մեջ տեղի ունեցող կառուցվածքային փոփոխությունները, գիտատեխնիկական հեղափոխությունը, աշխատավորների շահագործման նոր մեթոդները բանվոր դասակարգի զգալի մասի կաշառման հետ զուգակցելու մոնոպոլիստական բուրժուազիայի տակտիկան, որի հետևանքով պրոլետարիատի առանձին խմբերում ծնվում են ռեֆորմիստական տրամադրություններ,— այս ամենը մանրբուրժուական միջավայրում առաջ է բերում պատրանքներ, թե «կայունացված» կապիտալիզմի տապալումը հնարավոր է միայն «սպոնտան» հեղափոխական գործողությունների, իշխանությունը հանկարծակի զավթելու միջոցով, առանց հաշվի առնելու առկա հնարավորությունները։

Մանրբուրժուական «ձախ» գործիչների համար միշտ էլ բնորոշ է եղել մասսաների մեջ ամենօրյա քրտնաջան աշխատանքի նկատմամբ արհամարհական վերաբերմունքը, պայքարի ամենածայրահեղ, ուլտրահեղափոխական ձևերին դիմելը, անմիջական հեղափոխական գործողություններ սկսելու կոչերից հեշտությամբ հրաժարվելը և բուրժուազիայի առջև կապիտուլացվելն ու նրանից ողորմություն հայցելը, եթե հեղափոխությունը պարտվում է, հուսահատ պատեպատ ընկնելն ու ամեն ինչից հուսախաբվելը, երբ վրա են հասնում համբերությամբ և համառությամբ գործելու ժամանակները։ Լենինը բազմիցս նշել է, որ որոշակի դեմոկրատիզմի, ազատաբաղձության, հեղափոխական պաթոսի հետ միասին մանր բուրժուազիան ի հայտ է բերում երկչոտ ռեֆորմիզմ, հետևողական հեղափոխական պայքարի անընդունակություն, կապիտուլյանտություն, որոնք հատկապես ցայտուն դրսևորվում են վճռական շրջադարձերի պահերին։ Մանր բուրժուազիայի այս երկակիության մեջ սովորաբար գերիշխում է «ձախ» էքստրեմիզմը, որը և նրան առաջնորդում է վերջնական հանգրվան՝ անարխիզմ։

Շեշտելով այս հանգամանքը, Վ. Ի. Լենինը նշել է. «Կապիտալիզմի սարսափներից «գաղազած» մանր բուրժուան սոցիալական մի երևույթ է, որ հատուկ է, ինչպես և անարխիզմը, բոլոր կապիտալիստական երկրներին։ Այդպիսի հեղափոխականության անկայունությունը, նրա անպտղությունը, արագորեն հնաշանդվելու, ապատիայի, ֆանտաստիկայի վերածվելու, նույնիսկ այս կամ այն բուրժուական «մոդայական» հոսանքով «կատաղորեն» հրապուրվելու նրա հատկությունը, այս բոլորը հանրածանոթ է»[1]։ Լենինյան այս բնութագրությունն այսօր էլ լիովին պահպանում է իր ուժը։ Դրա ապացույցը վերջին տարիների հեղափոխական պայքարի բազմաթիվ փաստերն են։ Իրենց պայքարի սլաքն ուղղելով կապիտալիստական կարգերի դեմ, ժամանակակից մանրբուրժուական «ձախերը» դրա հետ միասին որոշակի թշնամանք են դրսևորում ինչպես այդ կարգերը գրոհող բանվոր դասակարգի, նրա մարքսիստական-լենինյան ավանգարդի, այնպես էլ բանվոր դասակարգի քաղաքական իշխանության, ռեալ գոյություն ունեցող սոցիալիզմի նկատմամբ, երազում են «առանց պրոլետարական դիկտատուրայի սոցիալիզմի» մասին, որը միջանկյալ դիրք կգրավեր իմպերիալիզմի և սոցիալիզմի համաշխարհային սիստեմի միջև։

Ինչպես նախկինում, այժմ էլ նույնպես մանրբուրժուական տեսությունների մեջ կենտրոնական տեղ է բռնում անհատի պրոբլեմը։ Այն մեծապես զբաղեցրել է 19-րդ դարի գերմանացի փիլիսոփաներ Արթուր Շոպենհաուերին և Ֆրիդրիխ Նիցշեին, ավստրիացի հոգեբույժ և հոգեբան Զիգմունդ Ֆրեյդին և շատ ուրիշների։ Հետագա շրջանում, ներկա դարի 30-ական թվականներից սկսած այդ պրոբլեմը հետազոտության հիմնական նյութ դարձավ այսպես կոչված «ֆրանկֆուրտյան դպրոցի» համար և, վերջապես, մեր օրերում այն զբաղեցնում էր ֆրանսիացի սոցիոլոգ և փիլիսոփա Սարտրին, զբաղեցնում է էկզիստենցիալիստներին, այսպես կոչված «նեոմարքսիստներին», «ձախ» ռադիկալիզմի զանազան դրպրոցների ներկայացուցիչների։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 19։

Մանրբուրժուական արդի դպրոցներից ու տեսություններից շատերը ակնհայտ նմանություն, երբեմն էլ ուղղակի նույնություն են դրսևորում անցյալ դարի և 20-րդ դարի սկզբի մանրբուրժուական մի շարք տեսությունների ու դպրոցների հետ, և այդ նմանության պատճառը դեպի անհատը ունեցած մոտավորապես նույնանման վերաբերմունքն է։

Այժմ ավելի մոտիկից ծանոթանանք անցյալի և ներկայի սոցիոլոգիական և փիլիսոփայական մի քանի ուղղությունների ու դպրոցների հետ, որոնք առավել բնորոշ են մանր բուրժուազիայի գաղափարախոսությունը բնութագրելու տեսակետից։

*
* *

Կապիտալիզմի ուշ շրջանում հանդես եկած անհատի մասին բուրժուական ուսմունքների մեջ առանձնահատուկ տեղ ունի ավստրիացի հոգեբույժ և հոգեբան, պրոֆեսոր Զիգմունդ Ֆրեյդի հոգեվերլուծական (պսիխոանալիզի) տեսությունը, որը հետագայում ձևավորվեց իբրև անհատի մասին հայացքների մի ամբողջական սիստեմ՝ ֆրեյդիզմ անվան տակ։ Ֆրեյդի հոգեվերլուծական տեսությունը ժամանակակից մանրբուրժուական շատ տեսությունների սնուցման աղբյուրներից մեկն է; այն հատկապես նշանակալի դեր է խաղում արդի «ձախ» ռադիկալիստական այն կոնցեպցիաների ձևավորման պրոցեսում, որոնց հեղինակներն ակնհայտ հակում ունեն հասարակական երևույթների սոցիալական բացատրությունը փոխարինելու ընդհանրապես բիոլոգիական, մասնավորապես անտրոպոլոգիական մեկնաբանություններով։

1895 թվականին Զիգմունդ Ֆրեյդը (1856-1939) ավստրիացի բժիշկ Բրեյերի հետ միասին լույս է ընծայում «Էտյուդներ հիստերիայի մասին» հոդվածը, որտեղ նրանք նկարագրում են ներվային հիվանդին կատարզիսի (հիպնոսացրած վիճակում հոգեկան տրավմաներ հայտնաբերելու) միջոցով բուժելու դեպք։ Ֆրեյդի վկայությամբ իր ուսմունքը՝ հոգեվերլուծական տեսությունը, սկիզբ է առնում հենց այդ հոդվածից[1]։ Հետագա

[1] Տե՛ս Зигмунд Фрейд. Основные психологические теории в психоанализе. Сборник статей, перевод д-ра М. В. Вульфа, выпуск III, Госиздат, М. — П., 1923, էջ 17—23։

տարիներին Ֆրեյդը հրատարակում է մեծ թվով աշխատություններ, որոնցում շարադրում է պաթոպսիխոլոգիական և հոգեբանական երևույթների իր ըմբռնումը։ Հոգեվերլուծական տեսությունը սկզբնական շրջանում հանդես եկավ իբրև բժշկական տեսություն, որը կոչված էր նպաստել ներվային հիվանդների բուժման պրոցեսին։ Հենց այդ նպատակին էին ուղղված Ֆրեյդի այնպիսի աշխատություններ, ինչպիսիք են՝ «Երազատեսության բացատրությունը» (1900 թ), «Երազի մասին» (1901 թ.), «Հոգեվերլուծության մասին» (1910 թ.) և այլն։ Նա իրեն փիլիսոփա չէր համարում և բացառապես հենվում էր գիտության պրակտիկ տվյալների, հոգեբույժի իր երկարամյա փորձի վրա։ Հետագա տարիներին Ֆրեյդը գնալով հեռանում է պսիխոնևրոլոգիական պրոբլեմատիկայից և զբաղվում է հոգեբանական, ընդհանուր բիոլոգիական պրոբլեմներով, ինչպես նաև հասարակական-պատմական պրոցեսների ու երևույթների բացատրությամբ՝ բիոլոգիզացիայի ենթարկելով դրանք։ Ֆրեյդի մոտ այս երկրորդ տենդենցը զարգացվում է ուշ շրջանում գրած գործերում, մասնավորապես՝ «Հաճույքի սկզբունքի մյուս կողմում» (1920 թ.), «Մասսաների հոգեբանությունը և մարդկային «ես»-ի վերլուծությունը» (1921 թ.), «Ես և նրանք» (1923 թ.), «Սարսափ» (1925 թ.) և այլ աշխատություններում[1]։

Ինչպես հայտնի է Ֆրիդրիխ Նիցշեն, առաջ քաշելով անհատի մասին իր տեսությունը, նրանում զարգացրեց «դերմարդու» կոնցեպցիան։ Նա անհատի բացարձակ խռովության մեջ տեսավ ստեղծված ճգնաժամային վիճակից ելք գտնելու միակ ուղին։ Գոյություն ունեցող հասարակական հարաբերությունների դեմ խռովության ուղին է ընտրում նաև Զիգմունդ Ֆրեյդը։

Նիցշեի և Ֆրեյդի միջև ընդհանուրը հենց այդ խռովությունն է՝ ուղղված բուրժուական ֆիլիստերական բարոյականության, քրիստոնեական կրոնի դեմ։ Երկուսն էլ քարոզում և կոչ են անում «բնական» մարդուն ազատագրել ստեղծված բարոյական նորմերի և պայմանականությունների շղթաներից։

Իր փիլիսոփայությունը Ֆրեյդը կառուցել է մարդու հոգե-

[1] Զ. Ֆրեյդի անձնավորության և գործի մասին տե՛ս Ст. Цвейг, Зигмунд Фрейд. Собр. соч., т. XI, Л., 1932.

կան ներքին աշխարհի բացահայտման վրա։ Արևմտյան գիտնականներից մեկը նկատել է, որ եթե Նյուտոնը աստծուն քշեց բնությունից, Դարվինը՝ կյանքից, ապա Ֆրեյդը՝ նրա վերջին ամրոցից՝ մարդկային հոգուց։

Մարդկային հոգեկան աշխարհը ընկալելով որպես նյութական աշխարհի ֆունկցիա, Ֆրեյդը, սակայն, ընկնում է միակողմանիության մեջ, մարդուն չի դիտում որպես կենդանի մատերիայի որակապես նոր երևույթ, թերագնահատում է նրա գիտակցական գործունեությունը, հաշվի չի առնում, որ մարդը սոցիալական միջավայրի ծնունդ է, նրա անբաժանելի մասը։

Հոգեվերլուծական տեսությունը ձևավորվել է հոգեբանության և պսիխոպաթոլոգիայի հիմքի վրա։ Այդ տեսությունը մարդու հոգեկան բոլոր դրսևորումները հավակնում է բացատրել նրա անգիտակցական կամ ենթագիտակցական հակումներով ու ձգտումներով։

Մարդու անգիտակցական հակումների մեջ առաջնային տեղը Ֆրեյդը հատկացնում է սեքսուալ (սեռական) բնազդներին կամ, ինչպես ինքն է արտահայտվում, տոհմական ինքնապահպանման բնազդներին («պանսեքսուալիզմ»)։ Սեռական բնազդների ակտիվ դրսևորումը նա բացատրում է նրանով, որ ընդհանրապես մարդու մոտ «ներգիտակցականը» իշխում է նրա գիտակցության վրա[1]։

Ֆրեյդը գրում է, թե մարդու հոգեկան կյանքն ամենափոքր հասակից սկսած զարգանում է մի տենչով՝ բավարարություն տալ սեռական բնազդին[2], որն անհատի գործողությունների մեջ խաղում է գլխավոր դերը[1]։ Սեքսուալ բնազդը կամ սեքսուալ էներգիան Ֆրեյդը կոչում է լիբիդո (libido—լատ՝. կիրք) տերմինով[2]։

Ֆրեյդը զարգացնում է այն տեսակետը, թե մարդու տարիքի ավելացման հետ մեծանում է սեքսուալ բնազդին կամ սեքսուալ էներգիային բավարարություն տալու պահանջը, բայց միաժամանակ ավելանում են դրան խոչընդոտող հանգամանքները։ Վերջապես, հասուն տարիքում մարդու սեռական բնազդների դրսևորումն ուղղակի ընդհարվում է արգելքի՝ հանձին հասարակական կարծիքի, հասարակական բարոյականության նորմերի, որ Ֆրեյդն անվանում է «առասպելա-

---

[1] Տե՛ս Зигмунд Фрейд. Основные психологические теории в психоанализе. Сборник статей. Перевод д-ра М. В. Вульфа, с вступительной статей проф. И. Д. Ермакова: Выпуск III, Госиздат, Москва-Петроград, 1923, էջ. 74—81 (статья «Несколько замечаний по поводу понятия «Бессознательное»), էջ. 125- 160, նույնի՝ «Я и оно». Перевод с немецкого В. Ф. Полянского, под редакцией А. А. Франковского. АСАДЕМУА Ленинград, 1924, էջ. 7—14 (глава «Сознание и бессознательное»), էջ. 14—25 (глава «Я и оно»), էջ. 25— 38 (глава «Я и сверх-Я-идеальное Я»).

[2] Տե՛ս Зигмунд Фрейд. Три статьи о теории полового влечения. Москва, 1911. Книгоиздательство «Наука», էջ 1—116, նույնի՝

«Психоаналитические этюды». Перевод с немецкого и предисловием д-ра Я. М. Когана, Одесса, 1926, էջ. 4—79, նույնի՝ «Психоанализ детских неврозов. Госиздат, Москва-Ленинград, 1925, էջ. 1—203, նույնի՝ Будущность одной иллюзии. Госиздат, Москва—Ленинград, 1930, էջ 3—59, տե՛ս նաև Զիգմունդ Ֆրեյդի դուստր Աննա Ֆրեյդի գիրքը՝ «Введение в технику детского психоанализа». Перевод с немецкого и предисловием д-ра Я. М. Когана. Одесса, 1927, էջ 3—97.

[1] Տե՛ս Зигмунд Фрейд. Лекции по введению в психоанализ. Выпуск I, перевод д-ра В. М. Вульфа, предисловие проф. И. Ермакова, под редакцией проф. И. Д. Ермакова: Госиздат, Москва-Петроград, 1923, էջ 16 (из предисловия проф. Ермакова), էջ 21—45.

[2] Libido-ի մասին մանրամասն տե՛ս Зигмунд Фрейд. Я и оно, էջ 44, 45, 46 (из главы «Два рода влечений»), էջ 57, 58, 59, 60, 61 (из главы «Зависимости Я»): նույնի՝ «Очерки по психологии сексуальности». Перевод д-ра М. В. Вульфа. С предисловием проф. Ив. Дм. Ермакова, Госиздат, 1925, էջ 11, 47, 48—90 (из главы «К теории полового влечения»), էջ 91—104 (параграф «Теория либидо»). Libido-ի առավել լրիվ բնորոշումը Ֆրեյդը տվել է «Три статьи о теории полового влечения» գրքի (Москва, 1911, книгоиздательство «Наука») հետևյալ տողերում. «Существование у человека и животных половой потребности объясняется в биологии наличностью «полового влечения» (Geshlechtstrieb). Это полове влечение сравнивается с влечением к приему пищи, с голодом. В народном языке нет термина соответствующего слову «голод», наука пользуется для обозначения этого понятия словом «Libido» (էջ. 1.). Libido-ի ուսմունքի մասին տես նաև՝ Б. Е. Быховский. Метапсихология Фрейда. Минск, 1926; И. Т. Курцин. Критика фрейдизма в медицине и физиологии. М.,-Л., 1965; К. И. Соболь. Философские принципы психоаналитической теории З. Фрейда. Горький, 1969, էջ 16, Г. Уелс. Крах психоанализа. От Фрейда к Фромму, М., 1968, էջ 29.

կան պահապան» կամ «ցենզուրա», որն անգիտակցականության ձգտումն անընդունելի է համարում և՛ անհատների, և՛ հասարակության համար։ Այս պայմաններում չբավարարված սեռական բնազդը շրջանցում է «ցենզուրան» և արտահայտում մտամոլության, երազատեսության, ներվային հիվանդագին վիճակների ձևով[1]։ Սեքսուալ զարգացման մեջ խանգարումներն էլ հենց հանդիսանում են պսիխոնևրոզների և ներվային սիստեմի հետ կապված ուրիշ հիվանդությունների գլխավոր պատճառը։ Այդ խանգարումները շատ հաճախ մարդուն դուրս են բերում հավասարակշռությունից, նրան դարձնում աշխատանքի անընդունակ, ասոցիալ[2]։ Բնազդական հզոր ուժով «դուրս մղված» սեքսուալ ձգտումը «իր համար ելք է գտնում» նրանում, որ փոխակերպվում, կերպարանափոխվում է կամ, ինչպես Ֆրեյդն է արտահայտվում «սուբլիմացիայի է ենթարկվում» մարդու աշխատանքային, հասարակական և այլ ամենատարբեր տեսակի գործունեության մեջ։ Այլ խոսքով, մարդկանց բոլոր գործողությունները, բացի սեռական հարաբերությունից, իրենցից ներկայացնում են չբավարարված սեքսուալ բնազդի պոռթկման, նրա «սուբլիմացիայի» հետևանք։ Իսկ սեռական այն հակումները, որոնք «ցենզուրայի» կողմից ճնշվում են և չեն ենթարկվում սուբլիմացիայի, չեն փոխակերպվում մարդկային գործողության, գիտակցության բնագավառից նորից դուրս են մղվում անգիտակցականության բնագավառը, նորից սկսվում է բավարարություն ստանալու համար սեռական բնազդի պայքարը։

Պարզ է, որ թերագնահատելով մարդու բարձրագույն ներվային գործունեությունն ու մտածողությունը և առաջնությունը տալով «ենթագիտակցությանը», նյութական միջավայրից կտրված հոգեկան աշխարհին (դրանք համարելով նյութական աշխարհի անմիջական ֆունկցիա), Ֆրեյդը անխուսափելիորեն կանգնում է գռեհիկ մատերիալիզմի դիրքերում՝ իր բոլոր բացասական հետևանքներով հանդերձ։ Մարդ-անհատի նկատմամբ նման միակողմանի մոտեցումն անխուսափելի թյուրիմացություններ է ստեղծում կյանքի բոլոր բնագավառներում, այդ թվում նաև հոգեբուժության բնագավառում, որտեղ տարիներ շարունակ աշխատել է ինքը՝ Ֆրեյդը։ Շատ է պատահել, որ հոգեկան հիվանդության իսկական պատճառը սոցիալական է եղել, բայց հոգեվերլուծական տեսության ազդեցության տակ գտնվող հոգեբույժը պատճառը փնտրել է միայն ու միայն ներքին ազդակների մեջ։

Ֆրեյդի կողմից մարդկային պահանջմունքների բիոլոգիզացիան, մարդկային գործունեության բոլոր տեսակները որպես բնազդի արտահայտություն դիտելը այն բանին հանգեցրեց, որ նրա ուսմունքը դարձավ միակողմանի ու հակագիտական։

Բայց Ֆրեյդիզմը լիակատար փակուղի մտավ, երբ փորձեց հոգեվերլուծական տեսության օգնությամբ, մարդ-անհատի անգիտակցական հակումներով, նրա բնազդի դրսևորմամբ բացատրել նաև հասարակական կյանքի ամենաբարդ սոցիալական երևույթները, մարդու գործունեության բոլոր տեսակները՝ նախնադարյան հասարակության մեջ տիրող սովորություններից ու բարքերից սկսած մինչև ժամանակակից բուրժուական հասարակության հակասությունները։

Իր վերջին աշխատություններում Ֆրեյդը գտնում էր, որ հասարակական անլուծելի հակասությունների պատճառները պետք է փնտրել անհատի մեջ։ Հասարակական կյանքում եղած հակասությունները, ասում էր նա, արդյունք են այն պայքարի, որ մարդու մեջ մղվում է նրա անհատական, հակասոցիալական բնույթի և գիտակցության սոցիալական բնույթի միջև։ Ֆրեյդը ժխտում է այն պահանջմունքների առաջատար դերը, որոնք ծագել են հասարակության մեջ և կրում են հասարակական բնույթ։ Իրականը համարելով միայն աշխարհի հետ լիակատար ներդաշնակության մեջ գտնվող բիոլոգիական սկիզբը, նա հասարակականը համարում է մարդու ֆունկցիա։ Անտեսելով հասարակական կյանքի նյութական պայմանները, հասարակության մասին գիտությունների

---

[1] Այդ մասին տե՛ս Դ-ր **Зигмунд Фрейд**. Психология сна. Второе издание. Кн-во «Современные проблемы», Москва, 1926 էջ 3—83, նույնի՝ «Психология обыденной жизни». Разрешений автором перевод В. Медема, 4-е издание, кн-во «Современные проблемы», Н. А. Столяр. Москва, 1926, էջ 3—256.

[2] Տե՛ս **Зигмунд Фрейд**. Лекции по введению в психоанализ, էջ 16.

բնագավառում Ֆրեյդը հանդես է գալիս որպես պսիխոլոգիզմի քարոզիչ։ Մարդկանց գործունեության մեջ ժխտելով սոցիալական միջավայրի առաջատար, որոշիչ դերը, նա ձգտում է այդ գործունեությունը բացատրել ներքին հոգեբանական և բիոլոգիական հակումներով, իսկ հասարակական կյանքը՝ տարբեր անհատների վարքով։ Բոլոր դարերի սոցիալական շարժումների սկզբնաղբյուրը Ֆրեյդը փնտրում է մարդու ներքնաշխարհում, նրա արգելված բնազդների կոմպլեքսի մեջ, համարյա լիովին անտեսելով այդ շարժումների սոցիալական խթանները՝ դասակարգային հակասությունները։ Հասարակական-պատմական պրոցեսը, դասակարգային պայքարը, պատերազմները և այլն նա համարում է հոգեբանական յուրահատուկ «օրինաչափությունների»՝ մահվան բնազդի դրսևորման և մարդու մեջ նիրհող ավերիչ ուժերի, կամ, ինչպես ինքն է ասում՝ «ֆրուստրացիաների» սանձազերծման հետևանք։ Պատասխանելով խաղաղության պաշտպանության գործին ակտիվ մասնակցություն ունենալու Ա. Էյնշտեյնի կոչին, Ֆրեյդը 1932 թվականին նրան գրել է, որ հավանաբար պատերազմը միանգամայն բնական երևույթ է, քանի որ «ագրեսիվ կամ կործանիչ բնազդը... գործում է ամեն մի կենդանի էակի մեջ, ձգտելով խեղել նրան, կյանքը վերածել նրա սկզբնական վիճակին, անկենդան մատերիայի»։ Նույն կերպ էլ ձեռնարկատերերի դեմ գործադուլային պայքարը Ֆրեյդը դիտում է որպես մարդկանց չբավարարված սեռական բնազդի տրանսֆորմացիայի արտահայտություն, արտադրական տրավմատիզմը՝ որպես ինքնապատժի «ենթագիտակցական» ձգտում և այլն։

Ֆրեյդիզմի ռեակցիոն բնույթը ակնհայտ է։ Ծագելով Ա. Շոպենհաուերի, Է. Հարտմանի, Ֆ. Նիցշեի սուբյեկտիվ-իդեալիստական փիլիսոփայության հիմքի վրա, հոգեվերլուծական տեսությունը կապիտալիզմի պաշտպաններին ինչ-որ չափով հնարավորություն է տալիս «հնագույն բնազդի» (որն իբր մեղավոր է ամեն ինչում) ետևում թաքցնել բուրժուական հասարակության սոցիալական ախտերը։

Չնայած իր ռեակցիոն բնույթին, սակայն, որոշ հանգամանքների բերումով, Ֆրեյդիզմը բավականին լայն տարածում գտավ արտասահմանյան մի քանի երկրներում, գլխավորապես ԱՄՆ-ում[1]։ Դրան նպաստեց Ֆրեյդիզմի առաջին հայացքից առաջադիմական լինելը, այն, որ ի տարբերություն հոգեբանության, հոգեվերլուծական տեսությունը ուշադրություն էր դարձնում կյանքի որոշ փաստերի, ինչպես նաև մարդու ռեալ պահանջմունքների վրա։ Բայց քանի որ Ֆրեյդիզմը մարդու բիոլոգիական պահանջմունքները մեծապես գերադասում է նրա սոցիալ-հասարակական պահանջմունքներից, ուստի այդ տեսությունը երբեք դուրս չեկավ սուբյեկտիվ-իդեալիստական պատկերացումների շրջանակներից։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և ետպատերազմյան առաջին տասնամյակում Ֆրեյդի ուսմունքը ժամանակավորապես ստվերի տակ էր մնացել։ Բուրժուական հետազոտողների շրջանում այդ ուսմունքի նկատմամբ վերջին հետաքրքրություն առաջացավ 50-ական թվականների կեսերից սկսած։ Ֆրեյդի հետևորդները, նպատակ դնելով զարգացնել իրենց ուսուցչի գաղափարներն ու տեսական դրույթները, ստեղծեցին փիլիսոփայական մի ամբողջ ուղղություն՝ նեոֆրեյդիզմ։

Ֆրեյդիզմը դիտելով որպես ունիվերսալ փիլիսոփայություն, նեոֆրեյդիստներն այն հասցրին անհեթեթության։ Սրանց մոտ Ֆրեյդի ուսմունքը վերածվեց մատերիալիզմի և սուբյեկտիվ իդեալիզմի տարօրինակ խառնուրդի, այդ իդեալիզմին բնորոշ ագնոստիցիզմով հանդերձ։

Եթե իր հոգեվերլուծական մեթոդը Ֆրեյդը, այնուամենայնիվ, որոշ վերապահումներով էր կիրառում հասարակական երևույթները բացատրելիս, ապա նրա հետևորդներն այդ մեթոդը սկսեցին կիրառել առանց բացառության մարդկային մտածողության ու մարդկային գործունեության բոլոր բնագա-

---

[1] Զիգմունդ Ֆրեյդի հայացքների տարածման գործում մեծ դեր խաղացին նրա կողմից կազմակերպված միջազգային հոգեվերլուծական ընկերությունը, որը 1908 թվականին Զալցբուրգում հրավիրեց իր առաջին կոնգրեսը, ինչպես նաև նրա հիմնած հատուկ հրատարակչությունը, որը լույս էր ընծայում «Jahrbuch für psychoanalytisch und psychopathologische Forschungen" տարեգիրքը (1909 թ.) Ֆրեյդի և Բլեյոդերի խմբագրությամբ, "Internationale Zeitschrift für ärztliche Psychoanalyse" հանդեսը (1913 թ.) և այլ պարբերականներ (տե՛ս Зигмунд Фрейд. Основные психологические теории в психоанализе, էջ 33—35).

վառներում, արվեստի ամենանուրբ հարցերի բացատրության ժամանակ։

Նեոֆրեյդիզմի սաղմնավորման շրջանում կարևոր դեր խաղացին շվեյցարացի հոգեբույժ Կ. Յունգկը (1875—1961), հոգեվերլուծական շարժման խոշոր դեմքերից Ա. Ադլերը (1870—1937)։ Մերժելով Ֆրեյդի համապարփակ պանսեքսուալիզմը, սրանք առաջ քաշեցին մի շարք գաղափարներ (օրինակ Ա. Ադլերը գտնում էր, որ անհատականը կարող է գոյություն ունենալ միայն սոցիալական հարաբերություններ-ի հետ սերտորեն զուգակցված)[1], որոնք ընկան նեոֆրեյդիզ-մի հիմքում։

Նեոֆրեյդիստական ուղղության հիմնադիրները հանդիսա-ցան Կ. Խորնիին (1885—1953), ամերիկյան հոգեբույժ Գ. Սալլիվենը (1892—1949)։ Այդ ուղղության առավել խոշոր ներկայացուցիչներն են ամերիկյան գիտնականներ է. Էրիկ-սոնը, Պ. Բլոսը, Ն. Բրաունը և առանձնապես ամերիկյան սոցիոլոգ և հոգեբան Էրիխ Ֆրոմը, որի աշխատությունների մեջ կարծես ի մի են բերվել նեոֆրեյդիստների հիմնական տեսական եզրակացությունները։

Ֆրոմը ծնվել է 1900 թվականին Գերմանիայում, Հեյդել-բերգի համալսարանում ստացել է փիլիսոփայական կրթու-թյուն։ Այստեղ էլ նա տարվել է Ֆրեյդի ուսմունքով և համալ-սարանն ավարտելուց հետո ընտրել է հոգեբույժի կարիերա, 20-ական թվականներին աշխատել Բեռլինի հիվանդանոց-ներից մեկում։ Այս շրջանում նա ուսումնասիրում է Ֆոյերբա-խի և Մարքսի փիլիսոփայական ուսմունքները, որոնց լույսի տակ որոշ ժամանակ անց սկսում է վերագնահատել Ֆրեյդի ուսմունքը։ Հիտլերի կողմից իշխանությունը զավթելուց հետո 1933 թվականին, Ֆրոմը տարագրվում է ԱՄՆ։ Այստեղ էլ ձևավորվում և վերջնական տեսք է ստանում նրա նեոֆրեյ-դիստական սոցիալական փիլիսոփայությունը։ 1941 թվակա-նին լույս է տեսնում Ֆրոմի առաջին գիրքը՝ «Փախուստ ազա-տությունից» վերնագրով (E. Fromm. Escape from Freedem, N.Y. 1941), որտեղ նա հոգեվերլուծական դիրքերից ֆաշիզ-մը հետազոտում է իբրև սոցիալական երևույթ։ Այս գիրքը նրան լայն ճանաչում բերեց։ Այնուհետև մեկը մյուսի ետևից լույս են տեսնում Ֆրոմի մյուս աշխատությունները, որոնցից առավել հայտնի դարձան՝ Beyond the Chains Illusion. N. Y., 1963; Socialist Humanism. N. Y., 1965; Man for Himself· L., 1960; The Heart of Man, L., 1965; The Sanc Society. L., 1959[1].

Ինչ-որ ժամանակ Ֆրոմը նույնպես իրեն մարքսիստ է համարել և բազմաթիվ աշխատությունների մեջ, ինչպես օրինակ՝ «Հոգեվերլուծությունը և կրոնը», «Սիրո արվեստը», «Առողջ հասարակություն» գրքերում, «Սոցիալական հումա-նիզմ» ժողովածուի առաջաբանում և այլ գրվածքներում փոր-ձեր է արել իր տեսությունը զուգակցել մարքսիզմի տարրերի հետ, հոգեվերլուծական բիոլոգիական կողմնորոշումը փոխա-րինել սոցիալականով, ստեղծել այսպես կոչված «ֆրեյդո-մարքսիզմ»։ Այդ փորձերը, սակայն, հասկանալի պատճառ-ներով անպտուղ եղան և առանց բացառության ձախողվեցին։ Չնայած դրան, սխալ կլիներ լիովին ժխտել Ֆրոմին, նրա հետազոտությունների նշանակությունը։

Ֆրոմը ռևիզիայի է ենթարկում օրթոդոքսալ ֆրեյդիզմը, քննադատում նրա սխեմատիզմն ու միակողմանիությունը և մի շարք ուղղություններով (այդ թվում սոցիալական ու հա-սարակական պրոբլեմների բացատրության գծով) «կատարե-լագործում» այն։ Մի կողմ դնելով libido-ն, որպես մարդկա-յին զարգացման միակ դետերմինատ, անհատի վարվեցողու-թյան ու վարքի միակ շարժիչ, Ֆրոմը ընդգծում է բազմազան գործոնների նշանակությունը, մարդկային արարքների դըր-դապատճառը տեսնում է մի ամբողջ շարք ուրիշ բնաձգներում՝ ծնողական, սննդի հայթայթման, շահամոլության, ուժեղին ենթարկվելու ձգտման, ինքնապաշտպանության և այլն։ Նա գրում է, որ չնայած որոշ պահանջմունքներ (need), ինչպի-սիք են քաղցը, ծարավը, սեքսը ընդհանուր են բոլոր մարդ-կանց համար, սակայն այնպիսի պահանջմունքներ (drive), ինչպիսիք են սերը, և ատելությունը, իշխանություն ունենա-

[1] Տե՛ս **Մ. Գ. Ярошевский.** Психология в XX столетии. Теоретические проблемы развития психологической науки. Изд-во политической литературы, Москва, 1971, էջ 203—205։

[1] Տե՛ս **В. И. Добреньков.** Критика неофрейдистской концепции Эриха Фромма. Изд-во «Знание». М., 1972; էջ 4. М. Г. Ярошевский. Психология в XX столетии, էջ 210.

լու կիրքը և ենթարկվելու հակումը, զգայականից անսահման հաճույք ստանալն ու նրա նկատմամբ ունեցած սարսափը և այլն, որոնք տարբերություններ են ստեղծում մարդկանց բնավորությունների միջև, այդ ամենը ոչ միայն մարդու բիոլոգիական էության, այլև սոցիալական պրոցեսների արդյունք են[1]։ Մարդու ամենալավ ու ամենավատ հակումները, բիոլոգիապես սերված լինելով նրա բնությունից, միաժամանակ նրա սոցիալական ստեղծագործ գործունեության արդյունքն են։

Սոցիալական պրոցեսի և մարդկային հոգեբանության հարաբերության մեջ Ֆրոմը, այնուամենայնիվ, հավատարիմ է մնում հոգեկան ուժերի առաջնության մասին ֆրեյդիստական պոստուլատին, նրա համար ելակետային սկզբունքը մնում է հոգեվերլուծական օրթոդոքսալ կոնցեպցիան։

Ֆրոմը գրում է, որ զատվելով կենդանական աշխարհից, մարդը ընդմիշտ դառնում է «գոյության դիխոտոմիայի» («էկզիստենցիալիստական դիխոտոմիայի») ստրուկը։ Ճիշտ է, որ մարդը շատ պոտենցիաներ ունի, բայց դրանք նա չի կարողանում իրացնել իր կարճատև կյանքի ընթացքում, որովհետև լինելով հասարակության մի մասնիկը, նա երբեք նրա հետ ներդաշնակ համակեցությամբ չի ապրում։

Եվ եթե որևէ ժամանակ մարդ-անհատը ներդաշնակ համակեցությամբ է ապրել բնության ու հասարակության հետ, ապա դա միայն եղել է նախնադարում և միջին դարերում։ Նախնադարյան համայնական հասարակության մեջ մարդուն հոգեկան ստրկացումից փրկում էր խմբի կամ կլանի հետ հոգեպես միաձուլումը։ Միջնադարում, որը եվրոպական քաղաքակրթության պատմության մեջ համերաշխության և սոցիալական անվտանգության ժամանակաշրջան էր, յուրաքանչյուրը գիտեր իր տեղը սոցիալական սիստեմի մեջ և այդ պատճառով բնավ չէր ապրում միայնակության, մյուսներից մեկուսացած լինելու զգացում։

[1] *Տե՛ս* **С. Вейцман**. Борьба зарубежных марксистов против фрейдизма и неофрейдизма. «Научные доклады высшей школы. Философские науки», М., 1961; Ф. Михайлов. Гнеосеологические корни фрейдизма (автореферат канд. дисс.). М., 1963; С. М. Черкасов. Истинная сущность неофрейдизма. Л., 1967.

Վերածնությունն ու ռեֆորմացիան քայքայեցին միջնադարի կայունությունը։ Ճիշտ է, մարդը ձեռք բերեց ազատություն, բայց դրա հետ միասին չքացավ սոցիալական անվտանգությունը, մեծապես աճեց անհատի կախումը հասարակությունից։ Ինչ վերաբերում է ժամանակակից ինդուստրիալիզմին, ապա այն ուղղակի հոգեպես խեղում է անհատին, պայմաններ չի ստեղծում նրա ունակությունների ազատ զարգացման համար։ Ֆրոմի այս սխեմայի մեջ չկա ոչ սոցիալ-պատմական և ոչ էլ հոգեբանական ճշմարտություն։ Իհարկե, դարերի ընթացքում փոխվել են մարդկային բնավորությունները, և այդ փոփոխությունները հիմնականում պայմանավորված են եղել մարդկանց ապրելակերպով։ Սակայն պատմությունը ժխտում է Ֆրոմի այն տեսակետը, թե միջնադարը եղել է համընդհանուր բարեկեցության և սոցիալական համագործակցության դարաշրջան, իսկ Վերածնունդը, որը տվել է մտքի ու գործի տիտաններ, իբր եղել է անհատի և սոցիալական աշխարհի միջև կապերի ավերման ու խզման ժամանակաշրջան։

Ֆրոմը այն տեսակետին է, որ «հսկայական կորպորացիաների, հսկայական պետության, ինչպես նաև հսկայական բյուրոկրատիայի և հսկայական արհմիությունների աշխարհում» մարդն իրեն զգում է իբրև իրենից դուրս գոյություն ունեցող առարկաներից լիովին կախված, թշվառ մի էակ։ Նա «գերի է այն տնտեսական ու քաղաքական պայմաններին, որոնց ինքն է կյանքի կոչել»։ Այդ նույն մարդն է, որ կյանքի կոչեց նաև «ազատությունից փախուստ տալու» չորս հիմնական մեխանիզմները՝ սադիզմը, մազոխիզմը, դեստրուկտիվիզմը և ավտոմատիկ կոնֆորմիզմը։

Սադիզմը հասարակության անդամների մի փոքր մասի անսահման ավտորիտար իշխանություն ունենալու ձգտումն է, որը հանդես է գալիս դեռ մանկության օրերին։ Այդ նպատակին հասնելու ճանապարհին անհատը ստորացնում, ճնշում, տանջանքների է ենթարկում իր նմաններին, նախապես լավ իմանալով, որ նրանք դիմադրության անընդունակ են։ Այդ փոքրաթիվ մարդկանց կովազան ու ագրեսիվ բնազդներն են, որ պատճառ են հանդիսանում համաշխարհային ցնցումների, պատերազմների, արյունահեղությունների։ Ըստ որում նեոֆրեյդիստների զգալի մասը բացահայտորեն չի դատա-

պարտում մարդու մոտ եղած սադիզմը։ Այսպես, օրինակ, արևմտագերմանական էկոլոգ Կ. Լորենցի կարծիքով մարդու բնածին ագրեսիվությունը բիոլոգիական տեսակի գոյապահպանման տեսակետից նույնիսկ գնահատելի հատկություն է։

Մազոխիզմն իրեն ուրիշներին ենթարկելու ձգտում է, հեղինակություններին ենթարկվելու պատրաստակամություն, որը դրսևորվում է հասարակության անդամների վիթխարի մեծամասնության մոտ։ Դեստրուկտիվիզմը մի մտայնություն է, որը թելադրում է՝ նախապես աշխարհն ավերեմ, որպեսզի նա ինձ չավերի, իսկ կոնֆորմիզմն ամեն տեսակ յուրօրինակն ու անկախը ժխտող սոցիալական նորմերի հետ համաձայնության մեջ գտնվելու ձգտում է[1]։

Նեոֆրեյդիստների տեսակետով ինչպես սեքսուալ բնազդը, այնպես էլ անգիտակից մյուս բնազդները, ընդհանրապես մարդկային հոգեկան կառուցվածքը, ենթակա չեն գիտական վերլուծության կամ հենց իր՝ անհատի կողմից վերահսկողության ու կառավարման։ Նույնիսկ ամենաքաղաքակիրթ, կուլտուրական, մտավոր բարձր զարգացման հասած անհատը բնավորության ուժով կարող է միայն ժամանակավորապես ճնշել իր անգիտակից բնազդները։ Դրանք, միևնույն է, վաղ թե ուշ դուրս կգան արտաքին մակերես և տրանսֆորմացիայի կենթարկվեն ամեն տեսակ պսիխոզների ու նևրոզների տեսքով։ Մարդու, հատկապես նշանավոր անհատների, կյանքը ոչ այլ ինչ է, քան անհավասարակշռված հոգեկանի արտահայտություններ։

Առաջնորդվելով այս սխեմայով, Ֆրոմը և նեոֆրեյդիստ սոցիոլոգները, փիլիսոփաներն ու պատմաբանները ամեն քայլափոխի խեղաթյուրված են ներկայացնում անհատի ու սոցիալական միջավայրի փոխհարաբերությունները, պատմական պրոցեսները բացատրում են աֆեկտներով ու կրքերով, հոգեկան հիվանդություններով ու հոգեկան խանգարումներով, անհող ֆանտազիաներով և այլ գործոններով։ Հոգեվերլուծության ենթարկելով պատմական պրոցեսները, նրանք հասարակական-պատմական միջավայրին երկրորդական և երրորդական նշանակություն են տալիս[1], այն համարում են անգույն մի ֆոն, որի վրա տեղի են ունենում անհատների անձնական էմոցիաների բախումներ, ծավալվում են ներքին անգիտակից կոնֆլիկտներ, ծայր են առնում բնազդների էքսպանսիաներ, որոնք, կանխորոշելով մարդկանց արարքները, վճռական աղդեցություն են գործում պատմական պրոցեսի վրա։

Պրոբլեմին նման մոտեցումը ինչ խոսք, ուղղակի գծով պետք է տաներ և տարավ դեպի հասարակական երևույթների բիոլոգիզացիայի ֆրեյդիստական փակուղին։

Ամերիկյան նեոֆրեյդիստ հոգեբաններ Ա. Հոլլինգշիդի և Ֆ. Ռեդլիխի, արևմտագերմանական նեոֆրեյդիստ պատմաբան Ռ. Ռեյխի տեսակետով Գերմանիայում 1933 թվականին ֆաշիստական դիկտատուրայի հաստատումը և հիտլերականների կողմից պատերազմի սանձազերծումը նացիոնալ-սոցիալիզմի պարագլուխների և Երրորդ ռայխի ղեկավարների մոտ պսիխոսեքսուալ էներդիայի կուտակման և «դաժանության բնազդի» դրսևորման հետևանք էր։

Պատմության դասակարգային վերլուծությունը փոխարինելով նրա պսիխոլոգիզացիայով, նեոֆրեյդիստները ֆաշիստական դիկտատուրան դիտում ու գնահատում են իբրև «գերմանական ժողովրդի հոգեկան դեպրեսիայի հետևանք», «գերմանացիների մելանխոլիայի», «գերմանական ժողովրդի լեբիդոյ սահմանադրականության», նրա «կոլեկտիվ մեղքի» արդյունք։ Նեոֆրեյդիստներից ոմանք էլ, ավելի հեռուն գնալով, 1933—1945 թվականների համաշխարհային ցնցումների հիմնական պատճառը տեսնում են ֆաշիստական դիկտատոր Ադոլֆ Հիտլերի հոգեկան անհավասարակշռության մեջ։ 1972 թվականի վերջերին լույս ընծայած իր ուսումնասիրության մեջ ամերիկյան հոգեբան Լանգը գրում է, որ իրականում Հիտլերը հոխորտացող և հզոր ձևացող մարդու դիմակի տակ թաքնված

[1] **М. Г. Ярошевский.** Психология в XX столетии, էջ 210—211։

[1] Տե՛ս **Т. Шидер.** Различия между историческим методом и методом социальных наук. М. 1970, էջ 18, **А. Дюпрон.** Единство христиан и единство Европы в период новой истории. М., 1970, էջ 10, 17, նույնի՝ Язык и история. М., 1970, էջ 4—5, **В. М. Морозов.** О современных направлениях в зарубежной психиатрии и их идейных истоках. М., 1961, էջ 128, **Ф. В. Бассин.** Проблема «бессознательного». О несознаваемых формах высшей нервной деятельности. М., 1968, էջ 385.

մի թույլ արարած էր, որը պատճառ դարձավ միլիոնավոր զոհերի։ Ուրիշ նեոֆրեյդիստներ, ավելին, փորձում են նրա բնավորության արմատները պեղել ծնողների հոգեկան դրսևորումների մեջ։ Մասնավորապես այդպես է վարվում հոգեբան Դ. Ռեկտենվալդը, որը գրում է, թե հիտլերյան ագրեսիայի մեջ քիչ մեղք չունեն ֆաշիստական դիկտատորի նախնիները, որոնք տառապում էին այսպես կոչված Պարկինսոնի հիվանդությամբ (հոգեկան անհավասարակշռության հողի վրա առաջացած անդամալուծությամբ)։

Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր Պ. Լևենբերգը ֆաշիստական դահիճ Հիմլերի պատանեկան օրագրի նյութերի հիման վրա փորձում է նրա հանցագործությունները բացատրել այն բանով, որ նա «շիզոիդ անհատ էր»՝ պսիխոպաթոլոգիական սինդրոմ (կոնվուլսիվ խանգարում) ունեցող մարդուն բնորոշ բոլոր գծերով։

Նեոֆրեյդիստական ուրիշ շատ հեղինակներ նույնպես գտնում են, որ ֆաշիստական պետությունը Գերմանիայում հոգեկան աննորմալ ներքնաշխարհ ունեցող, պաթոլոգիական տեսակետից այլանդակված մարդկանց իշխանություն էր, մարդիկ, որոնք նորմալ պայմաններում պետք է գտնվեին հոգեբույժների մշտական հսկողության տակ։

Իրենց այս տեսակետներով նեոֆրեյդիստները գիտակցաբար թե անգիտակցաբար արդարացնում են մարդկային պատմության ամենացնցող ոճրագործությունները, ֆաշիստներից վերցնում կատարած գազանությունների պատասխանատվությունը, քողարկում մոնոպոլիաների վճռական դերը հիտլերյան կուսակցության ֆինանսավորման և իշխանությունը նրան հանձնելու գործում։ Այլ խոսքով՝ փորձում են սքողել այն իրողությունը, որ ֆաշիզմը գերմանական իմպերիալիզմի ու միլիտարիզմի ծնունդն էր։ Մյուս կողմից նրանք բանն այնպես են ներկայացնում, թե մարդիկ ստիպված են եղել գտնվել սադիստ անհատների իշխանության ներքո, անտրտունջ ենթարկվել ֆաշիստական պարագլուխներին, որոնք գազանություններ էին անում գեստապոյում, միլիոնավոր մարդկանց խեղդամահ անում գազախցերում կամ կրակին հանձնում դիակիզարաններում։

Ինչպես տեսնում ենք, նեոֆրեյդիստների այս սխեմայի մեջ չկա ո՛չ սոցիալ-պատմական, ո՛չ էլ հոգեբանական ճշմարտություն։ Բայց դրա փոխարեն այն ունի սոցիալական որոշակի ուղղվածություն, այն է՝ մարդկանց ուշադրությունը սոցիալական ու քաղաքական կոնֆլիկտներից շեղել դեպի պսիխոֆիզիոլոգիական ունիվերսալ ենթագիտակցական բընալները։ Եթե անհնարին է վերափոխել մարդու բնությունը և վերադաստիարակել նրան, ուստի միակ եզրակացությունն այն է, որ նախապես անհաջողության է մատնված գոյություն ունեցող հասարակական կարգերի վերափոխման, բնաջնջող պատերազմների վերացման, սոցիալական անարդարություններից մարդկության ազատագրությանն ուղղված բոլոր փորձերը։ Այս եզրակացության մեջ է ընդհանրապես ֆրեյդիզմի, մասնավորապես նեոֆրեյդիզմի ռեակցիոն սոցիալ-քաղաքական էությունը։

Տիրող դասակարգերի անարդարությունները, ֆաշիստական գազանությունները և իմպերիալիստական ագրեսորների արարքները պսիխոլոգիզացիայի միջոցով արդարացնելու իրենց ձգտման մեջ ֆրեյդիզմն ու նեոֆրեյդիզմը մոտենում են պատմության բիոլոգիզացիայի մյուս փորձերին՝ մալթուսականությանն ու սոցիալ-դարվինիզմին, իսկ նրանց գենեզիսը գալիս է Շոպենհաուերից ու Նիցշեից (կամքը մարդու սուբստանցիան է, իսկ ինտելեկտը՝ նրա ակցիդենցիան), Բերգսոնից[1] և Ջեյմսից։ Այս բոլոր ուղղություններին հարազատեցնում է մի հիմնական ձգտում՝ մասսաների ուշադրությունը շեղել սոցիալ-դասակարգային հակասություններից և կոնֆլիկտային իրադրություններից, դրանք հանգեցնել ենթագիտակցական մութ հակումների։

Նեոֆրեյդիստներից ոմանք, այդ թվում նաև Ֆրոմը, որոշ ծառայություններ ունեն ժամանակակից կապիտալիստական հասարակության քննադատության և մոնոպոլիստական վերնախավի կոնկրետ գործողությունների մերկացման տեսակետից։ Նրանց համար այդ հասարակությունը հիվանդ, նևրոլոգիական հասարակություն է, որտեղ անգիտակից իմպուլս-

[1] Տե՛ս А. Бергсон. Творческая эволюция. М., СПБ, 1914, էջ 149.

ները ցանկացած ժամանակ պատրաստ են բռնկվելու, բայց առայժմ սանձահարվում են։ Դրանք համեմատաբար հեշտությամբ են սանձահարվում, որովհետև այդ հասարակության հակասությունները սուբյեկտիվ բնույթ են կրում, դրանք գոյություն ունեն անհատների գիտակցության մեջ միայն, այլ ոչ թե ռեալ իրականության մեջ։ Ռեալ իրականությունը, ընդհակառակն, կոնֆլիկտների համար բարենպաստ հող չի ստեղծում։ Այսպես, իր աշխատություններից մեկում[1], որտեղ քննարկվում են սոցիալական բնավորության հարցերը, էրիխ Ֆրոմը գրում է, թե արևմտյան հասարակությունն այժմ ի վիճակի է խուսափել ճգնաժամերից։ Դրա պատճառն այն է, ասում է նա, որ 19-րդ դարում կապիտալիզմն ուներ «կուտակման կողմնորոշում», իսկ 20-րդ դարում այն ձեռք է բերել «սպառողական կողմնորոշում՝» ներքին շուկայի մրշտական ընդլայնման տենդենցներով։ Դրա հետևանքով մարդը «մտածող էակից» (Homo Sapiens) վերածվել է «տոտալ սպառողի» (Homo Gonsumens)։ Ուստի մեր օրերի սոցիալական հակասությունները պետք է լուծել ոչ թե հասարակության մեջ, այլ անհատի ներսում[2]։

Իսկ ո՞րն է այն ուժը, որն ի վիճակի է լուծել անհատի ներսում եղած հակասությունները։ Ֆրոմի կարծիքով անհրաժեշտ է «վերածնել լուսավորությունն ու հումանիզմը», ըստ որում այն հումանիզմը, որն ուղղված է մարդ-անհատի ամբողջական, բազմակողմանի զարգացմանը[3]։ Այստեղ Ֆրոմը մոտենում է Սեն-Սիմոնի և Ֆուրիեի ուտոպիստական սոցիալիզմին։ Ի վերջո նրա ուսմունքը յուրատեսակ ճանապարհորդություն է կատարում բանականության սահմաններից այն կողմ, նրա մեջ գնալով գերակշռում են իռացիոնալ, միֆոլոգիական տարրերը և, լիովին կտրվելով նյութական հիմքից, հանգում է քրիստոնեական մերկ քարոզի[4]։

[1] **E. Fromm.** Individual and social Character Psyhoanalysis and Contemporary American, N. Y., 1964

[2] *Տե՛ս* «США: экономика, политика, идеология», № 1, 1971, *էջ 59։*

[3] *Տե՛ս* «Социология и идеология», изд-во «Наука», М., 1969, *էջ 262—263։*

[4] *Այս մասին տե՛ս* **А. И. Титаренко.** Эрих Фромм в оковах иллюзий («Вопросы философии», 1964, № 10).

Ֆրեյդիզմի հակագիտական էությունը վերջնականապես մերկացրել է մարքս-լենինյան տեսությունը։

Բացահայտելով պատմական պրոցեսի օրինաչափությունները, մարքսիզմ-լենինիզմը մեծ հետաքրքրություն է հանդես բերում նրա հոգեբանական ասպեկտների ուսումնասիրության նկատմամբ։ Հասարակական երևույթների մարքսիստական վերլուծությունը ենթադրում է հոգեբանական տվյալների լայն օգտագործում։ Չէ՞ որ մասսաների հոգեբանությունը սովորաբար հանդես է գալիս իբրև հասարակական-սոցիալական պրոցեսների յուրատեսակ կատալիզատոր։ Խոսելով հոգեբանական տարրի նշանակության մասին, Վ. Ի. Լենինը գրել է, որ «պետք է սովորել մասսաներին մոտենալ առանձնապես համբերությամբ և զգուշությամբ, որպեսզի հնարավոր լինի հասկանալ այդ մասսայի յուրաքանչյուր խավի, պրոֆեսիայի և այլ առանձնահատկությունները, հոգեբանության յուրահատուկ գծերը[1]։ Լենինը կոչ էր անում բացահայտել և ուսումնասիրել սոցիալ-հոգեբանական այնպիսի գործոններ, ինչպիսիք են ժողովրդական մասսաների գիտակցությունը, պաթոսը, հերոսականությունը, աշխատավորների վճռականությունն ու համառությունը, նրանց համակրանքն ու հակակրանքը, դժգոհությունն ու վայրույթը, հուսահատությունն ու հոգնածությունը[2]։

Չնայած դրան, մարքսիզմ-լենինիզմը երբեք հոգեբանական գործոնը հասարակական զարգացման պրոցեսում առաջնային չի համարել։ Վ. Ի. Լենինը «Փիլիսոփայական տետրերում» նշում էր, որ անհատի վարվելակերպի ու գործունեության մեջ հոգեբանական գործոնի դերի բացարձակացումը հենց այն բանի ապացույցն է, թե ինչպես «կոր գծի (իմացության—Հ. Ս.) ամեն մի հատվածը, բեկորը, կտորը կարող է փոխարկվել (միակողմանիորեն փոխարկվել) ինքնուրույն, ամբողջական,

[1] Վ. Ի. Լենին, *երկեր, հ. 31, էջ 226։*

[2] *Տե՛ս* **В. И. Ленин.** ПСС, т. 11, *էջ 58,* т. 25, *էջ 342,* т. 26, *էջ 319,* т. 39, *էջ 305,* т. 43, *էջ 60, 308, 401* т. 44, *էջ 348,* т. 45, *էջ 112, և այլն։ Այդ հաղորդները լուսաբանված են.* **Б. Ф. Поршнов.** В. И. Ленин и проблемы социальной психологии. М., 1969; *նույնի՝* Социальная психология и история. М., 1966; «История и психология», М., 1971 г.

ուղիղ գծի, որը (եթե ծառերի ետևում չտեսնես անտառը) այն ժամանակ տանում է դեպի ճահիճ, դեպի տերտերականություն (որտեղ նրան ամրապնդում է տիրապետող դասակարգերի դասակարգային շահը»)[1]։

Ի տարբերություն անգիտակից ակտերի հոգեվերլուծական մեկնաբանությանը, մարքսիզմ-լենինիզմը տալիս է հոգեկանի և հասարակական ուժերի անմիջական փոխներգործության պատկերը, բացահայտում է անհատի հոգեկան ակտիվության չգիտակցված ձևերի օբյեկտիվ ասպեկտը, որը ոչինչ չունի տվյալ պրոբլեմի միստիֆիկացիայի հետ[2]։

Չժխտելով մարդու մոտ ամեն տեսակ բնազդների և ենթագիտակցական հակումների գոյությունը, մարքսիզմը, մարդու և նրա վարքագծի ձևավորման գործում վճռական դերը հատկացնում է սոցիալական միջավայրին, սոցիալ-տնտեսական պայմաններին։ Մարդու բազմաշերտ հոգեբանությունը վերջին հաշվով որոշվում է ռեալ իրականությամբ, նյութական իրավիճակով և հասարակական հարաբերությունների սիստեմով։ Ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, մարքսիզմի եզրակացությունը, «թե գաղափարների ընթացքը կախված է իրերի ընթացքից, միակն է, որ համատեղվում է գիտական հոգեբանության հետ»[3]։

Հոգեվերլուծական կոնցեպցիայի դեմ է ուղղված նաև մարդու գործունեության մեջ գիտակցականության դերի մասին մարքսիստական դրույթը[4]։

Զիգմունդ Ֆրեյդի հոգեվերլուծական տեսությունը ժխտվում է նաև մարդու գործունեության ռեգուլիացիայի մեջ գլխուղեղի կեղևի առաջատար դերի մասին Ի. Պ. Պավլովի ուսմունքով, նրա բազմաթիվ ու բազմազան կենսաբանական գիտափորձերի արդյունքներով։

*
* *

Անհատի մասին 20-րդ դարում հանդես եկած բուրժուական փիլիսոփայական-սոցիոլոգիական տեսությունների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում այսպես կոչված «ֆրանկֆուրտյան դպրոցի»[1] «կուլտուրական և սոցիալական քննադատության տեսությունը», «դպրոց», որը ժամանակակից մանր բուրժուազիայի տեսական գինանոցներից մեկն է։

«Ֆրանկֆուրտյան դպրոցից» են սերվել բուրժուական փիլիսոփայության մեջ հայտնի այնպիսի դեմքեր, ինչպիսիք են Մաքս Հորկհայմերը, Թեոդոր Ադորնոն, Ֆրիդրիխ Պոլակը, նրանց աշակերտներ Յուրգեն Հաբերմասը, Ալֆրեդ Շմիդտը, Օսկար Նեգտը, Էռնստ Թեոդոր Մոլը։ Տարբեր ժամանակներում սրանց հարել են ֆրանսիացիներ Ռայմոն Արոնը և Ժորժ Ֆրիդմանը։ Այդ դպրոցից է նաև ժամանակակից «նոր ձախերի» հոգևոր առաջնորդ Հերբերտ Մարկուզեն։

«Ֆրանկֆուրտյան դպրոցի» տեսությունները գնահատելիս պետք է աչքի առաջ ունենալ, թե այդ դպրոցն ինչպիսի բարդ պայմաններում է ձևավորվել, թե իր ծագման հենց սկզբից ինչպիսի յուրատեսակ դիրք է գրավել «ճակատների միջև»։

«Ֆրանկֆուրտյան դպրոցը» ձևավորվել է 20-ական թվականներին, բայց ամբողջական տեսք է ընդունել միայն 30-ական թվականների կեսերին, երբ ֆաշիզմը Գերմանիայում բացահայտ գրոհ սկսեց իշխանության համար և հասավ իր նպատակին։

Դեռևս մինչև Հիտլերի իշխանության գալուխ անցնելը, ֆա-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր 4-րդ հրատ., հ. 38, էջ 460։

[2] Այս մասին տե՛ս **Մ. Օ. Герцберг**. Очерки по проблеме сознания, М., 1961; **О. В. Кербиков**. Лекция по психиатрии. М., 1955; А. А. **Меграбян**. О природе индивидуального сознания (в норме и патологии). Ереван, 1959; С. Л. Рубинштейн. Бытие и сознание, М., 1957.

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, 5-րդ հրատ., հ. 1, էջ 158։

[4] Այս տեսանկյունով ֆրեյդիզմի քննադատությամբ հանդես են եկել սովետական մի շարք հետազոտողներ՝ Դ. Ն. Ուզնաձեն, Լ. Գ. Վիգոտսկին, Ս. Լ. Ռուբինշտեյնը, Ա. Ն. Լեոնտևը, Ա. Ռ. Լուրիան, ինչպես նաև արտասահմանյան առաջադեմ գիտնականներից ոմանք՝ Ժ. Պիաժեն, Ա. Վալլոնը և ուրիշներ (տես «Коммунист», № 2, 1972, էջ 99).

[1] Դպրոցն իր անվանումը ստացել է այն պատճառով, որ նրա ներկայացուցիչներն իրենց գործունեությունը սկսել են Գերմանիայի Մայնի Ֆրանկֆուրտ քաղաքի սոցիալական հետազոտությունների ինստիտուտում՝ երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում։

շիստական վտանգի դեմ հանդիման Գերմանիայում շերտավորվում էր հենց բուրժուական լագերը։ Բուրժուական չափավոր ինտելիգենցիան, սարսափ տածելով նացիոնալ-սոցիալիզմի նկատմամբ, միաժամանակ ամեն կերպ աշխատում էր արգելակել երկրում զարգացող կոմունիստական շարժումը։

Տրամադրությունների նման մթնոլորտում ձևավորվեցին մարդու մասին ուշ բուրժուական շրջանի կոնցեպցիաների՝ ինչպես ռեակցիոն ֆաշիստական, այնպես էլ բուրժուադեմոկրատական տարատեսակությունները։ Բուրժուադեմոկրատական մտածողությունն իր հերթին բաժանվեց աջ ու ձախ ճակատների։ Սրանց միջև առաջ եկան զանազան միջանկյալ տեսություններ, որոնք իրենց մկրտեցին «քննադատական տեսություններ» անվամբ։ Այդ միջանկյալ տեսություններից էր նաև «ֆրանկֆուրտյան դպրոցի» «քննադատական տեսությունը», որի հեղինակներն իրենց առջև աներկմիտ նպատակ էին դրել՝ սահմանազատվել ինչպես ֆաշիզմից, այնպես էլ մարքսիզմ-լենինիզմից։ Նման խնդրի իրականացումը, ֆրանկֆուրտցիների կարծիքով, կապահովեր բուրժուական դեմոկրատիայի հեգեմոնիան ինչպես բանվոր դասակարգի հակաֆաշիստական պայքարում, այնպես էլ բուրժուական հումանիզմի մեջ։

Հանդես գալով ֆաշիզմի դեմ, «ֆրանկֆուրտյան դպրոցի» ներկայացուցիչները ստիպված եղան տարագրվել Գերմանիայից այն բանից հետո, երբ իշխանության գլուխ անցավ Հիտլերը։ Անհրաժեշտ է նշել, որ ֆրանկֆուրտցիների հակաֆաշիստական պայքարը կրավորական բնույթ էր կրում։ Նրանց հատուկ էր քաղաքականության մեջ պրակտիկայից հեռացումը և սպասողական դիրքը։ 30-ական թվականների նրանց ողջ գործելակերպը 1933 թվականին գերմանական բանվորական շարժման պարտության նկատմամբ յուրատեսակ օպորտունիստական ռեակցիա էր, բայց ռեակցիա փախուստի միջոցով։ Իսկ իրավ, հեղափոխականները պարտության դեպքում ոչ թե խուճապահար թաքնվում են թփերի տակ, այլ իրենց գործունեությունը վերագնահատում են քննադատաբար։ Հենց այդպես վարվեցին Կոմինտերնի անդամ կուսակցություններն իրենց 7-րդ կոնգրեսում, ինչպես նաև

գերմանական կոմկուսի ներկայացուցիչները կուսակցության Բրյուսելի կոնֆերանսում։ Ընդհակառակն, «քննադատական տեսության» ներկայացուցիչները գերադասեցին երբեք չանդրադառնալ 1933 թվականի պարտության պատճառներին, վերլուծության չենթարկեցին դրանք, անհրաժեշտ դասեր չառան դրանից։

Գերմանիայից տարագրվելուց հետո «ֆրանկֆուրտյան դպրոցի» ներկայացուցիչների մեծ մասը հիմնավորվեց Միացյալ Նահանգներում։ Այստեղ «ֆրանկֆուրտյան դպրոցի» տեսությունները համաձուլվեցին անգլո-սաքսոնական սոցիոլոգիայի տրադիցիոն մի քանի կոնցեպցիաների հետ։ Դպրոցի առաջատար ներկայացուցիչների, ինչպես նաև նրանց աշակերտների տեսական ու քաղաքական հայացքների վրա բացասաբար անդրադարձավ այն բարդ իրադրությունը, որի պայմաններում գտնվում էր ամերիկյան բանվորական և հակաֆաշիստական շարժումը։ Ավելի ուշ ֆրանկֆուրտցիներն իրենց վրա կրեցին «սառը պատերազմի» խիստ բացասական ազդեցությունը։

«Ֆրանկֆուրտյան դպրոցի» տեսությունները կապիտալիստական զարգացած երկրների մանր բուրժուազիայի և առաջին հերթին մտավորականության այն խմբերի գաղափարախոսությունն է, որոնք ըմբռնել են իրենց սոցիալական վիճակի անհեռանկար լինելը, գաղափարական-քաղաքական տեսակետից «չեն հասցրել ինտեգրացվել» կապիտալիստների դասակարգի մեջ, մյուս կողմից էլ խորշում են սոցիալիստական բանվորական շարժումից։ Դա նաև ծառայողների այն շերտի գաղափարախոսությունն է, որոնք ավելի ու ավելի մեծ չափերով են դառնում բուրժուական հոգևոր և քաղաքական տրադիցիաների կրողը։ Այլ խոսքով, «ֆրանկֆուրտյան դպրոցի» տեսությունները սոցիալական այն ուժերի տրամադրությունների արտահայտություններն են, որոնք սպառողներ լինելով հանդերձ, երբեք առաջնային արտադրողներ չեն եղել և այժմ էլ այդպիսիք չեն։ Դա է պատճառը, որ «քննադատական դպրոցի» ուշադրության կենտրոնում կանգնում են ոչ թե արտադրության պրոբլեմները, այլ սպառողական պահանջների բավարարման հարցերը։ Դա է պատճառը նաև, որ «քննադատական դպրոցի» տեսությունները հեղափոխական

գիտակցության պրոբլեմն ըստ էության կապում են ապրանքների սպառման կամ դրանց տիրանալու հնարավորությունների հետ, այսինքն՝ միայն ու միայն սոցիալական այս կամ այն շերտի աղքատության կամ հարստության հետ[1]։ Հեղափոխական գիտակցությունը, այսպիսով, դիտվում է որպես շըրջանառության ու բաշխման ոլորտի, այլ ոչ թե հասարակական հարաբերությունների արդյունք։ Հենց այդ հիմքի վրա սպառման պրոբլեմների վերլուծության միջոցով է, որ վիճարկվում է կապիտալիստների հարստության գլխավոր արտադրողի՝ բանվոր դասակարգի հեղափոխական դերը[2]։

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները[3], «Ֆրանկ-

[1] Ինչպես հայտնի է, կապիտալիզմի վերընթաց զարգացման ժամանակաշրջանում մարդու, որպես սոցիալական էակի, ուսումնասիրությամբ զբաղվում էր ոչ միայն բուրժուական փիլիսոփայությունը, այլև տնտեսագիտությունը։ Բայց մեր օրերում մարդու մասին բուրժուական կոնցեպցիաները լիովին շրջանցում են քաղաքատնտեսությունը։ Եվ եթե մարդու ներքնաշխարհի ուսումնասիրությամբ զբաղվող բուրժուական գիտնականները, այնուամենայնիվ, այդ ներքնաշխարհը այս կամ այն չափով առնչում են «տնտեսության» հետ, ապա դրա տակ նրանք հասկանում են կամ տեխնիկական կամ էլ ապրանքներ ձեռք բերելու պրոցեսը, բայց ոչ երբեք դրանց արտադրությունը։ Նրանք երբեք քննարկման առարկա չեն դարձնում կապիտալիստական արտադրության մեխանիզմը, բուրժուական դասակարգային հարաբերությունները։

[2] Ճշմարտությունը պահանջում է ասել, որ նեոպատերազմյան ժամանակաշրջանում Ֆրանկֆուրտցիների «քննադատական տեսությունները» որոշակի դեր են խաղացել բնակչության առանձին շերտերում, հատկապես ուսանող երիտասարդության մոտ բուրժուական կարգերի նկատմամբ քննադատական տրամադրություններ արթնացնելու տեսակետից։ Ֆրանկֆուրտցիները, քննադատելով կապիտալիստական կարգերը, մասնավորապես բուրժուական կուլտուրան, բարձրացրել են հարցեր, որոնք նաև մարքսիստների հետաքրքրության առարկան են։

[3] «Ֆրանկֆուրտյան դպրոցի» կոնցեպցիաները տարբեր երկրների մարքսիստների ուշադրությանն են արժանացել միայն վերջին տարիներս։ Այդ դպրոցի ներկայացուցիչների հայացքների ուսումնասիրությամբ ու քննադատությամբ հանդես են եկել մի շարք երկրների մարքսիստ փիլիսոփաներ, տնտեսագետներ, սոցիոլոգներ։ Դրանցից հատկապես աչքի են ընկնում գերմանացի մարքսիստներ Ի. Հեյզելերը, Գ. Մատտիսենը, Վ. Բեյերը, Է. Խանը, Վ. Իոպկեն, Ռ. Շտայգերվալդը, Ի. Շելեֆշտեյնը, ինչպես նաև Ալ. Գեդեն (Հունգարիա), դոկտոր Ֆիլիպսը (Չեխոսլովակիա)։ Սովետական գիտնականներից «Ֆրանկֆուրտյան դպրոցի» տեսությունների ուսումնասիրությամբ զբաղվել են Ե. Մոզժինսկայան, Ս. Դալինը, Ա. Չեպրակովը և ուրիշներ։

ֆուրտյան դպրոցի» դիրքը հայտնի չափով արտացոլում է բուրժուազիայի և պրոլետարիատի միջև մղվող պայքարի հանգուցային հարցերը։ Բուրժուական ինդիվիդուալիզմի և սուբյեկտիվիզմի դիրքերից սոցիալիստական հեղափոխության մարքսիստական-լենինյան տեսության «ձախ» քննադատությամբ, մարքսիզմի ուսմունքի տարբեր կողմերի միտումնավոր մեկնաբանությամբ այդ դպրոցի ներկայացուցիչները բացասական դեր են խաղացել բանվոր դասակարգի հետ մանրբուրժուական ռադիկալ շերտերի, հատկապես երիտասարդ ինտելիգենցիայի ձախացող մասի մերձեցման գործում։ Ինչպես նախկինում, այնպես էլ այժմ նրանք բացասաբար են տրամադրված կազմակերպված բանվորական շարժման և ռեալ սոցիալիզմի նկատմամբ։ Ֆրանկֆուրտցիները բացահայտ թշնամական դիրք են բռնել բանվորների դասակարգային և հատկապես քաղաքական կազմակերպությունների նկատմամբ, հանդես են գալիս հակաիմպերիալիստական և դեմոկրատական ուժերի դաշինքի դեմ։ Այս հանգամանքը նրանց տարել է դեպի պայքարի անարխիստական մեթոդների ընդունումը, հանգեցրել է տեռորիստական խմբերի անհրաժեշտության գաղափարին։

«Ֆրանկֆուրտյան դպրոցը» իր կազմով միատարր չէ։ Ավելին, նրա առանձին ներկայացուցիչների հայացքներում կան մի շարք էական տարբերություններ։ Չնայած դրան, այնուամենայնիվ, արմատական հիմնական հարցերում Ֆրանկֆուրտցիների տեսակետները համընկնում են։ Դա ամենից առաջ վերաբերում է նրանց կողմից մատերիալիզմի ու դիալեկտիկայի ըմբռնմանը, մարքսիզմի, բանվորական շարժման, իմպերիալիզմի ու սոցիալիզմի նկատմամբ նրանց վերաբերմունքին։ Հենց այս նմանությունը հիմք է տալիս խոսելու գոյություն ունեցող մի ընդհանուր «ձախ» ռադիկալ «քննադատական» հոսանքի մասին։ Այդ ընդհանուր հոսանքի մեջ առավել ընդհանուրը «Ֆրանկֆուրտյան դպրոցի» ներկայացուցիչների ձգտումն է՝ մշակել և ավարտուն տեսքի բերել մարդ-անհատի կոնցեպցիան։ Սովորաբար Ֆրանկֆուրտցիները անհատի մասին մարքսիզմից փոխառնված գաղափարները մեկնաբանում են ձախ հեգելականության ոգով, այնպես կերպարանափոխում դրանք, որ դեպի ան-

հատն ունեցած վերաբերմունքում մնում է միայն հեռավոր (այն էլ արտաքին) նմանություն մարքսիզմի և ֆրանկֆուրտյան «քննադատական տեսությունների» միջև։

Այժմ ավելի մոտիկից զննենք «ֆրանկֆուրտյան դպրոցի» գաղափարների բովանդակությունը։

«Ֆրանկֆուրտյան դպրոցի» փիլիսոփայական մտքի մեջ գլխավորը օբյեկտիվ ռեալականության և նրա օրենքների ժխտումն է։ Թ. Ադորնոն, Ա. Շմիդտը և ուրիշ ֆրանկֆուրտցիներ նորովի արժեքավորելով Հեգելին, միաժամանակ փորձում են բանն այնպես ներկայացնել, թե Հեգելի և Մարքսի հայացքների միջև սկզբունքային տարբերություններ չկան։ Նրանք մարքսիզմն առավելապես դիտում են որպես բուրժուական կլասիկ ռացիոնալիզմի, առաջին հերթին Հեգելի ուսմունքի ուղղակի շարունակություն։ Մի կողմից աշխատում են Մարքսին բացատրել Հեգելի դիրքերից, ժխտել Մարքսի ծառայությունները, աշքաթող անել, որ Մարքսը ստեղծել է միանգամայն նոր, Հեգելի փիլիսոփայական ուսմունքից որակապես տարբեր փիլիսոփայություն։ Մյուս կողմից այնքան են բարձր գնահատում հասարակության վերաբերյալ Հեգելի հայացքները, որ փաստորեն դրանք հավասարեցնում են Մարքսի սոցիալական տեսությանը։ Թ. Ադորնոն միաժամանակ ձգտում է համոզել, թե Մարքսի մոտ փիլիսոփայության առարկան վերաբերում է միայն հասարակությանը, հասարակական կեցությանը։ Նա ասում է, որ Էնգելսն իր բնության դիալեկտիկայով ընդլայնեց մարքսիստական փիլիսոփայության ոլորտը, բայց այդ ընդլայնումը չէր բխում անհրաժեշտությունից, թելադրված չէր առարկայի ներքին տրամաբանությամբ, հետևապես խորթ էր մարքսիզմի ոգուն։ Էնգելսյան բնության դիալեկտիկան փոխեց մարքսյան դիալեկտիկայի սկզբնական բնույթը։ Դրա հետևանքը եղավ, իբր, մարքսիզմի «նատուրալիզացիան», «ապապատմականացումը», «ապաինտեգրացումը», նրա հեղափոխական բնույթի կորուստը։

Ինչպես տեսնում ենք, «ֆրանկֆուրտյան դպրոցը» մարքսիստական փիլիսոփայության առարկան ձգտում է երկճեղքել հենց վկայակոչելով Մարքսին ու Էնգելսին, դիալեկտիկայի նրանց ըմբռնումը աշխատում է հակադրել բնության դիալեկտիկայի ըմբռնմանը։

Ինչ խոսք, իրական փաստերը հեշտությամբ են ժխտում «ֆրանկֆուրտյան դպրոցի» ոչ ծանրակշիռ թեզերը։ Որպես դրա ապացույց հենց կարելի է վկայակոչել «Անտի—Դյուրինգի» ստեղծման պատմությունը, նրա բովանդակությունը։

Ինչպես վկայում է Էնգելսի հետ Մարքսի նամակագրությունը, վերջինս շատ բարձր է գնահատել բնության դիալեկտիկայի վերաբերյալ Էնգելսի աշխատությունները, նշելով, որ դրանք չափազանց անհրաժեշտ են պրոլետարական կուսակցության պայքարի տեսակետից։ «Անտի-Դյուրինգ» գրքի առաջաբանում Էնգելսը նշել է. «Հարևանցիորեն նկատեմ, որ քանի որ այս աշխատության մեջ շարադրված աշխարհայացքն իր ամենազգալի մասով հիմնավորվել և զարգացվել է Մարքսի կողմից, և միայն շատ չնչին չափով իմ կողմից, ուստի ինքնըստինքյան հասկանալի է, որ իմ այս աշխատությունը չէր կարող առանց նրա գիտության երևան գալ։ Տպագրության հանձնելուց առաջ ամբողջ ձեռագիրը նրան կարդացել եմ, իսկ քաղաքատնտեսության մասին խոսող բաժնի 10-րդ գլուխը («Քննական պատմությունից») Մարքսն է գրել»[1]։

«Ֆրանկֆուրտյան դպրոցի» փիլիսոփայական գլխավոր թեզի բովանդակությունը հետևյալն է. մենք ի վիճակի ենք ըմբռնելու միայն մեր սեփական գործողությունները։ Միայն մարդն է, որ ընդունակ է աշխատանքի, նա է, որ փոխում է բնությունը, բացատրում այն, այլ խոսքով, միայն մարդն է, որ դիալեկտիկորեն ակտիվ է։ Այլ խոսքով, գոյություն ունի միայն սոցիալական դիալեկտիկա, ինչ վերաբերում է բնությանը, ապա նրանում դիալեկտիկայի գոյության մասին մենք ոչինչ չգիտենք։

Բայց «ֆրանկֆուրտյան դպրոցի» նման ագնոստիցիզմը, որը չափից դուրս իմպերատիվ է, չի կարող ամրապնդվել համոզիչ փաստարկներով։ Այս դեպքում ամենից առաջ հարց է ծագում. ինչպե՞ս կարող է մարդկային դիալեկտի-

1 Ֆրիդրիխ Էնգելս, Անտի-Դյուրինգ, Երևան, Հայպետհրատ, 1952, էջ 10։

կական պրակտիկան ազդեցություն գործել բնության վրա, եթե վերջինիս մեջ գործում են միանգամայն ուրիշ, ոչ դիալեկտիկական օրենքներ։ Ուրեմն, եթե «ֆրանկֆուրտյան դպրոցի» ներկայացուցիչները հարցականի տակ են դնում բնության դիալեկտիկայի գոյությունը, այն դեպքում պետք է ընդունեն նաև, որ գոյություն չունի սոցիալական դիալեկտիկա, իսկ եթե ընդունում են սոցիալական դիալեկտիկայի ռեալականությունը, ապա պետք է ընդունեն նաև բնության դիալեկտիկայի գոյությունը, այսինքն՝ ճանաչեն դիալեկտիկայի օրենքների համընդհանուր, համապարփակ բնույթը, քանի որ բնությունը և մարդկային հասարակությունը մի ընդհանրություն են, վերջինս նախորդի երկարատև զարգացման արդյունքն է, նրա ֆունկցիան։

Քանի որ «ֆրանկֆուրտյան դպրոցը» ամեն կերպ ձգտում է հետևողական երևալ, ապա պետք է հետևողական լինի նաև իր ագնոստիցիզմի մեջ։ Ենթադրենք, թե մեզանից դուրս գոյություն ունեցող բնության մասին մենք իսկապես ոչինչ չգիտենք։ Բայց այստեղ նույնպես երևույթներին մոտենալու միատեսակ չափ պետք է ունենալ։ Իսկ եթե նման հետևողականությամբ մոտենանք, ապա պարզ կլինի, որ մարդու սեփական մարմինը իր գիտակցության համար ոչ այլ ինչ է, քան ինչ-որ արտաքին, բնական միջավայր։ Հետևապես, ըստ «ֆրանկֆուրտյան դպրոցի» տրամաբանության, մենք այդ արտաքին միջավայրի մասին որևէ բան իմանալ չենք կարող, որովհետև «ես»-ի գիտակցության նկատմամբ «ես»-ի մարմինը նույնպես արտաքին է, հետևապես՝ անիմանալի։ Բայց չէ՞ որ նման եզրակացությունն առնվազն անհեթեթություն է, եթե աչքի առաջ ունենանք ժամանակակից բժշկության, կենսաբանության, ֆիզիոլոգիայի, մարդաբանության, մարդկային մարմինը հետազոտող ուրիշ այլ գիտությունների նվաճումները։

«Ֆրանկֆուրտյան դպրոցի» առանձին ներկայացուցիչներ չեն թաքցնում, թե իրենք նպատակ ունեն «վերջ դնելու» գիտական սոցիալիզմին և այն փոխարինելու մաքուր սուբյեկտիվիզմով։ Ակներև է, որ այստեղ մենք գործ ունենք ոչ թե «փիլիսոփայություն փիլիսոփայության համար» սկզբունքի հետ, այլ դասակարգային որոշակի նպատակասլացություն ունեցող փիլիսոփայության հետ, որը մանրբուրժուական «ձախ» սուբյեկտիվիստական-իդեալիստական դիրքերից գրոհում է սոցիալիստական բանվորական շարժումը։

Այստեղից էլ «քննադատական դպրոցի» ձգտումը՝ սուբյեկտիվիստական պրիզմայով անցկացնել մատերիայի և գիտակցության փոխհարաբերությունը, սեփական մեկնաբանություն տալ մարքս-լենինյան արտացոլման տեսությանը։

Արևմտագերմանական մարքսիստ փիլիսոփա Ի. Շլեյֆշտայնը, անդրադառնալով լենինյան արտացոլման տեսության «ֆրանկֆուրտյան դպրոցի» քննադատ Նեգտի փաստարկումներին, նշում է, որ նա խեղաթյուրում է Լենինի արտացոլման տեսությունը, այն հանգեցնելով ռեալականության մեխանիկական արտացոլմանը։ Վկայակոչելով Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» և «Փիլիսոփայական տետրեր» աշխատությունների մեջ արտացոլման տեսության դիալեկտիկական մեկնաբանությունը, Ի. Շլեյֆշտայնը նշում է, որ արտացոլման տեսության դեմ հարձակումները, վերջին հաշվով, հետապնդում են մի նպատակ՝ բացարձակացնել օբյեկտիվ ռեալականության նկատմամբ անհատի ազատությունն ու ինքնուրույնությունը։ Նման սուբյեկտիվիստական մոտեցումը ժխտվում է այն գիտական պատասխաններով, որոնք տրվում են այսպիսի հարցերին. արդյո՞ք բնությունը գոյություն է ունեցել մինչև մարդը, արդյո՞ք նա մարդուց անկախ գոյություն ունի, մարդու ծագումը արդյո՞ք հանդիսացել է բնական պրոցես, ինչպես ապացուցում է գիտությունը։ Լենինը նման հարցերը սուբյեկտիվ փիլիսոփայության համար բնութագրել է որպես «թունավոր»։ Գիտության նորագույն նվաճումներն ու հասարակական պրակտիկան հաստատեցին այդ հարցերի դրական պատասխանները, դրանով իսկ ցույց տալով բնության և արտացոլման օբյեկտիվ դիալեկտիկան ժխտող տեսակետների անկարողությունը։

«Ֆրանկֆուրտյան դպրոցը» հավակնում է «քննադատորեն» վերամշակել պատմական մատերիալիզմը։ Այս տեսակետից մեծ եռանդ է ցուցաբերում Հաբերմասը իր փիլիսոփայական-սոցիոլոգիական կոնցեպցիայով։ Բայց իրականում Հաբերմասը մարքսիզմ է անվանում իր ստեղծած կամայական հորինվածքը։ Նա խեղաթյուրում է աշխատանքի

մարքսիստական հասկացողությունը, այն փոխարինում այնպիսի ֆորմալ հասկացողությամբ, որի տակ ի նկատի է ունենում ցանկացած հասարակական սիստեմում մարդկանց տեխնիկագործիքային փոխհարաբերությունները։ Նման մոտեցումը, որը վերանում է արտադրահարաբերություններից, Հաբերմասին բերում է դասակարգային պայքարի ժխտմանը։ Հոգեվերլուծության օգնությամբ նրա կողմից զարգացվող դասակարգային համերաշխության ու հաշտության կոնցեպցիան տեսականորեն ոչ մի քննադատության չի դիմանում, իսկ նրա կողմից առաջարկվող պրակտիկ ալտերնատիվը մասամբ մոտ է սոցիալ-դեմոկրատների տրադիցիոն հայացքներին, մասամբ էլ ժամանակակից ռեֆորմիստների տեսակետներին։

«Քննադատական դպրոցի» տեսաբանները աշխատանքի մարքսիստական հասկացողությունը խեղաթյուրում են նաև ուրիշ առիթներով։ Դա հատկապես արվում է այն ժամանակ, երբ հարկ է լինում մարքսիզմը հակադրել լենինիզմին, հակասություններ փնտրել մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունների մեջ։ Նրանք առանձնապես կառչում են այն նոր դրույթներին, որ փոփոխված պատմական նոր պայմաններում առաջ են քաշել Վ. Ի. Լենինը և նրա գաղափարակիցները։

Մարքսիստական-լենինյան ուսմունքի «ֆրանկֆուրտյան դպրոցի» քննադատները չեն ըմբռնում (կամ ձևացնում են, թե չեն ըմբռնում), որ այդ ուսմունքի բնորոշ գծերից մեկը նրա ստեղծագործական բնույթն է, որ լենինիզմը նահանջ կլիներ մարքսիզմից, եթե նա չզարգանար ստեղծագործաբար։ Որպեսզի ցույց տան, թե «սովետական մարքսիզմը» նահանջ է գիտական կոմունիզմի հիմնադիրների գաղափարներից, նրանք կամ խեղաթյուրում են Մարքսի, Էնգելսի, Լենինի ասույթներն ու գաղափարները կամ դոգմատիկ ձևով են մեկնաբանում նրանց առանձին գիտական ձևակերպումները։

Մարքսիզմ-լենինիզմի միասնական ուսմունքը երկճեղքելու, «սովետական մարքսիստներին» Մարքսին հակադրելու փորձերի ողջ անհեթեթությունն ըմբռնելու համար բավական է դիմել մարքսիզմի հիմնադիրների աշխատություններին։

«Գերմանական գաղափարախոսության» մեջ խոսելով «աշխատանքի ոչնչացման» մասին, Մարքսը և Էնգելսը,

անկասկած նկատի են ունեցել ոչ թե աշխատանքի ոչնչացումն ընդհանրապես, այլ բռնադատիչ աշխատանքի ոչնչացումը, այն աշխատանքի, որը պրոլետարիատին վերածում է վարձու ստրուկի։ Նրանք երբեք կոմունիզմը չեն դիտել որպես համընդհանուր անգործության ու ծուլության թագավորություն։ Ավելին, Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ» աշխատության համար 1891 թվականի ապրիլի 20-ին գրած ներածականի մեջ Ֆ. Էնգելսը նշել է, որ կոմունիզմի ժամանակ «հասարակության բոլոր անդամների արդեն գոյություն ունեցող հսկայական արտադրողական ուժերի պլանաչափ օգտագործման և հետագա զարգացման շնորհիվ, բոլորի համար հավասար աշխատանքի պարտադրականությամբ՝ գոյության, կյանքի վայելքներից օգտվելու, կրթություն ստանալու, ֆիզիկական ու հոգևոր բոլոր ընդունակությունները դրսևորելու միջոցները հավասար չափով և ավելի ու ավելի աճող լիակատարությամբ կդրվեն հասարակության բոլոր անդամների տրամադրության տակ»[1]։

«Ֆրանկֆուրտյան դպրոցի» վրա չափազանց ուժեղ է նեոհեգելականության ազդեցությունը։ Բայց ի տարբերություն իմպերիալիստական նեոհեգելականության, «ֆրանկֆուրտյան դպրոցի» նեոհեգելականությունը հանդես է գալիս Հեգելի ուսմունքի շատ ռեակցիոն կողմերի բացասմամբ։

Վերևում արդեն ասվեց, որ «ֆրանկֆուրտյան դպրոցը» փորձում է հակասություններ չտեսնել մարքսյան և հեգելյան դիալեկտիկայի միջև։ Ավելին, մարքսիզմի ուսմունքը ֆրանկֆուրտցիները համարում են հեգելականության ուղղակի և սովորական շարունակություն, ուրիշ ոչինչ։ Մարքսիզմի տեսական մյուս բոլոր աղբյուրները նրանք խնամքով և, իհարկե, որոշակի նպատակով, լռության են մատնում։ Այսպես վարվելով, «ֆրանկֆուրտյան դպրոցի» ներկայացուցիչները մարքսիստական ուսմունքի տարրերի զգալի մասը վերագրում են ժամանակակից ձախ հեգելականությանը։ Իսկ մարքսիստական տեսության այն բաժինները, որոնք «ֆրանկֆուրտյան դպրոցը» չի մտցնում մարքսիզմի իր մեկնաբան-

---

1 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 1-ին, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1972, էջ 196։

ման մեջ, մերժում է որպես «մարքսիզմին խորթ էնգելսյան կամ լենինյան տիպի լրացումներ»։

Հենց նման «պարզաջրած» մարքսիզմն է, որ մասնակիորեն ներառվում է «ֆրանկֆուրտյան դպրոցի» «քննադատական տեսության» մեջ։ Այդ դպրոցի ներկայացուցիչներն իրենց աշխատություններում լայնորեն օգտվում են մարքսիստական քաղաքատնտեսության այն բաժիններից, որոնք վերաբերում են դրամի շրջապտույտին և ապրանքների բաշխման պրոցեսին։ Ինչ վերաբերում է մարքսիստական քաղաքատնտեսության բաժիններին, որոնք նվիրված են արտադրության պրոցեսին, ապա դրանք լիովին աչքաթող են արված «ֆրանկֆուրտյան դպրոցի» ներկայացուցիչների աշխատություններում։

Դա հատկապես պարզ երևում է արտադրողական ուժերի և արտադրահարաբերությունների փոխհարաբերության մասին ֆրանկֆուրտցիների հայացքներից։

«Քննադատական տեսությունը» արտադրողական ուժերի և արտադրահարաբերությունների դիալեկտիկան փոխարինում է բնության հետ մարդու մեխանիկական փոխներգործությամբ։ Հենց այս կետում ակնհայտորեն դրսևորվում է հասարակական երևույթների վերլուծության պատմամատերիալիստական մեթոդից նրանց հրաժարումը, որն անխուսափելիորեն տանում է դեպի պրոլետարիատի պատմական դերի ժխտում։ Ադորնոյի և Հորկհեյմերի տեսակետով, ինչպես կապիտալիզմի, այնպես էլ սոցիալիզմի ժամանակ մարդիկ հպատակված, ստրկացված են սոցիալական կյանքից ծնված հասարակական օրենքներին։ Իրերի այսպիսի վիճակը, նրանց կարծիքով, կանխորոշված է արտադրողական ուժերով, իսկ արտադրական հարաբերություններն այս դեպքում էական դեր չեն խաղում։ Նրանց մշակած «հեղափոխական վերափոխումների» բացարձակորեն ուտոպիստական ծրագրում իսկական հեղափոխությունը փոխարինված է զուտ տեսական քննադատությամբ։ Որքանով որ նման «պրակտիկան», որի վրա նրանք հենվում են, չի տալիս իրենց տեսությունը հիմնավորող արդյունքներ, ուստի նրանց մոտ առաջանում է հիասթափություն, որն անխուսափելիորեն առաջնորդում է դեպի կրոն։

«Ֆրանկֆուրտցիների» սոցիալական հայացքների հիմնական թեզն ազդարարում է. ներկա ժամանակաշրջանի գլխավոր կոնֆլիկտը անհատի ու հասարակության միջև եղած կոնֆլիկտն է՝ անկախ այդ հասարակության սոցիալական կառուցվածքից, անհատի և պետության միջև հակասությունն է՝ անկախ սոցիալական կարգից։ Նրանց մոտ ցանկացած հեղինակությունը և ցանկացած իշխանությունը, անկախ նրա դասակարգային բովանդակությունից, ինդեն տիֆիկացված է անհատի ճնշման հետ։ Նրանք ատելությամբ ու վճռականորեն ժխտում են շրջապատող սոցիալական անհավասարության, շահագործման և անարդարության սիստեմը, բունտ են բարձրացնում իմպերիալիզմի գաղափարախոսության, նրա ագրեսիվ քաղաքականության, նրա փտած բարոյականության դեմ, պահանջում են մասնավոր սեփականության ոչնչացում, բռնի միջոցներով բուրժուական պետության ավերում, բայց նրանք անկարող են ցույց տալու, թե դրանից հետո ինչպիսի նոր կարգեր պետք է ստեղծվեն և դրանք ինչ սոցիալական բովանդակություն պետք է ունենան։

Անձի անսահմանափակ ազատություն, հասարակական ինստիտուտներից նրա լիակատար անկախություն են պահանջում ոչ միայն ֆրանկֆուրտցիները, այլև, ընդհանրապես, բոլոր «ձախ» ռադիկալները։ Ֆրանկֆուրտցիների կարևոր թեզերից մեկն էլ այն է, որ, ըստ նրանց, ո՛չ հեգելականությունը և ո՛չ էլ մարքսիզմը չեն կարողացել լուծել տիրապետման և ազատության պրոբլեմները։ Ուստի նրանք առաջ են քաշում տիրապետման և ազատության իրենց «նոր» տեսությունը, որի հիմնական դրույթները ֆրանկֆուրտցի Մարկուզեն շարադրել է «Բնազդի կառուցվածքը և հասարակությունը» գրքում։ Այդ տեսությունը, որի հիմքում ընկած է Ֆրեյդի ուսմունքը, տիրապետության առաջացմանը տալիս է զուտ բիոլոգիական բացատրություն, պատմական մատերիալիզմը փորձում է «խորացնել» բնազդների կառուցվածքի, այսինքն՝ կենսաբանության տեսակետից։ Դա դիալեկտիկայի հիմնական դրույթները ռևիզիայի ենթարկելու փորձ է, որը քաղաքականության մեջ անխուսափելիորեն տանում է մանրբուրժուական ռադիկալիզմի դիրքերը։

Հերբերտ Մարկուզեն գտնում է, որ զարգացման նախնական աստիճաններում մարդն օժտված է եղել մեծ ազատությամբ կամ, ինչպես արտահայտվում է փիլիսոփան՝ «սուբյեկտը ավտոնոմ էր» (այս տեսակետը պաշտպանում է նաև Ժան Պոլ Սարտրը)։ Մարդկային հասարակության զարգացման համեմատ փոխվել են անհատի ազատության աստիճանը, բովանդակությունը, նրա բնութագրություններն ու պարամետրերը։

Անհատի օտարումը անասելի չափեր ընդունեց հատկապես «ինդուստրիալ հասարակության» մեջ, որտեղ հաստատվել է տեխնիկայի լիակատար տիրապետությունը։ Այդ հասարակությունը խափանել է մարդկային պահանջմունքների և ընդունակությունների ազատ զարգացումը, անհատին ենթարկել «անմարդկային հոգեկան մանիպուլյացիայի և կորուպցիայի»։ Այդտեղ տիրում է շահագործման ու գոփելու ոգին, «Ոչ ոքի մի վստահիր, հույս դիր միայն սեփական ուժերիդ վրա» օրենքը, որն ամեն քայլափոխի քողարկվում է երեսպաշտության, արտաքին բարեկամեցողության, կեղծ բարեպաշտության դիմակով։ Անհատը զրկվել է իդեալներից ու այլանդակվել, ավերվել է նրա հոգեկան աշխարհը, այն անճանաչելիորեն ենթարկվել է մեխանիկական դետերմինացիայի։ Ահա թե ինչու ավանդական հասկացողություններով այլևս անհնարին է բնութագրել «ազատություն» հասկացությունը։

Ինչպես Մարկուզեն, Ֆոմինը նույնպես գտնում է, որ մեր օրերի «ինդուստրիալ հասարակության» մեջ անհատի օտարումը անասելի չափեր է ընդունել և դրա պատճառը հենց մարդկային առաջադիմությունն է։ Ի տարբերություն Մարկուզեի, Ֆոմինը իրավացիորեն գտնում է, որ մեր ժամանակներում անհատի օտարումը զուտ դասակարգային բնույթ ունի, որ այն անմիջականորեն կապված է «ինդուստրիալ հասարակության» սոցիալական կառուցվածքի հետ։ Նա ուղղակի գրում է, որ «օտարումը հիմնականում տարածվում է այն մարդկանց վրա, որոնք կանգնած են սոցիալական սանդուղքի ցածր աստիճաններին»[1]։ Ճշմարտացի

[1] Տե՛ս «МЭ и МО», № 11, 1969, էջ 43։

համարելով կապիտալիստական հասարակարգում բանվոր դասակարգի օտարման մասին Կ. Մարքսի ուսմունքը, Ֆոմինը դրա հետ միասին մի շարք դրույթներ է զարգացնում, որոնք նրան ընդհուպ մոտեցնում են Հերբերտ Մարկուզեին։

Գոյության համար մղվող տանջալից պայքարում մշտապես ենթարկվելով ոչ միայն տեխնոլոգիական քաղաքակրթության վրա խարսխված շահագործման էքսպանսիվ ապարատի ճնշման, այլև բարոյական ահավոր խեղման, մարդ-անհատը սուր հակասության մեջ է մտնում կյանքի ողջ կացութաձևի հետ։ Այդ ամենը մեծապես ազդում է նրա տրամադրության և աշխարհազգացողության վրա։ Անհատն իրեն հաշիվ է տալիս, որ միայնակ է շրջապատող հարաբերությունների մեջ։ Նա ըմբռնում է, որ ինքը զրկված է կյանքի վեհ նպատակներից, հոգևոր կուլտուրայից, մարդկային հարաբերությունների անկեղծությունից, փոխադարձ վստահությունից և այլն։ Կոլեկտիվ խոր կապերի բացակայությունը մարդուն մղում է սեփական գոյության փոքրիկ վանդակը, նրա մոտ համոզմունք է մշակվում, թե ընդհանրապես մարդկային գոյությունը դատարկ բան է։

Մարկուզեն, Ֆոմինը և մյուսները գտնում են, որ մարդ-անհատն ամեն գնով պետք է ազատություն փնտրի։ Նոր ըմբռնած ազատությունը պետք է կարողանա սուբյեկտին վեր բարձրացնել գոյություն ունեցող հասարակական այն բոլոր ուժերից, որոնք հակադրված են նրան։ Մարդու ազատագրությունը, ասում են նրանք, ամենից առաջ կախված է նրա կողմից իր սեփական ստրկական վիճակն ըմբռնելու, գիտակցելու ընդունակությունից։

Այստեղ Մարկուզեն և մյուսները հաշվի չեն առնում այն հանգամանքը, որ չնայած մարդիկ են ստեղծում իրենց պատմությունը, բայց այն ստեղծում են իրենց կամքից ու գիտակցությունից անկախ գործող որոշակի օրենքների պայմաններում։ Ազատության գիտական ըմբռնումը ենթադրում է ոչ միայն միջոցների ընտրության ազատություն, այլև նպատակին հասնելու համար գործելու որոշակի ունակություն։

Կրելով Զիգմունդ Ֆրեյդի ակնհայտ ազդեցությունը, ֆրանկֆուրտցիների մի մասը գտնում է, որ աշխատանքը պարտականությունից հաճույքի վերածվելու, անհատի հաճույքի բնազդին լիակատար բավարարություն տալու համար ամենից առաջ անհրաժեշտ է մարդուն ազատագրել մեքենաների և իրերի ստրկությունից։ Իսկ դրան կարելի է հասնել միայն այն դեպքում, եթե աշխատանքը չենթարկվի վարչական միջամտության (այստեղ նկատելի է Ֆուրիեի ուսմունքի աղոտ արտացոլումը)։

Անհատի ազատության ամենամեծ բռնադատիչը աշխատանքն է, ասում է «ֆրանկֆուրտյան դպրոցի» տեսաբաններից մեկը՝ Հաբերմասը։ Իսկ Մարկուզեն անհատի ստրկության աղբյուր է համարում մարդկային օբյեկտիվորեն անհրաժեշտ գործունեությունը, այսինքն՝ նորից աշխատանքը։ «Անհրաժեշտության բնագավառը կամ աշխատանքը հենց ազատության բնագավառ է»[1],— գրում է նա։

Այստեղ ակնհայտ է, որ «ֆրանկֆուրտյան դպրոցը» ուղղակի հակադրվում է աշխատանքի ոչ միայն մարքսիստական հասարակագիտական հասկացությանը, այլև ընդհանրապես գիտական (առաջին հերթին՝ բիոլոգիական) բնորոշմանը։

Ինչպես հայտնի է, մարդը սկսվում է հենց աշխատանքից։ Ոչ— մարդը վերջանում է այն ժամանակ, երբ նրա էներգիայի ծախսումը սկսում է բնութագրվել որպես աշխատանք։ Այլ խոսքով, հենց աշխատանքն է, որ ոչ— մարդուն դարձրել է մարդ։ Բայց աշխատանքի դերը չի վերջանում ոչ— մարդը մարդու վերածելու պրոցեսով։ Աշխատանքը նաև մարդկանց շփման, նրանց փոխադարձ հաղորդակցության նախադրյալ է։

Եթե աշխատանքն անհատի ստրկացման աղբյուր է, ապա արդյո՞ք մարդու ազատության համար «ձախ» ռադիկալիզմի պայքարն անիմաստ չէ։ Չէ՞ որ աշխատանքը գոյություն կունենա այնքան ժամանակ, որքան կգոյատևի մարդկությունը։ Ընթերցողի համար անհասկանալի է մնում, թե ինչպես է, որ անձի ազատությունը որպես վերջնական նպատակ դնող Մարկուզեն ելնում է այն նախասահմանումից, թե «ժամանակակից հասարակության մեջ ոչ ոք ազատ չէ» և որ ընդհանրապես մարդը չի կարող ազատ լինել։

Նշելով «ֆրանկֆուրտյան դպրոցի», մասնավորապես Մարկուզեի մոտ եղած այս անլուծելի հակասությունը, լրագրողներից մեկը նրան հարցրել է.

— Դուք գտնո՞ւմ եք, որ աշխատանքը և ընդհանրապես ամեն մի ջանք ռեպրեսիվ է։

Պատասխան— Ամեն ինչ կախված է դրանց (աշխատանքի և ջանքի—Հ. Ս.) օբյեկտից։ Ջանքը (ճիգը) ինքնին ռեպրեսիվ չէ։ Ջանքը, օրինակ, ռեպրեսիվ չէ արվեստի մեջ, ընդհանրապես ամեն մի ստեղծագործական գործունեության մեջ, առանձնապես սիրո մեջ...

Հարց—Արդյոք դուք ձեզ համարո՞ւմ եք ազատ մարդ։

Պատասխան—Ազա՞տ եմ արդյոք ես։ Իմ կարծիքով այս հասարակության մեջ ոչ ոք ազատ չէ[1]։

Անհատի «իսկական» ազատությունն իրականացնելու միակ պայմանը «ձախ» ռադիկալիստները և, ամենից առաջ, ուլտրաձախ անարխիստական ուժերը (որոնց մեծ մասի հոգեբանությունը ինդիվիդուալիստական է) տեսնում են քաղաքական կազմակերպություններից և ինստիտուտներից վճռականապես հեռանալու, ընդհանրապես բարձր կազմակերպվածությունից հրաժարվելու մեջ։

Ֆրանկֆուրտցիները մերժում են հասարակական կառավարման կենտրոնների և հեղինակությունների անհրաժեշտությունը, հայտարարում են, թե «ամեն մի իշխանություն տոտալիտարիզմ և ավտորիտարիզմ է», ամեն մի ղեկավարություն և կարգապահություն «ռեպրեսիա է», անհատի ճնշում, «մանիպուլյացիա»։ Ամերիկյան «նոր ձախերը» հայտարարում են, որ իրենք ի վիճակի են տապալելու հասարակական ամեն մի ռեգլամենտացիա վերացնելու անհատի վարքի նկատմամբ կոլեկտիվի վերահսկողությունը, հաստատելու մարդկային հարաբերություններ առանց հրամանների ու կազմակերպությունների։ Իսկ նրանց

[1] «Литературная газета», 17 декабря 1969 г.

[1] «Литературная газета», 17 декабря 1969 г.

ֆրանսիական համախոհները քաղաքական ամեն մի կազմակերպություն դիտում են որպես մարդկային ունակությունների և հնարավորությունների նկատմամբ վստահության բացակայություն։ Ըստ որում ազատություն ասելով նրանք հասկանում են ցանկացած արարքների թույլատրելիություն։ 1969 թվականին անգլիական երիտասարդության մի մասը բողոքի միտինգներում պահանջում էր «լեգալացնել նարկոտիկների վաճառքը, որպես անհատի ազատության պայման»։

«Անձի ազատության» ուլտրաձախ քարոզիչներն ամեն կերպ աշխատում են սահմանազատվել դոգմատիզմից, դոկտրինյորությունից, աղանդավորությունից։ Նրանց պատկերացմամբ գաղափարական ամեն մի սիստեմ, ամեն մի գաղափարախոսություն դոգմա է, ամեն մի սկզբունքայնություն՝ դոկտրինյորություն, ամեն մի կազմակերպություն՝ աղանդ։

Մերժելով ղեկավարման ու կարգապահության ամեն մի ձև, ուլտրաձախ «հեղափոխականները» դրանով իսկ բուրժուազիային անգնահատելի ծառայություն են մատուցում, նրան հնարավորություն են ընձեռում հեղափոխականներին առանձին-առանձին ջախջախելու համար։

Հասարակական և պետական ինստիտուտներին չենթարկվելու կոչ անելով, իրենք՝ «նոր ձախերի» պարագլուխները, «ֆրանկֆուրտյան դպրոցի» տեսաբանները և ամեն գույնի «ռադիկալները» բնավ էլ մտադիր չեն կապերը խզելու պետական-մոնոպոլիստական կապիտալիզմից, բուրժուական պետության օրգանիզմից։ Ավելին, նրանցից շատ շատերը, զբաղեցնելով պետական բարձր պաշտոններ, կոչված են ամրապնդելու այդ օրգանիզմը։

Երբ 1969 թվականի ամռանը Հռոմի «Տեատրո էլիզոէ» դահլիճում Մարկուզեն հրապարակային դասախոսություն էր կարդում և շարադրում ազատության իր ըմբռնումները, ունկնդիրներից մեկը, ընդհատելով նրան, բարձրաձայն հարցրեց. «Հերբերտ, ինչի՞ համար է քեզ վարձատրում կենտրոնական հետախուզական վարչությունը»[1]։

[1] «Литературная газета», 17 декабря 1969 г.

«Ֆրանկֆուրտյան դպրոցը» և ընդհանրապես բոլոր «ձախ» ռադիկալները առանձին հետևողականությամբ ու կրքոտությամբ «լիակատար ազատություն» են պահանջում հոգևոր ստեղծագործության բնագավառում։

Կուլտուրայի, արվեստի, գրականության պրոբլեմները «ֆրանկֆուրտյան դպրոցի» ուշադրության կենտրոնում են գտնվում այդ դպրոցի կազմավորումից ի վեր։ Վերջին տարիներին ֆրանկֆուրտցիների մոտ մի ակնհայտ ձգտում է նկատվում՝ «Մարքսին ներդաշնակորեն միավորել Զիգմունդ Ֆրեյդի հետ»։ Նրանք կառչում են այն ելակետային թեզից, թե մարդկային կուլտուրան մինչև այժմ զարգացել է մարդ-անհատի և հասարակության միջև եղած հակասությունների, անհատի բնազդների մշտական ճնշման պայմաններում։ Այնուհետև այս դրույթը միավորում են Ֆրեյդի այն թեզի հետ, թե ինչպես տիրապետությունը և ազատությունը, այնպես էլ կուլտուրան բիոլոգիական երևույթների, ամենից առաջ մարդկային բնազդների դրսևորման արդյունք են։

Կուլտուրայի պրոբլեմների մշակման բնագավառում ֆրանկֆուրտցիների ջանքերն իրենց առավել ցայտուն արտահայտությունն են գտել Հերբերտ Մարկուզեի «Էրոսը և քաղաքակրթությունը» գրքում (1955)։ Չնայած գրքի առաջաբանում հեղինակը նշում է, թե աշխատությունը գրված է մարքսիզմի դիրքերից, բայց այնտեղ ակնարկ անգամ չկա մարքսիզմի մասին։ Ընդհակառակն, այստեղ հետագա զարգացում է ստացել կուլտուրայի ֆրեյդիստական տեսությունը (փիլիսոփան չունի սեփական ավարտուն էսթետիկական տեսություն)։

Մարկուզեի համար կուլտուրան «էթիկական, էսթետիկական և մտավոր արժեքների կոմպլեքս է», մարդկային բնազդների արդյունք, կամ, ինչպես ինքն է արտահայտվում՝ «բընազդի ոլորտի թագավորություն»։ Միայն «բնազդների մարդն է», որ ազատ է ապրում։ Արվեստը, ստեղծագործությունը, սեքը, libido-ն ազատ ապրելու արդյունք են։ Ըստ որում դրանք իրարից բաժան-բաժան չեն, այլ հանդես են գալիս իբրև մի ամբողջություն։ Իսկ դրանց ի մի է բերում «ինչ-որ մի բան» (և դա ամենագլխավորն է)։ Այդ «ինչ-որ մի բանը» էրոսն է, այսինքն՝ հավերժ ստեղծագործական սկիզբը, որը

գտնվում է հասարակական հարաբերությունների «այն կողմում» և արտահայտում է մարդու նախաստեղծ, նախագոյության բիոլոգիական էությունը։

Մարկուզեի պատկերացմամբ ստեղծագործական ելակետի հիմքում ընկած է մարդկային մաքուր հաճույքի էրոտիկական ձգտումը։ Էրոսը անխզելիորեն կապված, միաձուլված է «հաճույքի սկզբունքին»։ «Բնազդների մարդը» տարերայնորեն վայելքի է ձգտում և այդ ձգտման մեջ իրացնում է իր կենսական պոտենցիալը։ Էրոսի բնազդի բավարարումն էլ հենց ամեն մի քաղաքակրթության աղբյուր է և մարդկային գոյության «նպատակ»։

Մարկուզեն լիովին համերաշխ է Նիցշեի այն բնորոշմանը, թե կուլտուրան արվեստի տիրապետությունն է կյանքի նկատմամբ, թե արվեստը ազատության բնագավառ է և ընդհանուր ոչինչ չունի իրականության հետ։ «Էսթետիկայի թագավորությունը,— գրում է նա,— ըստ էության անիրականի բնագավառն է։ Իրականության մեջ ներգործուն չլինելով, արվեստը պահպան է կանգնում ազատությանը, ընդդեմ ռեալականության սկզբունքի»[1]։ Այս տեսակետի համաձայն արվեստը գործում է օտարման մեթոդով, որը նշանակում է, թե արվեստը մարդուն ծանոթ սովորական իրերն ու հարաբերությունները միտումով դեֆորմացիայի է ենթարկում, դարձնում անսովոր ու անսպասելի և հենց այդ պատճառով էլ հափշտակում, կլանում է մարդկային երևակայությունը։

Ասելով, թե արվեստն ազատության բնագավառ է, Մարկուզեն դրանով չի բավարարվում։ Էլ ավելի հեռու գնալով, նա ասում է, թե արվեստը կարող է լիովին վերանալ նույնիսկ գեղեցիկից, գեղեցկությունից և ամբողջովին դառնալ «ինքնուրույն», «ազատ»։ Սա ոչ այլ ինչ է, քան «արվեստը արվեստի համար» վաղուց բարձրացված և իրականության կողմից վաղուց մերժված լոզունգի այլափոխություն, լոզունգ, որը հասարակության «ընտրյալ դասերին» ամեն րոպե հիշեցնում է, որ արվեստը պետք է «անաղարտ պահել», այսինքն՝ այն հեռու պահել ժողովրդական մասսաներից[1]։

Իրականության և արվեստի փոխհարաբերության մասին խոսելիս «ֆրանկֆուրտյան դպրոցի» տեսաբանները անխուսափելիորեն առնչվում են արտացոլման տեսություններին։

Ինչպես ասվեց, Մարկուզեն գտնում է, որ արվեստը դեֆորմացիայի ենթարկելով մարդուն ծանոթ սովորական իրերն ու հարաբերությունները, դրանք դարձնում է անսովոր ու անսպասելի և հենց այդ պատճառով էլ տիրապետում է մարդկային երևակայությանը։

Ինչ խոսք, որ «անսպասելիության էֆեկտը» հատուկ է մարդկային ընկալմանը։ Դա հատկապես այն ժամանակ է տեղի ունենում, երբ «ես»-ը հանդիպում է իրական երևույթների սովորական ընթացքի ստերեոտիպ խախտմանը։ Բայց արդյո՞ք արվեստը կարող է իրեն սահմանափակել միայն «անսպասելիության էֆեկտով»։ Այդ դեպքում արդյո՞ք արվեստը չի քայքայի ու ոչնչացնի հենց սեփական գեղարվեստական տրամաբանությունը։ Նման երևակայական պայմաններում, ինչ խոսք, արվեստն անխուսափելիորեն կհանգի անհեթեթության։ Այսպես կոչված «աբսուրդ արվեստի» մեջ նույնիսկ դժվար չէ ամեն քայլափոխի գտնել արվեստի՝ որպես անիրական բնագավառի ժխտման ամենատարբեր, ամենաբազմապիսի օրինակները[2]։

---

[1] «Литературная газета», 17 декабря 1969 г.

[1] Բնորոշ է, որ Նիցշեից և Վանդելբանդից սկսած իդեալիստ փիլիսոփաները համառորեն անցկացնում են ընտրյալների հոգևոր կուլտուրան մասսաներից «փրկելու» թեզը։ Այս թեզը, որը բուրժուական ինտելիգենցիայի էլիտար տրամադրությունների արտահայտությունն է, այս կամ այն չափով տեղ է գտել 20-րդ դարի բազմաթիվ կոնցեպցիաներում։

[2] Բնագիտությունն ապացուցում է, որ ինչպես մարդկային գիտակցությունը, այնպես էլ զգայնությունները նյութական մատերիայի՝ ուղեղի ֆունկցիան է, դրանք սերտորեն կապված են ուղեղում տեղի ունեցող պրոցեսների հետ։ Այլ բան է ասում սուբյեկտիվ իդեալիզմը, այդ թվում մախիզմը, որը հանգել էր այն անհեթեթ եզրակացության, որ ոչ թե ուղեղն է ծնում միտքը, այլ ընդհակառակն, այսինքն, որ ոչ նյութականը ծնունդ է տալիս նյութական մարմնին։ Գիտության և մատերիայի կապի դրժվարագույն պրոբլեմը մետաֆիզիկական դիրքերից փորձել են լուծել նաև մինչմարքսյան մատերիալիստները, այդ թվում մեխանիստական ու վուլգար մատերիալիստները։ Ֆոգտը, Բյուխները, Մոլեշոտը գտնում էին, թե ուղեղի կողմից մտքի արտադրությունը չափազանց հասարակ պրոցես է, թե ուղեղը միտք, գիտակցություն է արտադրում այնպես, ինչպես, ասենք,

Կրկնելով Նիցշեին, թե արվեստը հեղափոխական է իր ողջ էությամբ, ֆրանկֆուրտցիները բացում են փակագծերը, ասելով, թե արվեստի հեղափոխականությունը հենց այն է, որ նա անխուսափելիորեն (և ընդմիշտ) կոնֆլիկտի մեջ է գտնվում պատմության հետ։ «Արվեստը կանգնած է պատմության դեմ հանդիման,— ասում է Մարկուզեն,—իսկ ազատությունը ոչ այլ ինչ է, քան ճնշման պատմություն։ Ի հակադրություն պատմության, արվեստը իրականությունը ենթարկում է ուրիշ օրենքների՝ ձևի օրենքներին, որոնք ստեղծում են պատմական ռեալականությունից տարբեր ռեալականություն»։

«Ֆրանկֆուրտյան դպրոցի» համար պատմությունը, քաղաքակրթությունը կուլտուրայի անտիպոդն են։ Քաղաքակրթությունը և մարդկային պատմությունը աշխատանքային պրոցեսի արդյունք են։ Հասարակական անհրաժեշտություն, որոնք խանգարում են անհատի դրական բնազդների, առաջին հերթին հաճույքի բնազդի իրականացմանը։

Ֆրանկֆուրտցիները, և առաջին հերթին Հերբերտ Մարկուզեն, լիովին համերաշխվում են Շպենգլերի այն տեսակետի

լյարդը՝ մաղձ։ Մերկացնելով մախիզմի և վուլգար մատերիալիզմի տեսակետները, Վ. Ի. Լենինը «Մարտերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատության մեջ դրեց ու կոնկրետ լուծեց գիտակցության և մատերիայի կապի մասին եղած բոլոր ըդժվարագույն հարցերը, ստեղծեց իր նշանավոր արտացոլման տեսությունը։ Լենինը ցույց տվեց, որ գիտակցությունը չափազանց բարդ ու բազմաստիճան պրոցեսի արդյունք է, և որ այն հատուկ է միայն բարձր կազմակերպված մատերիային։ Լենինը գտնում է, որ գիտակցությունը, միտքը նման է հայելու մեջ արտացոլված առարկայի պատկերին։ Այդ պատկերը նյութական չէ, մատերիական չէ նաև միտքը, քանի որ այն չի կարող ազդել մեր զգայարանների վրա և առաջ բերել զգայնություն։ Այստեղ խորացնելով իր միտքը, Վ. Ի. Լենինը նշում է, որ արտացոլման հատկություն ունի ուղեղը, ունի գիտակցելու հատկություն։

Լենինը ցույց տվեց, որ հասարակ մատերիայի և մատերիայի բարձրագույն ձևի՝ ուղեղի միջև ընկած է օրգանական մատերիայի առաջացման ու զարգացման հարյուրմիլիոնավոր տարիների պատմությունը, որի ընթացքում մատերիան զարգացման ցածր աստիճանից որակական թռիչքների միջոցով հասել է գլխուղեղի աստիճանի, որն ընդունակ է մտքեր ծնելու։

հետ, թե արդի ժամանակաշրջանի մղձավանջը քաղաքակրթությունից արվեստի կախվածության հետևանք է։ Իսկ քանի որ քաղաքակրթությունը հակաբանական երևույթ է, քանի որ քաղաքակրթությունը հակապա նրանով պայմանավորված արվեստը նույնպես հակապա նրանով պայմանավորված։ Քաղաքակրթված մարդը երբանական է և արատավորված։ Քաղաքակրթված մարդը երբեք ազատ ապրել չի կարող, քանի որ ամեն քայլափոխի «բանականության սկզբունքը» նա փոխարինում է «օգուտի սկզբունքով»։ Հենց այստեղ է գտնվում քաղաքակրթված մարդու հավերժ դրամայի աղբյուրը,— ասում է Մարկուզեն։

Մարկուզեն շատ է գրում այն մասին, թե իսկական արվեստը բողոք է իրականության դեմ, իրականության ժխտում է։ Ըստ որում այստեղ խոսքը գնում է ոչ միայն կապիտալիստական աշխարհի իրականության, այլև ամեն տեսակ իրականության ժխտման մասին։ Ելնելով այն համոզումից, թե ընդհանրապես հասարակությունը մշտապես ճնշում է անձի բնազդները, թե աշխատանքը անազատության բնագավառ է, հետևապես աշխատանքը արվեստի անտիպոդ է, Մարկուզեն անխուսափելիորեն եզրակացնում է, թե ընդհանրապես ամեն մի հասարակություն, անկախ իր սոցիալ-դասակարգային բնույթից, ճնշում է մարդուն։ Ժամանակակից հասարակությունն անվանելով ռեպրեսիվ, նա համարյա ոչ մի տարբերություն չի տեսնում հասարակական-քաղաքական երկու համաշխարհային սիստեմների միջև։ Ինչ խոսք, այստեղ «մարքսիստ» Մարկուզեն արվեստի սոցիալական ֆունկցիան համարյա զրոյի է հավասարեցնում։ Նա շատ է գրում «մեծ մերժումի» մասին, բայց միաժամանակ ջատագովում է մոդեռնիզմը, որի տեսական հիմնավորումներից մեկը ֆրեյդիզմն է, որն ընդհանրապես ժխում է բուրժուական իրականության դեմ ուղղված ամեն մի ընդվզում։

Արվեստի նկատմամբ Մարկուզեի հայացքները քննադատության չեն դիմանում։ Եթե իսկապես արվեստը ազատության բնագավառ է և, ինչպես նա է ասում, «ապստամբում է պատմության դեմ» (իսկ պատմությունը, ըստ նրա, միշտ էլ ճնշման պատմություն է եղել), ապա ինչո՞ւ այդ ազատ արվեստը ձգտում է «իրեն ենթարկել ռեալականությունը», այսինքն՝ բռնության ակտ է իրականացնում նրա նկատմամբ։ Եթե արվեստը «միշտ դեմ է» պատմությանը, ապա ինչպե՞ս

է պատահել, որ մոդեռնիզմից լիովին չքացել է բողոքը կամ «մեծ մերժումը»։ Այս բոլոր հարցերն անպատասխան են մնում։ Ո՛չ Մարկուզեն, ո՛չ մոդեռնիզմը նվազագույն ցանկություն անգամ չունեն (և անկարող են) պատասխանելու այդ հարցերին։ Դրա փոխարեն նրանք իրենց իրավունք են վերապահում հավակնոտ կեցվածքով հանդես գալու «անապացուցելի ճշմարտությունների» անունից։

Արվեստի, որպես ազատության բնագավառի, վերաբերյալ իր խառնաշփոթ ու անտրամաբանական կոնցեպցիաները հիմնավորելու համար Մարկուզեն դիմում է... մերթ Հեգելին, մերթ Մարքսին։

Սակայն Մարկուզեի կոնցեպցիաները ոչ մի ընդհանուր բան չունեն Հեգելի, առավել ևս՝ մարքսիզմի հետ։ Հասարակության վերնաշենքը և նյութական բազան փոխադարձաբար պայմանավորված են միմյանցով։ Ուստի ստեղծագործական աշխատանքի «բացարձակ ազատություն» փնտրելու, արվեստը սոցիալական հարաբերություններից և արտադրողական ուժերի զարգացման աստիճանից վերացարկելու ամեն մի փորձ բացահայտ հակադիալեկտիկական վոլյունտարիզմ է։

Երբ արվեստի սոցիալական դերը փոխարինվում է libido-ի արտահայտությամբ՝ նրա սոցիալական ֆունկցիան՝ տրանսցենդենտալությամբ (այսինքն՝ ժամանակից ու տարածությունից դուրս, սոցիալական ու դասակարգային հիմքերից ազատ արվեստով), ապա ակնհայտորեն կորսվում են ոչ միայն գիտական մարքսիզմի հիմնական կոորդինատները, այլև խաթարվում են արվեստի հեգելյան ըմբռնումները[1]։

[1] Ճշմարտությունը պահանջում է ասել, որ Մարկուզեի մոտ շատ ուժեղ է այսպես կոչված «քննադատական տեսողությունը», որը նրան օգնում է բուրժուական հասարակարգում տեսնելու անհրապույր ու տհաճ շատ բաներ։ Օրինակ, նա միանգամայն իրավացի է, երբ նկատում է, որ կապիտալիստական շուկան (ճիշտ է, միանգամայն անսպասելի շեղումներով) հավասարապես իր մեջ է առնում արվեստը, հակարվեստը և ոչ արվեստը, միմյանց դեմ պայքարի մեջ գտնվող ամեն տեսակ ոճեր, դպրոցներ, ձևեր, իրենից ներկայացնում է ինքնաբավ մի զետեղարան, «բարենպաստ քաոս», որտեղ չքանում է արվեստի հիմնական մղումը՝ գոյություն ունեցող իրականության դեմ նրա բողոքը։

Այս պայմաններում մարկուզեական «ավարտուն տեսությունը» հանդես է գալիս որպես խառնաշփոթ ու հակասական հասկացությունների հավաքածու։

Այսպիսով, ժամանակակից «ձախ» ռադիկալիզմը որևէ ելք չի տեսնում մարդ-անհատի և հասարակության միջև եղած հակասությունից։ Եվ դա այն պատճառով, որ նա ոչ մի կապ չի տեսնում բնազդի և բանականության, ազատության և անհրաժեշտության, արվեստի և պատմության, աշխատանքի և վայելքի միջև։

Միայն մարքսիզմ-լենինիզմի գիտական ուսմունքն է, որ արմատապես լուծել է անհատի և հասարակության փոխհարաբերության, տիրապետության և ազատության պրոբլեմը։

Վ. Ի. Լենինը նշում էր, որ ազատության ու անհրաժեշտության հարցը չի կարող դրվել ու լուծվել, եթե բացասվի սուբյեկտիվ գործոնի դերը։ Փիլիսոփայական շատ օրենքներ ու կատեգորիաներ գործել են մինչև մարդու երևան գալը, սակայն ազատության անհրաժեշտության միասնության պրոբլեմը հանդես է գալիս միայն մարդկային հասարակության ձևավորման հետ միասին։ Ուստի մարքսիզմը այս հարցի քննարկման ժամանակ դեն է նետում ինչպես վոլյունտարիստական, այնպես էլ ֆատալիստական կոնցեպցիաները, քանի որ կամքի ազատության վոլյունտարիստական ըմբռնումից ծնունդ են առնում ամեն տեսակ սուբյեկտիվիստական հայացքներ, իսկ հասարակության զարգացման ֆատալիստական ըմբռնումը բացառում է սուբյեկտիվ գործոնի դերը պատմության մեջ։

Մարքսիզմի տեսակետով ազատությունը ոչ թե բնական ու հասարակական օրենքներից մարդու անկախ լինելու մեջ է, այլ այդ օրենքների իմացության և դրանք մարդկանց կարիքներին ծառայեցնելու մեջ։ Մարդկանց համատեղ կյանքի բոլոր ձևերը պայմանավորված են բնության նկատմամբ մարդկանց տիրապետության աստիճանով, իրենց գոյության համար նրանց մղած պայքարի բովանդակությամբ։

Ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխությունը, արտադրության հետագա մեքենայացումն ու ավտոմատացումն էլ ավելի են ուժեղացնում բնության նկատմամբ մարդկանց տիրապետությունը։

Մարքսիզմ-լենինիզմը գիտականորեն ապացուցել, իսկ հեղափոխական պրակտիկան հաստատել է, որ ազատություն չի կարող լինել մի աշխարհում, որտեղ թագավորում է քաոսը, որ տիրապետության և ազատության, հասարակության և անհատի կոնֆլիկտի պրոբլեմը լուծվում է ոչ թե մարդկային կազմավորված «բնազդների ստրուկտուրայի» հեղաշրջման շնորհիվ, այլ կապիտալիստական արտադրահարաբերությունները սոցիալիստական հիմունքներով վերափոխելու ճանապարհով։ Խոսելով «բնազդների ստրուկտուրայի» հեղաշրջման անհրաժեշտության մասին, «ֆրանկֆուրտյան դպրոցը», սակայն, մեզ ոչինչ ասել չի կարող, թե ինչպես և ինչ ուժերի օգնությամբ է հնարավոր իրականացնել ենթադրվող հեղաշրջումը։ Կապիտալիստական արտադրահարաբերությունները սոցիալիստականի վերափոխելը կատարվում է միայն դասակարգային պայքարի միջոցով։ Շահագործող դասակարգերի վերացման հետ միասին վերանում է նաև անհատի ճնշումը։ Քաջ հայտնի է, որ մինչև դասակարգերի ու դասակարգային պայքարի առաջանալը չեն եղել հասարակական կազմակերպված ռեպրեսիվ ձևեր, ինչպես որ պատկերացնում են Ֆրեյդը և Մարկուզեն։ Կոմունիստական հասարակարգում անտագոնիզմ չի կարող լինել հասարակության և անհատի միջև։ Ուստի ֆրանկֆուրտցիները միանգամայն զուր են կոչ անում անհատի ազատությունը պաշտպանել մի կողմից պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի ինստանցիաներից, մյուս կողմից պրոլետարական սոցիալիստական կազմակերպվածությունից ու կարգապահությունից։ Կոմունիզմը անհատի համար ստեղծում է մարդկայնորեն ապրելու բոլոր պայմանները։

«Ֆրանկֆուրտյան դպրոցի» տեսություններում մեծ տեղ է հատկացված հեղափոխության պրոբլեմներին։

Ֆրանկֆուրտցիների մոտ հեղափոխությունն այսպես է պատկերվում. սիստեմին հենարան հանդիսացող ուժերի միջև եղած փոխադարձ կապերը թուլանում են, մարդն ազատվում է արտադրության գործակալի (կամ ծառայի) ֆունկցիաներից։ Հասարակության արմատական վերափոխության (կամ ինչպես նրանք են ասում՝ «պայթյունի») նախադրյալն անհատի գիտակցության ընկալունակության համապատասխան փոփոխությունն է։ Դրանից հետևում է, որ նոր տիպի անձնավորության գոյացումը նախապատրաստելու, նրա լինելիությունն ապահովելու համար նախ և առաջ պետք է փոխել գիտակցությունը և նրա ընկալունակությունը։

Այստեղ ֆրանկֆուրտցիների միտքը փակուղի է մտնում։ Նախքան հասարակությունը վերափոխելը, անհրաժեշտ է փոխել գիտակցությունը։ Բայց չէ՞ որ դա անիմաստ զբաղմունք կլիներ, յուրատեսակ սիզիֆյան աշխատանք։ Հեղափոխության նկատմամբ նման տեսակետը պարզապես վերածնում է կապիտալիզմի ավտոմատիկ կրախի մասին գաղափարը և ուրիշ ոչինչ։

Կապիտալիստական սիստեմի «քայքայման» և «տարրալուծման» մասին կանխակալ գաղափարին են ենթարկված նաև մոնոպոլիաների տիրապետության հետագա զարգացման մասին «ֆրանկֆուրտյան դպրոցի» տեսաբանների դատողությունները։ Նրանք գծում են այդ զարգացման հետևյալ պատկերը. որպես մրցակցային պայքարի ուժեղացման անխուսափելի հետևանք աներևակայելի չափերի կհասնի արտադրության ավտոմատացումը։ Դա իր հետ կբերի համընդհանուր գործազրկության սպառնալիք, դրա հետ միաժամանակ՝ ոչ արտադրողական, պարազիտային զբաղմունքների, ինչպես նաև սպասարկման ոլորտի հետագա աճ՝ արտադրության ոլորտից ազատված բանվորական ուժը կլանելու համար. արտադրության պրոցեսում մարդկային կենդանի աշխատանքի կրճատման հետևանքով մեծ անկում կունենա շահույթի նորման. գնալով կուժեղանան հասարակական աճող պահանջմունքների և սոցիալ-տնտեսական սուղ հնարավորությունների միջև եղած հակասությունները. մեծ մասշտաբներով կավելանան նեոգաղութարարական պատերազմների և կաշառված դիկտատորների պահպանման վրա կատարվելիք ծախսերը։

«Ֆրանկֆուրտյան դպրոցի» կարծիքով վերը նշված գործոնները տանում են դեպի բուրժուական հասարակության աստիճանական քայքայում, թուլացնում են այն բարոյական հենասյուները, որոնք սովորական պայմաններում ապահովում են նրա նորմալ գործունեությունը։

Ֆրանկֆուրտցիներն անկարող են ըմբռնելու բուրժուական հասարակության հեղափոխական վերափոխման պատմական անհրաժեշտությունը և տեսնելու նրա իրականացման իսկական միջոցները։ Նրանք ելնում են այն բանից, որ իբր կապիտալիստական երկրներում պրոլետարիատն այլևս դադարել է հեղափոխական դասակարգ լինելուց, ի վիճակի չէ գրոհելու բուրժուազիայի դիրքերը, ավելին, որ նա խոչընդոտ է դարձել կապիտալիզմի դեմ օպոզիցիոն տրամադրված ուժերի ճանապարհին, քանի որ, իբր, «լեզու է գտել» բուրժուազիայի հետ, այլ խոսքով՝ «բուրժուականացել» է և նրանից կաշառվելով, փաստորեն դարձել է նրա աջակիցը[1]։ Պրոլետարիատի փոխարեն, իբրև հեղափոխական ուժերի, նրանք մատնացույց են անում կապիտալիստական զարգացած երկրների մտավորականությանը, ուսանող երի-

[1] Բանվոր դասակարգի «բուրժուականացման», կամ «կուշտ պրոլետարիատի» մասին տեսակետները նորագույն տվյալների հիման վրա հերքվում են արտասահմանյան երկրների կոմունիստ տեսաբանների աշխատություններում։ Այդ տեսակետից հատկապես մեծ են ամերիկյան մարքսիստներ Հ. Հոլլի, Խ. Լամերի, Վ. Պերլոյի, Գ. Ապտեկերի, Դ. Մեյերսի, Դ. Ռուբինի, Ու. Ուինստոնի ծառայությունները։ Շատ բան են արել նաև գերմանացի կոմունիստները։ Պրոբլեմը հիմնավորապես մշակվում է, օրինակ, Գերմանիայի Միասնական սոցիալիստական կուսակցության Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի աշխատակիցների կողմից, որոնց կարևոր ուսումնասիրությունները լույս են տեսնում ինստիտուտի «Ձեկուցումներ բանվորական շարժման պատմության վերաբերյալ» ("Beitrage zur Geschichte der Arbeiterbewegung") հանդեսում, որը հրատարակվում է 1959 թվականից։ Բանվոր դասակարգի «բուրժուականացման» կոնցեպցիան գիտական քննադատության է ենթարկվել նաև վերջին տարիներս մեզանում լույս տեսած մի շարք աշխատություններում։ Դրանցից կարելի է հեշատակել.

Н. Д. Гаузнер, Научно-технический прогресс и рабочий класс США., «Наука», 1968; А. К. Уделов, Структура общественного сознания, М., «Мысль», 1968; Б. Ф. Поршнев, Социальная психология и история, М., «Наука», 1966; Г. Г. Диличенский, Рабочий на капиталистическом предприятии, М., «Наука», 1969; В. С. Семенов. Капитализм и классы, М., «Наука», 1969. Տես նաև հետևյալ ժողովածուները.

«Современный рабочий класс капиталистических стран», М., «Мысль», 1965; «Современная буржуазная идеология в США», М., «Мысль», 1967; «Социология и идеология», М., Наука», 1969.

տասարդությանը, հարստահարվող ազգային և ռասայական փոքրամասնություններին և, վերջապես, իմպերիալիզմի գաղութային տիրապետությունից ազատագրված երկրների ժողովրդական մասսաներին։ Ֆրանկֆուրտցիները չեն տեսնում կապիտալիզմի հիմնական հակասությունը, որ կա աշխատանքի հասարակական բնույթի և յուրացման մասնավոր ձևի, վիթխարի հարստության և նրա «ռեպրեսիվ» սպառման միջև։

Իրենց մարքսիստ համարող ֆրանկֆուրտցիները ոչ միայն չեն քննադատում մասնավոր սեփականությունը՝ որպես մարդու կողմից մարդու շահագործման տնտեսական հիմք, այլև ուղղակի չեն նկատում դա։ Հենց այդ է պատճառը, որ նրանք հայացքը հառում են այն ուժերին, որոնք գտնվում են «կապիտալիզմից դուրս»։

Իհարկե, վերը նշված երևույթները, որոնց մասին խոսում են «ֆրանկֆուրտյան դպրոցի» տեսաբանները, իրականում տեղի ունեն և, ինչ խոսք, թուլացնում են կապիտալիստական սիստեմը։ Բայց բանն այն է, որ նրանք բացարձակացնում են այդ երևույթները։

Կապիտալիզմի պայմաններում արտադրության ավտոմատացումը, անկասկած, սոցիալական ծանր հետևանքներ է ունենում։ Այն առաջ է բերում գործազրկություն, դուրս է մղում մի շարք տրադիցիոն պրոֆեսիաներ, հետևաբար՝ ավելորդ է դարձնում բանվորների որոշ մասին։ Բայց, հակառակ ֆրանկֆուրտցիների տեսակետի, ավտոմատացումը բնավ չի հանգեցնում աշխատավորների շրջանում պարազիտիզմի ուժեղացման։ Այն չի նպաստում պարազիտիզմի ուժեղացման նաև սպասարկման ոլորտում, որը նույնպես աշխատանքային գործունեության բնագավառ է։

«Ֆրանկֆուրտյան դպրոցը» սխալվում է նաև պնդելով, թե հասարակության մեջ նոր առաջացած բոլոր պահանջմունքները շռայլություն են։ Ինչ խոսք, որ այդ «շռայլությունների» ճնշող մասը խիստ անհրաժեշտ է աշխատանքի արտադրողականության բարձրացման համար։

Ինչ վերաբերում է շահույթի նորմայի դինամիկային, որի մասին խոսում են ֆրանկֆուրտցիները, ապա, ինչպես

ապացուցել է Մարքսը, փոփոխական կապիտալի համեմատությամբ հաստատուն կապիտալի աճը այն հետևանքն է ունենում, որ աստիճանաբար իջնում է շահույթի ընդհանուր նորման, այսինքն՝ հավելյալ արժեքի մասսայի հարաբերությունը ներդրված ողջ կապիտալի արժեքի նկատմամբ։ Շահույթի ընդհանուր նորմայի անկումը բացարձակ պրոցես չէ, այլ դրսևորվում է որպես տենդենց։ Դրա պատճառն այն է, որ մշտապես գործում են այդ անկմանը հակառակ ուժեր։ Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը բազմաթիվ միջոցառումներով ձգտում է խափանել շահույթի ընդհանուր նորմայի անկման տենդենցի գործողությունը։ Դրան նպաստում է նաև ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխությունը, որն առաջ է բերում հաստատուն կապիտալի տարրերի աստիճանական էժանացում։

Վերջապես, արժանին մատուցելով «ֆրանկֆուրտյան դպրոցին» այն բանի համար, որ նա քննադատում է նեոգաղութակալությունը, պետք է միաժամանակ նկատել, որ նեոգաղութակալության հաստատման, ինչպես նաև հետամնաց դիկտատորական ռեժիմների պահպանման վրա կատարված վիթխարի ծախսերը ի վիճակի չեն կործանման հասցնելու կապիտալիստական սիստեմը։ Այդ սիստեմն ինքն իրեն չի տարրալուծվում, չի քայքայվում։ Դա տեղի է ունենում աշխատավորների մասսայական, համառ, կազմակերպված հեղափոխական պայքարի հետևանքով, որը կոմունիստական կուսակցությունների գլխավորությամբ մղվում է կապիտալի դեմ։

Հեղափոխության պրոբլեմներին անդրադառնալիս «ֆրանկֆուրտյան դպրոցի» տեսաբաններն անխուսափելիորեն դնում ու քննարկում են նաև հեղափոխության մեթոդների և զարգացման ուղիների հարցերը։

Հեղափոխություն ասելով «ֆրանկֆուրտյան դպրոցի» տեսաբանները հասկանում են անցյալի հետ կապերի լիակատար խզում։ Նրանց համար այն ամենը, ինչ այժմ գոյություն ունի, հավասարապես դատապարտված է կործանման, ուստի գոյություն ունեցողի նկատմամբ ամեն տեսակ «ոչ»-ը անհրաժեշտ է պաշտպանել։ Պատահական չէ, որ նրանք Նիցշեի «ոչ»-ը դնում են Մարքսի «ոչ»-ի կողքին։ Բայց քանի որ Մարքսի

կանխատեսությունը ֆրանկֆուրտցիներին բավականաչափ ուտոպիստական չի թվում, ապա նրանք այսօրվա իրականությունն ուղղակի հակադրում են ապագայի պատկերին, մի մեթոդ, որ վերցված է Նիցշեից և ռեակցիոն այլ փիլիսոփաներից։ Իրենց աշխատությունների մեջ Ադորնոն, Հաբերմասը և «քննադատական դպրոցի» մյուս ներկայացուցիչները մտահոգված են այն բանով, որ ինդենտիֆիկացիայի ենթարկեն սեփական «ես»-ը, որևէ հանգույցով իրենց չկապեն դետերմինիստական ինչ-որ ընդհանուր օբյեկտիվ օրենքի, սոցիալական կազմակերպվածության ու կարգապահության հետ։

«Ֆրանկֆուրտյան դպրոցի» կոնցեպցիաներում տեղ չկա դիալեկտիկայի համար, բացի այն դիալեկտիկայից, որը ժխտում է ներկայի ժառանգական կապն անցյալի ու ապագայի հետ։ «Քննադատական տեսության» ներկայացուցիչների կարծիքով դիալեկտիկան պետք է հասկանալ որպես ունիվերսալ բացասում, որը նախորդ զարգացումից ոչինչ չի թողնում, անցյալից ոչինչ չի պահպանում։ Իսկ ներկայից ու անցյալից լիովին խզվելու համար պետք է քանդել ապագան տանող բոլոր կամուրջները[1]։

Ներկայի ախտերը ապագա չտանելու համար պետք է ոչ թե քայլել դեպի գալիքը, այլ ներկայից միանգամայն ցատկել ապագան։ Հենց այս դիրքերից էլ «ձախ» ռադիկալիզմը առաջ է քաշում իր «նոր» «նեգատիվ» դիալեկտիկան։ Բայց իրականում ոչինչ «նոր» բան չկա այդ դիալեկտիկայում։ Դեռ շատ վաղուց «որակական դիալեկտիկայի» անվան տակ այն առաջ է քաշել ու ձևակերպել դանիացի փիլիսոփա Ս. Կերկեգորը (1813—1865 թթ.)։

«Ֆրանկֆուրտյան դպրոցի» դիալեկտիկան պրակտիկայում ոչ այլ ինչ է, քան շուռ տված բեռնշտայնականություն։ Եվ, իսկապես, եթե միայն գոյություն ունենան որակական փոփոխություններ, ապա այստեղից եզրակացություն, որ կամ ամեն մի ռեֆորմ արդեն հեղափոխություն է, կամ հեղափոխություն կատարելու համար որևէ էվոլյուցիոն, քանակական փոփոխություններ կատարելու, հեղափոխությունը

[1] Տե՛ս «Проблемы мира и социализма», № 8, 1970, էջ 82։

նախապատրաստելու հարկ չկա։ Այլ խոսքով, հեղափոխությունը չի նախապատրաստվում, այլ կատարվում է ինչ-որ չնախատեսված թռիչքով։

Նման եզրահանգումը պատահական չէ։ Իրենց համարելով արմատական հեղափոխության քարոզիչներ, գոյություն ունեցողի անխնա քննադատներ, «ֆրանկֆուրտյան դպրոցի» տեսաբանները, սակայն, ներկայի ընդերքում չեն տեսնում բացասող, ազատագրական ուժեր։ Իսկական մատերիալիստական քննադատությունը, ելնելով պրակտիկայից, նորից ձգտում է դեպի պրակտիկան։ Ֆրանկֆուրտցիներն այդ հարաբերակցությունը լիովին շուռ են տալիս, պրակտիկան լիովին հանգեցնում զուտ քննադատության։ Նրանց կարծիքով ազատագրությունը միայն կգա դրսից, արտաքին ուժերից։

Պարզ է, որ նման կոնցեպցիան հիմքից սխալ է։ Գոյություն ունեցողի ներգործուն քննադատությունը պետք է ելնի սիստեմի ներսի տարբեր խմբերի գործունեությունից և պայքարից, որպեսզի հնարավոր լինի որոշել ամբողջի հետագա զարգացման հեռանկարները։ Կողմնորոշվել դեպի «դրսի» միջամտությունը, նշանակում է փաստորեն հույս կապել հրաշքի, այլ ոչ թե դժվարությունների հաղթահարման հետ, հեղափոխական ուժերի կազմակերպման հետ։

«Ֆրանկֆուրտյան դպրոցի» կեղծ դիալեկտիկայի վտանգն այն է, որ նա փորձում է ժխտել իսկական դիալեկտիկայի՝ Հեգելի, Մարքսի, Լենինի դիալեկտիկայի բոլոր հիմնական դրույթները։ Այն քանդում է ռեֆորմիզմի և հեղափոխության, որակական և քանակական փոփոխությունների, ժառանգողի և ժառանգություն ստացողի միջև եղած կապը։

Իրենց կեղծ դիալեկտիկան հիմնավորելու համար «ֆրանկֆուրտյան դպրոցի» առանձին ներկայացուցիչներ վկայակոչում են գիտական կոմունիզմի հիմնադիրների առանձին ասույթները։ Նրանք հատկապես չարաշահում են Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» հետևյալ տողերը. «Կոմունիստական հեղափոխությունն ամենավճռական խզումն է անցյալից ժառանգած սեփականատիրական հարաբերությունների հետ. զարմանալի չէ, որ նա իր զարգացման ընթացքում ամենավճռական

կերպով կապերը խզում է անցյալից ժառանգություն ստացած գաղափարների հետ»[1]։

Առաջին հայացքից կարող է թվալ, թե այս հարցում «ֆրանկֆուրտյան դպրոցի» և գիտական կոմունիզմի հիմնադիրների տեսակետները լիովին համընկնում են։ Բայց իրականում այդպես չէ։

Ինչպես հայտնի է, հեղափոխության պրոբլեմին անդրադառնալիս Մարքսը և Էնգելսը չափազանց կարևոր էին համարում ժառանգականությունը, փոխանցումը։ Նրանք դիալեկտիկներ էին և հիանալի ըմբռնում էին ամեն մի հեղափոխության մեջ կապակցությունների, ժառանգականության նշանակությունը։ Պատահական չէ, որ անցյալի հետ կապերի խզումը նրանք չէին դիտում իբրև տոտալ երևույթ, այլ մշտապես ընդգծում էին, որ հնից խզված կապերի կողքին միշտ պահպանվում է կարևոր պատմական կապը։ Հեղափոխությունը չի ոչնչացնում արտադրողական ուժերը, որոնք մարդկության կողմից ստեղծված են հազարամյակների ընթացքում։ Այս տեսակետի հիմնավորմանն են ուղղված նաև կապիտալիզմից կոմունիզմին անցնելու մասին Մարքսի հստակ մտքերը, որ նա արտահայտել է գերմանական սոցիալ-դեմոկրատների Գոթայի ծրագրի քննադատական դիտողությունների մեջ։

Անցյալից կապերը լիովին խզելու հարցում «ֆրանկֆուրտյան դպրոցը» երբեք չէր կարող աջակցություն գտնել մարքսիզմի կողմից։ Հենց դա է պատճառը, որ նա քննադատության տակ է առնում զարգացման մարքսիստական կոնցեպցիան։

«Ֆրանկֆուրտյան դպրոցի» ներկայացուցիչները հաճախ դեմագոգիկ հարցեր են առաջադրում. ռեալ սոցիալիզմն արդյո՞ք իրականացրել է լիակատար խզում անցյալի հետ, արդյո՞ք սոցիալիստական բանվորական շարժումն այն ուժն է, որն ի վիճակի է գլուխ բերելու այդ խզումը։ Չսպասելով պատասխանի, ֆրանկֆուրտցիները շտապում են այդ հարցերին իրենք պատասխան տալ։

---

1 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 1-ին, Հայպետհրատ, Երևան, 1972, էջ 162։

Նրանք (հատկապես Ադորնոն ուշ շրջանի իր աշխատություններում) գտնում են, որ ռեալ սոցիալիզմը պահպանել է անցյալի հետ պատմական կապը, դրանով իսկ վճռականորեն չի խզվել կապիտալիզմից, որ ժամանակակից բանվորական շարժումը նույնպես անկարող է կապերը խզել անցյալից։ Դա գալիս է նրանից, որ ռեալ սոցիալիզմի և բանվորական շարժման գաղափարախոսությունը՝ մարքսիզմը, բավականաչափ քննադատական ուսմունք չէ, անհաշտ չէ հին աշխարհի հանդեպ։ Ֆրանկֆուրտցիների պնդմամբ, դա պատահական չէ, որովհետև մարքսիզմը, հատկապես մարքսիստական դիալեկտիկան սկիզբ է առնում Հեգելից և բավականաչափ մատերիալիստական չէ։ Զարգացման պրոբլեմը քննարկելիս Ադորնոն ուղղակի կողք կողքի է դնում Մարքսին և Հեգելին։ Նա հայտարարում է, որ մատերիալիստական դիալեկտիկան գերի կմնա իդեալիստական մտածողությանն այնքան ժամանակ, քանի դեռ պաշտպանում է առաջադիմության մասին այն միտքը, որի համաձայն ապագայի արմատները գտնվում են ներկայի մեջ, քանի դեռ այն «ռադիկալացման» չի ենթարկվել, այսինքն՝ չի հրաժարվել այն տեսակետից, ըստ որի զարգացման մի աստիճանից մյուսին անցնելիս հասարակությունը լիովին չի կտրվում անցյալից։ Մատերիալիստական դիալեկտիկան, ասում է նա, պետք է իր մեջ ներառի կտրուկ շրջադարձերի ժամանակ անցյալից հասարակության լիովին կտրվելու, առաջադիմության ամեն մի կեռմանում որակապես փոխվելու թեզերը։ Ադորնոն ձգտում է տպավորություն ստեղծել, թե դիալեկտիկական մատերիալիզմը «ռադիկալացման» ենթարկելու իր առաջարկով մեծապես «օգնում» է մարքսիզմին, որպեսզի սա նորից մեկ անգամ արմատապես վերանայի և ճշգրտումներ մտցնի դիալեկտիկայի երկու կենտրոնական հասկացությունների՝ բացասման հասկացության և ամբողջի (տոտալի) հասկացության մեջ։

Հաբերմասի տեսակետով, Հեգելի և Մարքսի դիալեկտիկան իրականում ոչ թե նպաստում, այլ խանգարում է իսկական հեղափոխությանը։ Ինչո՞ւ։ Որովհետև, ասում է նա, զարգացման ընթացքում հեգելյան-մարքսիստական դիալեկտիկան չի նկատում մի շատ կարևոր մոմենտ, այն, որ բոլոր հեղափոխությունները որոշ էտապում վերածվում են իրենց հակադրությանը։ Իսկ դրա պատճառն այն է, որ այդ հեղափոխությունները նախապես չեն կործանում յուրաքանչյուր անհատի մեջ օբյեկտիվորեն գոյություն ունեցող ձգտումն ու պատրաստակամությունը՝ ենթարկվել ուրիշին, շահագործվել, ճնշվել նրա կողմից։

Այսպիսով, ֆրանկֆուրտցիների տեսակետով ճնշման պրոբլեմը մարքսիզմը քննարկում է անբավարար խորությամբ, իր տեսադաշտից դուրս է թողնում անհատին։ Հետևապես, եզրակացնում են նրանք, անհրաժեշտ է գտնել դիալեկտիկայի այլ ձև, ժխտման այլ ձև (հենց այդ պատճառով էլ ֆրանկֆուրտցիներն իրենց դիալեկտիկան կոչում են «նեգատիվ»), պետք է ուրիշ վերաբերմունք մշակել հասարակության նկատմամբ, պետք է պատմական մատերիալիզմի մակարդակին չկանգնել, այլ առաջ գնալ, ձեռնամուխ լինել անհատի բնազդների կառուցվածքի վերլուծությանը (այս հարցը «ֆրանկֆուրտյան դպրոցի» ներկայացուցիչների ուշ շրջանի բոլոր ստեղծագործությունների կենտրոնական հարցն է)։ Նման քարոզը դժվարություններից խույս տալու հուսահատ ճիգ է, ակնհայտ փախուստ իրականությունից դեպի պատրանքների աշխարհը։

Հակառակ «ֆրանկֆուրտյան դպրոցի» տեսաբանների, մարքսիստ-լենինյանները զարգացման պրոբլեմներին, մասնավորապես հեղափոխության պրոբլեմին անդրադառնալիս չեն փակում աչքերը հսկայական դժվարությունների, ինչպես նաև այդ դժվարությունները հաղթահարելիս թույլ տված սեփական սխալների հանդեպ։ Բայց, դրա հետ միասին, նրանք ոչ մի կերպ չեն արդարացնում փախուստը դեպի այն կեղծ-ռադիկալ դիալեկտիկան, որպիսին քարոզում է «ֆրանկֆուրտյան դպրոցը»։

* * *

Մանր բուրժուազիայի սոցիալ-դասակարգային դրության, նրա քաղաքական տրամադրությունների արտահայտության առավել ցայտուն դրսևորումներից մեկը այսպես կոչված **«նոր ձախերի» գաղափարախոսությունը և շարժումն է։**

Այդ շարժումը առկա է համարյա բոլոր զարգացած կապիտալիստական երկրներում։ Բայց այն հատկապես մեծ ծավալ է ստացել Ֆրանսիայում, Իտալիայում, Արևմտյան Գերմանիայում, ԱՄՆ-ում։ Ամերիկայում «նոր ձախերի» շարժումը, ծագելով 50-ական թվականների վերջերին և 60-ական թվականների սկզբներին, արագորեն իր մեջ ներառեց երիտասարդության ու մտավորականության մեծաթիվ խմբերի։

«Նոր ձախերի» գաղափարախոսության ձևավորման գործում մեծ է ֆրանսիացիներ Ժակ Էլլյուլի, Անրի Լեֆեբրի և հատկապես Ժան Պոլ Սարտրի դերը։ Վերջինիս «նոր ձախերի» խոշոր տեսաբաններից մեկի դերին բերեց նրա դավանած էկզիստենցիալիզմը (լատիներեն existentia—գոյություն ունենալ բառից), որը լայնորեն տարածված է բուրժուական մտավորականության շրջանում, ունի ճանաչված դեմքեր՝ Գուսերլ, Հայդեգեր և այլոք, բայց առավել խոշոր ներկայացուցիչը Սարտրն է։ Էկզիստենցիալիզմը թերագնահատում է մտքի, մտածողության դերը, աննշան տեղ է հատկացնում ճանաչողությանը։ Այն ժխտում է արտաքին աշխարհի կապը մտածողության հետ, առաջին պլան է մղում ինտուիցիան, որի օգնությամբ է իբր մարդը գաղափար կազմում արտաքին աշխարհի մասին։ Գտնելով, որ իրականության մեջ իշխում է պատահականությունը, էկզիստենցիալիստները քարոզում են միստիկա ու տերտերականություն։ Սարտրը գտնում է, որ մարդն ազատ է իր գործողությունների մեջ, որ նա անկախ է դասակարգային պատկանելիությունից, պետական օրենքներից և ընտանեկան նորմերից։ Մարդուն դիտարկելով արտադրահարաբերություններից դուրս, էկզիստենցիալիստները, մասնավորապես, ժխտում են տեխնիկայի դերը մարդկության առաջընթաց զարգացման մեջ։

«Նոր ձախերի» ամենախոշոր տեսաբանը, այնուամենայնիվ, մեր ժամանակի բուրժուական նշանավոր փիլիսոփաներից Հերբերտ Մարկուզեն է։ Սա բազմաթիվ աշխատությունների հեղինակ է, որոնցից հատկապես լայն ճանաչում են գտել «Սովետական մարքսիզմ», «Մեկ չափի մարդ», «Կուլտուրան և հասարակությունը», «Փորձ ազատության մասին», «Էսսե ազատագրության մասին» և այլն։ Չնայած

այն բանին, որ սոցիալական քննադատ Մարկուզեի աշխատությունները հրատարակվում են մի քանի տասնամյակ շարունակ և դրանք վերջին տարիներս նրան համաշխարհային ճանաչում են բերել, սակայն մարքսիստները նրա հայացքների վերլուծությամբ սկսեցին սիստեմատիկաբար զբաղվել միայն 50-ական թվականների կեսերից։ Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Մարկուզեի տեսությունը դուալիստական է, այն ներկա ժամանակաշրջանի մասին ձախ-ուտոպիստական պատկերացում է, «բողոքի ռոմանտիկ-հեղափոխական կոնցեպցիա»։ Նրա դուալիզմը անկայուն է, քանի որ նա իրեն միաժամանակ համարում է և՛ հեգելական, և՛ մարքսիստ, հաճախ նաև՝ ֆրեյդիստ։

Մարկուզեն և «նոր ձախերի» մյուս տեսաբանները մարդուն ներկայացնում են որպես մեկուսացված անհատ, որի բովանդակությունը նրա գիտակցականությունը և հոգևոր գործունեությունն է։ Պնդելով, թե քաղաքականությունը, վերջին հաշվով, բնորոշվում է անհատների գիտակցությամբ, այս տեղից նրանք եզրակացնում են, որ եթե այդ գիտակցությունը հեղափոխական է, ապա ցանկացած ժամանակ կարելի է հեղափոխություն անել (որքանով որ կապիտալիզմն իր բնույթով արդեն հեղափոխական սիտուացիա է)։ «Նոր ձախերի» տեսակետի համաձայն, գոյություն ունեցող պայմանների դեմ ուղղված ամեն մի գործողություն արժանի է օժանդակության։ Ավելին, նրանք գտնում են, որ բուրժուական հասարակարգում որևէ ռեֆորմի իրականացման մասնակցելը հեղափոխականի համար մերժելի քայլ է, քանի որ ռեֆորմները միայն ամրապնդում են գոյություն ունեցող սիստեմը։ Միակ օրինաչափը և ճշմարիտը, ասում են նրանք, «կատաստրոֆիկ» հեղափոխությունն է։

«Նոր ձախերի» պատկերացմամբ հեղափոխությունն ավերածություն է։ Բացասումը ենթադրում է անցյալի հետ սոցիալական ու քաղաքական ամեն տեսակ կապերի քանդում։ Նրանք անցյալի մեջ չեն տեսնում դրական ոչ մի տրադիցիա։ Անցյալը նրանց թշնամին է, որովհետև այն այս կամ այն կերպ իր կնիքն է դնում ապագա աշխարհի վրա, այլ խոսքով՝ խոչընդոտում է ազատության դրսևորումը։ Պետք է այնպես բացասել, ասում են նրանք, որ այլևս անհնարին

դառնա բացասման բացասումը։ Այլ խոսքով, նրանք ոչ մի կապ չեն տեսնում անազատ հին աշխարհի և «ազատ նոր աշխարհի» միջև։

«Ֆրանկֆուրտյան դպրոցի» ազդեցությամբ իր վեպերի ցիկլը գրած Տրավենը «Կախաղան հանվածների խռովությունը» վեպում ցույց է տալիս, թե ինչպես ապստամբները, որտեղ էլ նրանք հայտնվում են, ոչնչացնում են պատահած բոլոր փաստաթղթերը։ «Երբ այդ բոլորը, վերջապես, կայրվեն, այն ժամանակ այլևս ոչ ոք չի իմանա, թե ով է ինքը, ինչպես են կոչում իրեն, ով է եղել նրա հայրը և ինչ է ունեցել նա... Այդ ժամանակ այլևս հանդես չեն գա ժառանգորդներ»[1]։

Այստեղ, ինչպես տեսնում ենք, խոսքը վերաբերում է հին աշխարհից, սեփականատիրական, շահագործման ու ճնշման աշխարհից անկոմպրոմիս կտրվելուն։

Գործողությունների պարզ ծրագրի բացակայությունը «նոր ձախերին» անխուսափելիորեն բերում է անարխիզմի դիրքերը, անարխիզմ, որը, Վ. Ի. Լենինի արտահայտությամբ «հաճախ մի տեսակ պատիժ է հանդիսացել բանվորական շարժման օպորտունիստական մեղքերի համար»[2]։

Անարխիզմի գլխավոր վտանգն այն է, որ նա իր ռեակցիոն մանրբուրժուական ուտոպիկ արկածախնդրական էությունն ամեն կերպ ձգտում է քողարկել կեղծ-սոցիալական ուլտրահեղափոխական ֆրազներով։

«Ձախերը» ժխտում են ամենօրյա նախամշակված պայքարի անհրաժեշտությունը, ատելությամբ են արտահայտվում նրանց նկատմամբ, ովքեր իրավացիորեն պնդում են, թե անհրաժեշտ է համբերությամբ և մանրակրկիտ նախապատրաստվել դասակարգային վճռական ճակատամարտերի։ Հեղափոխության հաղթանակի համար բարենպաստ քաղաքական իրադրություն ստեղծելու նպատակին ուղղված ամեն մի գործողություն անարխիստական հովերով տարված «նոր ձախերը» դիտում են իբրև «անախրոնիզմ» ու «կոնսերվատիվիզմ»։ Անարխիստ «ուլտրահեղափոխականներն» ամեն

[1] Տե՛ս «Новое время», № 24, 1970, էջ 21.
[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 19։

անգամ կոմունիստներին մեղադրում են «հեղափոխությանը դավաճանելու» մեջ, երբ սրանք մեր ժամանակի փոփոխված իրադրության պայմաններում կապիտալիստական այս կամ այն երկրում հնարավոր են համարում հեղափոխական շարժման հաղթանակն առանց զինված ապստամբության, առանց քաղաքացիական պատերազմի՝ հակաիմպերիալիստական բոլոր ուժերից կազմված քաղաքական հզոր բանակի առկայության պայմաններում։ Դրան հակառակ, «նոր ձախերը» հեղափոխության գաղափարը հանգեցնում են մասսայական ժողովրդական պայքարից կտրված զինված խռովության, տարփողում են «կոմունիստական շարժման հնացման» մասին, ապլոմբով ազդարարում, թե պատրաստ են «անմիջապես գլխավորել» ապստամբությունը։ Միաժամանակ ձախլիկ «ուլտրահեղափոխականները» չեն թաքցնում իրենց ատելությունն աշխատավոր մասսաների և, առաջին հերթին, բանվոր դասակարգի նկատմամբ, վերջինիս անվանում են «հեղափոխության հինգերորդ անիվ»։

«Անհապաղ հեղափոխության» պահանջով ասպարեզ իջած «նոր ձախերի» մանրբուրժուական ավանտյուրիզմը զուգակցվում է քաղաքական ուտոպիզմի հետ։ Հուսահատության հասնելով անարդարացի և արատավոր բուրժուական աշխարհում, քաղաքային մանր բուրժուազիայի, ինտելիգենցիայի և սովորող երիտասարդության «ուլտրաձախ» շերտերը չարիքի արմատը տեսնում են ոչ թե կապիտալիստական կարգի, այլ ընդհանրապես պետական իշխանության գոյության մեջ։ Նրանք սկզբունքային տարբերություն չեն դնում բուրժուական և սոցիալիստական պետական սիստեմների միջև և ընդհանրապես հանդես են գալիս «ամեն տեսակ դիկտատուրայի» դեմ։ Ազատության միակ միջոցը նրանք համարում են պետական մեքենան վերացնելու նպատակով կատարվելիք անմիջական բռնի սոցիալական հեղաշրջումը։ Ըստ որում բռնության ճանաչումը նրանց մոտ գերաճում է անարխիստական գործողությունների ու տեռորիզմի բացահայտ արդարացմանը։

Անարխիստ «ուլտրահեղափոխականների» մոտ հեղափոխական ֆրազով աճպարարությունը զուգակցվում է պայքարի ամենածայրահեղ ձևերի օգտագործման պահանջի հետ։

Հաշվի չառնելով կոնկրետ իրական պայմանները, «ձախ» ուսանողության պարագլուխները գտնում են, որ «կապիտալիստական քաղաքը նույն ջունգլին է», ուստի այնտեղ անհրաժեշտ է պայքարել նույնպիսի մեթոդներով, ինչպիսի մեթոդներով պայքար է մղվում ջունգլիներում։

«Նոր ձախերի» շրջանում լայն ժողովրդայնություն է վայելում «Ավերման կիրքը ստեղծագործական կիրք է» կոչ-լոզունգը, որը նրանք իրականացնում են ամենալայն մասշտաբներով. ջարդում են համալսարանական շենքերի պատուհանների ապակիները, քարուքանդ անում լսարանները, նոնակ նետում սրճարաններից ներս, հրդեհում խանութները։

Կոմունիստներին մեղադրելով կոնսերվատիզմի և հեղափոխականության կորստի մեջ, «նոր ձախերը» «ամենահեղափոխական դիրքերից» հանդես են գալիս «Կորչե՛ն ընտրությունները», «Զինված պայքարը միակ ուղին է» և նմանօրինակ լոզունգներով։ Ըստ որում զինված պայքար ասելով նրանք, որպես կանոն, հասկանում են տեռորիստական գործողությունները։

Այսպես, 60-ական թվականների վերջերին Նյու Յորքում կազմակերպվեց այսպես կոչված «ուեզերմենների» ոչ մեծ, բայց չափազանց ակտիվ խումբը, որի ղեկավարները բռնության փիլիսոփայությունը հասցրին ծայրահեղ միստիցիզմի։ «Ձախ մարքսիզմի» լատինաամերիկյան տարատեսակությունների, բակունիզմի, մաոիզմի, տրոցկիզմի յուրատեսակ խառնուրդ հանդիսացող այդ փիլիսոփայության հավատամքը հանգում է նրան, որ «ինտերտ հասարակության» արթնացման համար ռումբը և դինամիտն ամենալավ միջոցներն են։ 1970 թվականի գարնանը «ուեզերմենները» Նյու Յորքում կազմակերպեցին պայթեցումներ վիետնամական պատերազմից հարստացող կոնցեռնների վարչական շենքերում։ Սակայն ոչ այդ գործողությունները, ոչ էլ ոստիկանության հետ հրացանաձգությունները սպասած արդյունքը չտվին։

Չիլիի «նոր ձախերի» տեսակետն արտահայտող «Ֆունտո ֆինալ» հանդեսը 60-ական թվականների կեսերին կոչ էր անում դիմել էքսցեսների ու ջարդերի։ Հանդեսն այսպես կոչված «Ձախ հեղափոխական շարժում» տեռորիստական

խմբի ձայնափողն էր, խումբ, որի մեջ հավաքվել էին նռնակներով և ատրճանակներով զինված մի քանի տասնյակ արկածախնդիրներ, ռենեգատներ և ապադասակարգայնացած տարրեր։ Այդ «հեղափոխական» խումբը հիմնականում զբաղված էր կողոպուտներով, որ «նոր ձախերը» ներկայացնում էին որպես «էքսպրոպրիացիա»։

Բրազիլական «ձախերի» ղեկավարներից մեկը՝ Կարլոս Մարիգելը գտնում էր, որ բոլոր հնարավորությունները կան բրազիլական գյուղում պարտիզանական պատերազմ սկսելու, միայն թե այն արագացնելու համար պետք է լայն մասշտաբներով դիմել տեռորիստական գործողությունների, առևանգումների և հրկիզումների։ Նրա ելույթներից հետո 1969 թվականի սեպտեմբերին ձախ էքստրեմիստներն առևանգեցին Բրազիլիայում ԱՄՆ-ի դեսպանին։

Իրենց տակտիկան արդարացնելու համար «ձախերը» հաճախ դիմում են բոլշևիզմի պայքարի պատմության առանձին դրվագների։ Անդրադառնալով 1905 թվականի ռուսական հեղափոխության փորձին, նրանք վկայակոչում են բոլշևիկների կողմից զինված ջոկատների կազմակերպումը, որոնք համարձակ հարձակումներ էին կատարում կառավարական զորքերի վրա։ Բայց «ձախերը» չեն բացատրում, թե բոլշևիկյան զինված ջոկատները 1905 թվականին ինչպիսի իրադրության մեջ էին գործում։ Կոմունիստները երբեք չեն ժխտել զինված ջոկատների անհրաժեշտությունը, եթե առկա է հեղափոխական իրադրությունը։ Նրանք մշտապես ընդգծել են աշխատավորների ինքնապաշտպանության կարևորությունը։ Բայց նրանք դիկտատորական ռեժիմների դեմ պայքարը երբեք չեն դիտել իբրև ոչ մեծ զինված խմբերի մեկուսացված գործողություններ, որոնք տեղի են ունենում հեղափոխական իրադրության բացակայության պայմաններում։

Ենթադրենք «ավերիչ հեղափոխությունը» սկսեց ու հաղթանակեց «ձախ» ռադիկալիստական տեսական կոնցեպցիաների համեմատ։ Հետո՞։ Ի՞նչ է հաջորդում հեղափոխությանը։

Հակակառավարական ցույցերի ժամանակ «ձախ» ռադիկալները ոգևորությամբ մեջբերում են «Ինտերնացիոնալի»

խոսքերը՝ «Այս հին աշխարհը կփորենք մինչև հիմքերը և հետո...»։ Բայց այնուհետև նրանք անկարող են լինում պատասխանել «և հետո» հարցին, այլ խոսքով, այն հարցին, թե ինչով փոխարինել կործանածը, բացասածը։ Այս հարցին որևէ կոնկրետ պատասխան չեն տալիս նաև «նոր ձախերի» պարագլուխները։ Նրանք դոփում են տեղում կամ լավագույն դեպքում բավարարվում են մշուշապատ գուշակումներով։ Իսկ դա բնական է, որովհետև նրանք չգիտեն, թե ուր են գնում, այլ խոսքով չունեն դրական ու պարզ նպատակներ։

«Ձախ» ռադիկալ շարժման հայտնի առաջնորդներ Ռուդի Դուչկեն, Դ. Կոն-Բենդիտը և ընկ. ասում են. «Առայժմ մենք բացառում ենք։ Կոնսերվատիվ ծրագիր կարելի է մշակել հետո։ Գործողությունը պետք է նախորդի տեսությանը»[1]։ Արևմտագերմանական «նոր ձախերի» ղեկավարներից Բեռնդ Ռաբելը հայտարարում է. «Մենք կոնստրուկտիվ ծրագիր չունենք, մենք ուղղակի ժխտում ենք...»[2]։ Նա բացառություն չի կազմում գերմանական «նոր ձախերի» շարքում։ Նույն ոգով են արտահայտվում նաև Կլաուս Մեշկետը, Օսկար Նեգտը, ինչպես նաև նրանց արտասահմանյան համախոհները, որոնք գտնում են, թե հեղափոխությունը պետք է սկսել, իսկ հետագայում պարզ կդառնան նրա նպատակները։ Ուստի պատահական չէ, որ «նոր ձախերի» մտքերը հաճախ ուղեկցվում են «կարող է պատահել», «վատ չէր լինի», «հավանաբար անհրաժեշտ կլիներ» և նման ուրիշ արտահայտություններով։

«Ի՞նչ հասարակություն կհաջորդի ինդուստրիալ հասարակությանը» հարցին Հերբերտ Մարկուզեն ուղղակի պատասխանել է՝ չգիտեմ։ Բայց նրա աշխատությունների ուսումնասիրությունից երևում է, որ, այնուամենայնիվ, նրա համակրանքը, որքան էլ տարօրինակ թվա... ֆեոդալական սոցիալիզմի կողմն է։ Սակայն զգալով իր համակրանքի արխիհետադիմական լինելը, Մարկուզեն նպատակահարմար է գտնում հրապարակայնորեն սահմանազատվել ֆեոդալական սոցիալիզմից։ Ո՛չ, ֆեոդալական սոցիալիզմին վերադառնալ

[1] «Коммунист», № 2, 1970, стр. 103.

[2] «Литературная газета», 21 октября, 1970 г.

չարժե, քանի որ ֆեոդալիզմը նույնպես հայտնի էր անհատի ազատությունը սահմանափակելու իր բազմաձյուղ ինստիտուտների բարդ սիստեմով։ Ամենից լավն այն կլիներ, ասում է նա, որ ֆեոդալական ժամանակաշրջանի ճորտերի ֆունկցիաները իրենց վրա վերցնեն ապագայի մեքենաները։ Այդ ճանապարհով վերջ կտրվեր անտանելի ծանր, հոգեմաշ աշխատանքին։ Իսկ ինչպե՞ս է Մարկուզեն պատկերացնում աշխատանքը մարդկանցից աստիճանաբար մեքենաներին փոխանցելու պրոցեսը։ Ահա այսպես. գործարաններն ու ֆաբրիկաները փակվում են, քաղաքային բնակչությունը տեղափոխվում է գյուղ։ Այստեղ, բնության գրկում, թագավորելու է ոչ թե «զուր վատնվող աշխատանքը», այլ այն աշխատանքը, որի նպատակն է լինելու մարդկային կարիքն ու սոցիալական անհավասարությունը վերացնելը։ Դա կլինի մի հասարակություն, որը հիմնված կլինի անհատի լիակատար ու անսահմանափակ ազատության, մասնավոր «բախտավոր» կյանքի, միայնակ մնալու իրավունք ունեցող անհատի ավտոնոմիայի վրա։ Իսկ ինչպե՞ս կիրականացվեր նման հասարակության ղեկավարությունը։ Մարկուզեի կարծիքով այդ հասարակության ղեկավարությունը կիրականացներ մի այնպիսի կազմակերպություն, որ նման կլիներ պլատոնյան էլիտայի դիկտատուրային[1]։

Մարկուզեի այս դատողությունները շատ են հիշեցնում ֆեոդալական սոցիալիզմի էլիտար կոնցեպցիան, որի մասին Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը գրել են. «... կիսով չափ՝ թաղման երգ, կիսով չափ՝ պարսավագիր, կիսով չափ՝ անցյալի արձագանք, կիսով չափ՝ ապագայի սպառնալիք, որը մերթ բուրժուազիայի բուն սիրտն է խոցում իր դառն, սրամիտ, կծու դատավճռով, բայց որը միշտ ծիծաղելի տպավորություն էր թողնում ժամանակակից պատմության ընթացքն ըմբռնելու իր կատարյալ անընդունակությամբ»[2]։

Երբ ծանոթանում ես ուլտրաձախ խմբերի փաստաթղթերին, ակամայից հիշում ես ֆրանսիական բլանկիստնե-

[1] «Литературная газета», 17 декабря 1969 г.

[2] Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, *Կոմունիստական կուսակցության մանիֆեստը, Երևան, 1973, էջ 86։*

ին ուղղված Ֆ. Էնգելսի խոսքերը. «Ի՞նչ երեխայական միամտություն է՝ սեփական անհամբերությունը դնել տեսական փաստարկման տեղ»։

Բուրժուական պետական մեքենան համեմատաբար հեշտությամբ է ճնշում ձախ էքստրեմիստների գործողությունները։ Ամեն տարի ոստիկանական ռեպրեսիաների զոհ են դառնում «ձախերի» հարյուրավոր ճանաչված պարագլուխներ՝ Եվրոպայում, ԱՄՆ-ում, Լատինական Ամերիկայում։ Իշխանությունները վարպետորեն օգտագործում են «տեռորիստների» դիմակով էքստրեմիստների հարձակումները բանկերի վրա։ Քանի որ այդ հարձակումները նկատելիորեն աշխուժացրել են քրեական բանդաների գործողությունները, ուստի բուրժուական կառավարություններն ամեն կերպ ձգտում են մասսաներին համոզել, որ ուլտրաձախ խմբերը, առանց բացառության, կազմված են հասարակության տականքներից և ոչնչով չեն տարբերվում բանդիտական շայկաներից։ «Ձախ» օպորտունիզմի հերոսները բուրժուազիային նման առիթներ են տալիս ինչպես անգիտակցաբար, այնպես էլ գիտակցաբար։

Բուրժուական կառավարությունները «ձախերի» ավանտյուրիստական գործողություններն օգտագործում են նաև կապիտալիստական տիստեմի դեմ թշնամաբար տրամադրված ուժերին, առաջին հերթին կոմունիստներին վարկաբեկելու համար։ Դա իրականացվում է մի կողմից բացահայտ պրովոկացիաների, պրովոկացիոն հրադրություն ստեղծելու, մյուս կողմից՝ «ձախերի» տեսական պոստուլատներն այս կամ այն չափով պաշտպանելու, նրանց աշխատություններն ու «հեղափոխական» կոնցեպցիաները պրոպագանդելու միջոցով։

Առաջին մեթոդը բուրժուազիան կիրառում է միայն «արտակարգ պայմաններում»։ Բուրժուական մամուլի օրգանները լայնորեն լուսաբանում են «ձախերի» տեռորիստական գործողությունները, դրանք ներկայացնում որպես «կոմունիստական ակցիաներ»։ Օգտվելով ձախ էքստրեմիստների ցուցադրական հեղափոխականությունից, իշխանությունները նրանց և իսկական հեղափոխականների վրա հն բարդում չկատարված մեղքերի պատասխանատվությունը,

դրանով իսկ քաղաքական իրադարձությունների նեգատիվ կատալիզատորի դեր են խաղում։

Այսպես, 1967 թվականին Բրազիլիայի Սան Պաուլո քաղաքում անհայտ անձինք մի շարք տեռորիստական գործողություններ կատարեցին, փողոցներում ռումբեր պայթեցրին, հարձակումներ գործեցին բանկերի վրա և այն։ Միայն պատահական դիպվածով բրազիլական հասարակայությունը իմացավ, որ դա ոստիկանական գործակալ Սաբատո Դինոտոսի ձեռքի գործն է, որի մասին նա հետո խոստովանեց մամուլում։ Դինոտոսի բանդան, որի գործողությունները համաձայնեցված էին Սան Պաուլոյի ֆեդերալ ոստիկանության բաժանմունքի հետ, նպատակ ուներ լարվածությունը սրել նահանգում, բարենպաստ հող ստեղծել ոստիկանական ռեպրեսիաների ընդլայնման համար[1]։

Անարխիստական խմբերի գործողությունները կոմունիստական և առաջադիմական մյուս ուժերի դեմ ուղղելու մեծ փորձ ունի արևմտագերմանական ռեակցիան։ Էքստրեմիստներ Մալերի և Բաադերի գլխավորած անարխիստական խմբերի գործողությունների կապակցությամբ 1971 թվականի փետրվարին Գերմանիայի կոմկուսի Կենտկոմը հանդես եկավ մի հայտարարությամբ, որտեղ ասված էր, որ խոսքը վերաբերում է քրեական հանցագործների, որոնք ընդհանուր ոչինչ չունեն «ոչ ձախ քաղաքականության, ոչ ձախերի պրակտիկայի հետ, բայց ակնհայտորեն պրովոկատորների դեր են խաղում»[2]։

Երկրորդ մեթոդն իմպերիալիստական բուրժուազիան կիրառում է ամենուրեք։ Նա լավ գիտե, որ մանրբուրժուական անարխիստական հեղափոխականությունը մշտապես տատանվում է էքսպանսիվ բունտարարության և երկչոտ պասիվիզմի միջև։ Քանի դեռ շարժումը վերելք է ապրում, ավանտյուրիստական ուլտրահեղափոխականությունն ընդունակ է տիրող վերնախավերին մանր տհաճություններ պատճառել։ Բայց երբ շարժումը նահանջում է, ապա մանր բուրժուազիայի պատրանքները հօդս են ցնդում, նա ապրում է

[1] Տե՛ս «Проблемы мира и социализма», № 4, 1971, էջ 43.
[2] «Правда», 28 апреля 1971 г.

խոր հիասթափություն։ Հեղափոխական էկզալտացիային փոխարինելու է գալիս բարոյական անկումը, բարձրագույն լոզունգներին՝ պայքարից փախուստ տալու համար համապատասխան պատճառաբանություններ փնտրելը։ Ավելին, որոշակի պայմաններում մանրբուրժուական ավանտյուրիզմը փոխարինվում է անսքող օբսկուրանտիզմի։ Այս դեպքում նրա ջատագովները չեն խորշում կոմունիզմի տեսության ու պրակտիկայի դեմ կատաղի հարձակումներ կատարելուց, դառնում են հակասովետական կամպանիաների ակտիվ մասնակից, իսկ հաճախ էլ ոստիկանական պրովոկացիաների գործիք՝ ընդդեմ կոմունիստների և մյուս իսկական հեղափոխական ուժերի։

Ահա թե ինչու իմպերիալիստական բուրժուազիան չի սարսափում ձախ ֆրազաբանությունից, նա չի վախենում ոչ «նոր ձախերի» անարխիզմից (որը, ինչպես ցույց է տալիս պատմական փորձը, երբեք պլատֆորմ չի եղել իսկական հեղափոխական ուժերի համախմբման համար), ոչ «սիստեմը դրսից փշրելու», «միաչափ հասարակության» դեմ լյումպեն-պրոլետարիատին և երիտասարդությանը գրոհի տանելու նրա սպառնալիքներից։ Միաժամանակ բուրժուազիան լավ է ըմբռնում, որ եթե քաղաքի և գյուղի մանրբուրժուական տարրերը ունենային այսպես կոչված «կայուն բնավորություն», ապա բանվոր դասակարգի հետ նույնիսկ նրանց ժամանակավոր դաշինքը կարող էր մեծ վտանգ առաջ բերել իր տիրապետության համար։ Այդ պատճառով նա պատրաստ է նպաստելու Հերբերտ Մարկուզեի և «նոր ձախերի» «համընդհանուր ժխտման», նեոտրոցկիստների «պերմանենտ հեղափոխության» և ցանկացած ուրիշ կեղծ հեղափոխական տեսությունների տարածմանը, միայն թե արգելակի կամ գոնե դանդաղեցնի իսկական հեղափոխական տեսության՝ մարքսիզմ-լենինիզմի ազդեցության հետագա տարածումը։

Կոմունիստական և բանվորական կուսակցությունների 1969 թվականի միջազգային խորհրդակցությունում նշվեց, որ Արևմուտքի կառավարող շրջաններն ինֆորմացիայի այլազան միջոցներ (մամուլ, ռադիո, հեռուստատեսություն) են տրամադրում նույնիսկ ամենաչնչին ազդեցություն ունեցող ավանտյուրիստական, անարխիստական, տրոցկիստական

խմբերին՝ ձախ էքստրեմիստական հայացքներ պրոպագանդելու համար։ Չէ՞ որ բուրժուազիային անհրաժեշտ են «հեղափոխականներ», որոնք ավելի «ձախ» երևան, քան կոմունիստներ, այնպիսի տեսություններ, որոնք արտաքնապես օժտված են հակաբուրժուական ռադիկալիզմի բոլոր նշաններով, բայց ըստ էության կոչված են չեզոքացնելու մարքսիզմ-լենինիզմը, անվստահություն սերմանելու կոմունիստական կուսակցությունների նկատմամբ։ 1968 թվականի օգոստոսի 7-ին «Ֆրանս նուվել» թերթը իրավացիորեն նշում էր, թե «բոլորովին էլ պատահական չէ, որ բուրժուական մամուլը փառաբանում է Մարկուզեին» Փարիզում նրա գտնվելու ընթացքում։ «Վերջին ամիսներին «Մոնդը», «Կոմբան», «Էքսպրեսը», ռադիոն արտակարգ մեծ ուշադրություն են նվիրել մաոիստական, գեվարիստական, տրոցկիստական ուղղության երիտասարդական կազմակերպությունների ղեկավարների ասույթների պրոպագանդմանը, հատկապես այն ղեկավարների, որոնք առավել մեծ թշնամանք են տածում ֆրանսիական կոմունիստական կուսակցության նկատմամբ»։

Բուրժուական հակակոմունիստական պրոպագանդան իր զինանոցն է մտցրել, օրինակ, քաղաքական ավանտյուրիստ, ֆրանսիական «նոր ձախերի» պարագլուխներից մեկի Դանիել Կոն-Բենդիտի և նրա եղբայր Գաբրիել Կոն-Բենդիտի «Ձախ ռադիկալիզմը բուժման կուրս է կոմունիզմի ծերության հիվանդության դեմ» պասկվիլը, որը տասնյակ հազարներով տարածվում է տարբեր երկրներում, իսկ նրա հեղինակներին տրվում է բարձր հոնորար։ Ինչպես հողորդում է «Unsere Zeit» թերթը, միայն «Ռիվոլտ» հրատարակչությունը նրանց վճարել է 50 հազար մարկ[1]։

Եվ այսպես, ակնհայտորեն միասնական ճակատ է ստեղծվում «Ազատ Եվրոպա» ռադիոկայանից, Ռոկֆելլերների ու Ֆորդի ֆոնդերից ֆինանսավորվող պրոպագանդիստական կենտրոններից սկսած, մինչև ձախ ճղճղանները, ճակատ, որի ընդհանուր գիծը ատելությունն է կոմունիստական շարժման և համաշխարհային սոցիալիստական սիստեմի նկատմամբ[2]։

---

[1] Литературная газета», 21 октября 1970 г.

[2] Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Баталов Э. Я., Никитич Л. А., Фогелер Я. Г.** Поход Маркузе против марксизма, М, изд-во

«Նոր ձախերը» ամեն քայլափոխի հանդես են գալիս կոմունիստական ու բանվորական կուսակցությունների տակտիկայի «հեղափոխական» քննադատությամբ, գտնում են, որ կոմունիստական շարժումն այլևս ոչ միայն ընդունակ չէ դրական գաղափարներ մշակելու, այլև ի վիճակի չէ իսկական հեղափոխական պայքար մղելու։ Նրանց հախուռն հարձակումների օբյեկտ են դառնում Սովետական Միությունը և սոցիալիստական համագործակցության մյուս երկրները, որոնք իբր, իմպերիալիզմի հետ իրենց «հաճոյախաղերով», ԱՄՆ-ի հետ խաղաղ հարաբերություններ պահպանելով ըստ էության թիկունքից հարվածում են հակաիմպերիալիստական ճակատին։

Մարկուզեի և մյուս «նոր ձախ» տեսաբանների «հեղափոխական տեսության» ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն հակակոմունիստական և հակաառաջադիմական է, հետևապես նաև իր էությամբ հակահեղափոխական ուսմունք է, որքանով որ առաջադիմական ուժերին շեղում է դասակարգային պայքարի կոնկրետ խնդիրներից։ «Նոր ձախերը» թերագնահատում են բանվոր դասակարգին, նսեմացնում նրա դերը, քարոզում են հեղափոխության վերացական կոնցեպցիաները, հավատ չեն ընծայում հասարակության վերափոխման հնարավորությունների նկատմամբ, դատապարտում են ռեալ սոցիալիզմը։ Այստեղ մենք գործ ունենք մի տեսության հետ, որն ընդունակ է հասարակական որոշ շերտերի մարտակոչ անել, նրանց պայքարի դաշտ դուրս բերել, բայց ի վիճակի չէ նրանց առաջնորդել պայքարի ճիշտ ճանապարհով։

Նման դիրքորոշմամբ ո՞ր ուժերին է ծառայում Հերբերտ Մարկուզեի և «նոր ձախերի» մյուս պարագլուխների գաղափարախոսությունը։ Այս հարցին ճշմարիտ պատասխան է տալիս քաղաքական և գաղափարական երևույթների նկատմամբ դասակարգային մոտեցման լենինյան չափանիշը։

«Мысль», էջ 143., Баталов Э. Я. «Новые левые» и Герберт Маркузе: «В. Чепраков.» О социально-экономической концепции Герберта Маркузе («МЭ и МО». № 4, 1969), **Б. Быховский**, Философия мелкобуржуазного бунтарства. О философских взглядах Г. Маркузе («Коммунист», № 8, 1969 г.).

Վ. Ի. Լենինը գրել է. «Կա լատինական այսպիսի ասացվածք՝ «cui prodest» (կուի պրոդեստ)— «ո՞ւմ է ձեռնտու»։ Երբ անմիջապես պարզ չի լինում, թե քաղաքական կամ սոցիալական ինչպիսի խմբեր, ուժեր, մեծություններ են պաշտպանում որոշ առաջարկներ, միջոցառումներ և այլն, հարկավոր է միշտ դնել «Ո՞ւմ է ձեռնտու» հարցը։ ...Քաղաքականության մեջ այնքան կարևոր չէ, թե ով է անմիջականորեն պաշտպանում որոշ հայացքներ։ Կարևորն այն է, թե ում են ձեռնտու այդ հայացքները, այդ առաջարկները, այդ միջոցառումները»[1]։

Հայտնի է, որ միջազգային բանվոր դասակարգի հեղափոխական շարժման զարգացմանը զուգընթաց նախկինում առաջ են եկել ոչ պրոլետարական սոցիալիզմի մի ջարք տարատեսակություններ, որոնք, իբրև կանոն, ծագում էին մանրբուրժուական տարերքից, այսինքն՝ այն նույն տարերքից, որից սերվել են նաև ժամանակակից մանրբուրժուական «ձախերը»՝ գաղափարական հստակ պլատֆորմի բացակայությամբ հանդերձ։

Այն հարցը, թե դասակարգերից ո՞րն է կանգնած հասարակական զարգացման կենտրոնում, միշտ էլ եղել է գաղափարական սուր պայքարի առարկա գիտական կոմունիզմի և նրա հակառակորդների միջև։ Մանրբուրժուական սոցիալիզմի գաղափարախոսները ինչպես այժմ, անցյալում նույնպես հեղափոխական ուժ էին համարում կամ բանակը, կամ սովորող երիտասարդությունը, կամ լյումպեն-պրոլետարիատին ու ապադասակարգայնացված տարրերին, կամ գյուղացիությանը, բայց ոչ երբեք հեղափոխական ուժին՝ բանվոր դասակարգին։

Մերժելով վնասն այն «հեղափոխական եռանդի», որը պայմանավորված չէ տվյալ ժամանակաշրջանում պայքարի պատմական պայմաններով և ոչ էլ մասսաների շարժման անհրաժեշտությամբ, Վ. Ի. Լենինը «Կարլ Մարքսի ուսմունքի պատմական բախտը» աշխատության մեջ նշել է. «Եվրոպայում կապիտալիզմի դեմ վճռական պայքարի երկարատև հետաձգումները հուսահատության ու անարխիզմի էին

1 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 23, էջ 70.

հասցնում մասսայական պայքարի նախապատրաստման ու զարգացման պայմանների նկատմամբ անուշադիր որոշ մարդկանց»։ Չի կարելի չտեսնել, գրում էր նա, «թե որքան կարճատես ու փոքրոգի է անարխիստական հուսահատությունը»[1], որն առաջնորդում է բուրժուազիայի գաղափարական ճահիճը։

Ժխտական վերաբերմունք ունենալով մանրբուրժուական «ձախ» հեղափոխականության նկատմամբ, գաղափարական անզիջում պայքար մղելով նրա դեմ, չբաժանելով նրա ձգտումը՝ մշակելու մի այնպիսի «միակ ճիշտ քննադատական տեսություն», որը «համապատասխան լինի դասակարգային պայքարի ներկա պայմաններին», ցույց տալով նրա «ուլտրահեղափոխական» գործողությունների ողջ վնասակարությունը, մարքսիստները, սակայն, ամբողջովին հաշվից դուրս չեն նետում «ձախերի» հեղափոխական եռանդը։ Գտնելով, որ տարբերային խռովություններն ինքնին երբեք չեն նպաստել հասարակական առաջադիմությանը և այսուհետև էլ չեն նպաստի, միաժամանակ Վ. Ի. Լենինը նկատել է. «Բայց ինքնըստինքյան հասկանալի է, մենք առանց ռոմանտիկայի յոլա գնալ չենք կարող։ Ավելի լավ է այն ունենալ ավելցուկով, քան պակասորդով։ Մենք միշտ էլ համակրել ենք հեղափոխական ռոմանտիկան, նույնիսկ երբ դրան համաձայն չենք եղել։ Օրինակ, մենք միշտ ձեռնպահ ենք եղել անհատական տեռորի նկատմամբ։ Բայց մեր հիացմունքն ենք արտահայտել տեռորիստների անձնական արիության և զոհաբերության դիմելու նրանց պատրաստակամության նկատմամբ»[2]։

Հենց այս դիրքերից գնահատելով մանրբուրժուական «ձախերի» շարժումը, մարքսիստները մշտապես փնտրում են նրանց հետ հակաիմպերիալիստական միասնական գործողությունների հնարավորություններ։

Ինչպես խոշոր բուրժուազիան, այնպես էլ բանվոր դասակարգը ամեն ինչ անում են իրենց կողմը գրավելու մանր բուրժուազիային։ Արևմուտքի կապիտալիստական երկրների քաղաքի և գյուղի մանր բուրժուազիան բնակչության այն

[1] Վ. Ի. Լենին, հտգ, հ. 23, էջ 4։

[2] «Ленинский сборник», XXXVII, М., Политиздат, 1970, стр. 212.

շերտն է, որ ընդունակ է ընտրությունների ժամանակ կշեռքի նժարը թեքելու մեկ այս, մեկ այն կողմը։ Ինչպես ոչ հեռավոր անցյալում, այնպես էլ այժմ մանր բուրժուազիային իրենց կպչուն ձեռքերն աջից մեկնում են ֆաշիստները և մյուս ծայրահեղ աջերը։ Զախից մանր բուրժուազիային աշխատում են իրենց կողմը գրավել և նրա հեղափոխական եռանդն օգտագործել բանվոր դասակարգի քաղաքական կազմակերպությունները։

Պատմական զարգացման որոշակի էտապներում ակտիվ դեր հատկացնելով հասարակական միջանկյալ խավերին, մարքսիզմ-լենինիզմը գտնում է, որ այն դեպքում, երբ դրանց քաղաքական պարագլուխները հրաժարվում են վոլյունտարիզմի սկզբունքներից և իրենց գործողությունները հարմարեցնում են հասարակական զարգացման օբյեկտիվ օրինաչափություններին, ապա հեղափոխական պայքարի վերելքի դեպքում նախադրյալներ են ստեղծվում, որպեսզի հասարակության միջանկյալ մանրբուրժուական խավերը միանան պրոլետարիատին, լիովին ի հայտ բերեն իրենց հակաիմպերիալիստական տրամադրություններն ու գործողությունները։ Կոմունիստները քաղաքական միության և միասնական գործողությունների են ձգտում բուրժուական հասարակության այն բոլոր ուժերի հետ, որոնք հանդես են գալիս պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի, ռազմարդյունաբերական բյուրոկրատիայի, մոնոպոլիաների ճնշման և բոլոր բնագավառներում նրանց ազդեցության ուժեղացման դեմ, հանուն դեմոկրատական խոր վերափոխումների։ ԱՄՆ-ի կոմունիստական կուսակցության նոր ծրագրի 7-րդ գլխի «Կոմունիստները և ձախ ուժերը» ենթավերնագրի տակ ասված է. «Մենք՝ կոմունիստներս, ողջունում ենք ձախ ուժերի նոր աճը, մենք ողջունում ենք այն մարտահրավերը, որ նրանք ավելի ու ավելի համարձակորեն են նետում... գոյություն ունեցող հասարակական կարգին։ Դա միանգամայն անհրաժեշտ է հանուն սոցիալիզմի պայքարի...»[1]։ Խոսելով ժամանակակից ձախ ուժերի հետ կոմունիստների փոխհարաբերությունների մասին, Ֆրանսիա-

[1] «США: экономика, политика, идеология», № 2, 1971, стр. 101

յի կոմկուսի ղեկավարներից Ժորժ Մարշեն Մորիս Թորեզի անվան ինստիտուտի[1] կողմից հրատարակվող «Տետրեր»-ի №22-ում գրում է, որ ձախ ուժերի նոր շարժումը, հանձին Ֆրանսիայի կոմունիստների, գտել է իր աջակիցներին, չնայած վերջիններս նրանց հետ խոր տարաձայնություններ ունեն տեսության ու տակտիկայի բազմաթիվ հարցերում։

Մարքսիստ-լենինյանները հատուկ տարբերություն են դնում իմպերիալիստական բուրժուազիայի հակակոմունիզմի (որը պայմանավորված է իր դասակարգային շահերին սպառնացող կոմունիստական գաղափարախոսության ու պրակտիկայի դեմ թշնամական ակտեր կատարելու «անհրաժեշտությամբ») և բուրժուական պրոպագանդայի ազդեցության տակ ընկած մանրբուրժուական աշխատավորների մի մասի հակակոմունիստական նախապաշարումների միջև, այլ խոսքով՝ կոմունիզմի նկատմամբ համոզված թշնամանքի և գաղափարական տհասության ու քաղաքական անփորձության միջև։ Այդ է պատճառը, որ հակաիմպերիալիստական պայքարում համերաշխություն հաստատելով մանրբուրժուական ռադիկալ շարժման հետ, մարքսիստները, եթե հարկ է լինում, այդ շարժումը պաշտպանում են իմպերիալիստական բուրժուազիայի տեռորիստական գործողություններից։ Կոմունիստները չեն եղել և երբեք չեն լինի միևնույն շարքերում կապիտալիզմի «լիբերալ» կողմնակիցների հետ ընդդեմ մանրբուրժուական ռադիկալիզմի։

Եվ այսպես, մարքսիստները հաստատապես համոզված են, որ որոշակի պայմաններում ոչ պրոլետարական «ձախ» շերտերը ընդունակ են բավական ծանրակշիռ պոտենցիալ դառնալու ընդհանուր հեղափոխական պրոցեսում, որի հիմքը և առաջատար ուժը բոլոր դեպքերում մնում է պրոլետարիատը։ Խնդիրն այն է, որ այդ պոտենցիալը դրվի հեղափոխական ճիշտ հունի մեջ։

Ո՞րն է մանր բուրժուազիայի հեղափոխականությունը, որո՞նք են նրա այն սոցիալ-քաղաքական տրամադրությունները, որ կարող են օգտակար լինել պրոլետարիատին նրա դասակարգային պայքարում։

Ամենից առաջ մանր բուրժուազիան լավ է ըմբռնում, որ ֆաշիզմը պատերազմ է։ Նա նաև լավ գիտե, որ գալիք պատերազմը ոչ թե սովորական, այլ ջերմամիջուկային պատերազմ է լինելու։ Այդ բանը լավ են ըմբռնում նույնիսկ մանր բուրժուազիայի ամենասահմանափակ և հատկապես տարիքն առած շերտերը, որոնք ունեն ինչպես տաք, այնպես էլ սառը պատերազմի փորձ։

Մանր բուրժուազիայի քաղաքական կազմակերպությունները (կամ գոնե դրանց գերակշիռ մասը) հանդես են գալիս երաշխավորված խաղաղ գոյակցության, սպառազինությունների կատաղի մրցավազքի դադարեցման, բնակչության եկամուտները լափող ռազմական ծախսերի կրճատման օգտին։ Նրանք միաժամանակ ակտիվորեն հանդես են գալիս մոնոպոլիստների կամայականություններից մանր տնտեսությունների պաշտպանությամբ, գյուղացիներին ցույց տրվող ամեն տեսակ օգնության ընդլայնման օգտին։ Գործունեության նման ծրագիրը այժմ մանր բուրժուազիայի համար ավելի ընդունելի է, քան աջերի ավանտյուրիստական պլանները։ Ինչպես անցյալում էր, ապագայում նույնպես, հատկապես տնտեսական անկումների ժամանակ, լյումպեն-բուրժուազիան կձգտի դեպի ֆաշիզմ։ Բայց մանր բուրժուազիայի միջին շերտերն իրենց մեջ այնքան ուժ կգտնեն, որպեսզի չքայլեն ֆաշիզմի վտանգավոր ճանապարհով։

Մանր բուրժուազիայի անցումը ձախ ուժերի դիրքերը տեղի է ունենում դանդաղ, անհավասարաչափ, ոչ միշտ հետևողական և ոչ ամենուրեք միատեսակ համառությամբ։ Ինչպես միշտ, մեր օրերում նույնպես քաղքենին տատանվում է, նայում է չորս կողմը և, հանգամանքներից ելնելով, հեշտությամբ փոխում է դիրքը։ Բայց նրա տրամադրությունը,

1 Մորիս Թորեզի անվան ինստիտուտը Ֆրանսիայի կոմկուսի Կենտկոմի գիտահետազոտական, միաժամանակ նաև պրոպագանդիստական հաստատությունն է, որը հասարակական հիմունքներով գործում է Փարիզում, 1965 թվականից։ Ինստիտուտը հրատարակում է «Մորիս Թորեզի ինստիտուտի տետրակներ» հանդեսը (տարեկան չորս համար), որտեղ լույս են տեսնում ֆրանսիացի մարքսիստների ուսումնասիրությունները։ Ինստիտուտի ակտիվ կազմակերպիչներից և աշխատակիցներից են Վիկտոր Ժոաննեսը (դիրեկտոր), Ժան Գակոնը, Մորիս Մուասոնը, Ժան Բրյուն, Ռոլան Լերուան, Ժերմեն Վիյյարը և ուրիշներ։

այնուամենայնիվ, այն չէ, ինչպիսին էր 50-ական թվականներին կամ նույնիսկ 60-ական թվականների առաջին կեսին։ Մեր օրերում աշխատավորների հետ դաշինքի կողմն են թեքվում կամ արդեն թեքվել են Արևմտյան Եվրոպայի այնպիսի կուսակցություններ և խմբեր, ինչպիսիք են ռադիկալ-սոցիալիստները Ֆրանսիայում, հանրապետականները և ձախ կաթոլիկները Իսպանիայում կամ Կենտրոնի կուսակցությունը Ֆինլանդիայում։ Սրանք բոլորն էլ կազմակերպություններ են, որոնք արտահայտում են մանր և միջին բուրժուական շերտերի տրամադրությունները։ Այնտեղ, որտեղ այդ շերտերն ընդհարվում են ազգային խոշոր կապիտալի և միջազգային մոնոպոլիստական կապիտալի հետ, հանդես են բերում հեղափոխական ավելի մեծ եռանդ։ Դա հատկապես նկատելի է Ասիայում և Լատինական Ամերիկայում։ Այդպես, այդ շերտերը դեպի ձախ են հրում կոնգրեսականներին Հնդկաստանում, ազատություն կուսակցությանը Ցեյլոնում, ձախ բուդդայականներին Ճապոնիայում, ռադիկալ կուսակցությանը և ժողովրդական գործողությունների ձախ կաթոլիկական շարժումը Չիլիում, նման շատ ուրիշ կազմակերպությունների՝ այլ երկրներում։ Պառլամենտական ձախ և աջ ուժերի քանակական ոչ մեծ տարբերությունների պայմաններում նման կուսակցությունների և կազմակերպությունների կշիռը թերագնահատել, իհարկե, չի կարելի։

Ինչպես ասվեց, մանրբուրժուական հեղափոխականների, առանձնապես «նոր ձախերի» տեսություններում կենտրոնական տեղ են գրավում մտավորականությունը և երիտասարդությունը:

«Ձախերը» մտավորականությանը համարում են «մտավոր աշխատանքի պրոլետարիատ», երիտասարդությանը՝ «պոտենցիալ պրոլետարիատ», դրանց դիտում որպես «կորպորատիվ և սպառողական հասարակության դեմ վճռական գործողությունների ընդունակ» սոցիալական ակտիվ ուժ։

Մտավորականության, իբրև ակտիվ սոցիալական ուժի, խնդիրը մշտապես գտնվել է և այժմ էլ գտնվում է մարքսիստների ուշադրության կենտրոնում։ Նրանք գտնում են, որ մեր օրերում մտավորականությունը կարող է զգալի դեր խաղալ ձախ ուժերի միություն ստեղծելու գործում։ Եվ դա

այն պատճառով, որ նա անհամեմատ ավելի գիտակից և առաջավոր ուժ է, քան մանր բուրժուազիան։ Գիտատեխնիկական հեղափոխության ընթացքում մտավորականությունը վերաճում է խոշոր ազդեցիկ ուժի, որն անմիջականորեն կապված է արտադրության, հետևապես նաև բանվոր դասակարգի հետ։ Նրա մտածողությունը գնալով ավելի ու ավելի է ներծծվում սոցիալիզմի գաղափարախոսությամբ։ Մտավորականության տարբերիչ գծերից մեկն այն է, որ նա ատում է անարդարացի բռնությունը, հատկապես՝ ֆաշիզմը։ Մտավորականությունն, իհարկե, ավելի, քան մանր բուրժուազիան, պարզ է պատկերացնում ջերմամիջուկային պատերազմի հետևանքները։ Նա միշտ աշխատում է հեռու մնալ աջերից, որովհետև նրանցից չի կարող այլ բան սպասել, քան անհաշտելի թշնամանք, մշտական անվստահություն և հետապնդում։ Ընդհակառակն, ձախ ուժերի, մասնավորապես բանվոր դասակարգի հետ միությունը մտավորականության համար պայքարի լայն հեռանկար է բացում ինչպես տնտեսական, այնպես էլ հասարակական-քաղաքական կյանքի ասպարեզներում։

Ճիշտ է, դեպի ձախ կատարվող շրջադարձերի ժամանակ սպասողական անհամբերությունն ինտելիգենցիայի որոշակի շերտերին շատ հաճախ թեքում է դեպի անիմաստ ու վտանգավոր անարխիստական գործողությունների։ Բայց, չնայած դրան, կապիտալիստական աշխարհի մտավորականության համար ապագան մասսայական բանվորական շարժման հետ ունեցած համագործակցության մեջ է միայն։ Այլ ուղի չկա։

Բանվոր դասակարգի և մտավորականության ձախ բլոկի ստեղծման բանալին գտնվում է բանվորական շարժման երկու կուսակցությունների՝ կոմունիստական ու սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ձեռքին։ Առանց նրանց համագործակցության անհնարին է հասնել այդ ցանկալի նպատակին։

Տեսնելով կոմունիստների և մտավորականության լայն շերտերի մերձեցման հնարավորությունների աճը, բուրժուական պրոպագանդան ուժեղացնում է ոչ միայն հակակոմունիստական պայքարը, այլև պայքարը մտավորականության առաջադիմական, համադեմոկրատական շարժման դեմ։

Ռեակցիոն գաղափարախոսների ու քաղաքական գործիչների, հատկապես սոցիալ-ռեֆորմիստների նորագույն մանևրների նպատակներից մեկն է մտավորականությունը ներկայացնել որպես «հակահեղափոխական ուժ», որպես ֆաբրիկագործարանային բանվորների գլխավոր թշնամի։ Պատահական չէ, որ վերջին շրջանում Արևմուտքում ոմանք նորից փորձում են վերակենդանացնել «մախաևշչինայի»[1] հակաինտելիգենտական հայացքները։ Նման նպատակներ են հետապնդում, օրինակ, Ամստերդամում գտնվող միջազգային սոցիալ-դեմոկրատական «Սոցիալական պատմության ինստիտուտի» աշխատակիցները՝ 1969 թվականին ինստիտուտի հրատարակությամբ լույս ընծայած «Ինտելիգենտական սոցիալիզմ և բանվորական հեղափոխություն (Մախայսկու հայացքները)» վերտառությամբ աշխատության մեջ։ Նրանում պրոպագանդվում է այն տեսակետը, թե հեղափոխական մարքսիզմը «ինտելիգենտների հնարանք» է, հետևապես խորթ է ֆաբրիկագործարանային պրոլետարիատի շահերին ու աշխարհայացքին։ Ավելին, աշխատության հեղինակները կեղծելով հանրահայտ պատմական փաստերը, մի շարք դեպքերում լենինիզմին են վերագրում մախաևշչինայի տարրեր[2], չնայած քաջ հայտնի է, որ Վ. Ի. Լենինը և բոլշևիկները վճռա-

[1] Մախաևշչինան ռուսական առաջին հեղափոխության տարիներին որոշ տարածում գտած մանրբուրժուական, անարխիստական, հակապրոլետարական հոսանք էր, որը թշնամանք էր քարոզում ինտելիգենցիայի, հատկապես մարքսիստական, սոցիալիստական ինտելիգենցիայի հանդեպ։ Իր անվանումն այդ հոսանքը ստացել է սոցիալ-դեմոկրատ Վ. Մախայսկու անունից, որը պնդում էր, թե մտավորականությունը պարազիտային դասակարգ է, որն իր գիտելիքներով շահագործում է բանվոր դասակարգին։ Նա չէր ըմբռնում, որ ինտելիգենցիան ոչ թե ինքնուրույն դասակարգ է, այլ միայն սոցիալական շերտ է, որն արտացոլում է այս կամ այն դասակարգի շահերը, և, որպես կանոն, ծառայում է տվյալ հասարակության մեջ տիրապետող դասակարգին։ Մախաևշչինան էկոնոմիզմի տարատեսակություն էր, որը բանվոր դասակարգին շեղում էր քաղաքական պայքարից և պրոլետարական հեղափոխությունից։ Ինտելիգենցիայի դեմ Մախայսկու շարդարարական ագիտացիան խորթ էր առաջավոր բանվորներին։ Պրոլետարիատի կուսակցությունը միշտ անզիջում պայքար է մղել և մղում է մախաևշչինայի և նրա բոլոր արտահայտությունների դեմ։

[2] «Известия», 12 марта 1970 г.

կանորեն հանդես են եկել առաջավոր մտավորականության դերի նսեմացման, նրան բանվոր դասակարգին հակադրելու ամեն տեսակ փորձերի դեմ։

Բուրժուական երկրների միջանկյալ շերտերի, մասնավորապես մտավորականության հետ բանվոր դասակարգի հակաիմպերիալիստական քաղաքական բլոկի ստեղծումը շատ բանով պայմանավորված է այդ բլոկի նկատմամբ երիտասարդության և հատկապես ուսանող երիտասարդության վերաբերմունքով։

Կապիտալիստական երկրներում երիտասարդ սերնդի վիճակը մեր ժամանակաշրջանի սոցիալական ամենատագնապալի պրոբլեմներից մեկն է։ Մենք սովորել ենք լսել և ասել, որ երիտասարդությունը մեր ապագան է։ Դա, իհարկե, այդպես է։ Բայց ճիշտ է նաև այն, որ երիտասարդությունը շատ կողմերով հենց այսօր պայմանավորում է հասարակության քաղաքական տրամադրությունը, քանի որ մինչև 24 տարեկան մարդիկ կազմում են երկրագնդի բնակչության ավելի քան կեսը։ Երիտասարդությունը բանվոր դասակարգի, գյուղացիության, ինտելիգենցիայի զգալի մասն է, կապիտալիստական երկրների զինվորի շինել հագած 20 միլիոն մարդիկ են[1]։ Դա գնալով թվապես աճող աշակերտությունը և ուսանողությունն է։

Գիտատեխնիկական հեղափոխությունը, արագացնելով գիտության և արտադրության միաձուլումը, դրա հետ միասին արագացրել է հասարակության ինտելեկտուալացման պրոցեսը։ Ոչ հեռու անցյալում նույնիսկ միջնակարգ կրթություն ունեցողների թիվը զարգացած շատ երկրների արդյունաբերության մեջ չէր անցնում բոլոր աշխատողների 10 տոկոսից։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ԱՄՆ-ում կոլեջներ էր հաճախում 16—21 տարեկան պատանիների ու երիտասարդների 4 տոկոսը, իսկ մնացած 96 տոկոսը միայն կարդալ, գրել ու հաշվել գիտեր[2]։

1898 թվականին Եվրոպայում յուրաքանչյուր 10 հազար բնակչին ընկնում էր 4—6 ուսանող։ Ռուսաստանում ուսա-

[1] Տե՛ս «Проблемы мира и социализма», № 1, 1972, էջ 72։

[2] Տե՛ս «МЭ и МО», № 11, 1969, էջ 109։

նողությունն ավելի փոքրաքանակ վերնախավային խումբ էր։ 1899 թվականին Ռուսաստանի բոլոր համալսարաններում ուսանում էր 16 հազարից մի փոքր ավելի ուսանող, որոնց կեսից ավելին սերված էր կալվածատիրական, ազնվականական և չինովնիկական ընտանիքներից[1]։ 1913 թվականին Եվրոպայում յուրաքանչյուր 10 հազար բնակչին ընկնում էր 7—11 ուսանող[2], իսկ Ռուսաստանում՝ ընդամենը 2 ուսանող։

Վերջին 20—25 տարում, բարձրագույն դպրոցը, եթե կարելի է ասել, ապրել է «դեմոգրաֆիական պայթյուն»։ 1950 թվականին Արևմտյան Եվրոպայի երկրների, ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Ավստրալիայի բուհերում սովորում էր մոտավորապես 3,5 միլիոն մարդ, 1964 թվականին՝ 7 միլիոն[3], 1970 թվականին՝ 13 միլիոն մարդ։ 1971 թվականին կապիտալիստական բոլոր երկրներում ուսանողների թիվն անցավ 15 միլիոնից[4]։ Կապիտալիստական առանձին երկրներում աճի տեմպերն է՛լ ավելի մեծ էին։ Այսպես, եթե 1950-1964 թվականներին ԱՄՆ-ում և Կանադայում ուսանողների թիվը ավելացավ 2 անգամ, Արևմտյան Գերմանիայում՝ 3, ապա Շվեդիայում՝ մոտ 4 անգամ[5]։ 1950—1971 թվականների ընթացքում ուսանողների թիվը ավելի քան 4 անգամ աճեց Ֆինլանդիայում[6]։ 1971 թվականին 10 հազար բնակչին Իտալիայում ընկնում էր 70 ուսանող, Անգլիայում՝ 78, Ֆրանսիայում՝ 95, Ճապոնիայում՝ 109, ԱՄՆ-ում՝ 226 ուսանող[7]։

Ուսանողների թիվն արագ է աճում նաև թույլ զարգացած երկրներում։ Այսպես, Լատինական Ամերիկայում 1950—1969 թվականների ընթացքում այն 249 հազարից հասել է 1212 հազարի։ 60-ական թվականներին երկրագնդի այդ շրջանում բարձրագույն դպրոցի սովորողների թվի ամենամյա աճի միջին տեմպը կազմել է 8 տոկոս[1]։

Ուսանողության թվական կազմի արագ աճը վերջին 20 տարում մշտապես ուղեկցվել է նրա սոցիալական կազմում տեղի ունեցող մեծ փոփոխություններով։

Գիտատեխնիկական հեղափոխությունն արագ զարգացող արդյունաբերության համար մեծ թվով մասնագետների պահանջ է առաջադրում։ Կապիտալիստական զարգացած երկրներում ստեղծված կրթության սիստեմը անխուսափելիորեն «դիֆուզիայի» է ենթարկվում։ Եթե առաջներում կրթության իրավունքը բուրժուական հասարակության արտոնյալ նեղ խմբերի մենաշնորհն էր, ապա այժմ այդ իրավունքը սկսում է տարածվել նաև հասարակության քիչ արտոնյալ դասակարգերի ու շերտերի (մանավանդ մանր բուրժուազիայի), ինչպես նաև նախկինում ուսում ստանալու հնարավորություններից զրկված բանվորների և գյուղացիների վրա։

1971 թվականին ԱՄՆ-ի համալսարանների ու կոլեջների[2] 7 միլիոն սովորողների 30 տոկոսը բանվորական ծագում ուներ[3]։ Ուսանողության քանակական աճը սոցիալական լուրջ փոփոխություններով է ուղեկցվում հատկապես թույլ զարգացած երկրներում։ Արգենտինայի մայրաքաղաքի՝ Բուենոս Այրեսի համալսարանում քաղաքային միջին շերտերի ներկայացուցիչները կազմում են բոլոր ուսանողների 90 տոկոսը, իսկ Ուրուգվայում՝ 50 տոկոսը։ Այս երկրներում ուսանողության սոցիալական կազմը զգալի չափով պայմանավոր-

---

[1] Տե՛ս **В. Р. Лейкина-Свирская.** Интеллигенция в России во второй половине XIX века. М., 1971, էջ 55—56։

[2] Տե՛ս «Вопросы философии», № 9, 1971, էջ 69։

[3] Տե՛ս «Информационный бюллетень Центрального Комитета Болгарской Коммунистической партии» № 10, 1970, София, XXIV год издания, էջ 63։

[4] Տե՛ս «Литературная газета», 21 октября 1970 г.

[5] Տե՛ս Информационный бюллетень ЦК КП Болгарии, № 10, 1970, էջ 63։

[6] Տե՛ս «Проблемы мира и социализма», № 9, 1971,
Տե՛ս նաև «Коммунист», № 2, 1970, էջ 97։

[7] Տե՛ս «Вопросы философии», № 9, 1971:

---

[1] Տե՛ս «Латинская Америка», № 6, 1971, էջ 16։

[2] ԱՄՆ-ի ուսանողների թվի մասին խոսելիս պետք է նկատի ունենալ, որ ամերիկյան ոչ բոլոր կոլեջներն են համազոր եվրոպական համալսարանների առաջին աստիճանին։ Ամերիկյան կոլեջների զգալի մասը եվրոպական երկրների տեխնիկումների կամ բարձր տիպի միջնակարգ դպրոցների մակարդակին է (այս մասին տե՛ս **Л. Д. Филипова.** Структура американской высшей школы.—«США: Экономика, политика, идеология», № 1, 1971).

[3] Տե՛ս «США: экономика, политика, идеология», № 9, 1971, էջ 62։

ված է լատինամերիկյան քաղաքի յուրատեսակ բնույթով, որտեղ միջին շերտերը սոցիալ-տնտեսական և քաղաքական ակտիվ դեր են խաղում։

Չնայած կապիտալիստական երկրների ուսանող երիտասարդության սոցիալական կազմում տեղի ունեցած այս որոշակի փոփոխություններին, այնուամենայնիվ, պրոլետարական միջավայրից ելած ուսանողների տոկոսը շարունակում է այդ երկրներում շատ ցածր մնալ, որը ցույց է տալիս դրանցում բարձրագույն դպրոցի դասակարգային բնույթը, նրա անմատչելի լինելը միլիոնավոր երիտասարդ մարդկանց համար։

Վերջին տարիներին կապիտալիստական առանձին երկրներում մի շարք լրացուցիչ միջոցներ ձեռնարկելու հետևանքով ավելի է սահմանափակվել աշխատավորների երեխաների մուտքը բարձրագույն ուսումնական հաստատությունները։ Շատ համալսարաններում սահմանված է ոչ միայն ուսման, այլև ընդունելության վարձ։ Գնալով ընդլայնվում է մասնավոր ուսումնական հաստատությունների ցանցը, որտեղ սովորաբար ուսուցումը վճարովի է։ Այդ ամենի հետևանքով առանձին երկրներում ոչ միայն չի աճում, այլև ընկնում է պրոլետարական ծագում ունեցող ուսանողների տեսակարար կշիռը։ Այժմ Արևմտյան Եվրոպայում աշխատավորական ընտանիքներից սերվածները կազմում են ողջ ուսանողության 25 տոկոսից (Անգլիա, Նորվեգիա) մինչև 30 տոկոս (Իսպանիա)։ Ֆրանսիայի ուսանողության միայն 12 տոկոսն ունի բանվորական և գյուղացիական ծագում[1]։ Պատկերն առավել անմխիթարական է թույլ զարգացած երկրների մեծ մասում։ Հնդկաստանում 1978 թվականին ուսանողների միայն 0,8 տոկոսն էր սերված բանվորական և գյուղացիական ընտանիքներից։ Բրազիլիայում բանվորական միջավայրից ելած ուսանողները կազմում են ողջ ուսանողության 4 տոկոսը. Հարավային Ամերիկայի երկրների մեծ մասում այդ տոկոսն ավելի ցածր է։

Ժամանակակից երիտասարդության մասին Արևմուտքում շատ է գրվել ու խոսվել։ Ոմանք այնտեղ տագնապով են արտահայտվում նոր սերնդի մասին, ուրիշները՝ զայրույթով, երրորդները, ընդհակառակն, երիտասարդության հետ կապում են իրենց ողջ հույսերը։

Ընդամենը 15 տարի առաջ ԱՄՆ-ում և զարգացած կապիտալիստական մյուս երկրներում երիտասարդությանը համարում էին «քաղաքականապես ինդիֆերենտ ուժ», «լռակյաց սերունդ»։ Այդ ժամանակներում երիտասարդությանը տված նման բնութագրությունը, իսկապես որ, հեռու չէր ճշմարտությունից։ Քիչ բացառություններով, որպես կանոն, երիտասարդությունը չափազանց անտարբեր էր սոցիալական ու քաղաքական այն պրոբլեմների նկատմամբ, որոնք հուզում էին երկրի աշխատավոր մասսաներին, դեմոկրատական հասարակայնությանը։ Նա ընդունում էր բուրժուական հասարակության արժեքները, նրա գաղափարախոսությունը, նրա մերկանտիլ երազանքները։

Բայց ընդամենը մեկ տասնամյակի ընթացքում ամեն ինչ փոխվեց։ Դեռևս 50-ական թվականների վերջերին երիտասարդական, մասնավորապես ուսանողական շարժման առաջին նշանները երևացին ԱՄՆ-ում և Ճապոնիայում, մի քանի տարի հետո՝ նաև Արևմտյան Եվրոպայի երկրներում։ Իսկ արդեն 60-ական թվականների սկզբներից համալսարանական կյանքի պարտադիր տարրերը դարձան քաղաքական ամենատարբեր հարցերի շուրջը շաբաթներ տևող վիճաբանությունները և ներհամալսարանական թռուցիկ միտինգները։

Երիտասարդության լայն շերտերում հանկարծակի կատարված մեծ փոփոխությունների առթիվ բուրժուական թերթերի ու ամսագրերի էջերից, պրոֆեսորական ամբիոններից, պետական բարձրաստիճան պաշտոնյաներից սկսեցին տագնապալից ձայներ լսվել «երիտասարդ սերնդի խռովության» մասին։ Ամենուրեք տրվում էր պատասխանի սպասող մի հարց. «Ո՞րն է երիտասարդության արագ փոխակերպման պատճառը»։ Տագնապը բնական էր. չէ՞ որ ընդվզող ու եռացող երիտասարդությունը վաղը դառնալու է բուրժուական հասարակության արտադրական պրոցեսի գլխավոր ուժերից մեկը, լրացնելու է հետազոտական լաբորատորիաներն ու համալսարանական ամբիոնները, պաշտոնավարելու տրեստների, կարտելների ու սինդիկատների վարչական ապարատներում,

[1] *Տե՛ս* «Вопросы философии», № 9, 1971, *էջ 70։*

պատասխանատու պոստեր է գրավելու զինված ուժերում ամենից առաջ այն պատճառով, որ բանակի սպայական կազմը գնալով ավելի ու ավելի մեծ մասշտաբներով է հավաքագրվում տեխնիկական կրթություն ունեցող մարդկանց միջավայրից։

Անհրաժեշտ է նշել, որ երիտասարդական շարժումը, ընդհանրական շրջանում հանդես էր գալիս լիբերալիզմի դրոշակով, նրա ղեկավարները մերժում էին բռնության բոլոր ձևերը, իրենց հույսը կապում այն բանի հետ, որ մարդկային հարաբերություններում բարոյական բարձր սկզբունքների արմատավորման միջոցով հնարավոր կլինի արթնացնել հասարակության «նիրհող խիղճը», վերափոխել շրջապատող իրականությունը։

Շատ չանցած, երիտասարդությունը սկսեց տենդայնորեն փորձեր անել դուրս գալու այն ճահճից, որի մեջ նրան քշել են «ազատ աշխարհի» ապրելակերպը, բուրժուական կառավարությունների ներքին և արտաքին հակաժողովրդական քաղաքականությունը։ Նա բացահայտորեն ձեռնոց նետեց գոյություն ունեցող կարգերին, պայքարի դաշտ իջավ հասարակական-ինստիտուտները ջարդելու մտադրությամբ, հանուն բնակչության դեմոկրատական իրավունքների պաշտպանության, հանուն սոցիալական առաջադիմության։ Ի դեպ, երիտասարդությունն ի հայտ բերեց դեմոկրատական դիրքերից բուրժուական կարգերի և Արևմուտքի հասարակական կյանքում գոյություն ունեցող հակադեմոկրատական տենդենցների դեմ համախմբված պայքար մղելու ակնհայտ ունակություն։ Այդ համախմբված պայքարին մասնավորապես նպաստում են սովորող երիտասարդության կյանքի և ուսման պայմանները։ Բանն այն է, որ, չնայած առանձին-առանձին վեցրած երիտասարդները, մասնավորապես ուսանողները, պատկանում են հասարակության տարբեր դասակարգերի և սոցիալական շերտերի, սակայն անկասկած, նրանք օժտված են ընդհանուր գծերով, յուրահատուկ սոցիալական կեցությամբ։

Ընդվզող, բողոքող, առաջադրած հարցերին պատասխանի սպասող, ապրելու նոր ուղիներ փնտրող երիտասարդ մարդկանց թիվն այնքան մեծացավ, նրանց ձայնը սկսեց այնքան բարձր ու համառ հնչել, որ կապիտալիստական կարգերի

պաշտպաններից շատերը ստիպված են խոսել «համազգային ճգնաժամի» մասին, միաժամանակ ճիշտ նկատելով, որ այդ ճգնաժամի պատճառներից մեկն այն է, որ բուրժուական հասարակարգն այլևս ի վիճակի չէ առաջ քաշելու դրական ու հրապուրիչ գաղափարներ, որոնց հետևելու պատրաստակամություն հայտներ երիտասարդությունը։

Բուրժուական կարգերի նկատմամբ իր ակտիվ օպոզիցիայով երիտասարդությունն ուղղակի օգնության եկավ բանվոր դասակարգին, որը պայքար է մղում մոնոպոլիստական կապիտալի տիրապետության դեմ։ Զուգակցվելով բանվորական, ձախ արհմիութենական, ձախ սոցիալ-դեմոկրատական շարժումների հետ, երիտասարդական ելույթները, անկասկած, խթանեցին նաև ընդհանուր դեմոկրատական շարժումը[1]։

Բայց իր առաջացման հենց սկզբից երիտասարդական, մասնավորապես ուսանողական, շարժումը դրսևորեց նաև ակնհայտ թուլություններ։

Երիտասարդությանը հատուկ բացասման ոգին, նրա անհամբերությունը, շրջապատի նկատմամբ նրա ծայրահեղ նեգատիվիզմը, իրերի նկատմամբ սթափ հայացքների բացակայությունը, իրադրությունից անկախ համարձակ գործողությունների դիմելու նրա ձգտումը շատ դեպքում կարող են բացասական ազդեցություն ունենալ և ունենում են երիտասարդական շարժման հետագա զարգացման վրա։ Արկածախնդրական տարրերին հաճախ է հաջողվում երիտասարդական տարիքին հատուկ այս առանձնահատկություններն օգտագործել «ուլտրաձախ հեղափոխության» նպատակներին։

Վճռականապես մերժելով բուրժուական իրականությունը և գաղափարախոսությունը, ուսանող երիտասարդության մեծ մասը, սակայն, լիովին չի հաղթահարել բուրժուական հասարակարգից իր սոցիալական գաղափարական և հոգեբանական կախվածությունը։ Ուսանողները հեղափոխական շարժման մեջ են ընդգրկվում այնպես, ինչպիսին նրանք կան, ինչպիսին նրանց դարձրել է քայքայվող բուրժուական հասարակությունը։ Նրանք այդ շարժման մեջ են մտնում իրենց պատրանքներով, նախապաշարումներով, անփորձությամբ։ Նրանց արմատական թուլությունը կազմակերպվելու և համախմբվելու անկարողու-

[1] Տե՛ս «МЭ и МО», № 6, 1970, էջ 118—123։

թյունն է, գիտական հեղափոխական աշխարհայացքի բացակայությունը, որի առկայությունը նրանց կօգներ գլխավորը տարբերել երկրորդականից, բարեկամներին՝ թշնամիներից, ճշմարտությունը՝ դեմագոգիայից ու կեղծիքից։ Ժամանակակից խռովարար ուսանողության ճնշող մեծամասնությունը, հակառակ «ձախ» ռադիկալիզմի տեսաբանների կամայական կառուցումների, չի կարելի համեմատել այն մտավորականության հետ, որը սոցիալիստական գիտակցություն է մղտցնում բանվորական շարժման մեջ։

Լինելով չափազանց խայտաբղետ ու բազմատարր իր մասնակիցների կազմով, սոցիալական դրությամբ, դասակարգային շահերով, քաղաքական համոզմունքներով ու ձգտումներով, պայքարի մեթոդներով ու նպատակներով, երիտասարդական, մասնավորապես ուսանողական շարժումը շատ բարդ է, լեցուն գաղափարական ու քաղաքական հակասություններով։ Երիտասարդ սերնդի մեջ կան իսկական մարտիկներ և հարմարվողներ, մտածողներ և տգետներ, խիզախներ ու մորթապաշտներ։

Բայց եթե վերանանք Արևմուտքի երիտասարդական շարժման երկրորդական հատկանիշներից, ապա կտեսնենք, որ, չնայած նրա մասնակիցների հայացքների ու գործողությունների բազմազանությանը, այնուամենայնիվ շարժման մեջ պարզորոշ ուրվագծվում է քաղաքական չորս հիմնական ուղություն. 1. ռեակցիոն, այդ թվում նեոնացիստական, որը մշտապես ձգտում է ընդհանուր տեղաշարժի դեպի աջ, 2. սոցիալ-դեմոկրատական կամ ռեֆորմիստական, որն ընթանում է «դեմոկրատական սոցիալիզմի» դրոշի ներքո, 3. մարքսիստական-լենինյան, որը հենվում է գիտական սոցիալիզմի տեսության վրա, 4. ձախ-աղանդավորական, որն իր մեջ ընդգրկում է անարխո-սինդիկալիստական, նեոտրոցկիստական և այլ տենդենցներ։

Քաղաքական այս ուղղությունների միջև մղվող սուր պայքարն էլ հանգեցրել է մեր օրերի երիտասարդական շարժման պառակտմանը։

Բուրժուական կարգերի նկատմամբ թշնամաբար տրամադրված երիտասարդության, մասնավորապես ուսանողության

«պայթուցիկ» մասը՝ «նոր ձախ» ուսանողությունը[1] առանց երկմտանքի իրեն համարում է կապիտալիզմի ուտոպիկ քննադատ Հերբերտ Մարկուզեի հավատարիմ հետևորդը։

Եվ իսկապես, եթե այժմյան ուսանողական «խռովությունների» գաղափարական բովանդակությունը համեմատենք Մարկուզեի հայացքների հետ, ապա կտեսնենք, որ այդ խռովությանը հատուկ բոլոր գծերն իրենց տեսական հիմնավորումն են գտել նրա աշխատություններում և, երկրորդ. անմիջապես պարզ կդառնա, որ ուսանողական խռովությունը և մարկուզեականությունը գաղափարական տեսակետից ակնհայտորեն համընկնում են։ Խռովարար ուսանողները չեն մոռանում մշտապես հայտարարել, թե իրենք հավատարիմ սոցիալիստներ են, թեպետև նրանց գլխում սոցիալիստական հայացքների պատառիկները, որոնք վերցված են Մարքսից ու Լենինից, Վայտլինգից ու Բակունինից, Բլանկիից և Տրոցկուց, խառնված են ոչ սոցիալիստական ամենատարբեր տեսությունների հետ։ Պատկերը նույնն է Մարկուզեի մոտ։ Խռովարար ուսանողները դասակարգային պայքարի ասպարեզ են իջնում և՛ կոմունիզմի կարմիր դրոշի, և՛ անարխիզմի սև դրոշի տակ, օր առաջ ցանկանում են տեսնել շրջապատող հասարակական հարաբերությունների մահը, պահանջում են կոմունիզմի սկզբունքներն իրականացնել առանց հետաձգելու, անմիջապես, հենց այսօր։ Նույն առաքելությամբ ու նույն պահանջներով է գործունեության դաշտ իջնում նաև Հերբերտ Մարկուզեն։ Հանձին Մարկուզեի ուսմունքի, ուսանողության «խռովարար» մասը

[1] Բուրժուական երկրներում ուսանողության ամբողջ մասսան չէ, որ մասնակցում է քաղաքական կյանքին։ Ամերիկյան գրականության մեջ տարբեր տվյալներ են բերվում ընդվզող երիտասարդության թվի վերաբերյալ։ 1968 թ. հունիսին Գելլապի ինստիտուտի կողմից անցկացված հարցադրման համաձայն սիստեմի դեմ բողոքի շարժմանը մասնակցում է ԱՄՆ-ի ուսանողության 20 տոկոսը։ Ամերիկյան սոցիոլոգ Ս. Լիպսետը գտնում է, որ երկրի 7 միլիոն ուսանողներից ծայրահեղ ռադիկալ հայացքներ են պաշտպանում միայն «նոր ձախերի» առավել ազդեցիկ և ուժեղ «Ուսանողներ՝ հանուն դեմոկրատական հասարակության» կազմակերպության 7 հազար անդամները և մոտավորապես 25 հազար ուսանողներ էլ աջակցում են «նոր ձախերին»։ Իրականում «նոր ձախ» ուսանողության թիվը շատ ավելի մեծ է։

գտել է իր սոցիալական բողոքի տեսական հիմնավորումը։ Մյուս կողմից, ուսանողական շարժումը եղել է սոցիալական այն միջավայրը, որտեղ Մարկուզեի հայացքները լայնորեն տարածվել և աջակցություն են գտել։

Ուսանողական «խռովության» գաղափարների հանդիպում ենք նաև ուրիշ տեսաբանների՝ Թ. Ադորնոյի, Յու. Հաբերմասի, Ժան Պոլ-Սարտրի, Է. Ֆրոմի, Ռ. Միլսի, Դ. Ռիսմենի, Պ. Հուդմենի, Ն. Խոմսկու, Ա. Կամյուի, «Պրակսիս» ամսագրի (Զագրեբ) շատ հոդվածների հեղինակների մոտ, որոնք իրենց ուշադրությունը կենտրոնացնում են ժամանակակից «ինդուստրիալ հասարակության» մեջ մարդու ճնշման, «տեխնիկական քաղաքակրթության» արատների բացահայտմանը, ինչպես նաև քաղաքական այն դեկլարացիաներում, որոնք գալիս են Պեկինից։ Ուսանողների մոտ հակայական հեղինակություն է վայելում Չե Գևարան։ Սակայն ընդվզող երիտասարդության հոգևոր առաջնորդը, այնուամենայնիվ, Հերբերտ Մարկուզեն է։

Իսկ ինչո՞ւ ուսանողության շրջանում Մարկուզեի տեսակետներն ավելի ազդեցիկ են, քան «Ֆրանկֆուրտյան դպրոցի» մյուս ներկայացուցիչներինը։ Դա մի շարք պատճառներ ունի։

Ամենից առաջ նշենք, որ ուսանողական խռովություններն ամենից ուժգին պոռթկացին ու տարածում գտան կապիտալիստական աշխարհի երկու խոշոր երկրներում՝ ԱՄՆ-ում և ԳՖՀ-ում։ Մարկուզեն ապրել և ստեղծագործել է հենց այդ երկու երկրներում։ Իր աշխատությունները նա գրում էր երկու լեզվով՝ գերմաներեն և անգլերեն։

Մարկուզեի տեսությունն էկլեկտիկ կերպով միավորում է Արևմուտքում, մասնավորապես ԱՄՆ-ում և ԳՖՀ-ում վերջին մեկ-երկու տասնամյակում հանդես եկած «ձախ» սոցիալ-դեմոկրատական գաղափարները։ Հասկանալի պատճառներով որոնք չէին կարող «խռովարար» ուսանողների մոտ աջակցություն գտնել։ Նախքան ուսանողների միջավայր թափանցելը, դրանք պետք է բեկվեին, տրանսֆորմացիայի ենթարկվեին, թաքնվեին մի ուրիշ, հարմար «շեղոք» ուսմունքի մեջ։ Եվ դա եղավ Մարկուզեի ուսմունքը։

Պետք է նկատի ունենալ նաև, որ ԱՄՆ-ի և ԳՖՀ-ի բան-

վորական շարժման վրա համեմատաբար թույլ է մարքս-լենինյան գաղափարախոսության ազդեցությունը։ Այս հանգամանքը գործունեության լայն ասպարեզ է տրամադրում ուսանողական «խռովությունների» պաշտպանությամբ հանդես եկող ամեն տեսակ «ռադիկալիստական» հոսանքներին։ Նրման հոսանքների թվում մարկուզեականությունն առավել հրապուրիչ եղավ ուսանող «խռովարարների» համար։

Այնուհետև, ոչ պակաս կարևոր է նաև այն, որ Մարկուզեն, ի տարբերություն մյուս «քննադատական աստղերի» (Ադորնո, Հաբերմաս և ուրիշներ), քաղաքականության մեջ միշտ եղել է գործուն մարդ, համարյա մշտապես օպոզիցիայի մեջ է գտնվել սիստեմի նկատմամբ, ակտիվ մասնակցություն է ունեցել սևամորթ բնակչության ճնշման դեմ ուղղված բողոքի շարժմանը, հանդես է եկել ընդդեմ Վիետնամում ամերիկյան ագրեսիայի։

Ինտելիգենցիայի որոշակի շրջանների վրա Մարկուզեի ազդեցության մյուս պատճառը նրա տեսության ուժեղ և թույլ կողմերի յուրատեսակ զուգակցման մեջ է։ Մարկուզեն հիանալի նկարագրում և ուշադիր վերլուծում է կապիտալիզմի պայմաններում տեղի ունեցող հակաբանական, հակամարդկային երևույթները, մերկացնում է դրանք։ Դրա հետ միասին նա չի ձերբազատվում հակակոմունիստական տրամադրություններից և «սովետական սիստեմի» դեմ իր հարձակումներով փաստորեն կանգնում է գոյություն ունեցող կապիտալիստական սիստեմի պաշտպանության դիրքերում։ Նա պաշտպանում է այն ճիշտ դրությունը, որ ինքն ապրում է դասակարգային հակասությունների մեջ և որ Արևմուտքում հեղափոխությունը հրամայական անհրաժեշտություն է։ Սակայն նա չի ըմբռնում ժամանակակից պայմաններում դասակարգային պայքարի և հեղափոխության ձևերի ու մեթոդների կոնկրետ ուղիների դիալեկտիկան։ Ընդհակառակն, դասակարգային պայքարը նա փոխարինում է «մեծագույն դիմադրողականությամբ», հեղափոխական գիտությունը՝ ուտոպիայով և բարոյական կոչերով։

Որո՞նք են զարգացած կապիտալիստական երկրներում երիտասարդական շարժման բուռն վերելքի պատճառները, պայքարի ինչպիսի՞ մեթոդների են դիմում սիստեմին ձեռնոց նետած երիտասարդ մարդիկ։

Երիտասարդական շարժման հիմնական պատճառը տնտեսականն է, երիտասարդության նյութական ծանր վիճակը։ Նա հասարակության ակտիվ ստեղծագործող մասն է, կապիտալիստական արտադրական պրոցեսի հիմնական ուժերից մեկը։ Ժամանակակից որևէ երկրի տնտեսական կյանքը չի կարելի պատկերացնել առանց երիտասարդության։ Այս հանգամանքը առիթ է տվել «ձախ» ռադիկալիստական շարժման տեսաբաններին ու պարագլուխներին երիտասարդությանը ներկայացնել որպես «նոր հեղափոխական դասակարգ»։ Այսպես, ամերիկյան սոցիոլոգներ Ջ. և Մ. Ռաունտրիները գրում են, որ ԱՄՆ-ում կապիտալիզմն այժմ հասել է այսպես կոչված «վարչական իմպերիալիզմի» աստիճանի, որի գլխավոր առանձնահատկությունը տնտեսության երկու ճյուղերի՝ «գիտելիքների ինդուստրիայի» և «պատերազմի ինդուստրիայի» (ներառյալ ռազմական արդյունաբերությունն ու բանակը) մեծ աճն է։ Այդ երկու ճյուղերն էլ լցանում են երիտասարդության մեծ մասը։ Ուստի կարելի է եզրակացնել, գրում են նրանք, որ «տնտեսական շահագործման օբյեկտը հիմնականում երիտասարդությունն է, որը գնալով ձեռք է բերում ամերիկյան հասարակության նոր դասակարգի դեր»[1]։

Երիտասարդ մարդկանց զգալի մասը ավելի ու ավելի պարզորոշ է ըմբռնում, որ բուրժուական հասարակությունն ի վիճակի չէ լուծելու նրանց արմատական, կենսական հարցերը, ապահովելու հուսալի ապագա։

Երիտասարդության համար իսկական չարիք է գործազրկությունը։ Ամերիկյան հայտնի տնտեսագետ Ռոբերտ Տիբոլդը գրում է. «Այն հասարակությունը, որտեղ յուրաքանչյուր հինգերորդ երիտասարդը, իսկ նեգր երիտասարդներից յուրաքանչյուր երրորդը գործազուրկ է, չի կարող կենսունակ համարվել։ Այդպիսի հասարակությունը գնում է դեպի կործանում»[2]։

Բուրժուական գաղափարախոսներից շատերն ընդունում են, որ կապիտալիստական հասարակարգն անընդունակ է լուծելու երիտասարդության գործազրկության պրոբլեմը։ Վիճակագրությունը տալիս է միանգամայն տխուր թվեր. 1963 թվականի դեկտեմբերին ԱՄՆ-ում հաշվվում էր 1,2 միլիոն երիտասարդ գործազուրկ։ 1972 թվականի փետրվարին տեղի ունեցած ԱՄՆ-ի կոմկուսի XX համագումարին տված հաշվետվության մեջ գլխավոր քարտուղար Հես Հոլլը մասնավորապես նշեց, որ նույնիսկ կառավարության տվյալներով 1971 թվականին երկրում եղել է 16-ից մինչև 24 տարեկան տարիքի 2,4 միլիոն գործազուրկ, այսինքն՝ ավելի շատ, քան ետպատերազմյան որևէ տարում։ Այժմ ԱՄՆ-ի յուրաքանչյուր երկու գործազուրկից մեկը երիտասարդ է։ Նոր միջնակարգ կրթություն ստացած երիտասարդության մեջ գործազուրկները երեք անգամ գերազանցում են գործազրկության ազգային միջին մակարդակը[1]։ Չնայած կառավարության ձեռնարկած կիսատ-պռատ միջոցառումներին, երիտասարդության գործազրկությունը խիստ ընդգծված աճող տենդենց ունի։

Խրոնիկ գործազրկության պատճառով կապիտալիստական երկրների հազարավոր պատանիներ ու աղջիկներ աստիճանաբար համոզվում են, որ բուրժուական կառավարություններն անկարող են լուծել այդ բարդ պրոբլեմը, որովհետև նրանք կանգնած են իմպերիալիզմի և մոնոպոլիստական օլիգարխիայի շահերի պաշտպանության դիրքերում։

Բայց գործազրկությունը երիտասարդության խռովության տնտեսական պատճառներից միակը չէ։ ԱՄՆ-ի գերագույն դատարանի նախկին նախագահ Ուորենը մի առիթով նշել է, որ ամերիկյան երիտասարդության դժգոհության պատճառները, գործազրկությունից բացի, հանդիսանում են՝ թանկության աճը, աղքատությունը, կենսապայմանների վատթարացումը, ռեպրեսիաները, փոքրամասնությունների, հատկապես աֆրիկյան ծագում ունեցող ամերիկացիների իրավազուրկ վիճակը[2]։ Դրանք կարելի է լրացնել նաև ուրիշ պատճառներով՝ գնալով վատթարացող բնակարանային պայմաններն ու բնակ-

[1] «Политическое самообразование», № 2, 1970, стр. 51.

[2] *Մեջբերումը կատարված է Ալեքսանդր Բորշչեգովսկու* Толпа одинаковых *գրքից* (Изд-во политической литературы, М., 1967, стр. 13).

[1] *Տե՛ս* С. Н. Иконникова. Их судьба (социологические заметки о молодежи США), Ленинград, 1968, изд-во «Знание», *էջ* 10; «Новое время», № 22, 1970, *էջ* 7; «Правда», 20 февраля 1972 г.

[2] *Տե՛ս* «Новое время», № 22, 1970, *էջ* 7։

վարձի աճը, հիվանդանոցների ու դպրոցների պակասը և այլն։

Ինչպես ամբողջությամբ վերցրած երիտասարդության, նրա առավել կրթված մասի՝ ուսանողության խռովության հիմնական պատճառը նույնպես տնտեսականն է։ Սրանից 20—30 տարի առաջ, երբ խոսում էին ուսանողների մասին, ապա նկատի ունեին, որ ավարտելուց հետո նրանք համալրելու են կապիտալիստների շարքերը կամ բարձր պաշտոններ են զբաղեցնելու կապիտալիստական արդյունաբերության մեջ ու պետական ապարատում։ Այժմ ուսանողների սոցիալական կազմում տեղի ունեցած մեծ փոփոխությունների պատճառով էապես փոխվել է դրությունը։ Դա Արևմուտքի տնտեսագետներից ու սոցիոլոգներից ոմանց առիթ է տվել այն կարծիքը հայտնել, որ եթե նախկինում ուսանողությունն իրենից ներկայացնում էր «նախաբուրժուազիա», ապա այժմ զգալի չափով դարձել է «նախապրոլետարիատ»։ Ինչ խոսք, որ այստեղ ճշմարտության մեծ բաժին կա. իրոք, ժամանակակից ուսանողության մեծ մասն իր սոցիալ-տնտեսական պայմաններով շատ է մոտենում պրոլետարիատին։ Ինքը՝ ուսանողությունը, մասնակիորեն զգացել ու ըմբռնել է, որ ինչ-որ միջանկյալ տեղ է գրավում բուրժուական ինտելիգենտական խավի և վարձու բանվորների միջև։ Երիտասարդական շարժման հետազոտողներից մեկը նկատել է, որ «նրանք, ովքեր ինչ-որ ժամանակ բուրժուա դառնալու թեկնածու էին, հարցնում են, թե արդյո՞ք այժմ իրենք վարձու բանվորի թեկնածու չեն»։

Սոցիալական բախտի ու անձնական ապագայի հետ մեծ հույսեր չկապող ուսանողներին մտահոգում են նաև մի շարք ուրիշ կոնկրետ ու կենսական հարցեր. alma mater-ը թողնելուց հետո իրենք ինչպե՞ս պետք է «ինտեգրացվեն» սիստեմի մեջ և կրեն կապիտալիստական կարգերի ողջ սարսափները, արդյո՞ք կարող են ուժերն ու գիտելիքները գործադրել այն երկրներում, որոնցում իրենց թվական աճն առաջ է անցնում որակյալ կադրերի պահանջներից։

Ուսանողների ներկա սերունդը գնալով ավելի ու ավելի պարզորոշ է տեսնում այն հակասությունը, որ գոյություն ունի կապիտալիստական իրականության ջատագովների ու պրոպագանդիստների դեմոկրատական ու հումանիստական ֆրազների

և այդ նույն իրականության ռեակցիոն էության մեջ։ Նա լավ գիտե, որ հարյուրհազարավոր ու միլիոնավոր ուսանողների միայն մի չնչին մասն է ապրում կապիտալիստ մենեջերների և բարձր պաշտոնյա բյուրոկրատների բարեկեցիկ կյանքով և որ այդ ուսանողների մեծ մասը վաղը ստիպված կլինի քայլել դեպի վարձու աշխատանքի շուկա։ Նրանց առջև աշխատանքի ինտենսիվացման նույն հեռանկարն է (իսկ մեր ժամանակներում այն դարձել է վարձու աշխատանքի շահագործման գլխավոր մեթոդը), գործազրկության նույն սպառնալիքը, ինչպիսին կանգնած է իրենց մկանների ուժը կապիտալիստներին վաճառող արդյունաբերական բանվորների առջև։

Օրինակ, պաշտոնական տվյալներով Ֆրանսիայում ներկայումս համալսարան ավարտողների միայն մեկ երրորդը կարող է իր մասնագիտությամբ աշխատանք ստանալու հույս ունենալ։ Հատկապես մռայլ է հումանիտար և հասարակական գիտություններին հետևող ուսանողների հեռանկարը։ Այդ երկրում հոգեբանության մեջ մասնագիտացած 10 ուսանողից միայն երկու հոգի կարող են աշխատանքի տեղավորվել, իսկ սոցիոլոգիական մասնագիտություն ստացած նույնքան ուսանողից աշխատանք գտնելու հույս կարող է ունենալ միայն մեկը։

Աշխատավորներից սերված ուսանողները տնտեսական ծանր պայմաններում են գտնվում ուսուցման բոլոր օղակներում։ Սրանք, վճարելով ուսման վարձ, որպես կանոն, թոշակ չեն ստանում (Ֆրանսիայում, օրինակ, թոշակ է տրվում ուսանողների միայն 15 տոկոսին), ապրում են խիտ բնակեցված ու կոմունալ-կենցաղային հարմարություններից զուրկ հանրակացարաններում։ ԱՄՆ-ում, Անգլիայում, Ֆրանսիայում համալսարանական ուսանողների 30—40 տոկոսը ստիպված է սովորելուն զուգընթաց աշխատել և ապրուստի միջոցներ հայթայթել։ Պաշտոնական տվյալների համաձայն այդ կատեգորիան Իտալիայում կազմում է 55 տոկոս, Իսպանիայում՝ 57, Արգենտինայում՝ 60—70, Ուրուգվայում՝ մոտ 60, Գվատեմալայում՝ մոտ 80 տոկոս։ Սովորաբար այդ կատեգորիայի ուսանողները զբաղեցնում են գրասենյակային ծառայողների, տարրական դպրոցների դասատուների և այլ ցածր վարձատրվող պաշտոններ։

Ուսանողության հիմնական մասսայի համար ուսումնառության շրջանում գոյության միջոցների հարցն ավելի ու ավելի մեծ դեր է խաղում հատկապես այն պատճառով, որ ուսման տևողությունը երկարում է, և ուսանողները համարյա մինչև երեսուն տարեկան մնում են նյութապես կախված վիճակում։

Այսպիսով, արդեն ուսումնառության տարիներին մեծաթիվ ուսանողներ շահագործման օբյեկտ են դառնում և անմիջականորեն ընդհարվում կապիտալիստական հասարակության տնտեսական ու քաղաքական կենսական պրոբլեմներին։ Դա, ինչ խոսք, նպաստում է նրանց դասակարգային գիտակցության ձևավորմանը։

Այսքանից հետո պատահական չէ, որ ուսանողներին ավելի ու ավելի հաճախ կարելի է տեսնել իրենց տնտեսական պայմանների բարելավման համար պայքարի դուրս եկած բանվորների ու գյուղացիների շարքերում։ Այսպես, 1978 թ. մարտին ԱՄՆ-ի Բոստոն քաղաքի ուսանողների մի զգալի մասը կոմունալ ձեռնարկությունների բանվորների հետ միասին ցույցի էր դուրս եկել, պահանջելով ավելացնել վերջիններիս աշխատավարձը։ Նույն թվականին «Ուսանողներ՝ հանուն դեմոկրատական հասարակության» կազմակերպության անդամները ամենաակտիվ մասնակցություն ունեցան Կալիֆոռնիայի գյուղատնտեսական բանվորների գործադուլին։

Երիտասարդական օպոզիցիայի մյուս պատճառը քաղաքականն է։ Մեր օրերի երիտասարդ մարդիկ ապրում են շրջադարձային դարաշրջանում, երբ ամբողջ աշխարհում մեծապես սրվել է հակամարտությունը առաջադիմական և հետադիմական ուժերի, սոցիալիզմի և իմպերիալիզմի միջև։ Ամենուրեք անդիջում պայքար է մղվում տնտեսության, քաղաքականության, գաղափարախոսության, կուլտուրայի բնագավառներում, կռիվ է գնում մարդկանց մտքերի ու հոգու վրա իշխելու համար։ Բնական է, որ այդ պայքարից երիտասարդությունը դուրս մնալ չի կարող։

Բայց պետք է նկատի ունենալ, որ մեր օրերի երիտասարդության զգալի մասն ակտիվ պայքարի մեջ է մտնում այդ պայքարի համար չնախապատրաստված։ Բանն այն է, որ երիտասարդ սերունդը, որը ծնվել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, ռազմաճակատային խրամատների, դիմադրության շարժման, կենաց ու մահու պայքարի մասին գիտե միայն գրքերից ու մեծահասակների պատմածներից։ Նա չի տեսել այն ահավոր զրկանքները, որ նախորդ սերունդը կրել է պատերազմի տարիներին։

Այս ամենը ճիշտ է։ Բայց ճշմարիտ է նաև այն, որ մեր օրերի խաղաղ պայմաններում նույնպես երիտասարդությունը պայքարի է գնում, ցանկանում է գործել և իր երազանքների իրականացման համար համակվում է բուռն ձգտումով՝ գրտնվել ժամանակաշրջանի քաղաքական իրադարձությունների կենտրոնում, ակտիվ մասնակցություն ունենալ հասարակական-քաղաքական կյանքին, ողջ ուժերն ու եռանդը տրամադրել սեփական երկրի բարգավաճմանը, այնտեղ մարդկային արդարացի հարաբերությունների ստեղծմանը։

Այդպիսի իրադարձության մեջ հատկապես բուրժուական և մանրբուրժուական միջավայրից սերված, պրոլետարական աշխատանքի և դասակարգային պայքարի դպրոց չանցած շատ երիտասարդ մարդկանց ոգևորությունն անխուսափելիորեն մեծ ծավալներ է ընդունում։ Շրջապատող իրականությունը նրանք ընկալում են որպես շատ սովորական ու գորշ մի բան։ Նրանց կարծիքով, այդ պայմաններում հակաիմպերիալիստական ուժերի կիրառած պայքարի ձևերը (հատկապես պայքարի պառլամենտական, պրոպագանդիստական, տնտեսական ձևերը) միանգամայն անբավարար են, անմիտ, դրանք թելադրված են ավագ սերունդների անվճռականությամբ ու հաշտվողականությամբ (չմբռնելով, որ իսկական հեղափոխական ուժերը բնավ էլ չեն սահմանափակվում պայքարի միայն այդ ձևով)։

1968 թվականի մայիսին Ֆրանսիայում ծագած պրոլետարիատի և ուսանողության հակաիմպերիալիստական հզոր շարժմանը, որը մինչև հիմքերը ցնցեց երկրի տնտեսական ու քաղաքական ողջ կառուցվածքը, անմիջականորեն զուգորդեցին «ձախ» ռադիկալիստական պայքարի ձևերը՝ հարձակում մունիցիպալիտետների և իշխանության տեղական մյուս օրգանների վրա, նյութական արժեքների ոչնչացում և այլն։

Ուսանողների քաղաքական ակտիվությունը մեծապես աճել է Արևմտյան Գերմանիայում և Արևմտյան Բեռլինում։ Արև-

մտագերմանական ուսանողական շարժման ղեկավարներից Բեռնդ Ռաբելի խոսքերով ասած, «նոր ձախերի» դրոշով հանդես եկող ուսանողությունը ուղղակի «սարսափի է մատնել բուրժուազիային», որը սկսում է համոզվել, որ դասակարգային հարաբերական խաղաղության ժամանակաշրջանը մոտենում է ավարտին։ Հուզումները տարածվեցին նաև այն ուսումնական հաստատություններում, որոնք հարյուրամյակներ շարունակ պահպանողականների ամրոց էին։ Արևմտագերմանական խռովարար ուսանողները զայրույթ են արտահայտում երկրում նեոֆաշիզմի ակտիվացման, երիտասարդությանը բունդեսվեր զորակոչելու, ռեակցիոն արհմիությունների քաղաքականության դեմ։ Նրանք բազմիցս ընդհարվեցին մամուլի խոշորագույն մոնոպոլիստական ընկերության՝ Շպրինգերի կոնցեռնի հետ, որն ամեն ինչ անում է հասարակական կարծիքը ռևանշիզմի և ռեակցիայի ոգով մշակելու համար։

Ֆրանկոյական դիկտատուրայի դեմ ակտիվ պայքար էին մղում Իսպանիայի ուսանողները, որոնց առաջին շարքերում գնում էին կոմունիստները։ 1968 թվականի ապրիլի վերջերին և մայիսի սկզբներին բանվորների հետ միասին ուսանողները հակակառավարական ցույցերի դուրս եկան Մադրիդում, Բարսելոնայում, Գրենադայում, Սարագոսայում, Վալենսիայում, բարձրացրին կարմիր դրոշակներ, կառուցեցին բարիկադներ, մարտեր մղեցին ոստիկանության դեմ։ Այդ նույն բանը կրկնվեց 1969 թվականի գարնանն ու աշնանը։ Ֆրանկոյական դիկտատուրայի վերացումից հետո ուսանողական շարժումը շարունակում է մնալ Իսպանիայի քաղաքական կյանքի անբաժան մասը։

Վերջին տարիներս երիտասարդական շարժման, հատկապես ուսանողական խռովության բազմաթիվ բռնկումներ են եղել Իտալիայում, սկանդինավյան երկրներում, Ճապոնիայում։ Շարժումը տարածվել է Ատլանտյան օվկիանոսից այն կողմ, ընդգրկել ԱՄՆ-ի և Կանադայի[1] համալսարաններն ու կոլեջները։

[1] Կանադայի համալսարաններում ուսանողական հուզումների լայն ծավալի մասին տե՛ս **А. Шлихтер**. Бурлят университеты Канады («МЭ и МО», № 5, 1971 г.).

Քաղաքական հողի վրա ուսանողական շարժումները լայն ծավալ են ստացել ոչ միայն զարգացած կապիտալիստական, այլև մի շարք զարգացող երկրներում։ Այստեղ մասսայական հակաիմպերիալիստական գործողությունները մեծապես նրպաստում են պրոլետարիատի և գյուղացիության հետ ուսանողների մերձեցմանը։

Ուսանողների ելույթները սուր բնույթ են ստանում մանավանդ Լատինական Ամերիկայի երկրներում, ամենից առաջ Մեքսիկայում, Արգենտինայում, Վենեսուելայում, որտեղ նրանք ակտիվորեն մասնակցում են այն պայքարին, որ ժողովրդական լայն մասսաները մղում են այդ երկրների նեոքին գործերին ԱՄՆ-ի միջամտության դեմ։ Լատինաամերիկյան երկրների մյուս մասի երիտասարդության պայքարն ուղղված է օլիգարխիայի միահեծանության, զինվորական խունտաների ռազմաոստիկանական դիկտատուրաների, բացահայտ լակեյական ռեժիմների, օրինականացված կորուպցիայի դեմ, հանուն ազգային անկախության և ազգային արժանապատվության, քաղաքական և քաղաքացիական ազատությունների։

Այսպիսով, իր իրավունքներին ձգտող ուսանող երիտասարդությունը ամենուրեք ուղղակի կոնֆլիկտի մեջ է մտել բուրժուական պետության ռեպրեսիվ մեխանիզմի հետ։ Ըստ որում նկատելի է, որ բուրժուական պետական մեքենայի համար «առավել անհանգիստ տարրերը», բնականաբար, այն ուսանողներն են, որոնք ուսումնասիրում են հասարակական-քաղաքական գիտությունները։

Երիտասարդության օպոզիցիայի քաղաքական պատճառների թվում կարևոր է **իմպերիալիստական տեռությունների ագրեսիվ արտաքին քաղաքականությունը**։

Կապիտալիստական երկրների ուսանող երիտասարդությունն ակտիվորեն հանդես է գալիս բուրժուական կառավարությունների՝ պատերազմի ու միլիտարիզմի քաղաքականության դեմ, ցույցեր է կազմակերպում ընդդեմ մոնոպոլիաների, որոնք հարստանում են միջուկային, քիմիական, բակտերեոլոգիական զենքի արտադրությունից։

Ամերիկյան երիտասարդության հակաիմպերիալիստական շարժման խթաններից էր Հարավարևելյան Ասիայում ԱՄՆ-ի մղած պատերազմը, որը նա համարում էր անբարոյական,

անմիտ ու գարշելի։ Հնդկաչինում մղվող պատերազմը շատ ակնառու ցույց տվեց, որ երիտասարդությունը դեմ է դրան և բնավ էլ ցանկություն չունի թնդանոթի միս դառնալու իրեն խորթ իմպերիալիստական ավանտյուրայի մեջ։ «Ուսանողներից շատերը նախընտրում են սպանել և սպանվել հեղափոխության ընթացքում, այստեղ, տանը, քան արտասահմանում մասնակցել մարդուն անբարոյականացնող պատերազմի»,— ուսանողական բունտերի առթիվ իր մտահոգությունն այսպես է արտահայտել ամերիկյան պրոֆեսորներից մեկը։

Ընդամենը մի քանի տարի առաջ ուսանողներից միայն քչերն էին հավաքվում փոքր միտինգների, որտեղ, որպես բողոքի ամենաբարձր արտահայտություն, այրում էին իրենց զինվորական գրքույկները։ 1964 թվականի աշնանը ամերիկյան բուհերի լայն ցանցի մեջ «անկարգությունների» հիմնական և միակ վայրը Կալիֆոռնիայի (Բերկլիի) 100 հազար ուսանող ունեցող համալսարանն էր, որտեղ շարժում էր սկսվել «խոսքի ազատության համար»։

Գնալով պատկերը լիովին փոխվեց։ Համեմատության համար նշենք, որ 1970 թվականին ամերիկյան զորքերի Կամպուչիա կատարած ներխուժման կապակցությամբ, նահանգապետ Ռոնալդ Ռեյգանը, որպես նախազգուշական միջոցառում, «փակեց» Կալիֆոռնիայի նահանգի բոլոր 121 ուսանողական ավանները (կեմպուսները)։ Միայն 1969 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 1970 թվականի փետրվարի 1-ը «Կեղտոտ պատերազմի էսկալացիային պատասխանենք հակապատերազմական էսկալացիայով» լոզունգով ԱՄՆ-ի համալսարաններում տեղի են ունեցել 375 ցույց, հրդեհի ու պայթյունի 30 և վարչական շենքերի գրավման 50 դեպք։ 1970 թվականի մայիսին ԱՄՆ-ում ծայր առած ուսանողների համընդհանուր գործադուլը ընդգրկեց երկրի մոտավորապես 500 կոլեջ և համալսարան։ Իսկ ամբողջ 1969/1970 ուսումնական տարում երկրում տեղի է ունեցել ուսանողական մոտ 100 ցույց, 450 բուհերում առաջացել են դասադուլներ։

Վաշինգտոնի հնդկաչինյան ավանտյուրայի դեմ ամերիկյան երիտասարդությունն իր բողոքն արտահայտում էր բազմազան ձևերով ու մեթոդներով։ Պայքար էր ծավալվում երիտասարդների զորակոչման դեմ, հրատարակվում էին հակապատերազմական թռուցիկներ, կազմակերպվում էին մասսայական ցույցեր խաղաղության օգտին։ 1968 թվականի ապրիլի 26-ին Վիետնամում մղվող հանցագործ պատերազմի դեմ անցկացվեց համազգային ուսանողական դասադուլ։ Խուսափելով զորակոչից, արտասահմանյան երկրներ, ամենից առաջ Կանադա էին փախչում տասնյակ հազարավոր ուսանողներ (չնայած ԱՄՆ վերադառնալուց նրանք դատապարտվում էին հինգ տարվա բանտարկության)։ Գնալով ավելի ու ավելի մեծ թվով երիտասարդներ էին լքում բանակի շարքերը։ Հենց ԱՄՆ-ում ծառայող մեծ թվով զինվորներ ու ծովայիններ մասնակցում էին երիտասարդության հակապատերազմական ցույցերին։ Ինչպես երկրում, այնպես էլ արտասահմանում տեղադրված ամերիկյան ռազմական շատ բազաներում ստեղծվել էին հակապատերազմական կազմակերպություններ ու բաժանմունքներ։ Միայն 1969 թվականին ամերիկյան զորամիավորումներից փախել էր 56,5 հազար զինվոր[1]։

Ամերիկյան կառավարությունը դաժան հաշվեհարդար էր տեսնում ավելի ու ավելի ծավալվող երիտասարդական և ուսանողական հակապատերազմական շարժման մասնակիցների հետ։ Հաղարավոր երիտասարդներ բանտերն էին նետվում ռազմական ծառայության չներկայանալու համար։ Միայն 1969 թվականի վերջերին և 1970 թվականի սկզբներին ամերիկյան համալսարաններում կատարվել է 1600 ձերբակալություն։ Մասսայական երևույթ էին դարձել ազգային գվարդիայի հետ ուսանողների ընդհարումները։ Այդ ընդհարումները ոչ միայն օրերով, այլև շաբաթներով ու ամիսներով խախտում էին ուսումնական պրոցեսը։ Ամերիկյան լրագրողներից մեկը նկատել էր, որ ազգային գվարդիայի զորամասերն այժմ ավելի հաճախ են լինում կեմպուսներում, քան նեգրական գետտոներում։

Վերջին տարիներին բուրժուական թերթերի ու ամսագրերի համարյա ամեն մի համարում կարելի է տեսնել արյունլվա ուսանողների, ծեծված ուսանողուհիների լուսանկարներ, որոնցում պատկերված են, թե ինչպես ոստիկանները նրանց մազերից քարշ են տալիս դեպի փակ ավտոմեքենաները։

---

[1] Տե՛ս «Новое время», № 22, 1970, էջ 7։

1970 թվականի մայիսի 4-ին ԱՄՆ-ի համալսարաններից մեկում տեղի ունեցած հակակառավարական ելույթներից մեկի ժամանակ լսվեց մի ճիչ. «Աստված իմ, նրանք մեզ սպանում են»։

Եվ ճիչը խեղդվեց հրացանային համազարկերի որոտում։

Ովքե՞ր են «նրանքը»։ Դրանք ազգային գվարդիայի զինվորներն են, որոնք կրակում են ուսանողների վրա, դա օրենքի և կարգի իր կողեքսով պաշտոնական միլիտարիստական Ամերիկան է, դա շովինիստական «լռակյաց մեծամասնությունն» է։ «Մենքը» ոչ միայն համալսարանների առջև հավաքված խռովարար ուսանողությունն է, այլև Ամերիկայի երիտասարդության զգալի մասը։

Վանդերբիլտի համալսարանի ռեկտոր, ուսանողական գործերով պրեզիդենտ Նիքսոնի հատուկ խորհրդական Ալեքսանդր Խերդը նշել է, որ ԱՄՆ-ում ուսանողական շարժման վերելքը համազգային ճգնաժամի ակնառու ապացույց է։ «Մենք ազգային ճգնաժամ ենք ապրում և այն ժամանակավոր համարել չի կարելի»,— Նիքսոնին հղած նամակում գրել է դոկտոր Խերդը։ Այնուհետև նա նշել է, որ ստեղծված վիճակը «երիտասարդության մոլորության», «ուսանողական ճգնաժամի» կամ «համալսարանական ճգնաժամի» հետևանք չէ։ Դա համազգային ճգնաժամի հետևանք է։

Ամերիկյան երիտասարդության լայն շրջաններում դժգոհությունը գնալով մեծանում է այն պատճառով, որ արագ թափով աճում է այն վիհը, որ գոյություն ունի ամերիկյան հասարակության կենսունակության մասին խոսակցությունների և դառն իրականության միջև։

Ո՛չ ծեծն ու կրակոցները, ո՛չ դրակոնյան օրենքները, ո՛չ էլ առաջավոր երիտասարդության դեմ բուրժուական մամուլի պրովոկացիոն արշավը չեն կարող կանգնեցնել ուսանողական շարժումը, որը շարունակում է ամրապնդվել, ուժեղանալ և զարգացած կապիտալիստական երկրներում դառնալ հակաիմպերիալիստական պայքարի կարևոր ուժ։

Երիտասարդության, հատկապես ուսանողական շարժման մյուս կարևոր պատճառը բուրժուական երկրների կրթական սիստեմի ճգնաժամն է, այլ խոսքով՝ արդի ժամանակաշրջանի պահանջներից կրթական սիստեմի ետ մնալը։ Բանն այն է,

որ կապիտալիստական հասարակական հարաբերություններն օբյեկտիվորեն հակասության մեջ են գտնվում գիտության զարգացման, ազգային կադրերի պատրաստման, նրանց գիտելիքների օգտագործման հնարավորությունների հետ։ Աշխարհում ծավալվող գիտատեխնիկական հեղափոխության կողմից առաջ քաշված պրոբլեմները և նրանց արտացոլումը ուսանողության դիտակցության մեջ այդ հակասությանը ավելի սուր բնույթ են տալիս։

Կապիտալիստական ոչ մի երկրում բարձրագույն կրթության դրվածքը չի համապատասխանում գիտատեխնիկական հեղափոխության պահանջներին, ինչպես նաև տվյալ երկրի ազգային կարիքներին։ Բանը ոչ միայն այն է, որ տիրող վերնախավերը ամեն ինչ անում են պահպանելու համար բարձրագույն դպրոցի դասակարգային բնույթը, այսինքն՝ կրթությունը շարունակում է մնալ որպես բուրժուազիայի առանձնաշնորհը, այլև այն, որ բավարար չափով չեն ֆինանսավորում ուսումնական հաստատությունները՝ լսարանների ընդլայնման, ուսանողների համար կացարանների կառուցման, պրոֆեսորադասախոսական կազմի տնտեսական վիճակի բարելավման, գրադարանների հարստացման, լաբորատորիաների սարքավորման և այլ նպատակներով։

Սովորող առաջավոր երիտասարդությունը, որը 60-ական թվականների կեսերից պայքար ծավալեց ուսուցման նորմալ պայմանների ստեղծման համար, միաժամանակ սկսեց չափազանց սուր զգալ դեմոկրատական վերափոխումների, մասնավորապես կրթության սիստեմի դեմոկրատացման համար քաղաքական պայքարի անհրաժեշտությունը։ Նա համոզվեց, որ կրթության տիրող ավտորիտար սիստեմը, որը կոչված է ամբողջովին ծառայելու բուրժուազիայի շահերին, ռեակցիոն ու արխայիկ է, արգելակում է համալսարաններից ներս նոր գաղափարների թափանցմանը (իսկ կապիտալիստական երկրներում համալսարանների մեծ մասը եղել ու մնում է որպես կոնսերվատիզմի ամրոց) և, ինչպես պատկերավոր արտահայտվել է արևմտագերմանական ուսանողական ձախ թերթերից մեկը, նպատակ ունի Արևմուտքի ժամանակակից բարձրագույն ուսումնական

հաստատությունները վերածել «մասնագիտացված ռոբոտներ» արտադրող ֆաբրիկաների։

Ընդվզող ուսանողությունն այլևս չի հավատում բուրժուական պրոֆեսորների կողմից կապիտալիզմի ջատագովությանը։ Նա վճռականորեն առաջ է քաշում իր ռադիկալ պահանջները՝ անցկացնել բարձրագույն դպրոցի ռեֆորմ, իսկական դեմոկրատական վերահսկողություն ապահովել կրթական սիստեմի նկատմամբ, համալսարանական դասընթացներում մտցնել նոր առարկաներ, փոխել դասագրքերի ռեակցիոն բովանդակությունը, սովորողներին մասնակից դարձնել ուսումնական ծրագրերի ու պլանների մշակմանը, նրանց ներգրավել ուսումնական հաստատությունների կառավարման գործին, ավելացնել կրթությանը տրվող հատկացումները, համալսարաններն ազատագրել մոնոպոլիաների խնամակալությունից, վերացնել օպոզիցիոն ուսանողների դեմ կարգապահական տույժերի կիրառման պրակտիկան։

Այդ հողի վրա ուսանողական լսարանը նկատելիորեն ուժեղացրեց հետաքրքրությունը մարքսիզմի նկատմամբ։ Հանդես եկան մարքսիստական ուսանողության լեգալ խմբակներ ու միություններ, որոնք սկսեցին ուղղություն տալ ուսանողության ներհամալսարանական պայքարին։ Այդ պայքարի առավել տարածված ձևերը դարձան համալսարանական լսարաններում «նստած դասարուլները» (ԱՄՆ-ում դրանք կոչվում են «sit-in»), ուսումնական հաստատությունների շուրջը բարիկադներ կառուցելը, պարապմունքների և քննությունների բոյկոտը, մասսայական-քաղաքական դիսպուտների կազմակերպումը։

Պայքարող ուսանողությանն այս գործում օգնության են գալիս նրա սոցիալական կենցաղի և սոցիալական հոգեբանության առանձնահատկությունների հետ կապված այնպիսի «ներհամալսարանական գործոններ», ինչպիսիք են դեմոկրատական պայքարի տրադիցիաները, որոնք վերջին կես դարում վերածվել են նյութական ռեալ ուժի։ Հենց այդ պայքարի ընթացքում է, որ ուսանողությունը հանդես է բերել արագորեն կազմակերպվելու ունակություն։

Հեղափոխական շարժմանը ուսանողության ակտիվ մասնակցության մյուս պատճառը նրա տրադիցիոն հանրահայտ ռոմանտիզմն է, նրան հատուկ բունտարական ոգին, նորի բուռն զգացումը։ Չի կարելի մոռանալ, որ ուսանողությունը Վ. Ի. Լենինի խոսքերով ասած, մտավորականության ամենազգայուն մասն է[1] և նրան հատուկ են վերջինիս բոլոր յուրահատուկ գծերը, այդ թվում դեռևս վերջնականապես չբյուրեղացված դասակարգային գիտակցությունը, անհանգիստ ոգին, ազնիվ իդեալիզմը, հեղափոխական ռոմանտիզմը, անսահման հավատը դեպի սեփական ուժերը, զգացմունքների գերակշռությունը բանականության նկատմամբ, համառությունը և կորքոտությունը պայքարում[2]։

Երիտասարդության բողոքն էմոցիոնալ է, կրքոտ, անհամբեր։ Նրա գործողությունները հաճախ զարմացնում են համարձակությամբ ու խիզախությամբ, խուճապի մթնոլորտ են առաջ բերում բուրժուական և աջ օպորտունիստական ֆիլիստերների միջավայրում։ Պատահական չէ, որ Արևմուտքում այդ պատճառով ուսանող երիտասարդությանը հաճախ դիտում են որպես «սոցիալական դետոնատոր» կամ «կատալիզատոր», որն ընդունակ է հանկարծակի պայթյունով հեղափոխական վիճակ ստեղծել երկրում։

Այսպիսով, պարզ է դառնում, որ Արևմուտքում երիտասարդական շարժման պատճառը բնավ էլ «սերունդների կոնֆլիկտը» չէ, «սերունդների միջև խզումը» (generatinn gap) չէ, ինչպես ձգտում են ներկայացնել բուրժուական սոցիոլոգներն ու փիլիսոփաները[3]։ Այդ շարժումը «ներընտանեկան

---

[1] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 7, էջ 38։

[2] Ճիշտ է, ինչպես երիտասարդ լինելը, այնպես էլ ուսանողության խավին պատկանելը անցողակի երևույթ են։ Ջափազանց տարածված է այն տեսակետը, թե ավարտելով համալսարանը, ուսանողը սովորաբար հրաժարվում է առաջադեմ և հեղափոխական սկզբունքներից (որոնք նա նախկինում պաշտպանում էր, հաճախ վտանգի ենթարկելով իր կյանքը) և իր համար հանգիստ տեղ է գրավում գոյություն ունեցող կարգերի շրջանակներում։ Սրա մեջ, իհարկե, ճշմարտության բաժին կա, բայց կարելի է պնդել, որ ուսանողության հիմնական մասը կրթությունը լրացնելուց հետո էլ շարունակում է կանգնած մնալ ռադիկալ դիրքերում։

[3] Արևմուտքում տարածված են ուսանողական շարժման մեկնաբանման զանազան կեղծ տեսություններ։ Բուրժուազիայի առաջ քաշած տեսություններից մեկը «բիոլոգիական տեսությունն» է, որի օգնությամբ նա փորձում

վեճ» չէ, որ կարելի լիներ հեշտությամբ լուծել փոխադարձ հասկացողության պայմաններում, այն նաև ոսկի երիտասարդության վակխանալիա չէ «միջազգային մոդայի» տուրք չէ, որը, ինչպես և ամեն մի մոդա, անցողիկ է։ Երիտասարդական շարժման պատճառների մեջ ամենակարևորը իմպերիալիզմի հակասությունների հետագա սրումն է, բուրժուական արտադրահարաբերությունների պայմաններում հասարակական ուժերի արագ առաջադիմող բևեռացումը։ Ուժերի այդ բևեռացման պայմաններում ընդհարվելով «հայրերի» ցինիզմին ու երեսպաշտությանը, երիտասարդությունը կտրում է ընտանիքի հետ տրադիցիոն կապերը, ավելի ու ավելի է կողմնորոշվում դեպի սեփական կուլտուրան և ապրելակերպը, հրաժարվում է նյութական հաջողություններից, ձգտում է կյանքի «բնականության» վերականգնմանը։ Որքան ավագ սերունդը զայրույթով է երես թեքում երիտասարդությունից, այնքան վերջինիս «եղբայրությունն» ավելի ամուր է դառնում։ Խռովարար պատանիների ու երիտասարդների սերունդը, որը պահանջում է լեգալացնել իր կուլտուրան, ոչ պակաս ունակ է ռադիկալացնելու չափավոր քաղաքացիների գիտակցությունը, որքան իմպերիալիստական պատերազմները կամ ոստիկանական ռեպրեսիաները։

Ահա այս բոլոր հանգամանքներն են, որ մեր օրերի ուսանողությանը բերում են հեղափոխականների շարքերը, նրանց

է պառակտում առաջ բերել մեծահասակների և պատանիների միջև։ Այս տեսությունը դասակարգային պայքարը փոխարինում է «սերունդների կոնֆլիկտով» և այդ «կոնֆլիկտը» հայտարարում է իբրև ժամանակակից հասարակության հիմնական հակասություն։ Այդ կեղծ տեսության վրա է հիմնվում ժամանակակից մանրբուրժուական էքստրեմիզմի, նեոտրոցկիստների, մարկուզեականության ներկայացուցիչների դեմագոգիան այն մասին, թե «փորձվածը անփորձն է, հասունը չհասունացածը», թե «երիտասարդությունը հեղափոխության իսկական բարոմետր է» և այլն։ Մարքսիստ-լենինյանները մերկացնում են նման կեղծիքը, որը նպատակ ունի երիտասարդությանը շեղել դասակարգային պայքարից, նրա պայքարը զրկել սոցիալական պարզ կողմնորոշիչներից, արդարացնել բուրժուական անարխիան։ Միաժամանակ մարքսիստ-լենինյանները գտնում են, որ ծայրահեղ գռեհիկ բան կլիներ հավասարության նշան դնել ավագ սերնդի և երիտասարդության միջև, այսինքն՝ լիովին նույնացնել նրանց զգացմունքները, տրամադրությունները, կենսափորձը, պահանջները։

դարձնում նաև ժամանակակից «ձախ» ռադիկալիզմի տեսություններին, մասնավորապես Հերբերտ Մարկուզեի ուսմունքի «փորձերի» օբյեկտ։ Բայց Մարկուզեն ինքը որքանո՞վ է հավատում երիտասարդության հեղափոխական դերի մասին իր ուսմունքին, արդյո՞ք նա խորապես համոզված է, թե մտավորականությունը և ուսանողությունն ընդունակ են պայթեցնելու «միաչափ հասարակությունը»։

Որքան էլ տարօրինակ է. Հերբերտ Մարկուզեն երբեմն կասկածի տակ է առնում նաև երիտասարդության հեղափոխական դերը։ «Նյու լայֆ ռևյու» ամսագրին տված հարցազրույցի ժամանակ նա ասել է, որ անհրաժեշտ կազմակերպվածության և սեփական գաղափարախոսության բացակայության պատճառով երիտասարդությունն ի վիճակի չէ «վճռական քաղաքական ճնշում» իրականացնելու[1]։ Արևմտագերմանական «Շպիգել»-ի հանդեսի աշխատակիցը նրան հարցրել է. «Ձեր տեսությունից կարելի՞ է հետևություն անել, թե մտավորականությունը կոչված է ռեֆորմի ենթարկելու հասարակությունը և նրա «երջանիկ դիտակցությունը», փոխանակ լրջորեն նախապատրաստվելու հեղափոխության»։ Այս հարցը հասկանալի պատճառով Մարկուզեի մոտ տհաճություն է առաջացրել, բայց, այնուամենայնիվ, նա ստիպված է եղել պատասխանել. «Մի մոռացեք, որ ես դեռևս (ընդգծումը մերն է—Հ. Ս.) մարքսիստ եմ, ուստի համոզված եմ, որ կա մի աստիճան (զարգացման —Հ. Ս.), որտեղ բոլոր ռեֆորմները, միասին վերցրած, չեն կարող օգնել»[2]։

Կապիտալիստական կարգերն ուսանողներից շատ ավելի լավ իմացող Մարկուզեն, ինչ խոսք, ուսանողական շարժման նկատմամբ իր կայուն (միաժամանակ խիստ թաքուն) կարծիքն ունի, որի իմաստը մոտավորապես այսպիսին է. «Խռովություն արե՛ք, հուզվեցե՛ք, ձեր ափերից դուրս եկեք։ Հանդես գալով բուրժուական քաղաքակրթության դեմ, դուք ինքներդ գտնվում եք այդ քաղաքակրթության շրջանակներում։ Ձեր խռովությունն անիմաստ է, և այն ոչ մի լավ բանի չի հասցնի։ Նման խռովությունը լավագույն դեպքում կարող է փոխել

---

1 Տե՛ս «Международная жизнь», № 4, 1970, էջ 85։

2 «Литературная газета», 17 декабря 1969.

միայն տվյալ երկրի քաղաքականության ուղղությունը, բայց ոչ երբեք սիստեմը։ Ինչ խոսք, որ հենց այսպես մտածող Մարկուզեն իրականում ինքը նույնպես «միաչափ մարդ» է, որին առայժմ ձեռնտու է չափից ավելին «ձախ» երևալ։

Այսպիսով, մի կողմից Մարկուզեն բռնության կոչ է անում, մյուս կողմից նա չի տեսնում հեղափոխության հաղթանակի ռեալ հնարավորությունները և հանգում է լիակատար հոռետեսության։ Պատահական չէ, որ նրա «Միաչափ մարդը» գիրքը ամերիկյան մամուլում որակվեց որպես «միաչափ հոռետեսություն»։

Երիտասարդական շարժման նկատմամբ իր հոռետեսությամբ Մարկուզեն փաստորեն ձայնակցում է բուրժուական շատ սոցիոլոգների ու քաղաքական գործիչների, որոնք փորձում են կապիտալիստական երկրների ժամանակակից ողջ երիտասարդությանը ներկայացնել իբրև կորսված երիտասարդություն։ Նրանք երիտասարդությանը տալիս են կատեգորիկ ու մռայլ բնութագրություններ, համարում են «իքս սերունդ», «թվիսթի սերունդ», «հոռետեսների սերունդ», «ներվայնացած, հոգնած ու քայքայված սերունդ»։ Բուրժուական մամուլի էջերում հաճախ կարելի է հանդիպել այսպիսի վերնագրերով նյութերի՝ «Ուսանողների խռովությունը», «Երիտասարդ մարդկանց առեղծվածային գործողությունները», «Ուսանողական նոր դավադրություն» և այլն։ Նման որակավորումներ կան ոչ միայն թերթերի, հանդեսների ու գրքերի էջերում, այլև կառավարական հաշվետվությունների մեջ[1]։

Բուրժուական գաղափարախոսները ոչ միայն չեն կարողանում երիտասարդությանն ուղի ցույց տալ դուրս գալու հոգևոր ճգնաժամից, այլև մշտապես նրան թունավորում են հոռետեսության, անելանելիության, իր ուժերի նկատմամբ թերահավատության զգացումով։ Նրանք երիտասարդությանը նախատում են. «Մի՛ խոթեք գլուխներդ քաղաքականության մեջ, զբաղվեք ձեր գործերով, մի՛ մտածեք, թե դուք քաղաքականությունից կարող եք ավելի շատ բան հասկանալ, քան աստղաբաշխները կամ մետալուրգները»։ Նման խորհուրդներով ու հորդորներով նրանք ձգտում են երիտասարդությանը զրկել քաղաքական ակտիվությունից, սոցիալական լուրջ պրոբլեմների շուրջը մտածելու հնարավորություններից, մղել ապոլիտիկության, նրան ներփակել անձնական կյանքի մանր հոգսերի ու ապրումների մեջ։ Որոշակի սոցիալական պայմաններին հատուկ երևույթները բուրժուական «հայրերի» մոտ ստանում են միստիկական բովանդակություն, հայտարարվում են հավերժ։ Դատարկապորտության և հուսահատության գծերը, հանցագործությունը և սեքսը, որ հատուկ են կապիտալիստական աշխարհի երիտասարդ մարդկանց որոշ մասին և հանդիսանում են այդ աշխարհի արդյունքը, անիրավացիորեն բարձրացվում են անխուսափելիության և անդառնալիության աստիճանի։

Արևմուտքի ողջ երիտասարդությանը նման որակավորում տալը սխալ է հիմքից։ Չէ՞ որ երիտասարդությունը, ինչպես ասվեց վերևում, չի կարելի դիտել իբրև սոցիալական մի ամբողջություն։ Իրականությունն այն է, որ սերվելով սոցիալական տարբեր շերտերից, բուրժուական աշխարհի երիտասարդ մարդիկ տարբեր հետաքրքրություններ ու շահեր են հանդես բերում կյանքում և գնում են միանգամայն այլաղան, երբեմն էլ տրամագծորեն հակառակ ուղիներով։

Հատկանշական է, որ երիտասարդական շարժման զարգացմանը զուգընթաց, երիտասարդության ապոլիտիկության մասին ձայները գնալով նվազում են։ Ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի առաջատար տեսաբաններից Կարլ Ջեռնեցը այդ առթիվ նշել է, որ «երիտասարդության ապոլիտիկության մասին լեգենդը, որը լայնորեն տարածված էր մի քանի տարի առաջ, այժմ մեռած է։ Այն տեսակետը, թե երիտասարդությունը հասարակական հետաքրքրություններ չունի, թշնամաբար և ցինիկ-մատերիալիստորեն է տրամադրված բոլոր գաղափարախոսությունների նկատմամբ, զուրկ է հիմքից»։

Իհարկե, ճշմարտություն է, որ կապիտալիստական երկրը-

[1] Երիտասարդական շարժման նկատմամբ անհանդուրժող թշնամանքով լցված բուրժուական գաղափարախոսների մի մասը այդ շարժումը դիտում է որպես «ինդուստրիալ հասարակության» առաջընթացի ճանապարհին եղած գլխավոր խոչընդոտներից մեկը։ Օրինակ, Զբիգնև Բժեզինսկին երիտասարդության ընդվզումները համեմատում է լուդդիստների խռովությունների հետ, որոնք ժամանակին ջարդում էին մեքենաները, որպեսզի արգելակեն արդյունաբերական հեղաշրջումը։ Այլ կերպ ասած, նրա կարծիքով, երիտասարդության շարժումը ոչ թե հեղափոխություն է, այլ հակահեղափոխություն։

ների երիտասարդ մարդկանց առանձին խմբեր վարակված են անկումային, հոռետեսական տրամադրություններով։ Դրանց բողոքն ակտիվ չէ, զուրկ է դրական ծրագրերից, դուրս չի գալիս սովորական դժգոհության և անեծքների սահմաններից։ Հակակառավարական ելույթներին նրանց մասնակցությունը, իբրև կանոն, էպիզոդիկ ու պատահական լինելով, հիմնականում պայմանավորվում է անձնական տրամադրություններով, այլ ոչ թե թելադրվում է նրանց քաղաքական դիրքորոշումով։ Պատահական չէ, որ երբեմն ձեռնոց նետելով բուրժուական հասարակական հարաբերություններին, «կորսված երիտասարդության» այդ խմբերը, այնուամենայնիվ, շարունակում են մնալ բուրժուական բարոյականության սահմաններում, իբրև այդ բարոյականության գերիներ։ Նրանց բողոքի ընդհանուր ճիգերն ու էքսցենտրիկ այլազան արտահայտությունները, անարխիստական անզոր ընդվզումները սովորաբար վերջանում են անբուժելի ապատիայով և կյանքի նկատմամբ ամենախոր հիասթափությամբ ու հոռետեսությամբ։

Բուրժուական երկրների երիտասարդության մի մասի հոգեկան խոր ճգնաժամի արտահայտություններից մեկը հիպիների շարժումն է, «միայնակների ամբոխի» երևան գալը, որը միջազգային բնույթ է ընդունել[1]։

Հիպիներն ընդգծված թատերայնությամբ մերժում են «աղատ աշխարհի» տնտեսական ու սոցիալական կյանքի բոլոր նորմերը, կուլտուրական ու բարոյական տրադիցիոն արժեքները, «երջանիկ մարդու» ապրելակերպը, Արևմուտքի գործարարությունը, բուրժուական կեղծ մարդասիրությունն ու ֆիլիստերականությունը, իմպերիալիստական բռնատիրությունը։ Հիպիների «համայնքներ» են գալիս այն պատանիներն ու երիտասարդները, ովքեր այլևս տանել չեն կարողանում «ինդուստրիալ քաղաքակրթության», նրա ավտորիտար ինստիտուտների, ինչպես նաև ընտանեկան հարաբերությունների ճնշումը։ Նրանք իրենց համար իդեալ են հռչակել «սիրո» վրա հիմնված սոցիալական հարաբերությունների նոր տիպ և կյանքի նոր՝ «համայնական» ոճը։ Չնայած հիպիները ժխտում են կրոնը, սակայն նրանց հայացքների գումարը յուրատեսակ կրոն է։ Նրանք իրենց հիմնական գաղափարները քաղել են վաղ քրիստոնեական, բուդդիստական և միստիկական այլ ուսմունքներից։

Բայց հիպիները, լինելով հոգեպես ջախջախված ու անպատասխանատու, ամեն ինչի վրա բարկացած, ողջ աշխարհից նեղացած անհատներ, քար անտարբերություն են հանդես բերում շրջապատի նկատմամբ, ժխտում են կայուն սերը, մերժում են աշխատանքը, փախուստ են տալիս հարազատներից ու մերձավորներից, ընդգծված մելանխոլիկ են ու քչախոս[1]։ Նրանց զբաղեցնում են միայն ամենամանր գործեղն ու մրտքերը։ Միաժամանակ նրանց հրապուրում և հանգիստ չի տալիս սկանդալային փառքը։ Հենց դա է պատճառը, որ բուրժուական հասարակությանը նետած նրանց մրցահրավերը այնքան էժանագին է, համարյա կոպեկանոց։ Մեծ նպատակների բացակայությունը հիպիների խռովությունը դարձնում է դատարկություն։ Փոխանակ ակտիվ պայքարի մեջ մտնելու այն կարգերի դեմ, որ նրանց հասցրել է հոգեկան ճգնաժամի, հիպիներն այդ պայքարը փոխարինում են հասարակության հասցեին քրթմնջոցներով, անողոքաբար բռնադատում սեփական անձը, գործածում նարկոտիկներ՝ իրական աշխարհից հեռանալով պատրանքների աշխարհը։ Որպես կապիտալիստական կարգերի դեմ պայքարի միակ «զորձուն» միջոց, նրանք (իբր բուրժուազիային վիրավորած լինելու նպատակով) կատարում են այլանդակ շարժումներ, պահում են չսանրված մորուք, հագնում են ճչան ու աներևակայելի անճոռնի հագուստ, դիմում են այլազան տարօրինակություններ։ Այլ

1 «Կորսված սերնդի» երիտասարդներին ԱՄՆ-ում կոչում են «հիպստերներ», «բիտնիկներ» «հիպպիզներ», «տինեյջերներ», Անգլիայում՝ «տրոգներ», «սենդվիչներ», «ջղայնացած երիտասարդ մարդիկ», Ֆրանսիայում՝ «բլուզոն-նուարներ», Շվեդիայում՝ «ռագգարներ», այլ երկրներում՝ «ռոկերներ», «չկառավարվող երիտասարդներ» և այլն։ Չնայած ԱՄՆ-ի ընդվզող երիտասարդությանը պատկանում են և՛ «նոր ձախերը», և՛ հիպիները, սակայն նրանց միջև կան էական տարբերություններ։ Սիստեմին ձեռնոց նետած երիտասարդության այդ երկու բևեռների միջև գտնվում են «դիսիդենտների» մյուս բոլոր խմբերը։

1 1968 թվականին այս գրքի հեղինակը, լինելով Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Չիկագո քաղաքում առիթ է ունեցել այցելելու հիպիների թաղամասը։ Նրանց հետ ունեցած զրույցի ժամանակ հիպիներից մեկն ասել է. «Մեզ ոչ ոք չի հետաքրքրում, թող մեզանով նույնպես չհետաքրքրվի որևէ մեկը»։

խոսքով, հիպիների պայքարի մեթոդը հիշեցնում է ճապոնական հին սովորությունը. իր թշնամուց վրեժ լուծող մարդը կյանքը վերջացնում է նրա շեմքին ինքնասպան լինելով[1]։

Որպես կանոն, հիպիները շրջում են խմբերով։ Բայց այս դեպքում էլ նրանց համախմբում է ոչ թե ընկերությունն ու միակամությունը, այլ իրենց համար խորթ աշխարհում կորչելու վախը։ Ոմանք հիպիականությունը համարում են «պրակտիկ սոցիալիզմ», որի հետևորդները հավատում են միայն իրենց գոյության ռեալականությանը։

Այսպիսով, հիպիականությունը բուրժուական հասարակության և այդ հասարակության անհատի հիվանդությունն է։ Բացառված չէ, իհարկե, որ հիպիները բուրժուական իրականության կեղծիքի ու երեսպաշտության դեմ նիհիլիստական բողոքից կարող են անցնել ակտիվ, նպատակամղված պայքարի, հանուն նոր աշխարհի, հանուն մարդկային նոր հարաբերությունների։ Իսկ դա կախված է մոնոպոլիստական կապիտալի դեմ աշխատավոր մասսաների պայքարի թափից ու կազմակերվածությունից։

Բարեբախտաբար հիպիները չեն, որ որոշում են կապիտալիստական աշխարհի երիտասարդության դեմքը։ Հայտնի է, որ կապիտալիստական աշխարհի երիտասարդ սերնդի՝ իբրև «կորսված սերնդի», հասցեին բուրժուական պրոֆեսորները և քաղաքագետները ամենատարբեր մեղադրանքներ են հարուցում արդեն շատ տասնամյակներ շարունակ։ Ո՞ւմ հայտնի չէ, որ մեր դարի սկզբին թե՛ Եվրոպայի և թե՛ ցարական Ռուսաստանի բուրժուական, հատկապես լիբերալ բուրժուական, մամուլը, երիտասարդությանը համարում էր քայքայված ու անհեռանկար սերունդ։ Բայց բանն այն է, որ իրենց ունևոր ծնողների դրամները կաֆեշանտաններում շռայլող երիտասարդները չէին, որ բնորոշում էին նոր սերնդի դեմքը։ Երբ վրա հասավ ժամը, այդ «կորսված սերունդը» հրաշքներ գործեց։ Ռուսական առաջին հեղափոխության տարիներին հազարավոր երիտասարդ մարդիկ հերոսաբար կռվում էին ցարական պատժիչ զորքերի դեմ, բանվորական ջոկատների շարքերում արյուն էին թափում Կարմիր Պրեսնյայի փողոցներում,

[1] Տե՛ս С. Н. Иконникова, Фальшивые кумиры (что предлагает молодежи буржуазная идеология), էջ 131։

կախաղանից առաջ դահիճների երեսին համարձակորեն գոչում էին՝ «Կեցցե՛ հեղափոխությունը»։ Հենց այդ նույն սերնդի կրտսեր ներկայացուցիչներն էին, որ «գրոհեցին երկինքը», հավերժ հերոսացան Հոկտեմբերյան հեղափոխության բարիկադների վրա։

Նույնպիսի գործեր էին կատարում նաև Ռուսաստանի երիտասարդ մարդկանց հասակակիցներն արտասահմանում։ Հոկտեմբերյան հեղափոխության դրոշով նրանք կռվում էին գերմանական և հունգարական ապստամբների շարքերում, հրաժարվում էին ֆրանսիական նավահանգիստներից Ռուսաստան մեկնող նավերը զենք ու ռազմամթերք բեռնելուց։

Արևմուտքի երիտասարդության մասին ծանոթ քրթմնջոցները գայրույթի փոխվեցին 30-ական թվականներին։ Այս շրջանում երիտասարդ սերնդին վիճակված էր կրելու վիթխարի դժվարություններ։ 1914—1918 թվականներին համաշխարհային սպանդին հաջորդած գործազրկությունը, հեռանկարի անորոշությունը, դասակարգային շարժումների ժամանակավոր վայրէջքը, վերջապես, իր ահավոր հետևանքներով հանդերձ 1929—1933 թվականների համաշխարհային տնտեսական ճգնաժամը երիտասարդ մարդկանցից շատերին նետեցին հոռետեսության մեջ։ Դա էր նաև պատճառը, որ Հիտլերի կամ Մուսոլինիի նման քաղաքական դեմագոգներին հաջողվեց իրենց ցանցը գցել գերմանական և իտալական երիտասարդության զգալի մասին։

Բայց նույնիսկ 30-ական թվականների դժվարին տարիներին, երբ ֆաշիզմը մոլեգնում էր Եվրոպայում, երիտասարդ սերնդի դեմքը որոշում էին ոչ թե երիտասարդության հուսալքված խմբերը, այլ այն երիտասարդությունը, որը գնում էր մարդկության առաջավոր ճանապարհներով։

Չնայած իմպերիալիստական ագրեսորների սպառնալիքներին, աշխարհում առաջին սոցիալիստական երկրի՝ ՍՍՀՄ-ի երիտասարդ սերունդը մասսայական հերոսություն էր գործում սոցիալիզմի կառուցման ճակատներում։ Հեղափոխական անսահման խանդավառությամբ սովետական երիտասարդները կառուցում էին Ամուրի Կոմսոմոլսկը, Թուրքսիբի երկաթուղին, Մագնիտագորսկն ու Դնեպրոդէսը, սահմանում էին համաշխարհային ռեկորդներ։ Իսկ երբ պայթեց պատերազմը,

երիտասարդությունը սոցիալիստական հայրենիքի պաշտպանների առաջին շարքերում էր։ Սերունդների հիշողությունից երբեք չի ջնջվի Զոյա Կոսմոդեմյանսկայայի, Ալեքսանդր Մատրոսովի, Կրասնոդոնի հերոսների, հազարավոր ու հարյուրհազարավոր խիզախների անունները, որոնք իրենց երիտասարդ կյանքը չխնայեցին ֆաշիզմի դեմ մղած ազատագրական պայքարում։

Իսկ ի՞նչ էին անում սովետական երիտասարդ հայրենասերների արտասահմանյան հասակակիցները։ Այն ժամանակ, երբ «հիտլերյուգենդի» անդամները կատարում էին իրենց ահմարդկային սարսափելի գործերը, այդ նույն ժամանակ Հռոմում և Բեռլինում խոր ընդհատակում ֆաշիստական ժանտախտի դեմ հերոսաբար պայքարում էին իտալական և գերմանական երիտասարդության լավագույն ներկայացուցիչները։ Երիտասարդ հայրենասերները ֆաշիզմի դեմ մարտնչում էին գարիբալդիական դիվիզիաներում, ֆրանսիական «մակի»-ների մեջ։ Դա արևմտյան երիտասարդության սերունդն էր, որին համարում էին «կորած», բայց որը դարձավ դարաշրջանի ամենաահեղ ճակատամարտի ակտիվ մասնակիցը, պայքարեց հումանիզմի գաղափարների համար, ընդդեմ ֆաշիզմի։

Այսօր էլ կապիտալիստական երկրներում տարբեր ուժերի միջև սուր պայքար է գնում երիտասարդությանը նվաճելու համար։ Իմպերիալիզմը փորձում է իր ազդեցությունը տարածել երիտասարդության վրա, նրան չեղոքացնել և հեռու պահել ժամանակի մեծ պրոբլեմներից։ Օգտագործելով ամենաբազմաշան միջոցները, նա ձգտում է երիտասարդ սերնդին շեղել ակտիվ պայքարի ուղուց, նրա հեղափոխական եռանդը կոնսերվացնել բուրժուական արտադրահարաբերությունների շրջանակներում։

Այդ է պատճառը, որ վերջին ժամանակներս Արևմուտքի կոմունիստական ու բանվորական կուսակցությունները, երիտասարդական և ուսանողական շարժումները դիտելով որպես հակաիմպերիալիստական ճակատի կարևոր բաղկացուցիչ մաս, ավելի ու ավելի մեծ ուշադրություն են դարձնում այդ շարժման վրա[1], հսկայական աշխատանք են տանում երիտասարդությունը նվաճելու համար։ Նրանք առաջնորդվում են երիտասարդությանը և երիտասարդական շարժմանը մարքսիզմ-լենինիզմի կլասիկների տված գնահատականներով, ցուցումներով, նրանց ասույթներով։ «Մենք ապագայի կուսակցություն ենք,— ասել է Ֆրիդրիխ Էնգելսը,— իսկ ապագան պատկանում է երիտասարդությանը։ Մենք նորարարների կուսակցություն ենք, իսկ նորարարների ետևից միշտ հաճույքով է գնում երիտասարդությունը»[1]։

Հեղափոխական պայքարում երիտասարդության դերի փայլուն բնութագրությունը տվել է Վ. Ի. Լենինը։ Ի հակադրություն բուրժուական ֆիլիստերների և օպորտունիստների, որոնք ձգտում էին երիտասարդությանն ամեն գնով հեռու պահել քաղաքականությունից, Վ. Ի. Լենինը գրում էր, որ կյանքի քաղաքական և սոցիալական երևույթների նկատմամբ երիտասարդության հետաքրքրությունը բնական է, իսկ «Քաղաքականության մեջ ներգրավելու, թեկուզև «վաղ ներգրավելու» ամեն մի դատապարտություն կեղծավորություն է և խավարամոլություն»[2]։

Մի այլ առիթով Լենինը գրել է. «Երիտասարդ ուժեր են հարկավոր... հարկավոր է միայն ավելի լայնորեն և ավելի համարձակ, ավելի համարձակ և ավելի լայնորեն, դարձյալ ավելի լայնորեն ու դարձյալ ավելի համարձակ կերպով հավաքագրել երիտասարդությանը, չվախենալով նրանից... Երիտասարդությունը կվճռի ամբողջ պայքարի ելքը, և՛ ուսանողական, և՛ առավել ևս բանվոր երիտասարդությունը»[3]։ Լենինը հատկապես ընդգծում էր հեղափոխական պայքարում սովորող երիտասարդության, առանձնապես համալսարանական ուսանողության դերը։ Բնորոշելով ուսանողական շարժ-

---

[1] Դրա վկայություններից մեկը Պրագայում, «Проблемы мира и социализма» հանդեսի խմբագրությունում, 1971 թվականի սեպտեմբերի 28—29-ին տեղի ունեցած 26 կոմունիստական ու բանվորական կուսակցությունների ներկայացուցիչների խորհրդակցությունն էր, որտեղ քննարկման դրված «Նոր մոմենտներ կապիտալիստական երկրների երիտասարդական շարժման մեջ և կոմունիստները» հարցի շուրջը ծավալվեց մտքերի լայն փոխանակություն (տես «Проблемы мира и социализма», № 1, 1972, էջ 72)։

[1] «Проблемы мира и социализма», № 10, 1961, стр. 74.

[2] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 22, էջ 470։

[3] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 9, էջ 300։

ման սոցիալական բնույթը, նա գրում էր, որ ուսանողությունը «մտավորականության ամենազգայուն մասն է, իսկ մտավորականությունը հենց այն պատճառով է մտավորականություն կոչվում, որ նա ամենից ավելի գիտակցաբար, ամենից ավելի վճռականորեն և ամենից ավելի ճիշտ է արտացոլում և արտահայտում ամբողջ հասարակության դասակարգային շահերի և քաղաքական խմբավորումների զարգացումը։ Ուսանողությունն այն չէր լինի, ինչ որ է, եթե նրա քաղաքական խմբավորումը չհամապատասխաներ ամբողջ հասարակության քաղաքական խմբավորմանը,— «համապատասխաներ» ոչ այն իմաստով, որ ուսանողական և հասարակական խմբերը լիովին համեմատ լինեին իրենց ուժով և քանակով, այլ այն իմաստով, որ ուսանողության մեջ անհրաժեշտ ու անխուսափելի է այնպիսի խմբերի առկայությունը, ինչպիսիք կան հասարակության մեջ»[1]։

Լենինյան այս ձևակերպման մեջ հատկապես կարևոր է երկու միտք։ Առաջին, որ Լենինը հեղափոխության մեջ ճանաչում և բարձր էր գնահատում ուսանողության հակաբուրժուական ընդվզումը։ Երկրորդ, նա ցույց է տալիս, որ ուսանողական շարժումը չի կարող ինքնուրույն լինել, որ նրա նշանակությունը ոչ այնքան նրա խմբային յուրահատուկ նպատակների մեջ է, որքան այն բանում, որ այդ շարժումը արտացոլում և արտահայտում է առավել ընդհանուր սոցիալական պրոցեսներ, առաջին հերթին հասարակության մեջ տեղի ունեցող դասակարգային դաժան պայքարը։

Վ. Ի. Լենինը մշտապես հիշեցնում էր, որ ուսանողության ակտիվության բովանդակությունն ամեն դեպքում պետք է գնահատել որոշակի դասակարգային տեսանկյունից, մշտապես աչքի առաջ ունենալով պրոլետարիատի շահերը։

Դեռևս 1903 թվականին լույս ընծայած «Հեղափոխական երիտասարդության խնդիրները» հոդվածում Վ. Ի. Լենինը գրում էր. «Մի՞թե ինքնին պարզ չէ, որ ուսանողության հեղափոխականացման մասին կարելի է խոսել միմիայն այդ հեղափոխականացման բովանդակության ու բնույթի նկատմամբ միանգամայն որոշակի հայացքի տեսակետից։ Օրինակ,

[1] Վ. Ի. Լենին, *նշված*, հ. 7, էջ 423։

սոցիալ-դեմոկրատիայի համար դա նշանակում է, նախ՝ սոցիալ-դեմոկրատական համոզմունքների տարածում ուսանողության մեջ և պայքար այն հայացքների դեմ, որոնք թեպետ «սոցիալիստական-հեղափոխական» են կոչվում, բայց ոչ մի առնչություն չունեն հեղափոխական սոցիալիզմի հետ, և, երկրորդ, ամեն մի դեմոկրատական, այդ թվում նաև ակադեմիական շարժում ուսանողության մեջ ընդլայնելու, ավելի գիտակցական և ավելի վճռական դարձնելու ձգտումը»[1]։

Ինչպես տասնամյակներ առաջ, այսօր էլ կոմունիստները բարձր են գնահատում կապիտալիստական երկրների առաջավոր երիտասարդության զգացմունքները, նպատակներն ու գործողությունները, երիտասարդությունը, որը պայքարում է հանուն արդարացի, մարդասիրական հասարակության։ Երիտասարդական շարժումը նրանք միշտ էլ դիտել են իբրև դասակարգային պայքարի կարևոր բնագավառ, որի նշանակությունը գնալով աճում է։ Չնայած այդ շարժման մեջ չափազանց ուժեղ են պատահական, սպորադիկ գծերն ու տարընթացության տարերքը, չնայած շարժման մասնակիցների խայտաբղետությանը, անհետևողականությանը, թուլությանը, տատանումներին, այն արդեն բազմաթիվ նոր մոմենտներ է մտցրել հակաիմպերիալիստական ընդհանուր պայքարում, բուրժուական երկրների քաղաքական մթնոլորտի մեջ, բուրժուական հասարակարգում ստեղծել է սոցիալական ու քաղաքական ակտիվության լրացուցիչ կենտրոններ, նպաստում է «ինդուստրիալ հասարակության» բարոյական անկմանը, մոտեցնում նրա անխուսափելի կործանումը։ Կոմունիստները խորապես շահագրգռված են, որ երիտասարդ սերունդը հաստատուն կանգնի բանվոր դասակարգի դիրքերում, միաձուլվի նրա շարժմանը, տոգորվի նրա շահերով, վճռականորեն հանդես գա արմատական հեղափոխական վերափոխումների օգտին։ Ընդվզող երիտասարդությունը դառնում է սոցիալական հեղաշրջման քաղաքական բանակի լուրջ ռեզերվ, բանվոր դասակարգի պոտենցիալ դաշնակից։

Կոմունիստները միաժամանակ գտնում են, որ երիտասարդության և, ընդհանրապես, «ձախ» ռադիկալ շերտերի հետ

[1] Վ. Ի. Լենին, *նշված*, հ. 7, էջ 423։

պրոլետարիատի դաշինքի անհրաժեշտ պայմանը այդ դաշինքի մեջ վերջինիս ղեկավար դերի ընդունումն է։ Պրոլետարիատի հետ երիտասարդության, ինչպես նաև ոչ պրոլետարական շերտերի միասնությունը կարող է ամուր լինել միայն ու միայն այն դեպքում, եթե այդ միությունը գտնվի պրոլետարիատի գաղափարական ազդեցության տակ։ Այդ դաշինքի պայմաններում էլ մարքսիստները երբեք մի կողմ չեն դնում տեսական բնույթի տարաձայնությունները, շարունակում են պայքարել պրոլետարական ուսմունքի անաղարտության համար։ Միայն այդ ճանապարհով կարելի է օգնել խռովարար երիտասարդությանը և ընդհանրապես «երրորդ ուղու» կողմնակիցներին՝ հաղթահարելու բուրժուական մտածողությունը, որը մշտապես խանգարում է միջին շերտերի քաղաքական ակտիվության աճին, սխալ ուղիով առաջնորդում «ձախ» օպոզիցիայի, այդ թվում երիտասարդության և ուսանողության զդալի մասին։

Երիտասարդության և ուսանողության պրոբլեմներին մեծ ուշադրություն նվիրեց կոմունիստական և բանվորական կուսակցությունների 1969 թվականի խորհրդակցությունը, որը կապիտալիստական երկրների երիտասարդական շարժումը գնահատեց որպես իմպերիալիզմի դեմ, մոնոպոլիաների ճնշման դեմ պայքարի կարևոր ուժերից մեկը։ Խորհրդակցության փաստաթղթում նշված է, որ ուսանողության և ընդհանրապես երիտասարդության շարժման ակտիվացումը բուրժուական աշխարհում անտագոնիստական ուժերի հետագա բևեռացման արդյունք է։ «Երիտասարդության ելույթները,— ասված է փաստաթղթում,— արտացոլում են արդի բուրժուական հասարակության խոր ճգնաժամը»[1]։ Ծնվում է հակաիմպերիալիստական մի նոր ուժ՝ մտավոր և ֆիզիկական աշխատանքի մարդկանց դաշինքը, որը «ավելի ու ավելի նշանակալից ուժ է դառնում խաղաղության, դեմոկրատիայի ու սոցիալական առաջադիմության համար, արտադրության նկատմամբ, կուլտուրայի ու ինֆորմացիայի հիմնարկների նկատմամբ դեմոկրատական վերահսկողություն հաստատելու

[1] «Международное совещание коммунистических и рабочих партий», стр. 26.

համար, կրթությունը հանուն ժողովրդի զարգացնելու համար մղվող պայքարում»[1]։

Հենվելով ժամանակակից զարգացման ուշադիր վերլուծության, դեմոկրատական ուժերի, այդ թվում առաջավոր երիտասարդության համախմբման համար բանվոր դասակարգի պայքարի պատմական փորձի ընդհանրացման վրա, խորհրդակցությունն ընդգծեց, որ քաղաքական կյանքի մեջ երիտասարդության, հատկապես ուսանողության նորանոր ջոկատների ներգրավումը կոմունիստական կուսակցությունների առջև դրել է երիտասարդական շարժման մասնակիցների հետ կապերի հետագա ամրապնդման, նրանց գործնական աջակցություն ցույց տալու, մասնավորապես պայքարի ճիշտ տակտիկա մշակելու, քաղաքական ճիշտ լոզունգներ առաջադրելու անհետաձգելի խնդիրները։ Խորհրդակցությունում միաժամանակ նշվեց, որ բանվորական շարժման օգտին մոնոպոլիաների և միլիտարիզմի տիրապետության դեմ գլոբալ պայքարի զարգացման համար դեռևս անբավարար են օգտագործվում երիտասարդական շարժման պոտենցիալ հնարավորությունները, որոնք ավելի մեծ են, քան թվացել է մինչև այժմ և, ընդհակառակն, երբեմն դերագնահատվում են պայքարի այն ձևերը, որոնք կապված են սահմանադրական, մասնավորապես, պառլամենտական գործողությունների հետ։ Մասնավորապես ԱՄՆ-ի կոմկուսի ներկայացուցիչը խորհրդակցությունում նշեց, որ իր երկրում ուսանողական շարժման թափը զգալիորեն առաջ է անցել նրա կազմակերպվածությունից, հետևաբար նաև արդյունավետությունից։ Իսկ դա նշանակում է, որ ինչ-որ տեղ իրականության տեսական վերլուծությունը ետ է մնում իրականության մեջ տեղի ունեցող նոր փոփոխություններից։

Մերժելով ուսանողական և ընդհանրապես երիտասարդական շարժման աղանդավորական մեկնաբանությունը, կոմունիստները միաժամանակ տեսնում են հասարակական այդ շերտի հետ իսկական դաշինքի ստեղծման ողջ բարդությունը։ Ուստի նրանց վիճակված է հսկայական համբերատար, մանրակրկիտ բացատրական ու կազմակերպական աշխատանք

[1] «Международное совещание коммунистических и рабочих партий», ст. 26.

տանել երիտասարդության քաղաքական գիտակցությունը լուսավորելու համար։ Այդ նպատակով կոմունիստները ակտիվորեն մասնակցում են երիտասարդական շարժմանը, մեծ ջանքեր գործադրում այն առաջ մղելու, նրա մակարդակը բարձրացնելու համար։ Նրանք երիտասարդությանը համբերատար կերպով պարզաբանում են ժամանակակից հեղափոխական պրոցեսի բովանդակությունը, նրա զարգացման հեռանկարները։ Կոմունիստները երիտասարդական շարժման շարքերն են տանում գիտական սոցիալիզմի գաղափարները։ Կոմունիստական ու բանվորական կուսակցությունների 1969 թվականի խորհրդակցության հիմնական փաստաթղթում ասված է, որ կոմունիստները «երիտասարդության շարքերում տարածում են գիտական սոցիալիզմի գաղափարները, պարզաբանում զանազան կեղծ հեղափոխական գաղափարների վտանգավորությունը, որոնք կարող են ներգործել երիտասարդության վրա, ձգտում են նրան օգնել գտնելու իմպերիալիզմի դեմ իր շահերի պաշտպանության համար մղվող պայքարի ճիշտ ուղին»[1]։ Դա չափազանց կարևոր է, որովհետև, ինչպես վերևում ասվեց, նույնիսկ իրեն մարքսիստական համարող երիտասարդության զգալի մասը Մարքսին գիտե միայն «ինտերպրետացիաներով», այսինքն՝ Հ. Մարկուզեի և այլոց ռևիզիոնիստական խեղաթյուրումներով։ Ուսանողական կազմակերպություններից շատերը տառապում են կազմակերպական տարրնթացությամբ և գաղափարական դիրքերի ոչ հստակությամբ։ Նրանց շրջանակներում, ամբողջությամբ վերցրած ուսանողական շարժման մեջ, գնալով սրվում է պայքարը մի կողմից գիտական սոցիալիզմին մոտ կանգնած հեղափոխական-մարքսիստական հոսանքի, մյուս կողմից՝ անարխիստական-տրոցկիստական (կամ այսպես կոչված «անտիինստիտուտալիստական», «անտիավտորիտար») հոսանքների միջև, որոնք ձգտում են ստեղծել «նոր» տեսություն՝ մարքսիզմ-լենինիզմի առանձին դրույթները անարխիստների, նեոտրոցկիստների, «մաոականների» և Թ. Ադոռնոյի, Հ. Մարկուզեի, Յու. Հաբերմասի տիպի սոցիոլոգների կոնցեպցիաների հետ սինթեզի միջոցով։ «Ուստի կոմունիստները երիտասարդությանը անդադրում բացատրում են զանազան կեղծ հեղափոխական լոզունգների վտանգը, օգնում նրան՝ կանգնելու ճիշտ ուղու վրա։ Այդ նպատակով նրանք մշտապես վերլուծում են երիտասարդության միջավայրում տեղի ունեցող պրոցեսները, հետևում նրա քաղաքական տրամադրությունների փոփոխություններին, ունկնդրում նրա պահանջները[1]։

Այսպես, օրինակ, ֆրանսիական կոմունիստական կուսակցությունը ուսանողների մասսայական շարժումներից դեռ շատ առաջ հանդես եկավ երկրի կրթական սիստեմի արմատական վերակառուցման պահանջով և պառլամենտին ներկայացրեց կոնկրետ առաջարկներ, որոնք ժամանակին մշակել էին նշանավոր մտավորականներ Պոլ Լանժեվենը և Անրի Վալլոնը[2]։ Հետագայում ֆրանսիական կոմունիստները նոր պայմանների համեմատ ստեղծագործաբար զարգացրին դպրոցի և համալսարանի վերակառուցման իրենց ծրագիրը։ 1968 թվականի մայիսին Ֆրանսիայի կոմկուսը անվերապահորեն պաշտպանեց բարձրագույն կրթության ռեֆորմի պահանջով հանդես եկած ուսանողության մարտական ելույթները։

Ուսանողների շրջանում տարվող աշխատանքի զգալի փորձ են կուտակել նաև Իտալիայի, Իսպանիայի, Ճապոնիայի, ԱՄՆ-ի և ուրիշ երկրների կոմունիստական կուսակցությունները, որոնք մշտապես կատարելագործում են կազմակերպական և գաղափարական աշխատանքի բազմազան ձևերն ու մեթոդները, իրենց շուրջը համախմբում երիտասարդության նորանոր զանգվածներ։

Երիտասարդության համար մղած պայքարում կոմունիստական կուսակցությունները ստիպված են ընդհարվել ինչպես աջ օպորտունիզմի, այնպես էլ «ձախ» էքստրեմիզմի դիմադրությանը։

Աջերի դեմ կոմունիստների պայքարն անողիջում է ու անկոմպրոմիս։ Եվ դա հասկանալի է, որովհետև աջերը բուրժուազիայի ուղղակի գործակալներն են ինչպես բանվորական, այնպես էլ երիտասարդական շարժման մեջ։

[1] «Международное совещание коммунистических и рабочих партий», стр. 27.

[1] Տե՛ս Проблемы мира и социализма», № 10, 1970, էջ 90—93։
[2] Տե՛ս «Коммунист», № 2, 1970, էջ 105։

Ինչ վերաբերում է «ձախ» էքստրեմիզմին, ապա ներկա էտապում նրա դեմ կոմունիստների պայքարը ոչ պակաս կարևոր նշանակություն է ձեռք բերում։ Դա թելադրված է նրանով, որ հանգամանքների բերումով ընդվզող երիտասարդության զգալի մասը, որի պայքարն ընթանում է բարդ ու հակասական պայմաններում, համեմատաբար հեշտ է ընկնում ուլտրաձախ և կիսաանարխիստական, քան աջ օպորտունիստական հայացքների ազդեցության տակ։

Ընդհարվելով հակակոմունիզմի նոր «ձախ» տարբերակի հետ, կոմունիստական կուսակցությունները կարողացան ժամանակին ըմբռնել նրա էությունը և մշակել նրա դեմ պայքարի անհրաժեշտ ձևեր ու մեթոդներ։ Բայց որքան էլ դա արագ կատարվեց, այնուամենայնիվ, պահանջվեց որոշակի ժամանակ, որի ընթացքում, «ձախերը» կարողացան իրենց ազդեցությունն ամրապնդել երիտասարդական շարժման առանձին ջոկատների մեջ։

Որպես դրական երևույթ պետք է նշել, որ պրոլետարիատի հետ երիտասարդական շարժման միավորման համար կոմունիստների առաջարկները վերջին տարիներս ավելի հաճախ են արձագանք գտնում ռադիկալ շարժման որոշ ղեկավարների կողմից (խոսքն, իհարկե, կոն-բենդիտների մասին չէ)։ Ուսանողական շարժման արդյունավետությունը բարձացնելու համար նրանք իրենց հերթին փորձեր են անում համագործակցելու, կապեր հաստատելու արհմիությունների և բանվոր դասակարգի հետ։ Այդ փորձերն առանձին դեպքերում պսակվել են հաջողությամբ։ Այսպես, Արևմտյան Գերմանիայի ձախ արհմիությունների և երիտասարդական կազմակերպությունների համերաշխ գործողությունների շնորհիվ վերջին տարիներս հնարավոր դարձավ ձախ դեմոկրատական շարժման յուրահատուկ ձևի՝ «արտապառլամենտական օպոզիցիայի» հանդես գալը երկրում։ Այդ օպոզիցիան էր, որ 1969 թվականի աշնանը փակեց նեոնացիստների ճանապարհը դեպի Բունդեստագ և նպաստեց այն բանին, որ քսան տարի ԳՖՀ իշխանության գլուխ կանգնած խոշոր կապիտալի ՔԴՄ/ՔՍՄ կուսակցությունը ընտրություններում պարտություն կրի և զրկվի կառավարություն կազմելու հնարավորությունից[1]։ Այդ օպոզիցիան էր, որ 1972 թվականի նոյեմբերին ԳՖՀ-ում անցկացված արտահերթ պառլամենտական ընտրություններում նշանակալի դեր խաղաց առաջադիմական ուժերի հաղթանակի գործում։

Երիտասարդության քաղաքական ակտիվության աճը շատ հաճախ արտահայտվում է այն բանում, որ այդ երիտասարդությունը վճռականապես մերժում է իմպերիալիզմի առջև աչքեֆորմիստական կապիտուլյանտությունը։ Արևմտագերմանական սոցիալ-դեմոկրատիայի, ֆրանսիական, ավստրիական, իտալական, սկանդինավյան երկրների սոցիալիստական կուսակցությունների աջ լիդերներն անլուծելի կոնֆլիկտի մեջ են նույնիսկ սեփական երիտասարդական կազմակերպությունների հետ, կազմակերպություններ, որոնց այդ կուսակցությունները համարում էին իրենց մասնաճյուղերը։ ԳՖՀ-ում սոցիալիստ-ուսանողները նշավակում են սոցիալ-դեմոկրատական վերնախավին, որը կամովին հրաժարվել է կապիտալիստական կարգերի նկատմամբ օպոզիցիոն դիրքորոշումից։

Չնայած առանձին հաջող փորձերին, պետք է ասել, սակայն, որ ընդհանուր առմամբ բանվորական արհմիությունների հետ երիտասարդական շարժման մերձեցումը կատարվում է երկչոտաբար և ոչ միշտ է ցանկալի արդյունք տալիս։ Այդ համագործակցությանն ամեն կերպ խանգարում են արհմիությունների աջ պարագլուխները։ Չպետք է հաշվից դուրս նետել նաև այն հանգամանքը, որ այդ համագործակցության դեմ հանդես են գալիս նաև բանվոր դասակարգի քաղաքականապես այն հետամնաց շերտերը, որոնք խաբվում են ամենախավարամիտ ծայրահեղ աջ ուժերի կողմից, գնում նրանց ուռահայրենասիրական լոզունգների ետևից, երբեմն էլ հավաքվում շովինիստական, անգամ կիսաֆաշիստական ցույցերի։

Մարքսիստ-լենինյանները միաժամանակ հանդես են գալիս ուսանողական շարժման ֆետիշացման դեմ, մշտապես հիշեցնում են նրա սահմանափակվածությունը, ցույց տալիս հակամոնոպոլիստական ճակատում երիտասարդության ղեկավար դերի մասին նրա որոշ ղեկավարների անհիմն պահանջների վնասակար լինելը։ Իսկ նման պահանջներ հաճախ են առաջադրում երիտասարդական շարժման այն պարագլուխները, որոնք պրոլետարիատին դիտում են ոչ թե որպես դասա-

[1] Տե՛ս «МЭ и МО», № 6, 1970, էջ 118։

կարգային պայքարի սուբյեկտ, այլ լավագույն դեպքում որպես «ուսանողության կողմից հեղափոխական դաստիարակության» օբյեկտ։

Մյուս կողմից կոմունիստները վճռական պայքար են մղում երիտասարդական շարժման թերագնահատման ամեն տեսակ փորձերի դեմ։ Նրանք ելակետ ունեն լենինյան տեսական ժառանգությունը, մասնավորապես Վ. Ի. Լենինի «Ուսանողական շարժումը և արդի քաղաքական դրությունը» հոդվածը, որտեղ պրոլետարիատի առաջնորդը հանդես է եկել երիտասարդության նկատմամբ վնասակար պեդանտիզմի դեմ, որը տանում է դեպի օպորտունիստական քաղաքականություն։

Կոմունիստական կուսակցությունները մեծ ջանքեր են գործադրում հաղթահարելու երիտասարդության նկատմամբ հենց իրենց շարքերում եղած աղանդավորական տրամադրությունները։ Կոմունիստական ու բանվորական շարժման մեջ եղած «ձախ» հոսանքների առաջնորդները սրանից մի քանի տարի առաջ անհիմն մեղադրանքներ էին հարուցում երիտասարդության, մասնավորապես, ուսանողության նկատմամբ, նրան մեղադրելով «հեղափոխական տեսություններից հրաժարվելու», «բանվոր դասակարգի նկատմամբ խնամակալություն հանդես բերելու» մեջ։ Օրինակ, Վենեսուելայում «ձախերը» ուսանողներին մեղադրում էին, թե նրանք «իրենց են վերապահում երկրի բնակչության մեծ մասի անունից հանդես գալու իրավունքը»։ Բրազիլիայում կոմկուսի շարքերում նույնիսկ հանդես եկավ ուսանողական շարժման դեմ ուղղված որոշակի օպոզիցիա։ Ավելին, նույնիսկ փորձեր արվեցին այդ շարժումը թուլացնել այն պատճառաբանությամբ, թե այն գալիս է նսեմացնելու բանվոր դասակարգի ղեկավար դերը հեղափոխական շարժման մեջ։

Բայց կոմունիստական կուսակցությունները կարողացան հաղթահարել նման աղանդավորական տենդենցները երիտասարդական շարժման նկատմամբ։ Այժմ երիտասարդական շարժման հասցեին մեղադրանքով հանդես են գալիս ուլտրաձախ ֆրակցիոն խմբերը, ինչպես նաև դեղին, պրոիմպերիալիստական արհմիությունները։ Սրանք շարունակում են պնդել, թե ռադիկալ ուսանողությունը դառնում է կոմունիստական շարժման «մրցակից» և որ աստիճանաբար նրան է փոխանցվում հեղափոխական շարժման ղեկը։

Իհարկե, բնավ հարկ չկա պնդելու, թե պետք չէ պայքարել երիտասարդության էքստրեմիստական (իսկ անհաջողությունների դեպքում՝ պարտվողական) տենդենցների, ինչպես նաև երիտասարդության մի մասի անկայուն հայացքների դեմ։ Բայց դրա հետ միասին անհրաժեշտ է նշել, որ ուսանողական ձախ կազմակերպությունների մեծ մասը ոչ միայն հավակնություն չունի ղեկավար դեր ստանձնելու հեղափոխական շարժման մեջ, այլև ուղղակի դատապարտում է այն ելույթները, որոնք գալիս են էքստրեմիստական դիրքերից։ Նրանք իրավացիորեն գտնում են, որ ուսանողությունն իր խնդիրը պետք է համարի բանվոր դասակարգի գործին օգնելը, նպաստի, որ նա հաջողությամբ կատարի հեգեմոն-դասակարգի իր պատմական դերը։

Կապիտալիստական իրականության դեմ խռովություն բարձրացրած երիտասարդությանը պրոլետարիատի կողմը գրավելու ուղղությամբ կոմունիստական կուսակցությունների վերջին տարիներին ծավալած եռանդուն գործունեությունը դրական մեծ արդյունք է տվել։

Ամենից առաջ ակնհայտ է, որ երիտասարդական շարժումը գնալով ավելի ու ավելի մեծ հետաքրքրություն է ցուցաբերում մարքսիզմ-լենինիզմի նկատմամբ, ավելի ու ավելի է կողմնորոշվում դեպի գիտական սոցիալիզմի գաղափարախոսությունը։ Ամերիկյան կոմունիստ Հենրիխ Բորովիկը գրում է. «Գաղտնիք չէ, որ վերջին տարիներին ամերիկյան երիտասարդության մոտ՝ ոչ միայն ուսանող, այլև բանվոր երիտասարդության շրջանում զգալի չափով ուժեղացել է հետաքրքրությունը մարքսիզմի նկատմամբ»։ Նա նշում է, որ երեք-չորս տարում մի քանի անգամ ավելացել է Վ. Ի. Լենինի աշխատությունների, հատկապես «Ի՞նչ անել» գրքի տպաքանակը[1]։ Երիտասարդության շրջանում աճել է հետաքրքրությունը նաև Մարքսի ու Էնգելսի աշխատությունների, միջազգային կոմունիստական շարժման կարևորագույն տեսական փաստաթղթերի նկատմամբ։ Դասակարգերի և դասակարգային

1 Տե՛ս «Литературная газета», 31 марта 1971 г.

պայքարի մասին մարքս-լենինյան տեսության հետ ծանոթանալուն զուգընթաց աճում է երիտասարդության պայքարի թափը, այն ձեռք է բերում հետևողականության և կազմակերպվածության նորանոր գծեր։ Երիտասարդությունն ավելի մեծ վճռականությամբ է ձեռնոց նետում բուրժուական ապրելակերպին, շահագործման պատերնալիստական մեթոդներին, որոնք աշխատանքի մարդկանց մի մասի մոտ պատճառ են դառնում լանդսկնեխտական տրամադրությունների և մոմային գիտակցության ձևավորման։ Բայց առավել գնահատելին այն է, որ, ձգտելով իր կապերը խզել քաղքենիական սրտամաշ միջավայրից, մարքսիստական գաղափարների ազդեցությունը կրող ընդվզող երիտասարդությունը, մասնավորապես ուսանողությունը, վճռականապես հրաժարվում է կապիտալի տերերի ձեռքին գործիք դառնալ և մասնակցել բանվոր դասակարգի շահագործմանը։ Ավելին, այդ երիտասարդության միջավայրից դուրս են գալիս բացառիկ շնորհներով օժտված տեսաբաններ ու գրականագետներ, որոնք տաղանդավոր գրչով արտահայտում են գիտատեխնիկական հեղափոխության աղաղակող հակասությունները, զգայուն հոտառությամբ որսում բարոյապես ու ֆիզիկապես թշվառացած աշխատավորների սոցիալական տրամադրությունները, դրանք մարմնավորում գեղարվեստական կերպարներում և քաղաքական պամֆլետների մեջ, դրանով իսկ նպաստում երիտասարդության նորանոր խավերի քաղաքական արթնացմանը, այն շերտերի, որոնք գնալով ավելի ու ավելի հաճախ են ընդհարվում բուրժուական պետության ռեպրեսիվ մեխանիզմին։

Արևմուտքի երիտասարդ մարդկանց քաղաքական տրամադրությունների ձախացման ակնառու ապացույցներից մեկն ընտրությունների ժամանակ կոմունիստների օգտին նրանց տված ձայների անշեղ աճն է։ Այսպես, Իտալիայում պառլամենտի 1968 թվականի ընտրությունների ժամանակ կոմկուսի թեկնածուների օգտին քվեարկեց երիտասարդ ընտրողների մոտ կեսը, մինչդեռ նախորդ ընտրություններին քվեարկել էր միայն մեկ քառորդը։ 1974 թվականի պառլամենտական ընտրություններում նույնպես Իտալիայի կոմկուսը ստացավ երիտասարդ ձայների շուրջ 50 %-ը։

Երիտասարդական շարժման շարքերում կոմունիստական

կուսակցությունների ազդեցության ուժեղացման զուգընթաց տեղի է ունենում կոմունիստական կուսակցությունների երիտասարդացման պրոցես, այսինքն՝ կոմկուսների շարքերն են գալիս հակաիմպերիալիստական պայքարի ամենաառաջավոր, ամենագիտակից երիտասարդ մարտիկները։ Կոմունիստական ու բանվորական կուսակցությունների 1969 թվականի միջազգային խորհրդակցության ամփոփիչ փաստաթղթում նշված է. «Աշխատավոր, ամենից առաջ բանվոր երիտասարդությունը, որը գերշահագործման է ենթարկվում և իր համար հեռանկար չի տեսնում կապիտալիզմի օրոք, ավելի ու ավելի ակտիվորեն է ներգրավվում դասակարգային պայքարի մեջ, մտնում է արհմիությունների, կոմունիստական և այլ դեմոկրատական կազմակերպությունների մեջ»[1]։

Ավելին, վերջին տարիներս կոմկուսակցությունների շարքերը մտած երիտասարդներից շատերը եղել են «նոր ձախերի» խմբերից։ Այսպես, 1978 թվականին «Ուսանողներ՝ հանուն դեմոկրատական հասարակության» կազմակերպությունից ԱՄՆ-ի կոմկուսի շարքերը եկավ երիտասարդների մի մեծ խումբ։ Նշելով, որ ԱՄՆ-ի կոմկուսը «կապված է ուսանողական և երիտասարդական շարժման լավագույն ուժերի հետ», որ նա մեծ ազդեցություն է ձեռք բերել «ամերիկյան երիտասարդության լավագույն մասի վրա», կոմկուսի գլխավոր քարտուղար Հեյս Հոլլը ասել է, որ «մենք գտնվում ենք մեր կուսակցության աճի նոր ալիքի սկզբնավորման շրջանում»։ Նման երևույթ տեսնում ենք ուրիշ շատ երկրների կոմունիստական կուսակցություններում։ Այսպես, 1977—1978 թվականներին Արևմտյան Բեռլինի Սոցիալիստական միասնական կուսակցության շարքերը մտածների կեսից ավելին՝ շուրջ 1,5 հազար հոգի, երիտասարդության ներկայացուցիչներ էին, ըստ որում դրանց 80 տոկոսը սերված էր բանվորական ընտանիքներից, 10 տոկոսը ուսանողներ էին։ Այս երևույթը ասում է այն մասին, որ երիտասարդական և ուսանողական շարժումն իր զարգացման ընթացքում աստիճանաբար ու անխուսափելիորեն ետևում է թողնելու «ձախ» ռադիկալիզմի կեղծ հեղափոխականությունը։

---

1 «Международное совещание коммунистических и рабочих партий», стр. 26—27.

Եվ այսպես, կապիտալիստական երկրների երիտասարդության առջև բացվող հեղափոխական հսկայական հեռանկարները բանվոր դասակարգի և նրա կոմունիստական ավանգարդի հետ սերտ կապ հաստատելու մեջ է։ Այդ կապը գնալով կամրապնդվի, այն կամրապնդվի երիտասարդական, հատկապես ուսանողական շարժման աճի հիվանդությունները, մասնավորապես՝ կազմակերպական տարընթացությունը և քաղաքական հասունության պակասը հաղթահարելուն զուգընթաց։ Շատ բան է կախված նրանից, թե երիտասարդությունը, մասնավորապես ուսանողությունը, ինչպես կտիրապետի գիտական սոցիալիզմի ուսմունքին, դասակարգային մարտերի հարուստ փորձին։ Բայց ամենակարևորը երիտասարդության միջավայրում կոմունիստների կողմից տարվող դաստիարակչական ու կազմակերպական աշխատանքն է՝ նրա պահանջները խորապես ըմբռնելու, նրա մարտական տրամադրությունները լիովին հաշվի առնելու հիման վրա։ Այդ աշխատանքը հետապնդել ու հետապնդում է մի հիմնական նպատակ՝ լիովին բացահայտել ուսանողական շարժման պոտենցիալ ուժերը։

Կապիտալիստական երկրների երիտասարդությունն իր հսկայական մեծամասնությամբ ակտիվորեն հանդես է գալիս իմպերիալիզմի դեմ, պայքար է մղում խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի համար։ Այդ երիտասարդությունն իր շարքերից առաջ է քաշում նորանոր մարտիկներ, որոնք պատրաստ են մարդկային ազնիվ խիզախումների։ Կապիտալիստական երկրների երիտասարդության շարժումն ընդունակ է դառնալու իսկական հեղափոխական շարժման ակտիվ ջոկատներից մեկը։

*
* *

Մանրբուրժուական տեսաբանները, մասնավորապես «նոր ձախերի» գաղափարախոսներն իբրև հետևողական ուժ են ներկայացնում նաև «գետտոն», այսինքն՝ բուրժուական հասարակության կողմից մերժված ամենաթշվառ ապադասակարգայնացված շերտերին, ազգային և ռասայական իրավազուրկ խավերին, այդ հասարակության պերիֆերիաներում ապրող սոցիալական «ավելորդ» խմբերին, կապիտալիզմի

զարգացման բոլոր զոհերին, որոնք, Մարկուզեի խոսքերով ասած, գտնվում են «դեմոկրատիայի շրջանակներից դուրս» և դեռ չեն հասցրել ձուլվել, միավորվել գոյություն ունեցող հասարակական-քաղաքական սիստեմին։ «Գետտոյում», ըստ նրա, հեղափոխական պոտենցիա ունեն հատկապես այն խավերը, որոնք չեն մասնակցում արտադրության պրոցեսին, այլ խոսքով՝ լյումպեն-պրոլետարներ են։

Իրենց «հեղափոխական» կոնցեպցիաներում «նոր ձախերի» ամերիկյան պարագլուխները հատկապես կարևոր նշանակություն են տալիս «գետտոյի» ամենաբազմամարդ ու ամենաթշվառ հատվածին՝ նեգրական բնակչությանը։ Մարկուզեն և Ընկ. այն կարծիքին են, որ մտավորականներից և ուսանողներից հետո հեղափոխական ամենամեծ լիցքը կրում է հենց այդ բնակչությունը։

Անշուշտ, ինչպես հայտնի է, ամերիկացիների մեջ «ձուլելով» անգլիացիների, գերմանացիների, իտալացիների, սկանդինավցիների, հայերի և այլ ազգերի նորանոր զանգվածներ, ԱՄՆ-ը կամա թե ակամա ընդհարվել է 25 միլիոն սևամորթների սոսկալի դրամային, որոնք ըստ էության մնացել են ազգից դուրս[1]։

ԱՄՆ-ի նեգր բնակչության նկատմամբ խտրականության փաստերը լայնորեն հայտնի են ամենքին։ Բայց այստեղ շոշափվող «գետտոյի» առնչությամբ ավելորդ չի ընդհանուր գծերով նորից անդրադառնալ ժամանակակից ամերիկյան (և համաշխարհային) հասարակայնությանը հուզող այդ կարևոր հարցին։

Սևամորթների նկատմամբ ռասայական վայրենի խտրականությունը սոցիալ-տնտեսական խոր արմատներ ունի և

---

1 *Ժամանակակից նեգր բնակչության այդ դրամայի մասին տե՛ս* «Социальная философия Мартина Лютера Кинга», «Вопросы философии», 1965, № 7; «Черные мусульмане в США», «Наука и религия», 1968, № 11; «Нация ислама» и Малькольм X», «Вопросы философии», 1970, № 3; «Лозунг «черной власти» США», «Вопросы философии», № 4, 1971. *պրոբլեմին են նվիրված նաև այն հոդվածները, որոնք լույս են տեսել՝* «МЭ и МО», № 7, 1966, стр. 126—139; «США: экономика, политика, идеология», № 3, 1971, стр. 12; № 4, 1971, стр. 15; «МЭ и МО», № 2, 1972 *և այլն։*

հետևանք է գոյություն ունեցող շահագործողական դասակարգերի բուրժուական ապրելակերպի։ Ռասիզմը կապիտալիզմի առավել ամոթալի ծնունդն է։

1619 թվականի ամռանը ստրկավաճառները ԱՄՆ-ի այժմյան Վիրջինիա նահանգի Ջեյմսթաուն ավանը հասցրին 20 սևամորթ ստրուկներ՝ տեղի կոլոնիստներին վաճառելու համար[1]։ Դրանով սկիզբ դրվեց սևամորթ ամերիկացիների[2] անմարդկային հարստահարման սիստեմին։ Չնայած 1861—1865 թվականների քաղաքացիական պատերազմի շնորհիվ ԱՄՆ-ում պաշտոնապես վերացվեց ստրկատիրությունը, սակայն սևամորթը մնաց որպես ամերիկյան հասարակության ամենաարհամարհված ու ստորին տարրը։ ««Ազատագրելով» նեգրերին,— գրել է Վ. Ի. Լենինը,— նա (ամերիկյան բուրժուազիան—Հ. Ս.) աշխատել է «ազատ» ու հանրապետական-դեմոկրատական կապիտալիզմի հողի վրա վերականգնել ամեն հնարավորը, անել ամեն հնարավորն ու անհնարինը՝ նեգրերի ամենաանամոթ ու ստոր ճնշման համար»[3]։

Նեգրական պրոբլեմը, որի արմատները, այսպիսով, գնում են ստրկության ժամանակները, մինչև այժմ ԱՄՆ-ի ամենասուր ու բարդ ներքաղաքական պրոբլեմն է։

Մինչև այս դարի 40-ական թվականները երկրի նեգր բնակչությունը հիմնականում կենտրոնացված էր հարավում[4]։

---

[1] Տե՛ս «США: экономика, политика, идеология», № 4, 1971, էջ 15։

[2] Վերջին ժամանակներս սևամորթ ամերիկացիներն ավելի ու ավելի հազվադեպ են իրենց նեգրեր անվանում։ Նրանք գտնում են, որ «նեգր» անվանումը ոտնահարում է իրենց մարդկային արժանապատվությունը, քանի որ Աֆրիկայի բնիկներին առաջին անգամ այդպես են կոչել պորտուգալական գաղութարարները։ Սևամորթ ամերիկացիները դերադասում են անվանվել «աֆրո-ամերիկացիներ», «սև ժողովուրդ» կամ ուղղակի՝ «սևեր»։

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, էջ 16։

[4] 1917 թվականին լույս ընծայած «Նոր տվյալներ կապիտալիզմի զարգացման օրենքների մասին հողագործության մեջ» գրքույկում Վ. Ի. Լենինը նշում էր, որ «Միացյալ Նահանգների հարավն ստրկատիրական էր, մինչև որ 1861—1865 թթ. քաղաքացիական պատերազմը սրբեց-ոչնչացրեց ստրկությունը։ Մինչև այժմ նեգրերի թիվը, որ հյուսիսային ու արևմտյան շրջանների բնակչության մեջ 0,7—2,2 տոկոսից ավելի չէր, հարավում կազմում է ամբողջ բնակչության 22,6-ից մինչև 33,7 տոկոսը։ Բոլոր Միացյալ Նահանգների համար բնակչության մեջ նեգրերի միջին թիվը 10,7 % է» (Երկեր, հ. 22, էջ 16)։ Տոկոսային այս հարաբերությունը աննշան փոփոխություններով պահպանվել էր մինչև Հոկտեմբերյան համաշխարհային պատերազմը։

Հետագա տասնամյակներին, ռասայական տեռորից փրկվելու և գոյության միջոցներ գտնելու համար միլիոնավոր սևամորթներ փոխադրվեցին Արևմուտք և Հյուսիս, առավելապես արդյունաբերական խոշոր կենտրոններ։ Միայն 40—60-ական թվականներին այդ շրջաններում վերաբնակվեց ավելի քան 4 միլիոն նեգր։ Դրա հետևանքով երկրի նեգրական տարրը հիմնականում քաղաքաբնակ դարձավ[1]։ Բավական է ասել, որ 1940 թվականի համեմատությամբ սև բնակչությունը Բոստոնում 3 տոկոսից աճել և 1970 թվականին հասել էր 16 տոկոսի, Նյու Յորքում համապատասխանաբար՝ 7-ից 21 տոկոսի, Լոս Անջելոսում՝ 4,5-ից 17 տոկոսի, Սան Ֆրանցիսկոյում՝ 1-ից 18 տոկոսի, Չիկագոյում՝ 8-ից 33 տոկոսի, Բալթիմորում՝ 19-ից 46 տոկոսի։ 1970 թվականին ԱՄՆ-ի 10 քաղաքներում նեգրերը կազմում էին բնակչության 40 տոկոսից ավելին։ Օրինակ, Նյու Յորքի նեգրական բնակչության թիվը վաղուց անցել է 1,5 միլիոնից, Չիկագոյում՝ մեկ միլիոնից, Ֆիլադելֆիայում, Դետրոյտում, Լոս Անջելոսում՝ կես միլիոնից[2]։ Վաշինգտոնում նեգրերը կազմում են բնակչության 71 տոկոսը[3]։

Սակայն նեգրերի միգրացիան հարավից հյուսիս և արևմուտք նրանց չփրկեց աղքատությունից ու ռասայական հալածանքներից։

Բավական է ասել, որ 1971 թվականին նեգրերը կազմում էին ԱՄՆ-ի 30 միլիոն աղքատների 41 տոկոսը[4]։ Նույն աշխատանքի համար նեգրը սպիտակամորթից մի քանի անգամ ցածր է վարձատրվում։ ԱՄՆ-ի սև ընտանիքների միջին եկա-

---

[1] 1970 թվականին ԱՄՆ-ում քաղաքաբնակներ էին սպիտակամորթների 70, իսկ նեգրերի 75 տոկոսը։ Նույն տարում գյուղատնտեսության մեջ զբաղված էր աշխատող բոլոր նեգրերի միայն 4,2 տոկոսը, իսկ նրանցից ֆերմերներ էին 1 տոկոսից ոչ ավելին։

[2] Տե՛ս Э. Л. Нитобург, Черные гетто Америки, изд-во политической литературы, М., 1971, էջ 9։

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 39։

[4] Տե՛ս նույն տեղը, էջ 18։

մուտը 1978 թվականին կազմել է սպիտակ ընտանիքների եկամտի 60 տոկոսը։ 1945 թվականից ի վեր այդ ճեղքվածքը կրճատվել է ընդամենը 3 տոկոսով։ Նման տեմպերի պայմաններում սևերի եկամուտը սպիտակների եկամտին կհասնի միայն 2275 թվականին։ Այդ է պատճառը, որ նեգր բնակչության հարստահարումից ու խտրականության քաղաքականությունից ամերիկյան մոնոպոլիաները տարեկան ստանում են 15—16 միլիարդ դոլլար գերշահույթ[1]։ Գործազրկության սարսափը նեգր բնակչության մշտական ուղեկիցն է։ Եթե 1948 թվականին գործազուրկ էր ԱՄՆ-ի 14—19 տարեկան ոչ սպիտակամորթ տղամարդկանց 7,6 տոկոսը, ապա 1965 թվականին այն աճեց մինչև 22,6 տոկոսի (սպիտակամորթների մոտ այդ թվերը համապատասխանաբար կազմել են 8,3 և 11,8 տոկոս) կամ 2,6 միլիոնից հասավ 3,6 միլիոնի։ 1976 թվականին գործազուրկ էր ԱՄՆ-ի սպիտակամորթ բնակչության 4,4 տոկոսը, իսկ սևամորթների՝ 8,3 տոկոսը։

Մշտական թերսնումն ու չարքաշ կյանքը պատճառ են դառնում նեգրերի շրջանում հիվանդությունների ու մահացության բարձր տոկոսի։ Սպիտակամորթների համեմատությամբ մահացածների թիվը նեգրերի մոտ ավել է 2—2,5 անգամ։

Բնական է, որ սոցիալական ու տնտեսական թշվառությունը, իրավազրկությունը և ռասայական ճնշումը պետք է առաջ բերեին և իսկապես 50-ական թվականների կեսերից առաջ բերեցին նեգրական բնակչության կուտակված զայրույթի բուռն պոռթկում։

1861—1865 թվականների քաղաքացիական պատերազմից երկար տասնյակներ հետո առաջին անգամ մեր դարի 50-ական թվականներին սևամորթները դիմեցին վճռական գործողությունների։ Ամերիկյան հասարակական բեմի վրա իր ողջ հասակով կանգնեց խռովարար նեգրը։ Սկզբնական շրջանում (1954—1962 թթ.) սևերի շարժումը հիմնականում զարգանում էր ոչ բռնի գործողությունների նշանաբանով, կազմակերպվում էին խաղաղ ցույցեր ու երթեր, նստած գործադուլներ։ Այս շրջանում նեգրերի պայքարի հիմնական ոլորտը դատական և օրենսդրական մարմիններն էին։ 1963 թվականից շարժումը գնալով ավելի ու ավելի քաղաքական բնույթ ստացավ և գերազանցապես փոխադրվեց փողոցները։ Սկսվեց նեգրական շարժման կազմակերպված մասսայական երթերի էտապը, երբ տեղի ունեցան նաև կարևոր գաղափարական-քաղաքական տեղաշարժեր։ Ջափավոր նեգրական լիդերները, որոնք կտրականապես ժխտում էին բռնի գործողությունները, գնալով կորցրին իրենց նախկին ազդեցությունը շարժման վրա։ Ասպարեզ եկած ռադիկալ գործիչները շարժումը լիբերալների ու ֆիլանտրոպների իրավասությունից վերցրին, դիմեցին լայն մասսաներին, ընդգծելով իրենց ազատագրության գործում նրանց առաջատար ու վճռական դերը։ Ի տարբերություն 1861—1865 թվականների քաղաքացիական պատերազմի, այս անգամ ներգրերի շարժումն ուղղվեց կապիտալիստական կարգերի, երկրի կառավարող շրջանների ներքին և արտաքին քաղաքականության դեմ, քաղաքացիական և մարդկային իրավունքներ, սոցիալական ու քաղաքական հավասարություն ձեռք բերելու նպատակին։

1963—1968 թվականներին ամերիկյան քաղաքներում ծնունդ առան հարյուրավոր իսկական ապստամբություններ։ 1963 թվականին տասնյակ հազարավոր նեգրեր փողոց դուրս եկան Դետրոյտում, Չիկագոյում, Վաշինգտոնում։ Հաջորդ տարում դեպի Վաշինգտոն կատարած մասսայական երթին մասնակցեց 400 հազար մարդ։ 1965 թվականին անհանգստությունը շարունակվում էր ամերիկյան քաղաքների նեգրական գետտոներում։ Հաջորդ՝ 1966 թվականին նեգրական ելույթներն ընդգրկեցին 38, իսկ 1967 թվականին՝ 120 քաղաք։

Սակայն նեգրական շարժման հուժկու բռնկումների տարին եղավ 1968 թվականը։ Դրա համար առիթ ծառայեց նույն թվականի ապրիլին Մեմֆիսում նեգրական շարժման նշանավոր ղեկավար Մարտին Լյութեր Կինգի սպանությունը։ Դրան ի պատասխան, մեկ շաբաթվա ընթացքում նեգրական ապստամբությունները տարածվեցին 150 քաղաքում, իսկ ամբողջովին վերցրած՝ 1968 թվականին նեգրական հուզումներն ընդգրկել էին 230 քաղաք։

Հետագա տարիներին, որպես կանոն, գործը չէր հասնում մասսայական զինված ելույթների, բայց սև գետտոները առաջվա նման շարունակում էին եռալ։ Միայն 1970 թվականին ԱՄՆ-ի սև բնակչության մեջ հուզումների ավելի քան 300

[1] Տե՛ս Э. Л. Нитобург, Черные гетто Америки, էջ 21։

բռնկում եղավ։ Բնորոշ է, որ դժգոհության բացահայտ պոռթկումներ եղան ոչ միայն խոշոր քաղաքներում, այլև նախկինում համեմատաբար հանգիստ ու մոռ բնակավայրերում։

Նեգր բնակչության վճռական պայքարի ճնշման տակ ԱՄՆ-ի կառավարությունը և տիրող դասակարգերը սկսեցին մաներեւ ու որոշակի զիջումներ անել երկրի «աֆրո-ամերիկյան հասարակությանը» և խտրականության ենթարկվող մյուս ռասայական խմբերին։ 60-ական թվականներին ընդունվեցին խտրականության դեմ ուղղված մի շարք օրենքներ։ Դրանցից ցլխավորը հանդիսացավ 1964 թվականին ընդունված քաղաքացիական իրավունքների մասին օրենքը, որով արգելվում էր ռասայական, ազգային, կրոնական և սեռային մոտիվներով պատճառաբանված խտրականությունն աշխատանքային հարաբերություններում։ Օրենսդրական այդ ակտերի նպատակն է՝ թուլացնել պայքարի լարվածությունը, սեամորթ աշխատավորներին ներշնչել, թե կարելի է խտրականությանը վերջ տալ մասնակի օրենսդրական ակտերով։ Սակայն, ինչպես պետք է սպասվեր, խտրականության դեմ ուղղված այդ օրենքները մնացին թղթի վրա։ Նեգրերը պարզ տեսան, որ քաղաքացիական աշատությունների մասին կառավարության ազդարարությունները ոչինչ չարժեն, որ դրանք շատ հեռու են իրականություն դառնալուց։ Օլիգարխիստ-ռասիստների հետ սերտ համագործակցող կառավարությունը ամեն մի հարմար մոմենտի պատրաստ է չեղյալ հայտարարել (և հայտարարում է) իր ազդարարությունները։

Սակայն նեգրական շարժումը կանգնեցնելու համար ամերիկյան կառավարությունը և երկրի տիրող դասակարգերը չսահմանափակվեցին խոստումներով ու սահմանադրական մի քանի ակտեր հրապարակելով։ Նրանք ամենախիստ միջոցների դիմեցին շարժումը ճնշելու համար[1]։ Բավական է ասել, որ միայն 1968 թվականին այդ նպատակով նրանք «ներքին ռազմաճակատ» նետեցին շուրջ 100 հազար ոստիկան, ազգային գվարդիայի զինվոր, պարաշյուտիստ-դեսանտայիններ[2]։

[1] Այս մասին մանրամասն տեղեկություններ կան Կլոդ Լայֆուրտի գրքում (Восстание в гетто за освобождение негров. М., «Прогресс», 1972.

[2] Э. Л. Нитобург, Черные гетто Америки, стр. 4.

Նեգրական շարժման դեմ ԱՄՆ-ի կառավարությունը և տիրող դասակարգերը լայնորեն օգտագործեցին այսպես կոչված «սպիտակ բումերանգը», որի նպատակն էր նեգրերին մեկուսացնել իրենց պոտենցիալ դաշնակիցներից և ամենից առաջ բանվոր դասակարգից։

Քաղքենուն վախեցնելով «սև հեղափոխության» ուրվականով, ԱՄՆ-ի իմպերիալիստական շրջանները լրացուցիչ ուժեր հավաքագրեցին նեգրերի ազատագրական շարժման դեմ։ Հականեգրական պրոպագանդան որոշակի ազդեցություն գործեց ամբողջությամբ վերցրած ամերիկյան բնակչության, այդ թվում ռասայական նախապաշարումներով վարակված սպիտակամորթ բանվորների որոշ մասի վրա։ Սպիտակ բնակչության շրջանում ռասայական տրամադրություններ բորբոքելու նպատակով պաշտոնական պրոպագանդան սկսեց լայնորեն օգտագործել վերջին երկու տասնամյակներում նեգրական բուրժուազիայի նկատելի թվական աճը[1]։ Այսպես, միայն 1950—1960 թվականներին 10 հազար դոլլարից ավելի եկամուտ ունեցողների թիվը նեգրերի շրջանում 1 տոկոսից աճեց մինչև 4,7 տոկոսի[2]։ 1960—1975 թվականներին այն ավելացավ նորից 4,6 տոկոսով[3]։ Այս փաստը սպիտակամորթ քաղքենուն հրեշավոր է թվում։ «Երբ գործը վերաբերում է ռասաներին, ապա ամերիկյան պլյուրալիզմը վերածվում է մոնումենտալ ստրուկտուրայի»[4],— գրում են նեգրական հայտնի գործիչներ Ստ. Կարմայկլը և Չ. Համիլտոնը։ Պատահական չէ, որ ընտրական այս կամ այն կամպանիայի ժամանակ հայտնի ռասիստներից ոմանք ստանում են սպիտակա-

[1] Նեգրական բուրժուազիան կազմում է ԱՄՆ-ի ինքնագործ նեգր բնակչության 3 տոկոսից ոչ ավելին։ Նեգրական բնակչության մոտ 9/10 մասը պրոլետարներ են (տես Э. Л. Нитобург, Черные гетто Америки. էջ 91)։ Չնայած կապիտալիստական շահագործման հիմնական ծանրությունն իր վրա է կրում նեգր բանվորությունը, սակայն ոչ մի սև ամերիկացի, ինչպիսին էլ լինի նրա սոցիալական դրությունը, չի կարող իրեն ազատ զգալ խտրականությունից, ծաղրուծանակից։ Նույնիսկ սոցիալական սանդուղքով մի քանի աստիճան վեր բարձրացած նեգրը մնում է իբրև «երրորդ սորտի» քաղաքացի։

[2] Տե՛ս «Новая и новейшая история», № 5, 1971, էջ 104։

[3] Տե՛ս «Правда», 27 апреля 1976 г.

[4] Տե՛ս «Вопросы философии», № 4, 1971, էջ 87։

մորթ ընտրողների ձայների զգալի մասը։ Այսպես, օրինակ, 1968 թվականին ԱՄՆ-ի պրեզիդենտական ընտրությունների ժամանակ Ալաբամայի նահանգի նահանգապետ, նեոֆաշիստ Դ. Ուոլեսը հավաքեց մոտ 10 միլիոն ձայն, կամ ընտրություններին մասնակցած բոլոր ընտրողների ձայների ընդհանուր թվի 13,5 տոկոսը։ Ըստ որում Ուոլեսին ձայն տված ընտրողների ընդհանուր թվի 15 տոկոսն արհմիությունների անդամներ էին[1]։

Նեգրական շարժման վերելքին զուգընթաց աշխուժացավ Կու-կլուկս-կլանը[2], որի գործողությունները արժանացան «սպիտակ բումերանգի» լուռ հավանությանը և ամերիկյան միլիարդատերերից շատերի ֆինանսական լայն աջակցությանը։ Կու-կլուկս-կլանին առատորեն ֆինանսավորել սկսեցին տեխասյան միլիարդատերեր Դ. Հանտը, նավթային արքա Է. Տրոնհիլը, հարավկարոլինյան տեքստիլ մագնատներից շատերը, հատկապես Միլիկենների ընտանիքը, «Հարավի արդյունաբերողների միավորյալ ասոցիացիան» և այլն[3]։

Սակայն հրազենների որոտը և ռասիստների խժդժությունները ի վիճակի չեղան խեղդելու սևերի ապատագրական շարժումը, որը գնալով ծավալվում էր։ Շարժման նոր վերելքի պատճառներից մեկը վիետնամական պատերազմն էր։ Նեգրերը կազմում էին Վիետնամում կռվող ամերիկյան զինվորների 20 տոկոսն այն դեպքում, երբ ԱՄՆ-ի բնակչության մեջ

[1] Տե՛ս «Новая и новейшая история», № 5, 1971, էջ 104։

[2] Կու-կլուկս-կլանը առաջացել է 1865 թվականին որպես հակահեղափոխական պլանտատորական օլիգարխիայի հարվածող ուժ։ Նրա օգնությամբ պլանտատորները ջախջախեցին ԱՄՆ-ի հարավի դեմոկրատական կառավարությունները։ Կու-կլուկս-կլանի նոր վերածնունդը կապված է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո երկրում հակակոմունիզմի ուժեղացման և «սառը պատերազմի» մթնոլորտի ստեղծման հետ։ Կու-կլուկս-կլանի մասսայական բազան ամերիկյան մանր բուրժուազիան է, ավելի կոնկրետ՝ շինարարական վարձակալողները, պարենային կրպակների, նախաճաշարանների, բենզինալցման կայանների սեփականատերերը։ Կլանի շարքերում կան շատ ոստիկաններ։ Կլանը որոշակի ազդեցություն ունի նաև բանվոր դասակարգի առանձին հետամնաց շերտերի՝ ավտոմեխանիկների, հյուսների, քարտաշների, տեքստիլ, շինարարական, քարածխային և արդյունաբերության ուրիշ ճյուղերի ոչ որակյալ և կիսաորակյալ բանվորների վրա (տե՛ս «Новая и новейшая история», № 5, 1971, էջ 103, 104)։

[3] Տե՛ս «Новая и новейшая история», № 5, 1971, էջ 106։

նրանց բաժինը չի գերազանցում 11 տոկոսից[1]։ Ամերիկյան հրամանատարությունը նեգր զինվորներին ստիպում էր մասնակցել ամենածանր ռազմական գործողություններին, անպաշտպան բնակչության դեմ ուղղված պատժիչ արշավներին, գերիների դաժան հաշվեհարդարներին։ Նոր էտապում շարժման հետագա զարգացման գործում մեծ դեր խաղացին նրա ղեկավարներ Մարտին Լյութեր Կինգը և Մալկոլմ Լիտտլը (նույն ինքը՝ Մալկոլմ X), որը գլխավորում էր «Սև մուսուլմաններ» նացիոնալիստական հոսանքը։

Այսօր ամերիկյան նեգրերի շարժումը իր մեջ ներառում է քաղաքական հոսանքների լայն սպեկտոր։ Այդ սպեկտորի մեջ կարելի է տեսնել տարբեր, երբեմն էլ խիստ հակադիր տենդենցներ, սկսած կոնսերվատիվ և բուրժուառեֆորմիստական հոսանքներից մինչև ավանտյուրիզմը, որը որպես պայքարի հիմնական միջոց առաջ է քաշում անհատական տեռորը։ Այդ բազմազանությունը հետևանք է նեգրական բնակչության զանազան խավերի դասակարգային գիտակցության տարբերության։

Նեգրական շարժման բազմազան հոսանքների մեջ, այնուամենայնիվ, կարելի է առանձնացնել երկու հիմնական ուղղություն՝ ինտեգրացիոնիստական և նացիոնալիստական։

Ինտեգրացիոնիստական ուղղության նպատակն է նեգրերի՝ իբրև լիիրավ քաղաքացիների, ներգրավումը երկրի հասարակական կյանքի մեջ։ Այս ուղղությունը հին պատմություն ունի և այժմ նրան հետևում են նեգրական շարժման առավել լրջախոհ տարրերը։

Նացիոնալիստական ուղղությանն են հետևում նեգրական բնակչության առավել ռադիկալ տրամադրված շերտերը, հատկապես երիտասարդությունը, որը շատ ավելի է տառապում ամերիկյան հասարակության անհավասարությունից, այլևս չի հավատում լավագույն ապագայի մասին իշխանությունների խոստումներին, առավել մեծ ատելությամբ ու զայրույթով է լցված տիրող հասարակական հարաբերությունների դեմ և նրա զայրույթը հղի է պայթյունով։ Նացիոնալիստական ուղղության ծրագիրը ձեռնտու է նաև նեգրական

[1] Տե՛ս «Вопросы философии», № 4, 1971, էջ 35։

բուրժուազիայի մի մասի շահերին, որը համեմատաբար քիչ է օգտվում իշխանությունների ու մոնոպոլիաների աջակցությունից։

Այս ուղղությունը ձևավորվեց 1960-ական թվականների սկզբից։ 1960 թվականի ապրիլին Հյուսիսային Կարոլինա նահանգում հիմնադրվեց «Ոչ բռնի գործողությունների ուսանողական կոորդինացիոն կոմիտե»՝ նեգրերի գործադուլները, ցույցերն ու բոյկոտները ղեկավարելու համար[1]։ 1963 թվականից սկսած կոմիտեն իր գործունեության ծանրության կենտրոնը փոխադրեց ամերիկյան ռասիզմի խորհրդանիշը համարվող Միսիսիպիի նահանգը[2]։ 1965 թվականից կոմիտեի գլուխն անցան առավել ռազմաշունչ-նացիոնալիստական տրամադրություններ ունեցող նեգրական մարտիկները, որոնցից շատերը, չտանելով կազմակերպված պայքարի դժվարությունները, կոչ էին անում դիմել անմիջական գործողությունների։

Ծայրահեղ նացիոնալիստական դիրքեր գրավող նեգրական կազմակերպությունները կառչում են «իշխանությունը սևերին» էքստրեմիստական լոզունգից, որը 1966 թվականի հունիսի 17-ին Գրինվուդ քաղաքում կազմակերպված մասսայական միտինգում առաջին անգամ հռչակեց նեգրական շարժման ղեկավարներից մեկը՝ Ստոկլի Կարմայկլը։ «Սև իշխանություն՝ ահա թե ինչի կարիք ենք զգում մենք»,[3]— ասել է նա։ «Իշխանությունը սևերին» լոզունգի հռչակումը ստեղծված իրավիճակի անմիջական արդյունք էր։ Ռասայական վայրենի խտրականության պայմաններում ազգային և ռասայական հպարտությունը աֆրո-ամերիկացիների մի մասի մոտ վերածվեց հախուռն թշնամանքի այն ամենի նկատ-

[1] Տե՛ս «Вопросы философии», № 4, 1971, էջ 30։

[2] Ժամանակին ամերիկյան հասարակայնությանը ցնցեցին պրոֆ. Ջեյմս Սիլվերի 1964 թվականին լույս տեսած «Միսիսիպի. փակ հասարակություն» և նեգրական շարժման գործիչ Կեննետ Վ. Կլարկի «Սև գետտո» գրքերը, որոնցում ցնցող գույներով նկարագրված են տեռորի, աղքատության, նեգրերի իրավագրկության խուլ թագավորության սարսափելի պատկերներն ԱՄՆ-ում, մասնավորապես երկրի հարավային նահանգներում, առավելապես Միսիսիպիում։

[3] Ամերիկյան մամուլում նշվում է, որ այդ լոզունգն առաջին անգամ առաջ է քաշել նեգր կոնգրեսմեն Ադամ Կ. Պաուելը 1966 թ. մայիսին։

մամբ, ինչ կապված է սպիտակամորթների հետ, անկախ նրանց դասակարգային պատկանելությունից ու քաղաքական հայացքներից։ Բանն այնտեղ հասավ, որ Կարմայկլը իր մի ուրիշ ելույթում հայտարարեց, թե սևամորթին պետք չէ և ոչ մի սպիտակ դաշնակից, թե նույնիսկ Մարքսին դիմելը ստորացնում է իր՝ որպես աֆրիկացու, արժանապատվությունը, որքանով որ նա եվրոպացի է եղել։ Բուրժուաները, ասել է նա, նեգրերի շահագործումից ստացած շահույթները ևս օգտագործում են բոլոր սպիտակամորթ բանվորներին կերակրելու համար։

«Իշխանությունը սևերին» լոզունգի կողմնակիցները գրտնում են, որ սևամորթները սպիտակամորթներից պետք է անջատվեն ոչ միայն տնտեսական ու քաղաքական, այլև տերիտորիալ տեսակետից։ Նրանք հանդես են գալիս ԱՄՆ-ի տերիտորիայի մի մասի վրա ինքնուրույն նեգրական պետություն ստեղծելու պահանջով։ Նեգրական էքստրեմիստների մոտ նացիոնալիզմն ըստ էության վերածվում է «հակառակ կողմից ռասիզմի»[1]։ Ատելություն քարոզելով ընդհանրապես սպիտակամորթների նկատմամբ, նրանք պահանջում են Միացյալ Նահանգներում նեգրերի լիակատար ռասայական մեկուսացում։

Այդ նպատակին է ծառայում նաև այն միսիոներական գործունեությունը, որ ծավալել են նեգրական շարժման առանձին գործիչներ՝ ամերիկյան նեգրերի շրջանում մահմեդականություն տարածելու նպատակով, իբրև հակազդեցություն քրիստոնեական հավատի։

Բացարձակացնելով «սպիտակների» և «սևերի» բաժանումը, «Սև իշխանության» կողմնակիցներն անտեսում են նեգրական բնակչության սոցիալական շերտավորումը, մի էական հանգամանք, առանց որի անհնարին է ձևակերպել նեգրական հարցի լուծման ռեալիստական և արդյունավետ որևէ ծրագիր։ Այդ պատճառով «Սև իշխանություն» կոնցեպցիան հակադարձ ազդեցություն է ունենում հենց իրեն կյանքի կոչած պրոցեսների վրա։ Ուստի պատահական չէ,

[1] «Սև ռասիզմի», «սև նացիոնալիզմի» գաղափարախոսությունը մանրամասն վերլուծված է Ստոկլի Կարմայկլի և Չարլ Համիլտոնի «Սև իշխանություն» գրքում։

որ «Սև իշխանություն» լոզունգը սպիտակամորթ մեծամասնության կողմից ընկալվում է իբրև իր նկատմամբ սևամորթի ագրեսիվ, էմոցիոնալ վերաբերմունքի արտահայտություն, որպես «գետտոյում» ավերիչ պայթյունների հետևանք, անկախ այն բանից, թե դրան ինչպիսի բացատրություն են տալիս նեգրական շարժման գաղափարախոսները[1]։

«Սև իշխանության» գաղափարը Մարտին Լյութեր Կինգը որակեց որպես «խաբված հույսերի ճիչ», որպես նեգր ժողովրդի «հուսահատության ու հիասթափության» հետևանք։ Միաժամանակ նա դատապարտեց սև սեպարատիզմը, դեմ արտահայտվեց «Սև իշխանության» լոզունգին և կյանքի վերջին պարզ ընդգծեց, որ նեգրական շարժման հաջողությունը պայմանավորված է սպիտակամորթ աշխատավորների պայքարի հետ ունեցած սերտ դաշինքով։ «Նեգրերը,— ասել է նա իր ելույթներից մեկում,— ամերիկացիներ են։ Մենք չենք կարող լուծել մեր հարցերը, եթե ձգտենք առանձին սև ազգ ստեղծել ամերիկյան ազգի ներսում»։

Որպես ընդհանուր երևույթ պետք է նկատել, որ նեգրական բնակչության նորանոր շերտեր նեղ ազգայնական դիրքերից աստիճանաբար էվոլյուցիա են կատարում դեպի դեմոկրատիզմ։ Դրա պատճառն այն է, որ զգալի չափով բարձրացել է դրանց դասակարգային գիտակցությունը։ Օրինակ, 1965 թվականի օգոստոսին Ուստսում ապստամբ նեգրերի զայրույթն ուղղվեց ոչ միայն սպիտակամորթ կրպակատերերի, այլև կրպակատեր այն նեգրերի, ճապոնացիների ու մեքսիկացիների դեմ, որոնք աչքի էին ընկնում իրենց խարդախությամբ ու բնակչության թալանով։ Միաժամանակ ապըստամբները ձեռք չտվեցին այն խանութներին ու կրպակներին, որոնց տերերին նրանք համարում էին «կարգին սպիտակ մարդիկ»[2]։

Այդ տեսակետից հատկանշական է նեգրական առավել ռադիկալ կազմակերպություններից մեկի՝ «Սև հովազներ» կազմակերպության էվոլյուցիան։

«Սև հովազներ» կազմակերպությունը ստեղծվել է 1966 թվականին Օկլենդում, տեղական կոլեջի ուսանողներ Հյու Նյուտոնի և Բոբի Սիլի կողմից, իբրև «Սև իշխանության» լոզունգի անտիթեզիս։ Կազմակերպությունն ունի ավելի քան 30 բաժանմունք երկրի տարբեր քաղաքներում՝ Նյու Յորքում, Չիկագոյում, Ֆիլադելֆիայում և այլն։ Չնայած կազմակերպությունը հանդես եկավ «Սև իշխանության» լոզունգի գաղափարների դեմ, բայց նրա անդամները շուտով լիովին որդեգրեցին այդ լոզունգի քաղաքական ռադիկալիզմը, իսկ կազմակերպության ղեկավարները հայտարարեցին, որ վերջին հաշվով իրենք Մալկոլմ X -ի գործի շարունակողներն են։

«Սև հովազներ» կազմակերպության ղեկավարները սկզբնական շրջանում լիովին պաշտպանում էին նեգրերի կողմից իշխանության բռնի նվաճման գաղափարը։ Բայց ազատագրական շարժման տրամաբանությունը նրանց ստիպեց միջոցներ ձեռք առնել նեգր բնակչության վրա կազմակերպության ազդեցությունն ուժեղացներու և նրա դերը համադեմոկրատական շարժման մեջ մեծացնելու համար։ Պայքարի ընթացքում նրանք աստիճանաբար եկան այն եզրակացության, որ դաշնակիցների հարցը նեգրերի ազատագրական շարժման կարևորագույն սկզբունային հարցերից մեկն է, որ այդ շարժումը չի կարող հաջողության հասնել առանց բանվոր դասակարգի, առաջադիմական ուժերի հետ սերտ դաշինքի։

«Սև հովազներ» կազմակերպության ղեկավարության նախաձեռնությամբ 1969 թվականի ամռանը Օկլենդում հրավիրվեց ներկայացուցչական լայն խորհրդակցություն։ Այստեղ էլ հնչեց նեգրական շարժման ղեկավարներից մեկի՝ Բոբի Սիլի խոսքերը. «ԱՄՆ-ում սևամորթների թշնամիները սպիտակամորթները չեն։ Նրանք մի ընդհանուր թշնամի ունեն, դա կապիտալիզմն է»։ Նա նշել է, որ նեգրերի դաժան շահագործումը կապիտալիստներին միլիարդավոր շահույթ է բերում, բայց դա հիմք չի տալիս պնդելու, թե այդ շահույթներով կերակրվում են սպիտակամորթ բանվորները։

Ինչպես նախկինում, այնպես էլ այժմ նեգր աշխատա-

[1] Չի կարելի համաձայնել է. Նիտոբուրգի այն անվերապահ տեսակետին, թե «իշխանությունը սևերին» լոզունգը սպիտակամորթների համար ընդհանուր և լիակատար հավասարություն ձեռք բերելու գործիք է, այլ ոչ թե նրանց բացառիկության մասին նեգրական շարժման ղեկավարների մոտ եղած սխալ պատկերացումների արդյունք (տե՛ս Э. Л. Нитобург, Черные гетто в Америке, էջ 153)։

[2] Տե՛ս Э. Л. Нитобург, Черные гетто в Америке, էջ 49։

վորության շահագործումը կապիտալիստների համար միջոց է ծառայում անկախ ազգային և ռասայական պատկանելությունից բոլոր աշխատավորների հարստահարումը ուժեղացնելու, նրանց աշխատավարձն իջեցնելու համար։ Ժամանակին Կ. Մարքսը «Կապիտալում» նշել է, որ ԱՄՆ-ում «Սպիտակամորթների աշխատանքը չի կարող ազատագրվել այնտեղ, որտեղ սևամորթների աշխատանքը նախատինքի դրոշմ է կրում իր վրա»[1]։

Սակայն նույն թվականի վերջերից «Սև հովազներ» կազմակերպության առջև կանգնեցին լուրջ դժվարություններ։ Իշխանություններն անողոքաբար ոչնչացրին կազմակերպության մի շարք մասնաճյուղեր, հրկիզվեցին շենքերը, ղեկավարներից շատերը սպանվեցին, ուրիշները նետվեցին բանտերը։ Բոբի Սիլի ձերբակալությունից հետո «Սև հովազներ» կազմակերպության տարբեր թևերի միջև հանդես եկան բացահայտ հակասություններ։ Աջ թևին պատկանողները, որոնց գլխավորում է Հյու Նյուտոնը, ավելի ու ավելի են հակվում «սև կապիտալիզմի» զարգացման գաղափարին։ Նրանք հավանություն են տալիս ժամանակին պրեզիդենտ Ջոնսոնի, իսկ հետո Նիքսոնի կողմից առաջ քաշված ծրագրին, որի համաձայն նեգրական շրջաններում պետք է նպաստել նեգրերին պատկանող և նեգրերին սպասարկող մանր ձեռնարկությունների ստեղծմանը։ Ուլտրաձախ թևը, ընդհակառակն, առաջ է քաշում լայն մասշտաբներով բռնության դիմելու խնդիրը։

«Սև հովազներ» կազմակերպության մեջ առկա այդ երկու խմբերն էլ, վարակված լինելով նացիոնալիզմով, նշանակալից չափով թեքվել են դեպի հակակոմունիզմի և հակասովետիզմի դիրքերը։ Պատահական չէ, որ երկու անգամ՝ 1971 թվականի հոկտեմբերին և 1979 թվականի ապրիլին կազմակերպության ղեկավարներն այցելեցին Պեկին։ Նրանք շարունակում են մնալ տարբեր տեսակ ուլտրաձախ, տրոցկիստական, անարխիստական և այլ հոսանքների ազդեցության տակ։

Սևամորթների ազատագրական շարժումը զարգանում է

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, 1954 թ., էջ 316.

բացառիկ դժվարին պայմաններում։ Վերջին տարիներին ոչ միայն չի հաջողվել հաղթահարել շարժման ներքին մասնատվածությունը (որը գլխավորապես նրա սոցիալական բազմատարրության արդյունք է), այլև նկատելիորեն թուլացել է տարբեր կազմակերպությունների միջև գործողությունների կոորդինացիան։ Դա պատահական չէ։ Շարժմանը հակադրված է այնպիսի մի հզոր ուժ, ինչպիսին ամերիկյան իմպերիալիզմն է։ Երկրի տիրող դասակարգերը կատաղորեն դիմադրում են սևերի հիմնական պահանջների իրականացմանը։ Բացի այդ, բուրժուական պրոպագանդայի վիթխարի մեքենան ամեն տեսակ միջոցների է դիմում, որպեսզի արգելակի սև բնակչության գաղափարական-քաղաքական աճը, նրա միջավայրում պատվաստի հետամնաց հայացքներ ու տրամադրություններ, վարակի հակակոմունիզմի թույնով։ Ամեն օր ու ժամ ինչպես սպիտակամորթ, այնպես էլ սև ամերիկացիները ենթարկվում են ԱՄՆ-ի տիրապետող բուրժուական գաղափարախոսության ու կուլտուրայի ազդեցությանը։

Չնայած նեգրական շարժման ակնհայտ թուլություններին ու հակասություններին, այդ շարժման ղեկավար կազմակերպությունների ու գործիչների աջ ու «ձախ» տատամակերպությունների ու գործիչների աջ ու «ձախ» տատանումներին, այնուամենայնիվ աֆրո-ամերիկացիներն իրենց պայքարում զգալի հաջողություններ են հասել։ Վերջին մի քանի տարիներում երկրի տարբեր ընտրովի օրգաններում ավելացել է նեգր բնակչության ներկայացուցիչների թիվը։ Այժմ շուրջ 20 սև ամերիկացիներ ընտրված են ԱՄՆ-ի կոնգրեսի ներկայացուցիչների պալատում, մի քանի տասնյակ սևամորթներ գրավում են քաղաքագլուխների պոստեր կամ նահանգների լեգիսլատուրների անդամներ են։

Սևերի ազատագրական շարժումը վերափոխվել է հասարակական-քաղաքական հզոր ուժի, որը գնալով ուժեղացնում է հարվածները ռասիզմի սիստեմին։ Դրան նպաստում է այն, որ գնալով ուժեղանում է ռասայական հարցերի շուրջը սևերի ու սպիտակների համերաշխությունը։ Տասնյակ հազարավոր սպիտակամորթներ մասնակցում են այն ցույցերին, որոնք կազմակերպվում են ընդդեմ ռասիզմի, ի պաշտպանություն նեգրական բնակչության, հանուն սպիտակամորթ-

ների հետ նեգրերի հավասար իրավունքների, հանուն նեգրերի ազատագրության։ Նեգրական շարժման հետ բազմաթիվ առնչություններ են դրսևորում «նոր ձախերը», հատկապես սպիտակամորթ ուսանող երիտասարդությունը։ Վերջին տարիների իրադարձությունները ցույց տվեցին, որ որոշակի շրջադարձերի ժամանակ նեգրական շարժումը պրոլետարիատի համար ավելի հուսալի դաշնակից կարող է դառնալ, քան ուսանողական շարժումը։ Դրա պատճառներից մեկը թեկուզ այն է, որ նեգրը սևամորթ է մնում իր ողջ կյանքում, իսկ ուսանող լինելը ժամանակավոր երևույթ է, անցողիկ տարիք։ Չնայած երիտասարդության լիցքն իրեն կարող է զգացնել տալ տարիքային տարբեր խմբերում և տարբեր սոցիալական հարկերում, սակայն ուսումնական հաստատությունն ավարտելուց, դիպլոմ ստանալուց հետո տվյալ ժամանակաշրջանի ուսանողությունը, որպես հասարակական խումբ, տրոհվում և դադարում է գոյություն ունենալուց, նրան փոխարինելու է գալիս հաջորդ սերունդը։ Այս առումով նեգրական շարժումը ավելի հաստատուն է, տևական և կայուն, քան ուսանողական շաժումը։ Այնուամենայնիվ, չնայած այդ տարբերությանը, իմպերիալիզմի տոտալիտար ճնշման և հատկապես ռասիզմի ու շովինիզմի դեմ, հանուն դեմոկրատիայի և խաղաղության պայքարում մենք շատ հաճախ ցուցարարների նույն շարքերում ենք տեսնում և՛ նեգրերին, և՛ սովորող երիտասարդությանը։

Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի տիրապետության դեմ մղվող պայքարում կոմունիստական ու բանվորական կուսակցությունները բանվոր դասակարգի շահերին են ծառայեցնում ինչպես մոնոպոլիստական սիստեմի դեմ թշնամաբար տրամադրված մյուս բոլոր ուժերին, այնպես էլ նեգրական շարժումը։ Նրանք հաշվից դուրս չեն նետում նույնիսկ «գետտոյի» բնակչության ապադասակարգայնացված շերտերին, դրանց չեն դիտում որպես քաղաքական տեսակետից վերջնականապես այլասերված ներքնախավերի։ Ընդհակառակն, նրանց մեջ տեսնում են որոշակի հեղափոխական պոտենցիալ և դասակարգային պայքարի ընթացքում ձգտում են սանձաղերծել այն։ «Գետտոյի» բնակչության մեջ ամենահեղափոխական տարրը կոմունիստները համարում

են ռասայական փոքրամասնություններին, հատկապես սեվամորթներին։

Նեգրական շարժման հարցերը մշտապես գտնվում են ամերիկյան կոմունիստների ուշադրության կենտրոնում։ Սրանք մեծագույն ծառայություններ ունեն ԱՄՆ-ի սոցիալ-քաղաքական գլխավոր պրոբլեմներից մեկի լուծման՝ սևամորթ ամերիկացիների ազատագրության համար մղվող պայքարում։ Առանձնապես մեծ են տասնամյակներ շարունակ ԱՄՆ-ի կոմկուսի շարքերում դաստիարակված ու կոփված, մարքսիզմ-լենինիզմի գաղափարներին անսահմանորեն նվիրված շատ նեգր կոմունիստների ծառայությունները։ Հենրի Ուինստոնի, Բենջամին Դեվիսի, Ուիլյամ Պատերսոնի, Կլոդ Լայտֆուտի, Ջեյմս Ֆորդի, Ջեյմս Ջեկսոնի, Անջելա Դեվիսի և իրենց ժողովրդի ազատագրության համար մղվող պայքարի առաջին շարքերում գտնվող ուրիշ շատ ու շատ սևամորթ կոմունիստների անուններն անխզելիորեն կապված են նեգրական շարժման այժմյան վերելքի ու հաջողությունների հետ։ Նեգրերը այժմ կազմում են ԱՄՆ-ի կոմկուսի անդամների 1/9 մասը։

Կոմունիստական կուսակցությունն ԱՄՆ-ի առաջին քաղաքական կազմակերպությունն է, որն իր գոյության հենց սկզբից հանդես եկավ նեգրերի տնտեսական, քաղաքական և սոցիալական լիակատար հավասարության պահանջով։ Դեռևս 20-ական թվականներին կոմունիստները պայքարի դրոշ բարձրացրին ռասիզմի և սպիտակ շովինիզմի դեմ, հանուն սպիտակամորթ և սևամորթ աշխատավորների համախմբման։ Ռասիստների դաժան տեռորի պայմաններում նրանք հերոսական պայքար էին մղում հարավում և ողջ Ամերիկայում՝ նեգրերի ազատագրության, նրանց դեմոկրատական իրավունքների համար, ընդդեմ լինչականների կամայականությունների։

Ելնելով փոփոխված իրադրությունից, ԱՄՆ-ի կոմունիստական կուսակցությունը մշտապես փոխել է նեգրական շարժման վերաբերյալ իր լոզունգները։

Այսպես, 1930 թվականին ԱՄՆ-ի կոմկուսն առաջ քաշեց նեգրերի, որպես ազգի, ինքնորոշման լոզունգը։ Դա այն ժամանակ էր, երբ նեգրական բնակչության հիմնական զանգ-

վածները կոմպակտ ապրում էին երկրի հարավում, աշխատում այսպես կոչված «սև գոտու» պլանտացիաներում։ Չի կարելի հաշվի չառնել նաև այն հանգամանքը, որ այդ ժամանակ նեգրերի հոգևոր կերպարը շատ բանով տարբերվում էր սպիտակամորթների հոգևոր կերպարից։ Հետագա տարիներին շատ տեղաշարժեր կատարվեցին նեգր բնակչության կյանքում։ Նրանք հարավից ցրվեցին երկրով մեկ։ Թողնելով գյուղատնտեսությունը, նրանց մեծ մասը կենտրոնացավ ու հիմնավորվեց քաղաքներում։ Աստիճանաբար վերացան նաև սևամորթների ու սպիտակամորթների հոգևոր կերտվածքի հիմնական տարբերությունները։ Այդպիսի պայմաններում նեգրերի ինքնորոշման լոզունգը միայն վնաս կարող էր բերել նրանց ազատագրական պայքարին։ 1959 թվականի դեկտեմբերին տեղի ունեցած ԱՄՆ-ի կոմկուսի 17-րդ ազգային համագումարը պաշտոնապես հանեց նեգրերի ինքնորոշման լոզունգը։ 1966 թվականի հունիսին տեղի ունեցած կոմկուսի հաջորդ՝ 18-րդ համագումարը մշակեց կուսակցության նոր ծրագիր, որն ուներ «Նեգրերի ազատագրությունը» հատուկ բաժինը։ Դա կարևոր ներդրում էր ԱՄՆ-ի սևամորթ բնակչության ազատագրական շարժման պրոբլեմի գիտական մշակման մեջ։

Ամերիկյան կոմունիստների նոր ծրագրի մեջ նշված է, որ ԱՄՆ-ի նեգր բնակչության ազատագրությունը բանվոր դասակարգի և նրա դաշնակիցների առջև կանգնած կենտրոնական հարցն է[1]։ Այնտեղ ասված է նաև, որ սևամորթ ամերիկացիների իրավազուրկ վիճակը, նրանց գերշահագործումը, ռասիզմի գաղափարախոսությունն ու պրակտիկան մոնոպոլիստական կապիտալի համար աշխատավորների տնտեսական հարստահարման միջոցներ են։ Առանց դրա դեմ վճռական պայքարի, առանց նեգրերի լիակատար ազատագրության անհնարին է սպիտակամորթ աշխատավորների առաջընթացը սոցիալական առաջադիմության ուղիով։ Իսկ կապիտալիզմի օրոք, ինչպես նշված է ԱՄՆ-ի կոմկուսի բազմաթիվ փաստաթղթերում,

[1] Տե՛ս «США: экономика, политика, идеология», № 12, 1970, էջ 77։

անհնարին է արմատախիլ անել ռասիզմի չարիքը։ Նեգրերի տնտեսական, քաղաքական և սոցիալական լիակատար ազատագրությունը հնարավոր է միայն սոցիալիզմի պայմաններում։ Միայն սոցիալիզմը կարող է սպիտակամորթների հետ համահավասար իրավունքներ ապահովել սևամորթ աշխատավորների համար։ Ուստի նեգրական շարժման մեջ կոմունիստներն իրենց մշտական խնդիրն են համարում ռեֆորմների համար ամենօրյա պայքարն անպայմանորեն զուգակցել սոցիալիզմի համար մղվող պայքարի հետ։

1969 թվականի մայիսին տեղի ունեցած ԱՄՆ-ի կոմկուսի 19-րդ համագումարը նորից անդրադարձավ նեգրական շարժմանը և միաձայն բանաձև ընդունեց այդ հարցի առթիվ։

Ամերիկյան կոմունիստները մշտապես հետևում են երկրի սևամորթ բնակչության շարժման ընթացքին, իրենց վերաբերմունքը ճշտում նրա ղեկավար կազմակերպությունների և առաջնորդների նկատմամբ։

ԱՄՆ-ի կոմկուսի 19-րդ համագումարից հետո կուսակցության առանձին անդամների, այդ թվում առանձին ղեկավարների մոտ պարզորոշ երևան եկան «սև ռասիզմի» որոշ դրսևորումներ։ Նրանք չէին նկատում շարժման ստվերոտ կողմերը, մասնավորապես «Սև հովազներ» կազմակերպության «սև նացիոնալիզմը», որի հետևանքով կանգնեցին նրա անվերապահ պաշտպանության դիրքերում։ «Սև հովազները» համարելով երկրի ամենահեռանկարային հեղափոխական ուժը, միաժամանակ նրանք որպես շովինիստներ ու ռասիստներ էին որակում այդ կազմակերպության նացիոնալիստական և էքստրեմիստական գործողությունները քննադատող կոմունիստներին։

«Սև հովազներ» կազմակերպության նկատմամբ ճիշտ վերաբերմունք մշակելու նպատակով կուսակցության ազգային կոմիտեում դիսկուսիա սկսվեց, որի ընթացքում առաջ եկան մեծ տարաձայնություններ։

ԱՄՆ-ի կոմկուսի 20-րդ համագումարը (1972 թ. փետրվար) գոհունակությամբ արձանագրեց, որ դիսկուսիան ցանկալի արդյունքներ է տվել։ Ընդունած բանաձևում համագումարը նշեց, որ անհրաժեշտ է քննադատել «Սև հովազներ» կազմակերպության ուլտրաձախ, նացիոնալիստական տեն-

դենցները, որոնք նեգրական շարժումը մեկուսացնում են սպիտակամորթ բնակչությունից, ոչ նեգր աշխատավորների ընդհանուր պայքարից։

Այժմ ԱՄՆ-ի կոմկուսի ղեկավարության մեջ լիակատար միասնություն է ձեռք բերվել «Սև հովազներ» կազմակերպության և ընդհանրապես նեգրական շարժման նկատմամբ։ Դրա վկայություններից մեկը կոմկուսի նախագահ Հենրի Ուինստոնի վերջին ելույթներն են «Պոլիտիկլ աֆֆերս» հանդեսում, մասնավորապես նրա «Սև հովազներ» կուսակցության ճգնաժամը» հոդվածը, որտեղ նա գրում է, որ այդ կազմակերպությունը շարդարացրեց ամերիկյան սևամորթ ժողովրդի հույսերը, որովհետև մեկուսացվեց նրանից։ Պատահական չէ, որ «Սև հովազներին» երիտասարդ նեգրերի մասնակցությունը գնալով նվազում է։

Սահմանազատվելով նեգրական շարժման «սև նացիոնալիզմից», միաժամանակ ամերիկյան կոմունիստները ջանում են այդ շարժումը միավորել բուրժուական հասարակության օպոզիցիոն մյուս ուժերի պայքարին։ Նրանք, մասնավորապես, իրենց կարևորագույն խնդիրներից մեկն են համարում նեգրական և ուսանողական շարժումների միավորումը։ Իսկ դա չափազանց դժվարին խնդիր է և, չընայած կոմունիստների ջանքերին, մինչև այժմ չի հաջողվել ստեղծել նեգրերի և ուսանողների միություն, նրանց մարտական միասնություն։ Դրա հիմնական պատճառները երկուսն են. առաջին, ինչպես ուսանողների, այնպես էլ նեգրերի շարքերում չափազանց մեծ է սոցիալական և քաղաքական շերտընդմիջությունը, երկրորդ, տարբեր են նեգրերի և ուսանողների հուզումների պատճառները։ Նեգրերի խռովության հիմնական պատճառը, ինչպես ասվեց, ռասիզմն է, անհավասարությունը, աղքատությունը։ Ինչ վերաբերում է ուսանողությանը, ապա ռասիզմը նրա խռովության հիմնական պատճառը չէ։ Տնտեսական, սոցիալական և քաղաքական պատճառների հետ միասին նրա խռովության հիմնական պատճառը բուրժուադեմոկրատական պատրանքների կրախն է, պատրանքներ, որ երբեք նեգրերը չեն ունեցել։ Սակայն, չնայած այս էական տարբերություններին, և՛ նեգրերի, և՛ ուսանողների շարժումներն ուղղված են կապիտալիստական կարգերի, երկրի կառավարող շրջանների ներքին և արտաքին քաղաքականության դեմ, որը և ընդհանուր հիմք ու երաշխիք է հանդիսանում առաջիկայում այդ երկու շարժումների միավորման համար։

Չնայած Հերբերտ Մարկուզեի, «նոր ձախերի» մյուս տեսաբանների հակառակ պնդումներին, պարզ է, որ ռասայական և ազգային խտրականության կապանքներից նեգր բնակչության և ընդհանրապես «գետտոյի» վերջնական ազատագրության ուղին բանվոր դասակարգի հեղափոխական պայքարն է իմպերիալիզմի դեմ, կապիտալիստական կարգերի ոչնչացումը և սոցիալիստական կարգերի հաստատումը։

* * *

Մանրբուրժուական «ձախ» ռադիկալիստական տեսությունների մեջ կարևոր տեղ է գրավում «երրորդ աշխարհը»։ Հատկապես «նոր ձախերի» համար այն հեղափոխության մեծագույն ուժ է, համաշխարհային մասշտաբով գիգանտ «աուտսայդեր»։ Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի երկրներում «նոր ձախերի» գաղափարախոսները որոնում են աշխարհը վերափոխելու, մեքենայական քաղաքակրթության սարսափներից մարդկությանը փրկելու հնարավորություններից մեկը։ «Երրորդ աշխարհը» կամ ինչպես նրանք անվանում են՝ «արտաքին պրոլետարիատը» օրինակի ուժով հեղափոխականացող ազդեցություն է գործում զարգացած կապիտալիստական երկրների օպոզիցիոն ուժերի վրա։ Արտաքին պրոլետարիատը, ասում են նրանք, կորպորատիվ կապիտալիզմի թագավորության շրջանակներում պոտենցիալ փոփոխության հիմնական գործոնն է։ Նրանց կարծիքով արդիականության գլխավոր հեղափոխական լծակներից մեկը «երրորդ աշխարհի» պարտիզանական պատերազմն է, ազգային-ազատագրական բանակները, որոնք տպառնում են իմպերիալիզմի ջղերին։ Ուստի նրանք արդիականության հեղափոխական պայքարի իդեալ են համարում Կուբան և Վիետնամը, դրանց հակադրելով մյուս սոցիալիստական երկրներին։

«Նոր ձախերի» պարագլուխներից ոմանք ճիշտ են նկա-

տում, որ ազգային-ազատագրական շարժումը սոցիալիստական հեղափոխության համար պոտենցիալ ուժ է։ Ընդհանուր առմամբ նրանք այդ շարժման մեջ ճիշտ են գնահատում «երրորդ աշխարհի» բնակչության ճնշող մեծամասնությունը կազմող գյուղացիությանը, որին հատկացնում են հեղափոխական դեր։ Այստեղ, սակայն, նրանք շեղվում են իրենց տեսության մի հիմնական սկզբունքից։ Ինչպես վերևում ասվեց, օրինակ Մարկուզեն, հեղափոխական է համարում արտադրության ոլորտից դուրս գտնվող սոցիալական շերտերին ու խավերին միայն, իսկ արտադրությանը մասնակցող դասակարգերին ու հասարակական շերտերին, այդ թվում բանվոր դասակարգին և գյուղացիությանը հակահեղափոխական ուժեր է համարում։ Բայց «երրորդ աշխարհի» գյուղացիության նկատմամբ նա բացառություն է անում, չնայած այդ դասակարգն արտադրության պրոցեսի անմիջական մասնակիցն է։ Մարկուզեն այն համոզմանն է, որ գյուղացիական շարժումը որքան լայնորեն է ծավալվում հակամպերիալիստական և ընդհանրապես հակակապիտալիստական ուղիով, այնքան նա ավելի շատ առաջադիմական գծեր է ձեռք բերում։

«Երրորդ աշխարհը» «նոր ձախերի» տեսաբաններին հրապուրում է նաև այն պատճառով, որ այնտեղ ծավալվող սոցիալական շարժումների հիմքի վրա վերջին տարիներս հանդես են եկել «ձախ» ռադիկալիստական մի շարք տեսություններ, որոնք ընդհանուր շատ բան ունեն իրենց տեսությունների հետ։ «Երրորդ աշխարհի» «ձախ» ռադիկալիստական տեսությունները նրանց սրտին մոտ են այն պատճառով, որ դրանց հեղինակները նույնպես համաշխարհային հեղափոխական պրոցեսում ժխտում են պրոլետարիատի դերը, գտնում են, որ վերջիվերջո «զարգացած ինդուստրիալ հասարակության» ընդհանուր տանիքի տակ են հավաքվելու և՛ կապիտալիստական, և՛ սոցիալիստական երկրները, քարոզում են «բուրժուական ազգերի» («հարուստ ազգերի») և «պրոլետարիատ ազգերի» («աղքատ ազգերի») մասին թեզը, նիհիլիստական վերաբերմունք են դրսևորում գիտության և տեխնիկայի նկատմամբ, գովերգում են բռնությունը և այլն։

«Երրորդ աշխարհի» գաղափարական բազմազան ուղղու-

թյունների թվում առավել ամբողջական և ավարտուն տեսք ստացածը Լեոպոլդ Սեդար Սենգորի «նեգրիտյուդի» տեսությունն է և Ֆրանց Ֆանոնի բռնության կոնցեպցիան։ Դրանցում կարծես ի մի են բերվել գաղութային ու զարգացող ժողովուրդների հակամպերիալիստական տրամադրությունները, ազատության իղձերը, երջանիկ ապագա կերտելու ձգտումները, միաժամանակ ցայտուն արտահայտվել են «երրորդ աշխարհի» վիթխարի դժվարություններն ու հակասությունները, ազգային-ազատագրական շարժման թուլությունները, գյուղացիական միլիոնավոր զանգվածների հերոսականությունը և ուտոպիզմը։

40—60-ական թվականների ժամանակաշրջանը վճռական եղավ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման պատմության մեջ։ Այդ տարիներին կործանվեցին իմպերիալիստական տերությունների գաղութային կայսրությունները, ազգային անկախություն ստացան Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի տասնյակ երկրներ։

Ապագաղութացման պրոցեսը հատկապես արագ և անսպասելիորեն արդյունավետ եղավ աֆրիկյան մայրցամաքում։ Ընդամենը մի քանի տարում՝ 50—60-ական թվականների սահմանագծին, միանգամայն նոր կերպարանք ստացավ «սև հսկան»։

Գաղութարարների դարավոր լուծը դեն նետած կամ նետող աֆրիկյան ժողովուրդների առջև կանգնեց հետագա զարգացման հրատապ խնդիրը՝ դեպի ո՞ւր շարժվել։ Այս բախտորոշ հարցին պատասխան տալիս զատվեցին ազգային-ռեֆորմիստական և հեղափոխական-դեմոկրատական ուղղությունները։

Ազգային-ռեֆորմիստական ուղղությունն արտահայտում է աֆրիկյան մայրցամաքի նոր ձևավորվող բուրժուազիայի ազգային-քաղաքական ձգտումները։ Նրա ներկայացուցիչները գերազանցապես սերվել են աֆրիկյան քայքայվող ֆեոդալական վերնախավերից, նորածագ բուրժուական միջավայրից, արտասահմանում կրթություն ստացած մտավորականների ընտանիքներից։ Նրանցից շատերը զբաղվելով գաղափարական-քաղաքական հարցերով, միաժամանակ իրենց նվիրել են գրական-ստեղծագործական աշխատանքի։

Այդպիսին է պատկերը աֆրիկյան երկրների մեծ մասում։ Վերցնենք, օրինակ, Նիգերիան։ Այս երկրի պոեզիան առաջ է քաշել բարձր մակարդակի պոետների մի փայլուն համաստեղություն։ Նիգերիական պոեզիայի խոշորագույն դեմքեր Գաբրիել Օկարայի, Ջոն Քլարկի, Վոլե Շոյինկայի, Քրիստոֆեր Օկիգբոյի և ուրիշների անունները վաղուց են դուրս եկել մայրցամաքի սահմաններից։ Գոեռական փայլուն անուններ կան նաև Անգոլայում և Սենեգալում, Մարոկկոյում և Քենիայում, աֆրիկյան ուրիշ երկրներում։

Հիմնականում Եվրոպայում կրթություն ստացած ազատագրված Աֆրիկայի երկրների նոր ձևավորվող մտավորականությունը տաղնապալից երկընտրանք է ապրում. ապավեն կանգնել եվրոպակա՞ն, թե՞ սեփական ազգային կուլտուրային։ Նրան մտահոգում, զբաղեցնում է «երկու մշակույթների կոնֆլիկտը»՝ աֆրիկյան հինավուրց կացութաձևի և եվրոպական քաղաքակրթության միջև։

Ազգային-ռեֆորմիստական ուղղության ներկայացուցիչներից շատերն իրենց ստեղծագործությունների մեջ իդեալականացնում են Աֆրիկայի պահպանողական անցյալը, մշտապես ընդգծում են, թե եվրոպական «սառը», «մեքենայական» քաղաքակրթության նկատմամբ աֆրիկյան ապրելակերպը միշտ առավելություն է ունեցել, իսկ այժմ՝ տեխնիկայի տոտալիտար ճնշման պայմաններում այդ առավելությունը ցայտուն է դրսևորվում, ինչպես երբեք։

Աֆրիկյան ազգային-ռեֆորմիստական մտածողության ամենախոշոր դեմքը սենեգալցի պոետ և պետական գործիչ Լեոպոլդ Սենգորն է։ Նա աֆրիկյան պոեզիայի ամենահզոր դեմքն է, նշանավոր պոետ ու փիլիսոփա, համաշխարհային ճանաչում ստացած հրապարակախոս ու քննադատ։ Նրա բանաստեղծությունների և պոեմների տասնյակ ժողովածուները, փիլիսոփայական տրակտատները և էսսեները թարգմանվել են շատ լեզուներով։ Նրա կյանքն անբաժանելի է Սենեգալի ժողովրդի ազգային անկախության համար մղած պայքարից։ Երկրի անկախության հռչակման առաջին օրերից մինչև այժմ նա Սենեգալի պրեզիդենտն է, ինչպես նաև հեղինակն է սենեգալական պետական հիմնի։

Սենեգալի ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի սկզբնական էտապում Սենգորը հռչակվել է որպես գաղութային կարգերի դեմ հետևողականորեն մարտնչող դեմոկրատական լայն շերտերի ճանաչված առաջնորդ։ Բայց Սենեգալի ազգային անկախությունը ձեռք բերելուց հետո, աֆրիկյան հասարակության սոցիալական բևեռացմանը զուգընթաց պարզորոշ դրսևորվեց Սենգորի բուրժուական-լիբերալ հայացքների դասակարգային սահմանափակվածությունը։ Իբրև Սենեգալի պրեզիդենտի՝ նրա կողմից կիրառվող քաղաքականության մեջ կան մի շարք դրական մոմենտներ՝ պայքար ազգային պետականության ամրապնդման, երկրի քաղաքական և կուլտուրական միասնության համար և այլն, բայց Սենգորը, վերջին հաշվով, հանդես է գալիս իբրև ձևավորվող սենեգալական բուրժուազիայի շահերի հարազատ արտահայտիչ։

Սենգորի քաղաքական-գաղափարական հայացքների ձևավորման պրոցեսը եղել է երկարատև ու բարդ։ Ուստի աֆրիկյան մեծ պոետին և փիլիսոփային ճիշտ ընկալելու և գնահատելու համար անհրաժեշտ է առնվազն թռուցիկ անդրադառնալ նրա հայացքների զարգացման էվոլյուցիային։

Լեոպոլդ Սեդար Սենգորը ծնվել է 1906 թվականին, Ֆրանսիական Արևմտյան Աֆրիկայում (այժմ՝ Սենեգալ), Դակարից հարավ գտնվող Սին փոքրիկ իշխանության Ժոալե քաղաքում, հարուստ հողատերի և առևտրականի ընտանիքում։ Ավելի քան քսան տարի է տևել նրա ուսումնառությունը։ Նախ սովորում է ծննդավայրից ոչ հեռու գտնվող ֆրանսիական միսիոներական դպրոցում, ապա՝ Դակարի ֆրանսիական կոլեջում։ Այնուհետև երկար տարիներ Սենգորը ուսանում է Փարիզի Լուի լե Գրան լիցեյում և Սորբոնի համալսարանում, մասնագիտանում գրականագիտության և լեզվաբանության գծով, հմտանում մի շարք լեզուների, հատկապես լատիներենի և հին հունարենի մեջ։ Համալսարանն ավարտելուց հետո իբրև մանկավարժ մի շարք տարիներ աշխատում է ֆրանսիական դպրոցներում։

Դեռևս ուսանողական տարիներին Սենգորը սկսում է գրել բանաստեղծություններ, միաժամանակ կարդում է

27— 1835

Կ. Մարքսի ստեղծագործությունները, որոնք նրա մեջ օպոզիցիոն տրամադրություններ են առաջ բերում բուրժուական կարգերի նկատմամբ։ Լինելով նույնը քնարերգու, Սենգորը շուտով դառնում է նաև քաղաքացիական մեծ պաթոսի բանաստեղծ։ Նրա ողջ ստեղծագործությունը տոգորվում է հարազատ Սենեգալի, Աֆրիկյան մայրցամաքի բախտի ու ճակատագրի, նրանց ապագայի հոգսերով։ Միաժամանակ ձևավորվում են Սենգորի գրական և էսթետիկական հայացքները։ Ֆրանսիական դեմոկրատական կուլտուրան նրան օգնում է խոր ճանաչելու աֆրիկյան ժողովրդական ստեղծագործությունը, իր հարազատ սենեգալական ժողովրդի ազգային կուլտուրան։ Պատահական չէ, որ հենց սկզբից նա հանդես եկավ հայրենիքի հետ գրողի սերտ կապի անհրաժեշտության պահանջով։

Ֆրանսիայի աֆրիկյան և անթիլյան գաղութներից Փարիզ ուսումնառության եկած ուսանողները 1934 թվականին Սորբոնում սկսում են հրատարակել «Սև ուսանող» («L'etudiant Noir») թերթը, որը գոյություն է ունենում մինչև 1940 թվականը։ Թերթի լույս ընծայմանն ակտիվ մասնակցություն են ունենում սենեգալցի Լ. Սենգորը, անթիլացի Է. Սեզերը և գվիանացի Լ. Դաման։ Հենց այս թերթի էջերում է, որ նրանք առաջ են քաշում իրենց տեսությունը, որը ստանում է նեգրիտյուդի տեսություն անվանումը[1]։ Այդ ժամանակվանից անցել են մի քանի տասնամյակներ, բայց մինչև այժմ նեգրիտյուդի շուրջը վիճաբանությունները չեն հանդարտվում։ Դրա հիմնական պատճառն այն է, որ առ այսօր չկա նեգրիտյուդի միասնական բնորոշում, քանի որ այդ տեսության հիմնադիրներն իրենց տեսական դիրքերը պարզ ու հստակ չեն ձևակերպել, նրանցից ամեն մեկն ընդգծել, առաջին պլան է մղել նորաստեղծ տեսության այն կողմը, որն իրեն առավել կարևոր է թվացել։

Ի՞նչ բովանդակություն ունի նեգրիտյուդի տեսությունը, ի՞նչ են քարոզում նրա ստեղծողները։

Ամենից առաջ նշենք, որ նեգրիտյուդը աֆրիկյան մայրցամաքի դարերով ստորացված և հարստահարված բնիկների յուրատեսակ բողոքն է իրենց ճակատագրի դեմ, բողոք և ընդվզում է ֆրանսիական գաղութային այն դոկտրինայի դեմ, որը հռչակում էր ստրկացված ժողովուրդների կուլտուրայի «հետամնացությունը» և այն հաղթահարելու համար անհրաժեշտ էր համարում հրաժարվել ազգայինից և ինտեգրացվել եվրոպական կուլտուրայի մեջ։ Իբրև այդ դոկտրինայի անտիպոդ, նեգրիտյուդի տեսությունը հռչակեց նեգրական կուլտուրայի միասնականությունը, վճռականորեն մերժեց ասիմիլյացիան, առաջ քաշեց աֆրիկյան կուլտուրայի ինքնատիպության մասին թեզը։ Սենգորի, Սեզերի և Դամայի դեռ առաջին գրական ստեղծագործությունները հրապարակ եկան իբրև պաքարի ստեղծագործություններ։ Հենց սկզբից նրանց քնարը խռովարար էր, ռոմանտիկ։ Մեծագույն պատկառանք տածելով ֆրանսիական կուլտուրայի հանդեպ, նրանք, սակայն, Աֆրիկայի մտավորականության գլխավոր խնդիրը համարում էին Աֆրիկային և աֆրիկյան կուլտուրային ծառայելը։ Սենգորը իր քնարի ողջ ուժով երգում էր հայրենիքի գեղեցկությունը, կենսահաստատ պաթոսով փառաբանում էր նրա հին պատմությունը, տրադիցիաները, սովորությունները, ազգային տոները, կոչ էր անում վերականգնել նրա արժանապատվությունը, նրա անցյալի փառքը։ Նա հավատում էր «նեգրական ոգու» պոռթկումին, որն անխուսափելիորեն կբացահայտի նրա «առանձնահատկությունները»։ Սենգորը «նախնյաց աստվածային ձայնի մեջ» էր տեսնում իր կոչումը, նրա մեջ անցյալի քաղցր տեսիլքներ էին ծնում տանտամի տագնապահար ձայները։ Սենգորը միաժամանակ ատելությամբ էր արտահայտվում ֆրանսիական գաղութարարների մասին, որոնք խլացրին այդ ձայները, «հնձեցին սենեգալցի գերիների ծիծաղը», «գերության և ջախջախումի ճանապարհների վրա» ոչնչացրին «սևամորթ տառապյալներին»։ Այս ամենը բացահայտորեն ուղղված էր աֆրիկյան կուլտուրայի ասիմիլյացիայի դեմ, արևմտյան ռացիոնալիզմի դեմ։

Նեգրիտյուդի անբաժանելի մասը սևամորթ կնոջ գովքն է, նրա գերագնահատումը։ Հարազատ հայրական տան, հայրենիքի կերպարը Սենգորի մոտ միաձուլվում է մոր կեր-

[1] Նեգրիտյուդ բառը պատկանում է Է. Սեզերին, որն այն հնարել և գործածել է դեռևս 1932 թվականին։

պարին, մի բան, որ հետագայում բնորոշ է դառնում սենեգալական ողջ պոեզիայի համար։ Սևամորթ կնոջը գովերգելիս Սենգորը ելնում է նրանից, որ ինչպես ինքն է ասում, աֆրիկյան կինը, ի տարբերություն մյուս մայրցամաքների կանանց, միշտ ազատ ու անկախ է եղել, չնայած նրա ուսերին ընկած հոգսերի ողջ ծանրությանը։ Նա վճռականորեն մերժում էր իր հասակակից սենեգալցի պոետ Բ. Դիոպի, մալգաշական պոետ Ժակ Ռաբեմանանձարայի «ստորաքարշություն» սպիտակամորթ կնոջ առջև, որոնք երգում էին նրա կապույտ աչքերը, խոնարհվում նրա անհասանելի գեղեցկության առջև։ Սենգորը, ընդհակառակն, երգում է նեգրուհու գեղեցկությունը, այն նմանեցնում է արծվային հայացքի հետ, որ մխրճվում է մարդու հոգին[1]։ Դրանով իսկ նա փորձում է վերագնահատել գեղեցկության մասին եվրոպացու սովորական պատկերացումները, վերաիմաստավորել գեղեցիկի ըմբռնումը, վերափոխել գեղեցիկը գնահատելու չափանիշները։

Նույն նպատակին է ծառայում Սենգորի բուռն ձգտումը՝ ապացուցել, թե մաշկի սև գույնը, որ դարերով խորհրդանշել է աֆրիկացու ոչ լիարժեք լինելը, ավելի բնական ու կատարյալ է, քան մաշկի սպիտակ գույնը։ Նա սև մաշկը դիտում է իբրև ամենաբարձր կատարելություն, իբրև ամենաարժեքավոր ստեղծագործության արդյունք, իսկ սև ռասան համարում է թոշնած ու թառամած մարդկության վերակենդանացման ու վերազարթման աղբյուր։ «Մերկ կին, սև կին, քո գույնը կյանք է»[2],— գրում է Սենգորը։

Նեգրիտյուդի տեսության հաստատմանն են ուղղված նաև Սենգորի այն պոեմներն ու բանաստեղծությունները, որոնցում նա փառաբանում է անցյալի ազատ Աֆրիկայի «անվեհեր մարտիկներին», նրանց հերոսականությունն ու վեհանձնությունը։ Իբրև խիզախության և ազգային հպարտության սիմվոլի նա բարձրացրեց հին Աֆրիկայի հզորագույն Սին տերության անվեհեր ու պատվախնդիր զինվոր Գելովերի կերպարը, գովերգեց նրա բազուկների ուժը, նրա գեղեցկությունը։

[1] Տե՛ս Л. С. Сенгор, Избранная лирика, М., 1969, էջ 19.
[2] Նույն տեղը, էջ 13։

Ինչպես տեսնում ենք, նեգրիտյուդի կոնցեպցիայում ակնհայտորեն առկա են ռասայական բացառիկության մասին նախապաշարմունքները, «սև ռասիզմը», որը աֆրիկացուն դիտում է իբրև բարձրագույն էակ։ Բայց Սենգորը, այնուամենայնիվ, կարողացավ վեր կանգնել «սև ռասիզմից», այն մերժեց իբրև քաղաքականություն։ Սև ռասայի բացառիկության մասին նեգրիտյուդի կոնցեպցիան վերջին հաշվով նա ենթարկեց աֆրիկյան ժողովուրդների, նրանց ազգային ինքնագիտակցության զարգացմանը։ Իր բոլոր թերություններով, առաջ քաշած թեզերը տեսականորեն հիմնավորելու անկարողությամբ, հակասականությամբ և սահմանափակվածությամբ հանդերձ նեգրիտյուդի տեսությունը դրական դեր խաղաց, քանի որ հանդես եկավ նեգրական բնակչության դարավոր ստորացման դեմ, պաշտպան կանգնեց նեգրական հնագույն կուլտուրային և քաղաքակրթությանը։ Սենգորի բանաստեղծություններն ու պոեմները, որոնցում նա գովերգում է Աֆրիկան, աֆրիկացի կնոջը, սև մարդուն, ինչպես և նրա տեսական հոդվածներն ու գրքերը մեծապես նպաստեցին աֆրիկյան կուլտուրայի զարգացմանը, աֆրիկացիների ազգային ինքնագիտակցության արթնացմանը։ «Սև ռասիզմից» Սենգորի նկատելի հեռանալը հատկապես տեղի ունեցավ երկրորդ համաշխարհային պատերազմին անմիջականորեն նախորդած տարիներին։ Դա երևում է 30-ական թվականների վերջերին գրած ստեղծագործություններից, երբ Եվրոպան և աշխարհը առաջիկա հնարավոր պատերազմական աղետներից խոր տագնապ էին ապրում։ Այդ ժամանակ Սենգորը գիտակցաբար առժամանակ մի կողմ դրեց «սպիտակ քաղաքակրթության», նրա բերած դժբախտությունների քննադատությունը, ինչպես նաև սև ռասայի, աֆրիկյան «հզոր ֆենոմենի» գովքը, քանի որ մոտենում էր ավելի ահեղ աղետը՝ պատերազմը, որը սպառնում էր բոլոր ժողովուրդներին։ «Սաբեյյան արյան կոչով» երգ-պոեմում (1936 թ.) Սենգորը դիմում է բոլոր մարդկանց՝ անկախ ռասայից և ազգությունից, նրանց կոչ անում ջանքերը միավորել հնարավոր կործանման դեմ։ Մեկ տարի անց նա նոր, է՛լ ավելի առաջադեմ քայլ է անում, գրում է, թե առաջիկա դժվարին ժամանակներում եվրոպական դեմոկրատիայի և

աֆրիկյան ժողովուրդների նպատակներն ու շահերը միավորվելու են, պայքարի ընդհանուր հող է ստեղծվելու պատերազմական ուժերի դեմ։ Վրա հասած պատերազմում նա անվերապահորեն ֆաշիստական ագրեսորների հակառակորդների կողմն էր։ Գրեց հրապարակախոսական բնույթի և քաղաքական սուր ուղղվածության նոր բանաստեղծություններ։ Պոետը տագնապ էր բարձրացնում, միաժամանակ համոզված էր, որ բոնության սև ուժերը պարտություն են կրելու։ Պատերազմը նոր լիցք հաղորդեց նրա դեմոկրատական և քաղաքական հայացքներին։ Սենգորը դատապարտում էր պատերազմի դաժանությունները, խոր ցավ էր ապրում Ֆրանսիայի պարտության համար, որի հերոսական ժողովուրդն իր հուշակոթողների վրա գրել է «եղբայրություն» բառը և աշխարհի բոլոր ժողովուրդներին լուսավորել բանականության ծարավով, ազատության ծարավով»[1]։ Նա հերոսական Ֆրանսիան հակադրում էր նրա ծախու կառավարողներին, որոնք վաճառեցին ոչ միայն ֆրանսիական ժողովրդին, այլև Աֆրիկայի ժողովուրդներին[2]։ Ֆաշիստները Սենգորին նետեցին համակենտրոնացման ճամբար, բայց նա այնտեղ էլ շարունակեց ստեղծագործել։ Նրա բանաստեղծությունների տետրը դիմադրության գերմանացի և ֆրանսիացի մասնակիցների օգնությամբ հաջողվեց դուրս բերել փշալարերի ետևից և պահպանել մինչև պատերազմի վերջը։ Այս ստեղծագործությունների մեջ նա հանդես է գալիս ժողովուրդների և ռասաների եղբայրության կոչերով, գովերգում է ընդհանրապես մարդուն, մասնավորապես՝ ֆաշիզմի դեմ կռվող նեգր մարտիկներին, նորից հանդես է գալիս որպես «նեգրական արժեքների» պաշտպան։

Սենգորը ցնծությամբ ընդունեց ֆաշիզմի դեմ տարած հաղթանակը։ Բայց նա շուտով խոր հիասթափություն ապրեց այն բանից հետո, որ դեռ պատերազմը չվերջացած, 1944 թվականին, Դակարից ոչ հեռու, ֆրանսիական սպայի հրամանով պաշտած ֆրանսիացի զինվորները կրակ բացեցին ֆրանսիական բանակում ծառայած և ֆաշիզմի դեմ մարտնչած

1 Տե՛ս Л. С. Сенгор. Избранная лирика, М., 1969, էջ 20։

2 Նույն տեղը։

աֆրիկյան զինվորների վրա։ Նա հոգեկան ծանր ապրումներ ունեցավ, որոնք արտահայտություն գտան «Սև զոհեր» բանաստեղծությունների ժողովածուի մեջ։ Այստեղ մենք նորից նկատում ենք նեգրիտյուդի կոնցեպցիայի ազդեցությունը։ Եռապատերազմյան տարիներին «Եթովպիական մեղեդիներ» (1956 թ.), «Նոկտյուրն» (1961 թ.) վերնագրերով լույս տեսած բանաստեղծությունների ժողովածուներում նույնպես ստեղծագործական թեմաները բարձրացվում են նեգրիտյուդի հենքի վրա։ Բայց Սենգորը ոչինչ սկզբունքորեն նոր բան չավելացրեց իր կոնցեպցիային։ Միայն դրականն այն եղավ, որ նեգրիտյուդն է՛լ ավելի մոտեցավ սոցիալական խնդիրներին, Սենգորի մոտ ավելի հաճախ սկսեցին հնչել սոցիալական մոտիվները։ Այդ բանը հատկապես նկատելի եղավ «Նյու Յորք» պոեմում։ Այս ստեղծագործության վրա ակնհայտորեն նկատվում է 50-ական թվականներին Եվրոպայում և Ամերիկայում վերելք ապրող «ձախ» ռադիկալիզմի, մասնավորապես «նոր ձախերի», առանձնապես Հերբերտ Մարկուզեի ազդեցությունը։ Մարկուզեական «գետտոյի» օրինակով Սենգորը Նյու Յորքի սպիտակ (մեռնող) թաղերին, և հատկապես Մանհեթենին հակադրում է սևամորթների (կենդանի) թաղերը։ Մանհեթենի արտաքին փայլը և հզորությունը խաբուսիկ է, նրա հարստությունը, որից «սառցային ժպիտ» է ծորում, այլևս չի կարող փրկվել ընչազուրկների գայթակղությունից։ Պոետը դժբախտ Հարլեմին, նեգրական հսկա գետտոյին հակադրում է երևս-պաշտորեն գեղեցիկ, բայց անհոգի, սառը, մարդկայնությունից զուրկ, փողոց-կիրճերով խաչաձևված սպիտակ քաղաքի մռայլ կերպարը։ Չնայած այստեղ էլ Սենգորը հավատարիմ է մնում նեգրիտյուդի իր գաղափարներին և սոցիալական մոտիվները որոշակիորեն փոխարինում է սպիտակամորթների և սևամորթների հակադրությամբ, բայց իր ամբողջության մեջ պոեմը հնչում է որպես հակառասայական, հակաիմպերիալիստական ստեղծագործություն։ Նա Նյու Յորքը պատկերում է որպես կործանման եզրին կանգնած մարդկային վիթխարի մի կոնգլոմերատ, որի միակ փրկությունը տեսնում է Հարլեմի մեջ։ Միայն նեգրական այդ

գետտոյի կենսաբեր ուժերը կարող են կործանման դատապարտված քաղաքին փրկել, կենդանություն տալ նրան։

Հասել է ժամը։ Բայց դու դեռ կարող ես փրկվել...
Լսիր ինձ, Նյու Յորք։ Թող Հաուլեմի սև արյունով լցվեն երակները քո,
Թող այդ արյունը կենաց յուղով լվանա, մաքրի ժանգից պողպատյա հոդերը քո[1]։

Սենգորը գտնում է, որ ռասայական թշնամությունից դուրս գալու միակ ուղին Ամերիկայի սպիտակամորթ և սևամորթ բնակչության միաձուլումն է։ Բայց միաձուլված մարդկային այդ մասսայում կյանքի կրողը լինելու է «սև արյունը», որը կոչված է իրենով մաքրելու զառամած «սպիտակ արյունը», կյանք ներշնչելու նրան։ Այստեղ նորից ակնհայտորեն մենք տեսնում ենք սենգորյան նեգրիտյուդի արձագանքները։

50-ական թվականների վերջերից և 60-ական թվականների սկզբներից Սենգորի նեգրիտյուդը կորցնում է իր նախկին խռովարարական ոգին, սպիտակամորթների նկատմամբ ընդունում է առավել հանդուրժողական տեսք։ Նրա ստեղծագործությունների մեջ աստիճանաբար թուլանում է քաղաքական թեմատիկան, գերակշռություն են ստանում սիրային մոտիվները։ Իր հրապարակախոսական ելույթներում Սենգորը ավելի ու ավելի հաճախ է սկսում դրական արտահայտվել եվրոպական «մեքենայական քաղաքակրթության բարիքների» մասին, փորձում է «հեռու քաշվել» «գերմեծերի ընդհարման ոլորտներից», հանդես է գալիս կապիտալիստական ուղիով Սենեգալի և աֆրիկյան մյուս երկրների զարգացման օգտին։ Գնալով ավելի ու ավելի է խորանում Սենգորի ազգային-ռեֆորմիստական մտածողությունը, որն ըստ էության 40—50-ական թվականների նրա ռադիկալիստական հայացքների բացասումն է։

Ինչպես նշվեց վերևում, «երրորդ աշխարհի» գաղափարական բազմաթիվ մանրբուրժուական կոնցեպցիաները հիմնականում բաժանվում են երկու ուղղությունների՝ ազգային-ռեֆորմիստական և հեղափոխական-դեմոկրատական։

Մանր բուրժուազիայի հեղափոխական դեմոկրատիզմը

1 Տե՛ս Л. С. Сенгор. Избранная лирика, М., 1969, էջ 45:

մեր օրերում իր ցայտուն արտահայտությունն է գտել Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի այն երկրներում, որոնք իմպերիալիզմի գաղութային տիրապետությունից ազատագրվելը նրանց վրա շատ ավելի թանկ է նստել, այսինքն՝ այն երկրներում, որոնց ժողովուրդները ազգային-ազատագրական պայքարում շատ արյուն են թափել, կրել են գաղութարարների սանձազերծած «կեղտոտ պատերազմների» բոլոր սարսափները։

Այդ տեսակետից հատկանշական էին աֆրիկյան մայրցամաքում ծավալված ազգային-ազատագրական շարժումները, որոնց ընդերքից էլ հենց ծնունդ առան ժամանակակից Աֆրիկայի հեղափոխական-դեմոկրատական ուսմունքները և կոնցեպցիաները, որոնց ներկայացուցիչները գտնում են, որ ազատագրված երկրները պետք է կողմորոշվեն դեպի զարգացման ոչ կապիտալիստական ուղին[1]։

Աֆրիկյան մայրցամաքի հեղափոխական-դեմոկրատական ուղղության ամենախոշոր ներկայացուցիչներից մեկն անգլացի նշանավոր պոետ Ագուստինո Նետոն էր, որը, աֆրիկյան հեղափոխականներից շատ-շատերի նման բացասական վերաբերմունք ուներ եվրոպական քաղաքակրթության նկատմամբ, գտնում էր, որ այն միայն վնաս է բերել աֆրիկացիներին, ավերել նրանց հոգևոր կուլտուրան, աղարտել նրանց ուրույն դեմքը։ Նետոն, որը դարձավ պորտուգալական գաղութարարների դեմ անգոլական ժողովրդի ազգային-

1 Վերջին տարիներին սովետական գիտնականները մի շարք հետաքրքիր աշխատություններ են գրել Աֆրիկայի մայրցամաքում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական պրոցեսների, կատարվող վերափոխումների մասին։ Տե՛ս Ю. М. Иванов, Развитие капитализма в африканской деревне Родезии и Замбии, Москва, 1970; В. Б. Иорданский, Тупики и перспективы Тропической Африки, Москва, 1970; «Формирование рабочего класса стран Азии и Африки», Москва, 1971; С. И. Кузнецова, Социальная структура африканского города. Проблемы формирования промышленного пролетариата в Тропической Африке, Москва. 1971; «Рабочее движение в странах Азии и Северной Африки на современном этапе», Москва, 1969; Г. И. Мирский, Армия и политика в странах Азии и Африки, Москва, 1971; «Средние (городские) слои в развивающихся странах Азии и Африки». Материалы к симпозиуму, Москва, 1972 և այլն։

ազատագրական պայքարի փառաբանված առաջնորդը, այդ պայքարի ընթացքում շատ բան վերանայեց իր հայացքներից։ Մասնավորապես նա վերագնահատեց եվրոպական արժեքները։ Եվրոպայի քաղաքակրթությունը, որ նախկինում նա դիտում էր իբրև մի ամբողջություն, արդեն սկսեց զննել դասակարգային պրիզմայով։ Նա հեղափոխական դեմոկրատիայից աստիճանաբար անցում կատարեց սոցիալիզմի դիրքերը, իսկ երբ Անգոլան անկախություն ստացավ, ապա կանգնեց նորաստեղծ պետության գլուխ և երկիրն առաջնորդեց սոցիալիստական զարգացման ուղիով։

Աֆրիկյան հեղափոխական-դեմոկրատական գաղափարախոսների շարքում, այնուամենայնիվ, առանձնանում է Ֆրանց Ֆանոնը, մի մարդ, որն իր հզոր անհատականությամբ, գաղութային ժողովուրդների ազատագրության ու առաջադիմության գործին անմնացորդ նվիրումով, յուրօրինակ ու հետաքրքիր աշխատություններով նկատելի հետք է թողել մեր ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական մտքի վրա։ Ֆանոնին անվանում են «երրորդ աշխարհի ձայն», «ապագաղութացման ռահվիրա», «ատելության ու եղբայրության ճիշ», «անսովոր առասպելական մարդ», «հումանիստ և հեղափոխական»։ Ֆանոնին համեմատում են Ռուսոյի, Խոսե Մարտիի, Բակունինի, Սեն-Ժյուստի հետ։ Աճում է Ֆանոնի հռչակը Եվրոպայում, Աֆրիկայում, Հյուսիսային և Հարավային Ամերիկայում, մեծանում է հետաքրքրությունը նրա գրքերի նկատմամբ, որոնք մեծ տպաքանակով լույս են տեսնում ֆրանսերեն, անգլերեն, իսպաներեն, իտալերեն, գերմաներեն և այլ լեզուներով։ «Ֆանոնիզմի» մասին հրատարակվում են հոդվածներ ու մենագրություններ[1]։ Ամբողջության մեջ Ֆանոնի ուսմունքը համարում են «հեղափոխական նացիոնալիզմ», «հեղափոխական սոցիալիզմ», «աֆրիկյան յակոբինիզմ»։ Ոմանք (հատկապես «նոր ձախերի» մի շարք պարագլուխներ) գտնում են, որ Ֆանոնի հայացքները մարքսիզմի առանձին կողմերի զարգացումն են։ Հռոմում լույս տեսնող «ձախ» «Իդեոլոջիե» հանդեսը Ֆանոնի կոնցեպցիան համարում է «մինչմարքսյան ռոմանտիկական-էկզիստենցիալիստական գաղափարախոսություն»։ Ուրիշներն այն կարծիքին են, թե ֆանոնիզմն արտահայտությունն է թույլ զարգացած երկրների այն ազգային-հեղափոխականների հայացքների, որոնք որևէ սկզբունքային տարաձայնություն չունենալով կոմունիստների հետ, չեն ցանկանում, սակայն, ձուլվել նրանց։

Ֆրանց Ֆանոնը ծնվել է 1925 թ. հուլիսի 20-ին Ֆոր-դե-Ֆրանսում (Ֆրանսիայի գաղութ Մարտինիկա կղզի), ծառայողի ընտանիքում։ 1944 թվականին կամավոր մասնակցում է գերմանական ֆաշիստներից Ֆրանսիայի ազատագրության կռիվներին, երկու անգամ վիրավորվում է, ստանում մարտական պարգև։ 1947—1951 թթ. սովորում է Լիոնի համալսարանի բժշկական ֆակուլտետում։ 1953—1956 թթ. գլխա-

---

1 Ֆանոնի և նրա ուսմունքի մասին արտասահմանում լույս են տեսել հարյուրավոր ուսումնասիրություններ։ Մեջբերում համեմատաբար քիչ է գրվել։ Կարելի է հիշատակել՝ Гольперина Е. Величие и трудности деколонизации. (Франц. Фанон. Человек. Идеи. Влияние). — «Иностранная литература», № 10, 1970, стр. 194—205; Левин И, Книга динамита – «За рубежом» № 5. 1962, стр. 20—21, № 9, стр. 20--21, Усов Г. Франц Фанон и его революция отчаяния. — «МЭ и МО». № 10, 1969, стр 133—136; Шери Таки. О руководящей силе социалистической революции в странах Африки. (Критика теории Ф., Фанона). — В книге: Научная сесия по проблемам национально-освободительного движения и экономического развития освободившихся стран на современном этапе. Москва, 1970: Тезисы юбилейной научной сессии... 9—11 февраля 1970, М., 1970, стр. 41—43; «Вопросы философии», № 1, 1972, стр. 25—29: Առանձնապես ուշադրության են արժանի ՍՍՀՄ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի ինստիտուտի «Проблемы социального развития и идеологии стран Азии и Африки» մատենաշարով ձեռագրի իրավունքով լույս տեսած А. В. Гордон. Франц Фанон и проблемы национально-освободительной революции աշխատության (Ֆանոնի մասին եղած գրականության տեսության) երկու պրակները (№ 12, часть I, главы 1—7, 13, часть II, главы 8—10), М., 1972, 357 стр., որից ղեկավարվել է այս գրքի հեղինակը՝ Ֆրանց Ֆանոնի կոնցեպցիան շարադրելիս։

վոր բժիշկ էր Բլեդ քաղաքի (Ալժիր) հոգեբուժական հիվանդանոցում։ Համակրելով ալժիրյան ժողովրդի հակագաղութային պայքարին, մտնում է ազգային-ազատագրական ճակատի շարքերը։ 1956 թ. մասնակցում է կուլտուրայի նեգրական գործիչների կոնֆերանսի աշխատանքներին։ 1957 թվականից աշխատում է Ալժիրի ազգային-ազատագրական ճակատի տպագիր օրգաններում, նախ Թունիսում լույս տեսնող «Ռեզիստանս ալժիրյեն» թերթի խմբագրությունում, հետո՝ «Էլ-Մուջահիդ» թերթում, քաղաքական-դաստիարակչական աշխատանք է տանում ազգային-ազատագրական բանակում, միաժամանակ շարունակում է բժշկական պրակտիկան։ 1958 թվականից Ֆանոնը Ալժիրը ներկայացնում է պանաֆրիկյան կոնֆերանսներում։ 1960 թվականին նշանակվում է Ալժիրի ժամանակավոր կառավարության դեսպան Գանայում։ Նախ Մոսկվայում, ապա Վաշինգտոնում երկարատև բուժումից հետո 1961 թվականի դեկտեմբերի 6-ին, 36 տարեկան հասակում, մահանում է լեյկեմիայից։ Ֆանոնի աճյունը փոխադրվում է Թունիս և ազգային-ազատագրական զորամասերից մեկը, կատարելով հանգուցյալի կամքը, նրան թաղում է ալժիրյան հողի ազատագրված մասում։

1952 թվականին լույս է տեսնում Ֆանոնի «Սև մաշկ, սպիտակ դիմակներ» գիրքը, որն անմիջապես լայն ճանաչում է բերում նրա հեղինակին։ 1959 թվականին հրատարակվում է «Ալժիրյան հեղափոխության 5-րդ տարին» աշխատությունը, իսկ 1961 թվականի նոյեմբերին Փարիզում լույս է տեսնում Ֆանոնի գլխավոր երկը՝ «Անիծյալները»։ Այս երեք հիմնական գրքերից բացի, 50-ական թվականներին Ֆանոնը լույս է ընծայում նաև ալժիրյան հեղափոխությանը նվիրված տասնյակ հոդվածներ։ Նրա գրչին են պատկանում նաև հոգեբուժության վերաբերյալ շուրջ 15 մասնագիտական աշխատություն[1]։

Ֆանոնի հիմնական աշխատությունները, հատկապես

[1] Ֆանոնի աշխատությունները մինչև այժմ ռուս ընթերցողին է ներկայացվել հատվածաբար։ «Անիծյալները» գրքի առանձին մասերի կրճատ թարգմանությունը լույս է տեսել «За рубежом» շաբաթաթերթում (1962, № № 5—7, 9)։ Նույն աշխատության չորրորդ գլուխը, որը նվիրված է կուլտուրայի հարցերին, հրատարակվել է «Литература стран Африки» ժողովածուի մեջ (Մոսկվա, 1966 թ.)։

«Անիծյալները» դարձել են ժամանակակից «ձախ» ռադիկալիզմի և «նոր ձախերի» պարագլուխների, նեգրական շարժման գործիչների, «երրորդ աշխարհի» պետական ու քաղաքական շատ գործիչների սեղանի գրքերը։ «Անիծյալները» Արևմուտքում անվանում են «սև հեղափոխության դասագիրք», «հակագաղութային հեղափոխության «կոմունիստական մանիֆեստ», «թշվառների Աստվածաշունչ»։

Ֆանոնի աշխատությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա հեղինակը լայն ծանոթ է եղել անցյալի կլասիկ և 20-րդ դարի առաջին կեսի եվրոպական փիլիսոփայական հիմնական ուղղություններին։ Ուսանողական տարիներին Ֆանոնը կարդում էր Կյերկեգորին և Նիցշեին, Հեգելին և Լասսալին, Մարքսին և Լենինին, Հայդեգերին և Սարտրին։ Ազգային-ազատագրական պայքարի պրակտիկան նրանց մղեց մարքսիզմի տարբեր դրույթների յուրացմանը։

Լինելով նեգր ստրուկի թոռ, Ֆանոնն իրեն համարում էր ֆրանսիացի, տարված էր ֆրանսիական կուլտուրայով, ֆրանսիական քաղաքակրթությամբ, առիթը ներկայանալիս փառաբանում էր ֆրանսիական ազգը։ Բայց նա ֆրանսիական գաղութարարների ոխերիմ թշնամին էր, իր կյանքի զգալի մասը նվիրեց Ալժիրի ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին, իսկ ավելի ուշ, կյանքի վերջին շրջանում ճանաչվեց որպես աֆրիկյան հեղափոխության գաղափարախոսներից մեկը։ Ֆանոնն իր անձնական օրինակով ցույց էր տալիս, թե ինչպես պետք է հետևողականորեն պայքարել սեփական գաղափարները կենսագործելու համար։ Նա անձամբ ծանոթ էր Աֆրիկայի նշանավոր քաղաքական գործիչներ Քվամե Նքրումային, Պատրիս Լումումբային և ուրիշներին։

Ուշադրությամբ հետևելով աֆրիկյան ժողովուրդների ազատագրական պայքարին, Ֆանոնը լայն հետաքրքրություն էր հանդես բերում նաև Ասիայի ու Լատինական Ամերիկայի ժողովուրդների պատմական բախտի նկատմամբ։ Այս

առումով նա դարձավ «տրիկոնտինենտալիզմի» նշանավոր ներկայացուցիչներից մեկը։ Վերջապես, բուժման ոլորտով զբաղվելով ԱՄՆ-ում, Ֆանոնը մեծ հետաքրքրություն հանդես բերեց այնտեղ ծավալված նեգրական շարժման հարցերի նկատմամբ։

Ո՞րն է Ֆրանց Ֆանոնի ուսմունքի բովանդակությունը։ Նա գտնում է, թե առաջին հայացքից գաղութային աշխարհն անշարժ, փակ ու շղթայված աշխարհ է։ Բայց դա իրականում անհանգիստ, մշտապես եռացող, թշնամական լագերների բաժանված աշխարհ է։ Եվրոպացիներն այս աշխարհում ապրում են քաղաքներում, որտեղ փողոցներն ասֆալտապատ են, հարթ ու մաքուր, շենքերը լուսավոր են, կառուցված երկաթից ու բետոնից, նրանց բակերի աղբարկղները լիքն են տեղացիների համար անծանոթ բազմազան սննդամթերքների մնացորդներով։

Ի տարբերություն եվրոպական գաղութարարների, տեղացիները հազիվ գոյություն են քարշ տալիս։ Դրանք քաղաքների արվարձանների բնակիչներն են, քաղաքների սահմաններից դուրս գտնվող գյուղացիական միլիոնավոր մասսաները։ Այս դժբախտները կարոտ են հացի պատառիկ, վառելիքի և լույսի։ Նրանք նախանձից այրված իրենց աչքերը երբեք չեն հեռացնում եվրոպացիների փարթամ առանձնատներից և երազում են օրերից մի օր դրանց տիրանալու մասին։

Այսպիսով, ասում է Ֆանոնը, գաղութային աշխարհում այն տերիտորիան, որտեղ բնակվում են տեղացիները, ուղղակի շարունակությունը չէ այն տերիտորիայի, որտեղ եվրոպացիներն են ապրում։ Գաղութային միջավայրում գաղութացվածը մարդ չէ, այլ միայն լանդշաֆտի, ընդհանուր ֆոնի մի մասը, որի վրա լիովին տիրություն է անում գաղութարարը։ Այդ երկու տերիտորիաները, այսպիսով, հակադրված են մեկը մյուսին, ենթակա են փոխադարձ բացառման կանոնին, այստեղ հաշտությունն անհնարին է, մեկն ավելորդ է։

Ֆանոնը գրում է, որ գաղութային աշխարհում տիրող իրավազրկությունն ու կարիքը արմատապես տարբերվում են եվրոպական երկրներում եղած աղքատությունից։ Գաղութային աշխարհում առաջին պլան են մղվում ոչ թե սոցիալական տարբերությունները, այլ մարդկանց միջև եղած բնական տարբերությունները։ Այստեղ ճնշողն ու ճնշվողը պատկանում են տարբեր ռասաների, որպես կանոն, հարուստը սպիտակամորթ է, թշվառը՝ սևամորթ։ Կապիտալիստական զարգացած երկրներում այդպես չէ, այստեղ և՛ ճնշողը, և՛ շահագործվողը պատկանում են միևնույն ռասային, միևնույն ազգին։

Այլ խոսքով, եթե զարգացած կապիտալիստական երկրներում տնտեսական հարաբերությունները սոցիալական կառուցվածքի և դասակարգային հարաբերությունների հիմքն են, ապա գաղութային աշխարհում սոցիալական հարաբերությունները պայմանավորված են եկվորների ու բնիկների միջև եղած էթնիկական անտագոնիզմով։

Ֆանոնը գտնում է, որ գաղութատիրությունը ոչ միայն տնտեսական թշվառություն է բերել ստրկացված ժողովուրդներին, այլև, որ առավել վատթարն է, ավերել է նրանց հոգեբանությունն ու կուլտուրան։

Տեղի է ունենում ճնշված ժողովուրդների բռնի ապակուլտուրացման պրոցես, այսինքն՝ տրադիցիոն ազգային կուլտուրայի հետ նրանց օրգանական կապերի խզում։ Տրադիցիոն ազգային կուլտուրան այն աստիճան է մումիֆիկացվել, որ դադարել է անհատին հոգեկան որևէ բավականություն պատճառելուց։ Եվրոպացիների կուլտուրան բնիկների մոտ խեղդել է կենդանի ակտիվ իմպուլսները, նրանց զրկել որևէ երևույթի նկատմամբ անհրաժեշտ ռեակցիա հանդես բերելու ունակությունից։ Գաղութարարները բնազդական կյանքի դրախտից նրանց քշել են ռացիոնալ-տեխնիցիստական աշխարհը, բիլդինգների ու մեքենաների գեհենի մեջ[1]։

Բնիկների հոգեբանությունը խեղելու մեթոդներից մեկն այն է, որ գաղութարարներն աշխատել են ամեն կերպ համոզել, թե նրանք անընդունակ են ստեղծելու անհրաժեշտ արժեքներ։ Նման մթնոլորտում բնիկը ամեն կերպ խուսափում է ազգայինից, ձգտում է թոթափել այն։ Աստիճանաբար նրա համար ատելի են դառնում սեփական լեզուն, կրոնը, սովո-

1 «Вопросы философии», № 1, 1972, стр. 84.

ությունները, բարոյական արժեքները, ավելին՝ մաշկի գույնն ու ֆիզիոնոմիան։ Առաջ է գալիս անհատի լիակատար խորթացում։ Բարենպաստ պայմաններ են ստեղծվում ասիմիլյացիայի համար։ Բնիկների «էլիտան» ձգտում է որքան կարելի է արագ յուրացնել գաղութարարների լեզուն, սովորությունները, կուլտուրան և դառնալ, ինչպես Ֆանոնն է ասում, «սպիտակ նեգր»։ Բանն այնտեղ է հասնում, որ այն բնիկները, որոնք հասցրել են համեմատաբար արագ «ինտեգրացվել» գաղութարարների կուլտուրայի մեջ, բացահայտ արհամարհանք են տածում նրանց նկատմամբ, ովքեր գտնվում են սոցիալական ավելի ցածր աստիճանի վրա և «անբավարար» են ասիմիլյացվել։

Բնիկների մեջ գնալով ուժեղանում է ապակուլտուրացման և խորթացման այս տրամադրությունը։ Գաղութացվածը զրկվում է ազգային հիմքից, ասիմիլյացիայի միջոցով նա ձգտում է փախուստ տալ իրականությունից, եթե կարելի է այսպես ասել՝ «օձիքն ազատել ինքն իրենից»։

Ֆանոնը, այնուհետև, գտնում է, թե քանի որ բնիկների էմոցիոնալ կյանքը, հասարակական դրությունը, քաղաքացիական իրավունքները մշտական սպառնալիքի տակ են, ուստի նրանք տևականորեն գտնվում են ներվային լարված վիճակում։ Այդ հողի վրա է, որ գաղութային աշխարհում այնքան լայն տարածում են գտել բազմաթիվ մասսայական ներվային հիվանդություններ։ Այլ խոսքով, «գաղութային տրավմատիզմը» գաղութատիրության ծնունդն է։

Ֆանոնը գաղութատիրության անմիջական հետևանք է համարում նաև երկրում լայն տարածում գտած հանցագործությունները, որ գաղութարարները ներկայացնում են իբրև «բնիկների ֆիզիոլոգիական պակասության» արդյունք։

«Երրորդ աշխարհում» լայն տարածում գտած հանցագործությունները, ասում է Ֆանոնը, երկու հիմնական պատճառ ունեն։ Այդ պատճառներից մեկը նա տեսնում է պարենային պրոբլեմի մեջ։ Գաղութատիրության պայմաններում պարենային պրոբլեմը բնիկների համար ապրել-մեռնելու պրոբլեմ է։ Ապրել՝ նշանակում է չմեռնել, գոյություն ունենալ՝ նշանակում է պահպանել կյանքը։ Միակ չափանիշը ստամոքսն է, որը պետք է լցնել ինչ կերպ ուզում է լինի, թե-

կուզև հանցանք կատարելու միջոցով։ Երկրորդ պատճառը այդ հողի վրա բնիկների ներվային համակարգի խանգարումն է, որ, իր հերթին, արդյունք է գաղութատիրության։ Այլ խոսքով՝ գաղութատիրությունը, «գաղութային տրավմատիզմը» և հանցագործությունները միևնույն շղթայի հաջորդական օղակներն են։

Ֆանոնը վճռականապես մերժում է նաև գաղութարարների այն մեղադրանքը, թե բնիկների թշվառության պատճառը նրանց բնական ծուլությունն է։ Նա նշում է, որ բնիկների «ծուլությունը» ոչ այլ ինչ է, քան գաղութային մեքենայի գիտակցաբար սաբոտաժ, գաղութարարների հետ համագործակցելուց հրաժարում։ Դա բիոլոգիական տեսակետից ինքնապաշտպանության հիանալի սիստեմ է, որին դիմում են տեղացիները, բողոք արտահայտելով իրենց ծայրահեղ ստորացած վիճակի հանդեպ։

Ստեղծված իրավիճակից ո՞րն է ելքը։ Ֆանոնը միակ ելքը տեսնում է ապագաղութացման (դեկոլոնիզացիայի) մեջ։ Իսկ միջո՞ցը։ Միջոցը բռնությունն է։ Ֆանոնի ապագաղութացման ծրագիրը «բացարձակ անկարգության ծրագիր» է, իսկ անկարգությունը՝ նոր զարգացման նպատակով «ելակետային (այսինքն՝ մինչգաղութային) վիճակի մաքրությունը» (tabule rasa) վերադառնալու միջոց։ Բայց դա մինչգաղութատիրական ժամանակաշրջանի մարդու պարզ կրկնությունը չէ, այլ որակական նոր, շատ բարձր աստիճան։ Պետք է «ստեղծել նոր, ամբողջական մարդ (l' homme total), որ անընդունակ եղավ ստեղծել Եվրոպան»[1]։

1 Ֆանոնի բռնության տեսությանն անդրադառնալիս, ոմանք նմանություն են տեսնում նրա և Սորելի միջև։ Իրականում Ֆանոնի և Սորելի բռնության կոնցեպցիաների միջև տարբերությունները մեծ են։ Սորելը բռնությունը դիտում է մարդկային բնությունից անբաժան, որպես նրա անխուսափելի արտահայտություն։ Ըստ որում նա գտնում է, որ այդ «բնական բռնության» դրսևորման խանգարելուն ոչ մի հարկ չկա և ոչ մի ժամանակաշրջանում։ Դա նշանակում է, որ բռնության սորելյան կոնցեպցիան վերացական է ու մեկուսացված, այն անընդունակ է պատասխանելու ժամանակաշրջանի հեղափոխական իրադրության առաջադրած հարցերին։ Ֆանոնը, ընդհակառակն, բռնությունը դիտում է իբրև գաղութային շահագործման ծնունդ, որը կչքանա «հակառակ կողմից բռնության» վերանալուց հետո։

Այն, ինչ ստեղծվել է ուժի միջոցով, բռնությամբ, պետք է բռնությամբ էլ ոչնչացվի, տեղի տա է՛լ ավելի մեծ ուժի առջև։

Ըստ որում գաղութատիրության երկար ու ահավոր գիշերվա պատմությունը Ֆանոնը դիտում է իբրև մի պրոցես, որը հաջորդաբար անցել է բռնության երեք փուլերով։

Բռնության առաջին էտապը սկսվել է եվրոպացիների կողմից գաղութների նվաճմամբ, որը զուգակցվում էր անլուր ոճրագործություններով, տեղացիների մասսայական բնաջնջմամբ ու ստրկացմամբ։

Գաղութային ստրկության այդ ժամանակաշրջանը «երկարատև ու խոր քնի ժամանակաշրջան էր»։ Դա կարծես ընդմիջում էր գաղութային ժողովուրդների պատմության մեջ։ Գաղութարարը պատմություն կերտողն է, զարգացման գլխավոր գործոնը։ «Եթե ես հեռանամ, ամեն ինչ կկործանվի, այս երկիրը կվերադառնա վայրենության»,— հավատացնում է նա։ Բռնության երկրորդ էտապը բնորոշվում է նրանով, որ գաղութատերերի բռնության կողքին հանդես է գալիս մի այլ բռնություն, այս անգամ բնիկների միջավայրում։ Անուժ գտնվելով պայքարելու «մեծ չարիքի»՝ գաղութատիրության դեմ, բնիկներն իրենց հոգում կուտակած անհուն զայրույթի որոշակի մասը պարպում են իրենց ցեղակիցների ու ազգակիցների վրա։ Դա իր ցայտուն արտահայտությունն է գտնում միջցեղային ու միջտոհմային ընդհարումների մեջ։ Վերջապես, երրորդ՝ ամենաբարձր էտապում, բռնությունն ուղղվում է գաղութարարների տիրապետության դեմ, ընդունելով ազգային-ազատագրական շարժման բնույթ։ Այս էտապում բռնությունը դադարում է բացասական գործոն լինելուց, կորցնում է իր հանցագործ բնույթը, դառնում է ազատագրական բռնություն, նպաստում մարդկային միլիոնավոր զանգվածների խորթացման հաղթահարմանը, նրանց լիարժեքության վերականգնմանը։ Բռնությունը հաղթանակի սկիզբն է, ազատությունը՝ բռնության ծնունդը (Հիշենք Սենժյուստին՝ «Պայքարում հաղթում է նա, ով պայքարում է»)։

Ֆանոնը առանձնահատուկ նշանակություն է տալիս բռնության երրորդ էտապում ճնշվածների հոգեբանական փոփոխությանը։ Ստրուկներից լիարժեք մարդիկ ստեղծելը, շահագործվողների դեֆորմացիայի ենթարկված հոգեբանության փոխումը հեղափոխականի առաջնակարգ խնդիրն է, հեղափոխության առաջին անհրաժեշտ պայմանը։ Միայն դիմադրությունը, միայն գաղութարարների դեմ վճռական պայքարը կարող է երեկվա խոնարհ ստրուկի մեջ ներարկել լիարժեք մարդու զգացում ու հպարտություն։

Ֆանոնը գտնում է, որ քաղաքական անկախության կարելի է հասնել տարբեր ուղիներով, բայց զինված պայքարը գաղութային ժողովուրդների համար առավել արդյունավետ ուղին է։ Այս տեսակետից նա Գանդիի ուղղակի հակադրությունն է։ Ֆանոնն ամբողջ եռանդով հարձակվում է նրանց վրա, ովքեր կարծում են, թե ապագաղութացումը կարող է իրականանալ տարերայնորեն, որպես գաղութային հասարակության էվոլյուցիոն զարգացման արդյունք։ Նա նշում է, որ Աֆրիկան կազատագրվի ոչ թե նյութական ուժերի մեխանիկական կուտակման հետևանքով, այլ աֆրիկացու ձեռքով, նրա խելքով։ «Շաքարեղեգնի պլանտացիաներում աշխատող նեգրի համար միայն մեկ որոշում կա՝ պայքար։ Այդ պայքարը նա ձեռնարկում է ոչ թե իր վիճակի մարքսիստական կամ իդեալիստական վերլուծությունից հետո, այլ ուղղակի այն պատճառով, որ իր գոյությունը կարող է իմաստավորվել միայն շահագործման, աղքատության ու սովի դեմ պայքարի մեջ»։

Զարգացման այս էտապում բռնությունն ուղղված լինելով ապագաղութացման նպատակին, միաժամանակ դրական մեծ նշանակություն է ունենում բնիկների հոգեբանության մշակման տեսակետից։ Խոսելով ֆրանսիական գաղութարարների դեմ Ալժիրի ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մասին, Ֆանոնը գրում է այդ պատերազմի հսկայական վերափոխիչ դերի մասին։ Անցնելով դաժան մարտերի ու փորձությունների միջով, ասում է նա, ժողովուրդը չի կարող նախկինը մնալ։ Նա ենթարկվում է հոգեբանական վերափոխման, մի բան, որ շատ անհրաժեշտ է ազգային-ազատագրություն ձեռք բերելուց հետո նոր կյանքի կառուցման համար։

Ֆանոնի համար հակագաղութային պայքարը չի վերջանում քաղաքական իշխանության նվաճմամբ։ Այդ պայքարը

կարող է լիակատար լինել միայն այն դեպքում, եթե վերածվի սոցիալական հեղափոխության, եթե այն իր առջև դնի շահագործումից ազատ հասարակություն ստեղծելու պահանջը։

Ֆանոնն այն միտքն է զարգացնում, թե այն երկրներում, որտեղից գաղութարարները հեռացել են համեմատաբար խաղաղ ճանապարհով, «կամավոր», որտեղ ապագաղութացումն անցել է էվոլյուցիոն ուղի, ազատագրությունից հետո իշխանության գլուխն են անցնում այնպիսի մարդիկ, որոնք հանդես են գալիս պայքարի սոցիալական բնույթի դեմ։ «Կամավոր» ձեռք բերած անկախությունն ունի մի ուրիշ բացասական կողմ ևս. այն իջեցնում է ազատագրության արժեքը։ Ֆանոնը գրում է, որ, օրինակ, Անթիլյան կղզիների նեգրերի դժբախտությունն այն է, որ նրանք իրավական ստրկությունից ազատագրվել են առանց պայքարի, ուստի չգիտեն ազատության իսկական գինը։ Ֆանոնի այս մտքերից կարելի է եզրակացնել, որ, նրա կարծիքով, հեղափոխության առջև առավել դժվարին խնդիրներ են ծառանում «բարիկադները քանդելուց հետո»։

Իսկ ինչպե՞ս վարվել, եթե գաղութարարների դեմ պայքարի հեռանկարն անորոշ է, ավելին, եթե այն նախապես դատապարտված է կործանման։ Միևնույն է, պետք է ընդվզել, պետք է կռվի բռնվել՝ պատասխանում է Ֆանոնը։ Նա օպորտունիզմ է համարում այն տեսակետը, ըստ որի բռնությունը բացառապես հենվում է տնտեսական ուժի վրա։ Գաղութային սարսափները տեսած երկրները տնտեսապես և տեխնիկապես երբեք չեն գերազանցի գաղութային տերություններին։ Եթե բռնությունը միայն պայմանավորված լիներ նյութական միջոցներով, ապա գաղութային ստրկությունը հավերժ կլիներ։ Չնայած գաղութարարների նյութական գերազանցությանն ու ռազմական հզորությանը, ասում է Ֆանոնը, այնուամենայնիվ, գաղութացված բոլոր ժողովուրդները կարող են պայքարով անկախություն ձեռք բերել, եթե, առաջին, նրանց ամբողջովին համակի ազատության գաղափարը, երկրորդ, անկախության պայքարին նպաստի միջազգային իրադրությունը։

Իսկ որո՞նք են բռնության երրորդ էտապի շարժիչ ուժերը։

Ազգային-ազատագրական շարժման մեջ տարբեր դասակարգերի դերի գնահատման համար Ֆանոնը կարևոր է համարում երեք ցուցանիշ՝ դասակարգի քանակական կազմը, եկամուտների մակարդակը, գաղութային հասարակության մեջ նրա ինտեգրացման աստիճանը։

Ելնելով այս ցուցանիշներից, Ֆանոնը գերազանցությունը տալիս է գյուղացիությանը, նրան համարելով ազգային-ազատագրական շարժման հիմնական շարժիչ ուժ։

Գյուղացիությունն առավել հեղափոխական է, ասում է Ֆանոնը, որովհետև նա գաղութային հասարակության առավել բազմաքանակ և առավել աղքատ ու թշվառ մարդկային զանգվածն է, հետևապես առավելապես շահագրգռված է գոյություն ունեցող բոլոր ստրուկտուրաների լիակատար ոչնչացումով[1]։ Ինչ վերաբերում է գաղութային հասարակության մեջ գյուղացիության ինտեգրացման աստիճանին, ապա նա ապրում է անփոփոխ մնացած տրադիցիոն միջավայրում, որը բնորոշվում է կոլեկտիվիզմով (ցեղերի և տոհմերի կոլեկտիվիզմով) ու կարգապահությամբ, աննշան չափով է ենթարկվել ասիմիլյացիայի կործանիչ ազդեցությանը, որի շնորհիվ մնացել է որպես գաղութային ու հետգաղութային հասարակության «ամենաառողջ» դասակարգը։ Գյուղացիությունը համարելով «երրորդ աշխարհում» տրադիցիոնալիզմի մարմնացում, այսինքն՝ մինչգաղութային շրջանի տրադիցիաների կրող, Ֆանոնը գտնում է, որ նրան է վիճակված դառնալու անցյալի վերածնության գլխավոր ուժը։ Գյուղերում են տեղի ունենում հեղափոխական կռիվները գաղութարարների դեմ, գյուղերում է նվաճվում հաղթանակը, գյուղերում է ծնվում նոր իշխանությունը։ Ահա թե ինչու գյուղացիությունը առաջամարտիկ է, հնի գերեզմանափոր, նորը հաստատող։ Ազգային-ազատագրական շարժման մեջ Ֆանոնի կողմից գյուղի և գյուղացիության դերի նման գերագնահատումը շատ կողմերով համընկնում է այդ հարցում Չե Գևարայի և Մաո Ցզե-դունի հայացքներին։

---

1 Տե՛ս «МЭ и МО», № 10, 1969, էջ 140.

Լավատեղյակ լինելով տարբեր ժամանակներում եվրոպական երկրների հասարակական շարժումների մեջ գյուղացիության խաղացած դերին, Ֆանոնը ճիշտ է նկատում, որ շատ հաճախ այդ դասակարգը հեղափոխության զարգացման ճանապարհին արգելք է հանդիսացել։ Արդյունաբերական տեսակետից զարգացած երկրներում գյուղացիությունն առավել քիչ գիտակից, առավել քիչ կազմակերպված, առավել շատ անարխիստական տրամադրություններ ունեցող հասարակական ուժ է։ Նրան, ասում է Ֆանոնը, հատուկ են ինդիվիդուալիզմը, անկարգապահությունը, ագահությունը, պարտության դեպքում անհույս կատաղության մեջ ընկնելու, խոր հիասթափություն ապրելու հակումը։ «Երրորդ աշխարհի» գյուղացիությունն այդ տեսակետից եվրոպական գյուղացիության հակադրությունն է։

Հետազոտողներից ոմանք նկատել են, որ «երրորդ աշխարհի» գյուղացիության Ֆանոնյան գնահատականի վրա մեծապես ազդել է եվրոպական պրոլետարիատին տված Կ. Մարքսի բնութագրությունը։ Ֆանոնի տեսակետով «երրորդ աշխարհի» գյուղացիության հեղափոխությունը որոշվում է նրանով, որ նա ոչինչ չունի «կորցնելու», որ «նա կարող է ամեն ինչ ձեռք բերել»։ Եթե «գյուղացիություն» բառը փոխարինենք «պրոլետարիատ» բառով, ապա գյուղացիության նկատմամբ Ֆանոնի դիրքը զարմանալիորեն կնմանվի պրոլետարիատի վերաբերյալ Մարքսի և Էնգելսի տեսակետին, որ նրանք արտահայտել են «Կոմունիստական կուսակցության մանիֆեստում»։

Ազգային-ազատագրական շարժումների մեջ, ըստ Ֆանոնի, իր հեղափոխական էներգիայով ու նշանակությամբ գյուղացիությունից հետո գալիս է «երրորդ աշխարհի» լումպեն-պրոլետարիատը։

Լումպեն-պրոլետարները հիմնականում «երրորդ աշխարհի» քաղաքային արվարձանների, «բիդոնվիլների» թշվառ բնակիչներն են, երեկվա գյուղացիները, որոնք, զատվելով իրենց ցեղից կամ կլանից, եկել են քաղաք, սպիտակամորթների մոտ մի պատառ հաց վաստակելու։ Նրանք իրենց հետ քաղաք են բերել գյուղացիության հեղափոխական տրամադրությունները։

Ֆանոնը գտնում է, որ «երրորդ աշխարհի» լումպեն-պրոլետարիատը բնավ նման չէ կապիտալիստական երկրների նրա կլասիկ կերպարին։ Կլասիկ լումպեն-պրոլետարիատը, որը բանվոր դասակարգի ապադասակարգայնացված ու քաղաքականապես այլասերված մասն է, սովորաբար ստանձնում է խիստ բացասական դեր։ Լումպեն-պրոլետարիատը շատ հաճախ բուրժուազիայի ձեռքին կույր գործիք է դառնում պրոլետարիատի ազատագրական շարժման դեմ նրա պայքարում։ Ընդհակառակն, «երրորդ աշխարհի» լումպեն-պրոլետարիատը նեխման արդյունք չէ, նա ապադասակարգայնացված տարրերից չի կազմված։ «Երրորդ աշխարհի» լումպենները երեկվա գյուղացիներն են, վաղվա բանվորները, աշխատանքի ռեզերվային բանակը։ Կլասիկ լումպեն-պրոլետարիատի հետ նրա նմանությունը ներկա դրության մեջ է։ Ինչ վերաբերում է նրանց զարգացման տենդենցներին, ապա դրանք միանգամայն տարբեր են[1]։

Լումպեն-պրոլետարիատը դիտելով որպես գյուղացիությունից պրոլետարիատ ձևավորվելու ընթացքի արդյունք, Ֆանոնը գտնում է, որ պրոլետարիատի մեջ նրա ինտենսիվ ներծծմանը խանգարում է ուրբանիզացիայից ինդուստրիալիզացիայի ետ մնալը, մի բան, որ նա բնավ էլ ցավով չի արձանագրում։

Ֆանոնը, սակայն, ըմբռնում է, որ եթե չհաջողվի լումպեն-պրոլետարիատի մարդկային ռեզերվն անմիջապես ներգրավել ապստամբության մեջ, ապա գաղութարարները նրան կարող են իբրև վարձու ուժ օգտագործել ազգային-ազատագրական շարժման դեմ, այնպես, ինչպես եվրոպական երկրների բուրժուազիան լումպեն-պրոլետարիատին օգտագործում էր պրոլետարիատի հեղափոխական ելույթների դեմ։

Գյուղացիությունից և լումպեն-պրոլետարիատից բացի, գաղութային ժողովուրդների ազատագրական պայքարի մեջ

1 Գրականության մեջ «երրորդ աշխարհի» լումպեն-պրոլետարիատին անվանում են նաև «սուբպրոլետարիատ», «ստորին դասակարգ» և այլն։ Հավանաբար առավել ճիշտ անվանումը «նախապրոլետարիատն» է, որը լավ է հաղորդում այդ շերտի էվոլյուցիայի տենդենցը։

Ֆանոնը ուրիշ հեղափոխական ուժեր չի տեսնում։ Նա առաջին հերթին ժխտում է «երրորդ աշխարհի» պրոլետարիատի հեղափոխականությունը, մերժում նրա պատմական միսիան գաղութներում։ Նրա կարծիքով գաղութային պրոլետարիատը չի կարող հեղափոխական լինել այն պարզ պատճառով, որ նա գաղութային սիստեմի ծնունդն է, նրա մի մասը, առանց որի այդ սիստեմի գոյությունը դժվար է պատկերացնել։ Արձանագրելով այն փաստը, որ գաղութային բանվորների տնտեսական վիճակը գերադասելի է, Ֆանոնը նշում է, թե հենց այդ հանգամանքը բանվորներին գյուղացիների նկատմամբ ավտոմատիկաբար դարձնում է ոչ հեղափոխական։

Գերագնահատելով եկամուտների մակարդակի դերը, ազգային-ազատագրական հեղափոխության մեջ այն դարձնելով այս կամ այն դասակարգի գործողությունների չափանիշ, Ֆանոնը դրանով իսկ, չնայած ֆրեյդիզմի ուժեղ ազդեցության տակ գտնվելուն, կամա թե ակամա տուրք է տալիս գռեհիկ մատերիալիզմին։ Պատահական չէ, որ բանվոր դասակարգի նրա քննադատությանը անմիջապես կառչեցին ազգային-բուրժուական ռեֆորմիստները, որոնց դեմ նա վճռական պայքար էր մղում։

Մյուս կողմից, բացարձակացնելով զինված պայքարը, Ֆանոնը թերագնահատում է պայքարի այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ բանվորական գործադուլները, ցույցերը, համբերատար աշխատանքն ընդհատակում և այլն։

Պրոլետարիատին՝ որպես ազգային շարժման առաջամարտիկի, որպես ազգային բուրժուազիայի և նեոգաղութակալության հակառակորդի, Ֆանոնը դուրս է թողնում իր տեսությունից ոչ միայն այն պատճառով, որ «երրորդ աշխարհի» պրոլետարիատը համեմատաբար թույլ է, փոքրաթիվ, այլև, առաջին հերթին, իր սեփական մեթոդոլոգիայի թուլության պատճառով։

Իսկ Ֆանոնյան կոնցեպցիայում ի՞նչ տեղ է հատկացված «երրորդ աշխարհի» ազգային բուրժուազիային։

Ֆանոնն ատելությամբ ու բացահայտ թշնամանքով է լցված գաղութային ազգային բուրժուազիայի նկատմամբ։ Դա յուրատեսակ բուրժուազիա է, որն իր շարքերում չունի

իսկական առումով արդյունաբերողներ ու ֆինանսիստներ, արտադրության կազմակերպիչներ ու կապիտաններ։ Նա ամբողջովին տարված է միջնորդի գործունեությամբ։ Պարզ է, որ նման պայմաններում, նույնիսկ անկախություն նվաճելուց հետո, քանակական տեսակետից նվազ և առանց կապիտալի ազգային բուրժուազիան չի կարող որևէ ստեղծագործական դեր կատարել։ Երկար ժամանակ նա շարունակում է գամված մնալ արհեստագործական տիպի տնտեսությանը։ Լավագույն դեպքում նա փորձեր է անում արտադրության ոլորտի մեջ ներքաշել միայն տեղական տրադիցիոն մթերքները, այն էլ չնչին քանակությամբ։ Անընդունակ լինելով նոր ուղղություններ ստեղծել արդյունաբերության մեջ, ազգային բուրժուազիան բավարարվում է նրանով, որ տիրում է նախկինում գաղութարարներին պատկանող գրասենյակներին ու խանութներին։ Այլ խոսքով, զարգացող երկրների բուրժուազիան անընդունակ է իրականացնելու այնպիսի պատմական միսիա, որպիսին ունի եվրոպական բուրժուազիան։

Անուժ ու անընդունակ լինելով արտադրություն ստեղծելու և կազմակերպելու մեջ, ազգային բուրժուազիան իր ողջ եռանդը կենտրոնացնում է պետական ապարատում դիրքեր նվաճելու վրա։ Նա, կարելի է ասել, ներաճում է պետական մեքենայի մեջ, նպատակ ունենալով այն լիովին օգտագործել իր դասակարգային շահերին։ Գնալով այդ բուրժուազիան դառնում է բյուրոկրատական, աստիճանաբար կտրվում է մասսաներից, հակադրվում է նրանց։ Երիտասարդ երկրներում նա վերափոխվում է նեոգաղութակալության ու կապիտալիզմի սոցիալական բազայի։

Իր դիկտատուրան ամրապնդելու համար ազգային բուրժուազիան դիմում է միակուսակցական սիստեմի։ Նման կուսակցությունը սովորաբար լինում է «էլիտայի» կուսակցություն, որի խնդիրն է լինում ամրապնդել պետական իշխանությունը, օգնել «նոր տերերին»՝ հնազանդ պահելու համար «երեկվա հեղափոխականներին»։

Ֆանոնն իրավացիորեն գտնում է, որ ազգային բուրժուազիայի նպատակների սահմանափակվածությունը, նրա դասակարգային եսասիրությունը հսկայական վնաս են

հասցնում «երրորդ աշխարհի» ազատագրության ու վերածննդի գործին։ Աստիճանաբար նրա նացիոնալիզմը զերկվում է առաջադիմական բնույթից, նա էվոլյուցիա է կատարում դեպի շովինիզմ։ «Ազգային արժանապատվության» վերականգնման կոչերով ազգային բուրժուազիան անողոք պայքար է մղում գաղութային ադմինիստրացիայի ժամանակներից մնացած սպիտակամորթ փաստաբանների, առևտրականների, հողատերերի, բժիշկների, չինովնիկների դեմ, եռանդով առաջ քաշում կադրերի ազգայնացման պահանջ։ Նրա ելույթներն ավելի ու ավելի «հակառակ կողմից ռասիզմի» երանգ են կրում, և նա հանգստանում է միայն այն ժամանակ, երբ գրավում է բոլոր պոստերը։

«Հակառակ կողմից ռասիզմը» վտանգավոր է դառնում հատկապես այն պատճառով, որ ազգային բուրժուազիային աջակցում են քաղաքային պրոլետարիատը, գործազուրկները, մանր արհեստավորները, որոնք պահանջում են քշել բոլոր օտարերկրացիներին, հրդեհում են նրանց տները, ավերում խանութները, լինչահարում նրանց։

Ահա թե ինչու, ասում է Ֆանոնը, «երրորդ աշխարհում» անխուսափելի է լինելու «երկրորդ հեղափոխությունը»։

Երիտասարդ պետություններում ազգային բուրժուազիայի մերկացումը Ֆանոնը զուգակցում է նրա ռասիզմի և շովինիզմի խիստ քննադատության հետ։ Ֆանոնի հակառասիզմը նրա հակաբուրժուական դիրքի արտահայտությունն է։ Զզվանք արտահայտելով սպիտակամորթների, նեգրերի և արաբների, դեղնամորթների ու կարմրամորթների ռասիզմի նկատմամբ, Ֆանոնը եզրահանգում է, որ ընդհանրապես բուրժուազիան ընդունակ չէ «նվազագույն մարդասիրության», որ ռասայական հարաբերությունները գաղութային և կապիտալիստական հարաբերությունների արդյունք են։

Սակայն ռասիզմի նկատմամբ արգահատանք տածող Ֆանոնը, այնուամենայնիվ, ռասիզմին տուրք տալուց լիովին խուսափել չկարողացավ, քանի որ նրա բռնության կոնցեպցիան խարսխված է «բուրժուա ազգեր» («հարուստ ազգեր») և «պրոլետար ազգեր» («աղքատ ազգեր») հակադրության վրա, որն ըստ էության ռասիստական մոտեցում է ազգային-ազատագրական շարժմանը։ «Հակառակ կողմից

ռասիզմին» Ֆանոնը հատկապես ակամայից տուրք է տալիս այն ժամանակ, երբ անդրադառնում է գաղութային ժողովուրդների կուլտուրաների արժեքավորմանը։ Օրինակ, իդեալականացնելով Անթիլյան կղզիների նեգրական պոեզիան, նա գրում է, որ «նեգրիտյուդի» կուլտուրան անհասանելի է սպիտակամորթ մարդուն։ «Ես սպիտակամորթ եմ, դա նշանակում է, որ իմ կողմն է գեղեցկությունը և շնորհքը... Ես սևամորթ եմ, դա նշանակում է, որ ես օժտված եմ բնության հետ բնազդորեն ձուլվելու ունակությամբ, իմ «ես»-ը տիեզերքի խորքերում կորցնելու ձիրքով։ Որքան էլ սպիտակամորթը խելոք լինի, չի կարող հասկանալ Արմսթրոնգին (ամերիկացի սևամորթ շեփորահար — Հ. Ս.) և Կոնգոյի մեղեդիները։ Այսպես ծավալվում է դրաման և յուրաքանչյուրը մնում է զնդանված՝ մեկն իր հիվանդության, մյուսն իր սև մաշկի մեջ»[1]։

Հանդես գալով «երրորդ աշխարհի» ազգային բուրժուազիայի և նրա շովինիստական մարտնչող ռասիզմի դեմ, Ֆանոնը, սակայն, չի մերժում բացառությունը։ Նա գտնում է, որ «երրորդ աշխարհի» այն երկրներում, որտեղ գյուղի և քաղաքի մանրբուրժուական մասսաները բանվոր դասակարգի հետ համեմատաբար կայուն դաշինք ունեն, այդ մասսաների ճնշման տակ ազգային բուրժուազիան իրականացնում է հետևողական հակաիմպերիալիստական քաղաքականություն, իսկ երկրի ներսում այս կամ այն չափով հաշվի է առնում ժողովրդական մասսաների տնտեսական և քաղաքական որոշ պահանջներ։

Սակայն Ֆանոնի ուսմունքը քիչ արժեք կունենար, եթե բավարարվեր միայն գաղութատիրության մերկացնող քննադատությամբ ու բռնության միջոցով այն վերացնելու կոչերով։ Այդ ուսմունքի մեծ առավելությունն այն է, որ նրա հեղինակը, ժխտելով ներկան, դատապարտելով տեխնիկական քաղաքակրթությանը, կանգ չի առնում փակուղու առջև, ինչպես Հերբերտ Մարկուզեն և «նոր ձախերի» մյուս պարագլուխները։ Ֆանոնը չի բավարարվում «մեծ մերժումով»։ Նա առաջ է գնում, ձգտում է տեսնել ապագան,

[1] «Вопросы философии», № 1, 1972, стр. 91.

«երրորդ աշխարհի» երիտասարդ պետությունների համար առաջարկում է իր կոնստրուկտիվ ծրագիրն ու երաշխավորությունները, որոնք սարտրյան էկզիստենցիալիզմի շաղախով մոդեռնիզմի և տրադիցիոնալիզմի, տեխնիցիզմի և հումանիզմի, ունիվերսալիզմի և կոնկրետի յուրօրինակ զուգակցում ու խառնուրդ են։ Ազգային շինարարության ֆանոնյան ծրագիրը կարելի է ամփոփել հետևյալ սեղմ ձևակերպումների մեջ. ազգային բուրժուազիայի չեզոքացում, հեղափոխական-դեմոկրատական կուսակցության գլխավորությամբ ժողովրդական լայն մասսաների ակտիվ ներգրավում ազգային շինարարության և երկրի կառավարման մեջ, կոոպերացիա, պլանավորում, ագրարային արմատական վերափոխումներ՝ «հողը նրան, ով այն մշակում է» լոզունգով, ազգային վերակառուցման գործին կանանց, երիտասարդության և բանակի լայն մասնակցություն, պայքար կանանց փաստական հավասարության իրականացման, նրանց էմանսիպացիայի համար, երիտասարդության քաղաքական և աշխատանքային դաստիարակություն, բանակի դեմոկրատացում։

Ֆանոնի քաղաքական իդեալը երիտասարդ պետությունների զարգացման «երրորդ ուղին» է։ «Մեր մկանների ու մեր ուղեղի ջանքերին պետք է ուրիշ ուղղություն տանք»[1],— ասում է նա։ Ֆանոնը զարգացող երկրների ժողովուրդներին կոչ է անում չնմանվել Եվրոպային, մերժել ինչպես զարգացման կապիտալիստական, այնպես էլ սոցիալիստական ուղիները, պայքարել «ո՛չ եվրոպական մոդելի» համար, գնալ զարգացման սեփական, ինքնուրույն ճանապարհով[2]։ «Թույլ զարգացած երկրները,— գրում է նա,— որոնք ազգային-ազատագրական պայքարում օգտագործեցին երկու սիստեմների կատաղի մրցակցությունը, հաղթանակի հասնելուց հետո պետք է խուսափեն այդ մրցակցության մեջ ներգրավվելուց»։ Բայց Ֆանոնն այնուամենայնիվ գտնում է,

[1] «Вопросы философии», № 1, 1972, стр. 83.

[2] «Ֆանոնիստիկայով» զբաղվողներից ոմանք այս հարցին անդրադառնալիս Ֆանոնին անվանում են «սև Ռուսո», նկատի ունենալով այն, որ ժան ժակ Ռուսոն ժամանակին լեհերին խորհուրդ էր տալիս չնմանվել եվրոպացիներին, երբեք չհետևել նրանց, այլ «միշտ մնալ լեհեր»։

որ «երրորդ ուղին» վերջ ի վերջո պետք է հասցնի սոցիալիզմի, որը ցույց է տվել իր անվիճելի առավելությունները կապիտալիզմի հանդեպ։ Սոցիալիզմ ասելով նա, սակայն, հասկանում է գյուղացիական-դեմոկրատական, այլ ոչ թե գիտական սոցիալիզմը։

Ակնհայտորեն համակրելով սոցիալիզմը, Ֆանոնը դեմ չէր, որ «երրորդ աշխարհը» օգտագործի նաև կապիտալիստական Եվրոպայի արտադրական փորձը (բայց ոչ երբեք կրկնօրինակի, պատճենահանի այն)։ Այլ խոսքով, նրա «տրիկոնտինենտալիզմի» «հակաեվրոպիզմը» թշնամանք չէ Եվրոպայի հանդեպ, այլ նրա նկատմամբ «երրորդ աշխարհի» սեփական արժանապատվությունը ընդգծելու միջոց է։ Նրան խորթ է գաղութային ժողովուրդների անցյալը, մինչգաղութային շրջանի նրանց պատմությունն իդեալականացնելու ձգտումը։ «Ցանկանում եմ, թե ոչ,— գրում է Ֆանոնը,— ժամանակակից աշխարհում անցյալը չի կարող ղեկավարել ինձ»։ Այս դեպքում նա բացահայտորեն հանդես է գալիս նեգրիտյուդի իդեալականացման, նրա նշանակության բացարձակացման, հատկապես նեգրիտյուդի սենգորյան կոնցեպցիայի դեմ։

Երիտասարդ երկրների զարգացումն արագացնելու նպատակով Ֆանոնն առաջ է քաշում համաշխարհային հարստության վերաբաշխման խնդիրը։

Ֆանոնը գտնում է, որ «հարստության առատությունից» Եվրոպան իսկական ճգնաժամ է ապրում։ Եվրոպական շքեղության, փարթամության ու հարստության չափերը ուղղակի սկանդալային բնույթ են կրում։ Այդ հարստության մեջ ներգրավված է գաղութային ժողովուրդների՝ նեգրերի, արաբների, հնդիկների, դեղին ռասայի ժողովուրդների արյուն-քրտինքը։ Այս առումով Ֆանոնը Եվրոպան ուղղակի համարում է «երրորդ աշխարհի» ստեղծագործություն։

Այժմ, երբ գաղութատիրությունը քայքայվում է, նախկին գաղութարարները պարտավոր են դարերի ընթացքում թալանածի գոնե մի մասը վերադարձնել թալանվածներին, այլ խոսքով, Եվրոպայի պարտքն է նյութական ու ֆինանսական անհրաժեշտ օգնություն ցույց տալ զարգացող երկրներին։ Նա այդ օգնությունը համեմատում է այն ռեպարացիաների

հետ, որ հաղթած երկրներին տվեց պարտված Գերմանիան կամ այն պարտավորությունների հետ, որ Իսրայելի նկատմամբ ետպատերազմյան շրջանում վերցրել է Արևմտյան Գերմանիայի կառավարությունը։

Ակնհայտ է, որ Ֆանոնի այս տեսակետն ուղղված է «հենվել սեփական ուժերի վրա» թեզի դեմ։

«Ռեպարացիաների» հարցում Ֆանոնի թույլ կողմն այն է, որ նա գտնում է, թե «երրորդ աշխարհի» նկատմամբ նման պարտք ունեն նաև սոցիալիստական երկրները, որովհետև նրանք նույնպես ինչ-որ չափով շահել են գաղութային սիստեմից։ Այստեղից էլ Ֆանոնի այն թեզը, թե Ասիայի, Աֆրիկայի ու Լատինական Ամերիկայի ամեն մի երկրի ճնշված ժողովրդի իսկական դաշնակիցները կարող են լինել այդ մայրցամաքների մյուս երկրների ճնշված ժողովուրդները։ Զարգացող երկրները հակադրվում են մյուս բոլոր զարգացած երկրներին։ Այս տեսակետից Ֆանոնը ազգային-ազատագրական շարժումը օբյեկտիվորեն մեն-մենակ է թողնում հզոր թշնամու՝ իմպերիալիզմի հետ[1]։ Այստեղ Ֆանոնը հակասում է նաև ինքն իրեն։ Ապագաղութացման պայքարում հակադեմ կողմերը բնորոշելով ռասայական հատկանիշներով, չի նկատում, որ դրանով իսկ հակասում է իր սեփական թեզին, ըստ որի գաղութային ժողովուրդների ազատագրական պայքարը և սոցիալիստական հեղափոխությունը լրացնում են միմյանց, ըստ որի «սոցիալիստական աշխարհի» գոյությունը մասսայական հակագաղութային հեղափոխության կարևոր նախադրյալներից մեկն է։

Ինչպես տեսնում ենք, Ֆրանց Ֆանոնի տեսությունը բազմաթիվ առնչություններ է դրսևորում ժամանակակից «ձախ» ռադիկալիզմի և նրա բազմաթիվ արտահայտությունների, մասնավորապես «նոր ձախերի» կոնցեպցիաների, Ժան Պոլ Սարտրի էկզիստենցիալիզմի, ԱՄՆ-ի նեգրական շարժման ղեկավարների հայացքների հետ։ Բայց Ֆանոնը, այնուամենայնիվ, առավել հարազատ է Մարկուզեին։ Նա նույնպես հանդես է գալիս «բուրժուա-ազգեր» և «պրոլետարազգեր» տեսությամբ, պնդում է, թե զարգացած կապիտա-

[1] Տե՛ս «МЭ и МО», № 10, 1969, էջ 136—138.

լիստական երկրների պրոլետարիատը «բուրժուականացել է», դադարել է համաշխարհային հեղափոխության շարժիչ ուժ լինելուց, որի պատճառով, նրան, իբր, փոխարինելու է եկել «երրորդ աշխարհը», որը միավորվելով և «հոգեբանական ազատագրության» հասնելով, կոչված է իր ետևից տանելու հարստահարվածներին, գրոհելու իմպերիալիզմի միջնաբերդը։ Այս բոլորը Ֆանոնին ուղղակի դարձնում են Մարկուզեի գաղափարակիցը։

Ավելին «երրորդ աշխարհի» գյուղացիության և լումպեն-պրոլետարիատի հեղափոխական դերի ու պոտենցիայի, բուրժուական զարգացած երկրներում կապիտալիստական սիստեմի մեջ պրոլետարիատի «ինտեգրացման» մասին շատ մտքեր փոխառնելով «ֆրանկֆուրտյան դպրոցից» և առանձնապես Մարկուզեից, Ֆանոնը է՛լ ավելի զարգացրեց ու խորացրեց դրանք, իր հերթին հսկայական ազդեցություն գործեց ոչ միայն «երրորդ աշխարհի» հասարակական-քաղաքական մտքի, այլև Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի «ձախ» ռադիկալիստական շարժման վրա։

Ֆանոնի տեսակետները, ամրապնդելով մաոիզմի զինանոցից վերցրած փաստարկներով, Մարկուզեն իր աշխատություններում, հատկապես 1969 թվականին հրատարակած «Ուրվագիծ ազատագրության մասին» գրքում, խորացրեց դրանք։ «Նոր ձախերի» ուրիշ գաղափարախոսներ գտնում են, որ Ֆանոնի գրվածքներում գտել են այն ամենը, ինչ իրենց անհրաժեշտ է։ Նրանցից մեկը պատկերավոր ասել է, թե Ֆանոնը ընդմիշտ մտել է «նոր ձախերի» պանթեոնը, քանի որ նրա «Անիծյալները» Ատլանտիկայի երկու կողմերում առաջ է բերել ողջ ռադիկալների և ինտելիգենտների մեծ մասի հսկայական հիացումը։

Ֆանոնի մտքերը տիրական են դարձել նաև ԱՄՆ-ի նեգրական շարժման մարտիկների շատ խմբերի համար։ «Անիծյալները» հազարավոր օրինակներով տարածվել է Հարլեմում։ Ամերիկյան լրագրողներից մեկի արտահայտությամբ «սև իշխանության» կողմնակիցները ոչ թե դիմում են Մահատմա Գանդիին կամ Լև Տոլստոյին, այլ իրենց Աստվածաշնչին՝ «Անիծյալներին»։ Ամերիկյան նեգրական շարժման ղեկավարներից մեկը՝ Ս. Կինգը «Անիծյալները նաև այստեղ

են» հոդվածում գրում է, որ «Բոլոր թույլ զարգացած երկրների ժողովուրդներ, միացե՛ք» կոչը այստեղ՝ ԱՄՆ-ում, ավելի ու ավելի «խորն է թափանցում մեր մտքերը», որքանով որ նեգրերը ԱՄՆ-ի թույլ զարգացած ժողովուրդն են։ ԱՄՆ-ի նեգրական շարժման առաջադիմական տարրերը նեգրական բուրժուազիայի տակտիկան ու գաղափարախոսությունը մերկացնելու համար, մասնավորապես, լայնորեն օգտագործում են «երրորդ աշխարհի» ազգային բուրժուազիայի ֆանոնյան քննադատությունը։

Ֆանոնը զգալի ազդեցություն է գործել նաև Լատինական Ամերիկայի պարտիզանական շարժման ղեկավարների մտածելակերպի վրա[1]։ Բայց, ինչպես «նոր ձախերը», այնպես էլ ԱՄՆ-ի նեգրական շարժման առաջնորդները ընդհանուր առմամբ Ֆանոնի ժառանգությանը մոտենում են կամայականորեն, այն ամեն կերպ հարմարեցնում իրենց պայքարի կոնկրետ նպատակներին։ Այդ պատճառով նրանք հաճախ կամայականորեն «ֆանոնիզմից» դուրս են թողնում շատ գաղափարներ կամ իրենց հայեցողությամբ են մեկնաբանում նրա մտքերը, դրանով իսկ խեղաթյուրում ոչ միայն Ֆանոնի ուսմունքի բովանդակությունը, այլև նրա կերպարը։

Արդի հեղափոխական-դեմոկրատական գաղափարախոսությունն ըստ էության մանրբուրժուական սոցիալիզմի տարատեսակություն է, որը պարուրված է ռոմանտիզմով, ուտոպիական երազանքներով։ Պարզելով գիտական սոցիալիզմի բովանդակությունը, Մարքսը և Էնգելսը այն հակադրում էին հակագիտական սոցիալիզմի բոլոր տարատեսակություններին, որոնք գլխավորապես արտահայտում էին բնակչության ոչ պրոլետարական դասակարգերի և շերտերի զանազան իլյուզիաներն ու մոլորությունները։ Սոցիալիզմի այդ տարատեսակությունների մեջ հեղափոխական-դեմոկրատական բովանդակությունը, որպես կանոն, զուգորդվում է ուտոպիզմի հետ, պատմության իրական ընթացքը չըմբռնելու, դասակարգային պայքարի օրենքները չգիտակցելու հետ։ Իբրև դրա ապացույց Վ. Ի. Լենինը բերում էր Գերցենի «գյուղացիական սոցիալիզմի» օրինակը։ Արտահայտելով ռուսական գյուղացիության հեղափոխական ձգտումները, այնուամենայնիվ, Գերցենի դեմոկրատական հայացքները չէին պարունակում, Վ. Ի. Լենինի խոսքերով ասած, «սոցիալիզմի նշույլ անգամ»։ «Դա նույնպիսի բարեհոգի ֆրազ է, նույնպիսի բարի երազանք, որն զգեստավորում է բուրժուական գյուղացիական դեմոկրատիայի հեղափոխականությունը Ռուսաստանում, ինչպես և «48 թվականի սոցիալիզմի» զանազան ձևերն Արևմուտքում»[1]։

Մանրբուրժուական շատ գաղափարախոսների մոտ «սոցիալիզմը» զուտ գրական ձև ընդունելով, մոդայի յուրօրինակ տուրք է հանդիսանում և վերջին հաշվով ծառայում է իբրև սոցիալական դեմագոգիայի միջոց։ Ահա թե ինչու այդպիսի «սոցիալիզմը», որը գաղափարական խառնաշփոթություն է առաջացնում հատկապես գյուղացիական շերտերում, ապակողմնորոշում աշխատավոր մասսաներին, պետք է սոցիալիզմի դիրքերից ենթարկվի մանրամասն վերլուծության ու քննադատության։ «Սահմանադրական հարցը Գերմանիայում» հոդվածում մերկացնելով սոցիալիզմն ու կոմունիզմը գրական մոդայի վերածելու փորձերը Ֆ. Էնգելսը գրում էր. «Այդ «նշմարիտ սոցիալիստներին» են պատկանում ոչ միայն իրենց par excellence (այսպես կոչված— Հ. Ս.) սոցիալիստ անվանողները, այլև Գերմանիայի գրողների մեծ մասը, որոնք յուրացրել են «կոմունիստներ» կուսակցական անունը։ Այս վերջիններս դեռ ավելի վատ են

[1] Անհրաժեշտ է նշել, որ Լատինական Ամերիկայի երկրներում Ֆանոնը նվազ համբավ է վայելում, քան «երրորդ աշխարհի» մյուս մայրցամաքներում և ԱՄՆ-ի նեգրական մասսաների շրջանում։ Լատինական Ամերիկայի ձախ ռադիկալիստական ուժերն ամենից առաջ գտնվում են Ռեժի Դեբրեի գաղափարների ազդեցության տակ, որի «Հեղափոխությունը և հեղափոխությունները» գիրքը դարձել է նրանց հավատո հանգանակը։ Լատինաամերիկյան «ձախերը» գտնում են, որ բռնապետությունների տապալման համար վճռական մարտը տեղի կունենա ստրատեգիական, այլ ոչ թե տակտիկական զոնաներում, այսինքն՝ գյուղերում («օջախներում»), այլ ոչ թե քաղաքներում, որ քաղաքը «օժանդակ զոնա է»։ 1966—1970 թվականների պարտիզանական պայքարի ձախողանքները Դեբրեին և նրա կողմնակիցներին ստիպեցին հրաժարվել «օջախների» տեսությունից։ Բայց դրանից հետո նրանք իրենց հիմնական ուշադրությունը կենտրոնացրին ոչ թե քաղաքային պրոլետարիատի, այլ քաղաքներում տեռորիստական ակտեր կազմակերպելու վրա («տե՛ս «Проблемы мира и социализма», № 4, 1971 էջ 46)։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, 5-րդ հրատ., հ. 21, էջ 318։

առաջիններից, եթե առհասարակ ինչ-որ բան կարող է ավելի վատը լինել»[1]։

Մեր օրերի մանրբուրժուական սոցիալիստների մոտ հաճախ են հանդիպում ուտոպիստ սոցիալիստների՝ Սեն-Սիմոնի, Շ. Ֆուրյեի, Ռ. Օուենի հայացքների ուղղակի վերարտադրությունները, հայացքները, որոնք հանդիսացել են կապիտալիստական ճնշման դեմ բողոքի արտահայտություն և եղել են մարքսիզմի տեսական աղբյուրներից մեկը։ Արտահայտելով դեռևս չզարգացած պրոլետարիատի շահերը, սոցիալիզմի այդ տեսակը ի վիճակի չեղավ բացատրել ոչ բանվոր դասակարգի պատմական միսիան, ոչ էլ ցույց տալ նրա ազատագրման իսկական ուղիները։ Ուտոպիստ սոցիալիստների տեսությունները, այսպիսով, սահմանափակված են պատմական շրջանակներով։ Ուստի գիտական սոցիալիզմի հրապարակ գալուց հետո բանվորական շարժման մեջ եղած ուտոպիզմի բոլոր տեսակները անխուսափելիորեն դարձան ռեակցիոն։

Պատմական զարգացման ընթացքում ոչ մարքսիստական սոցիալիզմի տեսակներն էվոլյուցիա ապրեցին։ «Կարլ Մարքսի ուսմունքի պատմական բախտը» հոդվածում Վ. Ի. Լենինը նշում է, որ 1848 թվականի հեղափոխությունը մահացու հարված հասցրեց մինչմարքսյան սոցիալիզմի բոլոր ձևերին։ Այդ հեղափոխության պատմական փորձի լույսի տակ «ոչ դասակարգային սոցիալիզմի և ոչ դասակարգային քաղաքականության վերաբերյալ բոլոր ուսմունքները դատարկաբանություն են դուրս գալիս... Առաջին ժամանակաշրջանի (1848—1871), փոթորիկների ու հեղափոխությունների ժամանակաշրջանի վերջում մեռնում է նախամարքսյան սոցիալիզմը։ Մնում են ինքնուրույն պրոլետարական կուսակցություններ»[2]։ Լենինյան այս գնահատականի լույսի տակ ավելի պարզորոշ են երևում ժամանակակից մանրբուրժուական սոցիալիստական գաղափարների թուլություններն ու խոցելի կողմերը։ Բայց մեր օրերում, երբ գիտական սոցիալիզմը դարձել է ռեալ իրականություն, նվաճել կապիտալիստական երկրների

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 4, стр. 42.

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, 5-րդ հրատ., հ. 23, էջ 2—3։

և «երրորդ աշխարհի» միլիոնավոր ու միլիոնավոր զանգվածներին, այդպիսի իրադրության մեջ ոչ մարքսիստական սոցիալիզմը նույնպես հարմարվում է նոր պայմաններին։ «Երրորդ աշխարհի» հեղափոխական պոտենցիալը գնալով կարևոր նշանակություն է ձեռք բերում։ Իրենց հակամոնոպոլիստական և հեղափոխական-դեմոկրատական բովանդակությամբ մանրբուրժուական սոցիալիստական մի շարք ուղղություններ (օրինակ՝ ֆանոնիզմը) ազգային-ազատագրական շարժման սկզբնական էտապներում համաշխարհային հակաիմպերիալիստական պայքարի լուրջ ռեզերվ են դառնում, ուստի ստանում են բանվորական շարժման որոշակի աջակցություն։

Նույնը, սակայն, չի կարելի ասել ժամանակակից մանրբուրժուական այն ուղղությունների մասին («նոր ձախեր», «ֆրանկֆուրտցիներ», «ձախ» ռադիկալներ և այլն), որոնք չնայած այն բանին, որ հաճախ գործածում են «սոցիալիզմ» տերմինը, բայց ոչ մի առնչություն չունեն նրա հետ։ Մանրբուրժուական դաղափարախոսության այս ուղղությունները, դրան հակառակ, շատ ընդհանրություններ են դրսևորում անցյալ դարի բացահայտ հակամարքսիստական, հակապրոլետարական «սոցիալիստական» գաղափարախոսությունների և, հատկապես, բանվորական շարժմանը շատ վնասած անարխիստական ուսմունքների հետ։

Անդրադառնալով բանվորական շարժման մեջ նորանոր «ռեկրուտների» ներգրավման հարցին, Վ. Ի. Լենինը գրել է, որ դրանց անխուսափելիորեն ուղեկցում են «թեորիայի և տակտիկայի բնագավառում երերումները, հին սխալների կրկնությունները, ժամանակավոր վերադարձը հնացած հայացքներին և հնացած գործելակերպին և այլն»։

Հնացած հայացքների և հնացած գործելակերպի ուղղակի կրկնություն մենք տեսնում ենք «ֆրանկֆուրտցիների», «նոր ձախերի», Մարկուզեի և նրա համախոհների, ընդհանրապես ժամանակակից «ձախ» ռադիկալների մոտ։

Արդի մանրբուրժուական «ձախերի» տեսակետները պատմականորեն տանում են ընդհուպ մինչև ինդիվիդուալիզմի և մանրբուրժուական անարխիզմի ամենահայտնի գաղափարախոսներից մեկի՝ գերմանացի փիլիսոփա-իդեալիստ Մաքս

Շտիրների (1806—1856) հայացքները, որոնք ժամանակին չախչախիչ քննադատության են ենթարկվել Մարքսի և Էնգելսի «Գերմանական գաղափարախոսություն» աշխատության մեջ։ Հատկապես «նոր ձախերի» մոտ հաճախ կարելի է հանդիպել Շտիրների 1845 թվականին լույս տեսած «Եզակին և նրա սեփականությունը»[1] ժամանակին աղմուկ հանած գրքում տեղ գտած բազմաթիվ մտքերի վերակրկնությունները։ Գովերգելով էգոիզմը և մանրբուրժուական անարխիզմի դիրքերից մերժելով կապիտալիզմը, Շտիրները միաժամանակ հանդես էր գալիս կոմունիստական գաղափարախոսության և հեղափոխական շարժման դեմ։ Նրա կարծիքով, ազատագրության հասնելու համար բավական է, որ անհատը հրաժարվի իրեն հարստահարող գաղափարներից։

Ժամանակակից «ձախերի» հայացքները ուղղակի նույնանում են նաև 19-րդ դարի մանրբուրժուական սոցիալիզմի և անարխիզմի նշանավոր հիմնադիրներից մեկի՝ ֆրանսիացի վուլգար տնտեսագետ Պյեռ Ժոզեֆ Պրուդոնի (1809—1856) հայացքներին։ Պրուդոնին ճանաչում բերեց նրա «Ի՞նչ է սեփականությունը» գիրքը (1840 թ.), որտեղ նա կապիտալիստական խոշոր սեփականությունը քննադատում էր սեփականատեր գյուղացու և քաղաքային մանր բուրժուազիայի դիրքերից, պաշտպանության տակ առնում մասնավոր մանր արտադրությունը։ 1846 թվականին Պրուդոնը լույս է ընծայում «Տնտեսական հակասությունների սիստեմը, կամ աղքատության փիլիսոփայությունը» գիրքը, որտեղ հարձակումներ է կատարում կոմունիզմի և հեղափոխական բանվորական շարժման դեմ։ Նրա անարխիստական հայացքներն առավել ամբողջական ձևով շարադրված են «19-րդ դարի հեղափոխության ընդհանուր գաղափարը» (1851 թ.) աշխատության մեջ։ 60-ական թվականների բանվորական շարժման վերելքի պայմաններում Պրուդոնը բանվորներին կոչ էր անում քաղաքական ելույթների չդիմել։ Նույն թվականներին նա մշակեց այսպես կոչված մյուտյուելիզմի (ֆրանսերեն mutuel «փոխադարձ» բառից) ծրագիրը, ըստ որի կապիտալիզմի պայմաններում սոցիալական հարցերը կարելի է լուծել

[1] Տե՛ս Макс Штирнер, Единственный и его собственность, М., 1918.

աշխատավորների խաղաղ փոխօգնության (փոխօգնության ընկերությունների, կոոպերատիվների և այլնի ստեղծման) միջոցով։ Պրուդոնի և նրա գաղափարակիցների (Տոլենի, Ֆրիբուրի, Լիմուզենի և ուրիշների) դեմ անզիջում պայքար էին մղում Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը։ Այդ պայքարի անհրաժեշտությունը թելադրված էր նրանով, որ պրուդոնիստները զեկավար դիրքեր էին գրավել ֆրանսիական սոցիալիստների շրջանում և I Ինտերնացիոնալի ֆրանսիական սեկցիայում։ Պրուդոնիզմի մերկացման գործում մասնավորապես կարևոր նշանակություն ունեցան Կ. Մարքսի «Փիլիսոփայության աղքատությունը» (1847 թ.), «Քաղաքատնտեսության քննադատության շուրջը» (1859 թ.) աշխատությունները, Ի. Բ. Շվեյցերին գրած նրա «Պրուդոնի մասին» նամակը (1865 թ.), ինչպես նաև I Ինտերնացիոնալի կոնգրեսներում և կոնֆերանսներում պրուդոնիստների դեմ Մարքսի, Էնգելսի, նրանց զինակիցների ելույթները։ Վճռական պայքարը մարքսիզմին լիակատար հաղթանակ բերեց պրուդոնիզմի դեմ։ Հետագայում՝ իմպերիալիզմի շրջանում, պրուդոնիզմի և նրա նոր արտահայտությունների («ռադիկալ սոցիալիզմ», «սոլիդարիզմ» և այլն) դեմ բազմաթիվ անգամ հանդես է եկել Վ. Ի. Լենինը։

Եվ ահա, մեր օրերում Պրուդոնի մտքերը վերակրկնվեցին ինչպես «նոր ձախերի», այնպես էլ «ֆրանկֆուրտցիների» մոտ։ Իր «Հեղափոխականի խոստովանությունները» գրքում Պրուդոնը ուղղակի կոչ էր անում. «Ո՛չ մի կուսակցություն, ո՛չ մի իշխանություն, մարդու և քաղաքացու բացարձակ ազատություն,— ահա այս երեք բառով ենք մենք արտահայտում մեր հավատամքի քաղաքական և սոցիալական սիմվոլը»[1]։ «Կուսակցությունները բռնության գործիք են», «իշխանությունը բացարձակ ազատության անտիպոդն է», «ամեն մի իշխանություն տոտալիտարիզմ և ավտորիտարիզմ է»,— գրում են «նոր ձախերի» պարագլուխները։

Պրուդոնն առաջ էր քաշում անձի լիակատար (մանրբուրժուական հասկացողությամբ) ազատության հարցը։ «Ոչնչացնելով անձնական ազատությունը, դուք ոչնչացնում

[1] «Литературная газета», 21 октября 1970 г.

եք հասարակությունը»[1],— կարդում ենք նրա «Պոռնոկրատիան այժմ» գրքում։ «Անձի ազատությունը մարդկության գոյության իմաստն է»,— ասում է Մարկուզեն։ «Անձի անսահմանափակ ազատություն»,— պահանջում են բոլոր «նոր ձախերը»։

Պատմության շարժիչ ուժը Պրուդոնը համարում էր արդարության և ազատության մասին վերացական գաղափարները։ Դրանք ընդունակ են ամեն տեսակ հրաշքների։ «Գաղափարները մարդկությանը առաջնորդում են հեղաշրջումների և կատաստրոֆների ճանապարհով»[2],— գրում էր Պրուդոնը։ «Ազատության գաղափարը նրա կրողներից անկախ, ավերիչ է, հետևապես անհրաժեշտ է»,— գրում են Դանիել և Գաբրիել Կոն-Բենդիտները։

Պրուդոնն այն կարծիքին է, թե պատերազմը քաղաքակրթության զարգացման անհրաժեշտ պայման է[3]։ Պատերազմներից ամենավատը կործանիչ հետևանքներ չունեցող երկարատև պատերազմն է։ Պատերազմը պետք է կարճատև և ավերիչ լինի[4]։ Կործանումը ստեղծագործության սկիզբն է։ «Ձախ» ռադիկալները նույնպես այդ կարծիքին են՝ «Ավերման կիրքը ստեղծագործական կիրք է»։ Կռիվը պետք է հանկարծակի լինի, առանց նախապատրաստության։

«Ի՞նչ է սեփականությունը» գրքում Պրուդոնը գրում է, թե կապիտալիստական խոշոր սեփականությունը «կողոպուտի», «գողության» արդյունք է, այն պետք է մասնատվի ու բաժանվի մանր արտադրողների, արտադրողների խմբերի ու ասոցիացիաների միջև[5]։ Նույն կարծիքին են «նոր ձախերի» և ԱՄՆ-ի նեգրական շարժման ղեկավարները։

[1] Прудон, Жозеф Пьер. Порнократия в настоящее время, стр. 274.

[2] Прудон. Война и мир. Исследование о принципе и содержании международного права. Москва, издание Черенца и К°, 1864, т. I, стр. 6.

[3] Прудон, Война и мир, т. I, стр. 21—22.

[4] Прудон, Война и мир, т. II, стр. 17.

[5] Տե՛ս П. Ж. Прудон. Что такое собственность? Перевод с новейшего французского издания Ф. Капелюша. Книгоиздательство «Мысль» А. Миллер, Лайпциг—С. Петербург, 1907. Первый мемуар. Исследование принципа права и правительства, էջ 9—161. Второй мемуар. Что такое собственность?, էջ 163—253.

Ըստ Պրուդոնի, կապիտալիզմի հիմնական հակասությունը դրսևորվում է խոշոր կապիտալի և մանր արտադրողների միջև մղվող պայքարի մեջ։ Մարկուզեի տեսակետով, կապիտալիստական հասարակության հիմնական թշնամական դասակարգերը ոչ թե պրոլետարիատն ու բուրժուազիան են, այլ բուրժուազիան ու բուրժուականացված պրոլետարիատը մի կողմից, մանր բուրժուազիան, «գետտոն» ու «նոր պրոլետարիատը» (այսինքն՝ գաղութային ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը)՝ մյուս կողմից։

Հանդես գալով կապիտալիստական խոշոր սեփականության դեմ և կոչ անելով տապալել խոշոր բուրժուազիայի տիրապետությունը, Պրուդոնն այդտեղ կանգ է առնում։ Նրան պարզ չէ, թե տապալված պետությանը ինչ պետք է փոխարինի։ Նրա իդեալը պետությունը տարբեր անհատների, արտադրողների տարբեր խմբերի ու համայնքների միջև «պայմանագրային հարաբերություններով» փոխարինելն է, որը ըստ էության բուրժուական պետությունը մանր արտադրող-սեփականատերերի պաշտպանության գործիքի վերածելու պահանջ է[1]։ Այդպես են վարվում նաև «ձախ» ռադիկալիզմի տեսաբանները։ Նրանց չափազանց քիչ է մտահոգում, թե ինչպիսին կլինի այն հասարակությունը, որը փոխարինելու կգա բուրժուականին։ Խոսելով սոցիալիզմի մասին, նրանք սովորաբար գերադասում են չկոնկրետացնել այն։ Նրանց դիրքը, մասնավորապես, պատկերավոր է արտահայտել Ֆրանսիայի ուսանողների Ազգային խորհրդի պարագլուխներից մեկը՝ Սուվաժոն։ «Գլխավորը կապիտալիզմի կործանումն է, իսկ հետո՝ կտեսնենք»։

Ժամանակակից «ձախ» ռադիկալիստական մտածողությունը զարմանալի նույնություններ է դրսևորում նաև 19-րդ դարի անարխիզմի խոշորագույն ներկայացուցիչներից մեկի՝ մարքսիզմի կատաղի հակառակորդ Միխայիլ Ալեքսանդրովիչ Բակունինի (1814-1874) հայացքների հետ։ 1840 թվականին

[1] Տե՛ս «Французские конституции XIX столетия и Наполеон III»., часть I. История конституционного движения в XIX столетии П. Ж. Прудона (посмертное сочинение); часть II. Карл-Людовик-Наполеон Бонапарт. Его жизнь и сочинения. Санктпетербург, 1871, типография Н. Неклюдова, էջ 3—330.

Ռուսաստանից մեկնելով արտասահման, Բակունինը ապրում է Գերմանիայում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում, ծանոթանում է նոր հեգելականների, ավելի ուշ՝ կոմունիստ-ուտոպիստների հետ։ Բակունինը հանդես էր գալիս Ռուսաստանում ինքնակալական կարգերի և ճորտատիրության դեմ, իր համակրանքն էր արտահայտում լեհ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման նկատմամբ։ Միաժամանակ նա առաջ քաշեց Ռուսաստանի գլխավորությամբ բոլոր սլավոններին համասլավոնական ֆեդերատիվ պետության մեջ միավորելու ծրագիր։ Բակունինը մասնակցել է 1848-1849 թվականների հեղափոխական իրադարձություններին, բանտարկվել է և 1851 թվականին ավստրիական կառավարության կողմից հանձնվել է ցարական իշխանություններին։ 1851-1857 թվականներին գտնվել է կալանքի տակ, ապա աքսորվել Սիբիր, որտեղից մեղայական նամակ է գրել Ալեքսանդր II թագավորին, նրանից թողություն խնդրելով իր «գործած մեղքի համար»։ Համոզվելով, որ ցարի ներումը բացառված է, 1861 թվականին նա աքսորից փախչում է և Ճապոնիայի ու Ամերիկայի վրայով անցնում Անգլիա։ Այստեղ, 60-ական թվականների կեսերին, վերջնականապես ձևավորվում են Բակունինի մանրբուրժուական, անարխիստական, քաղաքական հայացքները, որոնք շուտով տարածվում են Եվրոպական երկրներում, հատկապես՝ Իտալիայում և Իսպանիայում, որոնցում կապիտալիզմի զարգացումը և արդյունաբերական պրոլետարիատի ձևավորումը դանդաղ էին տեղի ունենում։ Այդ շրջանից սկսած Բակունինը կատաղի պայքար է մղում մարքսիզմի դեմ։ Իր համախոհների հետ նա կարողանում է թափանցել I Ինտերնացիոնալի մեջ, պայքար սկսել Ինտերնացիոնալի Գլխավոր խորհրդի դեմ։ Ինչպես մյուս անարխիստները և մանրբուրժուական սոցիալիստները, Բակունինի կողմնակիցները նույնպես իրենց դավանանքի ռեակցիոն բովանդակությունը քողարկում էին կեղծ-հեղափոխական ֆրազոլոգիայով, կապիտալիզմի, բուրժուական պետության, կաթոլիկ եկեղեցու աղմկալի քննադատությամբ։ Մարքսը և Էնգելսը մերկացնում էին բակունիզմը, ցույց տալիս նրա ռեակցիոն էությունը, որը քողարկվում էր կեղծ հեղափոխական ֆրազոլոգիայով։ Կյանքի վերջին շրջանում (1871-1874) Բակունինը գրում է իր հիմնական աշխատությունները՝ «Մտրակ գերմանական կայսրությունը և սոցիալական հեղափոխությունը», «Պետականություն և անարխիա» գրքերը։

Բակունինի այս գրքերը և նրա մյուս աշխատությունները ժամանակակից «ձախերի» պարագլուխների, մանրբուրժուական ռադիկալների սեղանի գրքեր են։

Դեռևս 1842 թվականին Դրեզդենում գրած «Ռեակցիան Գերմանիայում։ Ֆրանսիացու ուրվագիծ» իր առաջին հոդվածում, որը լույս տեսավ Ժյուլ Էլիզար ստորագրությամբ, Բակունինը ազդարարում էր. «Թույլ տվեք հավատալ հավերժ ոգուն, որը միայն նրա համար է կործանում և ոչնչացնում, որ հանդիսանում է ամեն մի կյանքի անսպառ և հավերժ ստեղծագործ աղբյուր»[1]։ Ապա Բակունինը հռչակում է իր հայտնի աֆորիզմը՝ «Կործանման կիրքը միաժամանակ նաև ստեղծագործական կիրք է»[2]։ «Որևէ մարդկային իմաստից վճռականապես զուրկ» (Պլեխանով) այս աֆորիզմը հետագայում դարձավ մարտական անարխիզմի գլխավոր լոզունգը։

Լիովին համերաշխվելով Պրուդոնի հետ և անձի ազատության հարցը մղելով առաջին պլան, Բակունինը գրում էր, թե ինչպես ժողովուրդը, այնպես էլ անհատը պետք է լիակատար ազատ լինեն[3]։ Նա համոզված էր, որ «ամեն մի դարաշրջանում մարդն իր ազատությունը պետք է փնտրի ոչ թե պատմության սկզբին, այլ վերջում և կարելի է ասել, որ ամեն մի մարդկային անհատի իրական և լիակատար ազատագրությունը հանդիսանում է պատմության իսկական, մեծագույն նպատակը, նրա բարձրակետն ու պսակը»[4]։ Իսկ ազատության

---

[1] **М. А. Бакунин**, Собрание сочинений и писем, 1828—1876. Под редакцией и с примечаниями Ю. М. Стеклова, т. III, период первого пребывания за границей 1840—1849 г.г. Издательство Всесоюзного общества политкаторжан и ссыльно-поселенцев. Москва, 1935, стр. 148.

[2] Նույն տեղը։

[3] **М. А. Бакунин**, Полное собрание сочинений. Под редакцией А. И. Бакунина. Издание Балашова. С.-Пб., т. II, стр. 55.

[4] **М. А. Бакунин**, Полное собрание сочинений, т. I, стр. 14, Այդ մասին տե՛ս նաև նույն հատորի էջ 44—176 («Федерализм, социализм и антитеологизм»), էջ 177—216 («Письма о патриотизме»), էջ 217—235, («Народное дело»), т. II, էջ 259։

հանելու իսկական (և միակ) ուղին խռովությունն է։ Նշելով, որ «աստվածային և մարդկային, կոլեկտիվ և անհատական ամեն տեսակ իշխանության դեմ մարդկային անհատի խռովությունը» անհրաժեշտություն է[1], Բակունինը գրում էր. «Միայն մարտական, խռովարարական ուղում ենք մենք հավատում, միայն նրանից ենք փրկություն սպասում»[2]։

«Աստված և պետություն» գրքում Բակունինը պահանջում էր. «Laisser faira et laisser passer», այսինքն՝ իրերը թողնել իրենց բնական ընթացքի մեջ, չմիջամտել իրադարձություններին, դրանք ձգել անարխիային[3]։ Հեղափոխությունը ոչ ոքի կողմից չի ղեկավարվում, այն առաջ է գալիս ինքնաբերաբար[4],— «Պետականություն և անարխիա» գրքում գրում էր նա։ Գովերգելով Փարիզի կոմունայի պաշտպաններին, նույն գրքում Բակունինը հիացմունքով նշում էր, որ ելույթներն անկազմակերպ էին, որ ապստամբությունը ճիշտ է, ծագեց գիտակցաբար, բայց այն ընթացավ տարերայնորեն[5]։

Չնայած Փարիզի կոմունայի նկատմամբ Բակունինի դրական վերաբերմունքին, նա անվստահություն էր տածում այդ կոմունան կյանքի կոչած բանվորների հանդեպ։ Արդյունաբերության մեջ զբաղված բանվորներին նա ընդհանրապես «բուրժուականությամբ վարակվածներ» էր անվանում[6]։ Բակունինը գտնում էր, որ բանվորները հեղափոխությանն ինչ-որ չափով կարող են օգուտ բերել միայն այն դեպքում, եթե կտրականապես բոյկոտի ենթարկեն պառլամենտական ընտրությունները, հրաժարվեն բուրժուական ներկայացուցչական հիմնարկներին մասնակցելուց[7]։ Ինչպես Պրուդոնը, Բակունինը նույնպես վճռականապես հանդես էր

1 М. А. Бакунин, Полное собрание сочинений, т. II, стр. 260.

2 Նույն տեղը։

3 М. А. Бакунин, Полное собрание сочинений, т. I, стр. 2.

4 Տե՛ս М. А. Бакунин, Полное собрание сочинений, т. II, էջ 19—22.

5 М. А. Бакунин, Полное собрание сочинений, т. II, стр. 21,

6 М. А. Бакунин, Собрание сочинений и писем, 1828—1876, стр. XXVII (из предисловия Б. Горева «Социально-политические взгляды Бакунина»).

7 Նույն տեղը, էջ 20։

գալիս բանվոր դասակարգի քաղաքական կազմակերպությունների դեմ[1]։

Արհամարհանքով խոսելով կազմակերպված բանվոր դասակարգի հեղափոխական հնարավորությունների մասին, Բակունինը հակաբուրժուական հեղափոխության հիմնական ուժը համարում էր իշխանությունից, հարստությունից, կուլտուրայից, տեխնիկայից հեռու կանգնած գյուղացիական մասսաներին, ամբողջ հույսը կապում նրանց հետ։ 1849 թվականին Կենիգշտեյն ամրոցից գերմանացի փաստաբանին ուղարկած քաղաքական բովանդակությամբ նամակում Բակունինը գրում էր, որ «Ռուսաստանում գյուղացիական հեղափոխությունը մահացու հարված կհասցնի կառավարությանը և կավերի այդ պետությունը»[2]։ Նա գովերգում էր գյուղացիական ազատ համայնական հողատիրությունը, գրում, որ այն իր մեջ սաղմնային պատրաստի վիճակում պարունակում է անհատի ազատության համար անհրաժեշտ բոլոր պայմանները[3]։ Նա այն կարծիքին էր, որ ինչպես Ռուսաստանում, այնպես էլ եվրոպական մի շարք երկրներում, հատկապես Իտալիայում, հակաբուրժուական հեղափոխությունը ընթանալու է գյուղացիության ազատագրության լոզունգներով[4]։

Գյուղացիությունից բացի, Բակունինն իր հույսը կապում էր նաև լյումպեն-պրոլետարիատի, բոսյակների, ընդհանրապես ապադասակարգայնացված ու կյանքի ընթացքից դուրս նետված տարրերի հետ, որոնց նա «փսկական հեղափոխականներ» էր անվանում[5]։ «Պետություն և անարխիա» գրքում նա գրում էր. «Այո, սոցիալիստական հեղափոխությունը գուցե ոչ մի տեղ այնպես վերահաս չէ, ինչպես

1 М. А. Бакунин. Собрание сочинений и писем, 1828—1876, стр. XXIII.

2 «Материалы для биографии Бакунина». Под редакцией В. Полонского, т. I, Соцэкгиз, 1933, стр. 255. Տե՛ս նաև 230, 234 էջերը։

3 М. А. Бакунин, Полное собрание сочинений, т. II, стр. 47.

4 Նույն տեղը, էջ 7։

5 Տե՛ս М. А. Бакунин, Собрание сочинений и писем, 1828—1876, т. III, էջ XXVII:

Իտալիայում»։ Դրա պատճառն այն է, բացատրում էր նա, որ այդ երկրում պրոլետարիատն այնպես զարգացած չէ, ինչպես Գերմանիայում։ Իտալիայում բանվորները «շատ քիչ են, այնքան քիչ, որ նրանք առանց ամենափոքր հետքի ու ազդեցության կորչում են մասսայի մեջ»։ Այնուհետև շարունակում էր. «Իտալիայում գերակշռում է այն մուրացիկ պրոլետարիատը, որի մասին պպ. Մարքսը և Էնգելսը, իսկ նրանցից հետո նաև Գերմանիայի սոցիալ-դեմոկրատների ողջ դպրոցը ամենախոր ատելությամբ են արտահայտվում և միանգամայն իզուր, որովհետև նրա մեջ և միայն նրա մեջ, այլ ոչ թե բանվորության մասսայի բուրժուական շերտերի մեջ է ապագա սոցիալիստական հեղափոխության ողջ միտքը և ողջ ուժը»[1]։

Բակունինն առաջին պլան էր մղում նաև քրեական հանցագործներին։ Այս հարցում նա համերաշխվում էր անցյալ դարի 30-ական թվականների վերջերին և 40-ական թվականների սկզբներին բուռն գործունեություն ծավալած գերմանական ուտոպիստ-սոցիալիստ Վայտլինգի հետ, որն առաջարկում էր ժողովրդական հեղափոխությունը սկսելու հենց առաջին մոմենտին բացել բանտերի դռները, ազատ արձակել քրեական բոլոր հանցագործներին՝ որպես բուրժուական սեփականության և բուրժուական քաղաքակրթական արժեքների դեմ թշնամաբար տրամադրված խռովարարների[2]։

Վերջապես, Բակունինը հեղափոխական տարր է համարում ապադասակարգայնացված մտավորականությանը, որին պատկանում էր նաև ինքը, ինչպես նաև սովորող երիտասարդությանը։ Նա գրում էր, որ Փարիզի ապստամբների համառությունը հիմնականում պայմանավորված էր նրանով, որ նրանց գործողություններին տոն էին տալիս համալսարանական և պոլիտեխնիկական ուսանողները[3]։ Բակունինը խորապես համոզված էր, որ Ռուսաստանի գյուղացիական

[1] **M. A. Бакунин,** Полное собрание сочинений, т. II, стр. 6—7.

[2] **M. A. Бакунин,** Собрание сочинений и писем, 1828—1876, стр. XXVIII.

[3] **M. A. Бакунин,** Полное собрание сочинений, т. II, стр. 193.

ապստամբությունը նույնպես պետք է գլխավորի «կրթված երիտասարդությունը»։ Ռուսաստանի ուսանողների հեղափոխական տրամադրությունների մասին նշանակալի պատմությունների ազդեցությամբ 1869 թվականին գրած թռուցիկում Բակունինը նշում էր, որ Ռուսաստանում նախորդ գյուղացիական ապստամբությունները պարտություն են կրել։ Այժմ, ասում էր նա, այդ ապստամբությունը հաղթական ելք կունենա շնորհիվ «կրթված երիտասարդության»[1]։

Բակունինը հանդես էր գալիս իբրև պետության ու պետականության ոխերիմ թշնամի։ Ազատագրել ժողովուրդներին և պրոլետարիատին, ասում էր նա, նշանակում է նրանց ամենից առաջ ազատագրել պետության լծից[2]։

1865—1866 թվականներին Բակունինը ստեղծում է «Ինտերնացիոնալ եղբայրների ալյանս» գաղտնի դավադրական միությունը, որն իր առջև նպատակ էր դրել «անմիջապես», «տարերային» անարխիստական, կործանող և վայրենի ապստամբություն բարձրացնել, որի ընթացքում պետք է տեղի ունենար պետականության «անկասելի ավերում»։

1871 թվականի Փարիզի կոմունայի օրերին Բակունինը գրում էր, թե պետության և պետականության օրերը հաշվված են և ապստամբների հաղթանակը ուր որ է իր հետ անխուսափելիորեն կբերի բուրժուական պետականության լիակատար կործանում[3]։ Կոմունայի պարտությունից հետո գրած «Պետականություն և անարխիա» գրքում պաշտպանելով նույն միտքը, նա նշում էր. «Ես Փարիզի կոմունայի կողմնակից եմ հատկապես այն պատճառով, որ այն եղավ պետության համարձակ, պարզ արտահայտված բացասում»[4], որ այն պատրաստ էր «կլանելու ժամանակակից ողջ հասարակարգն իր բոլոր հարստություններով, արտոնություններով, ողջ քաղաքակրթությամբ»[5]։ Բակունինը Ստեփան Ռազինի և

[1] **M. A. Бакунин,** Собрание сочинений и писем, 1828—1876, стр. XXIX.

[2] Տե՛ս նույն տեղը։

[3] **M. A. Бакунин,** Полное собрание сочинений, т. II, стр. 23:

[4] **M. A. Бакунин,** Парижская Коммуна и понятие государственности. Избр. соч., т. IV, II.-М., 1920, стр. 252.

[5] **M. A. Бакунин,** Полное собрание сочинений, т. II, стр. 22, 54.

Պուգաչովի ապստամբությունները գովերգում էր այն պատճառով, որ դրանք ուղղված էին Ռուսաստանում պետականության ոչնչացմանը[1]։ Պետության ոչնչացման կոչ անելով բոլոր սլավոններին, նա գտնում էր, որ գերմանացիների համեմատությամբ սլավոնական ժողովուրդները երջանիկ են այն իմաստով, որ ընդունակ չեն ուժեղ պետականություն ստեղծելու[2]։ Սլավոնների համեմատությամբ, ասում էր նա, գերմանացիների ազատագրությունը շատ ավելի դժվար իրականացնելի գործ է, որովհետև պետականության զարգացումը նրանց մոտ չափազանց ուժեղ է, այն սմբողջովին ներթափանցված է նրանց հոգու և գիտակցության մեջ[3]։

«Պետականություն և անարխիա» գիրքը Բակունինը վերջացնում է հետևյալ տողերով. «Պանգերմանական դրոշի վրա գրված է. պետության ամեն կերպ պաշտպանություն և ուժեղացում, սոցիալ-հեղափոխականների, այսինքն՝ մեր դրոշին, ընդհակառակն, գրված, կրակե, արյան տառերով քանդակված է՝ բոլոր պետությունների կործանում, բուրժուական քաղաքակրթության ոչնչացում, ազատ կազմակերպություն ներքևից վերև՝ միությունների միջոցով... ողջ մարդկության ազատագրություն, նոր համամարդկային աշխարհի ստեղծում»[4]։

Կործանել պետությունը և պետականությունը։ Իսկ ինչո՞վ փոխարինել կործանվածը։ Պրուդոնի նման Բակունինը նույնպես այդ հարցին պատասխան չէր տալիս։ Նա չէր ըմբռնում պրոլետարիատի համաշխարհային պատմական դերը, բայց դրա փոխարեն նա կատաղաբար հարձակվում էր պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարի վրա[5], Կարլ Մարքսին համարում էր «նոր ստրկության մունետիկ»։ Բակունինը Մարքսին և Էնգելսին «ներել չէր կարողանում» հատկապես այն պատճառով, որ սրանք Փարիզի կոմունայի մեջ տեսնում էին ոչ թե ընդհանրապես պետականության գաղափարի բացասում, այլ պրոլետարիատի դիկտատուրայի սաղմնային ձևը։ «Եթե կա

1 Տե՛ս М. А. Бакунин. Полное собрание сочинений, т. II, էջ 47։
2 Նույն տեղը, էջ 53։
3 М. А. Бакунин, Полное собрание сочинений, т. II, стр. 54.
4 Նույն տեղը, էջ 240։
5 Նույն տեղը, էջ 217, 218, 220, 221։

պետություն,— գրում էր Բակունինը,— ապա անպայման առկա է տիրապետությունը, հետևապես նաև՝ ստրկությունը. պետությունն առանց բացահայտ կամ քողարկված ստրկության անմիտ բան է, ահա թե ինչու մենք պետության թշնամի ենք»[1], ահա թե ինչու ոչ թե պետք է իշխանությունը նվաճել և հաստատել նոր պետականություն, հետևապես՝ նոր ստրկություն, այլ պետք է ավերել եղածը՝ երբեք այն չվերականգնելու համար, ինչ իմաստ էլ դրվի նրա մեջ։

Գրականության մեջ երբեմն «նոր ձախերի» տակտիկան համեմատում են ոչ միայն Պրուդոնի ու Բակունինի, այլև Բլանկիի տակտիկայի հետ։ Դա ճիշտ չէ։ Պետք է նկատել, որ ժամանակին Մարքսը մանր բուրժուազիայի ոչ բոլոր ներկայացուցիչների նկատմամբ էր այնպիսի թշնամանքով արտահայտվել, ինչպես Բակունինի նկատմամբ։ Ինչպես հայտնի է, Բլանկին նույնպես հեղափոխական մանրբուրժուական սոցիալիզմի ներկայացուցիչ էր։ Բայց իր բոլոր սխալներով, անհող ուտոպիզմով, իդեալիզմով և դասակարգային հրստակ դիրքերի բացակայությամբ հանդերձ Բլանկին, այնուամենայնիվ, բանվորներին կոչ էր անում պայքարել իշխանությունը նվաճելու (այլ ոչ թե ընդհանրապես պետականությունը կործանելու համար), ինչպես նաև կողմնակից էր հեղափոխական դիկտատուրայի։ Այդ պատճառով որոշակի ժամանակներում և հեղափոխական շարժման որոշակի աստիճաններում բլանկիզմը ժամանակավորապես կարող է դառնալ մարքսիզմի դաշնակից։ Ահա թե ինչու 50-ական թվականներին Մարքսը գրում էր, որ 1848 թվականի հեղափոխության օրերին Փարիզի պրոլետարիատի միակ և իսկական առաջնորդը Բլանկին էր։ Այդ էր պատճառը նաև, որ Մարքսը խիստ բացասաբար արտահայտվելով ռուսական անարխիստների նկատմամբ, միաժամանակ մեծ համակրանքով ու հարգանքով էր խոսում «Նարոդնայա վոլյա» կազմակերպության մասին, որի գործունեությունը ներթափանցված էր բլանկիզմի գաղափարներով[2]։

1 М. А. Бакунин, Полное собрание сочинений, т. II, стр. 216
2 Տե՛ս М. А. Бакунин. Собрание сочинений и писем, 1828—1876, т. III, էջ XXXII.

Բակունինը հատկապես վճռականորեն մերժում էր պրոլետարիատի հեղափոխական իշխանության տնտեսական դերը։ Ընդհանրապես բակունինյան մանրբուրժուական ծրագրի մեջ արտակարգ աղքատ է տնտեսական մոմենտը։ Դա ժամանակին նկատել է Մարքսը, որը Բակունինի «Պետականություն և անարխիա» գրքի մասին իր դիտողությունների մեջ նշել էր, որ հեղինակին բնավ չի հետաքրքրում (կամ նա չի ըմբռնում) հեղափոխության տնտեսական պրոբլեմները։ Մարքսը հիշեցնում էր, որ մանր գյուղացիական տնտեսությունն արտադրության այն ձևն է, որ կարծես թե դիմացել է բոլոր հեղափոխություններին ու ռեժիմներին և նրա կազմակերպումը որևէ հոգս չի առաջացրել պետությունների ու կառավարությունների համար։ Իսկ քանի որ բակունինյան ապագա հասարակությունը խարսխված է լինելու մանր արտադրության վրա, ուստի պատահական չէ, որ նրա անարխիստական կոնստրուկցիաների մեջ տնտեսության կազմակերպման հարցերն ամբողջովին դուրս են մնացել (կամ ուղղակի նրա համար գոյություն չեն ունեցել)։ Մարքսը նշում էր, որ դրա պատճառներից մեկն այն է, որ ապադասակարգայնացված տարրերի (այդ թվում Բակունինի և հետագա մյուս անարխիստների) համար ընդհանրապես արտադրությունը խորթ բան է, նրանց հետաքրքրում են միայն բաշխման հարցերը[1]։ Հետագա անարխիստներից Բակունինին հատկապես հոգեհարազատ եղավ ռուսական անարխիզմի խոշոր ներկայացուցիչ, նշանավոր աշխարհագրագետ-գիտնական, իշխան Պյոտր Ալեքսեևիչ Կրոպոտկինը (1842—1921), որը հոգեհարազատ է նաև ժամանակակից «ձախերին»։

Անցնելով արտասահման, 1872 թվականին Կրոպոտկինը այնտեղ հարում է I Ինտերնացիոնալի դեմ պայքար սկսած բակունիստական խմբերին։ Վերադառնալով Ռուսաստան, մասնակցում է նարոդնիկական շարժմանը։ Երկրորդ անգամ անցնելով արտասահման, դառնում է եվրոպական անարխիզմի նշանավոր դեմքերից մեկը։ Հետագա տասնամյակներին, ընդհուպ մինչև իր մահը, ռուսական անարխիզմի ճանաչված առաջնորդն էր։ Կրոպոտկինը մի շարք աշխատությունների հեղինակ է, որոնցից նրան հատկապես ճանաչում բերեցին «Անարխիան, նրա փիլիսոփայությունը, նրա իդեալները», «Մեծ հեղափոխություն», «Հեղափոխականի գրառումները», «Օրագիր» և այլն։ Նա գիտական կոմունիզմի երդվյալ թշնամի էր, կատաղի հարձակումներ էր գործում դասակարգային պայքարի և պրոլետարիատի դիկտատուրայի մարքսիստական ուսմունքի դեմ։ Կրոպոտկինի գործունեությունը մեծ վնաս է հասցրել Ռուսաստանի բանվոր դասակարգի ազատագրական շարժմանը[1]։ «Սեպարատ հաշտության մասին» (1916 թ.), «Պետություն և հեղափոխություն» (1917 թ.) և այլ աշխատություններում Վ. Ի. Լենինը մերկացրել է Կրոպոտկինի անարխիստական հայացքները, ջախջախիչ հարված հասցրել դրանց։

Ինչպես Բակունինի, այնպես էլ Կրոպոտկինի համար իրադարձությունների կենտրոնում կանգնած է անհատը[2], սա նույնպես հանդես էր գալիս իբրև գյուղացիության և լյումպեն-պրոլետարիատի գաղափարախոս[3], քարոզում էր հեղափոխության ընթացքի տարերայնությունը[4], պահանջում էր ամեն տեսակ իշխանությունների ու պետականության ոչնչացում[5], տնտեսության ապակենտրոնացում[6]։ «Արդյո՞ք

---

[1] Այդ մասին տե՛ս **M. A. Бакунин**, Собрание сочинений и писем, 1828—1876, էջ XXIX.

[1]. Տե՛ս «Переписка Петра и Александра Кропоткиных», т. I, «ACADEMIA», 1932.

[2]. Տե՛ս **А. Кропоткин, Речи бунтовщика. Перевод с французского** Н. и С. Тамамшевых. С.-Петербург. Редактор—издатель Валерий Броуский, 1906, էջ 24—41.

[3]. Տե՛ս **А. Кропоткин**, Речи бунтовщика, էջ 74—85.

[4]. Տե՛ս **П. Кропоткин**, Революция в России. Перевод Л. Комина. С.-Петербург. Книгоиздательство «Эхо». 1906, էջ 3—32.

[5]. Տե՛ս **П. А. Кропоткин**, Парижская Коммуна. Издание В. Д. Карчагина. Москва, 1906, էջ 5—31; նույնի՝ «Речи бунтовщика», էջ 5—19; նույնի՝ «Записки революционера». «ACADEMIA», 1933; նույնի՝ «Дневник», М.-П., 1923.

[6] Տե՛ս **П. Кропоткин**, Хлеб и воля. Перевод с французского под редакцией автора. Издание пересмотренное автором и разрешенное им для России. Книгоиздательство «Голос труда», Петербург—Москва, 1919, էջ 243—288, նույնի՝ «Поля, фабрики и ма-

մենք պետք է զբաղվենք ապագա կարգի գաղափարների քննությամբ»,— հարց էր տալիս Կրոպոտկինը և պատասխանում. «Ոչ մի դեպքում, նախ կկործանենք, հետո կտեսնենք»։

Ինչպես տեսնում ենք «ֆրանկֆուրտցիների», «նոր ձախերի», ժամանակակից «ձախ» ռադիկալների գաղափարները Շտիռների, Պրուդոնի, Բակունինի գաղափարների աղոտ վերարտադրություններն են։ Դրանք նաև 1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխության կողմից ջախջախված ռուս անարխիստների, հատկապես նրանց առաջնորդ Պյոտր Կրոպոտկինի գաղափարների մնացորդներն են, որոնք տասնամյակներ հետո փոխադրվել են օտար լեզուների։ Հերբերտ Մարկուզեի, «նոր ձախերի» պարագլուխների նորագույն «հայտնագործությունները», այսպիսով, ունեն հարյուրամյա հնություն և դրանց «արժեքը» վաղուց է գնահատվել պատմության կողմից։ Իսկ վերջին 100—120 տարում պատմությունը կերտվել է ոչ թե ըստ Պրուդոնի, ըստ Բակունինի կամ ըստ Կրոպոտկինի, այլ ըստ Մարքսի։

Հեղափոխության նպատակների, հեղափոխությունից հետո ստեղծվելիք հասարակության կազմակերպման, իշխանության և պետության բնույթի և այլ հարցերում մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրներն անարխիստներին մարտ են տվել շատ տասնամյակներ առաջ։

Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը իրենց զինակիցներին ու հետևորդներին մշտապես զգուշացնում էին «ուլտրահեղափոխականների» գործողություններից, գտնում էին, որ պրոլետարիատը խիստ վերապահորեն պետք է ընդունի նրանց աջակցությունը, որովհետև նրանք պրոլետարական սոցիալիզմի վերջնական նպատակը փոխարինում են մանրբուրժուական իդեալներով, ապագայի կոմունիստական ազատ հասարակության գաղափարը՝ «զորանոցային սոցիալիզմի» գաղափարով, կուլտուրայի ծաղկումը՝ նրա ժխտմամբ, աշխատավոր մասսաների ստեղծագործական նպատակները՝ եղածն ավերելու անպատասխանատու կոչերով։ Ոչ պրոլետարական ամեն մի դասակարգ ու հասարակական խավ իր նախապաշարումներն է մտցնում սոցիալիզմի սեփական ըմբռնման մեջ։

Ինչպես վերևում նշվեց, «ձախերի» քարոզած նման երևակայական «կոմունիզմը» ընդհանուր ոչինչ չունի գիտական կոմունիզմի հետ։ Այդ կոմունիզմը մանրբուրժուական տարերքի, մանրբուրժուական զանգվածների հիվանդոտ երևակայության արդյունք է, որի կրողները, ինչպես նախկինում, այնպես էլ այժմ հանդես են գալիս կոպիտ հավասարեցման ու համահարթման պահանջով, որի շարժառիթը սեփականատիրական հոգեբանությանը հատուկ ներքին նախանձն է, անհամբերությունը, հուսահատությունը։ Կ. Մարքսը «1844 թվականի տնտեսագիտական-փիլիսոփայական ձեռագրերում» այդ մասին ասել է. «Կոպիտ կոմունիզմը այդ նախանձի և այդ համահարթման սոսկ ավարտն է, որը բխում է ինչ-որ նվազագույնի պատկերացումից։ Նա ունի որոշակի սահմանափակ չափանիշ»։ Նույն այդ «կոպիտ կոմունիզմը» նրա կողմնակիցներին թելադրում է «կուլտուրայի և քաղաքակրթության բովանդակ աշխարհի ժխտում», վերադարձ «դեպի աղքատ և պահանջմունքներ չունեցող մարդու անբնական պարզությունը...»[1]։

Կ. Մարքսը նշում էր, որ, առանց հաղթահարելու պրիմիտիվ կոմունիզմի տեսությունները ու դոկտրինները (իսկ դրանք, որ նախապրոլետարիատի և լյումպեն-պրոլետարիատի սոցիալական միջավայրի ծնունդ էին, դեռևս գալիս էին 16-18-րդ դարերից), անհնարին է բանվորական շարժման մեջ ապահովել գիտական սոցիալիզմի հաղթանակը։

«Ձախ» էքստրեմիզմի ամենատարբեր արտահայտությունների դեմ երկարատև ու սկզբունքային պայքար ծավալեց Վ. Ի. Լենինը։

Ռուսաստանում նոր տիպի պրոլետարական կուսակցութ-

стерские. Промышленность, соединенная с земледелием и умственный труд с ручным». Перевод с английского А. Н. Коншина, под редакцией автора, книгоиздательство «Голос труда», Петербург-Москва, 1921; նույնի՝ «К чему и как прилагать труд ручной и умственный». Книгоиздательство «Голос труда», Петербург-Москва, 1919; նույնի՝ «Речи бунтовщика», էջ 51—63, 126—137, 163—177.

[1] К. Маркс и Ф. Энгельс, Из ранних произведений. М., 1956, стр. 586—587.

յան հեղափոխական ծրագիրը մշակելիս Վ. Ի. Լենինը անհաշտ և հետևողական պայքար մղեց մանրբուրժուական դեմոկրատիայի կեղծ սոցիալիստական դոկտրինների, հատկապես «սոցիալիստ հեղափոխականների» (էսէռներ) գաղափարական-քաղաքական կոնցեպցիաների դեմ, որոնք արտահայտում էին քաղաքի և գյուղի մանր սեփականատերերի տրամադրությունները։ Լենինը և բոլշևիկները «ձախ» էքստրեմիզմի դեմ պայքարը սրել են հեղափոխության զարգացման տարբեր էտապներում։

Դեռևս 1901 թվականին «Անարխիզմ և սոցիալիզմ» թեզիսներում Վ. Ի. Լենինը գրել էր. «Անարխիզմը շուռ տված բուրժուական ինդիվիդուալիզմ է։ Ինդիվիդուալիզմն իբրև անարխիզմի ողջ աշխարհայացքի հիմք։

Մանր սեփականության և հողի վրա գտնվող մանր տնտեսության պաշտպանությունը։

Keine Majorität (այսինքն՝ անարխիստների կողմից փոքրամասնությունը մեծամասնությանը ենթարկելու մերժում։— Հ. Ս.)

Իշխանության միավորիչ և կազմակերպիչ ուժի բացասումը...

(Անարխիզմը հուսահատության ծնունդ է։ Հունից դուրս շպրտված մտավորականի կամ բոսյակի և ոչ թե պրոլետարի հոգեբանություն)։

Չեն ըմբռնում պրոլետարիատի դասակարգային պայքարը։

Քաղաքականության անհեթեթ բացասում բուրժուական հասարակության մեջ։

Չեն ըմբռնում բանվորների կազմակերպման ու դաստիարակման դերը։

Համադարմաններ միակողմանի, կապակցությունից պոկված միջոցներից։

Եվրոպայի նորագույն պատմության մեջ, ի՞նչ է տվել անարխիզմը, որ մի ժամանակ գերիշխում էր ռոմանական երկրներում։

—Ոչ մի դոկտրինա, հեղափոխական ուսմունք, տեսություն չկա։

—Բանվորական շարժման տրոհում։

—Լիակատար fiasko հեղափոխական շարժման փորձերում (պրուդոնիզմ 1871, բակունիզմ 1873)։

—Բանվոր դասակարգի ենթարկում բուրժուական քաղաքականության՝ քաղաքականությունը բացասելու անվան տակ»[1]։ Լենինը նշում էր, որ «անարխիզմը... ոչինչ չի տալիս բացի շահագործման դեմ ընդհանուր ֆրազներից... Պակասում է (a) շահագործման պատճառների ըմբռնումը, (b) հասարակության այն զարգացման ըմբռնումը, որ տանում է դեպի սոցիալիզմ. (c) դասակարգային պայքարի ըմբռնումն իբրև սոցիալիզմի իրականացման ստեղծարար ուժի»[2]։ 1917 թվականին, հանդես գալով գյուղացիական դեպուտատների I համառուսաստանյան համագումարում, Վ. Ի. Լենինը ասել է. «Անարխիստներ են կոչվում նրանք, ովքեր ժխտում են պետական իշխանության անհրաժեշտությունը, իսկ մենք ասում ենք, թե իշխանությունն անպայման անհրաժեշտ է ոչ միայն այժմ Ռուսաստանի համար, այլ ամեն մի պետության համար, որը թեկուզ ուղղակի սոցիալիզմին անցնելիս լիներ։ Անպայման ամենաամո՞ւր իշխանություն է անհրաժեշտ։ Մենք ցանկանում ենք միայն, որ այդ իշխանությունն ամբողջապես և բացառապես բանվորների, զինվորների և գյուղացիական դեպուտատների մեծամասնության ձեռքում լինի»[3]։

Ինչ խոսք, Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակը և ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցումը անհնարին կլիներ առանց հաղթահարելու ինչպես մանրբուրժուական դեմոկրատիայի աջ օպորտունիստական, այնպես էլ նրա ուլտրահեղափոխական, ավանտյուրիստական, անարխիստական, տրոցկիստական «ձախ կոմունիստական» հոսանքները։ Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Լենինն այդ առթիվ գրում էր. «Եթե մենք զիջողություն անեինք մանրբուրժուական պատրանքներին», ապա «մենք կկործանեինք Ռուսաստանում պրոլետարական հեղափոխության ամբողջ գործը»[4]։

Եվ եթե կյանքի կողմից վաղուց թաղված անարխիստա-

1 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 5, էջ 473—474։
2 Նույն տեղը, էջ 473։
3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 618։
4 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 255։

կան գաղափարներն այսօր նորից լույս աշխարհ են եկել իբրև ժամանակակից «ուլտրահեղափոխական շարժման» «վերջին խոսք», ապա դրա պատճառն այն է, որ շարունակում է գոյություն ունենալ այդ գաղափարների սոցիալական կրողը՝ կապիտալի ճնշման դեմ ընդվզող հուսահատ ու խռովարար մանր բուրժուազիան։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Իմպերիալիզմի արտաքին-քաղաքական կոնցեպցիաների գաղափարական ասպեկտները 3
Միլիտարիզմի տեսությունը և պրակտիկան 60
Նեոգաղութատիրության գաղափարական հիմնավորումը . . . 131
«Նեոկապիտալիզմի» տեսությունների սոցիալական դերը . . . 214
Մանրբուրժուական հեղափոխականության մի քանի դրսևորումների մասին 266

Սիմոնյան Հրաչիկ Ռուբենի

Արդի բուրժուական գաղափարախոսության քննադատական ուրվագծեր

Գիրք երկրորդ

Симонян Грачик Рубенович

Критические очерки современной буржуазной идеологии

(На армянском языке)

Издательство «Айастан»,
Ереван, 1980

Պատաս. խմբագիր՝ Ս. Ս. Ամիրյան
Հրատ. խմբագիր՝ Ս. Վ. Մարգարոսյան
Նկարիչ՝ Հ. Ս. Վարդանյան
Գեղ. խմբագիր՝ Ս. Վ. Պողոսյան
Տեխն. խմբագիր՝ Գ. Բ. Նահապետյան
Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Մ. Առշակյան

ИБ 484

Հանձնված է շարվածքի 9. 06. 1980 թ.
Ստորագրված է տպագրության 12. 01. 1981 թ.
Ֆորմատ՝ 84×108 1/32։ Թուղթ. տպ. № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 24,78 պայմ. տպագր. մամ., հրատ.՝ 22,02 մամ.։ Պատվեր 1835։ ՎՖ 06100։ Տպաքանակ 2000։ Գինը՝ 2 ռ.։

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։
Издательство «Айастан», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65։
Типография № 1 Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли. Ереван, ул. Алавердяна, 65.